


Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐ



Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

*Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության
նախարարության կողմից որպես ուսումնական ձեռնարկ
քուիերի բանասիրական ֆակուլտետների համար*

ԵՐԵՎԱՆ - 2019

ՀՏԴ 81
ԳՄԴ 81
Հ 205

*Տպագրվում է
Երևանի Խ. Արուվյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
որոշմամբ:*

Համբարձումյան Վ. Գ.

Հ 205 Լեզվաբանության հիմունքներ/ Վ. Գ. Համբարձումյան.-Եր.:
«Ասողիկ» հրատ., 2019.-- 368 էջ:

Լեզվաբանություն բուհական առարկան կրթության ներկայիս պայմաններում բաժանվում է երկու մասի՝ ընդհանուր գիտելիքներ և տեսական հիմնահարցեր. իբրև ուսումնական ձեռնարկ՝ առաջինը ներկայացվում է «Լեզվաբանության հիմունքներ» (ուսուցումը 1-ին կուրսում), իսկ երկրորդը «Ընդհանուր լեզվաբանություն» (ուսուցումը 3-րդ կուրսում) վերտառությամբ:

Սույն ձեռնարկը՝ «Լեզվաբանության հիմունքներ», ներառում է երկու հիմնական բաղադրիչ՝ «Լեզվական իմացության սահմանումները» և «Լեզվական իրակությունների առանձնացումները», իրենց թեմատիկ բաժիններով և առանձին թեմաներով:

ՀՏԴ 81
ԳՄԴ 81

ISBN 978-9939-50-431-5

© Համբարձումյան Վ. Գ., 2019

V. G. Hambardzumyan, *Principles of Linguistics*, Yerevan, «Asoghik», 2019, 366 p.

В. Г. Амбарцумян, *Основы языкознания*, Ереван, «Асохик», 2019, 366 с.:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանասիրական կրթության իրականացման նպատակով կազմված սույն դասագիրքը՝ «Լեզվաբանության հիմունքները», ի թիվս լեզվի մասին գիտելիքներին նվիրված ուսումնական այլ ձեռնարկների, նոր է ամենից առաջ տեսական գիտելիքների իր ընդգրկմամբ, կառուցվածքով, լեզվի մասին գիտության բնագավառի հիմնահարցերի արդի մոտեցումների և սկզբունքների ներդրումով, ավանդական, ժամանակի քննությունը բռնած դրույթների ճիշտ օգտագործմամբ:

Գ. Ա. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» (հ. 1, Ե., 1939) ձեռնարկին 1940-ական թթ. կեսերին փոխարինում է Է. Բ. Աղայանի դասագիրքը, որն, ինչպես հայտնի է, հետագայում ունենում է մի քանի հրատարակություն, վերջինը՝ «Լեզվաբանության հիմունքներ» (Ե., 1987, 736 էջ) վերնագրով:

Համեմատության կարգով ասենք, որ ինչպես Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը բառի բուն իմաստով ստուգաբանական բառարան չէ, այլ ավելին է, քան ցանկացած նման մի բառարան, այդպես էլ Է. Բ. Աղայանի «Լեզվաբանության հիմունքներ» դասագիրքը բառի նույնպիսի իմաստով այդպիսին չէ, այլ ավելին է, որովհետև նրանում տեղ են գտել անցյալ դարի 2-րդ կեսի ընդհանուր լեզվաբանության հիմնական խնդիրների լուծումներ՝ իրենց իրական դասակարգմամբ, փաստական նյութի հստակ մշակմամբ, տարբեր լեզուների իրողությունների տեղին օգտագործմամբ, ինչպես նաև այն, որ դասագրքում տեսական բնույթի շատ հարցեր ստացել են գիտական հավաստի գնահատություն, որն ամենից առաջ հենվում է հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում երևան եկած տվյալների և կիրառության օրենքների վրա:

Այն եղել է սերունդների դասագիրքը՝ բուհական կրթության բնագավառում, և այսօր ևս շատ դեսպերում մնում է օրինակելի և գործածելի: Ի դեպ՝ վերջին ժամանակներս լույս է տեսել այդ համապարփակ ձեռնարկի համառոտումը՝ իբրև սեղմ տարբերակ-դասագիրք, որն իրականացվել է ոչ այնքան մասնագիտական հմտությամբ:

Այնուհետև, Է. Բ. Աղայանի հիշյալ դասագիրքը մեզանում լեզվաբանական գիտելիքների ուսուցման մեծ ավանդույթ ունի, այն թարգմանվել է նաև ռուսերեն («Введение в языкознание», Ереван, 1960):

Հեղինակն այդ դասագրքում տվել է լեզվաբանական տարբեր բնույթի իրականությունների յուրօրինակ բնորոշումներ և սահմանումներ, և վերջիններս հայագիտության տարբեր հարցերով զբաղվող մասնագետների համար ունեցել են և շարունակում են ունենալ ուղենշային կարևորություն, որովհետև այդ բնորոշումները և սահմանումները խիստ գիտական են, իսկ ճանաչողական առումով՝ միանգամայն հիմնավորված: Այսպես, 1970-ական թթ. լույս տեսած «Լեզվաբանական բառարան»-ի շատ բառահոդվածներ, մանավանդ ընդհանուր տեսական լեզվաբանական բնույթի, մշակվել և մեկնաբանվել են ըստ Է. Բ. Աղայանի հիշյալ դասագրքի, և դա նկատելի է ոչ միայն հիշյալ բառարանում բառահոդվածների ընդգրկումից և շարադրանքից, այլև համապատասխան բառահոդվածի վերջում դասագրքի էջերի, այլև հեղինակի անվան ուղղակի նշումներից:

Սույն դասագրքի պատրաստման ժամանակ թե՛ ծրագրի կազմման և թե՛ դասաժամերի թեմաների բաշխման, դրանց համամասնության ապահովման, տեսական հիմնավորումների առումով մշտապես նկատի ենք ունեցել ինչպես այդ «Հիմունքներ»-ը, որը տողերիս հեղինակի համար, նշենք, ժամանակին եղել է ուսումնառության դասագիրք («Լեզվաբանության ներածություն» վերնագրով), իսկ հետագա տարիներին՝ բուհական դասավանդման համար հիմնական, թերևս միակ հանձնարարելի դասագիրքը, այլև վերջին տարիներին տարբեր լեզուներով լույս տեսած նույնպիսի դասագրքերը, այս կամ այն թեմային վերաբերող նորագույն ուսումնասիրությունները (գիտական հոդվածներ՝ լույս տեսած տարբեր լեզուներով և այլն):

Ներկա դասագիրքը կառուցված է մեթոդիկայի այլ հիմունքներով, ելնելով ներկայիս ուսումնակրթական նոր պահանջներից, մասնավորապես վերջին տարիներին մուտք գործած համակարգչային առկա և հեռավար ուսուցման պայմաններում:

Համակարգչային դասավանդման մեթոդիկայի կիրառմամբ տրվող նյութերը (այսպես կոչված՝ «փաթեթներ») այս դեպքում ներկայացվում են իբրև ընդհանուր թեմատիկայի մեջ մտնող առանձին թեմաներ:

Դասագիրքն ունի երկու՝ լեզվի ընդհանուր (տեսական) և կոնկրետ գիտելիքների բաղադրիչների բաժին («Լեզվական իմացության սահմա-

նումները» և «Լեզվական իրակությունների առանձնացումները»): Առաջինը ներառում է լեզվի և հասարակության առնչությանը վերաբերող հիմնական հարցերի տեսական մատչելի վերլուծություն, իսկ երկրորդը՝ լեզվի հնչյունական, բառային (բառապաշարային) և քերականական երևույթների նույնպիսի քննարկում:

Ուսումնական ձեռնարկն ունի ինքնօրինակ կառուցվածք: Այն նախ՝ կազմված է ըստ բուհական ուսուցման ժամաքանակով նախատեսված ծրագրի՝ ելնելով ոչ միայն լսարանային ուսուցման, այլև փաթեթային ձևով (համակարգչի միջոցով) ուսանողին փոխանցելու պահանջներից: Այնուհետև՝ յուրաքանչյուր թեմա, որ մտնում է այս կամ այն ընդհանուր թեմատիկայի մեջ, սկզբում ունի հարցերի այն ամբողջությունը, որ, իբրև *հիմնահարցեր*, իրենց լուծումն են գտնում բուն շարադրանքում: Իսկ վերջում նշվում է երկու կարգի գրականություն՝ *հիմնական* և *լրացուցիչ*, որը ավանդականի և նորագույնի միասին օգտագործման հնարավորություն է ընձեռում, հետապնդում լեզվի մասին գիտության մեջ առավել մասնագիտանալու նպատակ: Երբեմն տողատակում տրվում են ուղղակի կամ համեմատելի հղումներ՝ ոչ միայն նորմատիվ, այլև տեսական գրականությանը, որն ինքնուրույն աշխատանքի աղբյուր կարող է ծառայել:

Ձեռնարկի 1-ին բաժնում ընդգրկված է 2 թեմատիկա («Լեզվաբանության առարկան և խնդիրները» և «Լեզվի հիմնական բնութագրերը»), իսկ 2-րդում՝ 4 («Հնչյունաբանություն», «Բառագիտություն», «Ձևաբանություն» և «Շարահյուսություն»)՝ առանձին թեմաներով, ըստ անհրաժեշտության բերվում են գծապատկերներ (թվով՝ 16):

Առաջին բաժին

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԹԵՄԱՏԻԿԱ 1. ԼԵԶՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թեմա 1. Լեզվաբանության առարկան

Հիմնահարցեր: *Լեզվաբանությունը որպես գիտություն մարդկային լեզվի մասին: Լեզուն իբրև լեզվաբանական ուսումնասիրության առարկա: Լեզվի հաղորդակցական կողմի ընդհանուր բնութագիրը: Լեզուն մրաժո-ղության ձև:*

1. Լեզվաբանությունը գիտություն է մարդկային լեզվի մասին: Եվ ըստ այդմ՝ այն ընդգրկված է հասարակական մյուս գիտությունների մեջ՝ իբրև առանձին բնագավառ:

Ժամանակակից գիտությունը, ինչպես ընդունված է, բաժանվում է երեք հիմնական խմբի՝ բնական, տեխնիկական և հասարակական: Վերջինիս մեջ, ի թիվս մի շարք այլ գիտությունների, մտնում է լեզվաբանությունը՝ իբրև բանասիրական գիտությունների բնագավառ, որն ավանդաբար ենթադրում է տեքստի ընթերցման և վերծանման հմտություններ, խոսքի ոճերի առանձնացում և քննարկում, մանավանդ՝ քերականական գիտելիքներ՝ խոսքի մասեր, բառերի ձևերի կազմություն և այլն:

Լեզուների ուսումնասիրությունը մարդկությանը զբաղեցրել է դեռևս հնագույն ժամանակներում, առանձնապես հին և միջնադարյան փիլիսոփայության ընդերքում, ամենից առաջ հիմնական խնդրի՝ առարկայի և նրա անվանման տարաբնույթ քննարկումների, դրանցից բխող տեսական տարբեր մոտեցումների մեջ:

Իբրև ինքնուրույն գիտություն՝ լեզվաբանությունը սկիզբ է առնում լեզուների պատմության ճանաչողական (փիլիսոփայական) կողմի պարզաբանման, իսկ ավելի ուշ՝ նրանց քերականական կառուց-

վածքի տիպի, այլև ծագումնային համընկումների և ցեղակցության խնդիրների պարզաբանման դարաշրջանում: Իսկ դա տեղի է ունենում 18-րդ դ. վերջերին, առավել հիմնավոր՝ 19-րդ դ. 10-ական թթ. սկսած: Այս շրջանում է, որ լեզուների բուն ուսումնասիրությունը դրվում է մեթոդական որոշակի հիմքերի վրա, ըստ այդմ առաջ են քաշվում մի կողմից լեզուների համեմատության, մյուս կողմից՝ տեսության (փիլիսոփայության) խնդիրները:

Լեզուների հասարակական բնույթի վերաբերյալ եղած պատկերացումները միայն հետագայում է, որ ստանում են գիտական բնույթ. ըստ այդմ՝ լեզուն հասարակական երևույթ է, անմիջական առնչություն ունի վերջինի հետ, գործում է նույնպիսի համակեցության (կյանքի) բոլոր բնագավառներում, և հակառակը՝ հասարակությունն իր գործառույթները գրեթե գերազանցապես իրականացնում է լեզվի միջոցով, հանդիսանում է լեզվի անմիջական կրողը:

Լեզվաբանությունը տեսական գիտակարգ է, որ ուսումնասիրում է ոչ այնքան որևէ կոնկրետ լեզու, որքան լեզուներն առհասարակ՝ իբրև մեկ ամբողջություն: Ընդհանուր լեզվաբանությունը լայն հիմքեր է գցում մասնավոր լեզվաբանության, այսինքն՝ առանձին լեզուների քննությամբ զբաղվող գիտության համար:

Լեզուն հաղորդակցման միջոց է այնքանով, որքանով հաղորդակցումը տեղի է ունենում հասարակության ներսում, համակեցության պայմաններում, և հակառակը՝ հասարակությունը մեկն է, քանի որ միևնույն լեզվի կրող է: Իսկ մարդկությանը, իբրև պատմահասարակական ընդհանուր երևույթի, ամենից առաջ բնորոշ է այն, որ տիրապետում է յուրօրինակ հաղորդակցման միջոցի: Իսկ վերջինս ոչ այլ ինչ է, քան տևական ժամանակամիջոցում գոյացած պատմամշակութային արժեք: Լեզուն մարդկության մեծագույն ձեռքբերումներից է, իսկ լեզվի նկատմամբ նրա հետաքրքրությունը՝ գիտության ոչ պակաս կարևոր նվաճումներից մեկը: Լեզվի վերաբերյալ գիտությունը, իրոք, անցել է ձևավորվելու, ամբողջանալու, ինքնուրույն դառնալու երկարատև ճանապարհ մինչև 19-րդ դ. 10-ական թթ.՝ առանձնանալով, ինչպես նշվեց, բանասիրական մյուս գիտություններից: Նախկինում լեզվի նկատմամբ հետաքրքրությունը կրել է, կարելի է ասել, տա-

րերային (ոչ սիստեմատիկ) բնույթ, եղել է այլ գիտություններին հարակից քննության սահմաններում, այնինչ հետագայում լեզվին վերաբերող հարցերի քննությունը դրվում է գիտական հիմքերի վրա:

2. Լեզվաբանության ուսումնասիրության առարկան, բնականաբար, լեզուն է: Լեզու ասելով ամենից առաջ հասկանում ենք մարդկային լեզուն, մյուս հերթին՝ այլ «լեզուներ» (թռչունների, մեղրուների և այլն, նաև տեխնիկական սարքերի՝ հաշվիչ մեքենաներ, համակարգիչներ և այլն): Եվ պայմանավորված ուսումնասիրության առարկայի (լեզվի) նկատմամբ գիտական հետաքրքրության բնույթով, այլև հաշվի առնելով տվյալ գիտության մի դեպքում՝ պատմականությունը, իսկ մեկ այլ դեպքում՝ ընդհանրականությունը, լեզվաբանական գիտակարգերը սովորաբար բաժանվում են երեք հիմնական մասի՝ ընդհանուր, մասնակի և առանձին:

Ընդհանուր լեզվաբանությունը զբաղվում է լեզուների առաջացման, գործառության և կառուցվածքի հարցերով: Մասնակի լեզվաբանության առարկան լեզուների մի որոշակի խմբի (ցեղակցորեն նույն, տիպաբանորեն իրար մոտ և այլն) բնույթի հարցերն են, իսկ առանձին լեզվաբանությունը քննում է այս կամ այն լեզվի (հայերենի, ռուսերենի, անգլերենի և այլն) առկա վիճակի կամ պատմության հարցերը:

Այս ընդհանուր խմբավորման հարցում կան նաև այլ մոտեցումներ: Այսպես, Գ. Բ. Ջահուկյանի դասակարգման մեջ, լրացուցիչ, բերվում են ևս երկուսը՝ բարբառագիտությունը և անհատական (հեղինակային) լեզվաբանությունը, որոնք, թերևս, ավելի ճիշտ կլինեն, եթե դրվեին վերը նշված երեքից երկրորդի և երրորդի մեջ, երկրորդում՝ բարբառագիտությունը, երրորդում՝ անհատական (հեղինակային) լեզվաբանությունը¹:

Լեզուն ընդհանուր է ողջ հասարակության, և ըստ այդմ՝ նաև ողջ մարդկության համար, նրա իրականացումը խոսքն է, որն անհատական է, առավելագույնը՝ հանրության ամեն մի մասի համար, խոսքը լեզվի իրացումն է:

¹ Գ. Բ. Ժաուկյան, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978, էջ 35-43:

Լեզվի և խոսքի հարաբերությունը, որին անդրադառնալու ենք իր տեղում, ոչ այլ ինչ է, քան ընդհանուրի և մասնավորի (անհատականի) հարաբերություն: Լեզվի և խոսքի այս հարաբերակցությունը տեղի է ունենում հասարակության ներսում, հասարակական այս կամ այն պահանջմունքի բերումով, ուստի հասարակությունից դուրս կամ առանձին անհատին է պատկերացնել լեզվի գոյությունը, խոսքային դրսևորմամբ գործառությունը:

Ըստ Ֆ. դը Սոսյորի՝ «Լեզուն ձեռքբերում է, խոսքի պրակտիկայով տարածվող նրանց վրա, որոնք պատկանում են միևնույն հասարակական կոլեկտիվին, այն քերականական համակարգ է, գործուն ձևով գոյություն ունեցող ամեն մեկի ուղեղում, ավելի ստույգ՝ անհատների մեկ միավորմամբ, քանի որ լեզուն ամբողջությամբ գոյություն չունի նրանցից ոչ մեկում, այն գոյություն ունի ամբողջովին միայն կոլեկտիվում»¹:

Լեզվաբանության առարկայի սահմանման և բնութագրման առումով նման տարբերակումն ունի հիմնարար նշանակություն և, իրոք, ունեցել է ժամանակին և շարունակում է առաջնակարգ լինել նաև հետագայում: Ավելին, հիմնարար այս ձևակերպումը, ինչպես նաև դրանից բխող ավելի կարևոր մանրամասները մի տեսակ ուղենշային եղան ընդհանուր լեզվաբանության, նրա ուսումնասիրության առարկայի հետագա զարգացման առումով:

Այս դեպքում առանցքայինը, ինչպես հայտնի է, լեզվի տարբերակումն է ըստ հասարակական միջավայրի և ըստ նույնպիսի գործածության պայմանների, լեզվաբանության մասնատումը լեզվի գիտության և խոսքի գիտության՝ առաջին տեղը հատկացնելով, այսպես կոչված, խոսքի լեզվաբանությանը: Եվ դա այն նկատառումով, որ «լեզուն առհասարակ այլ է, քան խոսքը, որովհետև այն միայն խոսողության մի մասն է, թեև կարևորագույն մասը: Այն սոցիալական երևույթ է, հանրության կողմից ընդունված անհրաժեշտ պայմանականությունների ամբողջություն, որպեսզի ապահովի խոսողության

¹ Փ. ժե Սոսյոր, Курс общей лингвистики // Նույնի՝ Труды по языкознанию, М., “Прогресс”, 1977, էջ 52:

նկատմամբ իրականացումը, գործառությունը, որ գոյություն ունի լեզվի ամեն մի կրողի մեջ»¹։

Լեզվի մասին գիտության խնդիրը իրականության և նրա բառային նշանակման փոխհարաբերության պարզաբանումն է։ Ըստ Է. Բենվենիստի՝ «Լեզվաբանությունն ունի երկու օբյեկտ. այն գիտություն է լեզվի մասին և գիտություն՝ լեզուների մասին»²։ Ուստի այս գիտության առարկան լեզուն կամ լեզուներն են, ինչպես որ հասարակագիտության առարկայի դեպքում է։

Լեզվաբանությունը լեզուն դիտում է նաև մյուս երկու կարևոր կողմով՝ իբրև հաղորդակցման միջոցի և իբրև մտածողության ձևի։ Դրանք լեզվի այն հիմնական գործառություններն են, որոնք իրացվում են անհատի և հասարակության ամեն կարգի փոխհարաբերության պայմաններում։

3. Լեզվի մյուս բնութագիրը կայանում է նրա հաղորդակցական կողմի մեջ։ Վաղուց է, ինչ տեսական (փիլիսոփայական) սահմանումով լեզուն ձևակերպվում է իբրև հաղորդակցման, առավել ևս՝ վերջինիս կարևորագույն միջոց։ Իսկ դա ամենից առաջ նշանակում է, որ մյուս «միջոցները» (շարժումների, շփումների, բնական ճիշտի, մեքենական սարքերի և այլն) ածանցյալ են հիշյալ կարևորագույն միջոցի՝ բուն լեզվի առնչությամբ։

Ըստ այսմ՝ մարդկային լեզուն է հաղորդակցման կարևորագույն միջոցը, իսկ մյուսների «հաղորդակցումը» բնութագրելի է ըստ մարդկային լեզվի չափանիշների։ Ստացվում է, որ կենդանական աշխարհին հատուկ հաղորդակցումը բնորոշվում է մարդկայինի օրինակով, որպիսով բնորոշման մեջ սահմանափակություն է մտցվում, այն է՝ մարդկությունը կենդանական աշխարհի մյուս միավորներին (նաև սարքերին և սարքավորումներին և այլն) դիտում է ըստ իր պատկերացումների։ Մա, թերևս, ավանդաբար գալիս է մարդկային լեզվի նկատմամբ մեր սուբյեկտիվ ընկալումից։

Լայն իմաստով վերցված՝ հաղորդակցումը լինում է երկու տեսակ՝ բանավոր (հնչումով) և գրավոր (գրառումով), մի դեպքում գործում է

¹ Նույն տեղում, էջ 47-48։

² Ծ. *Бенвенист*, *Общая лингвистика*, М., «Прогресс», 1974, էջ 21։

ձայնը (բնական, մոդուլացված և այլն), իսկ մյուս դեպքում՝ նշանը (պատկերի, գաղափարի, գրի և այլն): Ձայնի կամ նշանի բանավոր կամ գրավոր փոխանցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ հաղորդակցում, որը, իր հերթին, ենթադրում է երկու կողմ՝ հաղորդող (արձակող՝ ասող կամ խոսող, գրող և այլն) և ընդունող (ընկալող՝ լսող, կարդացող և այլն): Հաղորդողը կարող է լինել անհատը կամ հանրությունը (խումբ՝ մարդիկ, երամ, պարս և այլն), իսկ ընդունողը՝ նույնպիսիները: Ըստ այդմ հաղորդակցումը այլ բան չէ, քան հաղորդակից կողմերի առնչություն:

Այդ առնչությունը տեղի է ունենում ոչ անհիմն կամ վերացական ձևով, այլ կոնկրետ՝ ժամանակի և տարածության մեջ: Ըստ այսմ էլ հաղորդակցումը լեզվաինացական (ճանաչողական) առնչություն է որևէ նյութի շուրջ՝ առնված ժամանակի և տարածության մեջ: Ժամանակն ապահովում է երևույթի պատմականությունը, իսկ տարածությունը՝ նրա սփռվածությունը: Այսպիսով, լեզուների պատմությունը, որն այլ բան չէ, քան մարդկային հաղորդակցության հանրագումար, ունի տևական ձգվածություն, տարածական ամբողջություն: Հաղորդակցումը հին է այնքան, որքան հին է մարդկությունը, այլև ձևավորված է այնպես, ինչպես հաղորդակցման նյութն է եղել: Լեզուների ժամանակը և տարածքը չափվում են մարդկության մշակույթով (կենդանական աշխարհի մյուս միավորների հորինվածքով և այլն): Վերջինս, կարելի է ասել, հաղորդակցման արդյունք է՝ տարածության և ժամանակի հարաբերակցությամբ:

4. Լեզուն միաժամանակ մտածողության ձև է: Լեզվի և մտածողության առնչության հարցին նվիրվելու է առանձին թեմա, այստեղ միայն նկատենք, որ մտածողությունը մարդկային գործունեության միջոց է, միաժամանակ՝ արդյունք: Կենդանի էակներից միայն մարդուն է հատուկ մտածելու կարողությունը. լեզուն մտածողության նյութական ձևն է, ինչպես նաև վերջինիս միջոցը:

Լեզվի առաջացումը պատմական գործընթացի (պրոցեսի) արդյունք է, որին մարդն հասել է իր կենսակերպի լավագույն դրսևորման միջոցի՝ մտածողության շնորհիվ, վերջինիս անընդհատ կատարելաց-

ման ճանապարհով: Մտածելու կարողությունը կենդանի արարածներից միայն մարդուն է հատուկ:

Մտածողությունը հոգեբնախոսական երևույթ է, այն ոչ միայն գործընթաց է, այլև արդյունք: Մտածողության արտաքին կողմը նրա հնչյունական (լեզվական) թաղանթավորումն է, իսկ ներքին կողմը՝ հոգեբնախոսական (մտածական) հենքը: Լեզվի և մտածողության կապը անմիջական է, դրանք պայմանավորված են միմյանցով. չի կարող լինել հարուստ և զարգացած լեզու, առանց նույնպիսի մտածողության, և հակառակը:

Նախ՝ մարդկության պատմությունը, կարելի է ասել, այլ բան չէ, քան լեզվամտածողության (մշակույթի՝ ստեղծածի) պատմություն, որին մարդը հասել է տևական ժամանակի ընթացքում: Մյուս կողմից՝ այն հիմնված է ճանաչողության փորձի վրա. օրինակ՝ երեխան մի կարճ ժամանակում լիովին տիրապետում է այդ փորձին նախնական, ամենատարրական (էլեմենտար) վիճակով, որը նրա համար հանդիսանում է հենք, իմացական յուրօրինակ վերելքի՝ վերաճի համար, ի նպաստ մարդկության մշակույթի վերընթացի ապահովման:

Այսպիսով, լեզվաբանությունը հասարակական (հումանիտար) գիտություն է, նրա ուսումնասիրության առարկան, առաջին հերթին, լեզուն է, այնուհետև նրա ածանցյալները՝ հաղորդակցման միջոց և մտածողության ձև լինելը:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 3-4:

Լրացուցիչ գրականություն:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 5-19:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 7-9:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 4-7:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 15-21:

Թեմա 2. Լեզվաբանության հիմնական խնդիրները

Հիմնահարցեր: Լեզվի ուսումնասիրության առանձնահատկությունները և հատկանիշները: Լեզվաբանությունը և մյուս գիտությունները: Լեզվաբանությունը և բանասիրական մյուս գիտությունները:

1. Լեզվաբանությունը յուրօրինակ գիտություն է, որ ուսումնասիրում է մարդկային լեզուն՝ իբրև մեկ ամբողջական համակարգ: Այդ գիտությունը առաջին հերթին քննում է մարդկային լեզուն՝ իբրև կենդանի երևույթ, ընդ որում ոչ միայն առանձին վերցված, այլև ընդհանուր դիտարկման մեջ՝ իր կազմախոսական, հոգեմտավոր դրսևորումներով հանդերձ:

Լեզուն արտաքին աշխարհի իմացական նշանակումն է, և որպես այդպիսին՝ այն ոչ միայն ընդհանուր է, այլև մասնավոր, այսինքն՝ պարունակում է տվյալ հասարակությանը, այլև վերջինիս յուրաքանչյուր անդամի հոգեկերտվածքին բնորոշ գծեր: Այն միանգամից չի առաջացել, այլ մարդկության ձևավորման և զարգացման հետ միաժամանակ, ընդ որում մարդկության հասարակական տարբերացման (դիֆերենցման) հետ, առանձին հանրությունների աշխատանքային տարարնույթ գործունեության ընթացքում:

Լեզվի ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա հասարակական բնույթ ունենալն է: Վաղ և միջին դարերում լեզվի միջոցով փորձել են պատկերացում կազմել տվյալ ժողովրդի պատմության, նրա մշակույթի, սովորույթների, դիցաբանության վերաբերյալ և այլն:

Յուրաքանչյուր լեզու ընդհանուր մարդկային և կոնկրետ ազգային յուրահատկությունների ամբողջություն է, պատմականորեն առաջ եկած իրողություն: Առանձին լեզուների վերաբերյալ եղած գիտելիքները տվյալ դեպքում հիմք են հանդիսանում ընդհանուր լեզվի բնորոշման համար: Այստեղ շատ կարևոր է ունենալ պատկերացում լեզվի ընդհանուր էության և վերջինիս հիմքում ընկած առանձին երևույթների՝ դրսևորումների վերաբերյալ: Այս իմաստով ընդհանուրը և մասնավորը բնորոշվում են իբրև հանրության մի խմբի (ցեղի, տոհմի, ժողովրդի և այլն) և ողջ հասարակության (տվյալ ժամանակում ապրող մարդկանց) փոխհարաբերություն. մարդկությունը լեզվակիր է, լեզուն՝ մարդկային: Լեզուների թե՛ անցյալը և թե՛ ներկան

ընդհանուր առմամբ քննության առարկա են այս առնչության յուրահատկության տեսանկյունից, իմացաբանական որոշակի մեթոդի, ինչպես նաև գաղափարաբանության (կոնցեպտուալիզմի) հիման վրա:

Այսպես, Է. Բ. Ադայանը հետևյալ կերպ է բնորոշում լեզվի հասարակական երևույթ լինելը. «Լեզուն ծառայում է իրենով խոսող հասարակությանը ամբողջությամբ վերցրած. լեզուն ընդհանուր է և միասնական իրենով խոսող հանրության համար՝ անկախ հասարակության դասակարգային շերտավորումից, քաղաքական խմբավորումից և այլն»¹:

Լեզվի և հասարակության կապը բավականին սերտ է:

Արդեն գիտենք, որ ինչպիսի աստիճանի վրա որ գտնվում է տվյալ հասարակության առաջընթացը պատմական որոշակի ժամանակաշրջանում, այնպիսին էլ նրա լեզվի զարգացման մակարդակն է: Չի կարող լինել զարգացած հասարակություն առանց զարգացած լեզվի, և հակառակը՝ անհնարին է լինել ցածր մակարդակի վրա գտնվող հասարակություն, բայց ունենալ զարգացած լեզու: Ուստի կարելի է ընդգծել, որ մարդկային հասարակության առաջին ձեռքբերումներից մեկը եղել է և մնում է լեզուն, եթե ոչ ամենաառաջին ձեռքբերումը:

Ինչպես որ լեզվի միջոցով կարելի է մեկնաբանել մարդկային հասարակության ողջ պատմությունը, այնպես էլ գաղափար ունենալ նրա մշակույթի, հոգեկան կերտվածքի, սովորույթների, նիստուկացի և այլնի մասին: Նույնը կարելի է ասել նաև անհատի լեզվի վերաբերյալ, քանի որ վաղուց և եթե ապացուցված են անհատի և հասարակության լեզվական փոխադարձ կապը և իրարով պայմանավորված լինելը:

Լեզվի առաջացումը և զարգացումը սերտ առնչություն ունեն այն կրող հասարակության առաջացման և նրա ներսում տեղի ունեցող պատմական ինչ-ինչ փոփոխությունների հետ:

Հայտնի է, որ մարդկության առաջընթացն անցել է որոշակի փուլեր, և ըստ այդմ այն «ենթադրում է հասարակության, տվյալ լեզուն կրող ողջ հանրության (տոհմի, ցեղի, ժողովրդի, ազգի) հաղորդակցական գործունեություն»²:

¹ Է. Բ. Ադայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 6:

² Նույն տեղում:

Լեզվաբանությունը ընդհանուր տեսական գիտակարգ է, որ ուսումնասիրում է ոչ թե այս կամ այն կոնկրետ լեզուն, այլ լեզուներն ընդհանրապես՝ իբրև մեկ ամբողջություն: Ընդհանուր լեզվաբանությունը լայն հիմքեր է գցում մասնավոր լեզվաբանության, այսինքն՝ առանձին լեզուների ուսումնասիրությամբ զբաղվող գիտության համար: Յուրաքանչյուր առանձին լեզու լեզվաբանության առարկա է այնքանով, որքանով ներկայացնում է յուրահատուկ գծեր, որոնք բնականաբար հաշվի են առնվում մյուս լեզուների նմանատիպ երևույթների հետ: Դա արվում է լեզուն ավելի իրական ձևով բնորոշելու համար: Այլ կերպ ասած՝ լեզվի հարցում էական նշանակություն ունի ընդհանուրի և մասնավորի (կամ անհատականի) առանձնացումը:

Եթե դատում ենք ըստ այնմ, որ լեզուն մարդկային գործունեության ընթացքում առաջ եկած երևույթ է, ապա նկատում ենք, որ այն սերտ առնչություն ունի անհատի հոգեկան պատկերացումների և մտավոր կարողությունների հետ:

Լեզվաբանության ուսումնասիրության առարկան, ինչպես արդեն գիտենք, մարդկային լեզուն է, երկրորդաբար՝ կենդանական աշխարհի մյուս միավորների (թռչունների, կաթնասունների, սողունների և այլն) «լեզուն»: Այն, իբրև ինքնուրույն գիտակարգ (դիսցիպլին), առանձնանում է հասարակական մյուս գիտակարգերից, ամենից առաջ՝ քերականագիտությունից:

Լեզուն ուսումնասիրող գիտությունը, բնականաբար, անընդհատ զարգացել է և դարձել է բազմաբովանդակ բնագավառ: Մակայն բուն նպատակը սկզբնապես եղել է լեզուների համեմատական ուսումնասիրությունը՝ պարզելու նրանց միջև հնարավոր ցեղակցությունը, ընդ որում ամենից առաջ ըստ հնչյունական, բառային, (բառ)իմաստային և այլ կարգի նմանությունների և զուգադիպումների բացահայտումով: Մինչ այդ լեզուների միջև նմանությունների համեմատությունը կրել է տարերային (պատահական) բնույթ, եղել է արտաքին տպավորության արդյունք, զուրկ տեսական հիմնավորվածությունից (օրինակ՝ նմանություն հնդկերենի և անգլերենի միջև և այլն): Իսկ հետագայում լեզուների միջև համեմատությունը դրվում է գիտական նոր հիմքերի վրա, նպատակը լինում է նրանց միջև ծագումնային ընդհանրություն-

ների պարզաբանումը, ուշադրության առարկա են դառնում նաև լեզվի և այն կրող հանրության փոխադարձ կապի, ժողովուրդների պատմության մեջ լեզվի ունեցած կարևորության հարցերը:

Կարևոր առանձնահատկություն է նաև այն, որ լեզուն առաջացել է մարդկանց հաղորդակցական պահանջների բավարարման նպատակով: Այն, ինչպես արդեն գիտենք, դարձել է նման հաղորդակցման կարևորագույն միջոց, և որպես այդպիսին՝ միաժամանակ մտածողության ձև:

Լեզուն և մտածողությունը անբաժանելի միասնություն են, միմյանցով պայմանավորված: Դրանց առանձնացումը, ի դեպ, տվյալ դեպքում խիստ պայմանական է, արվում է երևույթի հստակ պատկերացման նպատակով: Լեզվաբանությունը գիտություն է առաջին հերթին մարդկային լեզվի մասին, որը քննվում է ոչ թե տարերայնորեն, այլ որոշակի մեթոդներով, մշակված սկզբունքներով և կիրառելի մոտեցումներով: Եվ դրանք էլ իրենց զանազան դրսևորումներով կազմում են նրա ուսումնասիրության յուրահատկությունները:

2. Լեզվաբանությունը մեկուսացած գիտություն չէ, այն կապ ունի մյուս, մանավանդ հասարակական գիտությունների հետ: Լեզվի ուսումնասիրությունը ենթադրում է ոչ միայն բուն նյութը քննել համապատասխան մեթոդներով և սկզբունքներով, այլև օգտագործել այլ գիտությունների այն ձեռքբերումները, որոնք այս կամ այն չափով կարող են նպաստել լեզվական երևույթների առավել ճիշտ բնորոշմանը: Գիտական համագործակցությունն առհասարակ զարգացման արդյունավետ ուղի է, լեզվաբանության մեջ ևս դա նկատելի է:

Այսպես, լեզվաբանության առաջին շրջանում (19-րդ դ. կեսեր) լեզուների ծագման և բարեշրջության (էվոլյուցիայի) հարցերում նմանություն կա լեզվաբան Ա. Շլայխերի հայացքների և կենսաբան Չ. Դարվինի տեսության միջև: Այնուհետև, կենսաբանության որոշ տվյալներ հաշվի են առնվում լեզուն կրողների սերումնային (գենետիկ) կողմի մեկնաբանության հարցերում: Բանական արարածի նյարդային համակարգի կանոնավոր և հիվանդագին (պաթոլոգիկ) վիճակների քննությունը գրեթե ամբողջովին հիմնված է լինում անհատի խոսքային տվյալների վրա:

Լեզվաբանությունը կապ ունի հասարակական այնպիսի գիտությունների հետ, ինչպիսին են պատմագրությունը, ազգագրությունը և մարդաբանությունը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ գրականագիտությունը, փիլիսոփայությունը, հոգեբանությունը, իրավագիտությունը և այլն:

ա) Լեզվի պատմությունը անհնարին է քննել այն կրող ժողովրդի բուն պատմությունից, ազգային յուրահատկություններից, մարդաբանական տիպից կտրված, որովհետև հասարակական կյանքում տեղի ունեցած և առաջ եկող գրեթե յուրաքանչյուր իրադարձություն, քաղաքական, տնտեսական և մշակութային ամեն մի տեղաշարժ իր անմիջական արտացոլումը գտնում է լեզվի մեջ: Ուստի լեզվի պատմությունը մի տեսակ տվյալ իրականության ամբողջական արտացոլումն է, կարելի է ասել՝ ամենաստույգ անդրադարձը: Ժողովուրդների կյանքում տեղի ունեցող անցքերը (բնական և տեխնածին աղետներ, քաղաքական և զինական բախումներ, տնտեսական և մշակութային տեղաշարժեր և այլն) գրեթե լիովին ամրակայվում են լեզվի մեջ, լեզվի միջոցով:

բ) Լեզվի ընդհանուր բնորոշման, նրա առաջացման և զարգացման, բուն կառուցվածքի, ինչպես նաև իրականության լեզվական ճանաչողության (իմացության), նրա վերաբերյալ հոգեկան պատկերացումների և գեղագիտական ըմբռնումների պարզաբանման հարցում հիշյալ (հարակից) գիտությունները տրամադրում են լրացուցիչ հնարավորություններ, հիմնականում կատարում են անսխալ դեր, որն այնքան էլ պակաս կարևոր չէ:

Բնական գիտություններից, օրինակ, կենսաբանության և ֆիզիկայի տվյալները, տեսալսողական (տեսողությանը և լսողությանը վերաբերող) սարքերը անհրաժեշտ են լեզվաբանության առանձին բաժինների ուսումնասիրման դեպքում: Այսպես, լեզուների հնչյունական համակարգերի ձայնագրական-հնչաբանական քննության առավել ստույգ արդյունք կարելի է գրանցել, եթե այն կատարվում է, այսպես կոչված, «խոսքի գործարանների» (մարդու օրգանիզմի տեսալսողական բաղադրիչների) վերաբերյալ գիտելիքների, անհրաժեշտ տեխնիկական սարքերի օգտագործմամբ և այլն: Լեզուների պատմության

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման միջոցների օգտագործումը հարցի պարզաբանման դեպքում հաճախ խաղում է վճռորոշ դեր:

Այսպես, հայտնի է, Հ. Աճառյանը դեռևս Փարիզում ուսանելիս (1890-ական թթ.) Սորբոնի համալսարանի հնչույթաբանության լաբորատորիայում (աբբա Ժ. Պ. Ռուսոյի ղեկավարությամբ) հատուկ սարքերի օգնությամբ գրանցում է իր (պոլսահայ արտասանության կրողի) խոսքի հնչագրությունը՝ պարզելու հատկապես բառասկզբի դիրքում հայերենի պայթական բաղաձայնների լրիվ կամ մասնակի քմայնացման բնույթը ($p, q, r > p', q', r'$ և այլն): Ի դեպ՝ բաղաձայնների քմայնացման երևույթը եղել է շատ կարևոր, ըստ այդմ բավականին վիճելի խնդիր, որին անդրադարձել են տարբեր սերնդի շատ լեզվաբաններ՝ ոչ միայն կոնկրետ հայերենի, այլ նաև ընդհանուր՝ հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության տեսանկյունից: Այս խնդրի լուծման փորձառական սկզբունքը հետագայում լայնորեն գործադրվեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հնչույթաբանության բաժնում, և ստացվեցին լավագույն տվյալներ հայերենի հնչյունական համակարգի ոչ միայն հիշյալ կարգի բաղաձայնների, այլև գրեթե բոլոր բաղադրիչների վերաբերյալ¹:

Նման փորձեր, բնականաբար, կատարվել են նաև այլ լեզուների համար, տարբեր երկրներում: Ըստ այդմ լեզուների ուսումնասիրության մի բաժինը, որն ավելի մասնավոր անվանումով կոչվում է փորձառական հնչյունաբանություն, ներկայումս ավելի մեծ արդյունքի է հասնում լեզվաբանության և տեխնիկական սարքերով զբաղվող գիտությունների համագործակցության պայմաններում:

Աշխարհում գոյություն ունեն ժողովուրդներ, որոնց լեզուն բանավոր վիճակից դեռևս չի հասել գրավոր աստիճանի, ուստի այդ լեզուների ուսումնասիրություն ներկայիս պայմաններում գրեթե անհնարին է դրանց հնչյունական համակարգի (արտասանական բազայի և այլն) ստույգ պատկերացումն առանց ֆիզիկայի և հարակից բնագավառների տեխնիկական միջոցների օգտագործման:

¹ Տես Ս. Հ. *Խոսչարյան*, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Ե., 1988, էջ 164-184:

Դատական իրավաբանության մեջ ևս ընդունված է տեխնիկական սարքերի գործադրումը՝ ձայնագրական և վերլուծական (հոգերնախոսական ինչ-ինչ պահերի ճշգրտման) աշխատանքի դեպքում, ըստ այդմ՝ խնդրի պարզաբանման համար:

3. Լեզվաբանությունը առնչություն ունի հատկապես բանասիրական գիտությունների հետ՝ գրականագիտություն, ոճաբանություն (լայն իմաստով), ձեռագրագիտություն, բանահյուսություն (ֆոլկլոր), բնագրագիտություն (տեքստաբանություն) և այլն:

Գրականագիտության բնագավառում գեղարվեստական պատկերի ստեղծման հիմքը աշխարհի լեզվական պատկերն է, որը բեկվում է գրողի ոճական կողմի (պրիզմայի) մեջ: Ոճաբանությունը համատեղում է գրական և լեզվական միջոցների գործադրում այնքանով, որքանով ոճը, իբրև այդպիսին, հաղորդակցական միջոցի (լեզվի) կիրառության (խոսքի) տարբերությունն է¹:

Հասարակական մյուս գիտաճյուղերը նույնպես, իբրև գրավոր (ձեռագիր, վիմագիր և այլն) կամ բանավոր (էպոս, հեքիաթներ, առածասացվածքներ և այլն) խոսքի բնագավառ, իրենց հիմքում, անշուշտ, ունեն լեզուն՝ իբրև հաղորդակցական հնարավորություն: Այնուհետև, բուն լեզվի ներսում, օրինակ, բարբառների քննությունը ներկայումս մեծապես հենվում է լեզվաբանական համապատասխան գիտելիքների վրա՝ հարկավ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Այսպես, հայ բարբառների լեզվական-վիճակագրական քննության ժամանակ Գ. Բ. Ջահուկյանի կողմից օգտագործվել են ոչ միայն հաշվողական-վիճակագրական մեթոդի որոշ սկզբունքներ և մոտեցումներ, այլև ներդրվել են տեխնիկական սարքերի ընձեռած այլ հնարավորություններ՝ բարբառների գրանցման, ուսումնասիրման և քարտեզագրման համար: Ըստ այդմ կատարվել է բարբառային հատկանիշների ավելի ճշգրիտ ընտրություն և հաշվարկ, բարբառախոս վայրերը բնորոշվել են ըստ այդ հատկանիշների, իսկ առանձին բարբառների և բարբառային խմբակցությունների մերձավորության աստիճանը գրանցվել է մաթեմատիկական ճշգրտությամբ և այլն:

¹ Վ. Գ. Համբարձումյան, Լեզու, ոճ, խոսք // «Բաները Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182-191:

Բանահյուսական նյութեր հավաքելիս տեղեկատուի (ինֆորմանտի) խոսքի գրանցման համար օտագործվում են տեսալսողական (տեխնիկական) տարբեր սարքեր (ձայնագրիչ, խոսափող, պատկերագրիչ և այլն):

Եթե անփոփելի լինենք ասվածը, ապա կարելի է նշել, որ ինչպես ամեն մի գիտություն, այնպես էլ լեզվաբանությունը ունի իր կոնկրետ խնդիրները, որոնց լուծումը կարևոր է հասարակության լեզվական հաղորդակցման էության պարզաբանման համար:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 3-4:

Լրացուցիչ գրականություն:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 5-19:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 11-12:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 4-7:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 21-26:

ԹԵՄԱՏԻԿԱ ԻԻ. ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ

ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Թեմա 1. Լեզուն որպես հասարակական երևույթ

Հիմնահարցեր: *Լեզվի և հասարակության փոխադարձ կապը: Լեզվի հասարակական դերը: Լեզուն հասարակական գործունեության իրակահասցման միջոց: Լեզուն ընդհանուր և միասնական հաղորդակցման միջոց:*

1. Լեզվաբանությունը յուրօրինակ գիտություն է: Այն, ինչպես ասվեց, ուսումնասիրում է մարդկային լեզուն՝ իբրև մեկ ամբողջական համակարգ: Լեզուն և նրանով իր ապրումները, հույզերն ու մտածումները արտահայտող հանրությունը գտնվում են փոխադարձ կապի մեջ: Եվ պատահական չէ, որ լեզվի միջոցով նախկինում փորձել են տեղեկանալ տվյալ ժողովրդի (տոհմի, ցեղի, ազգի և այլն) պատմությանը, մշակույթին, նիստուկացին և սովորույթներին, նույնիսկ գերբնական ուժերի հանդեպ դիցական (առասպելական) ներշնչումներին:

Այդ գիտության առարկան, որ առաջին հերթին մարդկային լեզուն է, իբրև կենդանի երևույթ, ուսումնասիրվում է ոչ միայն առանձին, այլև ընդհանուր դիտարկման, այլ երևույթների հետ ունեցած անքակտելի կապի մեջ: Կարելի է ասել, թե ընդհանուր լեզու գոյություն չունի, այլ այն ընդհանրացումն է կոնկրետ լեզուների լեզվաբանությունը զբաղվում է այդ ընդհանուրի քննությամբ՝ տեսական կուռ հիմքեր ստեղծելու կոնկրետ լեզուների ավելի լիարժեք քննության համար: Ըստ այդմ՝ ասենք, հայերենի, ռուսերենի, անգլերենի և այլ լեզուների վերաբերյալ առանձին գիտական վերլուծությունները հիմք են ստեղծում կատարելու ընդհանրացում, առհասարակ ավելի վերացարկված պատկերացում կազմելու դրանց մասին:

Այսպես, կենդանի լեզուներից հայերենը, ռուսերենը, իսկ մեռած լեզուներից լատիներենը ունեն հոլովման համակարգեր, այսինքն՝ անուն խոսքիմասային միավորները (գոյական, ածական և այլն) ձևաբանորեն փոփոխելի են, ըստ բայի խնդրային կամ պարագայական հարաբերությունների արտահայտման. օր.՝ հայ. *աշակերտը - աշակերտի, աշակերտին* և այլն, ռուս. *ученик - ученик-а, ученик-у* (նույ-

նը) և այլն, լատ. *puer - puer-i, puer-o* (նույնը) և այլն ձևերը թեքված (հոլովված) ձևեր են, որ արտահայտում են որոշակի հարաբերություն: Իսկ, ասենք, անգլերենը, ֆրանսերենը չունեն հոլովման համակարգեր, այսինքն՝ խնդիրներին և պարագաներին վերաբերող հարաբերություններն իրացվում են նախդրային կառույցներով. օր. անգլ. *on the table* «սեղանին, սեղանի վրա» և այլն, ֆրանս. *sur la table* «սեղանին, սեղանի վրա» և այլն: Ուստի կարող ենք շեշտել, որ վերը համեմատված լեզուներին յուրահատուկ է կամ հոլովական, կամ նախդրային կառույցներով տիպերի դրսևորումը, որն ընդհանուր առմամբ այլ բան չէ, քան ձևաբանական նման յուրահատկությունների ընդհանրացում, դիտարկում մեկ ամբողջության մեջ: Գիտության մեջ առանձնացվում են լեզուների տարբեր տեսակներ (տիպեր), տվյալ դեպքում թեքական (կցականության որոշ տարբերով հանդերձ) և անջատական. նշված օրինակով հայերենը, ռուսերենը և լատիներենը՝ մի տիպի, իսկ անգլերենը, ֆրանսերենը՝ մեկ այլ տիպի լեզուներ են:

Այնուհետև, վերացարկումն այս դեպքում այն է, որ կոնկրետ փաստերից անցում է կատարվում ընդհանուր դրվածքին: Նման օրինակները բազմաթիվ են և խիստ բազմազան. լեզվաբանությունը առանձին իրողությունների վերլուծությամբ հանգում է ընդհանուր եզրակացությունների: Ընդհանուր դրվածքին է վերաբերում նաև այն, որ այդ և նման կարգի տարբերությունները պատմականորեն առաջ եկած իրողություններ են, այս կամ այն հանրության ամենից առաջ մտածողության յուրահատկության արտահայտություն:

Լեզվի և հասարակության կապը ոչ թե պարտադիր է, այլ պայմանական: Իր մայրենի լեզվով խոսող երեխան, օրինակ, այլ լեզվով խոսող միջավայրում ժամանակի ընթացքում յուրացնում է այդ միջավայրի լեզուն, որ նշանակում է, թե նա դառնում է մեկ այլ հանրության անդամ, քանի որ հաղորդակցվում է ոչ մայրենի, այլ մեկ այլ լեզվով: Այդպես էլ շատ ժողովուրդներ, ինչպես ցույց է տալիս մարդկության պատմությունը, ինչ-ինչ պայմաններում (պատերազմներ, բռնացում, տեղաշարժ և այլն) կորցնում են իրենց բնիկ լեզուն և դառնում այլ լեզվի կրող, որովհետև ներածվում (ինտեգրվում) են այլ հասարակու-

թյան մեջ (հմմտ. ժողովուրդների, ազգերի միջև եղած և տեղի ունեցող ազդեցությունը, ուժացումը և այլն): Լեզուն ձգտում է ներդաշնության իրենով հաղորդակցվող հասարակության հետ, և հակառակը՝ հասարակությունը լեզվի շնորհիվ է, որ դառնում է միասնական և ամբողջական:

2. Լեզվի հասարակական դերը ևս որոշակի է, այն ամենից առաջ ունի հաղորդակցման իրականացման նպատակ: Լեզուն և այն կրող հասարակությունը գտնվում են ոչ միայն փոխադարձ կապի մեջ, այլև այդ կապը բավականին սերտ է, գրեթե անբաժանելի, որովհետև մեկը ընդմիջտ պայմանավորված է մյուսով, և այն իր հերթին՝ պայմանավորում է մյուսին: Հասարակությունը և նրան սպասարկող լեզուն միմյանց նկատմամբ գտնվում են հաղորդակցական բացարձակ հարաբերության մեջ, այսինքն՝ անկախ քաղաքական գերակայությունից, զինական ուժի առավելությունից, տնտեսական կախվածությունից, մշակութային ազդեցությունից և այլն, նրանց առնչությունը հավասարաթեք է, նրանց միջև գոյություն չունի դասային կամ դասակարգային շերտավորում կամ տարբերակում: Լեզուն առհասարակ մարդկային և կոնկրետ ազգային յուրահատկությունների ամբողջություն է, և ըստ այդմ՝ լիովին պատմական իրողություն, որ հանրորեն (սոցիալապես) տարբերակված է, սակայն հաղորդակցորեն ոչ տարանջատված:

Առանձին լեզուների վերաբերյալ եղած գիտելիքները տվյալ դեպքում հիմք են հանդիսանում ընդհանուր լեզվի բնորոշման համար: Այստեղ շատ կարևոր է ունենալ պատկերացում լեզվի ընդհանուր էության և վերջինիս հիմքում ընկած առանձին երևույթների վերաբերյալ (ընդհանուրի և առանձինի՝ մասնավորի, այլև էության և երևույթի փոխհարաբերություն): Նման հարցադրումը լիովին վերաբերում է ճանաչողության (փիլիսոփայության) ոլորտին, և պատահական չէ, որ հին աշխարհում չկար սահմանազատում իրի և անվանման միջև (հմմտ. *ժառ* առարկան և «ծառ» բառիմաստը՝ անվանումը), որին գիտությունը հասավ միայն հետագա ժամանակներում: Ինչպիսին որ տվյալ հասարակության առաջընթացն է՝ պատմական որոշա-

կի շրջանում, տարածաշրջանային իրական պայմաններում, այնպիսին էլ՝ նրա լեզվի մակարդակը: Ինչպես արդեն գիտենք, ընդունված է ասել, թե չի կարող լինել տնտեսապես հարուստ, մշակույթով առաջավոր հասարակություն առանց զարգացած լեզվի, և հակառակը՝ անհնարին է մտածել, որ ցածր կացության վրա գտնվող հանրությունն ունի հարուստ լեզու: Մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ ժողովուրդների մի մասն ունի կացության տվյալ ձևի նկատմամբ այնպիսի հակումներ (պատերազմասեր, կործանարար, կողոպտիչ և այլն), որպիսին չունի մյուս մասը (խաղաղասեր, ստեղծարար, հանդուրժող և այլն):

Այնուհետև, կրոնները, այլ հավատալիքները առաջ են բերել հոգեկան կերտվածքի զգալի տարբերություններ, նույնիսկ այլևայլ նկրտումներ, որոնք լեզվի առումով գրեթե մնում են նույնը՝ ընդհանուր մարդկային հաղորդակցական հնարավորության համար, իսկ լեզվական մշակույթի կուտակման տեսանկյունից՝ մասնավորված, բոլորովին առանձնացած (հմմտ. հին արևելքի մշակույթ, հունահռոմեական մշակույթ, հելլենիզմ, հայկական վերածնունդ և այլն):

Քաղաքակրթությունը և կործանարարությունը լեզվի նույն գործունեության ոլորտում են, հանդես են գալիս լեզվի հասարակական նույն դերի մեջ: Ուստի լեզուն եղել է մարդկային հասարակության առաջընթացի կարևոր ցուցիչը. լեզվի միջոցով, իրոք, կարելի է մեկնաբանել մարդկային հասարակության պատմությունը, գաղափարունենալ նրա մշակույթի, հոգեկան կերտվածքի, սովորույթների մասին և այլն: Նույնը վերաբերում է անհատի՝ հասարակության անդամի լեզվին, որքանով որ ճանաչողության առումով ապացուցված են անհատի և հասարակության լեզվական փոխադարձ կապը և պայմանավորումը: Այսպես, օրինակ, Թումանյանի լեզուն այն է, ինչ հայ հանրության հաղորդակցման միջոցը, սակայն այդ մեծ անհատի խոսքը իրենն է, իսկ նրան ծնած ժողովրդինը՝ իրենը: Դրականը և բացասականը անհատի հոգեկերտվածքի միասնական բաղադրիչներ են, մեկի դեպքում՝ ըստ ամենայնի, մյուսի դեպքում՝ մասնակիորեն: Աշխարհը հողորդակցորեն դրականի իդեալն ունի, նրա ձգտումը լեզվական իդեալի իրացումն է:

3. Լեզուն հասարակական գործունեության իրականացման միջոց է: Այն առաջ է եկել ոչ միանգամից, այլ մարդկության ձևավորմանը և զարգացմանը զուգընթաց, ընդ որում, ինչպես ընդունված է ասել, հանրության (տոհմի, ցեղի և այլն) համատեղ գործունեության ընթացքում: Լեզվի ծագումը և զարգացումը սերտ առնչություն ունեն այն կրող հասարակության գոյացման և առաջընթացի, այլև վերջինիս ներսում տեղի ունեցող պատմական այն փոփոխությունների հետ, որոնք անմիջաբար արտացոլվում են լեզվի մեջ: Հայտնի է, որ մարդկության առաջընթացն անցել է որոշակի փուլեր (պատմաաշրջաններ), որն այս կամ այն չափով իր արտացոլումն է գտել ամենից առաջ լեզվի մեջ, և ըստ այդմ, ուսումնասիրելով լեզվի պատմությունը, կարելի է որոշակի պատկերացում ունենալ այդ առաջընթացի վերաբերյալ՝ ոչ միայն առհասարակ, այլև առանձին դեպքերում, այս կամ այն պատմաաշրջանի առումով:

Լեզուն հասարակական գործունեության սպասարկման ոչ թե առանձին կամ մասնավոր, այլ ընդհանուր միջոց է: Ճիշտ չէ այն տեսակետը, համաձայն որի լեզուն դասակարգային, կամ ըստ հասարակության շերտերի (խավերի) սպասարկման միջոց հանդիսացող երևույթ է: Լեզուն ընդհանուր է տվյալ հասարակության համար՝ իբրև ամբողջական սպասարկման միջոց, այն միատարր է և միասնական, նրանից օգտվում է հասարակության յուրաքանչյուր անդամ՝ իբրև անհատ, և ողջ հասարակությունը՝ իբրև մեկ ամբողջություն: Ինչպիսին որ տվյալ հասարակության գիտակցությունն է, այնպիսին է նաև նրա լեզուն. դա սովորական է և հիմնավորվում է հին գրավոր մշակույթ և համապատասխան զարգացման հասած լեզուների օրինակով: Ուստի անառարկելի է, որ լեզուն մտքի կազմակերպման և արտահայտման միջոց է:

Յուրաքանչյուր առանձին լեզու գիտական ուսումնասիրության առարկա է այնքանով, որքանով ներկայացնում է յուրահատուկ գծեր, որոնք բնականաբար հաշվի են առնվում մյուս լեզուների նմանատիպ երևույթների հետ համեմատելիս: Դա արվում է լեզուն ավելի իրական ձևով բնորոշելու համար: Այսպես, հայերենի տվյալների ընդգրկումը

լեզուների պատմահամեմատական ուսումնասիրության մեջ նախկինում չէր ընդունել այն չափերը, որ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ առավել լայն ճանաչում գտավ նրա յուրահատուկ գծերի քացահայտումը:

Եթե դատում ենք ըստ այնմ, որ լեզուն մարդկային գործունեության ընթացքում առաջ եկած երևույթ է, ապա նկատում ենք, որ այն սերտ առնչություն ունի անհատի հոգեկան պատկերացումների և մտավոր կարողությունների հետ:

4. Լեզվի, իբրև հասարակական երևույթի, մյուս բնութագրիչ կողմն այն է, որ այն ոչ թե մասնատված, այլ ընդհանուր և միասնական հաղորդակցման միջոց է: Որքան էլ տվյալ հասարակությունը, ավելի լայն վերցրած՝ մարդկությունը պատմականորեն կամ տվյալ ժամանակահատվածում կարող է տարանջատված (դիֆերենցված) կամ շերտավորված եղած լինել, պայմանավորված արտադրական միջոցների և արտադրական հարաբերությունների բնույթով, նյութական միջոցների նկատմամբ հնարավորությունների սահմանով, մտավոր զարգացման աստիճանով և այլն, այնուամենայնիվ լեզուն զերծ է նման առանձնացումներից, այն հավասարապես է իրականացում իր գործառույթները:

Նախկինում գիտության մեջ եղել են նման տարբերակվածության շուրջ ոչ գիտական մոտեցումներ, սակայն ներկայումս լեզուն դիտարկվում է իբրև հասարակության գործունեություն իրականացող միասնական և ամբողջական գործառույթի կրող երևույթ:

Լեզուների առաջացումը, փոփոխությունը և նույնիսկ վերացումը այլ բան չեն, քան հասարակության նույնպիսի տեղաշարժեր: Ամեն մի հանրության իսկության ցուցիչը նրա լեզուն է, մյուս հատկանիշներն ածանցյալ են, լիովին պայմանավորված լեզվով: Ավելի ներփակ (կոմպակտ) հանրության գոյաձևը նրա լեզուն է, փոխվեց այն, այլևս գոյություն չունի այն կրող հանրությունը: Մա, ինչ խոսք, այլ է համեմատաբար մեծ տարածական, թվային և մշակութային ծավալ ունեցող հանրությունների դեպքում. կան կեցությամբ, հոգեկերտվածքով իրարից տարբեր ժողովուրդներ, որոնք խոսում են նույն լեզվով, սակայն

մնում են առանձին (հմնտ. ժամանակակից աշխարհում լեզվի ընդհանրություն ունեցող հասարակությունների առանձնակիություն և այլն):

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 3-4:

Լրացուցիչ գրականություն:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 5-19:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание Ереван, 2010, էջ 11-13:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 17-18:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 21-26:

Թեմա 2. Լեզուն որպես հաղորդակցման միջոց

Հիմնահարցեր: Լեզվական հաղորդակցման բնորոշումը: Հաղորդակցման բնույթը և էությունը: Հաղորդակցման եռակողմ կապը՝ խոսող, ընկալող և լեզվական համակարգ. չորրորդ կողմը՝ վերաբերություն կամ լեզվի արտահայտչական գործառնություն (ֆունկցիա): Հնչյունական լեզվին օժանդակող միջոցները. շարժումներ (ձեռքի, դեմքի և այլն), գրային կամ ձայնային միջոցներ, նշանային համակարգեր: Հաղորդակցման տեխնիկական միջոցները:

1. Լեզվական հաղորդակցում նշանակում է կողմերի աննշանություն որևէ նյութի (ասելիքի) շուրջ: Այն լինում է երկու ձևով՝ բանավոր (տեսալսողական՝ մոդուլատիվ միջոցներ) և գրավոր (հետագծային միջոցներ) գործադրմամբ:

Գրավոր հաղորդակցումը համեմատաբար ուշ երևան եկած իրողություն է: Մարդկությունը վաղ (տաբերային, տոհմային, ցեղային) ժամանակներում հաղորդակցվել է միայն բանավոր ձևով, իսկ ավելի ուշ, երբ տեղի է ունենում գրի հայտնաբերումը, ըստ այդմ հաղորդակցումը կատարվում է նաև գրավոր ձևով. գրի առաջացումը մշակութային երկարատև գործընթացի արդյունք է:


Հաղորդակցումը բնորոշվում է առանձին (սուբյեկտիվ) և առարկայական (օբյեկտիվ) չափանիշներով: Որքան էլ հաղորդակից կողմերը քնահաճորեն ձգտեն առանձնակիություն մտցնել հաղորդման մեջ, միևնույն է, այն պիտի լինի ոչ այն աստիճանի, որ խափանվի (ձախողվի) փոխըմբռնումը, այսինքն՝ չիրականանա հաղորդակցումը, բուն ասելիքի՝ հաղորդման նյութի վերաբերյալ:

Հաղորդակցումը կարող է լինել տեղեկատվական (ինֆորմատիվ՝ դրական) և ապատեղեկատվական (դեզինֆորմատիվ՝ բացասական): Ստեղծարար առումով իրական տեսքը դրական՝ առարկայականի (օբյեկտիվի), իսկ կործանարար իմաստով՝ բացասականի՝ անձնականի (սուբյեկտիվի) մեջ է. մարդկությունը, հայտնի է, թանկ է վճարել վերջին տիպի հաղորդակցման հետևանքների համար:

Այս դեպքում, բնականաբար, խոսքը վերաբերում է դրական հեռանկար ունեցող հաղորդակցմանը: Առողջ հասարակության իդեալը ստեղծարար հաղորդակցումն է, որին հակառակ լինում է նաև բացա-

ասկան բնույթի հաղորդակցում: Հայտնի է նաև, այսպես կոչված, ծածուկ հաղորդակցում, այսինքն՝ հաղորդակցվել՝ մնալով անհաղորդակից, որ նույնն է, ինչ այլ ձևով հայտնել բուն ասելիքը (հմմտ. փարիսեցիների լեզու, «եզոպոսյան լեզու», սովետների լեզու՝ «սոֆիզմ» և այլն):

Հաղորդակցումը ենթադրում է եռակողմ հարաբերակցություն՝ հաղորդում և հաղորդակից կողմեր (հաղորդող և ընկալող), որ կարելի է ներկայացնել հետևյալ եռանկյունու տեսքով (տե՛ս գծապատկեր 1):



Եռանկյունու եզրերում ընդհանուր անվանումներ են, այսինքն՝ հաղորդում (իման՝ ասելիք, խոսքի նյութ և այլն), հաղորդող (իման՝ խոսող, գրող և այլն), ընկալող (իման՝ լսող, ընթերցող և այլն) հարաբերակցություն, որ լեզուներում իրականանում է քերականական տարբեր միջոցներով և եղանակներով:

2. Հաղորդակցման բնույթը և էությունը կարելի է սահմանել հետևյալ մի քանի հարաբերության նկատառումով: Հաղորդակցումը կարգավորված երևույթ է, հաղորդողն իր ասելիքը կազմում է իր ներսում՝ նկատի ունենալով հաղորդման նյութի օգտագործման հնարավորությունը, նաև այն, որ լեզուն ընդհանուր է և միասնական հաղորդակից կողմերի համար. հաղորդողը միշտ նկատի է ունենում, որ տվյալ լեզվով հաղորդակիցը (գրուցակիցը) հասկանում է իրեն: Դա ներքին ասելիքն է (խոսքը), որ հաղորդման ձևով օտարվում է հաղորդողից՝ անցնելու ընկալողին, վերջինի գրավականը կողմերի փոխըմբռնումն է:

Ներքին խոսքի կազմակերպումը այլ կերպ չի լինում, քան լեզվի հնարավոր միջոցների օգտագործմամբ, լեզվի համակարգի նկատառումով: Ըստ այդմ էլ հաղորդակցումը ենթադրում է ոչ միայն երկկող-

մանի կապ՝ հաղորդողի և ընկալողի միջև, այլև խոսքի՝ հաղորդողի կողմից օտարման և ընկալողի կողմից յուրացման նկատառումով: Ուստի հաղորդման բնույթն այնպիսին է, որ հաղորդակից կողմերից և բուն հաղորդումից բացի ենթադրվում է լեզվի համակարգի առկայություն: Վերջինս այլ բան չէ, քան լեզվի նյութական միավորների (բառեր, ձևեր, արտահայտություններ և այլն), նրանց կապակցման միջոցների (շարադասություն, շարահարություն և այլն) իրական գործածում հաղորդման մեխանիզմով, որը ընկալելի կարող է լինել ընդունողի կողմից նույն միավորներին և միջոցներին տեղյակ լինելու պայմանով:

Ըստ այդմ՝ ներքին խոսք կազմելը և արտահայտելը՝ մի կողմից, այն ընդունելը և ներքուստ իմաստավորելը՝ մյուս կողմից, հաղորդման գործընթացի մի դեպք են (ակտ), որ իրականացվում է որոշակի ժամանակային և տարածական իրադրության մեջ: Եվ ընդհանուր առումով՝ լեզուն նման դեպքերի (ակտերի) պատմական ամբողջացման և համաժամանակյա կիրառության երևույթ է, որն ունի ճանաչողական արժեք: Այն մարդկության փորձի մեկտեղումն է, կարելի է ասել, շտեմարանն է:

3. Հաղորդակցումն ունի եռակողմ դրվածք՝ խոսող, ընկալող (ընդունող) և լեզվական համակարգ (լեզուն իր բաղադրիչներով և նրանց միջև հնարավոր առնչությունների իրականացման ձևերով ու եղանակներով), իսկ չորրորդ կողմը՝ վերաբերությունն է կամ, այլ կերպ ասած, լեզվի արտահայտչական գործառնությունը (ֆունկցիան):

Հաղորդակցման երեք կողմերից առաջին երկուսն ինքնին հասկանալի են, երրորդն այն է, որ լեզուն՝ իբրև համակարգ, յուրացված է լինում հաղորդակից կողմերի հոգեմտավոր պատկերացումների մեջ, մի տեսակ կողավորված է, որ լեզվական գործունեության (փորձի, տարիքի, կրթության և այլն) ընթացքում այս կամ այն չափով ծառայում է հաղորդակցմանը:

Է. Բ. Աղայանը հաղորդակցման չորրորդ կողմ է դիտում *վերաբերությունը* կամ լեզվի արտահայտչական գործառնությունը (ֆունկցիան): Ըստ այդմ նա գրում է, որ «յուրաքանչյուր հաղորդակցում եռակի վերաբերություն ունի՝ խոսողի, ընկալողի և լեզվական համակար-

գի, ըստ որում եթե խոսող և ընկալող վերաբերությունները ներկայացնում են հաղորդակցման առանձին բևեռները կամ կողմերը, ապա լեզվական վերաբերությունը երկկողմանի բնույթ ունի, քանի որ ոչ միայն հաղորդողն է իր խոսքը կազմում լեզվի համակարգի գործադրությամբ, այլև ընկալողը, որ լսելով (կամ կարդալով) հաղորդվածը, դարձյալ լեզվական համակարգի օգնությամբ է վերլուծում ընկալված խոսքը և հասնում դրա ըմբռնմանը»¹:

Սակայն իրականության ճանաչումը, որը կատարվում է լեզվի միջոցով, բնավ ինքնանպատակ չէ, այլև ոչ պատահական: Ամեն մի հաղորդակցում մարդկային գործունեության մի դրսևորում է, որ ենթադրում է որոշակի արդյունք, հետապնդում է որևէ նպատակ: Ընդ որում այն կատարվում է ոչ միայն տրամաբանական, այլև հուզարտահայտչական երանգներով: Խոսքի կառուցման մեջ դրվում է նաև խոսողի անհատական վերաբերմունքը՝ ոչ միայն խոսողի հաղորդման հնարավորության, այլև խոսակցի ընկալման ունակության սահմաններում: Գործառական (ֆունկցիոնալ) կողմն այս դեպքում մեծապես կարևոր է, այսինքն՝ խոսքի իրադրությունը նշանակություն ունի ճիշտ ընկալման համար: Ուստի լեզուն ոչ այնքան սովորական, որքան իրադրորեն իրականացվող խոսք է: Հին աշխարհում, օրինակ, մեծ տեղ էր տրվում խոսքի ճարտասանական կողմին, հետագայում նույնպես այն ուներ իր տեղը խոսքի տարբեր դրսևորումներում: Եվ պատահական չէ, որ նոր ժամանակների լեզվաբանության մեջ առանձնացվեց ոճաբանությունը՝ իբրև գիտական նոր ենթաճյուղ:

4. Ըստ բանավոր կամ գրավոր լեզվի առանձնացման՝ տարբերում են նաև հնչյունային և գրային օժանդակող միջոցներ: Հնչյունային կամ ձայնային լեզվին ծառայող միջոցներն են շարժումները (ձեռքի, դեմքի և այլն), գրային լեզվին օժանդակող միջոցները՝ նշանային համակարգերը, տեխնիկական միջոցները (հաշվիչ մեքենաներ և սարքեր, համակարգիչ և այլն):

Հնչյունային լեզվի ձայնային կամ գրային սարքերը օժանդակ դեր են կատարում, ստեղծված են բուն լեզվի օրինակով, վերջինիս «տրա-

¹ Նույն տեղում, էջ 10:

մաքանությամբ» և քանի որ տեխնիկապես (ոչ թե մտավոր առումով) ինտենսիվ են, ուստի լրացուցիչ միջոցներ են բուն հաղորդակցական միջոցի՝ լեզվի կայացման, դրսևորման: Օրինակ՝ միանիշ և երկանիշ թվերը մտովի հնարավոր է գումարել, բազմապատկել և այլն, սակայն եռանիշ և ավելի մեծ թվերի դեպքում մտավոր գործողությունը չունի այն ինտենսիվությունը և ճշտությունը, ինչ տեխնիկական սարքերը (հաշվիչ սարքեր, համակարգիչ և այլն): Այս դեպքում նույնպես, ինչպես նկատում ենք, դրանք երկու կարգի են՝ տեսալսողական և նշանային, ընդ որում առաջինը հիմնականն է, իսկ երկրորդը որևէ չափով ածանցվում է նախորդից, այսինքն՝ պայմանավորված է նրանով: Տեսանելի են հաղորդողի կամ ընկալողի (ընդունողի) դեմքի և մարմնի որոշ մասերի (մատների, ձեռքի, գլխի, աչքերի և այլն), տեսանելի տարածքի վրա գտնվող առարկաների (իբրև նշան՝ դրոշակ, պաստառ, փարոս և այլն) անմիջական և ուղեկցող շարժումները կամ ցուցադրությունը, իսկ լսողական են համապատասխան սարքերի (ռադիո, ազդանշանային համակարգեր և այլն) օժանդակ միջոցները:

Բացի այն, որ լեզուն ինքնին դիտվում է իբրև նշանային համակարգ, այստեղ հաղորդակցմանը ծառայող օժանդակ միջոցները նույնպես հանդես են գալիս իբրև յուրատեսակ միջնորդ «լեզու»: Նկատենք նաև, որ տեխնիկայի առաջընթացի մեր օրերի պայմաններում օժանդակ միջոց են համակարգչային-ծրագրային փոխանցումները:

5. Լեզուների ուսումնասիրման, մասնավորապես հաղորդակցման տեսական ճանաչողության և գործնական ըմբռնման հարցում կարևոր է նաև տեխնիկական միջոցների գործադրումը: Վերջինս եղել է լեզվի վերաբերյալ հետաքրքրության իրականացման միջոց սկզբից ևեթ, ընդ որում նախ անմիջական շփման (տեսնելու, լսելու ձևով և այլն), հետագայում նաև տարբեր սարքերի օգտագործմամբ:

Ժամանակի ընթացքում փոխվել են այդ գործիքները՝ կապված գիտության, ուստի նաև տեխնիկայի զարգացման հետ: Ներկայումս լեզվական հաղորդակցումը ուսումնասիրվում է տեխնիկական միջոցների ավելի լայն օգտագործմամբ, ընդ սմին ոչ միայն հնչյունային

(ձայնային), այլև գրային (կետագրային) բնույթի սարքերի միջոցով: Դրանք այսօր բավականին բազմազան են (ռադիո, հեռապատկեր, հեռագծային նշումների սարքեր և այլն):

Ման սարքերի օգտագործումը հաղորդակցումը դարձնում է ավելի արդյունավետ (ինտենսիվ) ժամանակի մեջ, իսկ բովանդակության, առավել ևս գեղագիտական (էսթետիկական) առումով այն, կարելի է ասել, զիջում է անմիջական շփման ձևով տեղի ունեցող հաղորդակցմանը: Եվ առհասարակ գրավոր խոսքն ունենում է ինչ-որ չափով կորուստներ՝ ի համեմատություն բանավորի, իսկ վերջինս, իր հերթին, զիջում է հաղորդակից կողմերի ներքին (ներքուստ կազմվող կամ տարրալուծվող՝ օտարվող և սեփականվող) խոսքին:

Մենք առհասարակ մի կողմից՝ ավելին զգում կամ մտածում ենք, քան ասում կամ հայտնում (ընդունող՝ ընկալող) դիմացինին, մյուս կողմից՝ պակաս զգում կամ հասկանում ենք, քան ասվում է մեզ (հաղորդող) դիմացինից: Դա ոչ միայն արտալեզվականի և լեզվականի, այլև լեզվականի և մտածականի միջև անցումներում տեղի ունեցող կորուստ է (օր.՝ նախ՝ տեսնում ենք, բայց դժվարանում ենք ըստ էության ըմբռնել, այլև՝ մի կերպ հասկանում ենք, սակայն բառ չենք գտնում ասելու և այլն):

Ուստի լեզվի կենդանի զգացողությունն ունի ավելի լայն բովանդակություն, քան նրա, այսպես կոչված, ձևակերպված բովանդակությունը: Այս դեպքում տեխնիկական միջոցների լայն օգտագործումը, կարելի է ասել, ավելի է պակասեցնում («կրճատում») հաղորդակցման բուն նյութը՝ այն դարձնելով, բոլոր դեպքերում «մոտավորապես» ասված, քան որ այն մեր հոգեմտավոր գործունեության հիմքերում էր, նախ՝ ձևավորվել, այնուհետև՝ ձևակերպվել:

Գիտության և տեխնիկայի զարգացման ներկա պայմաններում լեզվական հաղորդակցման մեջ ևս տեխնիկական միջոցների գործադրումը դառնում է խիստ անհրաժեշտ ասելիքի տարածական և ժամանակային արդյունավետության (ինտենսիվության) ապահովման առումով:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 9-16:

Լրացուցիչ գրականություն:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, էջ 92-

103:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 5-19:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание Ереван, 2010, էջ 16-18:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 10-12:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 23-26:

Թեմա 3. Լեզու և մտածողություն

Հիմնահարցեր: Լեզուն որպես մտածողության (գիրակցության) նյութական ձև: Լեզվի և մտածողության կապը: Մտածողությունը որպես աշխարհընկալման և արտահայտման ձև: Մտածողության անհատական և հասարակական կողմը: Լեզուն մտածողության յուրահատկություն:

1. Մարդկային հաղորդակցումն այլ բան չէ, քան հասարակական պահանջ, կենսագործունեության կարիք: Մարդիկ լեզվի միջոցով շփվում են արտաքին աշխարհից ստացած իրենց պատկերացումը, տպավորությունը, ապրումները միմյանց փոխանցելու նպատակով: Այն ունենում է հասարակական հնչեղություն (գրականություն, արվեստ, գիտություն և այլն), կամ սովորական, առանձին դրսևորում (առօրյա շփումներ, առտնին առնչություններ և այլն):

Լեզվի յուրացումը մտավոր զարգացման նշան է, մտավոր հիվանդագին վիճակը հակադեցնում է լեզվի խաթարման: Լեզվի մտածական կողմն ունի ոչ միայն նմանողական (ծնողից զավակին), այլև ստեղծագործական (ընդհանուր մշակույթի յուրացման) բնույթ, որ հիմք է հանդիսանում մտածողության հետագա զարգացման համար, ընդ որում լեզվի հետ սերտորեն կապված, լեզվի միջոցով:

Տարիքային տարբերությունը լեզվի և մտածողության մեջ ունի այն նշանակությունը, որ սկզբնական շրջանում այն արագ է տեղի ունենում, քան հետագա տարիքում: Ավելին, մանկական առաջին մի քանի տարիներին ավելի մեծ չափով են «կուտակվում» լեզվամտածողական իրակություններ, քան, ասենք, հետագա տարիների հասակային ժամկետներում: Չափազանցություն է, թերևս, հայտնի է այն իրողությունը, որ մարդու կյանքի առաջին 4-5 տարիները լիովին (լեզվախմացական առումով) բավարար են ձևավորվելու համար. նկատի ունենք լեզվական իրույթների հիմքային կողմերը, ոչ թե հետագայի տեղեկացվածության ծավալը, որն ի վերջո նախորդի վրա է ավելանում:

2. Լեզվի և մտածողության կապը միասնական է, առավել ևս՝ ամբողջական: Լեզվական գործունեությունը գիտակցական երևույթ է, որ իրականանում է խոսքի մեջ՝ մտածողության պայմաններ

րում: Մտածողությունը սովորաբար հասկացվում է երկու՝ լայն և նեղ իմաստով. լայն իմաստով այն հակադրվում է լեզվին, իսկ նեղ իմաստով՝ խոսքին: Ուստի՝ իրականության ճանաչողության գործընթացում արտահայտության պլանի լեզու-խոսք հակադրությունն այլ բան չէ, քան բովանդակության պլանի գիտակցություն-մտածողություն հակադրություն:

Ըստ այսմ՝ հաղորդակցումը, իբրև լեզվի գիտակցական ընկալում, ընդհանուր է, իբրև խոսքի մտածողական դրսևորում՝ մասնավոր: Այն կենդանի հաղորդակցման պայմաններում տեղի է ունենում լեզվի միավորների, ընդունված է ասել, հոդաբաշխ դրսևորմամբ. «Հաղորդակցման ժամանակ մենք մեր մտքերն արտահայտում ենք միմյանց հետևից հաջորդաբար արտասանվող հնչյունների զանազան հաջորդականությունների օգնությամբ՝ հնչյունների տարբեր խմբերով բառեր ու դրանց կապակցություններ ստեղծելով, որոնք ունկնդրին (խոսակցին) են հաղորդվում օդի ալիքավորումների միջոցով և, նրա մեջ առաջ բերելով լսողական պատկերացումներ, հաղորդվում են նրա ուղեղին, զուգորդվում համապատասխան հնչյունական պատկերացումների, նրանց զանազան կապակցությունների, բառերի ու բառաձևերի հետ և դրանց միջև ստեղծված քերականական հարաբերությունների շտրհիվ ըմբռնվում»¹: Օրինակ՝ Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» երկը, իբրև հաղորդում, մեկ ամբողջական միտք է, տրամադրված է լսողին (ընթերցողին) հնչյունների, բառերի, բառակապակցությունների և նախադասությունների միջոցով, որոնք ընկալվում են այդ նույն լսողի (ընթերցողի) կողմից ոչ այլ կերպ, քան հայերենի քերականության նույն կանոնների հիման վրա: Այստեղ և՛ հաղորդումը, և՛ ընկալումը լեզվական-մտածողական գործունեություն են՝ որոշակի նպատակով: Եվ այսպես գրավոր կամ բանավոր խոսքի ամեն կարգի դրսևորման դեպքում՝ տարածական և ժամանակային հանգամանքների մեջ:


Այստեղից էլ այն, որ լեզուն հակադրվում է ոչ թե մտածողությանը, այլ գիտակցությանը, որովհետև դրանք ըստ էության գտնվում են վերացարկման տարբեր աստիճանի վրա, մեկը՝ բուն հաղորդակցման, մյուսը՝ լայն իմացության մեջ: Ի դեպ՝ լեզվի և մտածողության հակադ-

¹ Նույն տեղում, էջ 17:

րունը ավանդաբար գալիս է գիտության նախկին շրջանից՝ մտածողությանը, հավանաբար, տալով գիտակցության նշանակություն: Այնինչ, անցյալ հարյուրամյակի ընթացքում փորձում էին այն վերանայել, մանավանդ Ֆ. դը Սոսյուրի ընդհանուր լեզվաբանական տեսության երևան գալուց հետո, վերջինիս ինչ-ինչ կողմերի հաղթահարումով¹: Ուստի կարելի է ասել, որ չնայած լեզվի և մտածողության հարցը մշտապես եղել է տեսական քննարկման առարկա, սակայն մինչև օրս այն չի ստացել իր սպառիչ և վերջնական լուծումը:

Սոսյուրի լեզվի և խոսքի հակադրման տեսության հիմունքով Գ. Բ. Ջահուկյանը գտնում է, որ ավելի իրական կլիներ, եթե հարցը քննվեր լեզու և գիտակցություն, ոչ թե լեզու և մտածողություն հարաբերակցության մեջ (տե՛ս գծապատկեր 2)²:

Գծապատկեր 2



Ըստ այդմ՝ ստացվում է, որ մարդկային մտածողությունն ավելի կոնկրետ է, քան գիտակցությունը: Վերջինս ընդհանուր է այնքանով, որքանով լեզուն ընդհանուր է և հակադիր է խոսքին՝ իբրև կոնկրետ երևույթի: Եվ ըստ այսմ էլ՝ լեզվաբանության ուսումնասիրության ոլորտի մեջ մտնում են հետևյալ առանցքային խնդիրները.

- ա) լեզուն իրականության արտացոլում է, ինքնին՝ յուրօրինակ իրականություն,
- բ) լեզուն համակարգ է, իսկ խոսքը՝ կառուցվածք,
- գ) այն ունի նշանային բնույթ՝ վերցված պայմանական ձևով,

¹ Փ. ժե Տոսսյոր, Курс общей лингвистики, М., 1933: Նույնի՝ Труды по языкознанию, էջ 31-285:

² Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Общее и армянское языкознание, էջ 15-19, որտեղից և բերված գծապատկերը՝ հարաբերակից միավորներն այլ դիրքով:

դ) լեզուն գործունեության միջոց է՝ լեզվական հնարավորությամբ և խոսքային իրականացմամբ,

ե) լեզուն ենթադրում է վարքաբանական գծեր և ստեղծագործական կողմեր և այլն:

Այս խնդիրները, բնականաբար, դառնում են լեզվաբանության ոչ միայն ընդհանուր քննության, այլև ըստ առանձին բնագավառների ուսումնասիրության առարկա՝ հիմնված իրենց բնորոշ մեթոդների, դրանցով պայմանավորված սկզբունքների և մոտեցումների վրա: Նկատենք նաև, որ լեզուն և մտածողությունը միասնական են և միաժամանակյա, հանդես են գալիս փոխադարձ կապի մեջ: Դրանք մշտապես ենթադրում են ոչ միայն անհատական, այլև հասարակական կողմնորոշում: Դրանցից յուրաքանչյուրի անհատական կամ հասարակական կողմը միայն պայմանականորեն է հնարավոր սահմանագատել, որովհետև յուրաքանչյուր անհատի լեզվամտածողություն այլ կերպ հանդես չի գալիս, քան հասարակայնորեն նշանակություն ունեցող ձևով, կամ զուրկ է լինում որևէ նշանակությունից:

Ուստի մեծ է գրողի (արվեստագետի, գիտնականի և այլն) մտածողության (լեզվի) նպաստը հասարակության առաջընթացի մեջ: Հայտնի է անհատի դերը իրականության, այսինքն՝ հասարակության առաջընթացի գործում. պատմությունն ունի նման բազմաթիվ օրինակներ:

3. Մտածողությունը (գիտակցությունը) միաժամանակ աշխարհի ընկալման և արտահայտման ձև է, յուրօրինակ ձև: Դա բացատրվում է նրանով, որ առարկայական աշխարհը, բեկվելով մեր գիտակցության մեջ, վերածվում է հոգեկան աշխարհի: Երեխան, օրինակ, ծնվելիս իր հետ գրեթե ոչինչ չի բերում (ըստ Ջ. Լոկի՝ «մաքուր (գրա)տախտակ», լատ. *tabula rasa*), բացի, ինչպես ընդունված է այժմ ասել, այն սերումնային (գենետիկական) ժառանգությունից, որը գալիս է ծնողից, ավելի լայն՝ մարդ արարածի սերնդեսերունդ փոխանցումով. մարդկային փորձը աշխարհի ընկալման կուտակումն է լեզվի կարևորագույն գործառույթի՝ մտածողության մեջ, վերջինիս միջոցով:

Այս երևույթը ավելի պարզ պատկերացնելու համար բավական է հիշել, թե անձանոթ միջավայրում լինելու դեպքում, մենք ինչքան ենք

տպավորվում բնության, շրջակա միջավայրի, մարդկանց հետ շփումների արդյունքում, որը կուտակվում է մեզանում և դառնում մեր կյանքի տվյալ ժամանակի հիշողություն: Վերջինս այլ բան չէ, քան ամբարված մտածողություն (գիտակցություն):

Գոյություն ունի թե՛ անհատական և թե՛ հասարակական մտածողություն: Անհատների խելամիտ (կամ չարամիտ) մտածողությունը գործնականում ունենալով վերացարկման և ընդհանրացման հնարավորություն, վերածվում է հասարակական մտածողության. հասարակությունը ունենում է նման գիտակցություն, որն այլ բան չէ, քան հետագա գործունեության հնարավորություն (պաշար): Նույնը կարելի է ասել գեղարվեստական գրականության, ֆիլմի, երաժշտության՝ ընթերցման, դիտելու, ունկնդրման արդյունքում, որոնք ինքնին միջոց են հոգեկան հարստացման և այլն: Իսկ այդ ամենը լինում է թե՛ տեսալսողական («ձայնային»՝ հնչեղ), թե՛ լուռ («անձայն»՝ անխոս) հաղորդակցման ընթացքում:

Գրողը շարադրում է իր վեպը, երաժիշտը ներդաշնակում է իր սիմֆոնիան, ճարտարապետը նախագծում է իր կամուրջը, և նրանք ամբողջովին լուռ, առանց բարձրաձայնելու: Ասում են՝ երաժիշտ Կ. Դեբյուսին իր երաժշտությունը հորինել է շրջապատից գրեթե իսպառ վերացած՝ առանձնացած, պատմաբան Ղ. Ալիշանն իր տեղագրական պատումները (կոթողային երկերը) գրել է վանքի ներսում՝ առանց այդ տեղավայրերն այցելած լինելու, ճարտարապետ Ա. Թամանյանն իր նախագիծն արել է նեղ աշխատանոցում («Նա տեսել է երևի արևային մի քաղաք»։ Չարենց) և այլն, որ նշանակում է, թե նրանք այլ կարգի հաղորդակցմամբ են ընկալել իրական աշխարհը (այսինքն՝ իրենց ներաշխարհով, որ վերջիվերջո այլ իրադրությամբ պայմանավորված ընկալում է), որպիսով վերջինի գեղարվեստական, գիտական վերարտադրումը դարձել է նոր աշխարհընկալման հնարավորություն:

Այսպիսով, անցում արտաքին աշխարհից ներաշխարհի, և հակառակը՝ լեզվի հաղորդակցման պայմաններում, մտածողության միաժամանակյա ընկալման և արտահայտման գոյաձև է, հարակա և հարաճուն ձև:

4. Այս թեմայի մեջ է նաև մտածողության անհատական և հասարակական կողմի հարցը: Այս դեպքում ասվում է, որ լեզուն միաժամանակ մտածողության բարդ յուրահատկություն է, այսինքն՝ ինչպիսին որ անհատի մտածողությունն է, այնպիսին է նաև նրա լեզուն՝ մտածողության արտահայտիչը: Գոյություն չունի հարուստ մտածողություն աղքատ լեզվով, և հակառակը, միաժամանակ անհատի լեզուն օրինակ է հասարակության մտածողության հարստացման համար:

Ա. Բակունցի արձակի, Վ. Տերյանի չափածոյի լեզուն վատ օրինակ է հայերենի բառապաշարի հարստացման, գրական լեզվի մաքրության և կատարելացման: Ընթերցման, ունկնդրման պայմաններում նրանց երկերի բառապաշարը, լեզվական այլ միջոցների տարբեր դրսևորումները այս կամ այն չափով ազդում են մեր լեզվադրվածքի (հոգեկերտվածքի) վրա, հարստացնում են այն թե՛ մտավոր և թե՛ իմացական երակներով, հիմք հանդիսանում մեր կենսագործունեության մեջ ըստ այդմ վարք դրսևորելու համար: Պատահական չէ, որ լեզվի առումով նաև մեծ անհատականությունները մեծապես նպաստում են հասարակական հաղորդակցման արդյունավետությանը, հոգու և մտքի բարձրացմանը: Կան շատ դիպուկ ասված խոսքեր (փոխաբերացված). ասում են՝ ռուսերենը Պուշկինն է ստեղծել, «Թումանյանն է Արարատը մեր նոր քերթության» (Չարենց), հիշենք Ավ. Իսահակյանի մի գրույցը Մ. Սարյանի հետ՝ Բակունցի մասին. «Կոմիտասի երգերի և քո գույների կապակցությամբ խոսում են իբրև մի այնպիսի հրաշքի մասին, որը անհնարին է արտահայտել խոսքով: Բայց, գիտե՛ս, իմ կարծիքով, դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կար մի գրող, որի բառերը երգում էին կոմիտասյան հանգով և փայլատակում էին քո կտավների բոլոր գույներով: Այդ գրողը Ակսել Բակունցն էր»:

Լեզուն ծնում է անհատականություն, վերջինս՝ սերում լեզու, որն այլ բան չէ, քան մասնավորի և ընդհանուրի մշտամնա առնչություն: Մեծ գրողները, մշակույթի մարդիկ, իբրև անհատականի կրող, ստեղծում են լեզվական նոր որակ (մտածելաձև, ճաշակ և այլն), որ անցնում է հանրությանը, դառնում վերջինիս համար հիմք՝ նոր առաջընթացի: Ինչպես նկատելի է, բավականին սերտ է անհատի և հասարակության մտածողության (գիտակցության) կապը՝ առնված լեզվական հաղորդակցման մեջ:

Կարևոր է նաև այն, որ լեզուն, իբրև տվյալ հանրության (ցեղի, ժողովրդի, ազգի և այլն) հոգևոր կերտվածքի (պատմության, գիտության, մշակույթի և այլն) արտահայտություն ոչ միայն պատմական զարգացման կնիքն է կրում իր վրա, այլև վառ կերպով արտահայտում է իրենով հաղորդակցվող հանրության ազգային-անհատական այն յուրահատկությունները, որոնք իրենց լավագույն կողմերով դառնում են մարդկության ընդհանուր հոգևոր ձեռքբերումներ (Շեքսպիրը, Պուշկինը, Թոմանյանը աշխարհի գրողներ են): Մարդկությունը հարուստ է ժողովուրդների լեզուների բերած հարստությամբ:

5. Ի վերջո, լեզուն մտածողության յուրահատկություն է, և լեզվի հիմքերը մտավոր են (մտածական, մտային և այլն), խորն են, ինչպես մարդկության հոգեկանի, աշխարհընկալման խորությունը: Ճիշտ չէ, գիտության մեջ վաղուց է մերժված այն համեմատությունը (ասված լեզվաբանության պատմության սկզբնական շրջանում), թե՛ լեզվի գործառույթը (ֆունկցիան) կենսաբանական (բիոլոգիական) է նույնքան, որքան մյուս մասերինը (օրգաններինը): Այնինչ, ներկայումս տեսական առումով ընդունելի է այն, որ լեզուն սերտորեն առնչվում է մտածողությանը (գիտակցությանը)՝ իբրև հասարակական գործունեության ամենավառ արտահայտություն: Եվ եթե վերջինս իմացական հիմք (սուբստանց) է, ապա լեզուն նրա հատկությունն է, իբրև առարկայի և նրա հատկանիշի հարաբերություն, որ անքակտելի է, սակայն լիովին հասկանալի և մեկնաբանելի:

Հիմնական գրականություն:

Միայն Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 16-18:

Լրացուցիչ գրականություն:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 5-19:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание Ереван, 2010, էջ 27-39:

Джаукян Г. Б., Общее и армянское языкознание, Ереван, 1978, էջ 15-19:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 12-15:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 33-38:

Թեմա 4. Լեզուն որպես կառուցվածք և համակարգ

Հիմնահարցեր: Լեզվի կառուցվածքի առանձնահատկությունները. բաղադրիչների հարաբերակցություն և տրորակարգություն: Ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներ: Կառուցվածքի համաժամանակյա բնույթը: Համակարգը միավորների կարգաբերված բազմություն. վերջավոր կամ անվերջ (ոչ վերջավոր) բազմություններ, լի և դասարկ բազմություններ: Լեզվի համակարգի առանձնահատկությունները: Լեզուն համակարգերի համակարգ. համակարգ և ենթահամակարգ:

1. Ամեն մի լեզու ունի իր կառուցվածքային առանձնահատկությունները, որոնցով լեզուները տարբերվում են միմյանցից, առանձնանում իբրև ամենօրյա հաղորդակցական ուրույն միջոցներ: Մակայն նրանց միջև ընդհարությունն այն է, որ կառուցվածքը սերող բաղադրիչները (հնչյուններ, բառեր և այլն) միմյանցից գտնվում են յուրօրինակ կախվածության մեջ: Լեզվի բաղադրիչների կախվածությունը լինում է երկու կարգի՝ հարաբերակցային (իրար համարժեք) և ստորակարգային (իրար ստորադասվող):

Դասընթացներում սովորաբար ավելի լայն ուշադրություն է դարձվում լեզվի կառուցվածքի բաղադրիչների բնույթին, քան նրանց կախվածությանը: Վերջինս բնորոշ է նաև լեզվի համակարգին: Ուստի լեզվի կառուցվածքը և համակարգը միաժամանակ բնորոշվում են նույն բաղադրիչների հարաբերակցության նույնպիսի կախվածությամբ:

Լեզվի բաղադրիչները՝ հնչյունները, բառերը, բառակապակցությունները և այլն, գոյություն ունեն մեր մտքում ոչ թե խառնիխտոն, «անկարգ» վիճակով, այլ որոշակի ձևով: Լեզվաբանության պատմությունը ցույց է տալիս, որ անցյալ դարի սկզբներին երևան եկան միմյանց լրացնող տեսություններ, որոնցում հիմնական էր այն, որ լեզուն կառուցվածք է, այսինքն՝ նրա բաղադրիչները ներկայացնում են որոշակի կազմ: Այս մոտեցումն այնքան լայն տարածում գտավ, որ այն մի կողմից՝ հակադրվեց ավանդական պատմահամեմատական լեզվաբանությանը (որի ուսումնասիրության առարկան լեզուների ցեղակցության հարցն էր, նրանց պատմությունը. «լեզվի բովանդա-


կուրթուն») , մյուս կողմից՝ հիմք հանդիսացավ նորի՝ կառուցվածքային լեզվաբանության (որի ուսումնասիրության առարկան լեզուների կառուցվածքի հարցն է, նրանց ներկան. «լեզվի արտահայտություն») : Ստացվում է, որ լեզվի կառուցվածքը համաժամանակյա, իսկ համակարգը՝ տարաժամանակյա հայեցակետերի երևույթներ են :

Այնուհետև, այդ բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են փոխլրացման՝ համադասման և ստորադասման հարաբերության մեջ՝ նվազագույնից մինչև առավելագույնը, կամ՝ հակառակը, որն էլ կոչվում է հարաբերակցություն մակարդակների միջև :

Այսպես, հայերեն *ն, ա, լ, ռ, ս* հնչույթների որոշակի դասավորմամբ, հարկավոր կրկնությամբ կառուցում ենք *լսարան* բառը, *հարկ* և *երրորդ* բառերով՝ *երրորդ հարկ* կապակցությունը, *հարկ, երրորդ, գրնվել, լսարան, մեծ* բառերով, այլև *երրորդ հարկ, երրորդ հարկում գրնվել, մեծ լսարան* կապակցություններով կազմում (կառուցում) ենք *երրորդ հարկում գրնվող մեծ լսարան*, իսկ եթե ավելացնենք *է* բայաձևը (օժանդակ բայը), կստանանք *երրորդ հարկում գրնվող մեծ լսարան է*՝ նախադասությունը :

Բերված լեզվական միավորները հայերենի քերականական կանոններին, ավելին՝ գրական նորմային համապատասխան գտնվում են որոշակի կառուցվածքի մեջ՝ հավաստի, տրամաբանության լեզվով ասած՝ ճշմարիտ միտք արտահայտելու համար : Ըստ այսմ՝ լեզվի կառուցվածքը ենթադրում է բաղադրիչների կազմություն (կազմ) և ստորակարգություն (հիերարխիա), այլև այն պիտի լինի ամբողջական (կոմպակտ) : Բերված օրինակում բաղադրիչների միջև անցումները կատարված են հիշյալ յուրահատկությունների նկատառումով (տե՛ս գծապատկեր 3) :

Գծապատկեր 3



2. Լեզվական միավորները պարունակում են ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներ. դրանք անսահմանափակ չեն, լեզվից լեզու հաշվվում են այս կամ այն քանակով: Լեզվի կառուցվածքի բաղադրիչներն ունենում են ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ հատկանիշներ. ընդհանուր է, օրինակ, *p, q, r, s, u* հնչյունների բաղաձայն լինելը, սակայն դրանցից առաջին երեքը՝ *p, q, r* հնչյունները, պայթական են, մյուսները՝ շփական, այնուհետև մի մասը վանկի մեջ միշտ հանդես է գալիս նույն արտասանությամբ, մյուս մասը՝ ոչ, և այլն:

Տարբերակիչ հատկանիշը լեզվական միավորի բուն, էական և հիմնական հատկանիշն է, որով այն հակադրվում է հարաբերակից միավորի ընդհանուր հատկանիշներին. օր.՝ հայ. *p* և *u* հնչյունները հակադրվում են ձայնեղություն / խլություն միակ, էական հատկանիշով, թեև ունեն նաև մեկից ավելի ընդհանուր հատկանիշներ (երկուսն էլ բաղաձայն են, շրթնային, պայթական և այլն):

Թեև ընդունված է տարբերակիչ հատկանիշ հասկացությունը դիտարկել լեզվի հնչյունական համակարգում, սակայն եթե նույնպիսի մոտեցմամբ քննում ենք լեզվի այլ մակարդակի միավորներ, ասենք՝ ձևաբանության մեջ հոլովման տիպերը և այլն, ապա դրանցում ևս կարող ենք նույնպիսի հարաբերակցություն տեսնել. հայերենի *ի* հոլովման (հոլովիչի) տարբերակիչ հատկանիշն այն է, որ այն ընդհանրական է, ի հակադրություն մյուսների՝ *ու, վա, ոջ* և այլն, որոնք մասնական հոլովիչներ են, իսկ դրանց միջև ընդհանուր հատկանիշ է այն, որ բոլորն էլ կազմում են գոյականի և մյուս անուն խոսքիմասային միավորների (նաև գոյականաբար գործածվող բառերի) հոլովումը՝ թեք ձևերի սկզբնական ձևը (սեռական հոլովը) և այլն:

Այդուհանդերձ, տարբերակիչ հատկանիշների տեսությունը, որ առաջ է քաշվել անցյալ դ. 20-ական թթ. և բուռն զարգացում ունեցել 50-ական թթ. (Ն. Ս. Տրուբեցկոյ, Ռ. Օ. Յակոբսոն և ուրիշներ), վերաբերում է լեզուների հնչյունների միայն ֆիզիկական-կազմախոսական (ֆիզիոլոգիական) նկարագրությանը, և ոչ ավելին¹:

¹ Տարբերակիչ հատկանիշների բուն վերլուծությանը կանդադառնանք ստորև՝ հնչյունաբանության բաժնում, այստեղ ավելացնենք, որ այդ տեսությունը ևս առաջ է եկել լեզվի կառուցվածքի ուսումնասիրության ընթացքում:

3. Լեզվի կառուցվածքը, ընդունված է ասել, ունի համաժամանակյա բնույթ: Լեզվական միավորները հավասարապես քննվում են ժամանակային, այսպես կոչված, մեկ հարթության վրա: Ուստի այս դեպքում բուն խնդիրը կառուցվածքի հիմնական բաղադրիչների համաժամանակյա կտրվածքում դիտարկելն է: Ըստ այդմ լինում են տվյալ կառուցվածքին բնորոշ երևույթներ, ինչպես նաև այլ երևույթներ, որոնք գալիս են ուրիշ կառուցվածքներից (օր.՝ լեզվի հին շրջանից, կամ մեկ այլ լեզվի կառուցվածքից և այլն):

Ժամանակակից հայերենում, օրինակ, ձևաբանության մեջ *ի, ու, վա, ոջ, ա, ան* և այլն հոլովումները համաժամանակյա կտրվածքում նույնպիսի արժեքով հանդես եկող ձևույթներ են, կազմում են այս կամ այն հոլովումը՝ իբրև հոլովիչներ, օր.՝ *սար – սարի, այգի – այգու, օր – օրվա, քույր – քրոջ, Կուն – Կան, գարուն – գարնան* և այլն: Իսկ տարածամանակյա կտրվածքում դրանք նույնը չեն, որովհետև հատկապես *ա* ներքին հոլովումը՝ *Կուն – Կան* և այլն, բացատրելի է լեզվի պատմության տվյալների հիման վրա, թե ինչպես է, որ բառի թեքումը կատարվում է ոչ մյուսների նման բառի վրա ավելանալով, այլ բառի մեջ:

Հայերենի հնչյունական համակարգում ձայնեղ պայթականները (*բ, գ, դ, ձ, ջ*) *ը* ձայնորդին հաջորդող դիրքում վերածվում են շնչեղ խուլերի (*փ, ք, թ, ց, չ*), ինչպես՝ *երբ* [երփ], *երգ* [երք], *վարդ* [վարթ], *վարձ* [վարց], *վերջ* [վերչ] և այլն, սակայն ոչ *գերբ* [գերք] բառի դեպքում, որովհետև այն նորագույն փոխառություն է, և ավանդաբար եկող հիշյալ հնչյունափոխությունը չի գործում:

Իբրև հաղորդակցման միջոց և մտածողության ձև՝ լեզուն ներկայանում է կառուցվածքների համադրությամբ, ինչպես որ կարող ենք ասել, թե խոսքի համադրությամբ գոյանում է լեզուն: Այլ կերպ ասած՝ ինչպես որ ունենք լեզու և խոսք հակադրությունը՝ իբրև կոնկրետի և ընդհանուրի հակադրություն, այդպես էլ ունենում ենք հակադրություն կառուցվածքի և համակարգի դեպքում՝ վերացարկման ճիշտ նույն մեխանիզմով:

Լեզուն միասնական կառուցվածք է իր զարգացման պատմության ամեն մի ժամանակահատվածում (համաժամանակության մեջ. սինխրոնիա)՝ առանձին վերցված, և ըստ այդմ այն հանդես է գալիս ոչ

միայն իբրև մեկ ամբողջական կառուցվածք, այլև, կարելի է ասել, կառուցվածքների կառուցվածք, ինչպես որ համակարգի դեպքում է, այդ է թելադրում լեզու և խոսք հակադրությունը¹:

4. Համակարգը, մյուս կողմից, միավորների կարգաբերված բազմություն է, այն լինում է երկու կարգի՝ վերջավոր և անվերջ (ոչ վերջավոր), և այդպես էլ կոչվում են դրանք, ինչպես որ լինում են նաև լի և դատարկ բազմություններ: Նման սահմանումները և առանձնացումները, ինչպես գիտենք, ամենից առաջ ասվում է մաթեմատիկայի բնագավառում, և դա միանգամայն իրական է: Սակայն գիտությունները իրարից այնքան էլ անջրպետված չեն, ուստի միավորների նույնպիսի հարաբերակցություն լիովին ընդունելի է նաև լեզվաբանության մեջ:

Բազմությունների համակարգվածությունը տեղի է ունենում ոչ թե տարակերպ, պատահական կամ խառը ձևով, այլ որոշակի հատկանիշի կամ հատկանիշների հիման վրա, լեզվի դեպքում՝ քերականական կարգերի առումով, ըստ լեզվի պատմության տվյալ շրջանում գործող նորմայի:

Այգեգործության մեջ, օրինակ, ծառերի տարբեր տեսակները (սորսերը) բաժանված են լինում իրարից, այն է՝ այգում գրավում են իրենց առանձին հողամասերը, ընդ որում՝ քամուն և խորշակներին դիմացողներն ավելի առաջ (դեկորատիվ ծառեր՝ բարդիներ և այլն), քան մյուսները, բարձրահասակներն ավելի հեռու, քան մյուսները՝ կախված արևի ճառագայթների ընդունման հանգամանքից (կաղնիներ և այլն) և այլն,- այս ամենը տվյալ բնագավառի այն նրբություններից է, այսինքն՝ այն, որ հաշվի է առնվում ծառերի (այդ կարգի բազմությունների) բուսական աճի առանձնահատկությունները:

Բերենք օրինակ լեզվի կառուցվածքի այս կամ այն հատկանիշով բնորոշվող բաղադրիչների բազմությունների վերաբերյալ: Գոյականի հոլովումը հայերենում և այլ լեզուներում մի առանձին համակարգ է, որ բայի խոնարհման համակարգի հետ միասին մտնում է բառերի ձևաբանական համակարգի մեջ: Հոլովման համակարգը, իր հերթին,

¹ Հայ լեզվաբանության մեջ, թերևս, առաջին անգամ Գ. Բ. Ջահուկյանն է առաջարկում լեզուն դիտել ոչ միայն իբրև համակարգ, այլև համակարգերի համակարգ: Տե՛ս *Գ. Բ. Ժապուկյան, Общее и армянское языкознание*, էջ 16:

ունի հոլովման տիպերի, թվի կազմության, առկայացման (որոշ լեզուներում նաև սեռի) համակարգեր, որոնք կարող են կոչվել ենթահամակարգեր: Այդպես նաև խոնարհման համակարգի դեպքում, որտեղ հարաբերակցում են եղանակի և ժամանակի կարգերով պայմանավորված ձևային բազմությունները, սերում են իմաստային բազմություններ: Իսկ ձևաբանական և շարահյուսական համակարգերը միասին մտնում են մեկ ավելի մեծ՝ քերականության համակարգի մեջ և ըստ այդմ սերում ավելի ընդհանուր համակարգ՝ բնագիր (տեքստ), իբրև հարաբերականորեն ամբողջական կամ վերջնական բազմություն:

Ստացվում է, որ, իրոք, լեզուն ունի ենթահամակարգեր, կամ ինչպես վերև ասվեց, այն համակարգերի համակարգ է: Այդ համակարգում քերականական յուրաքանչյուր կարգի արտահայտության պլանի միավորների բազմությունը սերում է բովանդակության պլանի միավորների բազմություններ և այլն: Այս դեպքում է, որ հնարավոր է լինում ասել, թե լեզուն (լեզվական համակարգը) միավորների կարգաբերված բազմություն է, ունի իր՝ համակարգից բխող առանձնահատկությունները, որոնք էլ լեզվից լեզու միանգամայն տարբեր են:

Ըստ համակարգերի բաշխվածության՝ լեզուներն ունեն ընդհանուր, ինչպես նաև մասնավոր կողմեր: Թե՛ մեկը և թե՛ մյուսը հիմք են հանդիսանում դրանց տիպաբանության համար (սա առանձին թեմա է): Ուստի լեզուն, որպես մտածողության բազմաշերտ դրսևորում, հանդես է գալիս համակարգված ձևով, ներկայանում է իբրև իր բաղադրիչ միավորների և վերջիններիս տարբերակների կարգաբերված բազմություն:

Հիմք ընդունելով բազմությունների տեսության մեջ հիմնարար նշանակություն ունեցող բաշխումը՝ դրանք, ինչպես վերը նշվեց, լինում են երկու տեսակ՝ կարգաբերված վերջավոր կամ անվերջ (ոչ վերջավոր) բազմություններ և լի կամ դատարկ (ոչ լի) բազմություններ: Ըստ այսմ՝ լեզուներում ձևաբանական դրսևորումները կարող ենք կոչել վերջավոր, իսկ բառապաշարը, շարահյուսական կառուցվածքները՝ անվերջ բազմություններ: Այնուհետև, այն լեզուները,

որոնք ունեն, օրինակ, հոլովում, ներկայացնում են լի բազմություն, իսկ հակառակը՝ դատարկ բազմություն և այլն: Այս դեպքում ևս կարելի է բերել այլ օրինակներ տարբեր լեզուների առանձին համակարգերից և ենթահամակարգերից:

5. Լեզվի համակարգի յուրահատկություններից, թերևս, կարևորագույնը նրա կարգաբերվածությունն է: Նրանում լեզվական միավորները, իբրև սերող և բաղադրող տարրեր, կարգաբերված են, ունեն ներքին ամբողջականություն. օր.՝ հնչյունաբանական մակարդակում եթե մի լեզվում կան շնչեղ խուլեր (հայ. *փ, ք, թ, ց, չ*), ապա նրանք, իրոք, կարգաբանական (կատեգորիալ) հակադրության մեջ են խուլերի հետ (հայ. *պ/փ, կ/ք, զ/թ, ծ/չ*): Այնուհետև, ձևաբանական մակարդակում՝ ուղղական հոլովը հակադրվում է մյուս հոլովներին՝ իբրև ուղիղ հոլով / թեք հոլովներ կարգաբերված համակարգ. օր.՝ հայ. *քար / քարի, քարին, քարից, քարով* և այլն: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ համակարգ կազմում են ամբողջության մեջ առնվազն երկու բաղադրելի միավորներ, որոնք միմյանցից ունենում են որոշակի կախվածություն (առնչություն):

Մյուս առանձնահատկությունը համակարգի դրսևորումն է լրիվությամբ կամ մասնակիորեն, և ըստ այդմ, ընդունված է ասել, ունենում ենք կամ լի, կամ դատարկ բազմություն. օրինակ՝ «ժամանակակից հայերենն ունի շրթնային, ատամնային և հետնալեզվային բաղաձայններ (իման *բ, դ, գ* և այլն). ընդհանուր լեզվաբանության տեսակետից քմայինների (իմա՝ *գ, կ, ք*՝ և այլն) համակարգը ժամանակակից հայերենի համար դատարկ համակարգ է: Գրաբարն ունի երկբարբառներ (իման *ոյ [ույ], իւ [յու], եւ [յա]* և այլն), ժամանակակից հայերենը՝ ոչ. նույն (ընդհանուր լեզվաբանական) մոտեցումով ժամանակակից հայերենի երկբարբառների համակարգը դատարկ է»¹:

Լեզուներում քիչ չեն դեպքերը, երբ քերականական այս կամ այն կարգի մեջ (հոլովում, խոնարհում և այլն) որոշ միավորներ ունենում են, այսպես կոչված, բացթողումներ («բաց վանդակներ»): Այդպիսին է, օրինակ, գրաբարում մի քանի պակասավոր բայերի խոնարհումը, որն այս դեպքում ոչ այլ ինչ է, եթե ոչ դատարկ բազմություն (հմմտ.

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 25-26: Օրինակները ավելացված են:

գրաբարի *ես*՝ «լինել, գոյություն ունենալ», *պարտիս*՝ «պարտավոր լինել, պետք լինել և այլն», *գոլ* «գոյություն ունենալ» և այլն)¹:

Հազիվ թե գտնվի կենդանի լեզու, որ իր կառուցվածքի բոլոր մակարդակներում ներկայանա լրիվ (կամ ամբողջական) բազմությամբ. այդպիսին դիտելը պայմանական է, քանի որ այն հակադրելի է դատարկ (կամ ոչ ամբողջական) բազմությամբ:

Համակարգի ներսում լեզվական միավորները գտնվում են ոչ թե այլևայլ (անորոշ) կարգով, այլ որոշակի ստորակարգության մեջ, որը ևս համակարգի մի առանձնահատկությունն է: Քերականական կարգերի մեջ, օրինակ, կարելի է տեսնել նման ստորակարգություն. եթե ընդունենք, որ բայի ամենաբնորոշ հատկությունը սեռն է, որով այն տարբերվում է մյուս խոսքի մասերից, ապա դեմքը, թիվը և այլն կրնորոշվեն որպես նրան ստորաբերվող կարգեր. բայի եղանակը և ժամանակը ևս, այս պարագայում, զիջում են բայական սեռին: Ըստ այսմ կարելի է ասել, որ բայի քերականական կառուցվածքում բաղադրիչ միավորները ենթարկված են որոշակի ստորակարգության: Եվ այս երևույթը ամենից առաջ բնորոշ է հնդեվրոպական ցեղակցության լեզուներին:

6. Լեզուն, ինչպես վերը նշեցինք, ոչ միայն համակարգ է, այլ նաև համակարգերի համակարգ: Այս դեպքում առաջ է գալիս երկու հարց՝ ինչ է համակարգը, և ինչպիսին է այն: Եթե փորձենք տալ համակարգի պարզ ձևակերպումը, ապա կարելի է ասել, որ այն կամայական բազմության մեջ բաղադրիչ միավորների (բաղադրիչների) փոխկապակցված ամբողջություն է՝ հազեցած քերականական կարգային որոշակի միջոցներով և եղանակներով: Համակարգերը ընդգրկումով միանգամայն տարբեր են, և քանի որ նրանց միջև գոյություն ունի ստորակարգություն՝ ըստ քերականական կարգերի, լեզվի մակարդակների և այլն, ապա համակարգերի ներսում կարող են լինել այլ համակարգեր, որպիսով էլ ունենում ենք ընդհանուր համակարգեր, մասնավոր համակարգեր (առանձին կամ ենթահամակարգեր):

Այսպես, ժամանակակից հայերենի ձևաբանությունը առանձին համակարգ է, ներառում է հոլովման, խոնարհման և այլ համակար-

¹ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018, էջ 305-310:

գեր. առաջինը, օրինակ, իբրև ընդհանուր համակարգ, իր հերթին, ընդգրկում *ի, ու, վա, ոչ* և այլն հոլովումները, որոնք ընդհանուրի համեմատությամբ ենթահամակարգեր են և այլն: Այնուհետև, ժամանակակից հայերենում ածականը ոչ միայն հոլովվում է, այլև կազմում է համեմատության աստիճաններ. եթե հոլովումը այնպիսի համակարգ է, որ կարող է մտնել գոյական և մյուս խոսքի մասերի համակարգերի մեջ, ապա ածականի համեմատության աստիճանների կազմությունը (աստիճանակազմությունը) մեկ առանձին ենթահամակարգ է:

Ուստի լեզուն, իբրև ընդհանուր հաղորդակցման միջոց, մեկ ամբողջական ներփակ համակարգի ներսում, իրոք, ունի առանձին, միմյանց ստորակարգվող, փոխապայմանավորված այլ համակարգեր, այսինքն՝ ամբողջական համակարգը ներառում է մասնավոր կամ մանր համակարգեր (ենթահամակարգեր):

Ինչպես գիտենք, հնդեվրոպական լեզուների բայական համակարգը ավելի հարուստ է քերականական կարգերով, որոնցից յուրաքանչյուրն իր ձևահմաստային դրսևորմամբ մի կողմից՝ ներառվում է ավելի մեծ համակարգի մեջ, իսկ մյուս կողմից՝ ընդգրկում է իրենից ավելի մանր համակարգ (ենթահամակարգ). բայի եղանակը, օրինակ, որպես սկզբնային համակարգ, ներառում է ժամանակի, կերպի, սեռի, դեմքի, թվի և այլն ենթահամակարգերը, իսկ սրանցից յուրաքանչյուրը կարող է ներառել մյուսին և այլն: Այնպես որ այս դեպքում ևս կարելի է ասել, թե համակարգերի միջև նույնպես գոյություն ունի գերակայության և ենթակայության հարաբերակցություն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 18-29:

Լրացուցիչ գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզուն իբրև համակարգ և իբրև կառուցվածք // «*Բանբեր Երևանի համալսարանի*», 1972, 1, էջ 101-113:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 5-19:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание Ереван, 2010, էջ 27-39:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 18-20 :

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 38-43:

Թեմա 5. Լեզուն որպես գործունեություն և վարք

Հիմնահարցեր: Լեզուն որպես հաղորդակցական ունակություն: Լեզվական գործունեության յլրրրները և րենասկները՝ լեզվական, խոսողական և խոսքային: Խոսողական գործունեությունը որպես լեզվական գործունեության իրականացում: Խոսքային գործունեությունը որպես հոգեբանախոսական (մրածողական) գործունեություն: Լեզուն որպես վարք. հաղորդակցումը վարքի դրսևորում, վարքի դրսևորման բաղադրիչները. ազդակ և հակազդեցություն սոնչությունը: Լեզուն որպես հաղորդակցման, մրածամանակ վարքի դրսևորման միջոց. վարքի լեզվարանական և հոգեբանական կողմերը:

1. Լեզուն մարդկային գործունեության ձեռքբերում է, որ բնորոշվում է նաև որպես հաղորդակցական ունակություն: Այն ժամանակային և տարածական կուտակման, այլև գործառական փորձի արդյունք է: Լեզվաբանության մեջ սովորաբար առանձնացվում է լեզվական գործունեության երեք տեսակ, որը պայմանավորված է խոսքի արտաքին՝ հասարակության ընդհանուր և առանձին (անհատական), և ներքին՝ հոգեկան-բնախոսական (ներքին մտածողության) հանգամանքներով:

Լեզուն ընդհանուր հաղորդակցական ունակություն է, որ ի սպաս է դրվում տվյալ հասարակությանը թե՛ ընդհանրապես և թե՛ մասնավորապես (անհատապես). մեկից անցում մյուսին նշանակում է ունակության (հնարավորության) վերածում իրականության: Այսպես, լեզուների հնչյունները, բառապաշարը, քերականական ձևերի կապակցման միջոցներն ու եղանակները և այլն, ըստ անհատի իմացական կարողությունների, իրականանում են նրա խոսքում լեզվական (ընդ)ունակության հիմքի վրա:

Լեզվում կուտակվում են իրենով խոսող հանրության պատկերացումները, հույզերը, երգանքները, որոնք դառնալով մեկ ամբողջական հնարավորություն (ունակություն)՝ ամեն անգամ իրականանում են այդ նույն հանրության անդամներից յուրաքանչյուրի խոսքում: Դա, ինչպես կարելի է նկատել, այլ բան չէ, քան հաղորդակցական ընդհանուրի՝ հնարավորի փոխակերպում մասնավորի՝ իրականի: Լեզվա-

կան գործունեությունը կայանում է հաղորդակցական հնարավորության և իրականության անցումների մեջ:

2. Լեզվական գործունեությունը առանձնանում է ըստ ոլորտների, այլև ունի իր տեսակները, որոնք հիմնականում երեքն են՝ լեզվական, խոսողական և խոսքային:

Նախ՝ առաջինին հայ լեզվաբանության մեջ ամենից լավ անդրադարձել է Է. Բ. Աղայանը. տարբերվում է երեք տեսակ՝ 1) լեզուն որպես լայն գործունեություն, որը «բացառապես հասարակական է», 2) խոսողական գործունեություն, այսինքն՝ անհատական խոսքի դրսևորում, որ ունի հասարակականի վերաճելու նպատակ, 3) խոսքային գործունեություն, որն այլ բան չէ, քան անհատի ներքին խոսքը (ինքն իր ներսում): Ինչպես կարելի է նկատել, առկա է ընդհանուրից մասնավոր (նաև անհատական), և հակառակը՝ մասնավորից (նաև անհատականից) ընդհանուր իմացաբանական (գնոսեոլոգիական) անցում:

1) Լեզուն որպես գործունեություն, որ Է. Բ. Աղայանը կոչում է նաև լեզվական գործունեություն, և որն ամբողջովին հասարակական է, այսինքն՝ գործում է հասարակության հաղորդակցման սահմաններում. հանդես է գալիս իր գործառության (ֆունկցիայի) լրիվ ծավալով՝ սպասարկելով ողջ հասարակությանը:

2) Խոսողական գործունեությունը, ի տարբերություն նախորդի, անհատական է, սակայն ունի ընդհանրացման ձգտում (նպատակ): Ամեն մի խոսող նպատակ ունի իր գաղափարները, հույզերը և այլն ի սպաս դնելու իր ժողովրդին՝ իրականության բարեփոխության համար, նպատակ ունի իր խոսքը տեղ հասցնելու: Դա, իհարկե, ոչ միշտ է լիովին իրականանում, ուստի շատ քիչ դեպքերում է հնարավոր նպատակի իրագործումը: Միայն մեծ գրողների (նաև գիտնականների, արվեստագետների, ճարտարագետների, տեխնոկրատների և այլն) խոսքը (խոսքային՝ հայտնությունը, գույնը, խաղը, ձայնը, փորձարկումը և այլն) է, որ դառնում է տվյալ հասարակության ընդհանուր սեփականությունը: Իսկ սովորական ասված ամեն մի խոսք այդպես էլ մնում է մեկուսի, անճանաչելի, այսինքն՝ չընդհանրացած:

Ավելին, մեծ գրողների խոսքն է մշտական՝ անմահ, ժամանակի մեջ մնայուն և օրինակելի:

3) Խոսքային գործունեությունը անհատի ներքին խոսքն է, որն այլ բան չէ, քան նրա հոգեկան-բնախոսական գործունեությունը, որը հաճախ կոչվում է նաև մտածողական գործունեություն: Վերջինս, իբրև ներքին խոսք, ընկած է նախորդ երկուսի հիմքում, որովհետև այն, ինչ դառնում է հասարակական, ընդհանուր խոսողական գործունեություն, ունի անհատական հիմքեր, պայմանավորված է ներքին խոսքով:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք նկատել, որ խոսողական գործունեությունը այլ կերպ չի դրսևորվում, քան որպես լեզվական գործունեություն: Այն, իրոք, լեզվական գործունեության իրացում է, և հակառակը՝ դառնում է հիմք ընդհանուր լեզվական գործունեության: Այստեղից էլ այն, որ խոսքը անհատական է, իսկ լեզուն՝ ընդհանուր, և ըստ այդմ՝ անհատական խոսքայինը վերածում է ընդհանուր լեզվականի: Ուստի եթե խոսքային գործունեությունը ներկայանում է իր հոգեբնախոսական (մտածողական) հիմքով, ապա լեզվականը, ըստ այդմ, սահմանվում է որպես ընդհանուր բնախոսական (գիտակցական) գործունեություն:

3. Կենդանի խոսքը լեզվի գործածությունն է, կենսունակացումը՝ լինի այն բանավոր թե գրավոր: Գութանի խոփը փայլում է արտում՝ «աշխատելիս», իսկ լեզուն՝ խոսքի վերածվելու մեջ: Այնպես որ միշտ պետք է նկատի ունենալ, որ խոսողական գործունեությունը, որի արդյունքը խոսքն է, այլ բան չէ, քան լեզվական գործունեության իրականացում: Վերջինս հանդես է գալիս որոշակի պայմաններում՝ ժամանակ, տարածություն և գործառույթ, որոնք հաղորդակցումը դարձնում են իրական և նպատակային: Մարդկային հարաբերությունները՝ հանդես եկած աշխատանքում, հանգստի մեջ և այլն, ունեն լեզվական հիմքեր, որ ամեն պահի ձևանում են իբրև խոսողական գործունեություն:

Խոսողական գործունեությունը լեզվի կենդանի վիճակին է վերաբերում, այն բացառված է մեռած լեզվի դեպքում. վերջինս իր մեջ, մի տեսակ, ծրարում է երբեմնի տեղի ունեցած այս կամ այն խոսողական գործունեությունը: Ըստ այսմ՝ կարելի է սահմանել, որ կենդանի

լեզու նշանակում է խոսողական գործունեության դրսևորում, և հակա-
ռակը՝ մեռած լեզու նշանակում է նրա բացակայություն:

Աշխարհում հայտնի են բազմաթիվ մեռած լեզուներ, որոնք այսօր
վկայություն են իրենց կրող հանրության (տոհմի, ցեղի և այլն) խոս-
ողական գործունեության (մտածողության, պատկերացումների, հույ-
զերի, ապրումների և այլն) մասին. ներկայիս գիտությունը, այս կամ
այն կերպ տեղեկանալով այդ վկայությանը, ինչ- որ չափով պարզում է
մարդկության անցյալի պատմությունը: Նկատենք նաև, որ խոսողա-
կան գործունեությունը միանգամայն իրական ձևով է արտահայտում
լեզուն, որը և կարևոր է թե՛ տվյալ ժամանակի և թե՛ առհասարակ
պատմության համար:

4. Խոսքի գործընթացը (պրոցեսը) արտահայտության մեջ՝ ընդա-
մենը ֆիզիկական երևույթ է, սակայն իր խորքում այն արդյունք է
հոգեկան-մտածական բարդ և յուրօրինակ, անկրկնելի երևույթների
(«գործողությունների»):

Դա հաղորդակցման առումով խոսքային գործունեություն է, որ
լեզվաբանության, իմացաբանության (փիլիսոփայության) և հոգեբա-
նության մեջ գնահատվում է որպես *հոգեբնասխոսական* (մտածողա-
կան) գործունեություն: Այն, ինչպես գիտենք, միայն մարդկային ցեղին
է բնորոշ, նրան է յուրահատուկ համարվում, թեև հոգեվերլուծական
ներկայիս ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենդանական
աշխարհի մյուս միավորները ևս գուրկ չեն դրանից (սման «տառա-
պանքից» կամ «հաճույքից»), բայց, իրոք, արմատական այն տարբե-
րությամբ, որ վերջիններիս մոտ այն տեղի է ունենում, այսպես կոչ-
ված, հոգեբնագրային (պայմանական՝ «ոեֆլեկտիվ») ձևով:

Ընդհանրության մեջ նայելու դեպքում երևույթը կարելի է բնու-
թագրել իբրև լայն իմաստով հաղորդակցական գործընթացի վար-
քաբանություն (վարքի դրսևորում), որն արտահայտված է լինում մի
դեպքում՝ *հոգեբնասխոսական* (մտածողական), մյուս դեպքում՝ *հոգե-
բնագրային* (պայմանական՝ «ոեֆլեկտիվ») կողմնորոշումով:

5. Եվ նախորդ հարցի հետ կապված՝ լեզուն մշտապես հանդես է
գալիս նաև որպես *վարք*: Վերջինս խոսքային վարվեցողությունն է,
որն ունի լեզվական հիմքեր, իրականանում է հաղորդակցման գոր-
ծընթացում: Լեզվի, որպես վարքի, հարցերով զբաղվել են նախանց-

յալ դարի կեսերին ամերիկյան լեզվաբանության տարբեր դպրոցների ներկայացուցիչներ: Այդ ուղղության հիմնական կողմն այն է, որ լեզուն դիտվում է ոչ թե որպես *մրաժական* (մենտալիստական), որ ընդունված է ավանդական լեզվաբանության մեջ, լեզվաբանական այլ ուղղությունների տեսություններում, այլ որպես *սալամրաժական* (ամենտալիստական) երևույթ, ըստ որի լեզուն դիտվում է ոչ այլ կերպ, քան որպես մարդկային *վարք* (անգլ. behaviour «վարք. վարքագիծ»․ հմմտ. *բեհեևիոր, բեհեևիորիզմ*): Վերջինս, ըստ Է. Բ. Ադայանի դիտարկման, «նշանակում է կենդանի մարմնի համապատասխան գործողությամբ արտահայտվող հակազդեցությունը ներքին կամ արտաքին ազդակին (ստիմուլին): Այլ կերպ ասած՝ վարքը ազդակի պատասխան գործողությունն է»¹:

Այս դեպքում, եթե հակադրելու լինենք, ունենք *ազդում* (ազդեցություն) և *հակազդում* (հակառակ ազդեցություն) կամ, այլ կերպ ասած՝ *ներքին ազդակ* և *արտաքին ազդակ* հարաբերակցություն: Եթե ըստ մեխանիզմի դատելու լինենք, ապա կունենանք *գործողություն* (ակցիա) և *հակառակ գործողություն* (ռեակցիա): Սա է մարդու լեզվական գործունեության (առհասարակ՝ կենդանի օրգանիզմի) դրսևորման մեխանիզմը, որն ունի *վարքի հիմքեր*, պայմանավորված է վարքով: Եթե ուսումնասիրում ենք մարդու լեզվական գործունեությունը, նշանակում է ինչ-որ տեղ բացահայտում ենք նրա վարքը (վարքագիծը), և հակառակը՝ հետևելով վարքին, տեղեկանում ենք նրա լեզվական (խոսքային) ողջ գործունեությանը:

Ըստ այսմ կարող ենք ասել, որ լեզուն, ինչպես որ իր տեղում սահմանել ենք, հանդես գալով որպես հաղորդակցման միջոց, միաժամանակ հանդիսանում է վարքի դրսևորման միջոց: Ըստ այսմ *լեզու, հաղորդակցում* և *վարք* հասկացությունները լեզվական (խոսքային) գործունեության հիմնական բաղադրիչներ են. լեզուն վարք է՝ հաղորդակցման մեջ, նրա շտրիիվ՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ վարքը իր հիմքում լեզվական է՝ հաղորդակցման գործընթացում:

Ուսումնասիրելով անհատի (հանրության) բանավոր կամ գրավոր խոսքը՝ գաղափար ենք կազմում, պատկերացում ենք ունենում այդ

¹ Նույն տեղում, էջ 44:

նույն անհատի (հանրության) վարքի վերաբերյալ, որովհետև ինչպես որ լեզուն ունի հոգեբանական հիմքեր, այնպես էլ վարքը սնվում է իր լեզվաբանական հիմքերից: Այլ կերպ ասած՝ լեզուն հոգեբանական երևույթ է, վարքը՝ լեզվաբանական. կողմերի հակադրությունը հակադարձելի է:

Լեզվի և վարքի ուսումնասիրման հարցում միջգիտակարգային առնչություն ունեն լեզվաբանությունը և հոգեբանությունը: Երևույթի միջգիտակարգային քննությամբ ավելի շոշափելի են դառնում լեզվական գործունեության հոգեբանական հիմքերը, պարզվում են թե՛ լեզվական, թե՛ հոգեկան յուրահատկություններ և այլն:

6. Լեզուն բազմագործառույթ երևույթ է: Մարդկանց կենսագործունեության մեջ նրա դերն այն է, որ խմբովի կամ անհատապես իրականացվող հողորդակցումը լինի ոչ թե սոսկ ասելիք, այլ տարրորշված՝ հագեցած հաղորդակից կողմերի հոգեկան, մտածական, մանավանդ վարքային յուրահատկություններով (սրբերանգներով՝ «մանրուքներով»): Այս պարագայում միայն կարելի է ասել, թե լեզուն միաժամանակ հանդես է գալիս իբրև վարքի դրսևորման միջոց:

Վարքը, բուն իմաստով, կենդանի օրգանիզմի պահվածքն է իր միջավայրում: Այն կենդանի վիճակի ներունակ (իմանենտ) դրսևորում է, որ հատուկ է գրեթե բոլոր արարածներին. տարբերությունը, թերևս, միայն արտահայտության մեջ է: Ամեն մի օրգանիզմի վարքի ներառյալ (իմպլիցիտ) և բացառյալ (էքսպլիցիտ) վիճակները գրեթե լիովին հավասարակշռված են¹: Դրանց միջև հնարավոր շեղումները (հակում դեպի դրականը կամ բացասականը) այլ կերպ չի կարելի բնորոշել, քան իբրև արտաքին ազդակների հետևանք՝ դուրս բնականոնից:

Վարքի հետագոտությունը ամենից առաջ կենսաբանական գիտության կարևոր բնագավառներից է, քանի որ նպատակ ունի պարզելու կենդանի օրգանիզմի պահվածքի էությունը, վերհանելու այն առանձնահատկությունները, որոնք հիմնված են ոչ միայն հոգեկանի, այլև լեզվի վրա: Երևույթի հոգեբնախոսական լիարժեք քննությունը,

¹ Հայ. *ներառյալ* (inclusive) և *բացառյալ* (exclusive) տերմինները հայ լեզվաբանության մեջ գործածել է Հ. Աճառյանը՝ այլ համատեքստում: Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954, էջ 13:

այնուամենայնիվ, մնում է հեռանկարային: Վարքի հոգեբանական և լեզվաբանական ուսումնասիրությունը արդի հումանիտար գիտության ոլորտում նոր, առանձին գիտակարգի (դիսցիպլինի)՝ հոգելեզվաբանության (պսիխոլինգվիստիկայի) ուշադրության առարկան է: Նման հետազոտության մեջ ամենից առաջ նկատի է առնվում այն, որ լեզվաբանական և հոգեբանական կողմերը փոխկապակցված են, և ավելի արդյունավետ է համարվում դրանց միաժամանակյա քննությունը:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 35-50:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание Ереван, 2010, էջ 15-18:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 15-17:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Թեմա 6. Լեզուն հոգեկան-բնախոսական գործունեություն

Հիմնահարցեր: *Խոսքային գործունեությունը հոգեբնախոսական (մտածողական) երևույթ: Ներքին խոսք. ներքին խոսքը բնախոսական գործունեության արդյունք և հոգեկան-հոգեբանական երևույթ: Արտաքին խոսք. արտաքին խոսքը հնչարարաբերական գործունեության արդյունք և լեզվահաղորդակցական երևույթ: Ներքին խոսքի և արտաքին խոսքի կապը:*

1. Հաղորդակցվելը սովորաբար այնքան էլ դժվարին գործողություն չէ, քանի որ նորմալ պայմաններում այն գրեթե անընդհատ ծանայում է մարդկանց՝ իրենց մտքերն ու զգացումները մեկից մյուսին տալու և հակադարձաբար մյուսից ստանալու: Իսկ թե այն ինչպես է տեղի ունենում, ոչ ամբողջովին է հասկանալի, լավագույն դեպքում՝ բացատրելի: Ամբողջ հարցն այն է, որ հաղորդակցումն ամենից առաջ ունի իր, այսպես կոչված, ներքին կազմակերպվածությունը, մի գործընթաց, որի բացատրման կամ պարզաբանման համար հետազոտություններ են իրականացնում լեզվաբանները, ինչպես նաև կենսաբանները և հոգեբանները, որովհետև երևույթը ոչ պակաս հոգեբանական-բնախոսական է:

Ֆ. դը Մուսյուրը, որի անվան հետ է կապվում լեզվաբանության մեջ լեզվի և խոսքի առանձնացումը, իբրև հաղորդակցման միջոցի (լայն իմաստով՝ խոսքային գործունեության, խոսողության, *langage*) համաժամանակյա քնության պայմաններից մեկը (երթե ոչ առաջինը), իր դասախոսություններում առանձին կետ (պարագրաֆ) ունի խոսքային գործունեությանն առնչվող երևույթների մեջ լեզվի տեղի վերաբերյալ («Լեզվի տեղը խոսքային գործունեության երևույթների մեջ» վերնագրով), որտեղ ուշադրության առարկա են այնպիսի երևույթներ, որոնք այս դեպքում ևս, պետք է ասել, շրջադարձային նշանակություն ունեցան ոչ միայն համաժամանակյա հնչյունաբանության, մանավանդ հնչյունախոսության մեջ, այլև հետագայում՝ հոգելեզվաբանության, հանրալեզվաբանության համար¹:

¹ *Փ. ժե Սոսյոր*, Курс общей лингвистики // *Նոյնի*՝ «Труды по языкознанию», М., «Прогресс», 1977, էջ 49-53:

Ոչադրություն դարձնենք այս կարևոր երևույթին՝ ըստ Մոսյորի:

Նախ՝ անդրադարձ է կատարվում խոսքային հաղորդման անհատական ակտին՝ խոսքային գործունեության երևույթների ամբողջության մեջ գտնել այն ոլորտը, որը համապատասխանում է լեզվին¹: Նման ակտի համար անհրաժեշտ է, նախ, նվազագույնը երկու անձ՝ հաղորդման իրադրության լրիվության համար:


«Խոսքային հաղորդման ուղարկող կետը գտնվում է հաղորդակից կողմերից մեկի մոտ, օրինակ՝ Ա-ի մոտ, որտեղ գիտակցման երևույթները՝ մեր (իմնա՛ Մոսյորի) անվանումով՝ «հասկացություններ», ասոցացվում են լեզվական նշանների, կամ էլ ակուստիկական պատկերների պատկերացումներով, և որոնք ծառայում են հասկացության արտահայտմանը»²: Ըստ Մոսյորի՝ «տվյալ հասկացությունը ուղեղում առաջ է բերում համապատասխան ակուստիկական պատկեր, որը մաքուր հոգեկանի կարգի երևույթ է, որին հետևում է *ֆիզիոլոգիական գործընթացը*» (ընդգծումը հեղինակի – Վ. Հ.): «ուղեղը խոսքի օրգաններին տալիս է համապատասխան ձևի իմպուլս, այնուհետև ձայնային ալիքները տարածվում են Ա-ի բերանից Բ-ի ականջներին, որն արդեն *ֆիզիկական գործընթաց* է (ընդգծումը հեղինակի – Վ. Հ.): Այնուհետև, հաղորդման գործընթացը շարունակվում է Բ-ի մեջ, բայց հակառակ կարգով՝ ականջից դեպի ուղեղ, որ է ակուստիկական պատկերի ֆիզիոլոգիական փոխանցում, ուղեղում՝ այդ պատկերի հոգեկան ասոցիացիան համապատասխան հասկացությամբ: Երբ Բ-ն, իր հերթին, արտահայտվում է, խոսքի այս նոր ակտի ժամանակ կատարվելու է ճիշտ նույն ուղին, ինչ առաջինի ժամանակ, այն է՝ Բ-ի ուղեղից դեպի Ա-ի ուղեղ խոսքն անցնում է նույն փուլերի (ֆազերի) միջով: Այս ամենը կարելի է պատկերել հետևյալ կերպ»³: Եվ բերվում է երկու կարգի գծապատկեր, որոնցից առաջինը խոսքային գործունեության ֆիզիկական ակտին է վերաբերում (տես գծապատկեր 4):

¹ Նույն տեղում, էջ 49:

² Նույն տեղում:


³ Նույն տեղում, էջ 49-50:

Գծապատկեր 4



Իսկ երկրորդը վերաբերում է նույնպիսի գործունեության *կազմախոսական* (ֆիզիոլոգիական) ակտին (տես գծապատկեր 5):

Գծապատկեր 5



Հեղինակը միաժամանակ գտնում է, որ կարելի էր ակնկալել ավելի հստակ ակուստիկական պատկերում՝ այն համեմատելով ծածուկ տեղեր ունեցող ակուստիկական պատկերի հետ, օրինակ՝ շարժման կերպը՝ ի տարբերություն խոսողության, հնչեցման¹: Ի դեպ՝ ինչպես ինքն է գրում, հիշյալ երկու գծապատկերները, ինչպես վերը նշվեց, վերաբերում են ֆիզիկական և կազմախոսական (ֆիզիոլոգիական) կողմերին, իսկ հոգեկանին (բառապատկերներին, հասկացություններին) վերաբերողը, որ տարակուսելի է, դիտվում է երկրորդի՝ ֆիզիոլոգիականի մեջ:

Այնուհետև՝ Մոպյուրը խոսքային ակտը բաժանում է երեք մասի.

ա) արտաքին մաս (ձայնային տատանումները բերանից ականջներին անցնող) և ներքին մաս (որ ընդգրկում է մնացածը),

¹ Նույն տեղում:

բ) հոգեկան մաս և ոչ հոգեկան մաս, որոնցից երկրորդն ընդգրկում է ինչպես խոսքի օրգաններում տեղի ունեցող ֆիզիոլոգիական երևույթները, այնպես էլ մարդուց դուրս ֆիզիկական երևույթները,

գ) գործուն (ակտիվ) մաս և ոչ գործուն (ոչ ակտիվ՝ պասիվ) մաս, որոնցից առաջինն այն է, որ խոսակիցներից մեկի ասոցացված կենտրոնից անցնում է կատարվում մյուսի ականջին, իսկ երկրորդն այն է, որ այս վերջինի ականջից անցնում է իր ասոցացված կենտրոնին: Եվ վերջապես, գտնում է, որ «ուղեղի ներսում տեղ գտած հոգեկան մասի այն ամենը, ինչ ակտիվ է, կարելի է կոչել առաքող (էկզեկյուտիվ) (Հ - Պ), իսկ ինչ պասիվ է՝ ընդունող (ռեցեպտիվ) (Պ - Հ)»¹:

Վերջապես, նշվում է, որ այս ամենը հասկանալի է, եթե հետաևում ենք խոսքային ակտից, որպես եզակի երևույթից, որ ինքնին ներկայանում է սոսկ որպես խոսքային գործունեության սաղմ, և անցում ենք կատարում լեզվին որպես սոցիալական երևույթի²:

Տեսական այս կանխադրույթները լեզվաբանության հետագա զարգացման ճանապարհին ունեցան արմատական, կարելի է ասել, շրջադարձային նշանակություն հատկապես այն ուսումնասիրողների համար, որոնք ներկայանում էին որպես հնչույթաբանական որևէ դպրոցի ներկայացուցիչ (Ն. Ս. Տրուբեցկոյ և ուրիշներ):

Հայ լեզվաբանության մեջ, թերևս, միայն Է. Բ. Աղայանն է այդ գաղափարների հիմունքով մեկնաբանում խոսքային հոգեբնախոսական երևույթը: Այսպես, ոչ անկախ Սոսյուրի և հետագա ուսումնասիրողների հարցադրումներից, նա ևս գտնում է, որ «խոսք կազմելու հոգեբնախոսական գործունեությունը ենթադրում է երեք հիմնական գործողությունները՝ *գրասնքը* (իմա՝ թարգմանություն ռուս. поиск բառի), *համադրումը* և *սերումը*» (ընդգծումները հեղինակի – Վ. Հ.)³:

Հայտնի է, որ մարդկային միտքը, նախքան արտաքին դրսևորում ձեռք բերելը, ձևավորվում է հոգեկանում, մի բնախոսական գործընթաց, որ ամբողջովին կառավարվում է բարձրագույն նյարդային համակարգի, մասնավորապես ուղեղի գործունեության պայմաններում: Հոգեմտածականը վերաճում է լեզվամտածականի, որը ոչ դյուրին էր-

¹ Նույն տեղում, էջ 51:

² Նույն տեղում:

³ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 58:

նույթ է, և որի մի շարք յուրահատկություններ ոչ ամբողջովին են բացահայտված գիտության ներկայիս պայմաններում:

Այդուհանդերձ, այս նկատառումով է, որ տարբերում են ներքին խոսք և արտաքին խոսք հասկացությունները:

2. Ներքին խոսքը հոգեկան գործունեության արդյունք է, որին մենք տեղեկանում ենք միայն արտաքին խոսքի ձևով, իսկ թե ինչպես է այն կազմակերպվում մինչև արտաքին դրսևորում ունենալը, բավականին խնդրահարույց է: Բոլոր դեպքերում հայտնի է, որ այն իրականանում է մարդկային հոգեկանի մեջ, որ տեղի է ունենում գլխուղեղի ղեկավարման պայմաններում: Այսպիսով, գիտությանը հայտնի է, որ մտածողությունը, բնականաբար նաև լեզուն արդյունք են մարդու հոգեբնախոսական ներքին գործունեության, և հակառակը՝ վերջինս ունենում է լեզվամտածողական հիմքեր, այսինքն՝ լեզուն միջոց է ներքին խոսքի, որ կառավարվում է ուղեղի, ինչպես նաև ամբողջ նյարդային համակարգի կողմից: Ըստ այդմ ներքին խոսքը ոչ այլ ինչ է, քան ուղեղի և նյարդային համակարգի բնախոսական (ֆիզիոլոգիական) գործունեության արդյունք: Վերջինս գործում է իր ողջ հնարավորություններով, այսինքն՝ ներքին խոսքը ոչ միայն հաղորդելու, այլև ընդունելու դեպքում հանդես է գալիս իբրև արտաքին խոսք:

Այս հարցում ժամանակակից կենսաբանությունը, իբրև մարդու բարձրագույն նյարդային համակարգն ուսումնասիրող գիտություն, դեռևս, կարելի է ասել, չի հասել վերջնական արդյունքի, քանի որ դեռևս անհայտ կամ անբացատրելի մնացած երևույթներ՝ կախված մարդկային լեզվի հոգեբնախոսական գործունեության հետ: Տեղի են ունենում ֆիզիկաքիմիական գործընթացներ, որոնք հնարավորություն են ստեղծում խոսք կազմելու և վերջինս հաղորդելու և ստանալու համար:

3. Արտաքին խոսքը հնչարտաբերական գործունեության արդյունք է և ըստ այդմ՝ լեզվահաղորդակցական երևույթ: Խոսողական գործունեությունը հոգեկան կանոնավոր պայմանների հետևանք է, ինչպես է լինում, որ իրականության մեջ նկատվածը ժամանակային աներևակայելի սեղմությամբ մարդու մտածողության մեջ վերածվում

է բառի, բառերի կապակցության, մինչև իսկ ստորոգումային միավորի՝ նախադասության:

Կյանքն ինքնին հաղորդակցման հոգեբնախոսական գործունեության օրինակ է, երբ այդ գործընթացն սկսվում է արտաքին խոսքի ընդունումից, վերաճում ներքին խոսքի, այնուհետև մշակվում է այն իբրև ներքին խոսք, վերադարձվում իբրև այլ արտաքին խոսք: Այստեղ գործ ունենք դիմելու-հաղորդելու և ընդունելու-հաղորդակից դառնալու և վերադարձնելու-հաղորդվելու ամենանգամյա երևույթի հետ, որը միաժամանակյա գործընթաց է, որ ինքնին անբաժանելի է, իսկ վելուծության մեջ (պայմանականորեն)՝ բաժանելի, տարրալուծելի: Այլ կերպ ասած՝ անհատը նախ՝ կառուցում է իր ներքին խոսքը, այնուհետև՝ ներմտածական վարքով կատարում ինքնօտարում, վերջապես՝ արտահայտում, այսինքն՝ վերածում արտաքին խոսքի:

Կարելի է առանձնացնել ներքին խոսքի և արտաքին խոսքի առնչության երկու տեսակ՝ անմիջական և ոչ անմիջական (երրորդ կողմով պայմանավորված):

Նշենք խոսքային մեկ-երկու իրադրություն:

Այսպես, տարեց մարդը զբոսնում է մոտակա այգու մի բացատում, հանկարծ մոտ է գալիս խաղացող երեխաների խմբից առանձնացած աղջիկը և ցույց տալով մոտակայքում հայտնված շանը՝ ասում. «Շունը, շունը» (այսինքն՝ «Շնից վախենում է»): Կրկնաբար ասված շուն բառը զբոսնողի համար հանդիսանում է մտածողական ազդակ, որով նա կազմում է իր ներքին խոսքը («օգնել է պետք»), և նա անմիջապես պատասխանում է աղջկան՝ «Մի վախենա»: Եվ աղջիկն այդ խոսքից հուսադրվում է («վտանգավոր չէ»): Այստեղ գործ ունենք հաղորդակից կողմերի միջև կայացող անմիջական խոսքային գործունեության հետ՝ երկկողմանի ներքին խոսք - արտաքին խոսք հարաբերակցությամբ:

Այնուհետև, մարդը զբոսայգում քայլում է, դիմացից վազում են երեխաներ, որոնք աղմկում են՝ «Սկյոռիկը, սկյոռիկը»: Մարդը նայում է վերև, ուր ծառից ծառ են թռչկոտում սկյոռիկները: Վերջիններին հետ մարդն առնչվեց ոչ թե անմիջաբար (սկյոռիկները մարդուն

ոչինչ չասացին, օրինակ՝ թե «իրենք ծառից ծառ են թռչկոտում», ոչ էլ երեխաներն զբոսնողին դիմեցին, թե՛ «տեսնք, սկյուռիկները ծառից ծառ են թռչկոտում»), այլ վազող երեխաների ասածի հիման վրա, որը դարձյալ ոչ անմիջական էր (նրանք «սկյուռիկը, սկյուռիկը» արտահայտությունը զբոսնողին չէին ասում, այլ իրենք՝ իրենց), երկու դեպքում էլ ունենք, այսպես կոչված, ոչ անմիջական, այլ միջնորդավորված հաղորդակցում մարդու և սկյուռիկների միջև՝ ի տարբերություն նախորդ օրինակի, որ նույն մարդուն դիմեց փոքրիկը, թե հեռվում երևացող շնից վախենում է:

Այստեղ, կարելի է ասել, դեր ունեն թե՛ մարդկային ուղեղի և հոգեկանի յուրահատկությունները, թե՛ փորձը՝ իբրև ժառանգորդական հնարավորություն, թե՛ հասարակական կեցության պայմանները:

Խոսքային գործունեության հոգեբնախոսական տարբերությունները հանդես են գալիս իբրև ընդհանուր լեզվական հաղորդակցման յուրահատկություն, ինչպես նաև որոշակիորեն առանձնանում են ըստ հանրության (ցեղեր, ժողովուրդներ, ազգեր և այլն) տարատեսակության, նրա ներսում մասնագիտական ճյուղավորման (զբաղմունք, մասնագիտացում, սովորույթ և այլն) բնույթի, սեռային և տարիքային (գենդերային, հասակային տարբերություններ) կողմնորոշման և այլն:

Այսպես, օրինակ, նորածնի հոգեբնախոսական կացությունը սկզբնական է, թեև նա ունի արդեն ժառանգորդական փորձ՝ իբրև մարդ-արարածի, և իր նախորդներից ընդունած հատկանիշներ: Մանկան խոսքային դրսևորումը ուսումնասիրողները (Ռ. Օ. Յակոբսոն և ուրիշներ), գտնում են, որ նորածնի, մի քանի ամսականի ընկալումներն ավելի շուտ հնչյունական-արտասանական են, իբրև ձայնային ալիքների ընկալումներ, քան բառային կամ առարկայանիշ իմաստակիր միավորներ:

Այսպես, մայրը երեխային բաժակով ջուր է ցույց տալիս և արտասանում (ասում) *ջուր* բառը: Նորածինը չի ընկալում այն իբրև բառ, այլ հետևելով մոր արտասանությանը՝ բերանին, շուրթերի շարժմանը, ականջին հասնող ձայնային ալիքներին, այն ընդունում է տեսողությամբ և լսողությամբ: Նա տպավորվում է, մանավանդ որ ասածին

հաջորդում է այդ հեղուկից խմեցնելը, որ կենարար է: Եվ ամեն անգամ ջուր բառի արտաբերումը, ծարավի հագեցումը երեխայի հոգեկան պատկերացման մեջ տպավորվում են իբրև ազդանշան («բառ»), և ըստ կարիքի նա փորձում է (նաև ձեռքերի, մարմնի շարժումներով) վերարտադրել այն (օր.՝ *բու*, մակ. բառ): Սա, կարելի է ասել, ամենասկզբնական («ատաջնային») հաղորդակցում է անհատի լեզվական հոդաբաշխ վիճակին անցնելու ճանապարհին: Այս գործունեության վատ ապացույց է նաև այն, որ նորածնի կամ մի քանի ամսականի սկզբնական նվազագույն ճիգերն ուղղված են լինում իր հետ շփվողի («հաղորդակցվողի») ոչ միայն տեսողական-պատկերային դրվագների, այլ նաև լսողական (արտասանական-ձայնային) ալիքների ընդունմանը, ընդօրինակմանը՝ «հասկանալուն»: Նման երևույթ ենք նկատում ցածր դասարանների աշակերտների ուսուցման գործընթացում, երբ նրանք նյութի յուրացման նպատակով մի քանի անգամ ինքնուրույն կամ ուսուցչի միջնորդությամբ կրկնում և վերակրկնում են ասելիքը («պետք է լավ սովորել») և այլն: Նույնը լինում է նաև դերասանների, հանդիսավոր ելույթ ունեցողների բեմական խոսքի հետ կապված, որ պիտի յուրացվի, ամրագրվի, որպեսզի վերստին ներկայացվի իբրև արտաքին խոսք և այլն:

Հոգեբնախոսական երևույթի հետ կապված ժամանակին հայտնի են եղել տեսություններ, որոնք խոսքային գործունեությունը կապում էին ուղեղի ինչ-որ կենտրոնների հետ, օրինակ՝ արտասանական գործունեության հնարավորությունը ուղեղի ձախ կիսագնդի երրորդ գալարի ստորին հետնամաս (*Բրոկայի կնարրոն*, 1861 թ. հայտնաբերված, Պ. Բրոկայի անունով) և ընկալողական գործունեության հնարավորությունը ուղեղի ձախ կիսագնդի քունքային վերին գալարի հետին մաս (*Վեռնիկեի կնարրոն*, 1874 թ. հայտնաբերված, Կ. Վեռնիկեի անունով), որոնց խաթարման դեպքում, ինչպես գիտենք, ձախողվում է խոսքային գործունեությունը: Հետագայում այդ տեսությունները մերժվեցին, քանի որ գտնում են, որ խոսքային գործունեությունը (հաղորդում-ընդունում) տեղի է ունենում ոչ թե ի հաշիվ ինչ-ինչ կենտրոնների կոնկրետ գործունեության, այլ առհասարակ նյարդային համա-

կարգի հոգեբնախոսական կազմության բարդ ստորակարգության մեջ:

4. Ներքին խոսքի և արտաքին խոսքի միջև գոյություն ունի սերտ, անմիջական կապ: Խոսքային գործունեությունը (ակտը) գիտության ներկայիս փուլում դեռևս լիովին չլուծված խնդիրներից է, որի ուում-նասիրությամբ զբաղվում է ոչ միայն բուն լեզվաբանությունը, այլև հարակից միջգիտակարգերը՝ հոգելեզվաբանությունը (պսիխոլինգվիստիկա), հանրալեզվաբանությունը (սոցիոլինգվիստիկա) և այլն:

Այս ոլորտում զգալի ձեռքբերումների են հասել ինչպես նախկինում լեզվաբանության մեջ (Լ. Վ. Շչերբա), այնպես էլ հետագա տասնամյակներին հոգելեզվաբանության բնագավառում. մասնագետները ոչ միայն մշակեցին տեսություն (Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Ն. Լեոնտև և ուրիշներ), այլև հասցրին այն՝ զարգացման որոշակի աստիճանի, լուծեցին մասնավոր հարցադրումներ (Ա. Ա. Լեոնտև, Ե. Մ. Վերեչագին, Ա. Ռ. Լուրիա և ուրիշներ)՝ հենվելով ամենից առաջ Լ. Ս. Վիգոտսկու տեսության վրա, ստեղծելով ուրույն դպրոց, որին հետևեցին և նոր ուղղություններ բացվեցին այլ երկրներում:

Խոսքային գործունեության ակունքները հասնում են նախանցյալ դարի փիլիսոփայություն, սակայն լեզվաբանության բնագավառում գիտական որոշակի պարզաբանումների հասան հանրալեզվաբանության բնագավառում: Խոսքային գործունեության հոգեբնախոսական մեխանիզմը, այսպես կոչված, տարրական վիճակի մեջ բացատրելը դեռևս բավարար չէ լեզվական հաղորդակցման հասարակական էությանը վերահասու լինելու համար, իբրև խոսքային գործունեության վերածում լեզվականի: Այս հարցին ևս անդրադարձել է Ֆ. դը Մոսյուրը, որ լեզու - խոսք առնչությունը դիտում է անցում անհատականից սոցիալականին. խոսքայինը, իբրև հոգեկան-բնախոսական երևույթ, ընկած է անհատականի և ընդհանրականի միջև, ուստի խոսքային գործունեությունը ֆիզիկական-ֆիզիոլոգիական հիմքով դառնում է լեզվական:

Այս մեխանիզմը գործում է անընդհատականության և տևականության (ընդհատականության) մեջ: Լեզվական հաղորդակցումը ամենանգամյա գործընթաց է, որ կատարվում է ոչ այնքան պարզ մե-

խանիզմով, որ կարելի է ցույց տալ հաղորդման հոգեկան-բնախոսական անցումներով, այլ այդ անցումները մշտական են և անընդմեջ, երբ անհատը կապ ունի հանրության հետ: Այդ մեխանիզմի «աշխատանքը» աներևակայելիորեն բարդանում է, երբ այն դիտարկում ենք լեզվի ոչ թե պարզագույն կամ նվազագույն միավորների, ասենք՝ բառ կամ բառերի, երկու կամ ավելի բաղադրիչներով բառակապակցության, այլև մեկ կամ մի քանի ստորոգում ունեցող նախադասությունների և այլն, այլ ամբողջական մտքեր ու դատողություններ պարունակող բնագրերի (տեքստերի՝ սկսած հաջորդական մի քանի պարբերությունից և այլն) հարաբերությամբ:

Լեզվի խոսքային դրսևորումն, իբրև բնագիր (տեքստ), իր հերթին, ունի հաղորդակցական իր դժվարությունները՝ կապված հաղորդման լարվածության (ինտենսիվության), ժամանակային սահմանափակության (լիմիտի) հետ և այլն:

Խոսքային գործունեությունը, հիմնված անհատի հոգեկան-բնախոսական հնարավորության վրա, թվում է, կարող է դժվարության հանդիպել, գլուխ չհանել ստեղծված վիճակից, սակայն դա այդպես չէ, որովհետև անհատի ամեն մի խոսքային գործունեություն, որ հիմնված է ոչ միայն իր լեզվական ունակության, իրեն «ազգակից» լեզվակիրների փորձի վրա, հասարակայնորեն ճանաչելի լինելով հանդերձ՝ բոլոր դեպքերում ի վիճակի է հասնելու հաղորդակցական փոխըմբռնման: Այս դեպքում կարևոր միջոց են բնագրի ընկալման ունակությունը, յուրացման դժվարության հաղթահարումը, հիշողության բերած նպաստը և այլն: Դրանք, ի դեպ, հատկանիշներ են, որոնք ըստ էության անխտիր հատուկ են հասարակության յուրաքանչյուր անդամի համար, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ անհատները հավասար չափով են օժտված այդ հատկանիշներով: Այստեղից էլ այն, որ ոմանք ավելի ընդունակ են և ունեն հիշողության բարձր շեմ, քան մյուսները, և հակառակը: Անհատների հոգեկանի բազմազանությունը հանգեցնում է խոսքային գործունեության մեջ բնախոսականի դրսևորման տարբերությունների, ըստ այդմ մարդկային հաղորդակցման ոչ բոլոր օրինակներն են համարժեք և միմյանց հավասար: Դրանք, իհարկե, անհատական տարբերություններ են, բայց ոչ հասարակական թերա-

ցումներ, բոլոր դեպքերում ընդհանուրը, հասարակականը մնում է իբրև լեզվական հաղորդակցման իրողություն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 55-63:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 8-12:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Թեմա 7. Լեզուն իբրև ստեղծագործություն

Հիմնահարցեր: Լեզվի սրեղծագործական բնույթը: Սրեղծագործական խոսքի տեսակները՝ մտածական և արտահայտչական: Լեզուն առօրյա, գիտական և գեղարվեստական սրեղծագործության միջոց: Գեղարվեստական սրեղծագործության լեզվական հիմքերը և սրեղծագործական առանձնահատկությունները:

1. Լեզուն ինքնին ստեղծագործություն է՝ բառի սովորական և ամենալայն իմաստով: Սակայն մյուս՝ գեղարվեստական (գեղագիտական՝ էսթետիկական) իմաստով լեզուն այլ է, այն անհատների (անհատական) ստեղծագործություն է, որ իր վրա կրում է հանճարի (բառի զգացողության) կնիք: Իբրև գեղագիտական ինքնարտահայտման միջոց՝ այն դրսևորվում է ոչ միայն արտաքին կողմերով, այսինքն՝ արտաքուստ կամ արտահայտվելով, այլև ներքին կողմերով, այսինքն՝ ներքուստ կամ առանց արտահայտվելու: Այս դեպքում լեզուն ոչ միայն արտաքին, այլև (միաժամանակ) ներքին խոսք է: Ստացվում է խոսքի, պայմանականորեն ասված, երկու տեսակ՝ արտաքին և ներքին: Վերջինս ունի ստեղծագործական ավելի մեծ հնարավորություններ, քան մյուսը, թեև լեզվի ստեղծագործական լինելը առնչվում է թե՛ մեկին և թե՛ մյուսին: Անհատական պահը շատ կարևոր է լեզվի, իբրև ստեղծագործության, ի հայտ գալու հանգամանքի մեջ: Արտահայտված՝ ասված խոսքը ինչ-որ չափով զիջում է ներքին՝ չասված խոսքին, թեև երկու դեպքում էլ այն տեղի է ունենում, ընդհանուր առմամբ, հաղորդակցման պահանջի բավարարման նպատակով:

Անհատի ստեղծագործական հնարավորությունները բազմազան են՝ սկսած առօրյա-կենցաղայինից մինչև գիտական և գեղարվեստական ոլորտներ, հարուստ ներքին իմացությամբ և առարկայական վերաբերությամբ: Մեծ անհատները, ի տարբերություն սովորական ասելիքի տիրոջ, օժտված են այնպիսի ներզգացողական (ինտուիտիվ) յուրօրինակությամբ, որ իրենց ասելիքով (խոսքով) նպաստում են հասարակության առաջընթացին, կամ հակառակը: Այս դեպքում, անշուշտ, մեծանում է անհատականի դերը, որն, ինչպես գիտենք, ունի ստեղծագործական հիմքեր. սովորական խոսքից մեծապես տարբերվում է գեղարվեստականը («գեղարվեստը»՝ լայն իմաստով):

Լեզվական ստեղծագործությունը, ինչպես որ լեզուն առհասարակ, գործունեություն է, վարք և այլն, որոնք ներքին խոսքից վերածվում են արտաքին խոսքի ոչ այլ կերպ, քան ստեղծագործական, խոսքի անհատական կառուցման մղումով: Է. Բ. Ադայանը գրում է, որ «...իր ներքին խոսքը կազմելու ժամանակ սուրյեկտը օգտագործում է լեզվի հասարակայնորեն ընդհանուր և իր կամքից անկախ օբյեկտիվորեն գոյություն ունեցող լեզվական համակարգը, որը նա յուրացրել է լեզուն սովորելու ժամանակ և ունի իր մեջ որպես ներունակ (իմպլիցիտ – Վ.Հ.) լեզվական հարստություն»¹:

Կարելի է օրինակներ բերել, ընդ որում ոչ միայն սովորական իրականությունից, այլև այդ իրականության գեղարվեստական մարմնացում ստացած ստեղծագործություններից: Ասենք, օրինակ, Թումանյանը տեսել է Լոռու ձորը և գործերից մեկում նկարագրում է այն իր ներքին խոսքի հիման վրա արտահայտված արտաքին խոսքով՝ օգտագործելով ժամանակի հայերենի լեզվական ողջ համակարգը (նույնիսկ գրական նորմայի մեջ ներառելով իր հայրենի եզերքի լեզվական միջոցներ՝ ֆակտուրաներ), և գրում է ըստ այդմ՝ «Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց, ժայռերը խորունկ նոթերը կիտած...» և այլն: Թումանյանը իր (ներքին) խոսքը ներկայացնում է *գեղարվեստորեն*, գեղագիտական արտաքին խոսքով (լեզվով): Մեկ ուրիշը, ասենք, բնագետը նույն ձորը կարող էր նկարագրել ըստ իր գիտական իմացության՝ *գիտականորեն* և այլն: Այս երկու դեպքում ունենք Լոռվա ձորի երկու նկարագրություն, որոնք իրարից խիստ տարբեր են, որոնց հիմքում ամեն անգամ ընկած է անհատի (Թումանյանի և բնագետի) սուրյեկտիվ խոսքը, այլև վերջինիս գեղարվեստական կամ գիտական ստեղծագործական կողմը:

Այսպիսով, տարբեր բնույթի է ստեղծագործական աշխատանքը գիտության և գրականության մեջ, առհասարակ՝ ոչ սովորական պայմաններում, որ առավելապես կապված է լեզվական միավորների իրադրական-խոսքային, մանավանդ ռճական հատկանիշների հետ: Դեռ ժամանակին այդ տարբերությունը նկատել է ռուս մտածող Վ. Գ. Բելինսկին, նա այս առումով գրում է. «Փիլիսոփան խոսում է սիլլոգիզմներով, պոետը՝ կերպարներով և պատկերներով, բայց երկուսն

¹ Նույն տեղում, էջ 50-51:

էլ նույն բանն են անում: Քաղաքատնտեսագետը, զինվելով վիճակագրական թվերով, *ապացուցում է* (ընդգծումը հեղինակի – Վ. Հ.), ներգործելով իր ընթերցողների կամ ունկնդիրների մտքի վրա, թե հասարակության մեջ այս կամ այն դասակարգի դրությունը շատ է բարելավվել կամ շատ է վատացել այս կամ այն պատճառների հետևանքով: Պետք, զինվելով իրականության կենդանի և վառ պատկերմամբ, ճշմարիտ պատկերով ցույց է տալիս՝ ներգործելով իր ընթերցողների երևակայության վրա, թե հասարակության մեջ այսինչ դասակարգի դրությունը իրոք շատ է բարելավվել կամ վատացել այսինչ կամ այնինչ պատճառներից: Մեկն ապացուցում է, մյուսը ցույց է տալիս, և երկուսն էլ համոզում են, միայն թե մեկը՝ տրամաբանական փաստարկներով, իսկ մյուսը՝ պատկերներով»¹:

Այնուամենայնիվ, կան գեղարվեստական խոսքի անհատականացման իրական տարբերություններ: Այսպես, թերևս կարելի է ասել, թե Պուշկինի խոսքը մտածական-գեղարվեստական է, Դոստոևսկու խոսքը՝ հոգեբանական-գեղարվեստական, Տոլստոյի խոսքը՝ բարոյական-գեղարվեստական, Շեքսպիրի խոսքը՝ վեհանձնական-գեղարվեստական, Թոմանյանի խոսքը՝ մարդասիրական - գեղարվեստական,- մարդկության հանճարներ, որոնց երկերում անհատական գեղարվեստականին հարակից են ընդհանուր մտածականը, հոգեբանականը, բարոյականը, վեհը, մարդասիրությունը. մեծերի խոսքը իրականության ուղենիշ է՝ ժամանակից և տարածությունից դուրս: Նման խոսքի յուրահատկություններ կարելի է նկատել նաև գիտության, արվեստների մեծերի ստեղծագործությունների բնութագրերում, և դա մարդկային հանճարի նվաճումն է:

Լեզվի անհատական (սուբյեկտիվ) կողմը, որն ունի ներքին խոսքի ձևով դրսևորում, կարևոր է հասարակության յուրաքանչյուր անհատի համար: Ավելին, խոսքի ստեղծագործական հատկանիշը գրեթե միշտ ենթադրում է անհատի լեզվական իմացության, լեզվի ստեղծագործական գործադրման հնարավորություն:

Շարունակելով վերը բերված օրինակը՝ նշենք, որ Թոմանյանը մեծ անհատականություն է, որովհետև նրա հայերեն խոսքն ինքնատիպ գեղարվեստական ստեղծագործության արդյունք է, ընդ որում

¹ Վ. Գ. Բելինսկի, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 2, Ե., 1956, էջ 467-468:

համամարդկային վեհ գաղափարների արծարծումով. մեծ բանաստեղծն ունի իր լեզուն՝ անհատական (ստեղծագործական հիմքերից եկող) խոսքը:

Լեզուն ստեղծագործություն է այն դեպքում, երբ նրանով հաղորդակցվողը նյութական միավորների (բառ, նախադասություն և այլն) դիմելու, իր խոսքում դրանք գործածելու համար ընտրություն է կատարում: Ամեն մի անհատ (սուբյեկտ) իր ճաշակով կամ իմացության, զգացածի չափով է դիմում ընտրության: Այստեղ կարևոր են նաև խոսքի տիրոջ (իմն գրականության անհատի և այլն) հայացքները դեպի իրականությունը, արվեստի վերաբերյալ իր համոզմունքները, կյանքի դեպի լավը վերափոխմանն ուղղված խոսքի ստեղծման հիմունքները և այլն: Լ. Տոլստոյը գրում է, որ «մեծ գրականությունը ծնվում է այն ժամանակ, երբ արթնանում է բարձր բարոյական զգացումը»:

Լեզվական միավորի ընտրությունը անհատականության չափանիշ է. ընտրությունը դառնում է զգացածի, լեզվական ոճի դրսևորման միջոց: Մրա վառ արտահայտությունն է ընդհանուր գեղարվեստական խոսքի մեծ տերերի (Նարեկացի, Բայրոն, Պուշկին, Գյոթե, Բակունց, Չարենց և ուրիշներ) անհատական ստեղծագործական խոսքը, որ համընդհանուր ճանաչման պայմաններում դառնում է ողջ հասարակության սեփականությունը: Մեծ անհատների խոսքը սովյալ հանրությանն է, ողջ մարդկությանը՝ իբրև մտավոր (գիտական կամ գեղարվեստական) ձեռքերում:

2. Տարբերում են ստեղծագործական խոսքի երկու տեսակ՝ *միածական* և *արտահայտչական*, և ըստ այդմ՝ սովորական (ոչ գեղագիտական) և գեղագիտական (ոչ սովորական) հաղորդակցում: «Մտածական (ինտելեկտուոլ) հաղորդման առանձնահատկությունը կամ հիմնական հատկանիշը այն է, որ նա ձգտում է հաղորդել մտքերն օբյեկտիվորեն առավել ճշգրիտ, ուղղակի, երկիմաստություններից և ավելորդ «զարդերից» զերծ արտահայտություններով՝ դրանց համար ընտրելով, մշակելով համապատասխան տերմինաբանություն, հատուկ արտահայտությունների և բառակապակցությունների, բա-

նաձևումների համակարգ և այլն»¹: Դժվար չէ նկատել, որ այստեղ հաշվի է առնված, նախ, գիտական խոսքը, որը օրինակ կարող է լինել այլ կարգի (գեղարվեստական, հրապարակային, քաղաքական, հուշագրային և այլն) խոսքի համար:

Մտածական խոսքին հակադրվում է զգացական խոսքը: Վերջինիս մեծ տեղ էին տալիս, օրինակ, Պրագայի լեզվաբանական խմբակի (ֆունկցիոնալ լեզվաբանության) անվանի ներկայացուցիչները (Վ. Մատեզիուս, Բ. Հավրանեկ և ուրիշներ)² գտնելով, որ լեզվի բնութագրության հարցում կարևոր ցուցանիշ են *միտածականը*³ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ *զգացականը*:

Իբրև ստեղծագործություն՝ լեզուն հանդես է գալիս գործառույթն իրեն բնորոշ ձևի մեջ՝ լայնորեն ի գործ դնելով իր գրեթե բոլոր հնարավորությունները, որոնք ծառայելու են գեղարվեստական պատկերի յուրօրինակ ստեղծմանը: Բառապաշարի, քերականական ձևերի տարբերակային հարստությանը միանում է հեղինակային նորամուծությունը, որը տաղանդի դրսևորման հատկանիշ է:

Այս դեպքում է, որ հնարավոր է ասել, թե լեզուն ոչ միայն գործունեություն է, այլև ստեղծագործություն: Եթե այս երկուսը միասնաբար ասելու լինենք, ապա կարող ենք սահմանել հետևյալ կերպ. լեզուն *սրեղծագործական գործունեություն* է (չի խանգարում *գործ* բաղադրիչի կրկնությունը): Մյուս կողմից՝ լեզուն ազատ, բայց ոչ «անկառավարելի» ստեղծագործություն է, անհատի ազատ հաղորդակցական դրսևորման լավագույն հնարավորություն, որ ստանում է խոսքային ձևակերպում՝ ըստ անհատի ոճի իրադրության:

3. Լեզուն միաժամանակ առօրյա, գիտական և գեղարվեստական ստեղծագործության միջոց է, քանի որ իրականանում է նման գործառույթներով (ֆունկցիաներով): Լեզվի ստեղծագործական բնույթի տարբերությունը, ինչպես կարելի է նկատել, առնչվում է հենց հաղորդակցման գործառության բազմազանությանը: Ըստ այսմ՝ եթե լեզուն սովորական կամ առօրյա (ամենօրյա) պայմաններում ունի ընդամենը հաղորդակցման (ստեղծագործման) միջոցի գործառույթ, ապա ոչ սովորական՝ գեղագիտական պայմաններում այն հանդես է գալիս այլ

¹Նույն տեղում, էջ 53:

ձևաչափով՝ իբրև գիտական և գեղարվեստական ինքնարտահայտման (ստեղծագործման) միջոց:

Ուստի լեզուն ստեղծագործություն է, որ ծառայում է հասարակությանը, ավելի լայն իմաստով՝ մարդկությանը, ունի ստեղծագործաբար հարստանալու և կատարելագործվելու հակում այնքանով, որքանով այն կրող հասարակությունը (կամ մարդկությունը) առաջընթաց է ուզում ունենալ: Մեծ անհատների խոսքն է, ամենից առաջ, ստեղծագործաբար զարգացնում լեզուն, և այն էլ գրեթե բոլոր ժամանակներում:

4. Հաղորդակցման միջոցի բնույթի և դերի պարզաբանման տեսանկյունից կարևոր է նաև այն հարցը, թե որոնք են գեղարվեստական ստեղծագործության լեզվական հիմքերը, և ինչպիսի երակներից է այն սնվում: Այս երկուսի պատասխանները կարող են պարզաբանում մտցնել գեղարվեստական և այլ կարգի խոսքային կառույցների («խոսքերի») հեղինակային, ուստի նաև ընդհանուր լեզվական առանձնահատկությունների բնույթի մեջ: «Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, բայց ոգին, որ ինձ մղում է գրելու, հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին» (Վ. Սարոյան):

Լեզուն մտքի ձևն է, որ համընկնում է տվյալ հասարակության փորձին: Վերջինս պատմական իրողություն է, որում մեկտեղված են տվյալ հանրության մտավոր (գիտություն, արվեստ և այլն) և հոգևոր (կրոն, հավատալիք, սովորույթ և այլն) արժեքները: Մտածող, իմացական գործունեությամբ զբաղվող անհատի խոսքում նման արժեքները հանդես են գալիս ոչ թե ինքնաբերաբար, այլ ստեղծագործական մեծ ներդրումով: Եվ հայտնի է, որ ստեղծագործող ամեն մի մեծ անհատականություն ոչ միայն իր ծնող ժողովրդին է, այլև մարդկությանը:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 50-55:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 15-17:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Թեմա 8. Լեզուն որպես պատմական երևույթ

Հիմնահարցեր: *Լեզվի գոյության ձևը ժամանակի մեջ. փոփոխականությունն և անընդհատականությունն (անընդհատություն): Լեզուների համաժամանակյա փոփոխությունների բնույթը: Լեզուն տարածամասկորեն (պարունականորեն) փոփոխվող, համաժամանակորեն կայուն համակարգ:*

1. Լեզուն ժամանակի ընթացքում փոփոխվում է, որ պարզորոշ նկատվում է ոչ միայն ցեղակցորեն իրար մոտ լեզուների, այլև նույնիսկ մեկ լեզվի տարբեր փուլերի բառապաշարի, քերականական կառուցվածքի երևույթների համեմատությունից: Ժամանակի գործոնի հաշվով է առանձնացվում լեզուների պատմությունը: Լեզվի գոյության ձևը ժամանակի մեջ հատկանշվում է երկու կերպ՝ փոփոխականությամբ և անընդհատականությամբ (անընդհատությամբ): Լեզուն անընդմեջ փոփոխվող, սակայն անընդհատ կայունացող համակարգ է:

Այդ փոփոխությունները մեծապես պայմանավորված են արտալեզվական հանգամանքներով: Լեզուն արտացոլում է իրականությունը, որպիսով վերջինիս ներսում կատարվող տեղաշարժերը (քաղաքական, զինական, տնտեսական, մշակութային և այլն) ամբողջովին իրենց արտահայտությունն են գտնում լեզվում: Արտալեզվական իրականությունը և լեզվական իրականությունները, կարելի է ասել, նույնական են: Փոփոխություններն առաջանում են կան լեզուների ներսում՝ ինքնին, կան լեզուների միջև՝ շփումների հետևանքով, մի դեպքում փոխփոխությունը լինում է ներքին միջոցներով (ուղղախոսական-ուղղագրական բարելավում, բառաբարդում, ածանցում, քերականական կառույցների վերաձևում և այլն), մյուս դեպքում՝ փոխառություններով: Երևույթը միանգամից տեղի չի ունենում, այլ տևական ժամանակի ընթացքում:

Արտաքին աշխարհում տեղի ունեցող ամեն մի փոփոխություն իր անմիջական արտացոլումն ունի լեզվի մեջ. համաժամանակյա կտրվածքում դրանք լիաժամակ նույնության մեջ են, իսկ տարածամասկական չափման մեջ գոյություն ունի լրիվության ապահովման ձգտում: Իրականության մեջ կատարվող յուրաքանչյուր փոփոխության դեպ-

քում լեզուն ձգտում է ապահովել այդ փոփոխության նշանակումը: Պատկերավոր ասած՝ լեզուն իրականության ձևն է (արտահայտությունը), իսկ իրականությունը՝ լեզվի իմաստը (բովանդակությունը): Անընդհատ զարգացման և կատարելացման գործընթացը լեզվում տևական ժամանակի մեջ դառնում է պատմական փաստ: Լեզվի զարգացումը պատմական երևույթ է, ինչպես որ իրականության առաջընթացն է պատմական իրողություն: Ժամանակի ընթացքում հասարակության ձեռքբերումներն անցնում են պատմությանը, այդպես էլ դրանց նշանակումներն ունենում են պատմական արժեք: Լեզուների տարանջատումը (դիֆերենցումը) ոչ այլ ինչ է, քան ժողովուրդների (տարածքային, սոցիալական, մշակութային և այլն) առանձնացվածության վկայություն, որ հետագայի համար անցյալի պատմական իրողություն է:

Եթե հասարակությունը պատմության ընթացքում տարբեր է եղել (տոհմեր, ցեղեր, ժողովուրդներ, ազգեր և այլն), ապա նրա լեզուն պատմական յուրաքանչյուր փուլում, այնուամենայնիվ, եղել է միասնական, սպասարկել է հասարակությանը պատմության տվյալ փուլում: Ավելին, նույն ժամանակի ընթացքում իրականության բազմազանությունը տեղավորվում է լեզվական միօրինակության մեջ, իսկ արտացոլման բազմակիությունը հաղորդակցման միջոցի և մտածողության ձևի տարածնություն է ինքնին, որ գրեթե միշտ ձգտում է կայունության:

Լեզվական անընդհատությանը (կայունությանը) լծորդ է փոփոխականությունը, մեկը հակակշռում է մյուսին: Որքան համակարգը խախտվում է փոփոխությունների հետևանքով, նույնքան այն ձգտում է կայունության: Համակարգերն առհասարակ նույն բնույթի երևույթների կանոնավոր ամբողջություն են, լեզվի դեպքում նույնպես այն ամբողջական է իր միասնականությամբ, կարգաբերվածությամբ և այլն: Նրա շատ հին երևույթներ ժամանակի ընթացքում մոռացվում են («հնանում են»), դուրս են մնում համակարգից, որոնց փոխարեն հայտնվում են նորերը՝ բնականաբար ենթարկվելով համակարգի դրվածքին:

Համակարգի մեջ մտնող իրակությունները ավելի արագ են փոխվում, քան համակարգն ինքը: Եթե համակարգի բաղադրիչների կամ նրանց հարող միավորների փոփոխությունները կարելի է հաշվել տասնամյակներով, ապա ամբողջ համակարգի փոփոխությունը՝ անցում մեկ համակարգից մյուսին, տևում է հարյուրամյակներ: Տեսական այս դրույթը վերաբերում է բոլոր լեզուներին՝ իբրև պատմական երևույթի:

Լեզվի պատմական երևույթ լինելը լավագույնս նկատելի է զարգացման տարբեր փուլերի մեջ հնչյունական համակարգի, բառապաշարի, քերականական կառուցվածքի մասնակի կամ մեծ չափերի հասնող տարբերություններից:

Գիտությանը հայտնի են շատ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են մարդկային մտածողության հիմնական հասկացությունների նշանակումներին՝ իբրև քաղաքական, տնտեսական և մշակութային ըմբռնումների պատմական անվանումներ՝ իրենց ժամանակի և իմաստաբանության մեջ (Է. Բենվենիստ, Ռ. Բուդաղով և ուրիշներ):

Հայերենը, օրինակ, վերջին մեկուկես հազարամյակից ավելի շրջանում համակարգի առումով կրել է երեք կարգի փոփոխություն՝ իբրև հին, միջին և նոր շրջանների հաղորդակցման միջոց: Ավելին, դուրս գալով հնդեվրոպական միասնության շրջանից, մ. թ. ա. 3-րդ հազարամյակում այն արդեն առանձին լեզու է, և ինքնուրույն զարգացման ընթացքում կորցրել է հնդեվրոպական ընդհանրությունից ժառանգած, ինչպես նաև տարբերվող զգալի թվով գծեր, որոնց փոխարեն ժամանակի ընթացքում ձեռք է բերել նորը: Ներկայումս, ի համեմատություն ցեղակից այլ լեզուների, այն, մանավանդ հնչյունական համակարգի մեջ, պահպանել է ավելի հնավանդ (արխաիկ) գծեր, քան ցեղակից լեզուներից շատերը և այլն:

Այնուհետև, հայերենի բայական համակարգը փոփոխվել է երեք հիմնական փուլերի՝ գրաբարի, միջի հայերենի և աշխարհաբարի մեջ, իսկ վերջիններիս բայի եղանակային և ժամանակային ձևերը տեղաշարժվել են ավելի արագ (օր.՝ գրաբարի ներսում դասական և ոչ դասական ձևերի առկայություն, հունաբան կազմությունների ներմուծում

և այլն): Այս առումով, վաղուց է հայտնի, առավել «զգայուն է» լեզվի բառապաշարը. օր.՝ հին հայերենի *սզանովթ* «ջրաման, թակույկ», *սրամբակ* «ապստամբող, հանդուգն», *բամբիշն* «թագուհի» և այլն բառերը հետագա շրջանում այլևս չեն գործածվում, իսկ միջին հայերենի *բարոն* «մեծավոր. պարոն», *գունդարասլ* «արքունի ախոռապետ», *ջամբո* «պահասենյակ. պահեստ» և այլն բառերը չեն եղել նախկինում, ոչ էլ անցել են նոր գրական հայերենին: Կան բառեր էլ, որոնք իմաստով են փոփոխվել. *սայրել* (գրաբար՝ *սայրիլ*) «ազատվել» բառը հայերենի տարբեր շրջաններում ունեցել է մի քանի իմաստներ՝ «կյանք ունենալ», «բնակվել», «միասին լինել» և այլն, *աշխոյժ* «ուժեղ, գորեղ, արի, կտրիճ» բառը նոր գրականում՝ «աչքաբաց, եռանդուն» և այլն: Հինհայերենյան շատ բառեր փոփոխվել են նաև ձևով, օր.՝ գրաբարյան *յարարասիսանի* բառը միջին հայերենում հնչասեղմամբ (հապլոլոգիա) դարձել է *յացիուն*, իսկ նոր հայերենում՝ *յարարասիսան* և այլն:

Իմացական առումով արտալեզվականը վերածվում է լեզվականի այնքանով, որքանով ժամանակի ընթացքում համակարգն ունենում է հնարավորություն փոփոխության՝ վերակազմավորման, մնալով միասնական իր գործառության մեջ:

2. Լեզուն, որպես պատմական երևույթ, ունենում է իր գործառույթները ոչ միայն տևական (պատմական փուլերի), այլև կարճ ժամանակի (այս կամ այն փուլի մասերի) մեջ. ինչպիսի փոփոխություններ են նկատվում, օրինակ, իրար հաջորդող սերունդների (իմա՛ ծնող - զավակ և այլն) միջև եղող ժամանակում, ինչպիսին են նույն ժամանակում ներլեզվային (նույն լեզվի տարբերակների միջև) և միջլեզվային (տարբեր լեզուների միջև) փոփոխությունները: Նման հարցադրումը կարևոր է մի կողմից՝ լեզվի պատմական բնույթի ժամանակային պահերը պատկերացնելու, մյուս կողմից՝ պատմական ընթացքի մեջ ընդհանուր համակարգի բնութագրման առումով:

Հարցի նման մոտեցմանը մասնակիորեն անդրադարձել է Է. Բ. Աղայանը, մանավանդ առաջինի՝ իրար հաջորդող սերունդների (իմա՛ ծնող - զավակ և այլն) միջև նկատվող փոփոխությունների հետ

կապված¹: Այստեղ կարևոր է նաև մյուս երկուսի՝ ներլեզվային և միջլեզվային փոփոխությունների հարցը:

ա) Տարիքային (սերունդների միջև) նկատվող լեզվական փոփոխությունների քննությամբ զբաղվում է հանրալեզվաբանությունը, որը լեզվի մասին գիտության համեմատաբար նոր ճյուղերից է: Մարդկանց միջև տարիքային տարբերությունը ավելի նկատելի է բառապաշարի մեջ, մասամբ նաև մյուս մակարդակներում:

Այսպես, հայերենում վերջին տասնամյակներում երիտասարդների (15-25 տարեկանների) բառապաշարում գործածվում են նոր բառեր, մանավանդ տերմիններ և տերմինային անվանումներ, ինչպես նաև խոսակցական բնույթի բառեր, ոճեր և այլն, որոնք խորթ են տարեցների (55-75 տարեկանների) համար: Այնուհետև, ժամանակին վերջիններս, իրենց հերթին, սովորած են եղել այնպիսի բառեր և բառային միավորներ, որոնք նոր էին իրենց համար, քան իրենց նախորդների: Այս ամենը բացատրվում է ժամանակի մեջ՝ տասնամյակների ընթացքում հասարակության կյանքում տեղի ունեցած այն փոփոխություններով, որոնք իրենց բուն արտահայտությունն են գտել կամ շարունակում են գտնել լեզվում, և այդպես ոչ միայն հայերենում, այլև մյուս լեզուներում:

Գեղարվեստական գրականությունը տալիս է ասվածի լավագույն օրինակներ. այսօր երիտասարդներին (15-25 տարեկաններին) միշտ չէ, որ հասկանալի են մի քանի տասնամյակ առաջ (60-90-ական թթ.) հանդես եկած գրողների (Հ. Մաթևոսյան, Վ. Պետրոսյան, Մ. Գալշոյան և այլն) երկերի բառապաշարի շատ բառեր (մանավանդ խոսակցական, բարբառային), նաև քերականական ձևեր, փոխառություններ և այլն:

Այնուհետև, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», Բաֆֆու «Սամվել», Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպերի լեզվում կան այնպիսի բառային, քերականական ձևեր, որոնք իրենց ժամանակին գործածական էին և միանգամայն հասկանալի, սակայն նոր ժամանակներում ինչ-որ չափով հարուցում են դժվարություններ, թեև ոչ

¹ Նույն տեղում, էջ 66-67:

բնավ անհաղթահարելի. օր.՝ «Ձին եկել դիզվել, սար ու ձոր բռնել էր» (Աբովյան) և այլն:

բ) Ներլեզվային (տվյալ լեզվի ներսում) լինում են այնպիսի փոփոխություններ, որոնք ժամանակային առումով նոր են, և լինելով համագործածական՝ դառնում են կենսունակ, ուստի լեզվի պատմության տվյալ փուլում կայունանում են և մտնում նրա ընդհանուր համակարգի մեջ. օր.՝ հայ. բայի արգելական հրամայականի դեպքում՝ *մի սահ* (< *մի սահի*. «Դու *մի սահի*...»), *մի՛ քացիր* (< *մի՛ քանս*), *մի՛ խոսեցրու* (< *մի՛ խոսեցնի*), *մի՛ հեռացիր* (< *մի՛ հեռանս*), *մի՛ փախցրու* (< *մի՛ փախցնի*) և այլն:

Այս դեպքում երևույթի առաջացումը կապվում է հիմնականում լեզվական նորմայի խախտման հետ՝ պայմանավորված տվյալ ժամանակին բնորոշ գործոններով (խոսակցական, նաև բարբառային ազդեցություն, համաբանություն, անհետևողականություն և այլն), և ըստ այդմ տեղի է ունենում լեզվի նորմայի վերաձևում, որ դառնում է պատմական իրողություն:

գ) Միջլեզվային (լեզուների միջև) տեղի ունեցող փոփոխությունները նույնպես նկատելի են համեմատաբար կարճ ժամանակի մեջ, երբ իրականության սրընթաց փոփոխությունը դառնում է լեզվի վերափոխման հիմունք: Այսպես, հայերենում միայն այս վերջին երկու-երեք տասնամյակում, կապված տնտեսության վերափոխման (շուկայական հարաբերություններ, բանկային գործ և այլն), համացանցային տեխնիկայի ներդրման (համակարգիչներ և այլն), մշակութային նոր տիպի միջոցառումների (փառատոներ, բիենալներ և այլն) հետ, մուտք են գործել նոր բառեր և արտահայտություններ, հիմնականում տերմինային բնույթի, որոնք համալրում են լեզվի բառապաշարը:

3. Լեզվի հնչյունները, բառերը, քերականական ձևերը անընդհատ փոփոխվում են՝ հաղորդակցական սովորույթի փոփոխության մեջ, և եթե պատկերավոր ձևով ասելու լինենք, ապա ամեն մի լեզվի բառարան և քերականություն փորձում են ամրագրել այդ փոփոխությունները տվյալ ժամանակի մեջ, այնինչ լեզուն՝ իբրև խոսք (կառուց-

վածք), անընդհատ ձգտում է իրականության լիարժեք արտահայտման, իսկ լեզուն՝ իբրև համակարգ, ավանդական է, մի տեսակ, պահպանողական: Ըստ այսմ՝ լեզուն փոփոխվում է ոչ միայն պատմականորեն, այլև համաժամանակության մեջ:

Վերջապես նկատենք, որ գիտության մեջ եղել են այս խնդրին առնչվող տարբեր տեսություններ, նաև դրանց քննադատության և վերանայման փորձեր (18-րդ դ. 2-րդ կեսին՝ Ֆ. Շլեգել, Ա. Վ. Շլեգել, Յ. Գ. Հերդեր և ուրիշներ, 19-րդ դ. լեզվաբանության մեջ՝ Վ. ֆոն Հումբոլդտ, Ա. Ա.. Պոտերնյա, Ֆ. Ի. Բուպան և ուրիշներ), այնուհետև գրվել են լեզուների պատմությանը վերաբերող տարբեր ուսումնասիրություններ՝ ըստ ժամանակի հասարակական հոսանքների, գաղափարական միտումների, մշակութային առաջընթացի հանգամանքների:

Հայ իրականության մեջ նույնպես լեզվի հարցերում եղել են նկատելի տարակարծություններ, հին և նոր գրական լեզուների գոյակցության, մշակման խնդիրների լուծումների նկատմամբ առանձին մոտեցումներ, որոնք ոչ այլ ինչ են, քան բուն հաղորդակցական միջոցի նկատմամբ արտաքին միջամտության փորձեր, այնինչ լեզուն իր բնականոն ընթացքի մեջ լիովին արտահայտել է տվյալ իրականությունը՝ թե՛ համաժամանակյա կտրվածքում և թե՛ պատմականորեն:

Հիմնական գրականություն:

Միայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 63-68:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание Ереван, 2010, էջ19-26:

Будагов Р. А., История языка в истории общества, М., 1971:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 15-17:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 4-7:

Երկրորդ բաժին

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄՆԵՐԸ

ԹԵՄԱՏԻԿԱ Ի. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Հնչյունախոսություն

Հիմնահարցեր: *Խոսքի արտաբերման օրգանները. արտասանական ապարատ: Ձայն և աղմուկ, ձայնի ուժգնություն, բարձրություն և րեմբր. հնչյունի լարվածություն և հնչեղություն, երկարություն և կրկնություն: Վանկ, շեշտ և հնչերանգ: Հնչյունական շղթա: Հնչյունների դասակարգումը. ձայնավորներ և քաղաձայններ, երկբարբառներ և երկհնչյուններ:*

1. Հնչյունը արտասանական (արտաբերական) նվազագույն միավոր է, որ հանրորեն գիտակցելի է որպես հոդաբաշխ ձայն: Այն հանդես է գալիս կամ առանձին, կամ հոդավորված: Ըստ այսմ՝ լեզուն հոդաբաշխ երևույթ է: Հնչյունների առաջացումը, կազմությունը և գործառությունը ուսումնասիրության առանձին բնագավառ է: Հնչյունաբանությունը (ֆոնետիկա. հնչյուն, ֆոնեմա. անգլ. phoneme) գիտություն է մարդկային լեզվի հնչյունների վերաբերյալ: Հնչյունաբանություն թեմատիկան, սովորաբար, ընդգրկում է չորս թեմա՝ հնչյունախոսություն, հնչույթաբանություն, պատմական հնչյունաբանություն (կամ հնչյունափոխություն) և գրաբանություն (կամ գրի պատմություն)¹:

Եթե հաշվի ենք առնում լեզվի նվազագույն միավորի գործառության (ֆունկցիայի) ժամանակային գործոնը, ապա հնչյունախոսություն և հնչույթաբանություն թեմաների ուսուցումն այլ բան չէ, քան լեզվի նվազագույն միավորի՝ հնչույթի (լայն իմաստով՝ հնչյունի) և նրան հարակից միավորների (վանկի, շեշտի, հնչերանգի և այլն) հա-

¹ Բուհական կրթության մեջ առավել կարևոր է առաջին երեք թեմաների ուսուցումը, իսկ վերջինին կարելի է անդրադառնալ կամընտրական (ֆակուլտատիվ) կամ այլ կարգի դասավանդման ձևով: Այդ թեման լինելու է դասագրքի 2-րդ մասում:

մաժամանակյա (սինխրոնիկ) վերլուծություն: Պատմական հնչյունաբանություն (կամ հնչյունափոխություն) թեմայի ուսուցումը ներառում է լեզուների պատմության ընթացքում հնչույթների (հնչյունների) կրած այն փոփոխությունները, որոնք լեզվաբանության մեջ սահմանվում են իբրև բառի կամ վանկի կազմում նրանց գրաված դիրքի, միմյանց վրա ազդելու, իրար նմանվելու (համաբանության՝ անալոգիայի), ընդհանրացման և հարակից այլ երևույթների հետ կապված տեղաշարժեր:

Հնչույթի համաժամանակյա ուսումնասիրումը, իբրև առանձին բաժին, նրա արտասանական (խոսքային) և հոգեբնախոսական-հաղորդակցական (լեզվական) բնութագրիչ կողմերի բացահայտումը և յուրացումն է, ուստի ունի երկու ենթաբաժին՝ հնչյունախոսություն և հնչույթաբանություն¹:

Մենք արդեն գիտենք, որ լեզվի հնչյունները մի կողմից՝ նյութական միավորներ են, իսկ մյուս կողմից՝ հանրայնորեն ճանաչելի, հաղորդակցական արժեք ստացած միավորներ, որոնց բաղադրությամբ սերվում են հասկացության անուններ (բառեր), լայն ըմբռնմամբ նշանակումներ (բառակապակցություններ, արտահայտություններ և այլն): Ուստի հնչյունները, իրենց հերթին, քննվում են երկու կողմից՝ ըստ բնախոսական-ֆիզիկական և ֆիզիկական-լսողական տվյալների: «Հնչյունական համակարգի այս երկու կողմերի ուսումնասիրությանը նվիրված բաժինը կոչվում է *հնչյունախոսություն*»²: Փաստորեն հնչյունները, ինչպես լեզվի մյուս միավորները (բառը, նախադասությունը և այլն), իբրև նյութական միավորներ, պայմանավորված են հաղորդակցմամբ, որը, ինչպես գիտենք, ենթադրում է երկկողմանի կապ՝ *ասող-լսող* կամ *գրող-կարդացող (ընթերցող)*: Ըստ այդմ՝ ամենից առաջ անհրաժեշտ է ծանոթանալ, ինչպես ընդունված է ասել, խոսելու գործարանին (կամ արտասանական ապարատին), որը հիմնականում կատարում է երեք կարգի գործողություն՝ կապված 1) ամենօրյա խոսքի դրսևորմանը վերաբերող *դեկավարող օրգանի* (ուղեղի՝

¹ Դասընթացում այդ երկուսը տրվում են առանձին-առանձին. առաջին թեման հնչույթի (հնչյունի) հնչյունախոսական կողմի ուսուցումն է:

² Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 197:

իր *Բրոկայի* և *Վերնիկեի կենտրոններով*. առաջինը, ինչպես վերն ասվել է, գտնվում է ուղեղի ձախ կիսագնդի երրորդ գալարում և կոչվում է խոսելու կենտրոն, իսկ երկրորդը՝ նախորդին հարակից մասում և կոչվում է հիշողության կենտրոն, 2) *կալարող օրգանի* (արտասանական ողջ ապարատը՝ թոքեր, կոկորդ, բերանի խոռոչ, լեզու, ատամնաշար, շուրթեր և այլն) և 3) *ընդունող օրգանի* (լսողական ողջ ապարատը՝ ականջ և այլն, տեսողական ապարատը՝ աչքեր և այլն, որոնք ուղեղի հետ կապված են կենտրոնաձիգ նյարդերով):

Հիշյալ օրգանների կազմախոսական (քիոլոգիական) նկարագրությունը մանրամասն տրվում է լեզուների ընդհանուր (տեսական) հնչյունաբանության վերաբերյալ աշխատություններում (հմմտ. Ի. Ա. Բոդունեն դը Կուրտենեն, Ն. Վ. Կրուշնսկի, Վ. Ա. Բոգորոդիցկի, Լ. Վ. Շչերբա, Լ. Ռ. Զինդեր, Գ. Ա. Ղափանցյան և ուրիշներ), որոնց կամընտրական՝ (ֆակուլտատիվ) ընթերցմամբ և յուրացմամբ կարելի է ունենալ լավագույն գիտելիքներ առհասարակ լեզվի հնչյունախոսական (արտասանական) ապարատի գործունեության վերաբերյալ:

2. Հնչյունախոսության հարցը ամենից առաջ բախվում է հնչյունի, այսպես կոչված, «ձայնաբանական» կողմին: Այս դեպքում բուն ուշադրության առարկան են *ձայնի* բնորոշումը կամ սահմանումը, ձայնի և աղմուկի փոխհարաբերության պարզաբանումը, ձայնի ուժգնությունը, բարձրությունը և տեմբրը (իմա՝ ձայնի երանգ, ենթաձայն, հնչերանգ): Այդ երևույթներն առաջ են գալիս թոքերից արտամղվող օդի հոսանքի տեղաշարժով, որ շնչափողից անցնում է բերանի խոռոչ (մասամբ նաև ռունգներ), վերջիններիս տարբեր մասերում տեղայնանում («երանգավորվում») են՝ հպվելով հատկապես բերանի խոռոչի առանձին մասերի (լեզու, կատիկ, ատամնաշար, ավելուներ, քիմք և այլն) հետ: Այստեղ մեծ դեր ունեն ձայնալարերը, այսինքն՝ օդի հոսանքի ուժգնությունից ձայնալարերը ուժեղ են տատանվում, որի հետևանքով առաջանում է ուժեղ ձայն, և հակառակը՝ օդի հոսանքի թույլ տատանումից առաջ է գալիս թույլ ձայն. ըստ այսմ ձայնի ուժեղ կամ թույլ լինելը, կարելի է ասել, ուղիղ համեմատական է օդի հոսանքի ուժգնությանը կամ թուլությանը:

Հնչյունների արտասանությունը տեղի է ունենում կոկորդում, բերանի խոռոչում, վերջիններիս որոշ օրգանների (մասերի) փակված-

քով կամ նեղվածքով, որոնցում առաջ են գալիս ձայների տարբերություններ՝ պայթյունով, շփումով կամ հպումով և այլն, որպիսով ձայնը ունենում է որոշակի չափ կամ ծավալ: Հետևանքը լինում է այն, որ հնչյուններն արտասանվում են կամ լարված, կամ ոչ-լարված («ազատ»): Ըստ այդմ, ընդունված է սահմանել, որ հնչյունների մյուս կարևոր բնութագրիչներն են *լարվածությունը* և *հնչեղությունը*:

Լարվածությունը առաջ է բերում հնչյունի արտասանության տարբերություն: Ըստ լարվածության հատկանիշի հնչյունները բաժանվում են մի քանի խմբի. օր.՝ խուլ (*p, t, k*, հայ.՝ *պ, տ, կ* և այլն) և շնչող խուլ (հայ.՝ *փ, թ, ք* և այլն), բաղաձայններն ավելի լարված են արտասանվում, քան ձայնեղները (*b, g, d*, հայ.՝ *բ, գ, դ, ձ* և այլն), ձայնորդները (*m, n, l*, հայ.՝ *մ, ն, լ* և այլն), և հակառակը՝ ավելի թույլ են արտասանվում ձայնավորները (*a, e, i*, հայ.՝ *ա, է, ի* և այլն) և այլն: Իսկ այն դեպքում, երբ բերանի խոռոչում ձայնի ալիքները չեն հանդիպում որևէ խոչընդոտի (արգելքի), այլ արտաբերվում են «մաքուր» ձևով, ստացվում են հնչեղ ձայներ (ձայնավոր հնչյուններ՝ ձայնավորներ և այլն): Այդ դեպքում ձայներն ունենում են *հնչեղություն*. վերջինս ձայնի լրիվ արտասանությունն է: Այսպիսով, հնչյունների *լարվածությունը* և *հնչեղությունը* արտասանական այնպիսի իրողություններ են, որոնք ամեն անգամ ապահովում են խոսքի նվազագույն տարրերի՝ հնչյունների ձևավորումը:

3. Հնչյունները, ի տարբերություն բառերի և այլ ավելի մեծ միավորների, նվազագույն միավորներ են, որոնք լեզվի հնչյունական մակարդակում կազմում են վանկ, ինչպես նաև ունենում են շեշտ և հնչերանգ: Վանկը, շեշտը և հնչերանգը վերաբերում են հնչյունի արտասանական ամբողջացմանը՝ խոսքի հնչադասության (ֆոնոտակտիկայի) մեջ, այլև ունեն ներքին տարբերություններ:

Վանկը հնչադասության այն հատվածն է, որն առավել հնչեղությամբ և նվազ լարվածությամբ տարբերվում է մյուս հատվածներից արտասանական թուլացմամբ կամ դադարով (հմմտ. *լասրան > լր-սա-րան, ուսանող > ու- սա- նող, դասագիրք > դա-սա-գիրք* և այլն): Ըստ կազմության, հնչաքանակի, դասավորության (հնչյունների փոխհաջորդություն) և այլ հատկանիշների՝ վանկերը բաժանվում են տար-

բեր տեսակների. հմնտ. *բաց /փակ, երկար / կարճ, վերջին / վերջընթեր / նախավերջընթեր, շեշտված / անշեշտ / շեշտահասցորդ* և այլն, որոնց մասնակի ուսուցումն ամեն մի լեզվի գործնական խնդիրներից է: Վանկերի բաժանման (վանկատման), ինչպես նաև ըստ անհրաժեշտության կից արտասանության (գծիկով գրության) նպատակով առանձին լեզուներում սահմանվում են իրենց հատուկ (օր.՝ տողադարձի) կանոններ:

Շեշտը արտասանական երևույթ է, որով խոսքի տվյալ միավորը (վանկ, բառ, բառակապակցություն և այլն) ունենում է ձայնի տարբեր ուժգնություն և բարձրություն. ըստ այդմ լեզուներում առանձնացվում է շեշտի մի քանի տեսակ՝ ուժգնության (դինամիկ) շեշտ, երաժշտական (տոնիկ) շեշտ և այլն: Այն վանկի կամ մյուս միավորների վրա դրվում է կամ կայուն, կամ փոփոխական ձևով. հայերենում, օրինակ, շեշտը երկբնույթ է՝ կայուն շարժական, այսինքն՝ կայուն է, որ դրվում է շեշտակիր միավորի վերջին վանկի վրա, շարժական է, որ տեղափոխվում է վերջին վանկ. հմնտ. *դասն - դասարան - դասարանական. քաղսք - քաղաքացի - քաղաքացիական - քաղաքացիականություն* և այլն:

Հնչերանգը (ինտոնացիան) հնչյունի այն արտասանությունն է, որ խոսքին հաղորդում է ռիթմամեղեդիական երանգավորում՝ շնորհիվ ձայնի այս կամ այն կարգի բարձրության, ուժգնության, շեշտվածության, դադարի և այլն: Լեզուներում տարբերում են բառի, նախադասության և այլ կարգի միավորների հնչերանգ (ինտոնացիա): Հնդեվրոպական լեզուներում նախադասության տեսակներն բաժանվում են ամենից առաջ ըստ հնչերանգի (ինտոնացիայի)՝ պատմողական, բացականչական, հարցական, հրամայական և այլն: Տարբերում են նաև հնչյունների հնչերանգավորում (մեղեդիականություն), խոսքի կամ ասույթի հնչերանգավորում և այլն:

Հայերենում, ի տարբերություն շատ լեզուների, գրավոր խոսքում հնչերանգի ցուցիչները (նշանները՝ հարցական, բացականչական և այլն) դրվում են բաղադրիչ միավորների (բառերի) վրա. հմնտ. «Միթե վերջին պոետն եմ ես, // Վերջին երգիչն իմ երկրի...» (Վ. Տերյան):

«Ո՛ր կորան... / մոտիկներըս ո՛ր կորան»: «Արի՛, գութան, վարի՛, գութան, / Օրն եկել է, ճաշ դառել»: Լինէր հեռու մի անկյուն, / Լինէր մանկան արդար քուն» (Թումանյան) և այլն:

4. Հնչյունական շղթան (հնչաշղթան կամ հնչյունական շարքը) խոսքի բաղադրիչ հնչյունների ամբողջությունն է, որն արտաբերվող օդի հոսանքի մեջ նկատվող դադարների արդյունք է: Նման ամբողջությունը առաջանում է խոսքի գործընթացում արտաշնչման պայմաններում, երբ իրար հաջորդող հնչյունները արտասանության մեջ հատվածաբար ավելի են մոտենում իրար կամ հեռանում իրարից: Հնչաշղթա են կազմում խոսքում շեշտված առանձին հատվածներ, վանկերի խմբեր և այլն¹:

5. Այս ամենից հետո մնում է անդրադառնալ հնչյունների դասակարգմանը, որը հենվում է հնչախոսական բնութագրերի վրա: Հնչյունների դասակարգման փորձերը բավականին հին են, կարելի է ասել այն նկատվում է լեզվի վերաբերյալ գիտելիքների սկզբնավորումից ի վեր. ամենից առաջ տարբերվում են ձայնավորներ և բաղաձայններ, հնչյուններ, որոնք, իբրև լիաձայն հնչյուններ, իրենց արտասանական բնութագրերով բոլորովին տարբեր են: Կան նաև, այսպես կոչված, կիսաձայն հնչյուններ, որոնք էլ կոչվում են երկբարբառներ կամ երկհնչյուններ:

Աշխարհի լեզուների, հատկապես հնդեվրոպական լեզուների հնչյունական համակարգը դասակարգվում է բավականին ընդհանուր և իրար շատ նման ձևով, որովհետև այն ամենից առաջ հենվում է հին հունական և մյուս քերականությունների երկարատև ավանդույթի վրա: Հայրենում ևս այն կատարվում է ըստ հունական քերականական ավանդույթի: Ըստովում են հնչյունական այնպիսի հատկանիշներ, որոնց հիման վրա հնչյունական հակադրությունները հանգեցվում են նվազագույնի, և արդյունքում ստացվում են երկանդամ (հայերենում՝ նաև եռանդամ. հմմտ. *բ, ս, փ, դ, յ, թ, գ, կ, ը* և այլն) հակադրությամբ միավորներ՝ ձայնավոր / բաղաձայն, պայթական / շփական, ձայնեղ / խուլ, շնչեղ / ոչ-շնչեղ և այլն:

¹ Տե՛ս Ռ. Մ. Թոխանյան, Հայերենի հնչաշղթան, Ե., 2009:

Ինչպես արդեն գիտենք, լեզվաբանությունը զբաղվում է բոլոր լեզուների ընդհանուր տեսական հարցերով: Տվյալ դեպքում նրա ուշադրության առարկան են տեսական հնչյունախոսական երևույթները՝ ի տարբերություն առանձին լեզուների, որոնց դեպքում նկարագրվում են այդ երևույթներով պայմանավորված առանձին փաստերը: Այսպես, չի կարելի հայոց լեզվի նկարագրական հնչյունախոսությանը (կամ հնչյունաբանությանն առհասարակ) անդրադառնալ որպես լեզվաբանական ուսումնասիրություն, տվյալ դեպքում հնչյունախոսական իրողություն, այն կարող է օգնել ընդհանուր տեսական հարցերի պարզաբանմանը, և հակառակը՝ տեսական հիմնահարցերը ի սպաս են դրվում առանձին լեզուների (հայերենի և այլն) համապատասխան երևույթների բնութագրմանը:

Լեզվաբանության հիմունքների մեջ է մտնում լեզվի հնչյունական այնպիսի բաղադրիչների քննությունը, ինչպիսին են ձայնավորները, բաղաձայնները, նրանց ընդհանուր դասակարգումը և այլն, սակայն դրանք տվյալ դեպքում քննվում են իբրև տեսական գիտելիքների իմացական (հաղորդակցական) ոլորտ:

Նկատենք, որ նորագույն շրջանում, հատկապես 1960-ական թթ. հետո կատարվել են աշխարհի լեզուների հնչյունական համակարգերի այնպիսի (տեսական, փորձառական և այլն) վերլուծություններ, որոնց ձեռքբերումների հիման վրա մի կողմից՝ առաջ է քաշվել և լայն կիրառություն գտել հնչյունների տարբերակիչ հատկանիշների գաղափարը, մյուս կողմից՝ դրանց պատմական զարգացման ընթացքում առաջացած հնչյունական արժեքի գաղափարը (Ն. Ս. Տրուբեցկոյ և ուրիշներ): Այդ նվաճումները լավագույնս ներդրված են լեզուների ընդհանուր բնութագրման մեջ, այլև համեմատական և տիպաբանական քննությանը վերաբերող աշխատանքներում: Արդի լեզվաբանությունը հենվում է այդ նվաճումների վրա, և ըստ այդմ կատարվում է լեզուների ընդհանուր տեսական վերլուծություն՝ առհասարակ, այլև բուհական և մասնագիտական կրթության մեջ:

Ընդհանուր լեզվաբանական հայացքով գրական հայերենի ձայնավորների արտասանությունը բաշխվում է երկու հատկանիշով՝

ըստ բարձրացման և ըստ լեզվի մասերի նկատմամբ շարքի: Ստացվում է հետևյալ հարաբերակցությունը. վերին բարձրացման առաջին շարք՝ *ի*, հետին շարք՝ *ու*, միջին բարձրացման առաջին շարք՝ *ե* (կամ *է*), միջին շարք՝ *ը*, հետին շարք՝ *ո* (կամ *օ*), ստորին բարձրացման հետին շարք՝ *ա*: Իսկ բաղաձայնները հայերենում դասակարգվում են ըստ երկուսից ավելի հատկանիշների՝ նկատի ունենալով նրանց արտասանության տեղը, ձայնի և աղմուկի մասնակցության չափը, բնույթը և այլն. դրանք ներկայացնում են մի քանի խումբ՝ երեք աստիճան (*բ/պ/փ*, *դ/տ/թ*, *գ/կ/ք*. *ձ/ծ/ց*, *ջ/ճ/ջ*), երկու աստիճան (*զ/ւ*, *ժ/շ*, *խ/հ*) և մեկ աստիճան (կրկնական) [*լ(ղ)*, *մ(ն)*, *ւ(յ)*, *ո(ր)*] հարաբերակցություն. ստորև բերում ենք դրանք ըստ Հ. Աճառյանի խմբավորման (մեկ-երկու տերմինի նորացմամբ)¹. 1) ըստ արտասանության տեղի. շրթնային՝ *բ*, *վ*, *պ*, *փ*, ատամնային՝ *դ*, *տ*, *թ*, կատկային՝ *գ*, *կ*, *ք*, կոկորդային՝ *խ*, *հ*, կողմնական՝ *լ*, *ղ*, ռնգային՝ *մ*, *ն*. 2) ըստ ձայնի և աղմուկի մասնակցության չափի. ձայնեղ՝ *բ*, *վ*, *գ*, *դ*, *ձ*, *ջ*, *գ*, *ժ*, խուլ՝ *պ*, *տ*, *կ*, *ծ*, *ճ*, *ւ*, *շ*, *խ*, շնչեղ խուլ՝ *փ*, *թ*, *ք*, *ց*, *ջ*, *հ*. 3) ըստ արտասանության բնույթի. կիսաշփական (հպաշփական) բաղաձայններ, ընդ որում խճաշփական («ծեքական»)՝ *ձ*, *ծ*, *ց*, ճշաշփական («ճական»)՝ *ջ*, *ճ*, *ջ*, սուլական՝ *գ*, *ւ*, շչական՝ *ժ*, *շ*, թրթռուն («*ցնցուն*»)՝ *ո* (*ր*), այլև կիսաձայն՝ *ւ*, *յ*:

Հնչյունաբանական առումով ինքնուրույն երևույթ են երկբարբառները կամ երկհնչյունները, որոնք լեզուներում հանդես են գալիս ոչ միայն տարբեր հնչարտաբերական և հնչակազմական հատկանիշներով, այլև քանակապես տարբերվում են լեզուներում: Հայերենում, օրինակ, դրանք, ըստ Աճառյանի՝ կիսաձայններ (իմա՝ «կիսահնչյուններ») են, որ ունենում են ո՛չ ձայնավորի և ո՛չ էլ բաղաձայնի արտաբերման չափ արտասանական փակվածք. «այդպիսի դրության մեջ արտաբերված ձայնը դառնում է *կիսաձայն*»² (հմմտ. հայ. *այ* [այ], *եսս* [յա], *խ* [յու], *ոյ* [ույ], *աւ* [աու (օ)], *ուե* [վե], *ուի* [վի] և այլն): Երկբարբառ անվանումը հայ լեզվաբանության մեջ, սովորաբար, գործածվում է հին հայերենի (գրաբարի), իսկ երկհնչյուն անվանումը՝ նոր գրական հայերենի նման հնչակապակցությունների համար:

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 224:

² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 139:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 197-234 :

Լրացուցիչ գրականություն:

Աճառյան Հ. Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, էջ 9-53:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 42-78:

Ջահուկյան Գ. Բ., Ընդհանուր և հայ հնչյունաբանության մի քանի հարցեր // «Լրարեր հասարակական գիտությունների», 1984, 9, էջ 3-16, էջ 51-52:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 25-32:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 33-44:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 157-169:

Трубецкой Н. С., Основы фонологии, М., 1960, էջ 7-22:

Широков О. С., Введение в языкознание, М., 1985, էջ 4-18:

Թեմա 2. Հնչույթաբանություն

Հիմնահարցեր: Հնչյուն և հնչույթ. հնչույթի բնորոշումը, հնչույթի ըմբռնումը: Հնչույթաբանական վերլուծություն: Հնչույթի փարբերակիչ հատկանիշներ. հիմնական հատկանիշներ և լրացական հատկանիշներ: Հնչույթի ծագումը և զարգացումը: Արտասանական հիմք (բազա):

1. Սույն թեմայի հիմնահարցերը թեև համեմատաբար քիչ են, սակայն դրանց վերաբերյալ վերլուծությունը նույնիսկ ուսումնական ձեռնարկներում զբաղեցնում է բավականին լայն շարադրանք: Այնուամենայնիվ, բուհական կրթությանը հատկացվող ծավալի սահմաններում անդրադառնալու ենք հնչույթաբանությանը վերաբերող կարևորագույն բաղադրիչներին, վերջիններիս վերլուծության սկզբունքներին, եղած տեսություններին և այլն:

Նախորդ թեմայի առնչությամբ արդեն տեղեկացանք, թե ինչ է հնչյունի արտասանությունը, ինչպիսի հատկանիշներով է այն բնութագրվում և այլն: Դրանք վերաբերում են լեզվի նվազագույն միավորների՝ հնչյունների *հնչյունախոսական* («հնչական») կողմին, որից հետո հնարավոր է խոսել դրանց *հնչույթաբանական* («հնչույթային») կողմի մասին: Այս դեպքում ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր հնչյուն հնչյունական շղթայի մեջ (վանկի կամ բառի կազմում) հանդես է գալիս ոչ միևնույն արտասանությամբ, որովհետև տվյալ հնչյունին «հարևան» մեկ այլ հնչյունի ազդեցությամբ այն կարող է փոփոխվել, այսինքն՝ արտասանվել *փափուկ* կամ *կոշտ*, *քիմքի հպումով* կամ *շրթնայնացմամբ* և այլն. օր.՝ հայ. *կիր*, *կարու*, *կեր*, *կյանք* բառերում իրարից բավականին տարբեր է նույն *կ* խոլ բաղաձայնի արտասանությունը. *կիր* և *կեր* բառերում այն փափուկ է, *կյանք* բառում՝ քմային, իսկ *կարու* բառում՝ կոշտ, սակայն դա չի խանգարում ընկալելու, որ բոլոր դեպքերում ունենանք նույն *կ* բաղաձայնը: Է. Բ. Աղայանը բերում է դիպուկ օրինակները. «բաղաձայնների քմայնացումը ռուսերենում այնպիսի նշանակություն և դեր է ստացել, որ իրարից բոլորովին տարբեր հնչյուններ են, օրինակ՝ *шест* «ձող» և *шесть* «վեց» բառերի *т*-երը (առաջինը՝ կոշտ, երկրորդը՝ փափուկ), դրան հակառակ, հայերեն *ռ* և *ր* տարբեր հնչյունները միատեսակ միավոր-

ներ են ոռուերենում. революция («հեղափոխություն» - Վ. Հ.) և апрель «ապրիլ» բառերի *p*-ները համարժեք են, իսկ հայերենում՝ ոչ (առաջինում՝ *n*, երկրորդում՝ *p*) »¹:

2. Հնչյունի և հնչույթի հարաբերակցության առումով ուշագրավ է *հնչուրդի* ըմբռնումը, որին հայ լեզվաբանության մեջ անդրադարձել է Է. Բ. Աղայանը իր բուհական ձեռնարկում: Խոսելով նույն հնչյունի *դիրքային տարբերությունների* մասին՝ նա գտնում է, որ *յուրաքանչյուր տարբերություն*, այնուամենայնիվ, հասկացվում և ընդունվում է իբրև մեկ հնչյունի կոնկրետ դրսևորում, որն էլ կոչվում է *հնչուրդ*: Ըստ այդմ, եթե Սոսյուրի և Բոդուեն դը Կուրտենեի տեսության համաձայն տարբերվում են *հնչյունը* և *հնչույթը*՝ ըստ *խոսք* և *լեզու* տարբերակման, ապա Է. Բ. Աղայանի տեսության համաձայն խոսքային միավոր հանդիսացող հնչյունի *դիրքային* (վանկի կամ բառի հնչյունական շղթայի մեջ ունեցած դիրքի) տարբերությունը դիտում է իբրև մեկ *հնչուրդ*. այն «կենդանի խոսքում արտասանված յուրաքանչյուր հնչյունի իրական դրսևորումն է»²: Եվ հեղինակը հնչուրդը բացատրում է նաև հետևյալ ձևակերպմամբ. «որևէ հնչյունի յուրաքանչյուր արտասանական տարբերակը հնչուրդ է»³: Ըստ այդմ՝ հնչուրդը, իբրև արտասանական տարբերակ, թերևս, մոտ է հնչյունին՝ ի հակադրություն հնչույթի, եթե այն դիտում ենք լեզու-խոսք հակադրության դիտակետով (պրիզմայով): Սակայն դա այդպես չէ, քանի որ, կարելի է ասել, թե հնչուրդը հավակնություն ունի (ձգտում է) վերածվելու հնչյունի՝ միշտ մնալով հավանականի մեջ, այնինչ հնչյունը իրական, խոսքային՝ ինքնուրույն միավոր է:

Ուստի հնչյունաբանության մեջ տարբեր միավորներ են ոչ միայն *հնչյունը* և *հնչույթը*, այլև *հնչուրդը*. «Թեև հնչուրդները, որպես հնչյունի իրացումներ, տարբերվում են միմյանցից իրենց մասնակի առանձնահատկություններով, բայց նույնանում են իրենց էական հատկանիշներով»⁴: Օրինակ՝ *կարու*, *կոպար* և այլն բառերի մեջ *կ*-ի կոչտ, *կիրճ*, *ընկեր* և այլն բառերի մեջ՝ փափուկ, *կյանք* բառի մեջ քմային արտա-

¹ Նույն տեղում, էջ 236:

² Նույն տեղում, էջ 237:

³ Նույն տեղում, էջ 238:

⁴ Նույն տեղում, էջ 237:

սանությունը ամեն դեպքում մասնակի յուրահատկություն է, սակայն «նույնանում են» իրենց էական, այսինքն՝ պայթական հետնալեզվային խուլ բաղաձայն լինելու հատկանիշով:

Հնչույթի բնորոշումը տվել են ռուս լեզվաբանները («Կազանի դպրոց»): Ի. Ա. Բոդունեն դը Կուրտենեն և աշակերտները: Հնչույթը (ֆոնեմա. ֆրանս. phoneme) սահմանել է Ն. Ս. Տրուբեցկոյը՝ ելնելով ամենից առաջ սոսյորյան լեզու-խոսք հակադրությունից, այլև նրա ֆիզիկական-հոգեբանական երևույթ լինելուց: Լեզվաբանության մեջ մտցնելով *հնչուրդի* գաղափարը՝ Է. Բ. Ադայանը լրացնում է, իր խոսքով ասած, այն «բացը», որ մնացել էր այն տեսություններից հետո, որ «հնչույթը համարում են լեզվի կառուցվածքի վերացական միավոր, իսկ հնչյունը՝ խոսքի մեջ արտասանվող նյութական միավոր»¹: Առաջին հայացքից նկատելի է, որ հնչյունը կոնկրետ է, իրական և շոշափելի, ֆիզիկական (արտասանական-ընկալողական) երևույթ է, իսկ հնչույթը՝ հոգեբանական, դրանով իսկ՝ վերացական. առկա է *իրականի* և *վերացականի* փոխհարաբերություն: Եթե փորձենք հասկանալ Է. Բ. Ադայանի այն բնորոշումը, որ տրվում է *հնչուրդին*, ապա կարելի է ասել, որ *հնչյունի* և *հնչույթի* հակադրությամբ *հնչուրդը* առանձնակի միավոր է: Այստեղ ևս իրականը, վերացականը և առանձնակին մարդկային ճանաչողության շեմեր են, ուստի ընկած են ցանկացած գիտելիքի սահմանման հիմքում:

3. Բավականին բազմապլան, բայց ոչ անհասկանալի կամ խորթին ոլորտ է հնչույթաբանական վերլուծությունը: Քանի որ այն ավանդաբար դիտվում է միայն իբրև արտահայտության պլանի երևույթ, ուստի այդ վերլուծությունը կատարվում է միայն հնչյունների կազմության, միմյանց նկատմամբ ունեցած հակադրության, բառի մեջ իմաստագատիչ դեր ունենալու նկատառումով: Հնչույթները միմյանց նկատմամբ գտնվում են հակադարձ (հակադրելի) հարաբերության մեջ, որովհետև դրանց արտասանությունը տեղի է ունենում ոչ միատեսակ, երբեմն՝ աղմուկով, երբեմն պայթյունով, երբեմն՝ շփումով և այլն: Այսպես, աղմկային բաղաձայնները հակադրվում են «մաքուր» ձայնավորներին (հմմտ. *բ, պ, փ* և *ս, ն, ու* և այլն), ձայնավորներն,

¹Նույն տեղում, էջ 239:

իրենց հերթին, միմյանց հակադրվում են ըստ դիրքի և բարձրության (հմմտ. *ս* և *ու*, *ի* և այլն), ըստ տևականության կամ կարճության (հմմտ. *ս*, *օ*, *ու* և *ե*, *ի* և այլն):

Այնուհետև, բաղաձայնները իրար հետ կազմում են հակադրելի գույգեր (ըստ անմիջական՝ իրար մոտ բաղադրիչների առնչության), ընդ որում՝ անմիջական և միջնորդավորված (սովորաբար՝ երկանդամ, հայերենում՝ նաև եռանդամ) ձևով: Երկանդամ հակադրությունը անմիջական, իսկ եռանդամ հակադրությունը՝ միջնորդավորված հակադրություն է. օր.՝ *ժ/շ* հակադրությունը երկանդամ անմիջական հակադրություն է, իսկ *բ*, *ս*, *փ* հակադրության միջնորդ է հանդիսանում *ս/ն* և այլն: Հակադրելի եզրերը կազմում են գույգեր այս կամ այն հատկանիշով. մեկ այլ օրինակ՝ *զ* և *ս* հնչյունների միջև գոյություն ունի երկանդամ հակադրություն՝ ձայնեղություն/խլություն հատկանիշով, իսկ *բ*, *ս*, *փ* հնչյունների միջև՝ եռանդամ հակադրություն, ընդ որում երկու, մի կողմից՝ ձայնեղություն / խլություն (*բ / ս, փ*), մյուս կողմից՝ շնչեղություն/ոչ շնչեղություն (*ս/փ*) հատկանիշով և այլն: Հնչյունների հակադրությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ տարբերակիչ հատկանիշների դրսևորում՝ իբրև ֆիզիկական-կազմախոսական (ֆիզիոլոգիական) առնչությունների քննության մի յուրօրինակ ոլորտ:

4. Հնչյոթի տարբերակիչ հատկանիշները երկու կարգի են՝ հիմնական (բուն) և լրացական: Հնչյունի տարբերակիչ հատկանիշը նրա բնորոշման, իրական արժևորման միջոցն է: Հնչյունն ունի ոչ միայն տարբերակիչ, այլև ընդհանուր (ընդհանրացնող) հատկանիշներ, տարբերակիչ հատկանիշը, կարելի է ասել, մեկն է, իսկ ընդհանուրը՝ մի քանիսը. օր.՝ հայ. *բ* և *ս* հնչյունների համար ընդհանուր հատկանիշ են ամենից առաջ *բաղաձայնությունը*, *շրթնայնությունը*, *սայթականությունը* և այլն: Սակայն դրանք ունեն նաև *ձայնեղություն/խլություն* հատկանիշը, որն այս դեպքում նրանց միակ հակադրելի միջոցն է, այսինքն՝ տարբերակիչ հատկանիշը: Այսպիսով, հնչյունի տարբերակիչ հատկանիշը նրա էական հատկանիշն է, իսկ մյուս՝ ոչ տարբերակիչ հատկանիշները լրացուցիչ կամ կողմնակի հատկանիշներ են, որոնք ևս կարևոր են դրանց ֆիզիկական-կազմախոսական (ֆիզիոլոգիական) առնչությունների բնութագրման համար:

Հնչույթաբանական վերլուծությունը նպատակ ունի վեր հանելու լեզուների հնչույթների միջև եղած տարբերությունները, որոնք հիմք են հանդիսանում նրանց իմաստային տարբերակման:

Այսպես, հայերեն *դեր* և *տեր* բառերը միմյանցից տարբերվում են *դ/տ*, այսինքն՝ *ձայնեղ/խուլ* հակադրությամբ, և ըստ այդմ էլ, օրինակ, ունենք երկու բառ՝ *դեր* «վիճակ, հանդես գալու ձև» և *տեր* «մի բանի նկատմամբ իրավունք ունեցող»: Այս և նման հակադրությունները (*ձեր* «դերանուն» և *ծեր* «տարեց», *գարի* «հացահատիկ», *կարի* «բայական ձև» և *քարի* «գոյականի թեք ձևը», *ջին* «խմիչք» և *չին* «ազգություն» և այլն) իմաստային հակադրելիներ են՝ հիմնված գուգադիր եզրերից յուրաքանչյուրի էական հատկանիշի տարբերության վրա, մեկը ձայնեղ է, իսկ մյուսը՝ խուլ (շնչեղ խուլ), ուստի մի կողմից՝ *ձայնեղություն/ խլություն*, մյուս կողմից՝ *ձայնեղություն / շնչեղ խլություն* հակադրությունը դրանց տարբերակիչ հատկանիշն է, որն ունենում է իմաստագատիչ դեր, հնարավորություն է ստեղծում կազմելու երկու առանձին բառ՝ *դեր* և *տեր* և այլն:

Այնուհետև, եթե մեծացնում ենք հակադրելի եզրերը, ապա տարբերակման թիվը մեծանում է. *դեր*, *տեր* և *թեր* հակադրության մեջ ունենք մեկական հակադրելի միավորներ՝ *դ/տ/թ*, իսկ *բառ*, *պատր* և *փաթ* «պտույտ» բառերում կունենանք *դ/տ/թ*, այլև *բ/պ/փ* հակադրություն (մի դեպքում՝ առաջնալեզվային *ձայնեղ*, *խուլ* և *շնչեղ խուլ*, մյուս դեպքում՝ *շրթնային ձայնեղ*, *խուլ* և *շնչեղ խուլ*): Երկրորդ եռյակում միանգամից երկու հակադրություն՝ *բ/պ/փ* (շրթնային՝ *ձայնեղ*, *խուլ* և *շնչեղ խուլ*) և *դ/տ/թ* (առաջնալեզվային՝ *ձայնեղ*, *խուլ* և *շնչեղ խուլ*), որոնցով ունենում ենք միանգամայն տարբեր բառեր՝ *բառ* «մի տեսակ թռչուն», *պատր* «ամրություն. շարվածք» և *փաթ* «պտույտ»:

Լեզուների հնչույթային համակարգերն այդպիսին են ամենից առաջ իրենց էական հատկանիշների հակադրելի տարբերության հիմքով: Հայերենը աշխարհի այն լեզուներից է, որ պայթական բաղաձայնների ենթահամակարգում, ինչպես արդեն նշել ենք, ունի եռանդամ (*բ*, *պ*, *փ* // *գ*, *կ*, *ք* և այլն) հակադրելի միավորներ՝ ի տարբերություն այլ լեզուների երկանդամ (*b*, *p* // *g*, *k* և այլն) ենթահամակարգ ունեցողների:

Ուստի կարելի է սահմանել, որ լեզվի հնչյութաբանական վերլուծությունը հիմնված է նրանց էական հատկանիշների տարբերակման վրա: Հնչյութները լեզուներում առանձին են, ամեն մի լեզվի դեպքում՝ առանձնահատուկ, իսկ առհասարակ լեզուների համար՝ ընդհանուր: Ըստ այս տեսության՝ աշխարհի լեզուների հնչյունական համակարգերի նկատառումով առաջադրված են մեկուկես տասնյակից ավելի նման հատկանիշներ. բաղաձայնություն / ձայնավորություն, ձայնեղություն / խլություն, պայթականություն / ոչ-պայթականություն, շնչեղություն / ոչ-շնչեղություն, երկարություն / կարճություն, տոնայնություն / ոչ-տոնայնություն, թավություն / նոսրություն և այլն: Դրանք առանձին լեզուներում հանդես են գալիս ոչ ամբողջովին, այլ տարբեր չափերով, այլև կոնկրետ այս կամ այն դրսևորմամբ:

5. Առանձին ուշադրության առարկա է նաև հնչյութի ծագման և զարգացման հարցը: Նախորդ թեմաների ուսուցմամբ և յուրացմամբ մենք արդեն ունենք որոշակի գիտելիքներ լեզուների հնչյութների հասարակական դերի և հաղորդակցական նշանակության վերաբերյալ, մնում է անդրադառնալ դրանց պատմական կողմին՝ ծագման և զարգացման հարցին:

Մարդկային լեզուն տարբերվում է կենդանական աշխարհի մյուս միավորների «լեզուներից» նրանով, որ այն, ինչպես վերն արդեն նշել ենք, նախ՝ հողավորված (հողաբաշխ) է, երկրորդ՝ մարդը տարբերում է իր արտասանած հնչյունները՝ առանձին-առանձին, այնինչ մյուսները կարողանում են սոսկ ձայներ (ճիչ, ծղրտոց, ծվծվոց և այլն) արտաբերել: Հողաբաշխ ձայնը մարդկային տեսակի յուրահատկություն է, որ առաջացել է նրա՝ մյուս կենդանիներից տարբերվելու ընթացքում: Իսկ դա պատմական երկարատև գործընթացի արդյունք է, և քանի որ լեզուն սերտորեն կապված է մտածողության հետ, նույնն է, ինչ մտածողությունը (միտքը), ուստի մարդու արտասանական ապարատի զարգացումը ուղիղ համեմատական է նրա ուղեղի զարգացման հետ: Լեզվի ֆիզիկական-կազմախոսական (ֆիզիոլոգիական) յուրահատկության ձևավորման և զարգացման ընթացքը, ըստ այսմ, պատմական իրողություն է: Այն տեղի է ունեցել ոչ միանգամից, այլ տևական ժամանակի մեջ. մարդկության պատմությունը, կարելի է ասել,

լեզվի ծագման և զարգացման պատմություն է: Դա միանգամայն հասկանալի է, եթե փորձենք համեմատության մեջ դնել նախնական ժամանակների մարդու (հանրության՝ տոհմի, ցեղի և այլն) լեզուն ավելի հետագա ժամանակների մարդու լեզվի (տվյալ դեպքում՝ հնչյունական համակարգի) հետ: Տարբերությունը ակնհայտ է, որովհետև իրականությունը, մարդկային քաղաքակրթությունը գնացել են վերընթաց ճանապարհով, և դա պատմական իրողություն է: Լեզուն ծագել է համակեցության պայմաններում, առաջ է եկել, թերևս բնական վիճակից, հանրային (համատեղ) կյանքի բերումով, որպիսով և զարգացել է նրա հոդաբաշխական հնարավորությունը (ապարատը): Այս իմաստով կարելի է ասել, թե լեզուն հին է այնքան, որքան հին է մարդկությունը. լեզուն իրական տարբերություն է մարդու և կենդանի մյուս արարածների միջև՝ ամենից առաջ իր հնչյունական կողմով:

6. Լեզուները բնորոշվում են նաև իրենց արտասանական հիմքով (բազայով): Իսկ ընդհանուր առմամբ հայերենի, ինչպես ամեն մի լեզվի հնչյունական-արտասանական բազան ևս առաջացել է պատմականորեն, այն կրող հանրության տևական առաջընթացի պայմաններում, ըստ որում՝ ոչ միայն լեզվական կառուցվածքի, այլև լեզվի հասարակական հաղորդակցական յուրահատկությունների միջոցով: Վերջիններս մշտապես փոխադարձ կապի մեջ են եղել և շարունակում են մնալ այդպիսին: Դա այդպես է ոչ միայն հայերենի, այլև առհասարակ բոլոր լեզուների դեպքում: Լեզվի արտասանական բազան մտքի արտահայտիչ խոսքի հնչարտաբերման ունակությունների ամբողջությունն է, որ պատմական երևույթ է:

Հիմնական գրականություն:

Միսյան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 235-264:

Լրացուցիչ գրականություն:

Ղափանցյան Գ. Ս., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 42-78:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 32-27:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 44-58:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 169-196:

Трубецкой Н. С., Основы фонологии, М., 1960, էջ 36-52:

Широков О. С., Введение в языкознание, М., 1985, էջ 4-18:

Якобсон Р., Фант Г. М., Халле М., Введение в анализ речи: Различительные признаки // "Новое в лингвистике", вып. II, М., 1962, էջ 170-230:

Թեմա 3. Հնչյունական համակարգ. համաժամանակություն

Հիմնահարցեր: Հնչյունական համակարգի բնորոշումն ըստ ժամանակային գործոնի. ժամանակի երկակիությունը (անցյալ և ներկա): Համաժամանակությունը հնչյունական համակարգում. առաջադրումը և ընդհանուր բնութագիրը: Հնչյունական համակարգի մեջ մոտեցումների (սկզբունքների) հասարարման հարցը: Հնչյունական միավորների և հնչյունական կանոնների հարցը:

1. Հնչյունը խոսքի նվազագույն միավոր է, որն ընդունված է դիտել իբրև միապլան (միայն արտահայտության պլան՝ ձև ունեցող) միավոր: Դա այդպես է համարվում, որովհետև, ի տարբերություն, օրինակ, բառի, այն չունի առարկայական վերաբերություն (բառը, որ հանդես է գալիս իբրև առարկայի վերաբերյալ հասկացության անվանում): Սակայն պետք է նկատի ունենալ, որ հնչյունը ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների ամբողջություն է, որն էական է նման միավորների դասակարգման համար. հմմտ. հայ. *բ* և *պ* հնչյունների տարբերակայնությունը (տե՛ս վերը): Նման դիտարկման հիմք են հանդիսանում ոչ միայն հնչյունի որակական կողմը, այլև նրա գործառությունը (ֆունկցիան) որոշակի ժամանակի մեջ, որքանով որ լեզուն, իբրև հաղորդակցման բազմապլան երևույթ, գործում է տվյալ ժամանակի (նաև տարածքի և այլն) հարաբերությամբ:

Լեզուների հնչյունական համակարգը պարունակում է և՛ հին, և՛ նոր երևույթներ, որոնք հարաբերակցորեն գոյակցում են հաղորդակցական ամեն մի փուլի մեջ: Հին երևույթները լեզվի տվյալ փուլում, այսպես ասած, հնարանություն են, մնում են մեկուսի՝ համակարգի նոր երևույթների համեմատությամբ:

Դա նկատելի է ինչպես բառապաշարի, քերականական կառուցվածքի մեջ, այնպես էլ հնչյունական համակարգում: Հայերենում, օրինակ, գոյականի ներքին *ա* (նաև *ան*) հոլովումը հին է, գալիս է գրաբարի շրջանից. հմմտ. *տուն* – *տան*, *ամառ* – *ամռան* (< **ամառոն* – *ամառան*) և այլն, որոնք նոր գրական հայերենում, որում գերակայում է *ի* հոլովումը (հմմտ. *կոնֆետ* – *կոնֆետի*, *ֆուտբոլ* – *ֆուտբոլի* և այլն),

մնում են որպես մասնակի, հնից եկող երևույթ: Հնչյունական համակարգում, թեև սակավ, ևս նկատելի են նման երևույթներ. օր. հայ. *արձագանգ* «օղի հոսանքի՝ այլ առարկայի բախման հետևանքով առաջացած ձայն» բառը, որ կար գրաբարում այդ ձևով, հետագայում ըմբռնվեց հոգնակիի իմաստով և սկսեց գործածվել *p*-ով՝ *արձագանք*, իսկ *q*-ով ձևը մնաց իբրև հնաբանություն: Այդպես նաև *կնիք* բառի դեպքում, որ փոխառություն է ակկադերենից (< *kunukku(m)* «դրոշմ, հետք»), այն հայերենում պիտի լիներ *կ*-ով կամ *q*-ով (հմմտ. ռուս. *книга* «գիրք»), սակայն գրաբարում արդեն ըմբռնվել է հոգնակիի իմաստով և գրվել *p*-ով՝ նոր ձևով: Ստացվում է այնպես, որ բառի կազմում այս կամ այն հնչյունի այդպիսին լինելը միայն տվյալ ժամանակին է վերաբերում՝ կտրված նրա պատմությունից, որն այլ խնդիր է:

Ուստի ըստ ժամանակի գործոնի հնչյունական համակարգը քննվում է երկու մոտեցումով՝ ժամանակի նույն հատվածի մեջ (համաժամանակություն. սինխրոնիա) և տարբեր հատվածների նկատառումով (տարաժամանակություն. դիսխրոնիա). առաջինը հնչյունների, իբրև համակարգի բաղադրիչների, ժամանակի նույն կտրվածքում քննությունն է, իսկ մյուսն անդրադառնում է լեզվի պատմության տարբեր փուլերի մեջ տեղի ունեցած փոփոխություններին: Համաժամանակությունը (միաժամանակությունը) լեզվի տվյալ վիճակին է վերաբերում՝ որպես այդպիսին, իսկ տարաժամանակությունը՝ նրա տարբեր վիճակներին, իրենց պատմության մեջ: Նման առանձնացումը ևս գալիս է Ֆ. դը Մոսյուրի տեսությունից՝ հիմնված ամենից առաջ լեզուխոսք հակադրության վրա, դրանից բխող մյուս բոլոր տարբերակումներով:

2. Հնչյունական համակարգի յուրաքանչյուր երևույթ դիտարկվում է տվյալ շրջանի լեզվի մակարդակում՝ առանց խտրության հին և նոր միավորների միջև: Ըստ այդմ՝ լեզվի հին կամ նոր շրջանի հնչյունական համակարգի քննություն նշանակում է նրա բաղադրիչ միավորների դասակարգում և վերլուծություն հնչյութաբանական միևնույն մոտեցման և սկզբունքների կիրառմամբ:

Հայտնի է, որ հին գրական հայերենի ձայնեղ բաղաձայններին (*բ, գ, դ* և այլն) վերագրվում է շնչեղության երանգ, որ չի պահպանվել նոր գրական հայերենում (այն նկատելի է որոշ բարբառներում՝ Մուշի, Արարատյան և այլն). այդ հնաբանությունը ժամանակակից հայերենի բաղաձայնների որակական խմբավորման մեջ բաց է թողնվում, այսինքն՝ հիշյալ բնույթի հնչյունները դիտվում են իբրև «մաքուր» ձայնեղներ: Նոր գրական հայերենի բաղաձայնական համակարգը արևելահայ տարբերակում եռաստիճան է, որ մոտ է հին գրականին (*բ, պ, փ*. հմմտ. *բաղ, պապ, փաթ* «պտույտ» և այլն), այնինչ արևմտահայ տարբերակում՝ երկաստիճան խլագուրկ համակարգ է, պատմականորեն կրել է երկու կարգի փոփոխություն՝ ձայնեղի շնչեղ խլացում (մասամբ՝ շնչեղացում) և խուլի ձայնեղացում [*բ, փ (բ’)*. *բ > փ, պ > բ, փ > փ*. *փաթ* «բաղ», (*բ’երան*), *բաղ* «պատ», *փաթ* «պտույտ» և այլն]. արևմտահայ տարբերակի կրած փոփոխությունները համաժամանակության մեջ նույն կերպ են դիտվում, ներկայացվում են որպես այդպիսին¹:

Հին գրական հայերենն ուներ երկբարբառների իր համակարգը (*ոյ, ես, իւ* և այլն), որ նոր գրական հայերենում վերածվել է երկհնչյունների (*ույ, յս, յու* և այլն), որոշ երկբարբառներ դուրս են մնացել համակարգից (*է < *եյ*), իսկ նորում ի հայտ են եկել նոր երկհնչյուններ՝ *իւ*. հմմտ. *Ասիա, Վիկտորիա* (ջրանուն) և այլն. ըստ այսմ՝ երկբարբառ - երկհնչյուն զարգացումը (փոփոխությունը) դուրս է համաժամանակյա քննության ոլորտից, քանի որ այն եղել է պատմական գործընթացի արդյունք:

Ամեն մի լեզվի հնչյունական համակարգի համաժամանակյա քննությունը, որն ավելի շուտ ունի նկարագրական բնույթ, կարևոր է ոչ միայն տվյալ փուլի վերաբերյալ պատկերացում ունենալու, այլև համեմատություններ անցկացնելու, մի կողմից՝ նույն լեզվի տարբեր փուլերի միջև, մյուս կողմից՝ տարբեր լեզուների տիպաբանության նպատակով: Լեզուների հնչյունների համաժամանակյա քննությունը նպատակային է ոչ միայն առանձին (ստատիկ) նկարագրության, այլև միջանկյալ՝ տիպաբանության համար:

¹ Հմմտ. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 585-587:

3. Համաժամանակյա քննության դեպքում լեզվի հին և նոր փաստերի վրա տարածվում են նույն մոտեցումները (սկզբունքները), այսինքն՝ պահպանվում է վերլուծության և դասակարգման հավասարությունը:

Այսպես, հայտնի է, որ հայերենի ձայնավորների մեջ լատինագիր *o* [o]-ն մուտք է գործել 12-րդ դ. սկզբներին (1110-1120-ական թթ.), որ եկավ փոխարինելու մեսրոպյան *n* [o]-ին՝ այն դեպքում, երբ հին *au* [aw] երկբարբառը արդեն արտասանվում էր իբրև հետին շարքի միջին բարձրացման որակի հնչյուն [o], որի համար էլ հարկ եղավ միջին շրջանում փոխառելու *o*-ն. հմմտ. *ար* - *որ*, *ալգուր* - *օգուր*, *ընտանեալ* - *ընտանեօք*, այլև *Ալգուարինոս* - *Օգուարինոս* և այլն. այն ձայնավորների համակարգում, նույն ժամանակի մեջ, դարձավ հավասար արժեքի միավոր սյուսների համեմատությամբ:

Այնուհետև, միջին գրական հայերենում (գրեթե նույն ժամանակում) օտարագիր *ʃ* հնչյունը մուտք է գործել հայերենի բաղաձայնների համակարգ՝ ինչ-որ չափով «թեթևացնելով» գրաբարյան *ի*-ի (նաև *հ*-ի, *ւ*-ի) բեռը. հմմտ. գրաբար՝ *փաղանգ* «(գորքի) թև», *փիղ*, *հրաման* և այլն, միջին գրական՝ *ֆարման*, *ֆրա* «(կաթոլիկ) եղբայր՝ կուսակից», նոր գրական հայերեն՝ *ֆուրգոն*, *ֆուրբոլ* և այլն (հայերենի որոշ բաբառներում՝ Դրբ. և այլն, դեռևս պահպանվում է այդ *ի* հնչյունը. *փուրգոն*, *փուրբոլ* և այլն). այդ *ֆ*-ն (ըստ Աճառյանի դասակարգման՝ տե՛ս վերը) գուգակից է դառնում շրթնային ձայնեղ *վ*-ին՝ իբրև խոլ բաղաձայն:

Նման քննության դեպքում, անշուշտ, տեղին չէ արտաքին հանգամանքների բացարձակացումը. համաժամանակության մեջ լեզվի հնչյունական համակարգի նկատմամբ ամեն մի անհաջող արտաքին միջամտություն (վերանայում, «ռեֆորմ» և այլն) ոչ միշտ է անհրաժեշտ:

4. Հնչյունները միմյանց նկատմամբ գտնվում են համակարգային տարբեր բնույթի հարաբերակցության մեջ, որը գործում է համաժամանակության որոշակի կանոնների համաձայն: Հարաբերակցությունը, ինչպես ընդունված է, երկու կարգի է՝ հակադրական և բաշխուձային:

Հնչյունների հակադրությունը լինում է սովորաբար երկու, որոշ դեպքերում երկուսից ավելի միավորների միջև: Այսպես, լեզուների մի մասում պայթական բաղաձայնները գտնվում են երկանդամ հակադրության մեջ. օր.՝ ռուս. *ճ/ն, ծ/մ* և այլն, ֆրանս. *b/p, d/t* և այլն, գերմ. *b/p, d/t* և այլն, լատին. *b/p, d/t* և այլն), իսկ մեկ այլ մասում՝ եռանդամ (հայ. *բ/ պ/ փ, դ/ տ/ թ* և այլն: Հին հնդկերենում (սանսկրիտում) գոյություն ունեն պայթականների քառանդամ հակադրություն (bհ / b/ p / ph), որ, ի դեպ, դասական համեմատաբանության համար հիմք հանդիսացավ հնդեվրոպական հիմք-լեզվում վերականգնելու նույնպիսի համակարգ (*bհ, *b, *p, *ph), և որն էլ հիմնականում պահպանվում է նոր ժամանակների լեզվաբանության մեջ, թեև ներկայումս կան այդ համակարգի վերանայման հիմնավոր առաջարկներ:

Այնուհետև, հակադրությունը կարող է լինել ուժեղ, եթե հակադրելի միավորները գտնվում են մեկ տարբերակիչ հատկանիշի սահմանում, օր.՝ հայ. *բ/պ, գ/կ, զ/ս* և այլն, և թույլ է, եթե գործում են մեկից ավելի տարբերակիչ հատկանիշների սահմանում. օր.՝ հայ. *բ/գ, կ/շ* և այլն), այսինքն՝ հակադրելի միավորների սահմանը կան նույնն է, կան տարբեր:

Ինչ վերաբերում է հնչյունների բաշխվածությանը, ապա այն, ինչպես լեզվի մյուս միավորների հարաբերակցության դեպքում է, լինում է երեք տեսակ՝ հակադրական, լրացական և ազատ: Հակադրական է այն բաշխումը, որը խոսքի մեջ ունենում է բառի իմաստի տարբերակման (իմաստագատիչ) դեր. օր.՝ *դ/տ. դարան* «թաքստոց» և *տարան* (բայական ձև՝ «ատան գնացին», *գ/կ. գերի* «բռնված» և *կերի* (հոլովական ձև՝ «ուտելիքի») և այլն: Լրացական է այն բաշխումը, որ լեզվի զարգացման տվյալ փուլում բառի արմատը (բառը) կրկնավոր բարդության մեջ հանդես է գալիս լծորդությամբ. օր.՝ *ա/ու, ա/ե. մանր-մուր, մաս-մու* «(մի քանի սարքի՝ հարմարանքի) մասեր», *բարձրաբերձ* «ավելի քան բարձր» և այլն: Ազատ բաշխման դեպքում, որն ավելի նկատելի է լեզվի նույն ժամանակային տարբերակներում, բառն ունենում է երկու (եթե ոչ ավելի) գրություն. օր.՝ *բ/պ, գ/կ/ք, է/է . դարբաս / դարպաս, բարոն / պարոն, Միսակ/ Միսաք, Բարկեն / Բարգեն* և այլն:

Հիմնական գրականություն:

Աղաշյան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 264-273:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 37-43:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 44-58:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 169-190:

Трубецкой Н. С., Основы фонологии, М., 1960, էջ 52-73:

Широков О. С., Введение в языкознание, М., 1985, էջ 52-72:

Якобсон Р., Фант Г. М., Халле М., Введение в анализ речи: Различительные признаки // "Новое в лингвистике", вып. II, М., 1962, էջ 170-230:

Якобсон Р., Халле М., Фонология и ее отношение к фонетике // "Новое в лингвистике", вып. II, М., 1962, էջ 231-278:

Թեմա 4. Պատմական հնչյունաբանություն. հնչյունափոխություն

Հիմնահարցեր: Հնչյունափոխությունը և նրա տեսակները. փոխազդեցական և դիրքային հնչյունափոխություն: Հնչյունական համաբանություն և ընդհանրացում: Ընդհանուր պարունական հնչյունափոխություն: Հնչյունական օրենք:

1. Ի տարբերություն հնչյունների համաժամանակյա քննության, որը հենվում է լեզվում եղած միավորների կայուն հարաբերակցության վրա, տարածամանակյա քննության դեպքում գործ ունենք նրանց փոփոխական հարաբերակցության հետ. կայունությունը, առհասարակ, համաժամանակության, իսկ փոփոխությունը տարածամանակության կերպն է:

Հնչյունները խոսքային առնչության մեջ ունենում են ազդեցություն միմյանց վրա, որի հետևանքով փոփոխվում են: Այդ փոփոխությունը, ընդունված է ասել, քանակականից վերածվում է որակականի, այսինքն՝ խոսքաշարի մեջ այս կամ այն հնչյունի «հանդիպումը» մեկ այլ հնչյունի հաճախ կրկնվում է և առաջանում է նոր որակի «հանդիպում»: Եվ լեզվի զարգացման ընթացքում նման ազդեցությունը դառնում է պատմական փաստ:

Նման փոփոխությունները լեզվաբանության մեջ ավանդաբար ընդունված է կոչել ըստ հնչյունների երկու հատկանիշի՝ ըստ նրանց գրաված դիրքի և ըստ միմյանց վրա ունեցած ազդեցության: Տարբերում են *փոխազդեցական հնչյունափոխություններ* և *դիրքային հնչյունափոխություններ*: Առաջինն այլ բան չէ, քան հնչյունների միջև առաջ եկող փոխադարձ ազդեցության արդյունք, երկրորդը պայմանավորված է հնչյունների՝ միմյանց նկատմամբ գրաված դիրքով:

Ըստ Է. Բ. Աղայանի՝ «փոխազդեցական հնչյունափոխություն կոչվում են այն հնչյունական փոփոխությունները, որոնք առաջ են գալիս բառակազմի կամ ամբողջ հնչյունական շղթայի մեջ գտնվող հնչյունների փոխադարձ ազդեցություններով: Դրանք անմիջական արդյունք են արտասանական գործընթացի և պայմանավորված են, մեծ մասամբ, բառակազմում եղած հնչյունների փոխազդեցությամբ»¹:

¹Նույն տեղում, էջ 265-288:

Որպես փոխազդեցական հնչյունափոխության նմուշ՝ սովորաբար բերվում է վաղուց հայտնի (Աճառյանի կողմից նկատված) *բոկիկ* (*բոկիկ*, հմմտ. *բոկ-ուրն* «ոտքը բաց, բաց ոտք») բառի նախ (գրական հայերենում)՝ *բոքիկ*, այնուհետև (բանավոր խոսքում կամ բարբառներում)՝ *բոպիկ* դառնալու օրինակը, որում մի կողմից՝ արմատի *կ*-ն դառնում է *բ*, այսինքն՝ հետնալեզվային խուլից վերածվելով շրթնային ձայնեղի, մյուս կողմից՝ *բ*-ն դառնում է *պ*, այսինքն՝ շրթնային ձայնեղը վերածվում է խուլի:

Փոխազդեցական հնչյունափոխությունը լինում է մի քանի տեսակ՝ առաջընթաց կամ հետընթաց տիպի առնմանությամբ կամ տարնմանությամբ. օր.՝ հայերենի *ծունգ* բառի *գ*-ն վերածվել է *կ*-ի արմատի խուլ *ծ*-ի ազդեցությամբ, *սթափվել*, *սփոփվել* բառերի *ս*-ն առաջացել է հնագույն *զ* ածանցից շնչել խուլ *թ*-ի և *փ*-ի ազդեցությամբ, որն ապացուցվում է նրանով, որ *զգուշանալ*, *զգասար* և նման շատ բառերում այդ *գ*-ն ձայնեղ *գ*-ի կողքին մնացել է նույնը, չի հնչյունափոխվել և այլն:

Հնչյունների նման փոփոխությունները ոչ այլ ինչ են, քան դիրքային հնչյունափոխություն, որոնք լինում են բառի կազմում հնչյունների զբաղեցրած դիրքով պայմանավորված, այսինքն՝ տեղի է ունենում բառի կամ հնչյունական շղթայի սկզբում, վերջում կամ բառամիջում. հնչյուններն իրենց այս կամ այն հատկանիշը փոխում են՝ հարմարվելով (հեռանալով կամ մոտենալով) իրենց կից, մոտակա հնչյուններին:

Հնչյունափոխությունը կատարվում է նաև շեշտի հետ կապված: Հնչյունական շղթայի մեջ այս կամ այն վանկի ուժեղ (շեշտված) արտասանության պայմաններում մյուս վանկերն ունենում են որևէ հնչյունի կորուստ, այլև տվյալ հնչյունը վերածվում է մեկ այլ որակի հնչյունի. օր.՝ *դյուցազուն* (< *դյուցազն*) - *դյուցազնական*, *դաշտամուկ* - *դաշտամկներ*, *բարեկիրթ* - *բարեկրթություն* և այլն:

Լեզուների նկարագրական քերականություններում բավականին մանրամասն ներկայացվում են փոխազդեցական և դիրքային հնչյունափոխությունները: Դա նկատելի է ոչ միայն սոր գրական հայերենի, այլև ուրիշ լեզուների հնչյունների փոփոխություններին վերաբերող օրինակներում:

Այսպես ուսուցվում են հնչյունափոխական այնպիսի երևույթներ, ինչպիսին են *ժողովրդական* կամ *կեղծ սրուգաբանությունը* (բառերի հնչյունական կազմի, կամ նրա որևէ բաղադրիչի ոչ ճիշտ բացատրություն), *առնմանությունը* (ասիմիլյացիա), *փարսմանություն* (դիսիմիլյացիա), *հնչյունների ձայնդարձը*, *հերթագայությունը* (ալտերնացիա) և այլն¹:

Կեղծ («ժողովրդական») ստուգաբանությունը առարկայի (հասկացության) արտաքին (առերևույթ) ընկալման հիման վրա տրված բացատրությունն է, որը, որքան էլ տարածված լինի՝ ընդհանրապես, գիտական հիմնավորումից զուրկ է, ուստի և մերժելի. օր.՝ *հմնտ. մնաթեննստիկա* «մատը մատին կա» և այլն:

Առնմանություն է, երբ կից հնչյուններն ազդում են միմյանց վրա և նմանվում կամ նույնանում: Գոյություն ունի առնմանության մի քանի տեսակ՝ լրիվ և մասնակի, առաջընթաց և հետընթաց. օր.՝ *արյուն – արյան > արյամբ, սքողել (< *գքողել «ծածկել, թաքցնել»)*, *սթափվել (< *գթափվել)*, *բոկ-ոյր (< *բոկ-իկ) > բորիկ* և այլն: Այնուհետև, *աղջիկ* բառի դեպքում, *դ-ի խ* արտասանության ազդեցությամբ *ջ-ն* վերածվել է *չ-ի* (առնմանություն), իսկ վերջինիս՝ *չ-ի* ազդեցությամբ՝ *դ-ն*, իր հերթին, վերածվել է *խ-ի* (տարնմանություն), այդպիսով ունենք՝ *աղջիկ > ախչիկ*, որ դիտվում են իբրև գրական և բարբառային տարբերակներ: Տարնմանության դեպքում նկատվում է հակառակ երևույթը, այն է՝ հնչաշղթայում կից հնչյուններն ազդում են միմյանց վրա և տարբերվում (հեռանում) են միմյանցից. օր.՝ *հայ. (գրաբար)՝ գրեսցես (< գրեսցես), բերեսցեն (< բերեսց-ցեն)* է այլն:

Ձայնդարձը վերաբերում է ձայնավորի այն փոփոխությանը, որն ունի նաև ձևաբանական արժեք. և այդ երևույթը, բավականին տարածված լինելով հնդեվրոպական հիմք-լեզվում, նկատելի է ցեղակից շատ լեզուներում, այլև հայերենում. օր.՝ *տուն > տան, դուստր > դստեր* և այլն:

Հնչյունական հերթագայությունը (ալտերնացիա) սովորաբար դիտվում է բաղաձայնների դեպքում, որն էլ հաճախ միաժամանակ

¹ Նույն տեղում, էջ 239-273:

ունենում է ձևաբանական արժեք. *դառնամ* «դառնում՝ վերադառնում եմ» > *դարձի* «դարձա՝ վերադարձա», *բառնամ* «բարձրանում եմ» > *բարձի* «բարձրացա, վեր կանգնեցի», *ճանաչեմ* «ճանաչում եմ» > *ծանեայ* «ճանաչեցի» և այլն (տե՛ս ստորև):

2. Լեզուներին բնորոշ է նաև միասնականության ձգտումը՝ մասնավոր երևույթների կամ իրողությունների ի մի բերելը, որովհետև լեզուն, ի տարբերություն խոսքի, ընդհանուր է և միասնական նրանով հաղորդակցվող հանրության, ըստ այդմ՝ նաև հանրության յուրաքանչյուր անդամի համար:

Եվ այս դեպքում գործ ունենք լեզվի հնչյունների այնպիսի առնչությունների հետ, որոնք գործում են ոչ թե մեկ բառի (հնչյունական շղթայի) սահմաններում, ինչպես որ փոխազդեցական կամ դիրքային հնչյունափոխությունների դեպքում է, այլ տարբեր բառերի (անկախ հնչյունական շղթաների) միջև, ուստի ընդունված է վերջինս որակել համաբանություն կամ նմանակություն (անալոգիա), որն ի վերջո վերածվում է հնչյունական ընդհանրացման. օր.՝ հայ. *յոթ* թվականից (բառից) կազմված տասնավորը կոչվում է *յոթանասուն*, որի համաբանությամբ *ութ* թվականինը ևս (բարբառներում կամ խոսակցական լեզվում) կոչում են *ութանասուն*, որը սխալ է, որովհետև ճիշտը *ութսունն* է, քանի որ տասնավորները կազմվում են *-սուն* ածանցով, ընդ որում *յոթ* թվականի դեպքում այդ *-սուն* մասնիկը դրվում է բառի գրաբարյան սեռական հոլովի *յոթանս* (*եւթանս* < *եւթնս*), իսկ *ութ*-ի դեպքում ուղղականի ձևի վրա, այսինքն՝ բարբառներում համաբանությամբ է գործածվում *ութանասուն* ձևը: Իսկ որոշ բարբառներում էլ (Մուշ, Ալշ. և այլն) հակառակ պատկերն է, այսինքն՝ *ութսուն* գրական ճիշտ ձևի համաբանությամբ *յոթանասուն*-ի փոխարեն գործածվում է *յոթսուն*, որն, իր հերթին, սխալ է և այլն:

3. Հնչյունափոխությունը տեղի է ունենում ոչ միայն լեզվի կոնկրետ մեկ փուլի մեջ. կան հնչյունական փոփոխություններ, որոնք առաջացած լինելով լեզվի տվյալ փուլում՝ շարունակում են գործել նաև հետագա փուլերում: Այսպես, գրաբարում *հայր*, *մայր*, *եղբայր* բառերը հոլովվում էին *այ* > *աւ* հնչյունափոխության տեսքով, որ աշխարհա-

բարում դիտվում է իբրև *այ > օ* հնչյունափոխություն. ձևաբանական այս տեղաշարժն իր հիմքում այլ բան չէ, քան հնչյունական տեղաշարժ, որ հայտնի է գրավոր հայերենի սկզբնական շրջանից՝ թերևս իր հիմքերն ունենալով նախագրային հայերենի մեջ, իբրև հնդեվրոպական ժառանգություն: Նման օրինակները հայերենում և այլ լեզուներում բազմաթիվ են, որ վկայում են դրանցում տեղի ունեցող հնչյունական փոփոխությունների կայուն ավանդույթի մասին: Նման տեղաշարժերը տեսական լեզվաբանության մեջ կոչվում են ընդհանուր պատմական հնչյունափոխություն: Այն առհասարակ սահմանվում է իբրև ոչ թե մեկ կամ մի քանի փաստերով ներկայացվող, այլ նույնպիսի գրեթե բոլոր փաստերն ընդգրկող երևույթ, ընդ որում լեզվի ոչ թե մեկ, այլ տարբեր շրջանների մեջ:

Ընդհանուր պատմական հնչյունափոխությունը հատկապես տարածված երևույթ է գրավոր հարուստ պատմություն ունեցող լեզուներում: Հայերենը, ռուսերենը, հունարենը և այլն պատմական հնչյունափոխության տեսանկյունից եղել են բավականին լայն ուսումնասիրության առարկա՝ կապված դրանց երկարատև պատմության հետ:

Այսպես, հին հայերենում հետին շարքի միջին բարձրացման *n* ձայնավորը հին գրականում արտասանվում էր *o* [օ], իսկ հետագայում, երբ բառասկզբում վերածվեց շրթնային *վօ* հնչակապակցության՝ *n* [վօ]. *որ* [վօր], *որս* [վօրս], *որմն* [վօրմն] և այլն (բացառությամբ *ով* [օվ] դերանվան), այն չտարածվեց բառամիջի դիրքի վրա. հմմտ. *ձկնորս* [ձկնօրս], *միջնորմ* [միջնօրմ] և այլն: Ըստ այսմ, պետք է սահմանել, որ ոչ թե *n* [վո] արտասանությունն է բառամիջում վերածվել *o* [օ] -ի, այլ հին հայերենի *n* [օ]-ն բառասկզբում փոխվել է *վօ*-ի, իսկ բառամիջում մնացել է նույնը. սա է երևույթի պատմական (տարածամանակյա) փոփոխության բացատրությունը (գնահատությունը). հմմտ. *և > յէ. երեք* [յէրէք], բայց *լրասնէրեք* [տասնէրէք], *երես* [յէրէս], բայց *անէրես* [անէրէս] և այլն:

4. Լեզուներում առկա հնչյունների փոփոխությունները, որոնք տեղի են ունենում տվյալ ժամանակի մեջ և կոնկրետ տարածքում (արեալում), գործում են ոչ թե անմիակերպ և այլաձևումներով, այլ

որոշակի օրինաչափություններով, որոնք էլ ընդունված է կոչել հնչյունական օրենք: Վերջինիս սահմանումը տրվել է 19-րդ դ. կեսերին, համեմատական լեզվաբանության երիտրբերականական դպրոցի կողմից (ոչ անկախ Ա. Շլայխերից): Այդ դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ նման օրենքները լեզուների հնչյունական համակարգերի համեմատության մեջ ունեն բացարձակ (գրեթե բացառություններ չճանաչող) արժեք, իսկ եթե, այնուամենայնիվ, կան այդպիսիները, ապա դրանք դիտվում են մյուս՝ համաբանության (անալոգիայի) օրենքով:

Հնչյունական օրենքը տվյալ լեզվում կամ լեզուներում գործող հնչյունական այնպիսի համապատասխանություն է, որ գործում է որոշակի ժամանակի մեջ և տարածքում: Այն գործում է ոչ միայն առանձին լեզվի տարբեր փուլերում, այլև տարբեր (մանավանդ ցեղակից) լեզուների հնչյունական համակարգերում: Այսպես, հայ. *բ*, *ղ* ձայնորդներից, այլև ձայնավորներից հետո ձայնեղ բաղաձայնը արտասանությանը վերածվում է շնչեղ խուլի. ա) ձայնավորների դեպքում՝ *կարագ* [կարաք], *ոգի* [ոքի], *օղ* [օթ] և այլն, բացառություն՝ *արար* [արար] և այլն. բացառությունները բացատրելի են նոր փոխառյալ լինելու հանգամանքով, որոնց դեպքում չի գործում հնչյունական օրենքը, բ) ձայնորդների դեպքում, *բ*-ից հետո՝ *երբ* [երփ], *վարդ* [վարթ] *արջ* [արչ] և այլն, *ղ*-ից հետո՝ *դաղձ* [դաղց], *դեղձ* [դեղց], *աղջիկ* [ախչիկ] և այլն, բացառություն՝ *գերբ* [գերբ], *կարբիդ* [կարբիդ], *ակորդ* [ակորդ] և այլն, որոնք բացատրելի են ուշ փոխառություն լինելու հանգամանքով:

Նկատենք նաև, որ հնդեվրոպական լեզուների համեմատության ընթացքում սահմանվել են մի շարք հնչյունական օրենքներ, որոնք հաճախ կոչվում են սահմանողի անունով (*Գրիմի օրենք*, *Վեոների օրենք* և այլն): Հնչյունական օրենքներն ունեն լեզուների արտասանական կողմի համակարգման նպատակ, որ ոչ պակաս կարևոր են, քան իրականության այլ երևույթների համար սահմանվող օրենքները:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 264-288:

Լրացուցիչ գրականություն:

Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 79-142:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 47-52:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 471-478:

Широков О. С., Введение в языкознание, М., 1985:

Якобсон Р., Фант Г. М., Халле М., Введение в анализ речи: Различительные признаки // "Новое в лингвистике", вып. II, М., 1962, էջ 170-230:

Якобсон Р., Халле М., Фонология и ее отношение к фонетике // "Новое в лингвистике", вып. II, М., 1962, էջ 231-278:

Թեմա 1. Բառագիտության առարկան և խնդիրները

Հիմնահարցեր: Բառի սահմանումը: Բառի ուսումնասիրության ոլորտները: Բառի ձև և բառաձևեր. բառարանային ձև և քերականական ձև: Բառը խոսքի մեջ և խոսքից դուրս:

1. Բառը լեզվի ամենանյութական և ամենազգայուն միավորն է, քանի որ այն անմիջական կապ ունի իրականության անվանման հետ: Բառը իրականության վերաբերյալ առաջ եկած հասկացության անվանումն է: Լեզվի ուսումնասիրության երեք մակարդակներից երկրորդը՝ բառային մակարդակն է, որն ընկած է մի կողմից՝ հնչյունական, իսկ մյուս կողմից՝ շարահյուսական մակարդակների միջև, և ըստ այդմ սերվում է հնչյունական մակարդակի միավորներից և, իր հերթին, սերում շարահյուսական մակարդակի միավորներ: Միջմակարդակային իրացումները, ինչպես գիտենք, տեղի են ունենում ավելի նրբորեն՝ մակարդակներին հարող անցումների դեպքում են լինում:

Բառագիտության ուսումնասիրության առարկան մեկ կամ մեկից ավելի լեզուների բառապաշարն է՝ իր առաջացման, զարգացման և փոփոխությունների մեջ: Ըստ այդմ տարբերում են ընդհանուր բառագիտություն և առանձին (մասնավոր) բառագիտություն. սույն դասընթացի թեմատիկան, բնականաբար, ընդհանուր բառագիտության հարցերն են: Այն գիտությունը, որն ուսումնասիրում է բառը և բառերի ամբողջությունը (բառապաշարը), կոչվում է բառագիտություն: Բառը լեզվաբանության առարկա է ըստ ձևի, բովանդակության և գործառության: Այն խոսքի պատրաստի միավոր է, որ գոյություն ունի հարողակից կողմերի (բանավոր խոսքում՝ ասողի և լսողի, գրավոր խոսքում՝ գրողի և ընթերցողի) միջև:

Գիտության մեջ բառի սահմանումը ամենատարողունակ ոլորտն է, այն լայն ուշադրության առարկա է եղել տարբեր գիտաճյուղերի համար, որովհետև իրականության ճանաչողության մեխանիզմը համեմատաբար ավելի իրական ձևով է ներկայանում ամենից առաջ լեզվական այդ միավորի մեջ:

Կապված իրականության արտացոլման բազմաշերտ մեխանիզմի հետ՝ բառը համարվում է երկայլանային՝ արտահայտության (ձև) և

բովանդակության (իմաստ) պլանների միասնությամբ արտահայտվող միավոր. այս բնութագիրը (այլ կերպ ասած՝ մոտեցումը) ավանդական է, ուստի գրեթե անատարկելի: Եվ ինչպես ամեն մի երևույթի, այնպես էլ բառի սահմանումը հնարավոր է տալ ըստ այն հատկանիշների, որոնք վերաբերում են նրա հնչյունական (արտասանական), իմաստային (իմաստաբանական) և գործառական (ֆունկցիոնալ) կողմերին, այսինքն՝ ձևին, իմաստին և գործառությանը: Բառը կարելի է սահմանել որպես որոշակի գործառությամբ ձևաիմաստային ամբողջություն, ավելի պարզ՝ ձևաիմաստային գործառական միավոր:

Ուստի բառի բնորոշումը հիմնված է այդ յուրահատկությունների վրա:

ա. Ձևային յուրահատկություն է այս կամ այն մակարդակի միավորի արժեք ունենալը, ըստ արտասանության՝ իբրև հնչյունական կապակցություն հանդես գալը, արտասանական շղթայում՝ իմաստակիր հնչակապակցություն կազմելը (դադար, շեշտ և այլն):

Այսպես, բառը լեզվի տարբեր մակարդակներում երբեմն հանդես է գալիս տվյալ մակարդակին բնորոշ արժեքով, սակայն չի նույնանում այդ իսկ մակարդակի միավորների հետ. հնչյունական մակարդակ՝ բառը մենահնչույթ ձևով. հմմտ. հայ. *ի* նախդիրը (կապը), *և*, *ու* շաղկապները և այլն, ռուսերեն *у* («և»), *с* («մեջ»), ֆրանսերեն՝ *à* («դեպի, մոտ և այլն»), ձևաբանական մակարդակ՝ բառը առարկա նշող միավոր և բառաձև՝ *իր* «առարկա» և *իր* «դերանվանական ձև», շարահյուսական մակարդակ՝ բառը իբրև նախադասություն՝ հայ. *Մթննեց: Չծխել*, ռուս. *Тумана* («Լռություն»), *Чумаць* («Ընթերցել») և այլն:

Բառը հնչյունական կապակցություն է, որպիսով այն ստանում է շարույթային նշանակություն և առանձնանում մյուս նման կապակցություններից. հմմտ. *արագ փուն հասնել*, *դուրս գալ*, *մարդ է*. Բերված օրինակները հնչակապակցություններ են, որովհետև հայերենում կապակցական ամբողջության մեջ ունեն իմաստային սերտություն, այլև դրանք բառեր են, քանի որ հնչաշղթայի մեջ առանձնանում են որոշակի դադարով, որը բանավոր խոսքում արտահայտվում է լարվածության թուլացմամբ, իսկ գրավոր խոսքում՝ անջատ գրությամբ. բերված օրինակներից մեկում կա երկու, իսկ մյուս երկուսում՝ մեկական դա-

դար: Բառը բնորոշվում է նաև շեշտով, որ ի տարբերություն այլ՝ վանկային, ասույթային (ֆրագային) շեշտի, կոչվում է բառային շեշտ՝ իր տարբեր դրսևորումներով այն իմաստակիր միավոր չէ, սակայն բառին տալիս է բառային, նաև քերականական իմաստ:

բ. Իմաստային յուրահատկությունն այն է, որ բառը անվանում է հիմքում ընկած հասկացությունը, իսկ վերջինս, ինչպես հայտնի է, պայմանավորված է առարկաների, երևույթների, նրանց հատկանիշների ճանաչողական ընկալմամբ՝ *ծառ, ջրուր, ամպրոպ, ծաղկել, հոսել, որոտալ, երկնային, բնական, արագ, առաջ* և այլն: Այն ունի կապակցական հնարավորություն, կարող է հանդես գալ մտածական, հուզական-զգացական, բնածայնական տարբերակվածությամբ՝ *միբաժել, զգալ, լռել, սիրելի, մերերիմ, հուզվել, ափսոսալ, երանի, ավաղ* և այլն, խոսքի մեջ լինել հիմնական կամ օժանդակ իմաստի կրող՝ լրիվ կամ թերի բեռնվածությամբ՝ *տուն, մարդ, երկար, երկու, սա, ինքը, իսկ, բայց, քանի, որովհետև, ախ, վաշ, վայ* և այլն: Բերված օրինակները, որոնք իմաստային յուրահատկությամբ միմյանցից տարբեր են, ընդհանուր առումով բառեր են, խոսքի կազմության բառային մակարդակի միավորներ:

Եվ ըստ այդմ՝ բառերը հանդես են գալիս իբրև տարբեր խոսքի մասեր, այլ կերպ ասած՝ բառը տարբեր խոսքի մասերի պատկանող միավոր է, մի կողմից՝ անուն (գոյական, ածական, թվական), այլն դերանուն, մյուս կողմից՝ բայ, մակբայ և այլն, որոնց էլ, իմացական առումով, վերապահված են գործառական որոշակի պայմաններ և հնարավորություններ:

գ. Գործառական յուրահատկությունն այն է, որ բառն ունի անկախ գործածություն, լինում է նախադասության հիմնական կամ ինքնուրույն բաղադրիչ, իբրև գլխավոր և երկրորդական անդամների դրսևորիչ միավոր (ենթակա, ստորոգյալ, լրացումներ և այլն). կան նաև նախադասության կառուցվածքի բաղադրիչներից դուրս, այլ բաղադրիչների միջև այս կամ այն կարգի հարաբերության արտահայտիչ միավորներ (կապեր, շաղկապներ, եղանակական բառեր և այլն), որոնց հիմնական գործառությունը (ֆունկցիան) քերականական արտահայտության միջոց հանդես գալն է:

Բառը, իբրև բառային և քերականական նշանակության ամբողջություն, ձևաբանական մակարդակում ներկայանում է ուղիղ կամ թեք ձևերով՝ որպես հարացուցային միավոր, որ ըստ խոսքի նպատակադրման գտնվում է շարակարգային որոշակի հարաբերության մեջ. հմմտ. մի կողմից՝ *սեղան, սեղանի, սեղանին* և այլն - *Սեղանը* մեծ է: *Սեղանի* ոտքը կոտրվեց: Գիրքը դրված է *սեղանին* և այլն, մյուս կողմից՝ *բերում եմ, բերում ես, բերում է* և այլն - *Ես բերում եմ* աթոռը: Դու *բերում ես* ջրամանը: Արամը *բերում է* գիրքը և այլն: Բերված օրինակների մեջ առաջինները հարացուցային միավորներ են՝ *սեղան, սեղանի, սեղանին* և այլն, իսկ երկրորդները՝ շարակարգային միավորներ՝ *Սեղանը մեծ է: Սեղանի ոտքը կոտրվեց: Գիրքը դրված է սեղանին* և այլն: Առաջին դեպքում *սեղան* և *բերել* բառերը գտնվում է ձևաբանական (ձևակազմական), իսկ երկրորդ դեպքում շարահյուսական (ստորոգական) հարաբերության մեջ, որն էլ, ինչպես գիտենք, քերականության էությունն է:

Այնուհետև, հարացույցում բառը, իբրև բառաձև (զրո կամ առկա ձևությոներով)՝ ունի հարկավոր միավորի ընտրության հնարավորություն, իսկ շարակարգային պլանում՝ հնարավոր ընտրություն. հմմտ. *սեղան, սեղանի, սեղանին* և այլն - *Սեղանը* մեծ է: *Սեղանի* ոտքը կոտրվեց: Գիրքը դրված է *սեղանին* և այլն:

Այսպիսով, բառը բնորոշվում է ձևային, իմաստային և գործառական որոշակի յուրահատկություններով, իբրև լեզվական ինքնուրույն միավոր՝ սահմանվում է ըստ այդ յուրահատկությունների:

Լեզվաբանության բնագավառում, մանավանդ ուսումնական նպատակով, բառի սահմանումը հաճախ դառնում է ամենակնճոտ հարցերից մեկը, որի լուծման նպատակով առաջադրվում են տարբեր մոտեցումներ, բերվում են լեզվի միավորների մեջ նրա ունեցած առնչությունների վերաբերյալ այս կամ այն աստիճանի հատկանիշներ և այլն:

Ըստ Է. Բ. Աղայանի՝ սահմանման մեջ գործում են մի շարք հատկանիշներ՝ բառն իբրև «նյութականորեն ձևավորված իմաստակիր միավոր», «որպես ձևի և իմաստի միասնություն ներկայացնող միավոր», «որպես հասկացության նյութական անվանում», իբրև «բառա-

յին մակարդակի միավոր», խոսքի մեջ «իբրև նախադասության անդամ» հանդես եկող միավոր, «որպես արտասանական շղթայի առանձին, ինքնուրույն հատված» և որոշ լեզուներում՝ բառի «քերականական ձևավորումը»: Ուստի՝ «բառ է այն հնչույթը կամ հնչույթախումբը, որն ունի բառային իմաստ, անկախ, ինքնուրույն գոյություն ու գործածություն՝ շարահյուսական միավորի դերով, և բառային շեշտ»¹: Դժվար չէ նկատել, որ սահմանման մեջ մասնատված է հնչունական հատկանիշը (ներկայացվում է հնչույթ, հնչույթախումբ, շեշտ՝ բաղադրիչների թվարկմամբ), բառիմաստից բացի տեղ չի տրվում նրա մյուս՝ քերականական (ձևակազմական) իմաստին, գործառության առումով ինքնուրույն գոյություն և գործածություն ունենալուց բացի, բնականաբար, սպասելի էր խոսքիմասային գործառույթի նկատառումը և այլն: Վերջապես, այս սահմանումն իր չափանիշներով (պարամետրերով) ավելին չէ կամ այլ չէ, քան այն, որ, ինչպես վերը անդրադարձանք, բառը ձևային, իմաստային և գործառական հատկանիշների ամբողջություն է: Վերջինս հատկանիշների միատեղում է վերացարկման մեջ, իսկ հատկանիշները՝ առանձնացումներն այս կամ այն չափանիշով:

2. Բառն ունի ուսումնասիրության իր ոլորտները, որոնք կազմում են լեզվի առավել նյութական կողմը. այդ ոլորտներն են՝ բառապաշարի տեսությունը և նրա դասակարգումը՝ ըստ ծագման, կազմության և գործածության, նրանում տեղի ունեցող տեղաշարժերի բնույթի և տեմպերի, բառերի՝ բաղադրությունը (բառակազմությունը)՝ ըստ ձևի և իմաստի, ինչպես նաև իմաստաբանությունը և իմաստափոխությունը՝ ըստ արտաքին և ներքին գործոնների, այնուհետև դարձվածաբանությունը, ստուգաբանությունը, տերմինաբանությունը, բառարանի կազմումը (բառարանագրություն):

Բառը հնչունների պատահական կամ կամայական միացություն չէ, այլ պատմականորեն առաջ եկած այնպիսի հնչունական կապակցություն, որ արտահայտում է իրականության որևէ առարկա կամ երևույթ, ունի անկախ գործածություն և բառային շեշտ: Բառի ձևը նրա հնչունական կազմն է՝ որոշակի շեշտով: Վերջինս դրվում է բառի

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 509-510:

կազմի մեջ մտնող նվազագույն հնչախմբի՝ վանկի ձայնավորին կից և ոչ թե ձայնավորի վրա:

Հայերենում և մյուս լեզուներում (հնդեվրոպական լեզուներում առհասարակ) վանկը լիահունչ է, կազմված է բաղաձայնին հարող կամ բաղաձայններն իրար կապող ձայնավորներից. վանկը լինում է մենահնչույթ (միայն մեկ ձայնավոր) և մեկից ավելի հնչույթ ունեցող (մեկ կամ մյուս կողմից բաց, երկու կողմից բաց կամ փակ), շեշտը ընկնում է ձայնավորի վրա: Հայերենում շեշտի դիրքը որոշակի է՝ վերջին վանկի ձայնավորի վրա, բացառությամբ բառի *ը* հոդ ստանալու դեպքի, երբ շեշտը դրվում է նախորդ վանկի վրա: Ուրիշ լեզուներում շեշտը կարող է դրվել տարբեր վանկերի վրա, այսինքն՝ հարափոփոխ է, ինչպես լատիներենում, ռուսերենում և այլն:

3. Տարբերում են բառի ձև և բառաձևեր, բառարանային ձև և քերականական ձև, որոնք բառագիտական վերլուծության ինքնօրինակ դրսևորումներ են:

Բառի ուղիղ ձևը նրա ելակետային կամ բառարանային ձևն է, իսկ բառերը խոսքում կարող են ենթարկվել տարբեր կարգի փոփոխությունների՝ ըստ խոսքիմասային առանձնահատկությունների: Հայերենում անուն խոսքիմասային միավորները հոլովվում են, որ նշանակում է՝ ունենում են հոլովի, թվի, որոշալության և անորոշության, անձի և իրի առման (առկայացման), այլ լեզուներում նաև սեռի փոփոխություններ, բայը խոնարհվում է, այսինքն՝ ենթարկվում է եղանակի և ժամանակի, սեռի և կերպի, դեմքի և թվի և այլ փոփոխությունների և այլն: Թե՛ մեկ և թե՛ մյուս կարգի փոփոխություններն այլ բան չեն, քան ելակետային կամ բառարանային միավոր հանդիսացող բառի տարբեր ձևեր, ինչպես ընդունված է ասել, բառաձևեր: Այդ փոփոխություններից յուրաքանչյուրը քերականական մեկ ձև է. հմմտ. *քաղաք* - *քաղաքի*, *քաղաքին*, *քաղաքներ*, *քաղաքների*, *քաղաքները*. *մարդ* - *մարդու*, *մարդուն*, *մարդիկ*, *մարդկանց* և այլն. *գնալ* - *գնում եմ*, *գնացի*, *գնացել է* և այլն: Բերված օրինակներում *քաղաք*, *մարդ* գոյականները, *գնալ* բայը դրված են ուղիղ ձևով, ելակետային են, իսկ մյուսները՝ թեք ձևերով, փոփոխված են, ընդ որում առանձին վերցված՝ ուղիղ ձևերը բառեր են, իսկ փոփոխված ձևերը՝ բառաձևեր, իսկ

միասին առնված՝ թե՛ ուղիղ և թե՛ թեք ձևերը բառաձևեր են: Այլ կերպ ասած՝ բառի՝ ուղիղ ձևը բառապաշարի առումով բառարանային միավոր է, քերականական հարաբերակցության մեջ՝ բառաձև, որ հաճախ կոչվում է նաև լեզվաբանական առանձին տերմինով՝ *բառույթ*:

Ժամանակակից հայերենում բառի ուղիղ ձևը (գոյականի ուղղական հոլովը, բայի անորոշ դերբայը, ածականի դրական աստիճանը և այլն) բառարանային այլ միավորների համեմատությամբ բառեր են, իսկ դրանցից յուրաքանչյուրը հոլովման, խոնարհման և համեմատության աստիճան կազմող մյուս (թեք) ձևերի հարաբերակցությամբ՝ բառույթներ: Գոյականի ուղղական հոլովը, օրինակ, չունի ուղղականանիչ վերջավորություն, մյուս թեք ձևերի հետ գտնվում է \emptyset (գրո) / որևէ մասնիկ հակադրության մեջ, իսկ այլ լեզուներում կա ուղղական/ թեք հոլով ձևային հակադրություն: Յուրաքանչյուր բառ ունի այնքան ձևեր, որքան հոլովվում է կամ խոնարհվում, այլև համեմատության աստիճան կազմում և այլն, այսինքն՝ կրում է ձևաբանական փոփոխություններ:

Ըստ այսմ՝ տվյալ բառի ձևաբանական փոփոխության հետևանքով առաջ եկած ձևերը կոչվում են բառաձևեր, իսկ փոփոխությունների ամբողջությունը՝ ձևաբանական հարացույց: Եվ սա նշանակում է, թե բառի ձևերը հարացույցի անդամներ են կամ հարացուցային միավորներ: Վերևում բերված օրինակներից յուրաքանչյուրի խումբը (այս դեպքում՝ *քաղաք*, *քաղաքի*, *քաղաքին*, *քաղաքներ*, *քաղաքների*, *քաղաքները* և այլն) մի հարացույց է, իսկ խմբի ամեն մի միավոր՝ հարացուցային շարքի մեկ անդամ: Ըստ այսմ՝ բառի քերականական փոփոխություններից յուրաքանչյուրը առանձին ձև է, քերականական դրսևորման յուրօրինակ միավոր. հարացույցի մեջ յուրաքանչյուր միավոր մեկ բառաձև է, իսկ շարակարգային հարաբերակցության մեջ՝ բառ, և դա այնքանով, որ շարակարգային հարաբերակցության (նախադասության) մեջ յուրաքանչյուր անդամ (խոսքը լիմաստ բառերի մասին է) բառ է:

Բառի յուրահատուկ կամ անկախ ձևը նրա բառարանային ձևն է, այսինքն՝ խոսքից դուրս եղող ձևը, իսկ փոփոխված կամ ոչ բառարանային ձևը՝ քերականական ձևը կամ բառաձևը. հմնտ. *քաղաք* բառը

մի կողմից՝ բացարձակ կամ բառարանային ձև է, որովհետև այն համեմատելի է *տուն, փողոց, գնաց, իսկույն* և այլն ինքնուրույն ձևերի հետ, մյուս կողմից՝ քերականական ձև է, որովհետև հակադրելի է *քաղաքի, քաղաքին, քաղաքներ, քաղաքների* և այլն, ոչ ինքնուրույն ձևերի հետ. այսպիսով՝ *քաղաք*-ը մի դեպքում բառ է, մյուս դեպքում՝ բառաձև, այլ կերպ ասած՝ խոսքից դուրս բառ է, խոսքի մեջ՝ բառաձև:

Ընդունված է ասել, թե բառերից գոյականների բացարձակ՝ բառարանային ձևը ուղղական հոլովի ձևն է, բայերինը՝ անորոշ դերբայի ձևը, ածականներինը՝ դրական աստիճանի ձևը և այլն: Իսկ սա նշանակում է, որ բառերի չթեքված, ելակետային ձևերը բացարձակ ձևեր են, իսկ թեքվածները՝ քերականական ձևեր:

Ժամանակակից լեզուներում բառային միավորներից, օրինակ, բայերի բառարանային կամ ելակետային ձևերի նշանակումները տարբեր են հին լեզուների համապատասխան նշանակումներից: Այսպես, հունարենում, լատիներենում, գրաբարում և այլն *բերել* բայը, օրինակ, բառարանում տրված է սահմանական եղանակի ներկա ժամանակի առաջին դեմքի ձևով. հմմտ. հուն. *φερο* «բերում եմ», լատ. *ferō* «բերում եմ», հին հայերեն (գրաբար) *բերես* «բերում եմ» և այլն: Դա ունի այն նպատակը, որ բայի անկատարի հիմքի նշումով պարզ է դառնում նրա խոնարհման տիպը, որը կարևոր է ժամանակային ձևերի կազմության մեջ կերպային հակադրության առումով: Կար նաև այլ հանգամանք՝ հին լեզուներում բայի անորոշը եղանակային միավոր էր, ոչ թե դերբայական ձև:

4. Բառի գոյության կերպը (իդեալը) խոսքում հանդես գալն է: Խոսքի մեջ այն ունի կենտրոնական դիրք, մի տեսակ հավասարակշռում է խոսքի մյուս (աջ և ձախ) անմիջական բաղադրիչները՝ հնչույթը և նախադասությունը: Վերջիններս բառի հետ խոսքի սերման համաձույլներ (կոնստրուկտներ) են, որոնք, իրենց հերթին, առաջացել են, հնչյունի դեպքում՝ վանկերից, հնչաշարայիններից և այլն, նախադասության դեպքում՝ բառերի կապակցություններից, բառային աստիճանի շարքայիններից և այլն: Պատկերավոր ասած՝ բառերը հարաբերական հանգստի մեջ են խոսքից դուրս («քնած» են բառարանում), իսկ խոսքի մեջ անընդհատ գործառում են («աշխատում են»)՝ բառարանից դուրս):

Խոսքում բառերը դառնում են կենսունակ և գործառնապես ներունակ (ակտիվ). այս հատկանիշով է, որ բառերի ամբողջության՝ բառապաշարի մեջ առանձնացվում են գործածական և ոչ գործածական շերտեր, բնիկ և փոխառյալ մասեր և այլն՝ պայմանավորված բառապաշարի նկատմամբ հասարակական–հաղորդակցական մոտեցման հանգամանքով:

Այսպես, հաղորդակցական պայմանների փոփոխության հետևանքով լեզվի բառապաշարից մի կողմից՝ դուրս են մնում շատ բառեր, որովհետև նրանց իմաստները (սշանակումները) անհասկանալի են նոր ժամանակի մեջ. հմմտ. *արոր, րրեխ, ճրագ, խրճիթ* և այլն, մյուս կողմից՝ հայտնվում են նորերը, վերջիններիս բերած նոր իմաստի հասկանալի և կիրառելի լինելու պատճառով. հմմտ. *համակարգիչ, ուտիո, ինտերնետ, լանջ, բրիկետ* և այլն:

Խոսքից դուրս են մնում կամ հայտնվում են նաև այնպիսի բառեր, որոնք ժամանակին եղել են փոխառված այլ լեզուներից՝ փախառող լեզվում համարժեքի բացակայության բերումով, իսկ երբ լեզվի կանոնարկման պայմաններում գտնվում է համարժեքը, փոխառյալը անմիջապես դառնում է անգործածելի. հմմտ. *ժոռնալ - ամսագիր, տելեվիզոր - հեռուստացույց, ռեսպուբլիկա - հանրապետություն* և այլն: Նախորդի ճիշտ հակառակն է այն, որ սովյալ լեզվի բառը, գործածության «անհոգության» բերումով, իր տեղը զիջում է օտար բառին, որն այնքան էլ խրախուսելի չէ՝ խոսքի բնականության («հարազատության») տեսանկյունից. հմմտ. *խանութ - (սուպեր)մարկետ, գնումներ - շոպինգ* և այլն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 304-315:

Լրացուցիչ գրականություն:

Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 5-20:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 53-58:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 85-90:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 60-74:

Широков О.С., Введение в языкознание, М., 1985, էջ 241-252:

Թեմա 2. Բառակազմություն

Հիմնահարցեր: *Բառակազմության սահմանումը և խնդիրները: Բառի տեսակներն ըստ կազմության. համադրական և վերլուծական բաղադրություններ: Համադրական բաղադրությունների տեսակները. բարդ, ածացավոր և բարդ ածանցավոր բառեր: Վերլուծական բաղադրությունների տեսակները. հարադրական, կրկնական: Հապավական և համառոտական կազմություններ:*

1. Բառակազմությունը լեզվի ուսումնասիրության համեմատաբար նոր ճյուղ է: Այն ներկայումս բառագիտության կարևոր բաժիններից մեկն է: Բառակազմություն անվանումը, իբրև տերմին, ըմբռնվում է երկու իմաստով, մեկ՝ ուսմունք (գիտություն) բառի կառուցվածքի, կազմության բաղադրիչների բնույթի մասին, մյուս՝ նոր բառեր կազմելու կանոնների, միջոցների և եղանակների ամբողջություն:

Նրա տեղը լեզվի բաժիններում երկակի է՝ կապված լեզուների տիպաբանական առանձնահատկությունների հետ: Հայերենում, օրինակ, այն բառագիտության մեջ մտնող ենթաբաժին է, իսկ այն լեզուներում, որոնցում բառակազմությունն ունի նաև ձևակազմական (ձևաբանական) արժեք (օր.՝ ռուսերենում և այլն), ուշադրության առարկա է ըստ այդմ, այսինքն՝ համարվում է միջակա ենթաբաժին բառագիտության և ձևաբանության միջև:

Բառակազմությունը ուսումնասիրում է լեզուների բառային կազմը, նրանում կատարվող փոփոխությունները, վերջիններիս պայմանները, ինչպես նաև այն օրենքները և կանոնները, որոնց հիման վրա ստեղծվում են նոր բառեր: Ընդհանուր առմամբ այն միջանկյալ գիտակարգ է բառագիտության և ձևաբանության միջև, որովհետև տարբեր լեզուներում հանդես է գալիս կանն այս, կանն այն հատկությամբ, ինչպես նաև բառաձևային վերլուծության դեպքում հաշվի է առնվում հիշյալ բաժիններից միաժամանակ թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Ընդհանուր լեզվաբանության տեսանկյունից բառակազմությունը ըմբռնվում է երկու՝ լայն և նեղ իմաստով. նեղ իմաստով այն բառերի կազմության ոլորտ է, ելակետային բառերից կազմվում են նոր բառեր, լայն իմաստով՝ բառաձևերի կազմության ոլորտ, սկզբնական բառերից կան բառահիմքերից կազմվում են նոր բառեր. ուստի մի դեպքում՝

բառի (լեքսիկական՝ բառարանային միավորի), մյուս դեպքում՝ բառաձևի (ձևույթային-ձևաբանական միավորի) կազմություն¹:

Այդ գիտակարգի խնդիրներն են բառի տեսակների, կազմության հիմքերի, ինչպես նաև տիպերի, միջոցների և եղանակների ուսումնասիրությունը: Այդ խնդիրները լեզուներում հիմնականում նույնն են, ընդհանուր բոլոր լեզուների համար: Սակայն կան նաև տարբերություններ, որոնք բացատրվում են դրանց պատմությամբ, իրենցով խոսողների մտածողությամբ և այլն:

Այսպես, լեզուների մի մասին առավել բնորոշ է բառաբարդումը՝ պարզ բառով կամ բառահիմքով. հմմտ. գերմ.՝ *malmachen, gutmachen, widersagen* և այլն, մյուս մասին՝ ածանցումը, որը հաճախ ունենում է ձևաբանական արժեք. հմմտ. ռուս.՝ *читать, прочитать, считать, зачитать* և այլն. անգլերենում բառակազմական միջոց է, օրինակ, խոսքիմասային փոխանցումը. հմմտ. *ask – (to) ask, eat – (to) eat*, և այլն: Հայերենին առավել բնորոշ է բառաբարդումը՝ իբրև նոր բառի կազմության եղանակ. հմմտ. *հեռագիր, հեղազրայուն, հեռագրասյունաշար* և այլն:

2. Բառերը լեզուներում ներկայանում են իբրև համադրական և վերլուծական բաղադրություններ, ընդ որում դրանք ունենում են իրենց տարատեսակները, համադրականի դեպքում՝ բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր բառեր, վերլուծականի դեպքում՝ հարադրական, կրկնական և այլն:

Առաջին տիպի բաղադրությունները միանալով կարող են պահել իրենց ելակետային իմաստը, այլև միասնության մեջ ստանալ նոր իմաստ. հմմտ. *լուսամուր, հացթուխ* և այլն: Վերլուծական բաղադրությունները սովորաբար ինքնուրույն բառերի միացություն են բառական մեկ շեշտով, բաղադրիչների իմաստային ինքնուրույնության պահպանումով և այլն. օր.՝ *անց կենալ, մոր գալ, մեծ-մեծ, շար անգամ* և այլն:

Վերլուծականությունը բառակազմության մեջ ևս հանդիսանում է լեզուների տիպաբանական դասակարգման հատկանիշ: Այն, ինչպես

¹ Նկատի ունենալով այս հանգամանքը, այն է՝ բուն իմաստով բառակազմական և, այսպես կոչված, բառաձևակազմական տարբերությունը, դրանցից առաջինին անդրադառնում ենք բառակազմության (իմա՝ բառագիտության), իսկ երկրորդին՝ բառաձևակազմության (իմա՝ ձևաբանության) մեջ:

գիտենք, առավելապես քննվում է ձևաբանական մակարդակում, սակայն բառակազմական մակարդակում ևս ունի նշանակություն, մանավանդ այն լեզուներում (օր.՝ անգլերենում, ռուսերենում և այլն), որոնցում այդ երկու ենթամակարդակները ունեն շփման ավելի որոշակի եզրեր:

Հայերենի բառակազմությունը բավականին ավանդական է, բառակազմական գրեթե բոլոր միջոցները և եղանակները կային հին գրական հայերենում, այդ է ցույց տալիս ոչ միայն 5-րդ., այլև հետագա ժամանակների գրական հուշարձանների բառապաշարը: Այլ հարց է, որ հայ քերականական միտքը վաղ և ուշ միջնադարում նորմատիվ ուսուցման նպատակով չի անդրադառնում բառերի կազմության ուսմունքին, ինչպես որ լինում է, օրինակ, հոլովման, խոնարհման և այլն դեպքում, և դա հիմնված է Դիոնիսիոս Թրակացու քերականության դասագրքի հայերեն թարգմանության ավանդույթի վրա:

3. Համադրական բաղադրությունների կազմությունը համեմատաբար հատուկ է հայերենի, ռուսերենի և գերմաներենի բառապաշարին: Կազմության բուն հատկանիշը բանավոր խոսքում բառային մեկ շեշտ ունենալն է, որին գրավոր խոսքում միանում է կից գրությունը: Ըստ Է. Բ. Աղայանի՝ «համադրական են կոչվում այն բարդությունները, որոնց բաղադրիչները միմյանց միանալով մեկ բառ են կազմում և ստանում մեկ հիմնական բառային շեշտ»¹: Համադրությունը տեղի է ունենում յուրաքանչյուր դեպքում մեկ բաղադրիչին մեկ այլ բաղադրիչ միանալու սկզբունքով, դրանցից մեկը բաղադրող է, իսկ մյուսը՝ բաղադրվող, առաջինը այն հիմքն է, որին ավելանում է մեկ այլ բաղադրիչ՝ բառ կամ ածանց: Կառուցվածքային առումով համադրությունը ենթադրում է հաջորդական քայլեր, բաղադրվող հիմքի ճիշտ ընկալում և ընդունում և այլն. օր.՝ *տուն – տնարար – անտնարար* (< *ան-տնարար*, ոչ թե՛ *անտուն-արար*), *բայ – դերբայ – դերբայական* (< *դերբայ-ական*, ոչ թե՛ *դեր-բայական*) և այլն:

Հայերենում բառակազմական համադրությունը կատարվում է երկու ձևով՝ բառաբարդմամբ կամ ածանցմամբ. օր.՝ բարդմամբ՝ *գրատրախորակ*, *լուսամուտ*, *աստիճանավանդակ*, *դասասենյակ*, *ավ-*

¹ Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 245:

տումբենա և այլն, ածանցմամբ՝ *գրություն, լուսային, աստիճանավոր, դասական, մեքենայություն* և այլն: Ինչպես կարելի է նկատել, բարդ բառերի բաղադրիչները բառային (բառարանային) միավորներ են, իսկ ածանցավոր բառերինը՝ բառեր և ածանցներ: Այլ կերպ ասած՝ բարդությունը լինում է առնվազն երկու հիմնական ձևույթով, իսկ ածանցումը՝ մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթով:

ա) Բարդ բառերի կազմության ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում է բաղադրության հիմքին, որ լինում է պարզ կամ բաղադրյալ (հմմտ. *գրական* և *գրագիտություն* և այլն), հայերենի դեպքում շատ կարևոր մի երևույթի՝ հոդակապին (հմմտ. *պատշար* «պատշարող՝ որմնադիր») և *պատշար* «պատի շարվածք»), բաղադրական հիմքերի բնույթին՝ անփոփոխակապին և փոփոխակապին (հմմտ. *ձեռագործ* և *ձեռքսկայել, կենդանական* և *կենսական* և այլն), բարդության իմաստային կողմին՝ իսկական կամ անիսկական (հմմտ. *հացագործ* և *հացընկեր* և այլն), համադրման սերտության աստիճանին՝ կցական, կրկնական և այլն (հմմտ. *միամյակ* և *թրթույլ* և այլն), բաղադրիչների շարահյուսական կապին՝ համադասություն, ստորադասություն և այլն (հմմտ. *բանաստեղծ, տունտարեղ, շերամսպահ* և այլն):

բ) Ածանցավոր բառերի կազմության ժամանակ բուն ուշադրությունը դարձվում է հիմնական ձևույթին ավելացվող ածանցի տեսակին՝ սկզբում կամ վերջում դրվելու հանգամանքով. տարբերում են նախաածանցավոր և վերջածանցավոր բառեր (հմմտ. *գրական, գրավոր, գրություն* և *անգիր, կամավոր, կամային* և *չկամ* և այլն), բառին ավելացող ածանցի խոսքիմասային բնույթին՝ գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլն (հմմտ. *գրություն, գրական, գրել, գրաբար* և այլն), իմաստային սերտության աստիճանին (հմմտ. *-ի / -ենի՝ բալի- բալենի, -ում / -ություն՝ մոռացում- մոռացություն* այլն):

գ) Համադրական բարդության առանձին խումբ են բարդ ածանցավոր բառերը, որոնք կազմվում են երկու կերպ՝ բարդ բառի ածանցմամբ, օր.՝ *մայրաքաղաքային, մարդասիրություն, պատմագրություն* և այլն, ածանցավոր բառի բարդումով, օր.՝ *վերընթերցում, առերևույթ, թերթեննել* և այլն:

4. Հապավական և համառոտական բաղադրությունները ևս մտնում են բառակազմության մեջ: Երևույթը հին է այնքան, որքան լեզվի գրավոր վիճակի առաջ գալը: Հին հայերեն գրավոր հուշարձաններում (ձեռագիր, վիմագիր և այլն) բազմիցս հանդիպում են կրճատ գրության օրինակներ, որպիսով հետապնդվել է մեկ հիմնական նպատակ՝ գրության մեջ տեղ շահել՝ խնայել: Հայտնի է հոգևոր գրականության բնագրերում, օրինակ, պատվագրությունը (հմմտ. *սուրբ* – *սբ*, *տեր* – *տր* և այլն), որի դեպքում համառոտվող բառի վրա դրվում էր հատուկ նշան՝ գծիկ:

Հապավական բաղադրությունները տարածված են գրեթե բոլոր լեզուներում, ընդ որում հին ժամանակներում համեմատաբար ավելի պակաս չափով գործածական: Տարբերում են հապավման մի քանի տեսակ՝ տառային, վանկային, վանկաբառային և այլն, օր.՝ *բուհ* (= բարձրագույն ուսումնական հաստատություն), *ուսմասվար* (= ուսումնական մասի վարիչ), *քաղաքաժին* (= քաղաքային բաժին) և այլն:

Համառոտական կազմությունները լինում են ոչ թե բառի բաղադրիչների ընտրանքային սեղմումով, ինչպես հապավականի դեպքում է, այլ տվյալ բառի ուղղակի կրճատմամբ, ընդ որում կան միջակա, կան վերջին մասի հաշվին. օր.՝ *կգ* (= կիլոգրամ), *սմ* (= սանտիմետր), *վրկ*. (= վայրկյան), *կվր* (= կիլովատ):

Թեև հապավական բաղադրությունը առավելապես բնորոշ է լեզվի գրական տարբերակին, ապա համառոտականը՝ բանավորին, որն, իր հերթին, խոսքին հաղորդում է անմիջականություն, դիպուկություն, եթե ոչ նաև՝ վերաբերմունք. օր.՝ *Կարո* (= Կարապետ), *Օհանես* (Հանես, Ավան, Վանես և այլն) (= Հովհաննես), *Սահակ* (= Բասահակ), *Բարդուղ* (= Բարդուղիմեոս) և այլն:

Հիմնական գրականություն:

Միայն Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 437-450:

Լրացուցիչ գրականություն:

Միայն Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 207-309:

Головин, Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 95-98:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 145-155:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 120-126:

Թեմա 3. Իմաստաբանություն

Հիմնահարցեր: *Բառի իմաստի բնորոշումը: Բառի անվանողական դեր և առարկայական վերաբերություն: Բառի բնիմաստ և ներքին ձև: Բառի քերականական իմաստ: Բառի բազմիմաստություն: Բառերի ուղղակի և փոխաբերական իմաստներ. փոխաբերություն, փոխանունություն և համընթացում: Համանուններ, հոմանիշներ և հականիշներ: Զգացական (էմոցիոնալ) բառ (խոսք):*

1. Բառն ունի ոչ միայն ձև, այլև իմաստ, բառը ձևի և իմաստի միասնություն է: Ինչպես իրականության մեջ, մանավանդ հասարակական կյանքում ամեն մի իրողություն անընդհատ զարգացման ընթացքում է, այնպես էլ լեզուն: Վերջինիս զարգացումը տեղի է ունենում ոչ տարերայնորեն, այլ համակարգային ձևով, ինչպես որ իրականությունը՝ (իդեալի մեջ) բնականոն: Լեզուն ունի ներքին կարգավորման և վերակարգավորման հատկություն: Բառը, իբրև լեզվական միավոր, նույնպես հասարակական իրողություն է, պատմականորեն առաջացած իրողություն, որ նշանակում է, թե իրականության առաջընթացի հետ համահունչ լեզուն ևս, տվյալ դեպքում բառը, ունենում է իմաստային զարգացում, ենթարկվում է իմաստային տարբեր բնույթի տեղաշարժերի:

Բառի իմաստային կողմի ուսումնասիրությունը ենթադրում է մի քանի մասնավոր հարցերի պարզաբանում, որն էլ կազմում է լեզվի իմաստաբանությունը: Լեզվաբանության մեջ երբեմն բառագիտության այս բաժինը համարում են առանձին գիտաճյուղ, սակայն ավելի ընդունելի պետք է համարել բառագիտության մի բաժին լինելը, որովհետև իմաստաբանության մեջ են քննության առնվում բառի բովանդակության պլանի (իմաստի) հետ կապված երևույթները:

Ամենից առաջ անհրաժեշտ է տալ բառային իմաստի (բառիմաստի) բնորոշումը: Նախ ասենք, որ այս հարցում գրեթե մշտապես եղել է այն մոտեցումը, որ բառային իմաստը առանձնապես կապ ունի խոսքիմասային իմաստի հետ, ուստի տարբեր խոսքի մասերի պատկանող բառերին տրվել է տարբեր գնահատություն՝ կապված իմաստային ամբողջականության կամ ոչ ամբողջականության հետ: Այսպես, գոյականները, օրինակ, բնորոշվում են իբրև ամբողջական իմաստ ունեցող բառեր, իսկ, ասենք, ձայնարկությունները կամ եղանակա-

կան բառերը՝ ոչ ամբողջական իմաստ ունեցողներ: Դժվար չէ նկատել, որ բաժանումը հիմնված է բառի հասկացական այն հատկանիշի վրա, որ ամբողջական իմաստ ունեցող բառերը (գոյական, ածական և այլն) սերտ առնչություն ունեն իրականության առարկաների, երևույթների վերաբերյալ հասկացությունների անվանման հետ, որպիսի հատկությունից գուրկ է համարվում մյուս խոսքի մասերի մի որոշակի մասը (ձայնարկություններ և այլն):

Բառային իմաստի նման բաշխումը, ինչպես երևում է, հիմնված է տրամաբանական, քան թե լեզվաբանական կողմի վրա. այն, ինչ անվանում է իրականության առարկա, երևույթ և այլն, նշանակում հասկացությունների անվանում, բառիմաստ է, իսկ մյուսները՝ քերականական իմաստ: Նորմատիվ լեզվաբանության դեպքում, մանավանդ ուսուցման մեջ, կարելի է սահմանափակվել բավականին ավանդական դարձած այս մոտեցումով:

Եվ այսպես, բառը հնչակապակցություն է, որի արտաքին կողմը նրա ձևն է, իսկ ներքին կողմը՝ նրա իմաստը: Հասարակական գիտակցության մեջ բառի ձևը և իմաստը ամրագրված են իբրև պարաստի միավոր: Բառը իրականության առարկաների, երևույթների և նրանց հարաբերությունների վերաբերյալ հասկացությունների անվանումն է: «Բառի ձևը իր նյութականությամբ դառնում է հասկացությունների նյութական ձևը կամ հասկացությունների անվանումը»:

Սակայն բացի նյութական իմաստ արտահայտող բառերից կան այնպիսի բառեր, որոնք արտահայտում են քերականական իմաստ, նաև այլ կարգի իմաստ: Դրանք, այսպես կոչված, ոչ նյութական իմաստ ունեցող բառերն են: Ըստ այսմ, բառի իմաստը նրա նյութական, այլև ոչ նյութական (քերականական, խոսքիմասային) իմաստն է: Եվ համաձայն տրամաբանականի հիման վրա կատարվող լեզվաբանական սահմանման՝ բառեր են հաղորդակցական այն միավորները, որոնք արտահայտում են հիմնականում նյութական, մասամբ ոչ նյութական (այլ կարգի) իմաստ:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է ըստ բառերի իմաստների առանձնացնել մի քանի խումբ, որոնք արտահայտում են «1) հասկա-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 316:

ցություններ, 2) հասկացություններին հարաբերակցվող արտահայտչական (զգացական) իմաստներ, 3) քերականական իմաստներ, 4) խոսքամասային իմաստներ»¹: Եվ ըստ այդմ էլ լինում են՝ «*լիհինասար*» բառեր («հասկացությունը կամ հասկացություններին հարաբերակցվող արտահայտչական իմաստ» ունեցող՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, ձայնարկություն և եղանակական բառ), «*ձևական բառեր*» («քերականական իմաստներ» ունեցող՝ կապ և շաղկապ), «*բառիմասարից գուրկ բառեր*» (հատուկ անուններ և նմանաձայնություններ)²: Սակայն նկատենք, որ սույն առանձնացումը հիմնված է տարբեր կարգի հատկանիշների ընտրության վրա, որպիսով այն ստանում է ոչ հավասար բնութագիր: Եվ ստացվում է այնպես, որ առաջին խմբի բառերն են, որ առաջնային են՝ իբրև իրականության առարկաների, երևույթների, հատկանիշների և գործընթացների նշանակիչ միավորներ, իսկ մյուսները այդպիսին չեն, ուստի՝ ոչ առաջնային:

Այնուհետև, ըստ այդ դասակարգման էլ բառերի իմաստները բնորոշվում են մի դեպքում՝ *բառիմասար*, մյուս դեպքում՝ *բառային իմասար* տերմիններով (որպես այդպիսին՝ իրարից ոչ այնքան հեռու, կամ հակադիր). «*Բառիմասարը բառի իմաստն է, անկախ այն բանից, թե այդ իմաստը հասկացություն է, հասկացություններին հարաբերակցվող վերաբերմունք, զգացմունք, թե միայն որևէ քերականական իմաստ*», այլև՝ «*Բառային իմաստը այն բառիմաստն է կամ բառի այնպիսի իմաստը, որի հիմքը առարկայի, հարկանիշի և այլնի հասկացությունն է*» (ընդգծումները՝ հեղինակի – Վ. Հ.)³: Սահմանումների մեջ կրկնությունը և հարասությունը («ինքը իրենով բնորոշվելը»), անշուշտ, ակնհայտ են: Թերևս, առարկելի է այն, որ բառի իմաստի հետ կապված՝ թե՛ առանձնացումը և թե՛ դասակարգումը, այլև առանձին տեսակով և տերմինով դրա սահմանումը, իբրև մեկ ընդհանուր մոտեցում, ոչ այնքան լեզվաբանական է, որքան, այսպես կոչված, արտալեզվաբանական:

¹ Նույն տեղում, էջ 317:


² Նույն տեղում, էջ 318:

³ Նույն տեղում:

2. Բառն ունի անվանողական դեր, ինչպես նաև առարկայական վերաբերություն: Եթե առաջինը հասկացվում է լեզվի բառային բոլոր միավորներին, ապա երկրորդի դեպքում՝ դրանց մի մասին, որովհետև բառերն ընդհանուր առմամբ անվանում են ոչ հավասար ընդգրկմամբ վերացարկված հասկացություններ, մանավանդ եթե նրանց հիմքը իրականությունն է՝ իբրև նյութական կողմ (առարկաներ, երևույթներ, վերջիններիս հարաբերություններ և այլն):

Բառի անվանողական դերը իրականության արտացոլում հանդիսացող հասկացությունների անվանումն է, որը կատարվում է որոշակի վերացարկումով: Վերջինս մարդկային մտավոր (հոգեբնախոսական) ձեռքբերում է, որ կայացած է լեզվագործունեության փորձով տևական ժամանակի մեջ: Բառը ոչ թե կոնկրետ առարկայի, այլ այդ և նույնպիսի առարկաների էական, հիմնական հատկանիշների հիման վրա կազմված հասկացության անվանում է: Օրինակ՝ [խնձոր] առարկան բնորոշվում է ըստ տեսակի (խնձորի ծառատեսակով պայմանավորված), ըստ մեծության կամ համեղության, ըստ գույնի և հասունության, ինչպես նաև, ասե՛ք, այս կամ այն այգում, վաճառասեղանին, մեկի ձեռքին և այլն գտնվելու հանգամանքների, որոնք յուրովի կոնկրետ են, և այդ կոնկրետ հանգամանքների հիման վրա որոշակի վերացարկումով, այսինքն՝ վերանալով այդ կոնկրետ հանգամանքներից, որոնք տվյալ դեպքում հատկանիշներ են, կատարվում է ընդհանրացում, այն է՝ *խնձոր* նշանակում է «մրգի մի տեսակ, որ ունի ձև, համ, գույն, չափ, պիտանիություն և այլն», և ոչ թե որևէ կոնկրետ [խնձոր]: Ըստ այսմ վերջինիս՝ [խնձոր] առարկայի վերաբերյալ եղած հասկացության («իմաստի») նշանակիչը բառն է՝ *խնձոր* ձևով (տե՛ս գծապատկեր 6):

Գծապատկեր 6



Եվ ըստ այսմ՝ ճիշտ է այն սահմանումը, թե «*հասկացությունների անվանումը բառի անվանողական դերն է: Ամեն մի բառ, որ արտահայտում է հասկացություն, ունի նաև անվանողական դեր*» (ընդծումը՝ հեղինակի – Վ. Հ.)¹: Սակայն ոչ բոլոր բառերն են օժտված անվանողական դերով. կապերը և շաղկապները, օրինակ, չունեն անվանողական դեր, քանի որ արտահայտում են ոչ թե առարկաների, երևույթների, հատկանիշների հասկացություն (իմաստ), այլ քերականական իմաստ, այսինքն՝ զուրկ են անվանողական դերից: Այդպես նաև հատուկ անունները, որոնք, որքան էլ տարօրինակ լինի, համարվում են առարկայական դերից զուրկ բառեր, այդպես նաև ձայնարկությունները, եղանակական բառերը և այլն:

Այսպիսով, ամփոփենք, որ բառը արտահայտում է ոչ թե առարկան, երևույթները և այլն, այլ նրանց վերաբերյալ հասկացությունը (իմաստը), ըստ որի էլ առարկայի և բառի միջև ընկած է հասկացությունը (իմաստը), որը մի տեսակ «անջրպետ» է (ավելի ստույգ՝ «կապող օղակ») նրանց միջև: Այսպես, *խնձոր* բառը, որն ընդհանուր «*խնձոր*» հասկացության (իմաստի) անվանումն է *խ-ն-ձ-որ* հնչյունական կապակցությամբ (ձևով), խոսքի մեջ (օրինակ՝ *Խնձորը* օգտակար միրգ է: Արամը *խնձոր* է սիրում և այլն) այն հանդես է գալիս կոնկրետացումով՝ դառնալով կոնկրետ անվանում (*խնձոր*):

Լեզվական հաղորդակցումը, ըստ այսմ, այլ բան չէ, քան մտավոր (հոգեբնախոսական) գործունեություն, պատկերավոր ասած, «դեպի առաջ» (վերացարկման) և «դեպի հետ» (կոնկրետացման) փոխհարաբերություն, որը հաղորդակցական (մարդկային) բազմապլան գործունեություն է: Այս վերջին դեպքում էլ, ահա, տեղի է ունենում հասկացության անվանման առարկայական վերաբերության գործընթացը (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7

Վերացարկում. Առարկա ... > Հասկացություն ... > Բառ
 Կոնկրետացում. Առարկա < ... Հասկացություն < ... Բառ

¹ Նույն տեղում, էջ 319:

Իբրև եզրակացություն՝ ամեն մի բառ, որ ունի առարկայական դեր, ունի նաև, բնականաբար, առարկայական վերաբերություն:

3. Բառի բնիմաստը (հուն. ἔτυμον «ճիշտ որ, իրոք. ճիշտ») նրա ըստ հնարավորին նախնական իմաստն է, որ հետաքրքրում է լեզվաբանությանը լեզուների, մասնավորաբար բառապաշարի բաղադրիչ տարրերի՝ բառերի ծագման և հետագա փոփոխությունների, ինչպես նաև զարգացման գործընթացների առնչությամբ: Եվ լեզվաբանության այն բաժինը, որ սահմանափակվում է հարցերի նման շրջանակով, կոչվում է *սրուգաբանություն*: Վերջինս որոշ նկատառումներով լեզվաբանության մեջ համարվում է նաև առանձին ճյուղ, որովհետև նրա ուսումնասիրության առարկան են ոչ միայն բառային միավորների, այլև լեզվի մյուս բաղադրիչների (հնչույթ, ձևույթ, նախադասություն, նրանց առնչակից այլ միավորներ և այլն) ծագումնային վերլուծության հարցերը: Տվյալ դեպքում բառի բնիմաստի հարցով զբաղվում է բառի ստուգաբանությունը: Ուստի նախընտրելի է այն դիտարկել բառագիտության բաժնում:

Ստուգաբանությունը լեզվաբանության մեջ ունի հեղինակավոր տեղ, որովհետև լեզուների ցեղակցության, ծագումնային առնչությունների հարցերում այն մեծ դեր է ունեցել և շարունակում է ունենալ այդպիսին: Լեզվաբանության պատմությունից հայտնի է, որ ստուգաբանությունը անցել է զարգացման որոշակի ուղի, մշակվել են մեթոդներ՝ ներքին վերականգնման, արտաքին համեմատությունների և այլն, ձևակերպվել օրենքներ՝ հնչյունական, արմատի կառուցվածքի և այլն, որոնք չեն կորցրել իրենց կարևորությունը ներկայումս ևս:

Եթե բառերի ներկայիս իմաստները, կապված մտածողության արդի պայմանների հետ, այս կամ այն չափով հասկանալի են և կիրառելի, ապա դրանց նախնական իմաստների վերհանման համար անհրաժեշտ է ունենալ գիտական որոշակի փորձ՝ կապված լեզվի և իրենով խոսող ժողովրդի պատմության, և առհասարակ մարդկային հասարակության նախնական վիճակի վերաբերյալ պատկերացման, լեզվի ներքին հնարավորությունների՝ գրական լեզվի և նրա տարածքային տարբերակների (բարբառների) ինչ-որ չափով տիրապետման,

այլ լեզուների տվյալների հետ բառերի համեմատության ունակության հետ և այլն:

Հին (նաև մեռած) լեզուների գործնական իմացությունը կամ դրանց մասնագիտական տեղեկացվածությունը կարևոր են բառի բնիմաստի քննության դեպքում: Այսպես, հայ. *մարդ* բառը ստուգաբանորեն կապվում է ոչ միայն *մեռնել* բայի, այլև *մահ* արմատի հետ (հմմտ. լուսնի *մահիկ*), որպիսով համեմատելի բառերի՝ *մարդ*, *մեռնել* և *մահ* (*մահկանացու*) բառերի ամենաընդհանուր իմաստը պիտի եղած լինի «փոխվել, մի վիճակից մեկ այլ վիճակի անցնել»։ այս ամենաընդհանուր իմաստն է ընկած նաև լատ. *homo* «մարդ» (< *humus* «հող») բառի «հողեղեն» իմաստի հիմքում (հմմտ. նաև լատ. *morior* «մեռնել», *mors* «մահ», *mortalis* «մահկանացու» և այլն), ռուս. *смерть* «մահ», *месяц* «լուսին, մահիկ» և այլն, ուստի հնդեվրոպական լեզուներից առնվազն երեքում՝ լատիներենում, հայերենում և ռուսերենում «մարդ» հասկացությունը ավելի նախնական իմաստով նշանակել է «փոխվող, մի վիճակից մեկ այլ վիճակի դարձող» (հմմտ. «Հող էիր և անդրէն ի հող դարձցիս» - Հող էիր և նորից հող ես դառնալու՝ հող կդառնաս):

Բառերի բնիմաստի և նոր իմաստի միջև, ժամանակի ընթացքում այս կամ այն չափով տեղի է ունենում փոփոխություն, որ սովորաբար կոչվում է իմաստային մթագնում: Վերջինս կատարվում է ոչ այնքան համակարգված, որքան ամեն դեպքում լեզվի վրա ազդող արտաքին ինչ-ինչ գործոնների հետևանքով: Մթագնումը լինում է ամբողջովին և մասնակի. վերը բերված լատ. *homo* «մարդ» (< *humus* «հող») բառի «հողեղեն» իմաստի դեպքում, թերևս, առկա է ամբողջական մթագնում, իսկ *morior* «մեռնել», *mors* «մահ», *mortalis* «մահկանացու» բառերի դեպքում, հավանաբար, մասնակի մթագնում և այլն:

Բառի բնիմաստի հետ սերտ առնչություն ունի ներքին ձև հասկացությունը: Ներքին ձևը բաղադրյալ բառի բաղադրիչների առանձին իմաստների ամբողջությունն է, որով առաջ է գալիս նրա բառիմաստը: Սովորաբար ներքին ձև հասկացությունը տարածվում է բաղադրյալ (բարդ) բառերի վրա: Օրինակ՝ *գրադախարակ* բառը նշանակում է

«գրենական պիտույք՝ հարմարանք, որի վրա գրում են», որը նրա բառիմաստն է, բաղադրված է *գիր* և *փախարակ* բառերից, որոնք ունեն իրենց ինքնուրույն իմաստները, և վեջիններս էլ *գրափախարակ* բարդության այն իմաստային բաղադրիչներն են, որ սերում են *գրափախարակ* բառի իմաստը, և ըստ այդմ *գիր* և *փախարակ* բառերի իմաստները հանդիսանում են *գրափախարակ* բառի ներքին ձևը: Սա ընդհանուր մեխանիզմ է ամեն մի լեզվի բաղադրյալ բառերի բաղադրիչների ինքնակա բնութագրման համար:

Բնիմաստի և ներքին ձևի միջև կան ընդհանուր և տարբերիչ գծեր, որոնք, իբրև բառի իմաստային փոփոխության չափանիշներ, գործում են բառի մեջ տեղի ունեցած իմաստային անցումների համեմատության և վերականգնման (բնիմաստի ոլորտ), այլև իմաստային հիմքերի բացահայտման և հաստատման (ներքին ձևի ոլորտ) դեպքում:

Միշտ չէ, որ առարկայի հասկացական ճանաչումը անվանվում է օբյեկտիվորեն, այսինքն՝ այնպես, ինչպես որ այն գոյություն ունի իրականության մեջ: Բառի առարկայական վերաբերությունը լինում է տարբեր, որ կախված է խոսողի ընկալման տարբերությունից: Միևնույն առարկան մի դեպքում առաջացնում է դրական, մեկ այլ դեպքում ոչ դրական (բացասական) զգացում, վերաբերմունք: Նույնիսկ բառի իմաստի օբյեկտիվ գոյությունը տարբեր կերպ է ընկալվում, ստանում է սուբյեկտիվ իմաստ: Դա լավ երևում է միևնույն առարկայի անվանման նկատմամբ տարբեր մոտեցումներից, կամ նույն առարկայի գնահատման մեջ տարբեր վերաբերմունքից: Օրինակ՝ *խեղճ* բառը մեկի մոտ արթնացնում է «կարեկցանք», մյուսի մոտ՝ «արգահատանք», *համեսուր* բառը մի դեպքում ընկալվում է որպես «խոնարհ», իսկ մեկ այլ դեպքում՝ «խեղճ», *խմիչք* բառը գինեմոլի համար նշանակում է «հրաշք», ժուժկալի համար՝ «ըմպելիք» և այլն:

Այս սուբյեկտիվ վերաբերմունքը կարող է վերաճել ընդհանուր՝ հասարակության ընկալմամբ սուբյեկտիվի, երբ տվյալ բառը համընդհանուր ճանաչում է ստանում՝ կամ իբրև դրական, կամ իբրև ոչ դրական (բացասական) հատկանիշի կրող: Ընդ որում՝ դրական կամ բա-

ցասական, այլն օրյեկտիվ կամ սուրյեկտիվ որակումը ենթադրում է անցման զուգամիտում (կոնվերգենցիա) կամ տարամիտում (դիվերգենցիա). օրինակ՝ ընդհանուր դրականը կարող է ընկալվել իբրև սուրյեկտիվ դրական, այն է՝ բացասական (*բարեկիրթ՝ «ձևամոլ»*), ընդհանուր բացասականը՝ սուրյեկտիվ բացասական, այսինքն՝ դրական (*սքախոս՝ «ճարպիկ»*) և այլն:

Բառիմաստի սուրյեկտիվ վերաբերմունքն ունի ոչ միայն պատմական, ընդհանուր ճանաչողական հիմքեր, այլև գեղագիտական-գնահատողական ելքեր: Ցանկացած խոսք, մանավանդ գրավոր, կարող է ընկալվել տարբեր վերաբերմունքով. Շեքսպիրը հանճարեղ է ոչ բոլոր անհատների համար՝ ընթերցողի, ուսումնասիրողի, գրագետ մարդու, գրական արժեքներից հեռու անհատի և այլն: Այվազովսկու «Նոյն իջնում է Արարատից» նկարը ոչ բոլորն են օրյեկտիվ գնահատում, շատ անհատներ, թերևս, չեն էլ ցանկանում երկրորդ անգամ տեսնել: Թումանյանի «Գիքորը» հրաշալի պատմվածք է առևտրականի համար՝ ի դեմս բազազ Արտեմի, սրտանմլիկ՝ պատանի ընթերցողի համար, ցավալի և անարդար՝ չափահասի համար և այլն: Եվ ըստ այդմ՝ բառի սուրյեկտիվ իմաստը ևս ունի ընդհանուր իմացական հիմքեր, որոնք անդրադառնում են անհատի վերաբերմունքի վրա:

4. Քերականական իմաստը բառի՝ ընդհանուր առմամբ ձևաբանական, մասամբ նաև շարահյուսական կարգային (կատեգորիալ) իմաստն է, որ արտահայտվում է խոսքիմասային տարբերակվածության, այլև դեմքի, թվի, հոլովի և այլ կարգերի միջոցով: Բառի քերականական իմաստը նրա խոսքիմասային իմաստն է, որ երևան է գալիս տարարժեքության արդյունքում: Օրինակ՝ *սրիկա* բառը, որ ածական է, ցույց է տալիս առարկայի հատկանիշ («ինչպիսին»), իսկ նույն բառից կազմված *սրիկայություն* գոյականը՝ հատկանիշի հասկացություն («ինչպիսին լինելը»), սակայն առարկայացած ձևով (իբրև առարկա), այսինքն՝ հատկանիշն այս դեպքում ինքնին գոյություն ունեցող առարկա է նշանակում, իսկ երբ *սրիկա* բառից ունենում ենք *սրիկայորեն* մակբայը, այդ դեպքում այն ցույց է տալիս հատկանիշի հատկա-

նիշ, և ստացվում է, որ առարկայացում, հատկանշում, հատկանիշի հատկանշում իմաստները քերականական իմաստներ են, որոնք կոնկրետ կոչվում են խոսքիմասային իմաստներ:

Մյուս կողմից, քերականական իմաստը բառի, այսպես կոչված, ներակա (ինքնակա) իմաստն է, որովհետև բառը ներկայացնում է նրա ձևաբանական կարգայնացումը՝ իբրև բառի բովանդակության պլան (իմաստ): Օրինակ՝ հայերենում անուն խոսքիմասային միավորներն ունեն թիվ, հոլով, առկայացում (այլ լեզուներում՝ նաև սեռ և այլն), բայերն ունեն սեռ, ժամանակ, դեմք, թիվ, կերպ և այլն: Մակայն նկատված է, որ ոչ բոլոր բառերն ունեն քերականական իմաստ. դրանից, ավանդական մոտեցմամբ, գուրկ են դիտվում նմանաձայնությունները և ձայնարկությունները¹:

Հստ է. Բ. Աղայանի՝ ժամանակակից հայերենի բառի բովանդակության պլանի (իմաստի) մեջ են ներառվում քերականական իմաստների հետևյալ տեսակները. 1) խոսքիմասային իմաստ, որ հասկացություններն օժտում է առարկայություն (առարկայացում. ռուս.՝ *субстантивация*), որակայնություն (հատկանշում, ռուս.՝ *качественность*), գործընթացայնություն (*процессуальность*) կարգերով (կատեգորիաներով). այդ իմաստն ունեն գոյականը, ածականը, թվականը, բայը և մակբայը. «դերանուններն ունեն միայն խոսքամասային իմաստ՝ առանց կոնկրետ առարկաների (հատկանիշների) և այլն»²: 2) Մասնավոր քերականական իմաստ. այդ իմաստն են արտահայտում խոսքի մասերից՝ կապերն ու շաղկապները, նույնպիսի քերականական իմաստներ են ձևաբանական կարգերից՝ դեմքի և թվի իմաստները և այլն:

Հարկ ենք համարում նշել, որ սույն դասակարգումը բավականին ավանդական է, անմիջական առնչություն ունի խոսքի մասերի՝ հնից եկող բաժանման հետ, որին ինքնաբերական ձևով ներառվում են նաև ձևաբանական կարգային իմաստները՝ ստեղծելով անհամատեղելիության տպավորություն: Այսուհանդերձ, նորմատիվ ուսուցման

¹ Հմմտ. է. Բ. Աղայան, նշվ, աշխ., էջ 334:

² Նույն տեղում:

մեջ ընդունելի է այդ դասակարգումը, թեկուզ որոշ վերապահու-
թյամբ:

5. Բառի բազմիմաստությունը նրա բովանդակության պլանում ի
հայտ եկող իմաստների ամբողջությունն է: Այն առաջին հայացքից
քանակային երևույթ է, սակայն իր խորքում ունի լեզվի հարստության
հիմունք: Խոսքում բառերը գործածվում են այս կամ այն իմաստով՝
կոնկրետ, իսկ լեզվում իմաստների բազմությունը ստեղծում է տար-
բերակված գործածության լայն հնարավորություն: Որքան բազմիմաստ
է բառը, նույնքան մեծանում է նրա գործածության տարբերակումը:

Կան բառեր, որոնք ունեն միայն մեկ իմաստ (առնվազն՝ մեկ), քա-
նի որ գոյություն չունի բառ առանց իմաստի, վերջինս բառի ձևի հետ
միասին կազմում է նրա ձևաիմաստային ամբողջությունը: Կան նաև
բառեր, որոնք ունենում են մեկից ավելի իմաստներ, և դա պայմանա-
վորված է նրանով, թե այն խոսքում ինչ դրսևորումներ ունի, ինչ նրբե-
րանգներով է հանդես գալիս:

Ըստ այդմ՝ ընդունված դասակարգման համաձայն բառերը լի-
նում են երկու տեսակ՝ մենիմաստ և բազմիմաստ: Միայն մեկ իմաստ
ունեցող բառերը կոչվում են մենիմաստ բառեր. հմմտ. *նավթավառ,
գրակալ, մանրավաճառ, գեղաձի, հնչարատ, փառադարան* և այլն:
Սովորաբար մենիմաստ են լինում նորակազմ բառերը, այսինքն՝ բա-
ռեր, որոնք ժամանակի սեղմ հատվածում են հասցրել գործածվել, ինչ-
պես նաև դիպվածային բառերը, տերմինները և տերմինային անվա-
նումները և այլն. հմմտ. *կայարանաշենք, մայթեզրային, մերձիմաստ,
գրափախարակամերձ, գոլորշախեղդ, հնչադասություն* և այլն:

Բազմիմաստ են այն բառերը, որոնք ունեն մեկից ավելի իմաստ-
ներ, բանավոր կամ գրավոր խոսքում հանդես են գալիս իմաստային
բազմազանությամբ, այլև ոճական տարբերակվածությամբ: Սովորա-
բար ընդունված է ասել, թե գրավոր հարուստ ավանդույթ ունեցող
լեզուների (հայերեն, ռուսերեն և այլն) բառային կազմի հիմնական
մասին բնորոշ է բառային բազմիմաստությունը: Այդ իրողությունը,
բնականաբար, պայմանավորված է տվյալ հանրության գիտության,
մշակույթի բազմապլան ոլորտների արտացոլմամբ՝ գրավոր խոս-
քում, որպիսով այն անցնում է ընդհանուր լեզվին:

Հայերենում, օրինակ, կան հնդեվրոպական ընդհանրության շրջանից եկող բառեր (ազգակցության՝ *հայր, մայր, եղբայր, կին* և այլն, բնության երևույթների և ֆիզիկական աշխարհի՝ *փարի, լուսին, հող, ջուր, գետ, ամառ, ձմեռ* և այլն, մարմնի մասերի անվանումների՝ *ուրք, ձեռք, սիրտ, ողն, արյուն* և այլն) և այլն, որոնք մեծ մասամբ գործածվում են իմաստային տարբեր երանգներով: Ժամանակակից հայերենի բառապաշարի մեջ մեծ տեղ ունի բազմիմաստ բառերի գործածությունը:

6. Բառերի ուղղակի և փոխաբերական իմաստները տարբերվում են ըստ խոսքի մեջ նրանց գործածության: Բառի սկզբնական, առաջնային իմաստը նրա ուղղակի իմաստն է: Օրինակ՝ *ծառ* բառը, որ նշանակում է «վերգետնյա բնավոր սաղարթաշատ բույս» գործածվում է միայն այդ իմաստով: Ընդունված է ասել, որ «*բառի հիմնական, առաջնային իմաստը կոչվում է ուղղակի իմաստ*» (ընդգգծումը հեղինակի- Վ. Հ.):

Բառի բուն կամ առաջնային իմաստի առանձնացումը կատարվում է ոչ թե՛ նրա պատմության, վերջինիս ընթացքում կրած փոփոխությունների բացառմամբ հիմնական իմաստի մատնանշումով, այլ լեզվի համաժամանակյա կտրվածքում նրա գործածությամբ արտահայտված իմաստով: Ընդ որում լեզվի տարբեր փուլերում նրա բուն կամ հիմնական իմաստը կարող է լինել տարբեր: Օրինակ՝ հին հայերենում *պահեստ* բառի ուղղակի կամ առաջնային իմաստն էր «խնայում. պահուստ», իսկ ժամանակակից հայերենում բառը նշանակում է «շտեմարան»:

Ամեն մի լեզվի բառապաշարի իմաստաբանության մի առանձին բաժին է բառերի ուղղակի և ոչ ուղղակի (փոխաբերական, փոխանվանական և այլն) իմաստների հնարավոր փոխհարաբերության պարզաբանումը:

Հին հայերենում (նույնիսկ նախահայերենում) *թանգարան* բառի նախնական՝ ուղղակի իմաստն էր «պահեստ, արժեքավոր, պիտանի իրերը և այլն պահելու տեղ», իսկ ժամանակակից հայերենում՝ «պատ-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 336:

մանշակութային արժեքների հավաքման, դասդասման և ցուցադրման, նաև ուսումնասիրման վայր, գիտահետազոտական հիմնարկություն»: Այսպես, նախկինում *սարսապ* բառի ուղղակի իմաստն էր «դատարկ», իսկ այժմ նշանակում է «անզբաղ», թեև նոր գրականում ևս հանդիպում է բառի «դատարկ» իմաստով գործածությունը, արդեն որպես իմաստային հնաբանություն («Որ *սարսապը* լցվի լացով») և այլն:

Երբ բառն իր ուղղակի իմաստից դուրս, ընդ որում հիմնականում այդ իմաստի հիման վրա նաև մեկ այլ իմաստով է գործածվում, այդ դեպքում ունենում ենք բառի փոխաբերական իմաստ. հմնտ. *սուլել* («Քամին սուլում է»), *ձայն փալ* («Հավքերն իրար ձայն տվին»), *սուաջ գնալ* («Օրն առաջ է գնացել»), *գոռալ* («Ամպը գոռում է»), *ծափ փալ* («Այժմ էլ բռնի վերվերի, / Քամին *ծափ փալ*, դու պարի») և այլն: Եվ առհասարակ, մի երևույթին բնորոշ հատկանիշը փոխարինաբար գործածվում է մեկ այլ երևույթի դեպքում (բերված օրինակներում մարդուց անցում բնության տարերքին): Ըստ այսմ կարելի է ասել, որ բառի մեկ իմաստի փոխարեն գործածված մի այլ իմաստը կոչվում է փոխաբերական իմաստ:

Փոխաբերությունը լեզվի բնորոշ գծերից մեկն է, այն ունի այլասացական երանգներ, որոնք կարևոր են խոսքի ոճական հագեցվածության տեսանկյունից: Միշտ չէ, որ խոսքը լինում է ուղղակի, և ըստ այդմ՝ միապաղաղ և պարզունակ: Փոխաբերությունը գեղագիտական հագեցումն է յուրաքանչյուր խոսքի՝ ասել մի բան, այլ բան հասկանալու համար. սա խոսքի ճկունության վկայություն է: Փոխաբերություն է այն, երբ տվյալ բառը գործածվում է մեկ այլ բառի փոխարեն ոչ թե իր բուն իմաստով, այլ փոխարինվող բառի իմաստով, այդ դեպքում ստացվում է բառի փոխաբերական գործածություն կամ փոխաբերություն: Վերջինս մեծ մասամբ լինում է նմանության հատկանիշով. հմնտ. Հրդեհն *այրում էր* իր *փեշերը*, որտեղ *այրել փեշերը* նշանակում է «այրել ամեն ինչ, որ իրեն մոտ է». մոտիկությունը հատկանիշ է *փեշերի* նմանության:

Տարբերում են փոխաբերության մի քանի տեսակ:

ա. *Անհատական* (հեղինակային կամ ստեղծագործական), որ բնորոշ է գեղարվեստական խոսքի անհատների լեզվին, և որը չունի այն լայն տարածումը, իսկ ունենալու դեպքում էլ, միևնույն է, հայտնի է նրա հեղինակային պատկանելությունը. հմմտ. «Ես վեր ելա ոգի առած զարկի *սրտիս լարերին*», «Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց / Ժայռերը խորունկ *նոթերը կիրած*»: Հեղինակային այսպիսի օրինակները գեղարվեստական (թերևս նաև այլ բնույթի) խոսքի ուժով կարող են ընդհանրանալ և դառնալ լայն գործածության փոխաբերություններ:

բ. *Ընդհանրական* (գործուն պատկերավոր), որոնք նույնպես գեղարվեստական պատկերավորման խոսքի շնորհիվ ինչ-որ չափով ընդհանուր են դառնում տվյալ լեզվով հաղորդակցվող հանրության համար. հմմտ. *հոնքերը կիրելի* («Փիսիկը նստել մի մութ անկյունում, / Հոնքերը կիտել ու լաց է լինում»), այսպես նաև՝ *հոգու աչքեր, սրտի լեզու* («Սրտիս լեզուն ինչպե՛ս փակեմ...») և այլն:

գ. *Ավարտուն* (կամ մարած), երբ տվյալ փոխաբերությունը գրեթե չի գործածվում, կամ դուրս է եկել գործածությունից, որ թերևս ավելի բնորոշ է բարբառային, ժողովրդական խոսքին, որ գրականում գրեթե չի հանդիպում. հմմտ. Եզոպոսյան *լեզու*, Հուդայի *համբույր*, Պրոկոփոստյան *մահիճ* և այլն:

Փոխաբերությունները, լեզվական միավորի բնույթով պայմանավորված, լինում են *բառային* (մակերեսային) և *կապակցական* (խորքային), առաջինը, բնականաբար, բառի, երկրորդը՝ բառակապակցության սահմաններում: Բառային փոխաբերությունը հիմնվում է փոխաբերվող և փոխաբերված բառերի ցույց տված առարկաների նմանության վրա. հմմտ. *ոսկի ձեռքեր - հմուտ* («կորովի, հասու») ձեռքեր, *խոզ մարդ - փնթի* («արտաքինը անմաքուր») մարդ և այլն: Կապակցական փոխաբերությունը սովորաբար հանդես է գալիս իբրև փոխաբերվող միավորների մի ամբողջություն, որում փոխաբերող և փոխաբերվող բառերը կապակցորեն պայմանավորված են մեկը մյուսով. հմմտ. հոգու և մարմնի *ներդաշնակություն* («միասնություն՝ նույնություն»), մտքի և խելքի *հանդես* («ցուցադրում՝ դրսևորում») և այլն:

Փոխանունությունը բառի՝ մեկ այլ բառի փոխարեն գործածություն է տվյալ կապակցության մեջ, մանավանդ ժողովրդական խոսքում: Օրինակ՝ Երեք *կիլոգրամ խնձոր* գնեց – Երեք *կիլոգրամ* գնեց. փոխանվանական տարբերակում *կիլոգրամ* բառը հանդես է եկել իր և *խնձոր* բառի փոխարեն, փոխանվանաբար: Կապակցության մեջ մեկ անդամի իմաստը մյուսով փոխարինելը դառնում է առարկաների միջև հիմունք զանազան հարաբերությունների:

Այս երևույթը լեզուներում լայնորեն ուսումնասիրված է: Հայերենում նույնպես տարբերում են փոխանունության մի շարք տեսակներ:

ա) Պարունակողը՝ պարունակչալի փոխարեն. մեկ *դույլ* բերել (< մեկ *դույլ ջուր* բերել), *չորս էջ* գրել (< *չորս էջ շարադրություն* գրել), *հինգ պարկ* տեղափոխել (< *հինգ պարկ ցորեն* տեղափոխել):

բ) Հեղինակը՝ ստեղծագործության փոխարեն. *Տիգրան Մանսուրյան* լսել (< *երաժշտություն* լսել), *Թումանյան* կարդալ (< *սրեղծագործություններ* կարդալ):

գ) Գործողությունը՝ արդյունքի փոխարեն. Որմնադիրները լավ *գործ* են արել (< լավ են *պատերը* շարել). Խաղողագործները մեծ *աշխատանք* են արել (< լավ *բերք* են ստացել):

դ) Նյութը՝ նրանից պատրաստվածի փոխարեն. Պատերից *պատարաներ* են կախված (< *նկարներ* են կախված): *Մակարոն* են ուտում (< փլավ են ուտում):

ե) Ժամանակը՝ այդ ընթացքում կատարված գործողության, երևույթի փոխարեն. *Երեկոն* հետաքրքիր էր (< *միջոցառում*ը հետաքրքիր էր), Երեխաները մեկ *ժամ* պակաս են արել (< մեկ ժամի *դաս* պակաս):

զ) Հատկանիշը՝ առարկայի փոխարեն. *Սպիտակը* նախընտրելի է (< Սպիտակ *վերնաշապիկը* նախընտրելի է):

է) Պատկանելություն ցույց տվողը՝ պատկանչալի փոխարեն. Արամի վերարկուն մոխրագույն է, *քոնը*՝ շագանակագույն (< *քո վերարկուն*):

ը) Քանակական թվականները՝ չափի միավորների, նրանց առնչվող առարկաների փոխարեն. Տասնհինգ օրից *տասն* էր մնալու

գյուղում (< *հինգր* օրը չէր մնալու): Արամը *երկու կիլոգրամ* գնեց (< *երկու կիլոգրամ խնձոր* գնեց):

թ) Դասական թվականները հաջորդաբար կրկնվող առարկաների փոխարեն. Առաջինը դասը գիտեր, իսկ երկրորդը՝ ոչ (< *Արամը* դասը գիտեր, իսկ *Արսենը*՝ ոչ) և այլն:

Փոխանունության այս տեսակներն ունեն տրամաբանական հիմքեր, ընդհանուր են գրեթե բոլոր լեզուների համար, և իբրև դատողության դրսևորում՝ լեզվական են, հանդիսանում են, ընդհանուր ձևակերպումով, ոչ այլ ինչ, քան լրացման և լրացյալի հարաբերություն:

Լեզվաբանության մեջ ընդունված է տարբերել փոխանունությունների երկու տեսակ՝ մասնակի (խոսքային) և ընդհանրական (լեզվական): Առաջինն այն է, որ փոխանունությունը տեղի է ունենում հասկանալի նյութի շուրջ եղած խոսքի համատեքստում: Օրինակ՝ երբ խոսքը շուկայում կատարված *խնձոր* գնելու մասին է, միանգամայն հասկանալի է «Երկու *կիլոգրամ* գնեցի» ասվածը: Իսկ խանութում առևտուր անելիս, երբ ասում են, թե՛ «*Մանրը* վերադարձրեք», դա հասկանալի է բոլորին (նաև վաճառողին), որ պիտի մնացած *մանր դրամը* վերադարձնի և այլն: Օրինակներից առաջինը խոսքային փոխանունություն է, իսկ երկրորդը՝ լեզվական:

Համըմբռնումը փոխարինման հատկանիշով նման է փոխանունությանը, սակայն ունի այն էական տարբերությունը, որ փոխարինողը և փոխարինյալը մեկ ըմբռնման՝ հասկանալիության մեջ են: Օրինակ՝ Այդ *մակարույծները* կերան խեղճ ժողովրդին: Այս նախադասության մեջ *մակարույծ* բառը դրված է «(ուրիշի հաշվին ապրող) *մարդ*» բառի փոխարեն:

Սակայն միշտ չէ, որ հստակ կարելի է որոշել համըմբռնման և փոխանունության տարբերությունը. «Երևանն այն տարիներին ոտքի էր ելել» նախադասությունը կարելի է հասկանալ երկու կերպ, փոխանունություն՝ Երևանի *ամբողջ բնակչությունը* (պարունակողի և պարունակյալի հարաբերություն), համըմբռնում՝ *Երևանը* (ամբողջովին) (հատուկ անունը հասարակ անվան իմաստով):

Տարբերում են համըմբռնման մի քանի տեսակ. ա) մասի փոխարինումը՝ ամբողջին. Լսարանում կա քսանհինգ *հոգի* (*հոգի* բառը՝ *ուսանող* բառի փոխարեն). Շենքում բնակվում է հարյուր *շունչ* (*շունչ* բառը *անձ*՝ *մարդ* բառի փոխարեն) և այլն: բ) Առանձինը (եզակին)՝ հավաքական ամբողջի (հոգնակիի) իմաստով. *վրացին* մեզ հարևան է (*վրացի* բառը *ժողովուրդ* բառի փոխարեն). «Հիմի դժարեց բաներս, երբ *թաթարն* եղավ թագավոր» («*թաթար* բառը *ժողովուրդ* բառի փոխարեն»):

գ) Հատուկ անունը հասարակ անվան իմաստով. *Համլետ* («վեհանձնություն») լինել, *Քաջ Նազար* («վախկոտություն»). «*Լենկթեմուրն* եկավ, հուր ու սուր եկավ» (Թումանյան) և այլն:

7. Լեզուներում լինում են դեպքեր, երբ բառերի ձևի և իմաստի (արտահայտության և բովանդակության պլանների) միջև նկատվում է մի տեսակ անհամամասնություն, որը և սահմանվում է հարաբերակից կողմերից մեկի կամ մյուսի հիման վրա: Հին աշխարհի քերականական մտքի արդյունք է բառերի ձևային և իմաստային տարբերությունները կամ համընկումները սահմանել այս կամ այն կողմի գերակայությամբ կամ բացակայությամբ:

Այսպես, լեզուներում առանձնացվում են համանուններ, հոմանիշներ և հականիշներ, որոնք իմաստաբանական դաշտում, կարելի է ասել, մեկ ամբողջական տեսքով հանդես եկող երևույթներ են: Բառագիտական այս երևույթները բնորոշ են շատ լեզուների, առաջին հերթին՝ հնդեվրոպական հին և նոր լեզուներին: Դրանց առաջացման հիմունքը երևույթների վերաբերյալ հասկացությունների նշանակման տարբերություններն են՝ պայմանավորված ոչ միայն օբյեկտիվ (ընդհանուր՝ լեզվական), այլև սուբյեկտիվ (մասնավոր՝ խոսքային) հանգամանքներով:

Նույն ձևն ունեցող, սակայն իմաստով տարբեր բառերը, որ անվանում են առարկայի, հատկանիշի (անունների) և հարաբերությունների հասկացություն, կոչվում են *համանուն բառեր* (անգլ. homonyms), օրինակ՝ *որբ* «ծնողագուրկ» և *որբ* «մի թոչնի անուն», *կուղթ* (*կղութ*) «մետաղյա աման» և *կուղթ* «հանգույց, կապ», *կունդ* (բրբռ.) «կոճղ»,

կունդ «քաջ» և *կունդ* «ճաղատ», *կուշտ* (բրբռ.) «կողմ» և *կուշտ* «կե-
րած-հազեցած», *որթ* (բրբռ.) «հորթ», *որթ* «խաղողի տունկ» և *որթ*
«կողով, կթոց» և այլն:

Ինչպես կարելի է նկատել, համանուններն ունենում են առնվազն
երկու և երկուսից ավելի բաղադրիչներով առնչակցություն, այդ դեպ-
քում տարբերում են կամ երկանդամ, կամ բազմանդամ հակադրու-
թյան համանուններ:

Համանուն բառերի ձևախմբաստային առնչությունը կոչվում է հա-
մանունություն: Այն առաջ է գալիս լեզվի պատմության ընթացքում,
բառերի իմաստային փոփոխությունների հետևանքով: Այդ փոփո-
խությունները հանգեցնում են բառերի իմաստային մոտեցման և/կամ
բևեռացման: Ըստ այդմ էլ լեզվի համաժամանակյա կտրվածքում
տարբերում են համանունների սերտության տարբեր աստիճաններ:

Համանունների առաջացման բուն աղբյուրը բառերի բազմիմաս-
տության տարանջատումն է առանձին իմաստների, որոնք էլ վերջա-
պես հանգեցնում են համանունության. ըստ Գ. Բ. Ջահուկյանի դի-
պոլսի բնորոշման՝ «բառի բազմիմաստության իդեալը համանունու-
թյունն է»: Հմմտ. հին հայ. (գրաբ.) *ակն* «աչք» (լատ. *oculus* «աչք») բառի
իմաստային լայնացման ճանապարհով, ընդ որում ամենա-
նախնական իմաստը՝ «հետևել, նայել», հետագայինը՝ «կլորություն,
միջուկ, մի բանի՝ լույսի ընկալման կամ առաջ բերման սկիզբ» և այլն
իմաստների հեռացմամբ ժամանակակից հայերենում ունենք *ակ*
«անիվ. հմմտ. արեգակ», *ակ* «ակունք. հմմտ. *Ակունք* (տեղանուն)»,
ակ «թանկարժեք քար. հմմտ. *ակնեղեն*» և այլն:

Նման բառերը սովորաբար առանձնանում են մի քանի հիմուն-
քով, որոնց արդյունքում ունենում ենք տարբեր կարգի համանուններ,
հնչյունափոխությամբ՝ *սեր* «սերուցք», *սեր* (< *սեր*) «զգացմունք», փո-
խառության ճանապարհով՝ *մարտ* «կռիվ» - *մարտ* «ամսանուն»
(հուն. *μάρτιος*, լատ. *martius*), բազմիմաստ բառերի իմաստային հե-
ռացումով, ընդ սմին ոչ միայն հասարակ, այլև հատուկ անունների
դեպքում՝ *աղավնի* - *Աղավնի*, *արշալույս* - *Արշալույս*, *ամպեր* - *Ամ-*

¹ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բա-
ռակազմություն, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1990:

պեր, գեղեցիկ - Գեղեցիկ, ծաղկաշեն – Ծաղկաշեն (տեղանուն), քերականական ձևերի նմանությամբ՝ *կարի* «խիստ, սաստիկ» - *կարի* (*կարել* «կար անել» բայի ըղձականի ձև») և այլն:

Ըստ բառային կամ քերականական կազմություն լինելու հատկանիշի՝ տարբերում են *սովորական՝ բառային*, և *քերականական* համանուններ. հմմտ. *կեպ* «առողջանական նշան» և *կեպ* «կենդանի», *գերի* «գերելարված» և *գերի* «գերել բայի ըղձականի ձևը» և այլն:

Համանունությունը դիտարկվում է առանձին՝ արտասանության և գրության հարաբերությամբ. լինում են՝ համանուն բառեր, որոնք լեզվի տվյալ շրջանում այդպիսին են և՛ արտասանությամբ, և՛ գրությամբ. *սեր* «սերուցք» և *սեր* «զգացմունք», *հուր* «բույր» և *հուր* «մանր կնդակավոր կենդանիների խումբ» և այլն: Կան նաև համանուններ, որոնք միայն գրությամբ են նույն, այսինքն՝ արտասանությամբ տարբեր են՝ *հորդ* [հորդ] «առատ (անձրև)» և *հորդ* [հորդը] «քո հորը», և հակառակն՝ արտասանությամբ նույն են, իսկ գրությամբ՝ տարբեր՝ *երթ* [երթ] «գնալը. ընթացք» և *երդ* [երթ] «երդիկ. տանիքի օղանցք» և այլն:

Մյուս կողմից, արտասանությամբ նույն, գրությամբ տարբեր բառերը կոչվում են *համահունչ (համահնչուն) համանուններ՝ հերց* [հերց] «ֆիզիկայում՝ պարբերական տատանումների հաճախակա-նության միավոր» և *հերձ* [հերց] «զատելը, կիսելը. հմմտ. *հերձել*», *հեղձ* [հեղց] «հեղձված, խեղձված» և *հեղձ* [հեղց] «լի, լեցուն» և այլն, իսկ գրությամբ նույն, բայց արտասանությամբ տարբեր համանունները կոչվում են *համագիր համանուններ՝ բարդ* «մի որոշակի քանակի խոտի և այլնի դեզ» (արտաս.՝ *բարդ*) և *բարդ* «ոչ պարզ» (արտաս.՝ *բարթ*) և այլն:

Այնուհետև, համանունները լինում են *մասնակի* և *լիակատար*. մասնակի են, երբ համանունությունը լինում է կամ միայն արտասա-նությամբ՝ *որթ* [որթ] «որթատունկ» և *որդ* [որթ] «ճիճու» և այլն, կամ միայն գրությամբ՝ *խոիկ* [խոիկ] «ջրային կենդանիների շնչառության օրգան», *խոիկ* [խոիկ] «խոիվ, ծառի չոր ճյուղեր» և *խոիկ* [խոիկ] «խոիկ (տալը). վանելը», *որբ* [որբի] «ծնողագուրկ» և *որբ* [որբի] «մի

տեսակ թռչուն» և այլն, իսկ լիակատարի դեպքում՝ և՛ արտասանությամբ, և՛ գրությամբ նույնական են՝ *խան* [խան] «ափսե», *խան* [խան] «իջևան» և *խան* [խան] «մի տիտղոս, այդ տիտղոսը կրող անձ» և այլն: Մասնակի համանունների մի տեսակ կա, որ կոչում են *հարսնուններ* (պարոնիմներ, հուն. *παρά* «մոտ՝ մերձ, հար» - *όνυμα* «անուն»)՝ *ավելել* «ավելացնել» և *ավլել* «հավաքել՝ հեռացնել» և այլն:

Լեզուներում հոմանիշ բառերը քանակապես ավելին են և նկատելի, ուստի համեմատաբար լավ են ուսումնասիրված: Կան հայերենի, ռուսերենի, ֆրանսերենի և այլ լեզուների հոմանիշներին նվիրված զգալի թվով գիտական աշխատանքներ՝ մենագրություններ, հոդվածներ և այլն, կազմվել են այդ լեզուների հոմանիշների թե՛ ակադեմիական (գիտական) և թե՛ ուսումնական բառարաններ: Ըստ այդմ իմաստային-ճանաչողական առանձնահատկություններ պարունակող լեզվական՝ բառային, քերականական այդ երևույթը, ինչպես ասում են, մշակված է ամենայն մանրամասնությամբ:

Հայերենում, օրինակ, առանձնացվում են բառային և քերականական հոմանշության բազմաթիվ տեսակներ՝ ելնելով դրանց կազմությունից, իմաստից և գործառությունից: Երևույթի մանրամասն խմբավորումը և վերլուծությունը կարելի է գտնել ինչպես հայերենի, այնպես էլ մյուս լեզուների նորմատիվ դասագրքերում, գիտական ուսումնասիրություններում:

Ստորև անդրադառնում ենք հոմանիշներին՝ ընդհանուր լեզվաբանական-ճանաչողական հայեցակետից:

Ամենից առաջ նկատենք, որ լեզվի ոճերի առումով հոմանիշներն ունեն էական նշանակություն: Հատկապես բառային մակարդակի հոմանիշները խոսքին հաղորդում են որոշակի ոճավորում: Բառերի նույնական, միօրինակ գործածությունը, մասնավորապես հակիրճ բանավոր խոսքում, այն դարձնում է միապաղաղ և դժվար ընկալելի: Այնինչ հոմանիշ բառերի, դարձվածային հոմանիշների տեղին և չափավոր կիրառությունը մեղմում է այդ թերացումը: Հոմանիշ բառերի գործածությունը առավել տեղին է գեղարվեստական խոսքում, և դա բնական է:

Լեզվի տվյալ ժամանակային կտրվածքում հանդես եկող այն միավորները (բառեր, մասնիկներ, ածանցներ, ձևույթներ և այլն), որոնք արտասանությամբ կամ հնչյունական կազմով (արտահայտության պլանում) տարբեր են, իսկ իմաստով (բովանդակության պլանում) մոտ, մերձավոր կամ նույնն են, կոչվում են *հոմանիշ բառեր* կամ *հոմանիշներ* (սինոնիմ, հուն. ὁμωνυμὸς «նույնանունական»):

Ըստ այն նկատառման, թե նման միավորները լեզվի ո՞ր մակարդակում են հանդես գալիս (բառապաշարի, ձևաբանության, շարահյուսության և այլն), տարբերում են բառային, ձևաբանական և շարահյուսական հոմանիշներ, ինչպես նաև, այսպես կոչված, միջնակարգակային՝ դարձվածային հոմանիշներ:

Հոմանշային հարաբերության մեջ գտնվող միավորները կազմում են հոմանշային շարքեր, որոնք լինում են առնվազն երկանդամ (հոմանշային գույգ կազմելու առումով) և բազմանդամ, որն, անշուշտ, հաշվելի չէ, իսկ շարքի մեջ մտնող յուրաքանչյուր միավոր՝ շարքի անդամ: Ընդ որում վերջին դեպքում հակադրվող եզրերի միջև առկա է գերակայության և ստորակայության հարաբերություն. հմմտ. *մազ // վարս, գես, հեր, ձար* և այլն, նաև *քամի // հով, զեփյուռ, սյուր* և այլն, որտեղ գերակա են *մազ, քամի* բառերը, որովհետև դրանք գտնվում են սովորական, լայն գործածության մեջ, իսկ մյուսները կիրառվում են առանձին, երբեմն սահմանափակ դեպքերում, առավելապես խոսքի ոճավորման նպատակով: Եվ այս դեպքում ևս դրանք, իբրև հոմանշային շարքի անդամներ, կարելի է ասել, գտնվում են անփոփոխակային (ինվարիանտ) և փոփոխակային (վարիատիվ) կախվածության մեջ:

Ըստ այսմ՝ հասկացության առումով շատ կարևոր է հոմանշային հարաբերության մեջ գտնվող բառերի ծավալային ընդգրկվածությունը: Օրինակ՝ *մազ* բառը մյուսներին առնչվում է իր իմաստի ողջ ծավալով, այսինքն՝ իր նշանակությամբ ընդհանրական է հոմանշային այդ շարքում, այնինչ մյուսներից յուրաքանչյուրն այդ բառի հետ հոմանշային հարաբերություն ունի իր այն իմաստով, որը մասնավոր բնույթի է. հմմտ. *վարս* «կանացի՝ աղջկա մազ», *հեր* «նուրբ՝ քնքուշ

մագ», *բաշ* «սմբակավոր կենդանու, նաև առյուծի մագ», *ձար* «ձիու մագ» և այլն:

Հոմանշային շարքի անդամները շատ քիչ դեպքերում կարող են իմաստային և գործառական դրսևորման առումով լիովին համընկնել, նման դեպքում դրանք կոչվում են *բացարձակ հոմանիշներ*, օր.՝ *լայն-ընդարձակ*, *նվիրական-անձնվեր* և այլն, իսկ եթե չեն համընկնում, *մասնակի հոմանիշներ*, օր.՝ *մաս – կտոր*, *հաց – ուրելիք* և այլն:

Լեզուների ավանդական (տրադիցիոն) քերականություններում ընդունված է տարբերել հոմանիշության ևս երկու տեսակ, *համանիշություն* և *նույնանիշություն*, որոնց արդյունքում առանձնանում են *համանիշ* և *նույնանիշ* բառեր: Եվ տարբերակման հիմքի համար գտնված է տվյալ հատկանիշը. համանիշ են կոչվում այն բառերը, որոնք իմաստով մոտ կամ մերձավոր են, բնավ ոչ նույնական, ոչ էլ գործածությամբ կարող են միմյանց փոխարինել, օր.՝ *ընկեր – աշխատակից* և այլն, իսկ *նույնանիշ* են այն բառերը, որոնք իմաստով համընկնում են, գործածությամբ կարող են միմյանց փոխարինել, օր.՝ *պատրուհան – լուսամուր*, *Նոր տարի – Ամանոր – Կաղանդ* և այլն: Թե՛ համանիշ և թե՛ նույնանիշ կարող են լինել ոչ միայն բառերը, այլև լեզվական այլ կարգի միավորներ, օր.՝ *մասնիկներ* (-*որեն*//-*արար*//-*պես*, -*ական*//-*ային*, -*ում*//-*ություն* և այլն):

Հականշությունը լեզուներում այնքան տարածված երևույթ չէ, որքան, ասենք, հոմանշությունը, որովհետև հանդիպում է առավելապես միայն բառային մակարդակում, իսկ գործածությամբ էլ համեմատաբար սահմանափակ է: Խոսքի մեջ հականշությունը ենթադրում է ասելիքի հակադրություն համատեքստում, չունի գործառական-ոճական դրսևորման լայն հնարավորություններ: Հականիշ են այն բառերը, որոնք հնչյունական կազմով իրարից տարբեր են, իսկ իմաստով՝ հակադիր: Հականիշ բառերը սովորաբար հանդես են գալիս զույգերով. հականիշները երկանդամ հակադրության միավորներ են. *մեծ – փոքր*, *երկար-կարճ*, *հասար – բարակ*, *արագ – դանդաղ*, *շուր – ուշ*, *լայն – նեղ*, *լավ – վատ*, *կենտր – գույգ*, *ներքին-արտաքին* և այլն: Հականիշ է այն բառը, որը ենթադրում է հակադրելի զույգ. լեզվում ոչ բոլոր բառերն են, որ կարող են ունենալ ենթադրական, հնարավոր

հակադրելի մեկ այլ միավոր: Դա բացատրվում է խոսքի այն բնույթով, որ առարկաների, երևույթների հասկացությունների անվանումները ոչ միշտ են առնվում *տարանջատ* (դիզյունկտիվ) հարաբերակցության մեջ: Տարբերում են հակադիր եզրեր կազմող բառերի մի քանի տեսակ՝ ելնելով դրանց հակադրության տարբեր չափանիշներից, այն է՝ ըստ բառարմատների բնույթի, ըստ բաղադրականության և այլն:

Հայերենում, օրինակ, առանձնացվում է նման բառերի մի քանի տեսակ. կան հականիշներ, որոնք տարբեր արմատներից բաղադրված բառեր են, ուստի կոչվում են տարարմատ հականիշներ, օր.՝ *լայն – նեղ, արագ – դանդաղ, շուր – ուշ, երկար – կարճ, վերին – ներքին, մեջ – դուրս* և այլն, որոշ հականիշներ էլ բնորոշվում են ընդգծված հակադրականությամբ, օր.՝ *աղքատ – հարուստ, բարեկամ – թշնամի, հարազատ – օտար, գործունյա – անբան* և այլն, լինում են նաև նույնարմատ հականիշներ, որոնք ըստ էության բաղադրյալ կազմություն ունեցող բառեր են, հականիշ են դառնում իրենց այս կամ այն բաղադրիչի հակադրությամբ, օր.՝ *մերձակա – հեռակա, ներկա – բացակա, կամակոր – կամազուրկ, պարտաճանաչ – պարտազանց, դիմակաց- դիմազուրկ* և այլն:

8. Ջգացական (էմոցիոնալ) բառը (խոսքը) վերաբերում է իրականության ճանաչման այն կողմին, որը հայեցողական չէ, այլ պարունակում է անձնային (սուբյեկտիվ) երանգներ: Ամենօրյա հաղորդակցումը ընդհանուր է հանրության բոլոր անդամների համար, բայց նաև անձնային՝ նրանցից յուրաքանչյուրի դեպքում: Ըստ այդմ՝ խոսքի միավորները՝ բառերը և քերականական ձևերը և այլն լինում են ոչ միայն մտածական («դատողական»), այլ նաև զգացական («էմոցիոնալ») բնույթի: Խոսքի մեջ լեզվական միավորները հանդես են գալիս երկու՝ առարկայական («օբյեկտիվ») և անձնային («սուբյեկտիվ») ձևով:

Ըստ այսմ՝ կարելի է ասել, թե լեզուն ոչ միայն առարկաների, երևույթների վերաբերյալ հասկացությունների, այլև զգացումների («զգացողությունների») ամբողջություն է: Առաջին դեպքում արտահայտության պլանում են խոսքիմասային միավորներից «լիմնաստ» բառերը՝ գոյականը, ածականը, բայը և այլն, իսկ երկրորդ դեպքում՝ ոչ

«լիինաստ» բառերից բնաձայնությունները, բացականչությունները, ձայնարկությունները, որոնք հանդես են գալիս կան նախադասության մեջ, կան առանձին՝ իբրև ուրույն հնչերանգով նախադասություն. հմնտ. նախադասության մեջ՝ *Վահ*, ինչ ես ասում: Առանձին՝ *Վահ*: Նախադասության մեջ՝ «*Ափսո՛ւ* Անուշ, սարի ծաղիկ»: Առանձին՝ Ափսո՛ւ: Նախադասության մեջ՝ «*Ո՛ր* կորան, / Մոտիկներս *ն՛ր* կորան»: Առանձին՝ *Ո՛ր* և այլն: Զգացական խոսքը բանավոր տարբերակում ունենում է համապատասխան բառերի գործածություն, այլև, որն այս դեպքում առավել ընդգծելի է, հնչերանգային հազեցվածություն՝ համապատասխան առոգանական նշաններով: Տարբերում են զգացական խոսքի մի քանի տեսակ՝ *հավելադրություն* (պլեոնազմ, հուն. πλεονασμός «ավելցուկ, ավելին»), *չափազանցություն* (հիպերբոլա) և այլն:

Հավելադրությունն այն է, որ խոսողը մտքի ուժեղացման, խտացման նպատակով լրացուցիչ օտագործում է մի նոր բառ, որն արդեն կար ասվածի մեջ, և դրանով ստացվում է իմաստի հավելուրդայնություն. օր.՝ *Իր մեջ* ներառել: «Էս *քու կոտրած ձիռով* չիս գրե»: *Դու ինքդ քո* բերանով ասացիր, որ գնացել է: *Ես իմ* այս գրածին միշտ էլ հավանել եմ և այլն: Հավելադրության մեջ տարբերում են նաև, այսպես կոչված, *նույնարանությունը* (տավտոլոգիա, հուն. ταυτολογία < ταυτό «նույնը» - λόγος «բան՝ խոսք»), որն, իբրև ոճական երևույթ, խոսքը դարձնում է անհարկի ձգձգված, ոչ դիպուկ, ոչ էլ նպատակային, օր.՝ *Անընդհար ասում եմ, անընդհար կրկնում, անընդհար զգուշացնում, բայց ոչ մի արդյունք* և այլն, նաև *սարիճանավորումը* (գրադացիա, լատ. gradatio < gradus «աստիճան»), իր ենթատեսակներով՝ *բարձրացող սարիճանավորում*, օր.՝ Վեր կացավ, արագ գնաց, բունեց և հետ բերեց և այլն, *նվազող* կամ *իջնող սարիճանավորում*, օր.՝ Գնաց, գնաց, ընկավ և շունչը փչեց և այլն:

Չափազանցության դեպքում խոսքի մեջ օգտագործվում են այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք ճիշտ չեն, ուստի ոչ այնքան նպատակային, որքան անտեղի և ավելորդ՝ չնայած երբեմն ունենում են այս կամ այն նշանակությունը. օր.՝ *Նա ուղիղ ասելի ծակով կանցկացնի*: *Նա լուն ուղի է շինում* և այլն:

Հիմնական գրականություն:

Աղաշյան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 315-358:

Լրացուցիչ գրականություն:

Աղաշյան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 21-72:

Головин .Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 58-66:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 87, 142:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 36, 120:

Թեմա 4. Իմաստափոխություն

Հիմնահարցեր: *Բառի իմաստի փոփոխությունների բնույթը: Բառի իմաստի փոփոխության տեսակները. բուն և լրացուցիչ տեսակներ:*

1. Լեզվի անընդհատ զարգացման գործընթացում բառերը կրում են փոփոխություններ՝ ինչպես ձևով, այնպես էլ իմաստով: Բառը ենթարկվում է իմաստային փոփոխության՝ ձեռք է բերում նոր իմաստ, կորցնում կամ նեղ գործածության մատնում նախկին իմաստը և այլն: Դա պայմանավորված է, առաջին հերթին, իրականության մեջ տեղի ունեցող այն տեղաշարժերով, որոնք իրենց անմիջական արտացոլումն են գտնում լեզվում, հատկապես նրա ամենազգայուն մասում՝ բառապաշարի մեջ:

Բառիմաստ, բառային իմաստ և բառի նշանակություն տերմինները, անկախ որոշ ներքին տարբերությունից, ընդհանուր առմամբ նույնն են:

Բառիմաստի փոփոխությունները բառագիտական ուսումնասիրության մի ուրույն մասն են: Իմաստափոխություն (*մետասեմիա*. անգլ. *metasemy* «նշանակության փոփոխում») նշանակում է լեզվական միավոր հանդիսացող բառի, բառակապակցության բովանդակության պլանի փոփոխություն: Նման փոփոխություն անխտիր տեղի է ունենում լեզվի ամեն մի փուլի գործառության պայմաններում, կոնկրետ ժամանակի մեջ, և այն դառնում է տարածամասնակյա իրողություն:

Լեզուների զարգացման ընթացքում կատարվող իմաստափոխությունները, պայմանավորված արտաքին հանգամանքներով, միանման գործընթացի արդյունք չեն: Ինչպես որ տվյալ լեզուն կրող հանրության հաղորդակցական գործունեությունն է տարբեր լինում, նույնպես և նրա լեզվի մեջ են արտացոլվում այդ տարբերությունները, այսինքն՝ բառերի և բառային այլ միավորների բովանդակության պլանի (իմաստի) մեջ լինում են համարժեք տեղաշարժեր:

Ժողովուրդների կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը՝ պատերազմները, հեղափոխությունները, տնտեսական բարեփոխումները կամ խափանումները, մշակույթի բնագավառում ի հայտ եկած ձեռքբերումները և այլն,- այդ ամենը ինչ-որ չափով իր արտահայտությամբ

յունն է գտնում լեզվի մեջ, ընդ որում ոչ միայն նոր հասկացությունների անվանում հանդիսացող բառերի և տերմինների տեսքով, այլև լեզվում առկա բառերի և բառային այլ միավորների (նախկինում գործածված տերմինների) իմաստային փոփոխություններով: Այս իրողությունը նկատելի է լեզուների պատմությունից՝ առնված ոչ միայն հեռու անցյալի մեջ, այլև մոտ ժամանակներում:

Այսպես, վերջին մեկ-երկու տասնամյակում հայերենի մեջ, տնտեսական բնագավառում, մասնավորապես շուկայական հարաբերությունների բերումով նոր իմաստներով սկսեցին գործածվել *շուկա*, *առևտուր*, *վարկ*, *մենաշնորհ*, *տնտեսական աճ*, *դեբիտորային պարտք* և այլ բառեր և կապակցություններ, որոնք, թեև մասամբ նախկինում էլ գործածվում էին, սակայն չունեին այն նոր իմաստները, որ ունեն ներկայումս՝ իբրև տնտեսական ոլորտի տերմին կամ տերմինային անվանում. օր.՝ *շուկա* (նոր իմաստով) «ազատ ձեռներեցություն», *առևտուր* «ներկրված ապրանքի վաճառք», *վարկ* «դրամի հատկացում որոշակի տոկոսի նկատառումով», *մենաշնորհ* «ազատ՝ միայն մեկին (մի քանիսին) պատկանող ապրանքի՝ շուկայական պայմաններում վաճառքի վերապահված իրավունք», *տնտեսական աճ* «արդյունաբերության և առևտրի, մասնավոր առևտրի եկամուտների տոկոսավճարի հիման վրա գոյացող ընդհանուր աճ» և այլն:

Բառիմաստի այդ և նման փոփոխությունները պայմանավորված են նոր իրողությունների երևան գալով, ընդ որում ոչ միայն առևտրի, այլև այլ ոլորտներում: Օրինակ՝ կրթության, գրքի հրատարակման և այլ ոլորտներում *պեդագոգական պարտքեր* կապակցության իմաստը բավականին նեղացել է, քանի որ դրա իրականացման հիմնական մասը անցել է, այսպես կոչված, տնտեսական մասնավոր ձեռներեցության ոլորտ. *գրքի հրատարակման հովանավոր* արտահայտության *հովանավոր* բառը ներկայումս կիրառվում է նոր իմաստով՝ «մեկի կողմից դրամի տրամադրում»: Այս ընթացքում տեղ են գտնում նաև օտարլեզվյան և հայերեն բառերի անսովոր կապակցումով նոր բառերի, տերմինների գործածություն. *դեբիտորային պարտք(եր)* բառակապակցության մեջ նոր է թե՛ ֆրանսերենից (անգլերենից) ռուսերենին և այլ լեզուներին անցած *դեբիտոր* (ֆրանս. *débiteur* «պարտապան» <

լատ. debitor «պարտապան» < débeo «պատավոր լինել»), թե՛ *պարտք* «տալիք, վերադարձնելը» բառի կիրառությունը նոր հոգնակիով (իբրև անեզական բառ՝ pluralia tantum), «դրամաշրջանառության մեջ պարտականություն ունենալը» իմաստով, որ լրացնում է *պարտք* բառի ընդհանուր, նախկին իմաստը (բառացի՝ «պարտք՝ պարտապանին»):

Այնուհետև, լեզուների բառապաշարի մեջ ոչ բոլոր բառերն են ենթարկվում իմաստափոխության, այլ նրանց մի մասը: Լեզուների բառապաշարի հիմնական բառաֆոնդն այս առումով ավելի կայուն է, քան ընդհանուր բառակազմի մեջ մտնող բառային այս կամ այն կարգի միավորները: Հայերենի բառապաշարի հիմնական կազմի (ֆոնդի) միավորների մեծ մասը, օրինակ, մինչև այժմ գործածվում է իր նախնական՝ գրաբարի շրջանից եկող իմաստներով՝ պայմանավորված քրիստոնեական մշակույթի ավանդույթով: Նախագրային հայերենից գրաբարին անցած շատ բառերի իմաստափոխական տեղաշարժերը հնարավոր է վեր հանել լեզվի ողջ պատմության ընթացքի մեջ, համեմատական տվյալների քննության պայմաններում, ընդ որում ոչ միայն ներքին, այլև այլ լեզուների հետ համեմատության հիման վրա:

Այսպես, *հայր* (< հե. *p^[h]Ht^[h]er- «հայր»), *մայր* (< հե. *maHt^[h]er- «մայր»), *քույր* (< հե. *s^oesor- «քույր»), *եղբայր* (< հե. *b^[h]raHt^[h]er- «եղբայր») բառերը, եթե նկատի ենք ունենում հնդեվրոպական ընդհանրության շրջանում ընտանիքի հիմնական մաս ներկայացնող այս անձերի (պերսոնաժների) արենակցական անմիջական կապը, նրանց գործառական (ֆունկցիոնալ) բաշխումը, ապա դրանք, գոնե նախահայերենում, պիտի ունեցած լինեն հետևյալ իմաստները՝ *հայր* «(ընտանիքի) ծնողներից արական կողմը», *մայր* «(ընտանիքի) ծնողներից իգական կողմը», *քույր* «(ընտանիքի) զավակներից իգական կողմը (եղբորը հակադիր)», *եղբայր* «(ընտանիքի) զավակներից արական կողմը (քրոջը հակադիր)», քանի որ այդ բառերի ամենանախնական արմատներից կարելի է առանձնացնել ընդհանուր *-յր* (հե. *t^[h]er-) մասը, որը, թերևս, ազգակցական կապ նշող անձանիշ բաղադրիչ պիտի եղած լինի (nomen actionis), մյուսների իմաստներն են՝ *հա-* (հե. *p^[h]H^o-) «(ընտանիքը հայթայթելով) պահող՝ շահող», *մա-* (հե. *maH-) «(ընտանիքը իր կաթով) սնող (հմմտ. հայ. *մա-* և լատ. *mamel* «ստինք»)», *ք-* (հե.

*s^oe-. այս դեպքում՝ *(s)or.) (գրաբար՝ նախահայերենից) «իր (եղբոր) արենակից. քույրը», (*ե*)*ղբ*- (< նախահայերեն՝ **ե-բղա* < **ե-ղբա*-) (հե.*b^hraH-) «արական՝ իր (քրոջ՝ իգականի) հակադիր»:

Այս ամենը իմաստային (թեմատիկ) այդ խմբի ստուգաբանական-իմաստաբանական վերականգնման սահմաններում է, որպիսով հնարավոր է բառապաշարի հիմնական ֆոնդի այդ միավորների ամենահին՝ հնդեվրոպական ընդհանրության շրջանից եկող իմաստների մասին ենթադրաբար խոսել, որոնք էլ իմաստափոխության են ենթարկվել տևական (հազարամյակների) ընթացքում: Իսկ գրավոր հայերենից սկսած, գրավոր ավանդույթով այդ բառերը մինչև օրս պահել են իրենց նոր՝ «հայր», «մայր», «քույր», «եղբայր» իմաստները:

Հայերենի բառապաշարի բառային կազմի մեջ կան նաև բառեր, որոնք նրա գրավոր ժամանակաշրջանի տարբեր փուլերում՝ հին (գրաբար), միջին (իմամ կլիկյան հայերեն), նոր (աշխարհաբար), տարածքային տարբերակներում՝ բարբառներ, խոսվածքներ և այլն, ենթարկվել են իմաստային տարբեր բնույթի բազմաթիվ փոփոխությունների:

Եվ ինչպես այլ լեզուների դեպքում, հայերենի մեջ ևս ընդունված է այս կամ այն կարգի խմբավորմամբ ներկայացնել այդ փոփոխությունները:


2. Լեզվաբանական աշխատանքներում իմաստափոխության տեսակները առանձնացվում և բնորոշվում են մի քանի մոտեցումով. մի դեպքում՝ դրանք բերվում են առանց այս կամ այն ընդհանուր մոտեցման կամ տեսակների առանձնացման մեջ հատկանիշների նշման, մեկ այլ դեպքում՝ առանձնացումը կատարվում է ավելի ընդհանուր խմբավորման մեջ՝ «ըստ իմաստափոխական հիմունքների», այլև «ըստ իմաստային զարգացման արդյունքի»¹:

¹ Է. Բ. Աղայանի «Լեզվաբանության հիմունքներ» դասագրքում (էջ 359-383), օրինակ, այս ենթաթեմայի նյութի շարադրանքը գրեթե ամբողջովին (չհաշված որոշ շտկումներ, լրացումներ, կրճատումներ և այլն) ներկայացված է հեղինակի նախորդ՝ ժամանակակից հայերենին վերաբերող աշխատություններից մի քանիսում: Տե՛ս *Նույնի՝ «Բառագիտություն» // Գ. Բ. Զահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 242-275: Նույնի՝ Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 75-107:*

ա) «Ըստ իմաստային զարգացման արդյունքի» առանձնացվող բուն կամ հիմնական տեսակները երեքն են՝ բառիմաստի ընդլայնում՝ *աթոռ* «կահույքի մաս» - *Աթոռ* «հոգևոր կենտրոն», *Ամսյեր* «անձնանուն» - *ամսյեր* «հոսանքի անվանում» և այլն, բառիմաստի նեղացում (մասնավորում)՝ *թթու* «թթվություն» - *թթու* «աղ դրած բանջարեղեն», *վարդ* «ծաղկի անուն» - *Վարդ* «անձնանուն» և այլն, բառիմաստի շրջում (կամ նորացում)՝ *սարսապ* «դատարկ» - *սարսապ* «անգործ» և այլն:

Նույնպիսի հատկանիշով է առանձնացվում մեկ այլ տեսակ՝ «իմաստների փոխհաջորդում», երբ բառի հին իմաստին հետագայում հաջորդում է մեկ այլ իմաստ՝ *ծախել* «սպառել, ոչնչացնել», ավելի ուշ՝ նաև «վաճառել» (հմմտ. Խանութի հին ապրանքը *չի ծախվում*, մնացել է), ներկայումս՝ նաև (բանավոր խոսքում) «մատնել, մեկին չարախոսել» և այլն: Նշվածներից հիմնականները կարելի է ներկայացնել հետևյալ հարաբերակցությամբ (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8



Սրանք, սովորաբար, բերվում են իբրև բուն կամ հիմնական տեսակներ՝ կապված հատկապես բառային իմաստի փոփոխության հետ:

բ) Լեզվաբանության մեջ տարբերում են նաև, այսպես կոչված, կողմնակի «տեսակներ», որոնք մտնում են վերը նշված հիմնական տեսակների մեջ, այլ կերպ՝ դրանք կարելի է համարել հիմնական տեսակների մանրամասներ. առանձնանում են մեկ տասնյակից ավելի նման «տեսակներ»: Այդ տեսակները խմբավորվում են իբրև իմաստափոխության տեսակ՝ «ըստ իմաստափոխական հիմունքների»:

Հիշենք դրանցից հետևյալները:

1. Բառիմաստի կենտրոնացում (կամ բևեռացում)՝ *բան* «խոսք» - *բան* «գործ». օր.՝ Հայրիկն ասաց, որ ոչ մի բան պետք չէ անել, «*Ջերմուկ*» («հանքային ջրի մի տեսակ») - «*Բջինի*» («ջերմուկ. հանքային ջուր»), «*Արզնի*» («ջերմուկ. հանքային ջուր»). օր.՝ Տատիկը ջերմուկ շատ է օգտագործում (այսինքն՝ հանքային ջուր), *շաքար* «շաքարավազ». օր.՝ Հայրիկը խանութում գնեց հաց, պանիր և շաքար (այսինքն՝ շաքարավազ) և այլն:

2. Իմաստափոխություն գործառական (ֆունկցիոնալ) հիմունքով՝ *նավ* «մեջը փոս արած գերան» - *նավ* «ջրային փոխադրամիջոց», *կարթ* «ձուկ որսալու հարմարանք» - *կարթ* «ամեն տեսակի կեռիկ» և այլն:

3. Իմաստափոխություն բուն՝ ստուգաբանական («նախնական») իմաստի կորստի հետևանքով՝ *իրավ*, *Էջմիածին*, *իհարկե*, *գլուխգործոց* «արված հիմնական՝ ամենակարևոր մաս» և այլն: Մրանք հին հայերենում (գրաբարում) քերականական՝ հոլովման կամ խոնարհման, նաև շարահյուսական ձևեր էին, որոնք ունեին իրենց նախկին իմաստները, ժամանակակից հայերենում, խոսքիմասային փոխանցմամբ վերածվել են առանձին, որևէ խոսքի մասի պատկանող միավորների՝ գոյական, մակբայ, եղանակական և այլն:

4. Խոսքիմասային փոխանցմամբ պայմանավորված իմաստափոխություն, ածականի գոյականացում՝ *գինվոր*, *ազնվական*, *մուրացկան*, բայի գոյականացում՝ *ուսանող*, *խորոված*, գոյականի ածականացում՝ *տոն* (օր), *ծաղիկ* (հասակ), *ոսկի* (բնավորություն) և այլն:

5. Մենիմաստությունից բազմիմաստություն անցմամբ, ըստ խոսքի մեջ կիրառվելու կարևորության բառի եղած իմաստին ավելանում է նորը, առանց նախորդ իմաստի վերացման, կամ նեղացման, այսինքն՝ տեղի է ունենում իմաստի ընդլայնում, օր.՝ բառը ձեռք է բերում տերմինի արժեք. *երկաթ* 1. «հանքաքար», 2. «քիմիական էլեմենտի անվանում. լատ. ferrum», *ջուր* 1. «բնության չորս տարրերից մեկը, օգտագործելի բնական հեղուկ», 2. «երկու մաս ջրածին, մեկ մաս թթվածին», *աղ* 1. «հանքային ապար», 2. «նատրիումի և քլորի միացություն» և այլն:

6. Տերմինացում և տերմինի վերածում սովորական բառի. *կիլոգրամ* «ծանրության՝ քաշի անվանում» - *կիլո* (խսկց.) «չափ, կշիռ, քաշ», *թթու* «հատկություն» - *թթու* «քիմիական տարր», *ջուր* «հեղուկ» - *ջուր* «քիմիական տարր», *բաղաձայն* «աղմկային հնչյուն» և *բաղաձայն* «երաժշտական լսողությունից զուրկ» և այլն:

7. Իմաստափոխություն հոմանիշների տարբերակման կամ հեռացման հիմունքով. *սատնարան* «մթերքի ապահովում ջերմության պատճառով փչացումից», *սառցարան* «սատնարանի այն մասը, որն առանձնապես սառեցնող է», *ամբողջովին* «լրիվ, ամբողջը միասին» (հմմտ. Մթերքը *ամբողջովին* փչացել է) և *բոլորովին* «ոչ մի կերպ՝ բնավ» (հմմտ. Նա *բոլորովին* տեղյակ չէ), *պայտուհան* «շենքի դրսի կողմից հանված մաս՝ լույսի ներթափանցման նպատակով» - *լուսամուտ* «բնակարանի լուսավորման համար բացվածք» և այլն:

8. Բնիմաստի, «ներքին ձևի» մթազնմամբ՝ *գոտեհիկ* «*գոտեհ*. փողոց. փողոցին վերաբերող՝ առհասարակ» - *գոտեհիկ* «անկիրթ, անքաղաքավարի» և այլն:

9. Իմաստի սուբյեկտիվ երանգավորմամբ պայմանավորված՝ *վարժապետ* «վատ, ոչ հարգելի ուսուցիչ», *տերտեր* «անտեսվող, ոչ ընդունելի հոգևորական», *տիրացու* «հազիվ գրաճանաչ ուսուցիչ» և այլն:

10. Հնչյունական գործոններով պայմանավորված՝ *խում* «խմելը. հեղուկի ներս առնելու գործողություն» - *կում* «խմելիքի մի մաս՝ մի անգամ ներս առնելի», *ձեռնարու* - *ձեռնասարու* «հարմար, նպատակային», *ձեռնհաս* - *ձեռնասհաս* «մի բան անելու ունակ» և այլն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 358-383:

Լրացուցիչ գրականություն:

Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 73-107:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 62-66:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 102-111:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 80-104:

Թեմա 5. Դարձվածաբանություն

Հիմնահարցեր: *Դարձվածային միավորի ասիմետրիա: Դարձվածային միավորների առանձնացումը և դասակարգումը: Դարձվածային պարճե-նումներ: Դարձվածային միավորների ռասկան-արտահայտչական կողմը:*

1. Խոսքի մեջ միշտ չէ, որ բառերը գործածվում են սովորական, ինքնուրույն շարահյուսմամբ, այլև լինում են դեպքեր, երբ դրանք հանդես են գալիս ներքին, այս կամ այն կարգի խմբավորման մեջ, միասնացած: Եթե առաջին դեպքում բառը լիովին առանձին է, կարող է ինքնին փոխարինվել մեկ այլ բառով. հմնտ. Երեխան ամեն ինչի *ձեռք* է տալիս: Երեխան մայրիկին *ջուր* է տալիս և այլն: Բերված օրինակներում *ձեռք* և *ջուր* բառերը լիովին և անկախաբար փոխարինվում են միմյանցով: Այնինչ երբեմն դրանցից մեկը կամ մյուսը կարող է ամեն-կին չփոխարինվել, այլև փոխարինվել միայն այլ բառերի հետ միասին՝ իբրև կապակցելիությամբ միասնացած, սերտաճած միավոր. հմնտ. Ընկերոջ վարմունքը նրան *ձեռք չի տալիս*: Ընկերը իզուր է *ջուր ծեծում* և այլն: Իսկ այս օրինակներում *ձեռք* և *ջուր* բառերը, առանձին վերցված, չեն կարող փոխարինվել ուրիշ բառերով, այլ կարող են փոխարինվել *ձեռք տալ*, *ջուր ծեծել* կապակցումով, իբրև մեկ միավոր՝ միասնացած և սերտացած:

Ըստ այսմ՝ *ձեռք* և *ջուր* միավորները առանձին բառեր են, իսկ *ձեռք տալ* և *ջուր ծեծել* միավորները՝ կապակցված բառեր. առաջիններն ունեն միայն ինքնուրույն իմաստ, իսկ երկրորդները՝ ոչ ինքնուրույն, այլ կապակցական (սովորական) կամ դարձվածային (ոչ սովորական՝ վերառյալ) իմաստ:

Ամեն մի լեզվի բառապաշարի իմաստաբանական հարստության մի մասը, բնականաբար, վերաբերում է բառերի ոչ սովորական՝ վերառյալ իմաստներով գործածությանը, որովհետև նման միավորների հիմքում ընկած են լինում տվյալ լեզուն կրող հանրության մտածողությունը, հոգեբանությունը, սովորույթները և այլն: Դրանք էլ տեղիք են տալիս բառի՝ խոսքի մեջ տարբեր աստիճանի վերացարկման: Հայտնի է, որ սովորական և դարձվածային կապակցությունների իմաստային տարբերությունը վերացարկման մեջ է՝ փոխաբերաց-

մամբ, փոխանվանացմամբ և այլն. վերացարկում պարունակող կապակցությունները դարձվածային միավորներ են: Այսպիսով՝ բառային միավորները բառակապակցական փոխհարաբերության մեջ երբեմն վերախմաստավորվում են և ստանում դարձվածային իմաստ: Դրանք «դարձվածային միասնություն են ստանում այն դեպքում, երբ բառակապակցության բաղադրիչները կորցրել են իրենց առանձին, անկախ բառային իմաստները և բառակապակցական միասնության մեջ ձեռք են բերում նոր իմաստ, որն այլևս հավասար չէ բաղադրիչների առանձին բառիմաստների գումարին»¹:

Բառագիտության այն ենթաբաժինը, որն ուսումնասիրում է լեզվի դարձվածային միավորները, կոչվում է *դարձվածաբանություն* (ֆրագեոլոգիա. հուն. *φράσις* «արտահայտություն. ֆրագ» - *λόγος* «բան, խոսք»): Այն համեմատաբար նոր գիտաճյուղ է, սկիզբ է առնում անցյալ դարի 20-ական թթ., շնորհիվ Շ. Բալլիի և ռուս լեզվաբանների (Վ. Վ. Վինոգրադով, Ն. Մ. Շանսկի և ուրիշներ) տեսական հիմնարար աշխատությունների:

Դարձվածային միավորը (դարձվածքը) լեզվի (առնվազն) երկբաղադրիչ (բառակապակցական) միավոր է, որ, իբրև երկպլանային բաղադրություն, տարբերվում է մյուսներից իր ոչ միայն ձևով (արտահայտության պլանով) և իմաստով (բովանդակության պլանով), այլև, ինչպես կարելի է կարծել, նաև գործառությամբ (ֆունկցիայով): Ուստի լեզվական այդ միավորը պիտի բնորոշվի ըստ այդմ՝ այդ երեք կարևորագույն չափումներով (պարամետրերով):

Լեզվաբանության մեջ ավանդաբար ընդունված է դարձվածային միավորները բնութագրել ըստ ձևային և իմաստային հատկանիշների, իսկ գործառական կողմի հնարավորություններն այդ դեպքում գրեթե բացառված են: Ձևային (արտահայտության պլանի) հատկանիշներ են նշվում բաղադրիչների բազմանդամ (նվազագույնը՝ երկու), անտեղափոխելի (կայուն շարադասություն) և անփոխարինելի (տվյալ բաղադրիչի պահպանում) լինելը, կապակցման սեղմությունը (որոշ քերականական երևույթների բացթողում) և այլն: Իմաստային (բովանդակության պլանի) հատկանիշներ են առանձնացվում նույն

¹ Ш. Балли, Французская стилистика, М., 1961, էջ 97:

բաղադրիչների իմաստային սերտությունը, մթագնումը նոր՝ դարձվածային իմաստի գոյացման հետևանքով և այլն¹:

Նկատելի է, որ ձևաիմաստային կողմին լրացնում է գործառական-ոճական (ֆունկցիոնալ) կողմը, որպիսով, կարելի է ասել, ավելի ամբողջական և տեսականորեն ավելի հիմնավորված է դառնում երևույթի սահմանումը. ըստ այսմ՝ «դարձվածային միավորը մեկից ավելի բառերի հարադրական կամ կապակցական այնպիսի բաղադրություն է, որն աչքի է ընկնում բաղադրիչների իմաստային սերտությամբ, մթագնումով, վերաիմաստավորումով, այդ նույն բաղադրիչների բազմանդամությամբ, անփոխարինելիությամբ, միասնությամբ, ինչպես նաև ֆունկցիոնալ-ոճական նպատակամղվածությամբ և կողմնորոշվածությամբ»²:

2. Դարձվածային միավորների բնութագրումը և սահմանումը, ինչպես վերը ասվեց, կատարվում են տարբեր չափանիշներով, որոնց լրացուցիչ կարելի է նշել կազմիչների (բաղադրիչների) քանակը, սերտության աստիճանը, ծագումը, տարբերակները, խոսքիմասային պատկանելությունը, ձևաիմաստային առնչությունը (հոմանիշ, հակահոմանիշ, համանուն դարձվածքներ) և այլն:

ա. Ըստ քանակի դարձվածային միավորները լինում են երկու և ավելի բաղադրիչներով կազմություններ. սովորականը երկբաղադրիչ կազմություններն են. *գլուխ տանել, ձեռքերը լվանալ, թոկից փախած, աստիճան կրակ, աչքի փուշ* և այլն կան նաև երեք և ավելի բաղադրիչներով կազմություններ. *ականջի հետև գգել, ասեղի ծակով անցնել, բերանի ծամոն դառնալ, լուն ուղի շինել, հետևից կարմիր խնձոր ուղարկել* և այլն:

բ. Ըստ սերտության աստիճանի, ինչպես որ ընդունված է ռուս դասական լեզվաբանության մեջ, դարձվածային միավորները հիմնա-

¹ Հմմտ. III. *Балли*, նշվ. աշխ., էջ 100-102: В. В. *Виноградов*, Русский язык (грамматическое учение о слове), М., 1972, էջ 23-30: В. Н. *Телия*, Фразеология // «Теоретические проблемы советского языкознания», М., 1972, 257-277: Н. М. *Шанский*, Лексикология современного русского языка, М., 1972, էջ 196-215:

² Վ. Գ. *Համբարձումյան*, Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը // «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1991, էջ 150: *Նույնի* Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2013, էջ 60-61:

կանում բաժանվում են երեքի (ըստ Վ. Վ. Վինոգրադովի)՝ *դարձվածային սերտաճում* («բաղադրիչները ձույլ են՝ միասնական, վերաիմաստավորումը՝ պարտադիր»)՝ *(մեկի) գլուխը յուղել, (մեկին) վիզ ծռել, երեսի մեռոնը կորցնել, (մեկի) գլխին քար աղալ* և այլն, *դարձվածային կապակցություն* («իմաստով տարբալուծելի, դարձվածային իմաստը բխում է բաղադրիչների ընդհանուր իմաստից»)՝ *գլուխը կահել, հոնքերը կիտել, քիթը փրորել, սասածը քամուն փալ* և այլն, *դարձվածային միասնություն* («ընդհանուր իմաստը պայմանավորված է բաղադրիչների բուն իմաստներով»)՝ *աչքը դուրս, բերանը թույլ, ուրքը կախ գցել, գլխին փալ* և այլն, որին հետագայում ավելացվում է ևս մեկը (ըստ Ն. Մ. Շանսկոյ)՝ *դարձվածային արտահայտություն* («բաղադրիչները իմաստով բաժանելի են և ազատ միմյանց նկատմամբ»)՝ *ծառերի հեղևում անտառը չփռանել, ոսկի երիտասարդություն, արձաթե հարսանիք* և այլն:

Ընդհանուր տեսական այս դասակարգումը, ճիշտ է, ոռու լեզվաբանության մեջ կատարված է ամենից առաջ ոռուերենի տվյալների նկատառումով, սակայն իր լայն ընդունելությունն է գտած եղել մյուս լեզուների նման միավորների վերաբերյալ կատարված աշխատություններում, նաև հայ լեզվաբանության մեջ:

գ. Ըստ ծագման աղբյուրի դաձվածային միավորները լինում են, նախ՝ բնիկ կամ փոխառյալ, այնուհետև՝ ընդհանուր («միջազգային») և մասնական («կոնկրետ տվյալ հանրությանը վերաբերող»):

Բնիկ դաձվածային միավորները կազմված են լինում ըստ այդ լեզուն կրող ժողովրդի հոգեմտածական կերտվածքին յուրահատուկ ձևով, ըստ այդմ բոլոր լեզուներին էլ բնորոշ են բնիկ դարձվածային միավորներ ունենալը՝ *alter ego* (լատ.) – հայ. *երկրորդ ես* «մեկի մտերիմը», *memento mori* (լատ.) «հիշիր մահվան մասին» – հայ. *մահ կա. մեռնել կա* «բարին՝ լավը լինել», *carte blanche* (ֆրանս.) «սպիտակ թուղթ» – (հայ. «գործելու հնարավորություն՝ շանս»), *завязать знакомство* «ծանոթանալ, ծանոթ լինել», *падать к ногам* – հայ. *(մեկի) ուրքերն ընկնել* «խնդրել, աղաչել» և այլն:

Փոխառյալ են այն միավորները, որոնք մի լեզվից անցած են լինում մեկ այլ լեզվի՝ հաղորդակցական տարբեր շփումների հետևան-

քով. *չորրորդ պարհորհ* (= ռուս. черт подобен «սատանան տանի») – հայ. *գրողը փանհ* «վերանալ, ի չիք դառնալ», *սիլվուպլե* (= ֆրանս. s'il vous plait «խնդրեմ»)– հայ. *համեցե՛ք, ի՛նչ խոսք* «խնդրեմ», *օքեյ* (= անգլ. O. K. «եղավ. լավ») - հայ. *լավ է*, (գրաբ.) *եղև* «եղավ» և այլն:

Հայերենի դեպքում, սովորաբար, առանձնացվում են նաև հին (գրաբարյան)՝ *գան ընկել* «ծեծ ուտել» և այլն, նոր գրականի երկու տարբերակներին բնորոշ՝ *խելքը կտրել* և *խելքին պատկել* «հավանության արժանանալ», *աչքը փակ* և *աչքը գոց* «անմիջապես՝ ընդունելի», *գլխից հանել* և *գլխե հանել* «իր ուզածին հասնել» և այլն:

դ. Լեզուներում դարձվածային միավորները հաճախ հանդես են գալիս տարբերակներով, որ բացատրվում է նրանց կազմում եղող բաղադրիչների բնույթով: Լինում են դարձվածային միավորներ, որոնք հար և միշտ ունեն նույնպիսի կազմությամբ բաղադրիչներ, այսինքն՝ դրանցից մեկը կամ մյուսը այլ ձևով չի լինում. *սկանջը մորնել*, *գլխին փալ*, *որը կախ գցել* և այլն: Մակայն կան նաև այնպիսիները, որոնցում այս կամ այն բաղադրիչը կարող է գործածվել այլևայլ փոփոխությամբ. *աստված չանի // աստված ոչ անի // աստված մի արասցե* «բարեհաջող լինի», *որ ու ձեռքից ընկնել // որք ու ձեռքից ընկնել // հալից ընկնել* «խեղճանալ, անճարանալ» և այլն:

Դարձվածային տարբերակները միևնույն դարձվածային միավորի այն տարատեսակներն են, որոնք առաջ են գալիս ի հաշիվ բաղադրիչների քերականական (հոլովական, հոդառության, թվի և այլն) տարբերությունների, ինչպես նաև լեզվի բառապաշարի տարբեր փոփոխության (հին կամ նոր, գրական և խոսակցական՝ բարբառային, բնիկ և փոխառյալ և այլն) տվյալների օգտագործման և այլն:

Ըստ այդմ կարելի է նշել հետևյալ տեսակները.

1) ըստ բաղադրիչների քերականական (հոլովական, հոդառության, թվի և այլն) ձևերի տարբերությունների՝ *Միզիֆի աշխատանք // սիզիֆյան աշխատանք* «դժվար՝ անտեղի չարչարանք՝ աշխատանք», *դանայան փակառ // Դանալոսի փակառ* «դատարկություն՝ իզուր տեղ», *արյունը գլխին փալ // արյունը գլուխը փալ* «զայրանալ, բռնկվել», *մորթին թափած աղվես // մորթը թափած աղվես* «չափից ավելի խորամանկ», *գլուխ փանել // գլուխը փանել* «համառել. հետամուտ լինել» և այլն.

2) ըստ բառապաշարի տարբեր փուլերի (հին կամ նոր) տվյալների օգտագործման՝ *աստված մի արասցե // աստված չանի* «հաջողություն լինի», *քալ լիցի // քավություն լինի* «թողություն լինի», *ի խորոց արբի* «ամբողջովին», *լտողաց լինեմ* «լսելով» և այլն.

3) ըստ բառապաշարի տարբեր շերտերի (գրական կամ խոսակցական) տվյալների օգտագործման՝ *երես տալ // երեսով տալ* «հիշեցնել՝ չարախնդարով», *(քերանի) ջուրը գնալ // (քերանի) լոզերը գնալ* «շատ ուզենալ, չդիմանալ», *կոկորդ(ը) // բողազ(ը) պատռել* «համառել, խիստ հետամուտ լինել», *ձեռքը ծոցը մնալ // խեղճ մնալ* «զուրկ մնալ, անճարանալ», *վիզը ծոել // շիհքը ծոել* «խեղճանալ, թախանձել» և այլն.

4) ըստ բառապաշարի տարբեր աղբյուրի (բնիկ կամ փոխառյալ) տվյալների օգտագործման՝ *օգոստոսի աղվես // ամառվա աղվես* «սակավաղեպ՝ հազվագյուտ խորամանկություն», *Ռուբիկոնն անցնել* «դժվարությունը՝ արգելքը հաղթահարած լինել», *պրոկուրորսյան մահիճ* «բռնի՝ ուժի գործադրմամբ հարմարեցում», *աքիլլեսյան գարշապար* «թույլ՝ խոցելի տեղ» և այլն:

ե. Դարձվածային միավորների ուսումնասիրության ժամանակ կարևոր է նաև անդրադառնալ բաղադրիչների խոսքիմասային պատկանելությանը: Լեզուներում սովորաբար առանձնացվում են երեք կարգի՝ անվանական, բայական և մակբայական դարձվածային միավորներ:

Նշենք դրանք՝ առանձին-առանձին:

1) Անվանական են գոյականական և ածականական դարձվածային միավորները՝ *աչքի սուրմա թոցնող* «ճարպիկ», *օձ խուզող* «ժլատ, կծծի», *մեռելի գույն* «հիվանդ», *նորքից գլուխ* «ամբողջովին», *երկու քայլի վրա* «մտոիկ (տեղ)» և այլն, ինչպես նաև *ձեռը պակաս* «խեղճ, աղքատ», *ձեռը կարճ* «աղքատ, ունեզուրկ», *սրտին մոտիկ* «ցավալի, սրտալի», *լեզուն կարճ* «խոսելու տեղ չունեցող», *քերանը խուփ* «լուռ. լռող» և այլն.

2) բայական կազմությամբ դարձվածային միավորներ են՝ *երես ծեծել* «համառել, չամաչել», *երեսը պնդել* «անամոթանալ. համառել», *քերան ծոել* «խնդրել», *նորքերն ընկնել* «աղաչել, պաղատել», *սկան-*

ջին նսարել «անընդհատ հիշեցնել», գլխին քար աղալ «խաբել, հալածել», լեզու դարձնել «չակնածել», լեզու թափել «շողոքորթել», վիզ ծռել «խնդրել, խեղճանալ» և այլն.

3) մակբայական կազմությանը դարձվածային միավորներ են՝ *աչքից հեռու* «գաղտնի», *մեջքի վրա* «աղավարի», *ուրի տակ* «հասարակ. չնչին», *տնից դուրս* «ծածուկ», *մերքի մեջ* «ինքնին, ներամփոփ» և այլն:

գ. Դաձվածային միավորները հաճախ միմյանց միջև ունենում են ճիշտ այնպիսի բառական և իմաստային հարաբերություններ, ինչպիսին սովորաբար լինում է առանձին բառերի դեպքում: Նկատի ունենք նրանցում առկա հոմանշությունը, հականշությունը և համանունությունը: Լեզուներում հոմանիշ դարձվածային միավորները քանակապես ավելին են, և դա բնական է՝ կապված դրանցով լեզվի ռճական, հուզական-արտահայտչական նրբություններ հանդես բերելու հետ: Եվ ըստ այդմ նշենք հետևյալ տեսակները՝ համապատասխան օրինակներով.

1) Հոմանշային հարաբերությամբ դարձվածային միավորներ են՝ *բերանում չիր չթրջվել* «բերանբաց լինել» // *բերանում լոքի չթրջվել* «խոսքը՝ լսածը տարածել», *գլխին քար աղալ* «խաբել, հալածել» // *գլխին նսարել* «վստահությունը չարաշահել», *մեջքը կոտրել* «ձախողվել» // *մեջքը ծռել* «տանջահար լինել», *մեկի դուռն ընկնել* «մեկին դիմել» // *մեկին վիզ ծռել* «մեկին խնդրել», *մեկի ոտքերն ընկնել* «մեկին աղաչել», // *մեկի կոտրն ընկնել* «մեկի պնդածն ընդունել», *լեզու թափել* «շողոքորթել» // *լեզու բանեցնել* «ճարպկություն անել» և այլն:

2) Հականշային հարաբերությամբ դարձվածային միավորներ են՝ *ականջը խոլ* «վստահելի» // *բերանը բաց* «խոսք տանող», *լեզուն կարճ* «մեղավոր. իրավագուրկ» // *լեզուն երկար* «անիրավ. հանդուգն», *ուրի տակ գցել* «վնասել. արհամարհել» // *գլխին դնել* «պատվել, մեծ տեղ տալ» և այլն:

3) Համանունական հարաբերությամբ դարձվածային միավորներ են՝ *աչք փակել* «չտեսնելու տալ» // *աչք փակել* «անցկացնել» // *աչք փակել* «քնել» // *աչք փակել* «վախճանվել», *հոգի տալ* «հոգ տանել» // *հոգի տալ* «հոգալ» // *հոգի տալ* «շունչը փչել, վախճանվել», *գլուխ*

գալ «իրականանալ» // *գլուխ գալ* «ավարտվել», *ձեռք առնել* «վիրավորել» // *ձեռք առնել* «նախաձեռնել» և այլն:

3. Ինչպես արդեն գիտենք, բառապաշարի հարստացումը հիմնականում տեղի է ունենում ներքին միջոցներով (բարդում, ածանցում և այլն) և փոխառություններով: Ստորև հարկ կա անդրադառնալ նաև մեկ այլ երևույթի՝ *պատճենմանը*, տվյալ դեպքում՝ դարձվածային պատճենումներին: Նման պատճենումները բառացի թարգմանություն կամ նմանակումներ են մի լեզվից մեկ այլ լեզվի: Բոլոր լեզուներն էլ ունեն դարձվածային պատճենումներ. հայերենը ևս անմասն չէ, ունի նման միավորներ, ընդ որում թե՛ հին և թե՛ նոր շրջանում. *գլուխ գործոց* (ֆրանս. *chef d'oeuvre*) «հեղինակի գործերից գլխավորը՝ ամենակարևորը», *վիճակը ներված է (ձգված է)* (< լատ. *alea jacta est*) «Կեսարի խոսքը՝ Ռուբիկոնն անցնելիս», *քաղաքի հիմնումից* (< լատ. *ab urbe condita* «(Հռոմ) քաղաքի հիմնադրումից ի վեր») և այլն:

4. Դարձվածային միավորները մեծ կարևորություն ունեն ամեն մի լեզվի, մանավանդ գեղարվեստական (հրապարակային, ճարտասանական և այլն) խոսքի ոճական-արտահայտչական կողմի ապահովման առումով:

Նման միավորների գործածության հիմքում, բնականաբար, ընկած են լինում տվյալ լեզուն կրող հանրության մտածողությունը, հոգեբանությունը, սովորույթները և այլն: Բավականին տարօրինակ կարող էր լինել, եթե փորձ արվի գեղարվեստական և մյուս տեսակի խոսքի մեջ գործածված դարձվածային միավորները փոխարինել սովորական բառերով, թեկուզև՝ այս կամ այն սովորական բառակապակցությամբ: Դա, անշուշտ, կլինի անհաջող փորձ, խոսքի անհատական կողմի (պատկերավորության, արտահայտչականության և այլն), մեղմ ասած, խճողում, որն անհանդուրժելի է ամեն դեպքում:

Առանձնապես գեղարվեստական խոսքը տարբերվում է մյուսներից նաև նրանով, որ տեղ ունի դիպուկ և արտահայտիչ դարձվածքների կիրառության, մանավանդ առնված լեզվի ժողովրդական մտածողության հիմքերից: Հմնտ. Քանի *ձեռքից եմ վառվել*, / Վառվել ու հուր եմ դառել (Թումանյան) և այլն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 304-315:

Լրացուցիչ գրականություն:

Քոչյան Վ. Ա., Դարձվածաբանություն // *Գ. Բ. Զահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոչյան*, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 472-512:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-84:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 116-120:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 126-132:

Թեմա 6. Լեզվի բառային կազմ. բառային կազմի զարգացում

Հիմնահարցեր: *Բառային կազմ* և *հիմնական բառաֆոնդ*: *Բառային կազմի փոփոխությունները*: *Բառերի փարբերակումը*. *մասնագիտական-գրադմունքային բառապաշար*: *Բառային մաքրամոլություն (պուրիզմ)*, *մեղմասություն (եվֆեմիզմ)*, *փարբու*: *Բառապաշարի կայարելյազործումը*: *Բառապաշարի ինաստրաբանական զարգացումը*: *Հին և նոր բառեր*. *հնարանություններ և նորարանություններ*:

1. Լեզունների բառապաշարը տևական հաղորդակցման ապահովման ամենահիմնական միջոցն է՝ իբրև պատրաստի, առարկայորեն ամրագրված միավորների ամբողջություն: Այն ըստ կենսունակության աստիճանի, առավել գործածականության հատկանիշի բաժանվում է երկու մասի՝ բառային կազմ և հիմնական բառաֆոնդ: Յուրաքանչյուր կենդանի լեզվի բառապաշար անընդհատ փոփոխման և վերակազմակերպման գործընթացի մեջ է: Արտալեզվական պայմանների հետ կապված՝ լեզվի բառապաշարի մեջ տեղ են գտնում նոր հասկացությունների անվանումներ (նոր բառեր, տերմիններ և այլն), ինչպես նաև ինչ-որ չափով մեկուսանում, մոռացության են մատնվում եղած բառեր, ընդհանուր առմամբ դառնում են ոչ այնքան գործածական: Այդ հարահոս փոփոխությունները, անշուշտ, բառապաշարի գոյության և գործառության ձևն են:

Լեզվի բառապաշարի մեջ մտնող բառերի ամբողջությունը կոչվում է բառային կազմ: Այն լեզվի պատմության յուրաքանչյուր փուլում ներկայանում է բոլորովին նոր պատկերով, հնարավորություն ունի ծառայելու հաղորդակցման իրացմանը բառային նոր մակարդակում:

Բառային կազմի մեջ, այնուամենայնիվ, մշտապես գոյություն ունի բառերի մի բազմություն, որը առավելապես կայուն է արտալեզվական հանգամանքներով պայմանավորված փոփոխությունների նկատմամբ: Քանի որ այդ մասը կայուն է, ուստի կոչվում է բառապաշարի հիմնական մաս, այլ կերպ ասած՝ բառապաշարի հիմնական բառային ֆոնդ կամ բառաֆոնդ (*պաշար*. լատ. *fundus* «հիմք»): Կայուն լինելուց բացի այն բավականին կենսունակ է, մշտապես հիմք է հանդիսանում նոր բառերի և տերմինների ստեղծման համար: Այս-

պես, ազգակցական անմիջական կապ արտահայտող բառերը. օրինակ, լեզուների բառապաշարի բառային հիմնական ֆոնդի միավորներ են՝ *հայր, մայր, քույր, եղբայր* և այլն, այդպես նաև բնության առաջնային երևույթների անվանումները՝ *հող, ջուր, երկինք, երկիր, քար, խոր, ամպրոպ, անձրև, քամի, ձյուն* և այլն, մարդկանց միջև ամենանգամյա շփումների հասկացությունների անվանումները՝ *գնալ, գալ, բերել, փանել, փայլ, առնել, ուրել, խմել, քնել* և այլն:

Իսկ բառային հիմնական ֆոնդի, այսպես կոչված, միջուկը, եթե հաշվի ենք առնում լեզուների պատմության ընթացքում երևան եկած փոփոխությունների բնույթը, պարզ կամ արմատական բառերն են, որոնք համեմատաբար քիչ, գրեթե աննշան չափով են ենթարկվում փոփոխության, ընդ որում եթե ոչ այնքան բովանդակության պլանում (հմաստաբանորեն), ապա զգալի չափով արտահայտության պլանով (ձևով), մասնավանդ գրավոր ավանդույթ ունեցող լեզուներում: Վերը բերված օրինակների մեծ մասը լայն գործածություն է ունեցել հայերենի նախորդ փուլերում՝ գրաբարում, միջին հայերենում, շարունակում է հանդես գալ ժամանակակից գրական լեզվում. հմտ. *հայր, մայր, եղբայր, հող, ջուր, գնալ, գալ* և այլն: Ավելին, դրանց մի մասը չի կրել նույնիսկ քերականական մակարդակի էական փոփոխություն. հմտ. *հայր – հոր, մայր – մոր, գալ – եկա, ուրել – կերա* և այլն:

Լեզուներում բառային կազմի և բառային հիմնական ֆոնդի փոփոխության տեմպերը զգալիորեն տարբեր են: Բառերի գործածության վիճակագրական ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս, որ առաջինը մոտ երկուսուկես-երեք անգամ ավելի արագ է փոխվում, քան երկրորդը, որը բացատրվում է բառապաշարում նրանց կայունության հանգամանքով: Լեզվի պատմության տվյալներից պարզվում է, որ հիմնական բառաֆոնդից շատ դանդաղ են բառեր դուրս մնում, այնինչ հասարակության մեջ տեղի ունեցող գրեթե ամեն մի փոփոխություն անմիջական արտահայտություն է գտնում բառապաշարում: Այսպես, հայերենում այս վերջին տարիներին սակավ են գործածվում կամ ամեննին չեն գործածվում *հանրախանութ, գրախանութ, ճաշարան, նախաճաշ, խորրկարան, հյուրանոց* և այլ բառերը, որովհետև դրանց փոխարեն բառապաշար են մուտք գործել նոր, ընդ որում

օտար բառեր՝ *սուպերմարկետ* «մեծ խանութ», *լանչ* «ճաշել. նախաճաշ», *հուրել* «հյուրանոց» և այլն, ընդ որում գրեթե ամենօրյա գործածությամբ, ռեկլամային ազդագրերով հանդերձ և այլն:

Բառապաշարի բառային կազմի համեմատությամբ հիմնական բառային ֆոնդը բնութագրվում է իբրև քանակապես պակաս, գործածականությամբ անհրաժեշտ և կենսունակ, անհամեմատ դանդաղ փոփոխվող, ընդհանուր բառապաշարի հիմքը կազմող միավորների ամբողջություն: Եվ, բնականաբար, այս բնութագրիչ հատկանիշների «մյուս կողմը» (քանակապես ավելին, գործածությամբ ոչ այնքան հարկավոր և այլն):

Ամեն մի լեզվի բառապաշար կարող է լինել թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա (պատմական) քննության առարկա: Բառապաշարի ոչ միայն առկա (ստատիկ) տվյալների նկարագրությունը, այլև ժամանակի ընթացքում կրած ներունակ (դինամիկ) փոփոխությունների վերլուծությունը կարևոր են այն կրող ժողովրդի հոգեմտավոր առաջընթացի և իմացական (մշակութային) առաջադիմության տեսանկյունից: Ըստ այդմ, բառապաշարը տվորաբար դասակարգվում է ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի: Այսպես, հնդեվրոպական լեզուների ընդհանուր բառապաշարի իմաստային (թեմատիկ) խմբերի առանձնացման փորձ կատարվել է ոչ միայն նախկինում, այլև անցյալ դարի կեսերին. հայտնի է, օրինակ, Կ. Դ. Բաքի բառարանը, որում կատարվում է նման դասակարգում: Հայերենի վերաբերյալ նման դասակարգում տվել են նախ՝ Հ. Աճառյանը, այնուհետև՝ Գ. Բ. Ջահուկյանը հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանի բառապաշարի համեմատական քննությանը վերաբերող աշխատություններում: Ժամանակակից գրական հայերենի համար նման խմբավորում հանդիպում են նորմատիվ-նոսոմնական ձեռնարկներում, ընդ որում վերը նշված հեղինակների աշխատությունների օրինակով:

Ըստ այսմ՝ լեզուներում առանձնացվում են երկու տասնյակից ավելի իմաստային (թեմատիկ) խմբեր, նշենք դրանցից միայն մի քանիսը.

ա. Ֆիզիկական աշխարհ՝ *հող, ջուր, կրակ, երկինք, երկիր, ծով, ցամաք, գեյրին, անտառ, ծառ, քամի, փոթորիկ, կայծակ, հողմ* և այլն:

բ. Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն՝ մարդ, այր, կին, ամուսին, դուստր, եղբայր, քույր, սկեսուր, ընտանիք, զավակ և այլն:

գ. Կենդանիներ՝ կով, ոչխար, եգ, հավ, այծ, գայլ, եղնիկ, արջ, կորյուն, մրջյուն, մուկ, մեղու և այլն:

դ. Մարմնի մասեր, մարմնական գործողություններ՝ մարմին, ոտք, ոսկոր, ձեռք, գլուխ, մազ, աչք, ուս, շունչ, հեղուկ, քնեղ, խայթեղ, մեռնեղ և այլն:

ե. Ուտելիք, ըմպելիք, կերակուր, ամանեղեն՝ ուրեղ, ծամեղ, կեր, եփեղ, խաշեղ, հաց, բլիթ, միս, հարիկ, գինի, աման, պուլիկ և այլն:

զ. Հագուստ, անձնական զարդարանք, խնամք՝ հագնեղ, ուրայն, զգեստ, օթոց, կահույք, գլխարկ, վերարկու, մարամի, գուրի և այլն:

է. Բնակարան, կահկարասի՝ տուն, սենյակ, պարզգամք, ձեղուն, տանիք, հարակ, դուռ, պարուհան և այլն:

ը. Հողագործություն, բուսականություն՝ արտ, արոտ, գութան, դաշտ, ցեղ, բերք, ցանքս, անտառ, այգի, ծառ, ծաղիկ, պտուղ, բույս և այլն:

Ըստ լեզվի բառապաշարի ժամանակային կտրվածքի՝ բառերը լինում են հին և նոր, ըստ ծագման աղբյուրի՝ բնիկ և փոխառյալ, ընդ որում փոխառյալ բառերը կարող են վերցված լինել նույն լեզվի նախորդ փուլերից, ինչպես նաև այլ լեզուներից:

2. Ի տարբերություն բառային ֆոնդի, որն աչքի է ընկնում ոչ միայն կենսունակությամբ, այլև կայունությամբ, բառային կազմը որքան էլ կենսունակ և գործածական, չունի նախորդի նման կայունություն, այլ համեմատաբար փոփոխվող է, ներկայացնում է հարաշարժ վիճակ:

Բառային կազմի փոփոխությունները խիստ բազմազան են, պայմանավորված են լեզվի վրա ազդող գործոններով, ինչպես նաև նրանց հարակից ազդակներով,- իրականության մեջ տեղի ունեցող գրեթե յուրաքանչյուր տեղաշարժ, ինչպես գիտենք, իր անմիջական բառային արտահայտությունն է գտնում նրա բառապաշարի մեջ: Եվ պատահական չէ, որ նկատված է, թե լեզվի ամենահարափոփոխ («ամենազգայուն») ոլորտը բառապաշարն է:

Բառային կազմի մեջ տեղի ունեցող փոփոխությունները երկու կարգի են՝ քանակային և որակական, մեկը, կարելի է ասել, արտահայտության պլանի փոփոխություն է, մյուսը՝ բովանդակության պլանի: Քանակային փոփոխությունն, իր հերթին, լինում է երկու կերպ՝ նոր բառերի ավելացում (բառապաշարի քանակային մեծացում) և հին (հնացած) բառերի հեռացում (կորուստ): Իսկ որակական փոփոխությունը այլ բան չէ, քան բառապաշարի (հիմնական կազմի կամ հիմնական բառաֆոնդի) մեջ եղած այս կամ այն չափով գործուն կամ համեմատաբար ոչ գործուն միավորների իմաստային լրացումը, ավելացումը մի նոր իմաստով, որպիսով, բնականաբար, գործուն միավորն ավելի կենսունակ և գործածական է դառնում, իսկ մյուսը՝ ոչ այնքան գործուն միավորը, ստանում է իմաստային «նոր լիցք» և դառնում միառժամանակ կամ մշտապես գործածելի լեզվի տվյալ շրջանի բառապաշարի մեջ:

Այսպես, հայերեն *ճրագ* «ձեթի կամ նավթի ինքնաշեն վառվող՝ լույս տվող հարմարանք», *յրրեխ* «անմշակ կաշվից ձեռքով պատրաստված ոտնաման» բառերը, որոնք լեզվի մեջ վաղուց հնացած էին, մտել էին բառային կազմի ոչ կենսունակ շերտի մեջ, վերջին ժամանակներին, մեկ-երկու տասնամյակ առաջ, ընդ որում մի դեպքում՝ էլեկտրականության հաճախակի խափանման, մյուս դեպքում՝ շուկայական՝ ազատ ձեռներեցության առաջ գալու պայմաններում, դարձան գործածական, այն է՝ *ճրագ*-ը գործածվեց նույն ձևով, հիմնականում նավթի այրվելով լույս տալով, իսկ *յրրեխ*-ը՝ ոչ թե անմշակ, այլ գործարանային մշակման առնված կաշվով, որ երիտասարդների շրջանում մի քանի տարի անընդմեջ մեծ պահանջարկ ուներ: Ըստ այդմ, *ճրագ* և *յրրեխ* բառերը միայն մի ժամանակ դարձան նոր իմաստով գործածվող բառեր, թեև արագ էլ դուրս մղվեցին գործուն բառապաշարից՝ վերստին կրելով «հնացած բառ» համարումը:

Նոր բառերի ավելացումը, որն այլ կերպ կոչվում է նաև բառապաշարի հարստացում, տեղի է ունենում ներքին և արտաքին միջոցների հաշվին: Ավելի հաճախադեպ են գոյական անուն միավորները, որովհետև փոխառությունը մեծապես կատարվում է առարկայական հասկացությունների անվանումների ոլորտում՝ սովորական բառ կամ

տերմին, և դրանք նշանակվում են գոյականով, մասամբ այլ խոսքի-մասային միավորներով:

Ներքին միջոցը հիմնականում բառակազմական հնարավորությունների օգտագործմամբ՝ բառաբարդմամբ կամ ածանցմամբ, մասամբ հապավմամբ նոր բառեր կազմելն է. օր.՝ *գիրաժողով, հանրագումար, լիագումար, միջգիրաճյուղ, հանրալեզվաբանություն, հոգելեզվաբանություն* և այլն: Ներքին միջոց են նաև բառային այն փոխառությունները, որոնք կատարվում են մեկ լեզվի տարբեր փուլերի միջև, բնականաբար՝ հին փուլից անցում նորին. հմմտ. *քանիցս, հոգուր, քանզի, ըստ օրինի, հանիրավի* և այլն:

Բառապաշարի հարստացման արտաքին միջոցը փոխառություններն են, որոնք կատարվում են լեզուների միջև՝ պայմանավորված դրանց տարբեր բնույթի շփումներով: Փոխառությունը հատուկ է գրեթե ամեն մի կենդանի լեզվի, որ տեղի է ունենում երկու ձևով՝ անմիջական և միջնորդավորված:

Անմիջական կոչվում են այն փոխառությունները, որոնք մի լեզվից մյուսին են անցնում առանց երրորդ լեզվի մասնակցության (միջամտության). հմմտ. *կոլխոզ* «կոլեկտիվ տնտեսություն», *նարյաղ* «հանձնարարվող աշխատանքի չափ՝ ծավալ», *թեյնիկ* «թեյաման», *սամնվար* «ինքնաեռ», *բորչչ* «կաղամբով կերակուր՝ ռուսական» և այլն:

Միջնորդավորված են լինում այն փոխառությունները, որոնք սովյալ լեզուն վերցնում է մեկ այլ լեզվից՝ ոչ անմիջաբար, այլ երրորդ լեզվի միջոցով. այսպես, ունենք փոխառություններ, օրինակ, ֆրանսերենից, որ հայերենին են անցել ռուսերենի միջնորդությամբ. *կլասիֆիկացիա* (< ֆրանս. classification) «դասակարգում», *ռեպուբլիկա* (< ֆրանս. république) «հանրապետություն», *ռևոլյուցիա* (< ֆրանս. révolution) «հեղափոխություն», *պարտիա* (< ֆրանս. parti) «կուսակցություն», *ֆակուլտետ* (< ֆրանս. faculté) «բաժին, ֆակուլտետ», *ֆունկցիա* (< ֆրանս. fonction) «գործառություն՝ գործառույթ», *սիստեմ* (< ֆրանս. système) «համակարգ» և այլն:

Այնուհետև, փոխառությունները տարբերվում են նաև ըստ քանակի հատկանիշի, այսինքն՝ թե որ լեզվից են առավել քանակով կատարված: Սա իրական հարցադրում է, քանի որ առավել մեծ չափերի

են հասնում այն լեզվից (կամ լեզուներից) կատարված փոխառությունները, որոնց կրող ժողովրդի (կամ ժողովուրդների) հետ փոխ առնող լեզվի կրող ժողովուրդն ունեցել է տևական և տարբեր բնույթի շփումներ: Այսպես, հայերենը հին շրջանում մեծ չափերով փոխառություններ ունի իրանական լեզուներից (հազարից ավելի), այնուհետև հունարենից (մի քանի հարյուրից ավելի), արաբերենից (մի քանի հարյուրից ավելի), իսկ նոր շրջանում՝ ռուսերենից (մի քանի տասնյակից ավելի) և այլն:

Հետաքրքիր է նաև այն, որ նման փոխառությունները կատարվում են կամ ընդհանուր, կամ մասնավոր բառապաշարի առումով, վերջին դեպքում, ասենք, թարգմանական, գրական-մշակութային ճանապարհով և այլն: Հին հայերենի՝ հունարենից կատարված փոխառություններն, օրինակ, ինչպես ընդունված է հայ բանասիրության մեջ, հիմնականում, եթե ոչ ամբողջությամբ գրական-մշակութային են, իսկ իրանական փոխառությունները՝ տարբեր, բազմազան ոլորտների:

3. Բառերի գործածությունը լինում է ոչ թե պատահական, հախտան, այլ որոշակի ձևով միմյանցից առանձնացված և խմբավորված:

Այս հարցը լեզվաբանության պատմության մեջ տարբեր կերպ են փորձել լուծել. երբեմն բառապաշարը բաժանվել է մի քանիսի (հատկապես երկուսի՝ իշխողների և ենթակաների)՝ ըստ հանրության շերտավորվածության («դասակարգայնության»), որն արդյունք է եղել հանրությունը դասային անմիակեպության մեջ ընկալման, մի տեսություն, որ լեզվաբանության մեջ ներկայումս հաղթահարված է:

Այս դեպքում հնարավոր է լեզվի բառապաշարը դիտարկել ըստ գործառական-ոճական (թերևս նաև՝ մասնագիտական) տարբերության, որը հնարավոր է միայն տերմինաբանական մակարդակում, սակայն ոչ բնավ ընդհանուր բառապաշարի նկատառումով: Գիտության, մշակույթի և այլ բնագավառի մասնագետներն, ինչ խոսք, ունեն իրենց յուրահատուկ (հեղինակային) բառապաշարը, բայց միաժամանակ հանդիսանում են նույն լեզվի ընդհանուր բառապաշարի կրողներ: Նրանք մի դեպքում՝ առանձնանում են իբրև մասնագիտական

ուղորտի բառապաշարի տեր, մյուս դեպքում՝ միանում են որպես այդ նույն լեզվի ընդհանուր բառապաշարի կրող: Նման տարբերակումը կայանում է միայն պայմանական առանձնացման մեջ, այլ դեպքում այն գոյություն չունի: Եվ այսպես, կարելի է տարբերել լեզվի ընդհանուր բառապաշար և մասնագիտական բառապաշար:

Մյուս կողմից, մասնագիտական բառապաշարը դեռևս հիմք չէ այն առանձին լեզու հորջորջելու համար, քանի որ այդ բառապաշարը շարունակում է մնալ լեզվի նույն քերականության սահմաններում: Տարբեր մասնագիտության տեր անձինք իրենց խոսքում գործածում են ն՛ ընդհանուր, և՛ մասնագիտական տերմիններ և տերմինային անվանումներ, բժիշկները՝ *դեղորայք*, *նշտար* «լանցետ», *դիսահերձել*, *սիսորորոշել բուժել*, *դեղահար*, *ռեցեպտ* «դեղագիր», *անալիզ* «վերլուծում», *թանգիվ* «մառլյա», *բամբակ* և այլն, իրավաբանները՝ *դատարել*, *բողոքարկում*, *պարծամիջոց*, *կալանք*, *անմեղության կանխավարկած*, *մեղադարյալ*, *հայցադիմում*, *հանցակազմ*, *տույժ* և այլն, պատմաբանները՝ *հասարակություն*, *դասակարգ*, *ֆորմացիա*, *հեղափոխություն*, *պայքար*, *ազատագրական շարժում*, լեզվաբանները՝ *հնչույթ*, *վանկ*, *հարացույց* «պարադիգմա», *նախադասություն*, *որոշիչ*, *հատկացուցիչ* և այլն, սակայն թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքերում խոսքը կառուցված է լինում լեզվի քերականական համակարգի սահմաններում:

Նման բառապաշարին և քերականությանն է դիմում աշխարհագրորեն տարբեր գոտիների բնակչությունը, և որքան էլ նույն լեզվի կրող է, այնուամենայնիվ ունենում է իր բնակչության վայրի, զբաղվածության (տնտեսական, նյութական արտադրության այլ միջոցի), բնակլիմայական պայմանների հետ կապված բառապաշարի մի ուրույն ուղորտ, շերտ, որով տարբերվում է մյուս տարածքների բնակչությունից:

Տարածքային և բնակլիմայական առումով հայերենում կա բառապաշարի տարբերակում. հմմտ. մի կողմից՝ *անտառ*, *հատրասպրուղ*, *ծառ*, *թփուր*, *գով* (եղանակ), *գեղ*, (սառնորակ) *ջուր* և այլն, մյուս կողմից՝ *շոգ*, *չոր*, *ցամաք*, *անմշակ*, *անբերրի հող*, *քարքարուր*, *ջրագուրկ* և այլն բառերի կիրառությունը աշխարհագրական տարբեր գոտիներ

րի հայ բնակչության բառապաշարում: Այնուհետև, այդ նույն գոտիներում տարբեր զբաղվածության հետ կապված բառապաշարի որոշակի շերտեր կարող են իրարից լիովին տարբեր լինել. օրինակ՝ դաշտավայրայամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և այլն զբաղվողների բառապաշարը, այլն թե՛ մեկ, թե՛ մյուս տարածքներում արհեստավորների բառապաշարը և այլն:

Այսպիսով, կարելի է մտածել, թե բառապաշարի մասնագիտական, զբաղմունքային տարբերությունը ինչ-որ չափով կախված է լեզվի գործածության արտաքին հանգամանքներից:

Եվ ըստ այդմ ամենևին պատահական չէ, որ տարբերում են, այսպես կոչված, մասնագիտական լեզուներ՝ «ճարտարագետների լեզու», «բժիշկների լեզու», «իրավաբանների լեզու», «երաժիշտների լեզու», կազմվում են այդ «լեզուների» բառապաշարի բառարաններ, բառացանկեր և այլն:

Ճիշտ է, նոր լեզվաբանական գիտությունն ներկայումս բացառում է լեզվի բառապաշարի դասակարգային շերտավորումը, սակայն այն, մի տեսակ, նկատելի է նեղ մասնագիտական բերումով առանձնացող տարբեր խավերի մեջ՝ կապված նյութական հնարավորությունների, քաղաքացիական կացության, սոցիալական վիճակի ինչ-ինչ տարբերությունների հետ:

Հայերենի բառապաշարին ևս, հատկապես վերջին ժամանակներս խորթ չեն, այսպես կոչված, «էլիտար» բառաշերտի գործածությունը, իրենց արտոնյալ համարողների և ենթակաների, ընդ որում սպասարկման ոլորտի ծառայության մեջ գտնվողների բառապաշարի նկատելի տարբերությունը և այլն:

Լեզուներին էլ հատուկ են նեղ սոցիալական բնույթով պայմանավորված բառապաշարի դրսևորումները՝ իրենց ավանդական անվանումներով՝ *արգո* (ֆրանս. argot «ծածկալեզու»), *ժարգոն* (ֆրանս. jargon «(առանձին՝ հատուկ) խոսվածք») և այլն:

Արգոն հանրության որևէ շերտի «լեզուն» է, որը հիմնականում ստեղծվել է նույն հանրությունից առանձնանալու, խոսքի ուրույն գերակայություն ապահովելու նպատակով: Դա մի տեսակ ինքնակա և

պայմանական լեզու է, որ ինչ-որ չափով տարբերվում է ընդհանուր լեզվից, ամենից առաջ իր բառապաշարով, շատ չնչին դեպքերում՝ դարձվածային միավորներով, ոճական արտահայտություններով և այլն, հիմնականում բառերի օտարլեզվյան հնչումով, ինչպես նաև նույնպիսի բառագործածությամբ:

Նման երևույթի դրսևորումը, վերջիվերջո, մարդկանց ինչ-որ խմբի («դասային») խտրության արդյունք է, իր ակունքներն ունի անցյալի մեջ, երբ մի խավ (արիստոկրատներ, էլիտարներ և այլն) իրեն դիտում է ոչ այնքան սովորական, քան մյուսները, և առաջ է գալիս լեզվական-հաղորդակցական անհավասար բաշխում, մանավանդ բառապաշարի մեջ. հմմտ. *հարց չկա* («պարզ է»), *շեֆ* («ղեկավար»), *ննց կասես* («խնդրեմ»), *կյանք* («սիրելիս»), *հեջ* («ոչ մի, ոչի՛ նչ»), *բա՛ննց* («հապա ինչպես»), *խի՛* («ինչու»), *հոգնսի՛ծ* («վիրավոր. անպիտան») և այլն:

Ժարգոնը նույնպես հանրության որևէ շերտի «լեզու» է, որ ընդհանուր եզրեր ունի նախորդի՝ արգոյի հետ, սակայն հանդես է բերում նաև տարբերություններ: Այն թեև քերականությամբ նույնն է, սակայն ընդհանուր լեզվից տարբերվում է յուրօրինակ բառերով, ոճերով և արտահայտություններով. *մանթո լինել* («ապուշ կտրել»), *դուխից ընկնել* («թուլանալ, ընկրկել»), *ցիրկ* («խառք, խայտառակություն»), *ցվրրվել* («խուսափել, փախչել»), *դայադ լինել* («մի բանի հենված մնալ»), *յան փալ* («ձեռք քաշել») և այլն:

Դրանք չունեն տարածքային սահմանափակություն, ընդհանուր են համանման խավի ներկայացուցիչների համար: Տարբերում են ժարգոնների երկու տեսակ՝ ըստ սոցիալական շերտավորման և մասնագիտական կողմնորոշման: Ժարգոնը, որն ավանդաբար առանձնացվում է լեզուների մեջ հատկապես բառապաշարի հիման վրա, գալիս է հին շրջանից, ամենից առաջ ըստ սոցիալական տարբերակվածության, լինում են դասակարգային, ազնվականական, բուժուական և այլն: Կան նաև մասնագիտական հատկանիշով առանձնացվող ժարգոններ՝ արհեստավորների, առևտրականների, երկաթուղայինների և այլն:

4. Լեզվաբանության մեջ, առհասարակ ավանդույթի ուժով, ենթադրյալ դասակարգային շերտավորման հայեցակետից են շարունակում քննել բառապաշարին վերաբերող այնպիսի երևույթներ, ինչպիսին են համարվում (*բառային*) *մաքրամոլությունը* (պուրիզմ. ֆրանս. purisme «մաքրամոլություն» < լատ. purus «մաքուր»), *մեղմասությունը* (էվֆեմիզմ. ֆրանս. euphémisme «մեղմասություն»), *տաբու* (ֆրանս. tabou «բառարգելում») և այլն:

Բառապաշարի տեղին և կանոնավոր գործածությունը, կարելի է ասել, ամեն մի լեզվի իդեալն է, և նրա գրական մշակման ձգտումն ունի նույնի իրականացման նպատակ: Մրանից հետևում է այն, որ գրական մշակման ձգտումը պիտի լինի չափավոր և տեղին: Այս ընդհանուր կանոնից ամեն կարգի շեղում այլ բան չէ, քան լեզվական նորմի խախտում: Եվ, ահա, բառապաշարի ոլորտում հայտնի է նման խախտման երևույթ, որ էլ ավանդաբար կրում է *մաքրամոլություն* անվանումը:

Այն հետապնդում է երկու նպատակ՝ լեզուն, մասավանդ բառապաշարը հեռու պահել օտարլեզվյան անհարկի փոխառություններից, ինչպես նաև մաքրել, անաղարտ դարձնել լեզուն՝ իր ներսում տեղ գտնող գոեհկաբանություններից, անհարկի, ոչ պատշաճ բառագործածությունից և այլն: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում, ինչպես կարելի է նկատել, լեզվի մաքրման գործում մեծ տեղ ունի արտաքին միջամտությունը (վերահսկող մարմնի համապատասխան որոշումներ, արգելանք, տուգանք և այլն):

Հայտնի է, նախ՝ 19-րդ դ. կեսերին ռուսական մշակութային ձեռնարկումները (արտաքին միջամտությունը), որոնք ուղղված էին լեզուն ֆրանսերենի՝ գրական ճանապարհով անցած և բանավոր խոսքում լայնորեն կիրառվող օտարաբան ձևերից (գալիցիզմներից) ձերբազատվելուն (հմմտ. Լ. Ն. Տոլստոյի վեպերը և այլն), այնուհետև՝ ֆրանսիական ակադեմիայի ձեռնարկումները ֆրանսերենը օտար անհարկի տարրերից, հատկապես բառապաշարի մեջ հանդես եկող բառերից մաքրելուն ուղղված միջոցառումները և այլն: Հայերենում ևս նման ձեռնարկումներ եղել են, այսօր էլ կա, սակայն ոչ համընդհանուր ձևով, այլ ըստ առիթի կամ պատահմունքի բերման և այլն:

Ըստ այսմ՝ կարելի է տարբերել մաքրամոլության երկու տեսակ՝ տեղին և ծայրահեղ. առաջին դեպքում՝ լեզուն, հատկապես բառապաշարը ազատվում է անհարկի գոյություն ունեցող օտար բառերից, երկրորդ դեպքում՝ լեզուն մաքրվում է իր ներսում ի հայտ եկող անհարկի, առավել ևս ոչ տեղին բառերից: Երկու դեպքում էլ օրինակելին և ընդունելին չափավորն է, ոչ ծայրահեղը:

Մեղմասությունը, որ կոչվում է նաև *մեղմարանություն*, լեզվի բառապաշարի մեջ ոչ պատշաճ («կոպիտ») բառերի, ոճերի և արտահայտությունների փոխարեն ավելի ընդունելի ձևերի գործածության երևույթն է: Այն տարածված է շատ լեզուներում, նաև հայերենում. հմմտ. *մեռնել – վախճանվել, երկինք գնալ, հոգին ավանդել* և այլն, *խիշտել – ուրել, ճաշակել, անուշ անել* և այլն, *լակել – խմել, ըմպել* և այլն:

Մեղմասությունը նաև սոցիալական հիմքեր ունի, մանավանդ միջավայրի իրադրական-քաղաքավարական պայմաններում: Սովորական միջավայրում, առօրյա խոսքում գործածվող շատ բառեր և արտահայտություններ կարող են դիտվել անհարկի, նույնիսկ գոեհիկ այլ պայմաններում. հմմտ. *տալ – հրամցնել, ասել – խնդրել, հրամայել – տեղեկացնել, պահանջել – հիշեցնել* և այլն: Գրական նորմայի սահմաններում մեղմասությունը դրական երևույթ է, հակառակ պարագայում՝ ոչ տեղին, նույնիսկ ավելորդ:

Տարբու է կոչվում այն երևույթը, երբ լեզվում արտաքին հանգամանքների պատճառով արգելանք է դրվում բառերի, արտահայտությունների գործածության վրա, և դրանց փոխարեն նույն իմաստով գործածվում են ավելի ընդունելի համարվողները: Դա հիմնականում արդյունք է հիմքում ընկած առարկայի վերաբերյալ ոչ ճիշտ, թյուր պատկերացման: Իսկ վերջինս, ինչպես գիտենք, հանգեցնում է սնահավատության, երկչոտության, անքննելի հավատի ընծայման և այլն: Այսպիսով, տարուն, սովորական իմաստով, արգելանք է լեզվի մեջ, իսկ բառապաշարի ոլորտում այն նշանակում է բառի գործածության կասեցում:

5. Բառապաշարի կատարելագործումը յուրաքանչյուր լեզվի որակական կողմի ապահովումն է, այն տեղի է ունենում գրեթե բոլոր մա-

կարդակներում՝ հնչյունական, բառակազմական, քերականական, ինչպես նաև գործառական, այլ կերպ ասած՝ բառապաշարի կատարելագործումը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտահայտության և բովանդակության պլաններում, ինչպես նաև գործառության մեջ տեղի ունեցած փոփոխությունների կարգավորում: Այս երևույթը նույնը չէ բոլոր լեզուների համար, ոչ էլ տեղի է ունենում նույն չափերով, այնուամենայնիվ դրանցում գործում են գրեթե նույն սկզբունքները:

Բառային մակարդակում կատարելագործումը ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյություն ունեցող միևնույն երևույթի անվանմանը վերաբերող տարբերակների ընտրություն, հանձնարարելիություն: Հայերենը, իբրև ժամանակի մեջ տևական պատմություն ունեցող լեզու, ներկայացնում է բառային միավորների հնչյունական, բառային-բառակազմական, ձևային-ձևակազմական նկատելի տարբերակներ. հին և նոր, գրական և խոսակցական (նաև բարբառային) ձևերի գոյակցություն, որ հաղորդակցական նոր պայմաններում հինը, բնականաբար, իր տեղը զիջում է նորին, որը սովյալ հանրության համար ավելի հասկանալի է և սովորական. հմմտ. *քրոջական-քույրական, աստեղային - աստղային, հորենական - հայրական, դես ու դեն - այս ու այն կողմ, էսպես - այսպես* և այլն:

Հնչյունական մակարդակի տարբերակների հարցում հայերենում, օրինակ, նկատվում է միտում գրաբարյան *և* տարբով հիմքերի փոխարեն գործածել առանց *և*-ի հիմքերով կազմությունները. հմմտ. *գազաթնակեր - գազաթակեր*, թեև նորակազմ *գազաթածողով* բառի դեպքում սկզբնապես ի հայտ բերվեց երկակի մոտեցում, որում վերջապես հաղթեց հին՝ *գազաթնածողով*, քան նոր՝ *գազաթածողով* ձևը:

Բառապաշարի արտահայտության պլանում առկա տարբերակները գրեթե միշտ գտնվում են ներքին հակադրության մեջ, և լեզվական սովորույթի (ուզուս, ֆրանս. usage «կիրարկություն», լատ usus «կիրառություն») պայմաններում է, որ հնարավոր է կանոնական համարել դրանցից մեկը կամ մյուսը: Այսպես, բառակազմական տարբեր հիմքերից մեկի կամ մյուսի հաղթանակը, բնականաբար, ուղղված է բառապաշարի կատարելացմանը. օր.՝ գրաբարյան *աստեղ (աստղ-ի*

եզ. սեռականի ձև), *ծախս* (*ծախս*-ի հոգն. հայցականի ձև), *ձերք* (*ձեռն*-ի եզ. գործիականի ձև) թեք հիմքերով կազմված *աստեղագիտություն*, *աստեղագիտություն*, *ծախսարար*, *ծախսել*, *ձերքակալել*, *ձերքագայրել* բառերը, որոնք լայնորեն գործածվելիս են եղել հայերենի հին շրջանում, ժամանակակից հայերենում դրանց հակադիր ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ունենալ ուղիղ հիմքերով կազմություններ. բերված օրինակներից միայն *աստեղագիտություն* կազմության փոխարեն կա նոր կազմություն՝ *աստղագիտություն*, այն էլ ոչ բոլոր դեպքերում հակադրելի. գրական-բանաստեղծական խոսքում *աստեղագիտություն*, նաև *աստեղագետ* և այլն բառերը կարող են ոճական հազեցվածության առումով ավելի նախընտրելի լինել:

Լեզվի բառապաշարի հին ձևերը միշտ չէ, որ հանուն խոսքի կատարելացման կարելի է մերժել, փոխարինել նորով, որը կարող է բառակազմորեն այնքան էլ ճիշտ և կանոնական չլինել. հմմտ. *տնօրեն* բառից ունենք *տնօրինություն* «տնօրինելու գործ՝ տնօրինելը» կանոնավոր կազմությունը, իսկ վերստին կազմված *տնօրենություն* «տնօրենի՝ դիրեկտորի գործը, տնօրեն լինելը» այլ է, եթե ոչ՝ թյուրմբանման հետևանք, որոնք, ինչպես կարելի է նկատել, տարբեր են, ուստի երկրորդը առաջինի փոխարեն գործածելը սխալ է:

Հակադիր տարբերակներ են առկա ոչ միայն հին և նոր ձևերի դեպքում (հմմտ. *աստեղագիտություն* - *աստղագիտություն*), այլև նորակազմ բառերի, մասնավանդ տերմինների ստեղծման դեպքում. հմմտ. *լեզվաբանություն* - *լեզվագիտություն*, *ոճաբանություն* - *ոճագիտություն*, *դարձվածաբանություն* - *դարձվածքաբանություն*, *ոճ* - *ոճույթ* և այլն: Նման երկվության մեջ երբեմն առաջ է քաշվում մի սկզբունք, ըստ որի դրանք, իբրև տերմիններ, ունեն իմաստային-իմաստաբանական նրբություններ: Այսպես նաև ժամանակակից հայերենում, իբրև բժշկագիտական տերմին, տարբեր են համարվում *գրիպ* և *հարքուխ* բառերը. հմմտ. *պարկանելիություն* - *պարկանելություն*, *լեզվաշինական* - *լեզվաշինարարական*, *գործառություն* - *գործառություն* և այլն: Նման երկվությունը հնարավոր է հաղթահարել գրական նորմային հետևելու դեպքում, իսկ դա երբեմն տևական ժամանակ է պահանջում:

Բառապաշարի կատարելագործմանն է ուղղված այն, որ նույն հասկացության անվանման համար ստեղծված մի քանի բառերի միջև, գրական նորմայի և այլ հանգամանքների նկատառումով, կատարվում է ընտրություն, հաղթում է տարբերակներից մեկը. հմնտ. *հեռացույց (հեռափոխիչ)* և *հեռուստացույց, սրենայրին – գազար, թուրինջ – (մի տեսակ) նարինջ* և այլն:

Լեզվում տեղ գտած փոխառյալ բառերը, իբրև կանոն, հաճախ իրենց տեղը զիջում են տվյալ լեզվի միջոցներով կազմված բառերին. հմնտ. *հունանիպար – հասարակական, պրորլեմ – խնդիր, դիսցիպլին – գիտակարգ, աուդիորորիա – լսարան* և այլն: Այս երևույթը կարևոր է ամեն մի լեզվի բառապաշարի միօրինակացման, իմաստային հստակության համար:

Տարբերակային ձևերի ընտրության, ըստ այդմ լեզվի կանոնարկման գործընթացում, բնականաբար, տեղի են ունենում բառային կազմի ձևաիմաստային և գործառական փոփոխություններ՝ տեղաշարժեր, որոնք ընդունված է բաժանել մի քանի տեսակի՝ բառերի *տերմինացում*, և հակառակը՝ տերմինների *բառացում*, ոչ գրական («ժողովրդախոսակցական և բարբառային») բառերի *գրականացում*, բառերի *պասիվացում* («հնացում»), բառերի *ակտիվացում* («գործունացում»):

ա) Բառերի *տերմինացումը* լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի գործածությունն է իբրև տերմին: Գիտության, տեխնիկայի, մշակույթի մեջ առաջ եկած այս կամ այն հասկացության անվանման համար միշտ չէ, որ ստեղծվում է նոր բառ, որպեսզի ունենալով նոր նշանակություն, համալրի տվյալ բնագավառի տերմինահամակարգը: Հայերենում այս ձևով տերմինների առաջացումը սովորական երևույթ է: Այն հատուկ է նաև ժամանակակից մյուս լեզուներին: Այսպես, հայերենում *խոնոչ* բառը, սովորական իմաստից բացի գործածվում էր նաև իբրև անատոմիայի, բժշկության բնագավառների տերմին, վերջին ժամանակներիս աստղագիտական գրականության մեջ կիրառվում է նաև իբրև աստղագիտական տերմին՝ «արեգակի վրա սև խոշոր բիծ» իմաստով:

Ըստ այդմ տեղի է ունենում լեզվի բառապաշարի իմաստային հարստացում: Բառի տերմինացումը լինում է մի քանի ձևով, եթե նկատի ենք ունենում այն, թե տերմինի վերածվող բառը ինչ բնույթի է.

1. չեզոք կամ սովորական իմաստով բառի նոր՝ տերմինային իմաստի ձեռք բերում. հմմտ. *ջուր* «բնության մեջ գոյություն ունեցող հեղուկ» – *ջուր* «քիմիական միացություն», *բողբոջ* «(առհասարակ) չբացված՝ կոկոն» – *բողբոջ* «ծառի չբացված ծաղիկ» (գյուղատնտեսական տերմին), *անցում* «անցնելը» – *անցում* «ճանապարհային երթևեկության տերմին», *վիժում* «անկում, ցած ընկնելը» – *վիժում* «ծանդի վաղաժամ կորուստ» (բժշկական տերմին) և «ծաղկաթափ. չփոշուոված ծաղկի փչացում» (գյուղատնտեսական տերմին) և այլն,

2. ոչ գրական (բարբառային) բառի գործածություն տերմինի կամ տերմինային անվանման իմաստով. հմմտ. *էփել* (բրբռ.) «կտրել, կտրելով հեռացնել» – *էփել* (գյուղատնտեսական տերմին) «վաղ գարնանը խաղողի վերգետնյա մասը կտրել»,

3. բառապաշարի ոչ գործուն, սակավ գործածության բառի տերմինացում. հմմտ. *մուծել* «տալ, հանձնել» – *մուծել* (տնտեսագիտական տերմին) «մուտք անել» և այլն:

բ) Տերմինների *բառացումը*, ըստ էության, նախորդ երևույթի հակառակն է, տեղի է ունենում նեղ, մասնագիտական բնագավառում գործածվող տերմինի վերածում բառի: Սա այն դեպքում, երբ տվյալ տերմինը կամ տերմինային անվանումը, շնորհիվ լայն և սովորական հաղորդակցման մեջ գործածության, սկսում է ընկալվել իբրև ոչ տերմինային միավոր, տվյալ մասնագիտական համակարգին չվերաբերող բառ. հմմտ. *գեներալ* «գորքի հրամանատար» – *գեներալ* «առաջինը, առաջնորդ. գլխավոր», *խազեին* «տնտես, տնտեսությունը վարող» – *խազեին* «տեր, տիրական՝ ամեն ինչի գլուխ» և այլն:

գ) Ոչ գրական («ժողովրդախոսակցական և բարբառային») բառերի *գրականացումը* սովորաբար նկատելի է գեղարվեստական գրականության մեջ, մասամբ նաև այլ բնույթի խոսքում: Նման բառերը, բնականաբար, ունեն իմաստային (թեմատիկ) սահմանափակություն, որը չի խանգարում դառնալու գրական նորմայի տեսանկյունից թույլատրելի. հմմտ. *գրչնակել* «խմորի գունդը բանալ» – *գրչնակել*

«համահարթել», *հարթուկել* «արդուկ անել» - *հարթուկել* «ավելորդ խոսել» (երկու դեպքում էլ՝ թ, փխ. դ), *ուրքել* «ուրքով հարվածել» (նոր բառ՝ նոր իմաստով. Հ. Մաթևոսյան), *բացումնաց* (*տրեղեր*) «(մարմնի) կիսաբաց մասեր» (նոր բառ՝ նոր իմաստով. Մ. Գալշոյան) և այլն:

դ) Բառերի *պասիվացում* («հնացում») երևույթը առավել, քան մյուս երևույթների դեպքում, պայմանավորված է խոսքում գործածության հաճախության հետ, իսկ վերջինս անմիջական կապ ունի հասարակության կյանքում տեղի ունեցող գործընթացների փոփոխության կամ, ավելի ստույգ՝ վերացման հետ: Հանրության ներքում կատարվող քաղաքական, տնտեսական, մշակութային բնագավառի որևէ տեղաշարժի հետևանքով լեզվի բառապաշարի մեջ եղած համապատասխան բառերը և տերմինները կան հնանում են, կան իսպառ վերանում. հմնտ. *կոլտրևերտություն, հնգամյակ, սովխոզ, սոցիալիզմ, օղակավար* և այլն բառերն այսօր մասամբ գործածվող են, կամ առհասարակ դուրս են մնացել հայերենի բառապաշարից. այսպես նաև տարբեր մասնագիտությունների, բնագավառների տերմիններ և տերմինային անվանումներ. գյուղատնտեսական բազմաթիվ գործիքների անվանումներ այլևս չեն գործածվում՝ *մանգաղ, արոր, բանուկի, բարդոց, որան, աշնանավար, խուրհունձ, հացքաղ* և այլն, դպրոցական ոլորտի բառեր այսօր չեն գործածվում՝ *գրչածայր, թանաքաման, կարկին, համրիչ, գրչարուսի* և այլն: Նման բառերի պասիվացման («հնացման») հիմնական պատճառը դրանց փոխարինող այլ անվանումների՝ տերմինների ի հայտ գալը և լայն կիրառություն ստանալն է. փոխվում է բառի գործածության արտալեզվական պայմանը, նշանակում է տվյալ բառը իր տեղը անպայմանորեն պիտի զիջի լեզվի նոր պահանջով երևան եկող նորին, ավելի ակտիվին և առավել գործածականին: Ի դեպ՝ այս փոփոխությունը բնական է, որքանով հանրային մտածողության փոփոխությունն է առարկայորեն բնական: Լեզուն, ինչպես գիտենք, անմիջական արտացոլումն է իրականության, և այս դեպքում այն միանգամայն իրական է:

ե) Բառերի *ակտիվացում* («ոչ գործուն շերտի բառերի գործունացում») երևույթը, որոշ վերապահությամբ, նախորդ երևույթի հակառակն է, երբ լեզվի բառապաշարում այս կամ այն հանգամանքի բերու-

մով (հեղինակային կազմություն, նեղ մասնագիտական ոլորտի գործածություն և այլն) բառը, որ մինչ այդ ուներ իրադրային սահմաններ, հետագայում դառնում է լայն, ընդհանուր գործածության. *շրջանակ* (մի առարկայի՝ նկարի և այլն) – *շրջանակ* (հարցերի, քննարկվելիք նյութի և այլն), *փեղեկապու* (անձ՝ անհատ) – *փեղեկապու* (կազմակերպություն՝ բյուրո և այլն) և այլն:

Բառի գործունացման օրինակները հայերենի մեջ քիչ չեն, որովհետև լեզվի պատմության այս կամ այն շրջանում հայտնի շատ բառեր հաճախ հետագա ժամանակի հեղինակային կիրառությամբ դառնում են նոր բառապաշարի ակտիվ միավոր:

Այսպես, Միք. Նալբանդյանը ժամանակին, խոսելով Խորենացու հանճարի և սրբությամբ կատարած վեհ գործի մասին, նրա հիշատակի համար օգտագործել է *խնկելի* բառը («*խնկելի* Խորենացի»): հիշատակը մնայուն), և այս բառին մեր օրերում հաճախակի են դիմում այս կամ այն (սույնիսկ սովորական) անձի մասին խոսելիս կամ գրելիս, որը մի կողմից՝ բառի ակտիվացման օրինակ է, մյուս կողմից՝ թերևս բառի իմաստի, մասնավանդ վերաբերության հասարակացման նմուշ: Այնուհետև, Հովհ. Թումանյանը, անշուշտ, ոչ անկախ Նարեկացուց, գործածեց *ծիծաղախիտ* բառը («Ծիծաղախիտ Վանա ծովի փոքրիկ գյուղից առափնյա»), և մեր օրերում այդ օրինակով հաճախ է հանդիպում սովորական, ոչ բանաստեղծական խոսքում բառի նմանակմամբ գործածություն: Ի դեպ՝ *ծիծաղախիտ* բառը Նարեկացուց հետո մինչև Թումանյանի գործածությունը մենք հանդիպել ենք հետագա ձեռագրերում, որ նշանակում է, թե Նարեկացու բառը գործածվել է նաև մինչև Թումանյանը, այսինքն՝ եղել է ինչ-որ չափով ակտիվ գործածության բառ:

Այսպես նաև, գրաբարյան շատ բառեր և արտահայտություններ, որոնք նոր գրական հայերենում մի քանի տասնամյակ առաջ դիտվում էին մերժելի, ներկայումս հանդիպում են թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում, ընդ սմին երբեմն ոչ ճիշտ արտասանությամբ, սխալ գրությամբ. հմմտ. *ի օգուր* (փոխանակ՝ *հօգուր*), *ի շնորհիվ* (փոխանակ առանց *ի* նախդրի) և այլն. նման գործածության նպատակը լիովին հասկանալի է, իսկ սխալ գործածությունը՝ անհարիր լեզվի նորմայի

առումով, թեև, ի վերջո, դա ևս բառի գործածության ակտիվացում է:

6. Բառապաշարի իմաստաբանական զարգացումը նույնպես նպաստում է լեզվի կատարելագործմանը, իսկ վերջինս ամենից առաջ նշանակում է հաղորդակցական միջոցի արդիականացում: Իրականության՝ կատարելության ձգտող առաջընթացը չի կարող իր անմիջական արտացոլումը չգտնել լեզվի մեջ: Եվ հակառակը՝ լեզվի պատմության մեջ առանձնացվող փուլերի տարբերությունները, որոնք այլ բան չեն, քան զարգացման, այսինքն՝ քանակային փոփոխությունների վերաճում որակականի, վկայություն են իրականության մեջ տեղի ունեցած որոշակի տեղաշարժերի՝ կապված քաղաքական, տնտեսական, մշակութային հանգամանքների հետ:

Բառապաշարը համալրվում է նոր բառերով, որոնք ստեղծվում են լեզվի ներքին միջոցներով (բառաբարդում, ածանցում, հապավում և այլն) և փոխառություններով (երկու կարգի՝ տվյալ լեզվի նախորդ փուլերից կամ բարբառներից և այլ լեզուներից՝ ուղղակի կամ միջնորդաբար), ինչպես նաև բառերի իմաստային հարստացմամբ (բազմիմաստություն, տերմինացում և այլն):

Այնուհետև, լեզուների տարբեր փուլերի, նույնիսկ կարճ ժամանակամիջոցի (մի քանի տասնամյակի) բառապաշարի համեմատական իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, թե ինչքան մեծ տարբերություն գոյություն ունի այդ փուլերի միջև: Նկատված է նաև, որ նոր բառերի, բառի իմաստային նոր կիրառությունների թիվն ավելին է, քան այն մասինը, որ դուրս է մնում բառապաշարից, որն էլ սովորաբար դիտվում է իբրև իմաստային պասիվացում կամ նեղացում: Պարզվում է, որ այս տարբերության մեջ է նաև բառապաշարի հարստացման և կատարելացման ողջ գործընթացը: Լեզվի բառապաշարի զարգացումը, իրոք, նրա հարստացումն է և կատարելագործումը:

7. Լեզվաբանության մեջ տարբերում են նաև բառապաշարի հին և նոր բառեր. հնաբանություններ և նորաբանություններ որակումը պայմանական է, որովհետև դա կատարվում է լեզվի ժամանակային տվյալ կտրվածքի հարաբերությամբ: Հին կարող են համարվել այն բառերը, որոնք նոր ժամանակում չունեն գործածության այն ակտի-

վությունը կամ կենսունակությունը, որ ունեին նախկինում, այնուհետև նոր են համարվում այն բառերը, որոնք ստեղծվել կամ փոխառվել են նոր ժամանակներում, հաղորդակցման նոր պայմանների թելադրանքով: Այսուհանդերձ, դրանց բառագիտական ուսուցումը կարևոր է լեզվի թե՛ համաժամանակյա (նկարագրության) և թե՛ տարածամանակյա (պատմության) առումով:

Հին բառերի մասին վկայում են այն գործածությունները, որոնք երևան են եկել նախորդ ժամանակների գրողների, հրապարակախոսների գրավոր խոսքում, տարբեր բնույթի գրագրություններում, և նոր պայմաններում դրանք այլևս չունեն այն կենսունակությունը, որ երբևէ ունեցել են: Այսպես, օրինակ, հին են այն բառերը, որոնք կազմվելիս են եղել բայի ենթակայական դերբայի հիմքով, որի փոխարեն ներկայումս ունենք անորոշի հիմքով կազմություն. հմմտ. *մայրնողություն* – *մայրնություն*, *անհաշտվողություն* – *անհաշտություն* և այլն: Այսպես, նաև պատճառականի *-ուցան-* (*-ուզան/-ուսան-*) մասնիկի փոխարեն *-ուց* (*-ուզ/-ուս-*) մասնիկի հիմքով կազմություն. հմմտ. *կառուցանել* – *կառուցել*, *մայրուցանել* – *մայրուցել*, *փլուզանել* – *փլուզել*, *հեղուսանել* – *հեղուսել* և այլն:

Բառը հին է, երբ նրանով արտահայտվող հասկացությունը, իմաստը կա, սակայն այլ բառով է արտահայտվում, օր.՝ *արոր* (եթե ոչ նաև *չուօ*, բարբառային փոխառյալ) «հողը վարելու ոչ մեքենայացված գործիք» բառն այլևս գործածական չէ, որովհետև նրա փոխարեն օգտագործվում է *գուօսան* «հողը վարելու մեքենայացված գործիք» բառը (որոշ բարբառներում *արոր* և *գուօսան* նույնն են), այսինքն՝ երևույթը կա, սակայն անվանումը փոխված է՝ հինը նորով. մի դեպքում վարը կատարվում է եզներով, մյուս դեպքում՝ տրակտորով: Բառը հին է նաև այն դեպքում, երբ այն այլևս չի գործածվում, առհասարակ դուրս է մնացել կենդանի լեզվի բառապաշարից, դառնալով լեզվի պատմության փաստ. օր.՝ *նաժիշտ* «պալատական սպասավոր», *արամբակ* «ընդվզող, ապստամբ», *վարկպարագի* «չնչին, աննշան. դատարկ», *նաշիհ* «մանր՝ փոշի ալյուր» և այլն:

Ըստ այսմ տարբերում են հին բառերի երկու տեսակ՝ *հնացած բաներ* և *պայրմաբառեր* (խտորիզմներ): Նման առանձնացումը կատարվում է ըստ նշանակիչ և նշանակյալ հարաբերակցության բնույ-

թի. մի դեպքում հին է միայն նշանակիչը, որ փոխարինվում է մեկ այլով. հմմտ. *վարժապետ - ուսուցիչ*, իսկ մյուս դեպքում հին է թե՛ մեկը և թե՛ մյուսը. *վասալ, փութանակի, քոխվա* և այլն:

Լեզվի ամեն մի փուլում էլ կարելի է առանձնացնել պատմաբաներ, եթե այն համեմատելի է նախորդ շրջանի հետ: Ըստ այդմ պատմաբան է այն, որ իր կենսունակ և սովորական գործածությունն է ունեցել լեզվի նախորդ շրջանում, իսկ նորում այն հանդես է գալիս մեկուսացած, հիմնականում ոճական նպատակով:

Հայերենի բառապաշարը ևս, իր զարգացման գրեթե բոլոր փուլերում, ունի պատմաբաների գործածություն, որը բացատրվում է նրա պատմության շրջանների հերթափոխությամբ: Այսպես, ժամանակակից հայերենի բառապաշարի համար պատմաբան կարող են դիտվել, միջին հայերենից՝ *գունդարար* «սպարապետ», *մարաջախար* «գորահրամանատար», *ջամբո* «սենյակ, պահարան», *պայլ* «մեծ իշխան», *սուֆրա* «սփռոց» և այլն, ինչպես նաև գրաբարից՝ *սեպուհ* «ազնվականության մի աստիճան. ասպետ», *դպիր* «գրագիր», *փաղանգ* «գորքի մի մաս՝ թև», *մարդպետ* «արքունի ծառայող» և այլն, որոնք նոր ժամանակում կարող են գործածվել միայն ոճական նպատակով: Ավելին, նոր գրական հայերենի տարբեր ենթաշրջաններից ունենք այնպիսի բառեր, որոնք ներկայումս գործածվում են իբրև պատմաբաներ. հմմտ. *գավառապետ, գզիր, ուրյադնիկ, գլավնի, մենասարնետ, սինոդ, կուլակ, տանուրեր, ակասկալ, ծխարեր, պրիստավ* և այլն:

Իրականության ակնհայտ փոփոխության պայմաններում, ի միջի այլոց նկատենք, լինում են դեպքեր, երբ այս կամ այն պատմաբանը դառնում է իր նախկին կիրառության չափով գործուն, վերածվում սովորական բառի, այսինքն՝ հնաբառի վերաճում նորի. հմմտ. *մենասարնետ* «առանձին ձեռնարկատիրությամբ զբաղվող անձ», *սպարապետ* «գորքի գլխավոր հրամանատար» և այլն:

Այն պատմաբաները, որոնք ժամանակակից հայերենին են անցել գրաբարից, երբեմն կոչվում են նաև *գրաբարաբանություններ*: Դրանք ավելին են, քան, ասենք, միջին հայերենից անցածները, որովհետև գրաբար ինքնուրույն և թարգմանական գրականության բառապաշա-

րի ավանդույթն անհամեմատ մեծ է նոր գրական հայերենի ոչ միայն սովորական իմաստով հարստացման, այլև հնաբանություններով համալրման գործում. *վասնզի, նույնժամայն, ըստ օրինի, առ այն, կույրզկուրայն* և այլն:

Լեզուներում բառապաշարի մի ուրույն մասն են *հնաբանությունները*, որոնք, անկախ հիմքում ընկած առարկայի հասկացության անիմանալի կամ դժվար իմանալի լինելուց, այնուամենայնիվ նոր պայմաններում կարող են գործածվել. *իրավ* («ճիշտ որ»), *իցիվ* («ուր էր թե»), *դիցուք* («ասենք, ասենք թե»), *հարկավ* («հարկ է, ճիշտ որ») *յուրովսանն* («իր ուժերի չափով») և այլն:

Ժամանակակից հայերենի բառապաշարում, օրինակ, առանձնացվում է հնաբանությունների մի քանի տեսակ՝ պայմանավորված դրանց կազմության և իմաստի առանձնահատկություններով:

ա) Ձևային-ձևաբանական հիմունքով հնաբանություն է այն դեպքում, երբ փոփոխություն կա արտահայտության պլանում՝ բառի ձևի մեջ, իսկ իմաստը մնում է նույնը. հմմտ. *խոսիլ – խոսել, մեռանիլ – մեռնել, կարենալ – կարողանալ, առնուլ – առնել* «վերցնել» և այլն:

բ) Բառի բաղադրության հիմունքով հնաբանություն է այն, որ հին բաղադրությամբ հայտնի բառը հանդես է գալիս նոր բաղադրությամբ, ընդ որում առանց բաղադրիչների փոփոխման կամ խճողման. հմմտ. *կահ-կարասի – կահկարասի, ի միջի այլոց – իմիջիայլոց, առ երևույթ – առերևույթ, ի զուր – իզուր, ընդ սմին – ընդսմին, մեկ առ մեկ – մեկսումեկ* և այլն:

գ) Բառի հիմունքով հնաբանություն է այն, որ եղած բառը փոխարինվել է համարժեք նոր բառով, ուստի եղածը վերածվել է հնաբանության. հմմտ. *փողերանոց – բանկ, ելնմրից նախարարություն – ֆինանսների մինիստրություն* (վերջերս նորից՝ *նախարարություն*), *սովեր – խորհուրդ* և այլն:

դ) Բառիմաստի հիմունքով հնաբանություն է այն, որ բառի՝ նոր իմաստով գործածվելու դեպքում հին իմաստն այլևս չի գիտակցվում, այլև դուրս է մնում բառապաշարի իմաստաբանական ոլորտից. հմմտ. *շապիկ* «ներքնագգեստ» - *շապիկ* «վերնաշապիկ», *ոյրնաման* «ոտքի ամեն տեսակի հագնելիք» - *ոյրնաման* «կոշիկ» և այլն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 383-422:

Լրացուցիչ գրականություն:

Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 167-206:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 67-76:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 133-151:

Թեմա 7. Տերմինաբանություն. բառ և տերմին

Հիմնահարցեր: *Տերմինաբանության առարկան. բառ և տերմին, տերմինի բնորոշումը: Տերմինաբանություն և տերմինային համակարգեր. տերմին և անվանակարգություն: Բազմիմաստ, համանուն և համանիշ տերմիններ: Տերմինների համակարգվածություն և սորոսակարգություն:*

1. Տերմինաբանության ուսումնասիրության առարկան լեզուների տերմինները և տերմինային անվանումներն են: Լեզվաբանության մեջ փորձեր են արվել տարբերելու տերմինաբանությունը և տերմինագիտությունը, առաջինը՝ իբրև միջգիտակարգ, երկրորդը՝ նրա առարկայի (օբյեկտի) կոնկրետ ուսումնասիրություն:

Այս դեպքում ամենից առաջ անհրաժեշտ է տարբերել բառ և տերմին հասկացությունները, տալ տերմինի բնորոշումը: Լեզվի նյութական կողմի ամենացայտուն մասը, ինչպես բազմիցս նշել ենք, բառապաշարն է, որը սերվում է հնչյուններից և բաղադրում է նախադասություններ: Ըստ իմաստի կամ առարկայական վերաբերության (բովանդակության պլանի) բառը բացահայտ երկպլանային վերաբերություն է, մի հանգամանք, որ, ի տարբերություն մյուս մակարդակների միավորների, վաղուց է դիտված իբրև այդպիսին (սկսած հին աշխարհի գիտական համակարգերից): Այս մոտեցումը տեսական գիտելիքների իմաստով ներկայումս, կարելի է ասել, վերանայելի է:

Իսկ ըստ գործառության, բառը բազմաշերտ միավոր է, որովհետև կարող է հանդես գալ իբրև իրականության նույնպիսի վիճակի անվանում: Ըստ այդմ՝ բառերը գործառապես լինում են չեզոք (սովորական՝ չտարբերակված) և ոչ չեզոք (գործուն՝ ակտիվ, տարբերակված). առաջինները իրականության առարկաների, այսպես կոչված, ոչ վերջավոր, իսկ երկրորդները՝ վերջավոր անվանումներ են, մի մասը գործառապես չսահմանափակված, իսկ մյուս մասը՝ սահմանափակված միավորներ են: Ոչ-վերջավոր կամ սովորական անվանում հանդիսացող բառերը առաջնային նշանակման բառեր են, որ կարող են հանդես գալ իմաստային նրբերանգներով, որոնց ձգտումը (իդեալը), ինչպես գիտենք, համանունությունն է: Այնինչ, վերջավոր են համարվում այն բառերը, որոնք հեռու են բազմիմաստությունից, առավել ևս՝ համանունությունից: Դրանք սահմանային միավորներ են, եզրեր

(տերմիններ. լատ. terminus), այսինքն՝ եզրափակում են տվյալ առարկայի (երևույթի և այլն) վերաբերյալ հասկացության անվանումը:

Սովորական բառերը լայն գործածության, ընդհանուր, իսկ տերմինները՝ որոշակի ոլորտում կիրառվող մասնակի (մասնագիտական) բառապաշարի միավորներ են: Դրանք կարող են լինել կամ առանձին, կամ համատեղող միավորներ: Այսպես, *վիրակապ* տերմինը միայն մեկ բնագավառի (բժշկ.), ուստի առանձին գործածվող տերմին է, իսկ *ջուր* տերմինը գործածական է առնվազն երկու բնագավառում (քիմիա, հիդրոլոգիա), ինչպես նաև այն սովորական բառապաշարի միավոր է (*ջուր*՝ կենդանի օրգանիզմի հատուկ սնուցիչ), իբրև տերմին՝ քիմիայում նշանակում է «երկու մաս ջրածնի և մեկ մաս թթվածնի միացություն», հիդրոլոգիայում՝ բույսերի աճի և խոնավության (կենսաձևի) ապահովման միջոց, այնինչ սովորական պայմաններում բնության հիմնական (չորս) տարրերից մեկը, որը մշտապես ծառայում է մարդուն և այլն:

Բառը ընդհանուր, իսկ տերմինը՝ մասնավոր, կոնկրետ հասկացության անվանում է: Բառը իրականության գիտակցված անվանում է՝ (բար) *աղ, գազ* «բույս՝ փուշ. խտացված արտանետում», *աղիք* «մարմնի մաս» և այլն, իսկ տերմինը՝ մասնագիտացված անվանում՝ *աղ* «(կերակրի) աղ», *գազ* «(ածխաթթու) գազ», *աղիք* «(կույր) աղիք» և այլն: Տերմինը գիտաճյուղային՝ իրականության գիտական, իմացական նշանակության կրող է, և եթե այն միաբաղադրիչ կազմություն ունի, այսինքն բառ-տերմին է, ապա վերջին հաշվով պատկանում է բառապաշարի պարզ կամ սովորական բառերի շարքին՝ *թթվածին, քամի, մուրճ* և այլն, իսկ եթե բազմաբաղադրիչ է (կազմված է մեկից ավելի բառերից), ապա մտնում է բառապաշարի բաղադրյալ բառերի մեջ՝ *թթվածնի օքսիդ, խորշակաբեր քամի, էլեկտրական մուրճ* և այլն:

2. Տերմինաբանությունը տերմինային համակարգերի յուրօրինակ ամբողջություն է. համակարգի միավորը, բնականաբար, տերմինն է (ընդ որում նաև տերմինային անվանումները, տերմինների անվանակարգությունը և այլն):

Լեզվի ընդհանուր համակարգի մեջ բառն ավելի կոնկրետ է, քան տերմինը, որովհետև բառն է, որ դառնում է տերմին, այսինքն՝ տեղի

է ունենում բառի տերմինացում: Իրականության ընկալումը ոչ միայն առաջնային, անմիջական ընկալում է, այլև իմացական կամ միջնորդավորված (գիտական) ըմբռնում, և ըստ այդմ, ի տարբերություն սովորական բառի, տերմինը երբեմն կոչվում է գիտաբառ:

Տերմինները առանձին համակարգերի միավորներ են, որոնք հանդես են գալիս ենթահամակարգերով (մանրահամակարգերով)՝ ըստ այն հանգամանքի, թե գիտության տվյալ ճյուղն առանձին է, թե՛ ունի մասնաճյուղեր, և եթե ունի, ապա ինչպիսին են դրանք:

Գիտության, մշակույթի, արվեստի տարբեր բնագավառների (ճյուղերի) տերմինների ամբողջությունը, ի տարբերություն լեզվի բառապաշարի սովորական բառերի ամբողջության, ներկայանում են իբրև ինքնուրույն համակարգ (կամ տերմինահամակարգ): Վերջինս, իր հերթին, առանձնանում է որպես ավելի մասնավոր՝ բնական գիտությունների, մշակույթի, արվեստի տարբեր ճյուղերի համակարգեր կամ առանձին-առանձին դիտարկելու դեպքում՝ ենթահամակարգեր և այլն: Ըստ այսմ՝ տերմինը, վերջապես, գիտաճյուղային հասկացության առանձին, սահմանային անվանում հանդիսացող բառ կամ բառակապակցություն է, այն ևս ոչ միայն խոսքային (կոնկրետ՝ հաղորդակցական), այլև լեզվական (ընդհանուր՝ բառարանային) միավոր է:

Տարբերում են տերմինաբանություն և անվանակարգություն հասկացությունները, որոնք խիստ առնչակից են: Անվանակարգությունը տվյալ բնագավառի անվանումների ամբողջությունն է, իսկ տերմինաբանությունը բնագավառի սահմանելի հասկացությունների անվանումն է. իրականության ցանկացած բնագավառի մեջ գործածվող առարկաների (օբյեկտների), գործընթացների (պրոցեսների), արտադրանքի (պրոդուկցիայի) «անվանումների ամբողջությունը տվյալ բնագավառի անվանակարգությունը (նոմենկլատուրան) է, որ կազմում է այդ բնագավառի տերմինաբանության անհրաժեշտ մասը»¹:

Այս երկուսի տարբերությունը ավելի հստակ պատկերացնելու համար նշենք Է. Բ. Ադայանի դիպուկ օրինակներից մեկը. «Այսպես,

¹ Է. Բ. Ադայան, Տերմինագիտություն (դասախոսություն), Ե., ԵՊՀ հրատ., 1978, էջ 21:

օրինակ, գետ, լիճ, ծով, օվկիանոս, աշխարհամաս, լեռ, հարթավայր, բարձրավանդակ, հրվանդան աշխարհագրական տերմիններ են, և յուրաքանչյուրն արտահայտում է աշխարհագրության ճշգրտորեն սահմանելի հասկացություն, մինչդեռ *Արաքս*, *Եփրատ*, *Արագած*, *Սև ծով*, *Ասիա*, *Աֆրիկա* և այլն աշխարհագրական անուններ են, բայց ոչ մի հասկացություն էլ չեն արտահայտում»¹:

3. Քանի որ տերմինը կամ տերմինային անվանումը ի վերջո բանային մակարդակի միավորներ են, ապա նրանց վրա ևս տարածվում է բառիմաստային բազմազանությունը, ասենք՝ բազմիմաստությունը, համանունությունը և հոմանշությունը, մի իրողություն, որ կարծես հակասում է այն դրույթին, թե տերմինի էական յուրահատկությունը մենիմաստությունն է:

Լեզուներում հաճախ են տերմինները գործածվում մեկից ավելի իմաստներով: Դա միանգամայն ընդունելի է, եթե տերմինը կամ տերմինային անվանումը դիտվում են նույն տերմինահամակարգի (միայն տվյալ բնագավառի) ներսում, իսկ տարբեր համակարգերի մեջ դրանց գործածությունը, բնականաբար, կարող է հիմք հանդիսանալ բազմիմաստության. հմմտ. *ճյուղ* 1. «ծառի վերգետնյա առանձին մաս», 2. «(գիտության) բնագավառ, բաժին և այլն», 3. «ազգականների՝ գերդաստանի ճյուղավորում» և այլն. *գլուխ* 1. «կենդանու մարմնի մաս», 2. «սարի վերին մաս», 3. «գրքի մի բաժին» 4. «(հիմնարկության, կազմակերպության, հաստատության) ղեկավար՝ առաջին դեմք» և այլն. *թերթ* 1. «ծաղկի մի մասը», 2. «լրագիր», 3. «(իրար վրա դրվող առարկաների մասեր)՝ գրքի էջ, մոմաթերթ, թիթեղի կտորներ և այլն»: Բերված օրինակների նշված իմաստները կամ սովորական են, կամ տերմինային, այսինքն՝ բազմիմաստ են:

Այնուհետև, *լեզու* բառը, որն ունի մի քանի իմաստ՝ 1. «մարդու՝ կենդանու մարմնի մաս», 2. «մի տեսակ բույսի անվանման բաղադրիչ՝ եզան լեզու» 3. «հակառակորդից գերեվարված զինվոր» և այլն, ըստ կիրառության կամ համատեքստի, կարող է գործածվել թե՛ սովորական և թե՛ տերմինային իմաստով. հմմտ. Երեխան լեզու է ելել // Երեխայի լեզուն բորբոքվել է: Ավելին, *լեզու* բառը լեզվաբանության մեջ

¹Նույն տեղում:

գիտական տերմին է, որ հասկացվում է առնվազն երեք իմաստով՝ 1. «ընդհանուր մարդկային հաղորդակցման միջոց՝ համամարդկային լեզու. մարդկության լեզուն», 2. «տվյալ ազգի, ժողովրդի հաղորդակցման միջոց՝ ազգային լեզու. հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլն», 3. «տվյալ անձի հաղորդակցման միջոց՝ *անհատի լեզու. հեղինակային լեզու*»: Ըստ այսմ՝ լեզու տերմինը հանդես է գալիս ներհամակարգային (լեզվաբանության բնագավառի) բազմիմաստությամբ, իսկ մյուսների հետ՝ միջհամակարգային (տարբեր բնագավառների) բազմիմաստությամբ:

4. Տերմինները գործածվում են ոչ այլ կերպ, քան տվյալ բնագավառի ներսում որոշակի համակարգվածությամբ և ստորակարգությամբ: Լեզվի մասին գիտության բնագավառում, օրինակ, հնչյունաբանությունը, իբրև առանձին գիտաճյուղ (բաժին), ունի մի քանի տասնյակի հասնող տերմիններ և տերմինային անվանումներ: Դրանք գտնվում են համակարգված առնչության մեջ, ինչպես որ դրանցով նշանակվող համապատասխան իրակությունները (երևույթները. ռեալիաները):

Այսպես, գիտենք, որ հնչյունաբանության քննության բուն առարկան հնչյունն է (լայն իմաստով), որը տերմինահամակարգի առումով առանձնանում է մի կողմից՝ հնչյունից և հնչյունի տարբերակիչ հատկանիշից (*մերիզմ*՝ «տարրույթ»՝ ըստ Է. Բենվենիստի), մյուս կողմից՝ հնչական այլ միավորներից (*շեշտ, հնչերանգ* և այլն). հիշյալ տերմինների առանձնացումը տեղի է ունենում համակարգի ներսում, իսկ ստորակարգությունը համակարգի տարրերի միջև: Ուստի կարելի է ասել, որ ինչպես բառապաշարի յուրաքանչյուր միավորի, այնպես էլ նրա մի մաս հանդիսացող տերմինների միջև գոյություն ունի համակարգային կոտ ամբողջականություն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 358-383:

Լրացուցիչ գրականություն:

Աղայան Է. Բ., Տերմինագիտություն (դասախոսություն), Ե., 1978:

Головин, Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 72-73:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 104-107:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 114-126:

Թեմա 8. Բառարանագրություն և բառարանագիտություն

Հիմնահարցեր: *Բառարանի բնորոշումը. տեսակներն ըստ բովանդակության, կառուցվածքի և ծավալի: Բառարանների տեսակներն ըստ լեզուների ընդգրկման՝ միալեզվյան, երկլեզվյան և բազմալեզվյան: Բառարանագիտությունը իբրև բառարանների ուսումնասիրման ոլորտ:*

1. Լեզուն ունենում է երկու դրսևորում՝ բանավոր և գրավոր, մեկը արտաբերվում է, իսկ մյուսը ամրագրվում: Ամրագրվածը գրավոր խոսք է: Գրավոր խոսքը, կարելի է ասել, լեզվի համար ամուր պահարան է՝ շտեմարան: Բանավոր խոսքը ժամանակի մեջ կարճ է, իսկ գրավոր խոսքը տևական ժամանակ է ենթադրում:

Լեզուների պատմությունը ցույց է տալիս, թե գրի առնված խոսքը ինչ ժամանակներ է կտրել-անցել: Մարդիկ մտածել են նաև խոսքի հաղորդմամբ տեղեկություններ փոխանցել հետագային՝ գալիք սերունդներին: Դա սկիզբ է առել նախնական ձևից՝ անմիջական հաջորդին կամ տվյալ պահին հեռու գտնվողին տեղյակ պահելու մղումից: Տարբեր նյութի վրա գրվածը հաջորդաբար անցնում է մեկից մյուսին, այդպես նաև սերնդից սերունդ:

Հայերեն վիճագիր արձանագրությունները, օրինակ, տեղեկություններ են հաղորդում մեր ժողովրդի անցյալի, նրա կյանքում տեղի ունեցած այս կամ այն հիշելի երևույթի, իրադարձության վերաբերյալ: Այդ արձանագրությունները, մյուս կողմից, պարունակում են հայերենի տվյալ ժամանակահատվածի բառապաշարը՝ լեզվական-հաղորդակցական ձևի մեջ, այսինքն՝ իբրև *բնագիր* (տեքստ): Ըստ այդմ ունենք, այսպես կոչված, բառերի մի ամբողջություն, որն այլ բան չէ, քան տվյալ լեզվի ընդհանուր բառապաշարի տվյալ մասի կուտակում, դա պարզ ասած՝ բառերի կուտակում է, մի ամբողջություն, սակայն ոչ բառարան:

Բառարանը լեզվի բառապաշարի յուրօրինակ շտեմարան է, որում բառերը և հարակից մյուս միավորները (դարձվածային միավորներ, ոճեր, արտահայտություններ և այլն) ամբողջանում են ոչ թե պատահականորեն, այլ ուրույն սկզբունքներով և կառուցվածքով, հետապն-

դում են որոշակի նպատակ: Յուրաքանչյուր լեզվի բառապաշարի գրավոր արտահայտություն կարելի է վերածել բառարանի երկու սկզբունքով՝ ըստ կառուցվածքի, արտահայտության պլանի (ձևի) և ըստ թեմատիկայի, բովանդակության պլանի (իմաստի):

Մի դեպքում նկատի են ունենում բառերի այբբենական դասավորությունը, ընդ որում *նուրբ այբբենական*, այսինքն՝ բառերը հերթակարգվում են ոչ միայն ըստ առաջին գրի (տատի), այլև հաջորդող գրերի (տատերի), բնականաբար. տվյալ լեզվի այբուբենի մեջ ունեցած տեղի նկատառումով. օր.՝ հայ. *այգի, բարձր, պար, ծառ, ագարակ, ջուր, աշխատանք, ծաղիկ, ջրել, բակ, դուռ, դեղին, փերև, փեսնել, դռնակ, փաք* բառերը կդասավորվեն նախ՝ *այգի, ագարակ, աշխատանք, բարձր, բակ, դուռ, դեղին, դռնակ, ծառ, ծաղիկ, պար, ջուր, ջրել, փերև, փեսնել, փաք*, այնուհետև՝ *ագարակ, այգի, աշխատանք, բակ, բարձր, դեղին, դուռ, ծաղիկ, ծառ, պար, ջրել, ջուր, փաք, փեսնել, փերև* հերթականությամբ և այլն: Մյուս դեպքում՝ հաշվի են առնում բառերի իմաստային (թեմատիկ) կողմը, այսինքն՝ բառապաշարի միավորները բառարանի են վերածվում ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի կամ փնջերի. նման բառարանները կոչվում են *թեմատիկ բառարաններ*:

Բառարանը տվյալ լեզվի կամ լեզուների, առհասարակ մարդկային լեզվի բառապաշարի հավաքագրում է: Լեզվի զարգացումը և կատարելացումը ավելի մեծ տեմպերով են առաջ գնում, քան որ հնարավոր է լինում նրա բառապաշարը ի մի բերել՝ իբրև բառարան: Այդուհանդերձ, բառարանի ստեղծումը մշակութային կարևորություն ունի, իսկ նրա ուսումնասիրությունը մեկն է լեզվաբանական խնդիրներից:

Ամեն մի բառարան սովորաբար կոչված է լինում բավարարելու իմացական և մշակութային որոշակի պահանջ, ուստի այն կազմվում է առաջին հերթին ժամանակի թելադրանքով: Բառարանի բուն նպատակը ամենից առաջ տվյալ լեզվի կամ լեզուների ընդհանուր բառապաշարի, առանձին դեպքերում նաև վերջինիս ոճերի և արտահայտությունների, դարձվածային միավորների, այլև տերմինների և տերմինային անվանումների ըստ հնարավորին մանրամասն բացատ-

րությունն է՝ իր ժամանակի ըմբռնման համաձայն, այլև կոնկրետ ուսուցումը և ճիշտ կամ տեղին գործածությունը: Բառարանը միաժամանակ տվյալ լեզվի կամ լեզուների պատմության վկայությունն է, որովհետև նրանում ամբարված բառամթերքը հավաստում է, թե տվյալ իմաստը կամ իմաստները կրող բառը երբ է հանդես եկել գրավոր խոսքում, իր տեղն այս կամ այն չափով գտել նրա բառային ամբողջության մեջ:

Հայ գրավոր մշակույթը հարուստ է ոչ միայն ինքնուրույն և թարգմանական գրականությամբ, այլև վերջիններիս բառապաշարն ընդգրկող բառարաններով: Դրանք երևան են եկել մեր լեզվի ամենավաղ շրջանում (5-րդ դ.) և շարունակվում են ստեղծվել նաև մեր օրերում: Հայերեն բառարանները նույնպես ըստ ծավալի, կառուցվածքի, հետապնդած նպատակի և այլ լեզուների հետ ունեցած առնչության միանգամայն տարբեր են: Հայտնի են ձեռագիր և տպագիր, ինքնուրույն և թարգմանական, ընդարձակ և սեղմ, այլև հանրագիտական կամ բանասիրական (լեզվաբանական) բառարաններ և այլն:

Բառապաշարի ընդգրկմամբ այդպիսին են և՛ ծավալուն բառարանները, և՛ բառգրքայինները, բառացանկերը, տերմինարանները (տեգաուրումները), այլև, այսպես կոչված, «խանձարոտային» («ինկուրացիոն»), մատենակից (տարբեր կարգի ձեռագրերի, գրքերի վերջում բերվող) հավելված-«բառարանները»: Հայ բառարանագրությունը ունի ավելի քան 1600-ամյա պատմություն, որը ժամանակագրորեն բաժանվում է մի քանի շրջանի. 1) նախնական շրջան (5-9-րդ դդ.), 2) միջնադարյան շրջան (10-16-րդ դդ.), 3) նոր շրջան (17-19-րդ դդ.), 4) նորագույն շրջան (20-րդ դ. մինչև մեր օրերը)¹:

Բառարանները բնորոշվում են տարբեր չափանիշներով, որոնցից առավել հատկանշական են հետևյալները:

ա. Ըստ բառային միավորների բառապաշարային (լեքսիկական) արժեքի, այսինքն՝ նոր լեզուների դեպքում բառերը վերցվում են իրենց ելակետային ձևերով, օր.՝ անուն խոսքիմասային միավորները՝ գոյական, ածական և այլն, ուղիղ կամ հիմնական ձևով, բայերը անորոշ

¹ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, Ե., 2015, էջ 12:

դերբայի ձևով և այլն, իսկ հին լեզուների դեպքում բառարանները կազմվում են այլ սկզբունքով, օր.՝ բայի սահմ. եղ. ներկայի 1-ին դեմքի ձևով և այլն:

բ. Ըստ ժամանակային ընդգրկման՝ լեզվի տարբեր շրջանների բառապաշարը (իբրև առանձին ամբողջություն, օրինակ՝ հին հունարենի, լատիներենի, սանսկրիտի, գրաբարի) բառարանները տարբեր են՝ համեմատած նոր շրջանի բառապաշարի բառարանների հետ:

գ. Ըստ հետապնդվող նպատակի՝ բառարանների կազմությունը բառապաշարի ամրագրումն է իբրև մշակույթ, որ ստեղծել է տվյալ հանրությունը ժամանակի ընթացքում: Լեզվի անընդհատ զարգացման պայմաններում բառապաշարից դուրս են գալիս բառեր, որոնց իմաստները մոռացվել են, մյուս կողմից՝ հանդես են գալիս (կազմվում կամ փոխ են առնվում մեկ այլ լեզվից) նոր բառեր, որոնք կրում են նոր իմաստներ, որպիսով լեզվի բառապաշարն անընդհատ փոփոխվում է, ուստի հնի պահպանման և նորի ընդունման նպատակով էլ կազմվում են բառարաններ:

դ. Ըստ բառի կամ նրա հիմքում ընկած իրույթի (ռեալիայի) ընդգրկման բնույթի՝ բառարանները հիմնականում լինում են երկու տեսակ՝ *հանրագիտական* և *բանասիրական*, որոնք, իրենց հերթին, բաժանվում են ենթատեսակների:

Այսպես, հանրագիտական բառարանները լինում են *ընդհանուր* և *սոսնձին* (ճյուղային): Դրանք ընդգրկում են տվյալ ժամանակահատվածում գործառող լեզվի կամ առհասարակ լեզուների գրավոր խոսքում առկա իրույթների (գիտության, տեխնիկայի, մշակույթի և այլն տերմինների) անվանումները: Իսկ բանասիրական բառարանները ներկայացնում են լեզվի բառապաշարի ընդհանուր կամ սովորական (ոչ տերմինային) մասը:

ե. Ըստ գործառական-մշակութաբանական հատկանիշի՝ բառարանի կազմումը վկայություն է տվյալ լեզվի ոչ միայն ներկա վիճակի, այլև պատմական անցյալի վերաբերյալ, որովհետև նրանում ընդգրկվում են ոչ միայն համաժամանակյա կիրառության բառերը, այլև, այսպես կոչված, պատմաբառերը, հնաբանությունները, որոնք ունեն պատմական-մշակութային արժեք յուրաքանչյուր լեզվի համար: Որ-

քան հին է լեզվի գրավոր ավանդույթը, նույնքան հարուստ կարող են լինել նրա բառապաշարի շտեմարան հանդիսացող բառարանները՝ անկախ իրենց բնույթից կամ նպատակադրումից:

Ընդհանուր հանրագիտական բառարանները սովորաբար կազմվում են այս կամ այն լեզվի (կամ լեզուների մի առաձին խմբի, առավելազույնը և, թերևս, իդեալականը բոլոր լեզուների), այսպես կոչված, մասնագիտական բառապաշարին վերաբերող բառարանները: Մասնավոր հանրագիտական բառարանները ևս լեզուների ընդգրկման առումով նույնպիսին կարող են լինել, ինչպիսին վերն ասված՝ ընդհանուր հանրագիտական բառարանները, սակայն այս վերջիններից ունեն մի էական տարբերություն. դա այն է, որ ընդգրկում է ընդհանուր բառապաշարի միայն մի մասը, ասենք՝ հատուկ անունները (անձնանուններ, տեղանուններ և այլն), մասնագիտական անունները (բժշկական, փիլիսոփայական, լեզվաբանական, մեքենաշինական, ռազմական, տեխնիկական և այլն):

Հայերենի դեպքում հայտնի են 20-րդ դ. 2-րդ կեսից սկսած լույս տեսնող հանրագիտարանային բառարանները, որոնցից ամենածավալունն է «Հայկական սովետական հանրագիտարանը» (հհ. 1-12, լրացուցիչ՝ 1 հատոր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974-1986, 1987), ավելի ուշ երևան եկած՝ ավելի մասնավոր («ճյուղային») հանրագիտական բառարանները, օրինակ՝ «Հայաստան հանրագիտարանը» (Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2012), «Աստվածաշնչի հանրագիտարանը» (Ս. Էջմիածին, 1986) և այլն: Կարևոր է նաև «Հայկական համառոտ հանրագիտարանը» (հհ. 1-4, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1990-2003), որը ծավալով զիջում է, իսկ թեմատիկայով (հայերենի և հայ իրականության առավել մեծ ընդգրկումով) աննախադեպ է:

Բանասիրական բառարաններն ունեն ավելի լայն ընդգրկում, վերաբերում են տվյալ լեզվի (կամ լեզուների) ամբողջ բառապաշարին, ընդ որում ներառյալ հանրագիտարանային բառարանի բառաթերքը՝ իբրև լեզվի ողջ բառապաշարի մաս:

Բառարանները տարբերվում են նաև ըստ բովանդակության: Այս դեպքում տեսակների առանձնացումը հիմնվում է նրանցում նկատվող բառերի իմաստային կողմի՝ յուրահատկությունների վրա: Ըստ

այդմ՝ առանձնացվում են մի կողմից՝ բացատրական, մյուս կողմից՝ համաբարբառային, թարգմանական, դպրոցական, ուսումնական, տեղեկատվական բառարաններ և այլն:

Հազիվ թե գտնվի մի լեզու, որ ունենա գրավոր հարուստ ավանդույթ, անցած լինի զարգացման տևական ուղի, սակայն չունենա իր բառապաշարն ամփոփող այս կամ այն կարգի բառարան: Այսպես, օրինակ, հին հայերենի (գրաբարի) բառապաշարն ամփոփված է 19-րդ դ. 1-ին կեսին լույս տեսած «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» (հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837), ինչպես նաև մի քանի թարգմանական (հայ-իտալյան, հայերեն-անգլերեն և այլն) բառարաններում: Հայերեն բառերի արմատները համեմատական-ստուգաբանական քննության են ենթարկված Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» (2-րդ հրատ., հհ. 1-4, Ե., 1971-1979) և Գ. Բ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան» (Ե., 2010) աշխատանքներում:

Բառապաշարի վերաբերյալ մասնակի աշխատանքներ են Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» (հհ. 1-5, Ե., 1942-1952), Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (Ե., 1967), Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղախոսական-ուղղագրական, տերմինաբանական բառարանը» (Ե., 1973), Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (Ե., 1975) և այլն:

Ըստ կառուցվածքի բառարանները տարբեր են: Այսպես, բացատրական բառարաններն ունեն ավելի ծավալուն բառահոդվածներ, քան մյուսները՝ թարգմանական, դպրոցական և այլն: Դրանք տարբեր են նաև իրենց բնույթով. լինում են նորմատիվ կամ ակադեմիական: Հայերենում երկրորդ տիպի են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (հհ. 1-4, Ե., 1944-1945), ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (հհ. 1-4, Ե., 1969-1980), Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (Ե., 1976) և այլն: Ըստ ծավալի նույնպես բառարանները լինում են տարբեր, քանի որ հետապնդում են տարբեր նպատակներ: Ընդունված է դրանք համարել երկու կարգի՝ ծավալուն և համառոտ: Ծավալուն լինելը, ինչպես գիտենք, խիստ հա-

րաբերական է, քանի որ թերևս հնարավոր չէ ունենալ այնպիսի բառարան, որ ընդգրկի տվյալ լեզվի ողջ բառապաշարը՝ թեկուզև այս կամ այն ժամանակի առումով:

2. Բառարանը ստեղծվում է ոչ միայն մեկ լեզվի, այլև երկու և ավելի լեզուների սովորական և հատուկ (տեմինային և անվանակարգային) բառապաշարի հավաքման և մեկնաբանման, երբեմն էլ թարգմանության և փոխադարձ հարստացման համար: Բառապաշարի ուսումնասիրման առումով ուշադրության առարկա են նաև նման բառարաններն՝ ըստ լեզուների ընդգրկման: Ըստ այդ հատկանիշի՝ դրանք լինում են *միալեզվյան, երկլեզվյան և բազմալեզվյան*: Գործնական առումով երկլեզվյան և մյուս տեսակի բառարանները հիմնականում ունեն ուսուցման, թարգմանական գործի իրականացման նպատակ: Ընդ որում միալեզվյան, երկլեզվյան և բազմալեզվյան բառարանների ստեղծումը, բնականաբար, հետապնդում է տարբեր նպատակներ, ամենից առաջ՝ թարգմանության, լեզուների գործնական ուսուցման և զուգադիր գործածության: Հայերենին առնչվող երկլեզվյան և մյուս տիպի բառարանները ևս պակաս չեն. նման բառարանի լավագույն օրինակներից է, ինչպես գիտենք, Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը» (Ե., 1968):

3. Լեզվի բառապաշարի մեկտեղումը, ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ, բառարանագրական ուրույն աշխատանքի ոլորտ է: Նկատի ունենալով *բառարանագրություն* տերմինի գործածությունը բառարանների գիտական ուսումնասիրությամբ զբաղվելու իմաստով, վերջին ժամանակներս ընդունված է գործածել *բառարանագիտություն* տերմինը:

Բառարանագիտության նպատակն է մշակել լեզվի կամ լեզուների բառապաշարի բառարանագրման տեսական մոտեցումներ և սկզբունքներ: Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարի ուսումնասիրության մեջ անդրադարձ է լինում բառարաններին: Դրանք ուշադրության առարկա են ոչ միայն գործնականում, այլև տեսականորեն:

Լեզվաբանության պատմությունը ցույց է տալիս, որ նախկինում առավել մեծ ուշադրություն է դարձվել բառարանագրությանը (բա-

նարաններ կազմելուն), այդ գործը մեծապես դրված է եղել գործնական հիմքերի վրա: Իսկ բառարանների տեսական ուսումնասիրությունը նոր է. «ուսումնասիրում է բառարանների տեսակները, նրանց գիտական ու գործնական նպատակադրումն ու դրան համապատասխան՝ նրանց կազմության ընդհանուր սկզբունքները, ինչպես և՛ բառարանագրության պատմությունը», այլև «ընդհանրացնում է կուտակված փորձը, մշակում ընդհանուր տեսություն բառարանների տարբեր տեսակների, յուրաքանչյուրի գիտական ու գործնական խնդիրների մասին և դրանով իսկ տեսական հիմք դառնում ավելի ամբողջական, առավել կատարյալ բառարանների կազմության համար»¹:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 437-450:

Լրացուցիչ գրականություն:

Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 207-309:

Головин, Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 88-89:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 120-124:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 151-155:

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 438:

ԹԵՄԱՏԻԿԱ III. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Բառի ձևաբանական կազմը. ձևույթ և բառաձև, քերականական ձև և քերականական իմաստ

Հիմնահարցեր: Քերականության առաջացումը և բնույթը: Քերականական միավորներն ըստ արտահայտության և բովանդակության պլանների: Քերականական ձևի և քերականական իմաստի սահմանազարուելը և բնորոշումը: Ձևույթային վերլուծություն. հիմնունքները և տեսակները:

1. Լեզվաբանության մեջ ավանդաբար ընդունված է հնչույթը համարել միապլան (միայն արտահայտության պլան ունեցող), իսկ ձևույթը՝ երկապլան (արտահայտության և բովանդակության պլաններ ունեցող) միավոր: Տարբերությունն այն է, որ վերջինը նախ՝ 1) իմաստակիր միավոր է (հմմտ. *դերդ* «քո այդ դերը» բառի մեջ առաջին *դ*-ն հնչույթ է, իսկ երկրորդը՝ ձևույթ, նշանակում է գոյականի 2-րդ դեմք, արտահայտում է ցուցականություն, առաջինը հնչույթային մակարդակի միավոր է, իսկ երկրորդը՝ ձևույթային մակարդակի, այլև՝ 2) ունի գծային բնույթ (հմմտ. *ուսանողներից* բառաձևը բաժանելի է *ուսանող-ներ-ից-դ* բաղադրիչների, որոնք իրար նկատմամբ ձևաբանական կամ քերականական տարբեր գործառության կրող են, առաջինը ցույց է տալիս առարկա, երկրորդը՝ հոգնակի թվի, երրորդը բացառական հոլովի, վերջինը առկայացման քերականական իմաստ:

Նման բաղադրիչների առանձնացումը պատահական կամ կամայական չի լինում, այլ ունի համակարգային բնույթ, և դա հիմնավորվում է նրանով, որ այդ և նման բաղադրիչները մասնակցում են բազմապիսի բառաձևեր կազմելուն, ընդ որում ոչ միայն նույն բաղադրիչներով, այլև համանման բաղադրիչներով, որոնք ձևույթների ընդհանուր համակարգին վերաբերող համակցությունների ամբողջություն են. հմմտ. *գրք-եր-ից-դ*, *ուսանող-ներ-ին-ը* և այլն, *մայրիտ-ով*, *պարուհան-ին*, *համակարգիչ-ներ-ի*, *գրասեղան-ներ-ին-ը* և այլն:

Ձևույթների դեպքում ևս, ինչպես նկատելի է, կարևոր է բաղադրիչների բաշխականությունը, այսինքն՝ դրանց հնարավոր առանձնացումը նվազագույն հակադրության պայմաններում: Եթե հնչույթների դեպքում նվազագույն հակադրությունը ստացվում է նրանց տարբե-

րակիչ հատկանիշների դեպքում՝ հմմտ. *բարի* «լավ, ընդունելի», *պարի* «պարել բայի ըղձականը կամ *պար* գոյականի սեռականը», *փարի* «փարվել բայի ըղձականը», *դեր* «պաշտոնետություն, հանդես գալու ձև», *տեր* «տնօրինող. հոգացող», *թեր* «թերի, անավարտ» և այլն, ապա ձևույթների դեպքում հակադրությունը հիմնված է լինում հակադրելի ձևաբանական միավորների վրա հմմտ. մի կողմից՝ *ուսանող-ի*, *ուսանող-ին* ձևերում՝ *-ի/-ին*, *ուսանող-ից*. *ուսանող-ով* ձևերում՝ *-ից/-ով*, մյուս կողմից՝ *ուսանող*, *լսարան* և *ուսանող-ի*, *լսարան-ի* և այլն ձևերում՝ *- օ (գրո)/-ի* հակադրություն և այլն:

Քերականությունը հին աշխարհի հիմնական ուսմունքներից («արվեստներից») մեկն էր: Ընդունված է ասել, թե այդ ուսմունքն իր բարձր մակարդակին է հասնում Հնդկաստանում, մանավանդ Պանինիի քերականության մեջ (մ. թ. ա. V-IV դդ.), և Հունաստանում՝ շնորհիվ Արիստոտելի տեսության (մ. թ. ա. IV-III դդ.):

Հայ իրականությունը քերականական արվեստի մեջ առաջ է գնում Դիոնիսիոս Թրակացու (մ. թ. ա. I դ.) հայտնի «Արուեստ քերականի» դասագրքի դասական թարգմանությամբ (V դ.) և հետագա մեկնաբանություններով («մեկնություններ»), իսկ մինչ այդ քերականության ուսմունքը հայտնի էր դպրություն անվանումով: Քերականությունը նախ՝ ուսմունք (գիտելիք) է լեզուների կառուցվածքի և կարգերի (կատեգորիաների) մասին, այնուհետև՝ ներկայացնում է այս կամ այն լեզվի համապատասխան կառուցվածքը: Իսկ սա նշանակում է, որ այն զբաղվում է լեզուների քերականական կարգերի ընդհանուր ուսումնասիրությամբ, միաժամանակ առանձին լեզուների քերականական կառուցվածքի քննությամբ:

Խոսքի մասերի առաջացումը, ինչպես կտեսնենք իր տեղում (ստորև), սերտորեն առնչվում է մարդկային մտածողությանը, ըստ որի սկզբնապես եղել են գոյական անունը և բայը, այնուհետև մյուսները: Ուստի քերականական կարգերի բաշխման դեպքում ամենից առաջ ուշադրության կենտրոնում են լինում անվանական և բայական քերականական կարգերը:

2. Եթե ձևույթները երկպլանային են և սահմանվում են իբրև ձևի և իմաստի միասնություն կազմող նվազագույն միավորներ, ապա

դրանց քննությունը ենթադրում է համապատասխան մոտեցումների և սկզբունքների կիրառում:

Նախ պետք է նկատի ունենալ, որ քերականական յուրաքանչյուր կարգ հանդես է գալիս իբրև քերականական ձևի և քերականական իմաստի միասնություն: Կարգային բաշխվածությունը քերականական ձևի և քերականական իմաստի մեջ է: Քերականական կարգեր են այն քերականական իմաստները, որոնք լեզվում քերականական արտահայտություն (քերականական ձև) են ունենում. օր.¹ *սեռ, թիվ, հոլով, ժամանակ, եղանակ, կերպ* և այլն: Սովորաբար ընդունված է ասել, թե քերականական կարգերը բնորոշվում են մի կողմից՝ ըստ քերականական տարբեր հատկանիշներ ունեցող խմբեր կազմելու, իսկ մյուս կողմից՝ քերականական առանձին իմաստ ստանալու հատկության: Ըստ այդմ քերականական կարգերը բառերի այնպիսի խմբեր են, որոնք սահմանվում են միանման քերականական հատկանիշներով, որոնցով բնորոշվում են քերականական տարբեր իմաստներ արտահայտող միավորներ, և այդպիսով լինում են գոյական, բայ, ածական, թվական, դերանուն, մակբայ և այլն:

Հայտնի է, որ վերջիններս արտահայտում են մարդկային մտածողության կարգերը (կատեգորիաները՝ ժամանակ, թիվ, ձև, տեղ, դաս և այլն), և դա, պետք է ասել, իմացական զարգացման գործընթացի արդյունք է, պատմական իրողություն, որովհետև դրանք պատմականորեն կրել են զարգացման հետ կապված այս կամ այն կարգի փոփոխություններ: Քերականական իմաստները (այս դեպքում՝ հատկանիշները) լեզվական ձևավորմամբ արտահայտում են առարկաների և երևույթների *դասավորվածությունը* անհատի գիտակցության մեջ՝ ըստ այդ նույն առարկաների և երևույթների ընդհանուր և իբրև այդպիսին ըմբռնվող հատկանիշների, ի հայտ են բերում այդ նույն առարկաների և երևույթների գոյության ձևերի՝ գիտակցության կողմից տարբերակված *յուրահարկությունները*, վերջապես՝ ցույց են տալիս այդ նույն առարկաների և երևույթների փոխադարձ *կապը* և *պայմանավորումը* ոչ այլ կերպ, քան ժամանակի և տարածության մեջ¹:

¹ Հմմտ. է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 483:

Լեզվաբանության մեջ մշակված են լեզվական միավորների վերլուծության և դասակարգման տարբեր ձևեր (մեթոդներ), դրանցից բխող մոտեցումներ և այլն: Վերջիններս առաջացել են ոչ թե միանգամից, գիտության այսինչ կամ այնինչ փուլում մեկընդմիջտ, այլ վերջինիս առաջընթացի և զարգացման պատմության ընթացքում: 20-րդ դ. լեզվաբանության կարևորագույն ձեռքբերումներից է կառուցվածքային մեթոդի առաջադրումը և գործադրումը լեզվական իրակությունների քննության և ըստ այդմ դասակարգման մեջ: Այդ մեթոդով կատարված ուսումնասիրությունները ընդգրկում են լեզվի գրեթե բոլոր բաղադրիչները՝ սկսած հնչյունական համակարգից մինչև շարահյուսական համակարգ, իսկ ավելի հետագա տարիներին՝ նաև բնագրի (տեքստի) վերլուծության ոլորտը:

3. Լեզուներում տարբեր են ոչ միայն քերականական արտահայտության միջոցները, նրանց դրսևորման եղանակները, այլև բուն քերականական իմաստները:

Նախ՝ նշենք, որ ձևույթը իմաստակիր միավոր է, որ, ի տարբերություն բառերի, որոնք արտահայտում են տարբերակված բառային իմաստներ, արտահայտում է չտարբերակված բառային իմաստ: Տարօրինակ կարող է թվալ այն, որ ձևույթը, լինելով չտարբերակված բառային իմաստի արտահայտիչ, այդ չտարբերակված լինելը հավասարապես տարածվում է և՛ բառային իմաստների վրա՝ առանց տարբերակման և կոնկրետացման, և՛ քերականական իմաստների վրա: Այլ կերպ ասած՝ կան ձևույթներ, որոնք հավասարաբաժնե են բառի հետ, հանդիսանում են բառեր, կան նաև ձևույթներ, որոնք սոսկ ձևույթներ են (բառեր չեն): մի դեպքում ձևույթը նույնանում է բառի հետ, իսկ մյուս դեպքում՝ չի նույնանում:

Այնուհետև, ըստ գործառական հատկանիշի՝ ձևույթները ծառայում են լեզվի ավելի բարձր մակարդակի երևույթների սերմանը: Ձևույթները բաղադրում են բառաձևեր՝ անուն խոսքիմասային միավորներ հոլովման համակարգում, բայի խոնարհման համակարգում և այլն, մասնակցում են բառերի և քերականական ձևերի կազմությանը: Ըստ այդմ հայերենում, օրինակ, մի կողմից՝ *գիր* ձևույթով, որ արտա-

հայտում է բառային չտարբերակված իմաստ, մյուս կողմից՝ *-ել*, *-եի*, *-եցի*, *-կան*, *-իչ*, *-ություն*, *-ավոր* և այլն ձևույթներով, որոնք արտահայտում են միայն քերականական իմաստ, խոսքի մեջ կարող են հանդիպադրմամբ կազմել ոչ միայն *գրել*, *գրական*, *գրիչ*, *գրություն*, *գրավոր* բառերը՝ բառային տարբերակված իմաստներով, այլև *գրել*, *գրեի*, *գրեցի* ձևերը, որոնք սուսկ քերականական ձևեր են, այսինքն՝ ընդամենը նշանակում են բառերի քերականական հարաբերություններ: Նշվածներից *-ական*, *-իչ*, *-ություն*, *-ավոր* ձևույթներով արտահայտվում են բառակազմական (իրահարաբերական), իսկ *-ել*, *-եի*, *-եցի* ձևույթերով՝ բառահարաբերական (վերաբերական) իմաստներ:

4. Ձևույթների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել նախ՝ նրանց թվաքանակային կազմը, միմյանց հետ հանդիպադրման հնարավորությունը և գործածության հավանականությունը: Այսպես, կան քերականական ձևույթներ, որոնք միայն բայարմատների հետ են բաղադրվում, նաև այնպիսիները, որոնք մասնակցում են անվանական միավորների թեքմանը՝ հոլովմանը և դասաթվային կազմությամբ և այլն. հմտ. *գիր-*, որից մի կողմից՝ *գրել* (*-ել* բայակազմիչ ձևույթով), մյուս կողմից՝ *գրերի* (*-եր-ի*, թվի և հոլովի կազմիչ ձևույթներով), այլև *գիրս* (*-ս* ձևույթով):

Այնուհետև՝ անհրաժեշտ է նկատի ունենալ միավորների զուգահեռադիպումներն այլ մակարդակի միավորների հետ, մի երևույթ, որում որոշակի դեր ունի տվյալ միավորի գործառությունը: Այսպես, հայերենում ունենք հարցահարաբերական *ուլ* դերանունը, որի դիմաց հոլովման համակարգում առկա է գործիական հոլովի *-ուլ* վերջավորությունը. առաջինը բառային միավոր է, իսկ երկրորդը՝ ձևային. դրանք ձևով նույն, իմաստով տարբեր միավորներ են: Մեկ այլ օրինակ. հայ. *ու-*ն հնչույթային մակարդակում միապլան միավոր է, այնինչ ձևաբանական մակարդակում՝ երկպլան միավոր է, քանի որ այդ մակարդակում այն անուն խոսքիմասային միավորների սեռական հոլովի վերջավորությունն է, որն ունի սերման, պատկանելության, վերաբերության, հատկացման և այլն քերականական (վերաբերական) իմաստ:

Ելնելով ձևայինների բառակազմական կամ վերաբերական տարբերության հատկանիշից կարելի է դրանք ներկայացնել որոշակի խմբերով. օր.՝ *դուռ, դոնասպան, դրկից* բառերում ունենք *դուռ* և *դր (դրր)* ձևայինները, որոնք ձևով տարբեր են, սակայն իմաստով՝ նույնը, ուստի դրանք կարելի է ներկայացնել իբրև մեկ ձևային տարբերակներ: Այդպես նաև *գիր, անգիր, գրել, գրական, գրային* բառերում մեկ ընդհանուր ձևային են *գիր//գր (գրր)* տարբերակները, իսկ *գրի, գրին, գրից, գրով* ձևերում *-ի, -ին, -ից, -ով* ձևայինները կարելի է միավորել մեկ ընդհանուր՝ հոլովակազմիչ լինելու հատկանիշով, իբրև հոլովակազմիչ ձևայիններ: Տվյալ դեպքում գործ ունենք լեզվաբանական մի երևույթի հետ, որը կոչվում է ձևային միավորների նույնականացում, և որը տեղի է ունենում ոչ միայն բառ-ձևայինների, այլև վերջավորություն-ձևայինների դեպքում: Բերված օրինակներում *դուռ* և *դր (դրր), գիր* և *գր (գրր)* ձևայինները ոչ այլ ինչ են, եթե ոչ տարբերակային ձևայիններ¹:

Ձևայինների նույնացումից կամ առանձնացումից պարզվում է, որ դրանք ըստ խոսքում ունեցած դերի երկու կարգի են՝ հիմնական և երկրորդական: Այսպես, *դուռ, քուն, քնական, քնային, քնորոն* և այլն, այլև *քուն, քանից, քանը, քանով* և այլն բառերում *քուն* միավորը հիմնական ձևային է՝ անկախ այս կամ այն ձևով հանդես գալուց, իսկ մյուսները՝ *-ական, -ային, -ան, -ից, -ը*, երկրորդական ձևայիններ: Վերջիններս, ինչ խոսք, միատարր չեն, այլ իրենց հերթին բաժանվում են երկուսի, բառակազմական՝ *-ական, -ային, -ան*, և բառահարաբերական՝ *-ից, -ը, -ով* ձևայինների: Ընդ որում պետք է նկատել նաև, որ երկրորդական բառակազմական ձևայինները գտնվում են հակադրական բաշխման հարաբերության մեջ, իսկ երկրորդական բառահարաբերական ձևայինները, ընդհակառակը, հանդես են գալիս լրացական բաշխման հարաբերությամբ: Օրինակ՝ նոր գրական հայերենում գոյականի *-ի, -ու, -վա, -ոջ* և այլն հոլովիչները միմյանց նկատմամբ գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ, որովհետև եզ. թվի սեռական հոլովի քերականական իմաստի արտա-

¹ Է. Բ. Աղայանը համարում է լծորդական ձևայիններ: Տե՛ս. Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 537:

հայտության գործում նրանցով տարբեր կարգի բառեր են թերվում: Այնուհետև, հին գրական հայերենի բայի խոնարհման համակարգում, ըստ լծորդությունների առավել գործածականության հատկանիշի, գերակայում է *ե* խոնարհումը, մանավանդ որ այն ունի ներգործածև և կրավորածև խոնարհումների համար առանձին ձևայթալի բաշխում, ներկայանում է ինքնուրույն հարացույցով, որն էլ, բնականաբար, հիմք է հանդիսանում *ե* խոնարհման ձևայթալներն անվանելու հիմնական (անփոփոխակային), իսկ մյուսները, ընդհակառակը, ոչ հիմնական (փոփոխակային) և այլն:

Այս պարագայում, միաժամանակ, նկատելի է, որ ժամանակակից հայերենում *-ի* հոլովիչը, իբրև երկրորդական բառահարաբերական ձևայթալ, անփոփոխակային է, իսկ մյուսները՝ *-ու*, *-վա*, *-ոջ* և այլն, ընդհակառակը՝ փոփոխակային: Ըստ այսմ ձևայթալին վերլուծության դեպքում ևս կարելի է խոսել դրանց անփոփոխակ (ինվարիանտ) /փոփոխակ (վարիանտ) հարաբերակցության մասին:

Այնուհետև, ձևայթալների բնութագրման համար կարևոր է *ձևայթալ* և *ենթաձևայթալ* տերմինների առանձնացումը՝ իբրև տարբեր քերականական իմաստների կրողներ:

Հայտնի է, որ միևնույն ձևայթալի արժեքով հանդես եկող տարբեր ձևերը մեկ ձևայթալի ենթաձևայթալներն են: Վերը բերված օրինակներից հայերենի սեռական հոլովի նշանակություն ունեցող մասնիկները (վերջավորությունները՝ *-ի*, *-ու*, *-վա* և այլն) այդ հոլովը նշանակող ընդհանուր ձևայթալի ենթաձևայթալներն են. դրանցից մեկը վերը նշված հատկանիշներով, պայմանականորեն, ինչպես նշեցինք, կոչվում է անփոփոխակ, իսկ մյուսները՝ փոփոխակներ:

Ենթաձևայթալները ներկայացնում են երկու կարգի հարաբերակցություն, եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը, թե դրանց միջև ինչպիսին է այդ հարաբերակցությունը՝ ազմտ, թե՛ հակառակը՝ կախյալ: Այս իմաստով ազատ հարաբերակցության են այն ձևայթալները, որոնք կարող են փոխարինել միմյանց. օրինակ՝ սոր գրական հայերենում հոգնակի թվի կազմիչ *-ներ* և *-եր* ձևայթալները գրաբարյան *ք*-ի հետ գտնվում են ազատ հարաբերակցության մեջ, քանի որ վերջինս

գործածվում է հատուկ դեպքերում, այնինչ *-ներ* և *-եր* վերջավորությունները կարող են կիրառվել գրեթե բոլոր դեպքերում. հմմտ. *գյուղացի-գյուղացիներ* // *գյուղացիք, արկղ, արկղեր*, բայց ոչ *արկղք* և այլն:

Տարբերում են նաև ձևույթներ, որոնք թեն, այնուամենայնիվ, իմաստից զուրկ են, սակայն ունեն գործածության որոշակի կարևորություն, որպիսով էլ կոչվում են *գործատական ձևույթներ*: Ըստ Է. Բ. Աղայանի՝ հայերենում նման ձևույթ է, օրինակ, բարդ բառերի բաղադրիչ հոդակապը, որի հիման վրա, ինչպես գիտենք, բառակազմության մեջ առանձնացվում է բարդության երկու տեսակ՝ հոդակապով և առանց հոդակապի (անհոդակապ), գտնելով, որ *բարձրաբերձ, մայրաքաղաք, լաափող* և այլն բառերում առկա *ա* հոդակապը դիտվում է առանձնապես իմաստ չունեցող ձևույթ. այս հարցը, կարելի է մտածել, ունի առավել լայն ուսումնասիրության կարիք, մանավանդ որ այն քերականական իմաստ է արտահայտում: Նույնպիսի ձևույթներ են համարվում նաև բայի խոնարհիչ (լծորդ) ձայնավորները, գրաբարում՝ *ե, ի, ա, ու*, իսկ աշխարհաբարում՝ *ե, ա*, որոնք, ի դեպ, ի նմանություն հնչյունական համակարգի նույնպիսի միավորների, զուրկ են իմաստային կողմից (համարվում են, այսպես կոչված, միապլան ձևույթներ, որ ևս տարակուսելի է)¹:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 108-110:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 131-139:

Широков О.С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 539:

Թեմա 2. Քերականական միջոցներ և քերականական եղանակ (տեխնիկա)

Հիմնահարցեր: Երևույթի ընդհանուր բնորոշումը: Բառերի դասավորություն: Կրկնություն: Բառերի բարդացում: Մասնիկավորում: Ներքին թեքում: Շեշտ և հնչերանգ (ինտոնացիա): Հարակից (օժանդակ) բառեր: Համայրում (սուպլեդիվիզմ):

1. Քերականության միջոցը քերականական իմաստի արտահայտման նյութական կողմն է: Լեզուներում առանձնացվում են քերականության արտահայտության մի շարք միջոցներ, որոնք իրենց հիմունքներով լինելով բոլորովին տարբեր, միաժամանակ ծառայում են լեզվի քերականական կառուցվածքի նպատակային դրսևորմանը, վերջին հաշվով լեզվի հաղորդակցական կողմի լիարժեք ապահովմանը: Այդ միջոցները ընդհանուր են և հավասարաթեք բոլոր լեզուների համար, թեև ոչ բոլոր լեզուներն են ամբողջովին կամ հիմնական մասով օգտվում այդ միջոցներից: Կան, այլև եղել են լեզուներ, որոնց համար բնորոշ է դրանցից մեկը կամ մյուսը, կան լեզուներ, որոնք օգտվում են այդ միջոցների հիմնական մասից կամ մի մասից: Այս տարբերությունը, ինչ խոսք, հավաստում է լեզուների քերականական արտահայտության միջոցների նկատմամբ այս կամ այն չափով հակվածությունը:

Ամենից առաջ նկատենք, որ քերականության արտահայտության միջոցները, ի տարբերություն բառագիտականի, մասնավորապես բառակազմական միջոցների, ունեն քերականական-կարգային (կատեգորիալ) բնույթ, թեև առերևույթ դրանցում կարելի է տեսնել նույնականություն: Այսպես, բարդ բառերի կազմումը, իրոք, բառակազմական երևույթ է՝ բառի մակարդակում, սակայն այն միաժամանակ քերականական երևույթ է, երբ քննության ենք առնում նրա այն գործառույթը (ֆունկցիան), որ հանդես է գալիս շարահյուսության մակարդակում:

Լեզուներում առանձնացվում են նման շուրջ մեկ տասնյակ միջոցներ՝ *բառերի (իբրև շարահյուսական միավորների) դասավորությունը, կրկնությունը, բառերի բարդացումը (բառաբարդումը), մասնիկավորումը (աժանցումը), ներքին թեքումը, շեշտը և հնչերանգը (ին-*

տոնացիան), հարակից (օժանդակ) բառերի օգտագործումը, համալրումը (սուսլերիվիզմը): Դրանք տարբեր լեզուներում հանդես են գալիս ոչ միևնույն չափով, նույնիսկ լինում են լեզուներ, որոնց բնորոշ է արտահայտության այս կամ այն միջոցը: Այլ կերպ ասած՝ արտահայտության միջոցները լեզուներում հանդես են գալիս ոչ թե ամեն մեկում հավասարապես, այլ տարբեր լեզուներում դրանց այս կամ այն մասով: Օրինակ՝ ներքին թեքումը բավականին տարածված է հատկապես սեմական լեզուներում, իսկ հնդեվրոպական լեզուներում այն չունի այնքան լայն գործածություն: Հայերենում, ներքին թեքման միջոցով որոշ դեպքերում արտահայտվում է գոյականի հոլովումը (*ա* ներքին հոլովում. *տուն* – *տան*, *տանից*, *տանով*, *հայր* – *հոր*, *հորից*, *հորով* և այլն), որը գալիս է գրաբարից, իսկ վերջինիս համար այն հնդեվրոպական ժառանգություն է (հե. **pāter* «հայր» > *pātr-os* «հոր» և այլն):

1. *Բառերի (իբրև շարահյուսական միավորների) դասավորությունը* բնորոշ է հատկապես այն լեզուներին, որոնք մի տեսակ գուրկ են քերականական արտահայտության այնպիսի միջոցներից, ինչպիսին են, ասենք, հոլովումը, խոնարհումը և այլն (ընդհանուր առմամբ՝ մասնիկավորումը): Այս դեպքում շարահյուսական-կարգային հարաբերությունների դրսևորումը տեղի է ունենում ոչ թե ի հաշիվ ձևաբանական փոփոխությունների, այլ խոսքի մեջ բառերի դասավորության՝ տեղով, դիրքով, հաջորդականությամբ և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ այս երևույթը ինչ-որ չափով մոտ է նախադասության կազմի մեջ մտնող բաղադրիչների՝ գլխավոր անդամների լրացումների շարադասությանը, սակայն դրանք լիովին տարբերվում են, որովհետև այդ լրացումներն, այնուամենայնիվ, հանդես են գալիս բառ-բաղադրիչների ուղիղ, այլ ոչ թե թեք (ձևաբանորեն արտահայտված) ձևերով. հմմտ. անգլ. *The father loves the son* – հայ. *Հայրը սիրում է որդուն* նախադասություններից առաջինը հանդես է եկել բառերի ուղիղ կամ անփոփոխ (ձևաբանորեն չփոփոխված) ձևերով, իսկ երկրորդում առկա են որոշյալ առումով դրված ենթակայի, թեք հոլովով վերցված ստորոգյալի արտահատությունը. մեկում շարահյուսական հարաբերությունն արտահայտված է բաղադրիչներ

րի սոսկ *դասավորությամբ*, որն էական է տվյալ դեպքում, իսկ մյուսում, թեև ենթակայի և ուղիղ խնդրի տեղերը համընկնում են, բաղադրիչները հանդես են եկել ձևաբանորեն արտահայտված (որոշյալ հոդով, հոլովված ձևով): Ավելին, անգլերենում և հայերենում նույն միտքն արտահայտող այդ նախադասությունների ենթակաների և ուղիղ խնդիրների տեղափոխության (փոխակերպման) դեպքում ևս առաջինում շարահյուսական-կարգային արտահայտության միջոցը բաղադրիչների միայն դասավորություն է, իսկ երկրորդում կատարվում է ձևաբանական այլ կարգի միջոցների (ներգործական սեռով դրված ստորոգյալի վերածում կրավորականի, վերաբերության անուղղակի խնդրի արտահայտությունը կան բացառական հոլովով, կան կապով և կապի խնդրով). հմմտ. անգլ. *The son is loved by father* – հայ. *Որդին սիրվում է հորից (հոր կողմից)*: Ի դեպ՝ հին գրական հայերենում ևս, տվյալ դեպքում, շարահյուսական արտահայտությունը նույնն է, ինչ նոր գրական հայերենում՝ ըստ ձևաբանական կարգայնացման. *Հայր սիրէ գորդի – Որդի սիրի ի հորէ*: Սակայն ի տարբերություն արևելահայ գրական լեզվի, պետք է նկատել, որ արևմտահայ գրականում կարևոր տեղ ունի դասավորությունը. օր.՝ *Հայր սիրէ որդի* նախադասության մեջ առաջին տեղում է ենթական, իսկ վերջին տեղում՝ ուղիղ խնդիրը, հակառակ դեպքում՝ *Որդի սիրի հորէ*, դասավորության փոփոխությունը առաջ է բերում ենթակայի և ուղիղ խնդրի հարաբերության փոփոխություն:

Այս երևույթը բնորոշ է մասնիկավորում չունեցող լեզուներին. այդպիսին են, օրինակ, հին լեզուներից՝ շումերերենը, հին հրեերենը, նոր լեզուներից՝ անգլերենը, չինարենը, մասամբ նաև ֆրանսերենը. օր.՝ *Paul aime Lucie* – «Պոլը սիրում է Լյուսիին», հազվադեպ (մանավանդ անորոշություն ցույց տվող) օրինակների մեջ՝ նաև հայերենը. օր.՝ Մի տուն մտավ մի քահանա – Մի քահանա մտավ մի տուն և այլն:

Այնուհետև, տարբերում են բառերի, իբրև շարահյուսական միավորների դասավորության մի քանի տեսակ.

ա. *բառերի կայուն դասավորություն*. օր.՝ Արևը թեքվում է դեպի մայրամուտ, կամ *ազատ դասավորություն*. օր.՝ Արևը դուրս է գալիս առավոտյան // Առավոտյան արևը դուրս է գալիս և այլն,

բ. սովորական դասավորություն. օր՝ Երեխաները խաղում են բակում. տվյալ դեպքում ոչ թե՛ Բակում են խաղում երեխաները և այլն,

գ. կանոնավոր դասավորություն. օր՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարն եմ սիրում / Մեր հին սագի ողբանվագ լացակումած լարն եմ սիրում» (Չարենց). «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամա է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ». «Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է» (Բակունց) և այլն,

դ. անկանոն դասավորություն. օր՝ Չանցած երկու ժամ՝ պիտի լինեք ընկերս մտերիմ այստեղ,

ե. շրջուն դասավորություն. օր՝ «Հիշում եմ քո դեմքը ծեր, մայր իմ անուշ ու անգին» (Չարենց) և այլն:

Դասավորության այս տեսակները լեզուներում ընդունում են գործածության տարբեր չափեր: Հայերենում, օրինակ, կարելի է գտնել դասավորության գրեթե բոլոր տեսակների գործածություն, մանավանդ ոչ միայն նախադասության գլխավոր անդամների, այլև վերջիններիս լրացումների դեպքում. Կարելի է ասել, որ սա լեզվի շարահյուսական մակարդակի ճկունության մի դրսևորում է: Նկատելի է, որ, օրինակ, անգլերենը, ֆրանսերենը և այլ լեզուներ, լինելով հիմնականում վերլուծական կառուցվածքի, ավելի են հակված այդ երևույթին՝ շարահյուսական բաղադրիչների դասավորությամբ խոսք կազմելուն:

2. *Կրկնությունը*, ընդունված է ասել, որ ավելի շուտ բառակազմական մակարդակի երևույթ է, սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ այդ միջոցով արտահայտվում է շարահյուսական հարաբերություն: Կրկնությունը, օրինակ, ձևաբանական (բայի հիմքի կազմության) միջոց է հին լեզուներից լատիներենում, հունարենում և այլն, հայերենում միայն մեկ դեպքում (գրաբար՝ *ան-նեմ* «անել, ստեղծել» > *արար-ի* «արեցի, ստեղծեցի»):

Լատիներենում բայի անցյալ կատարյալի հիմքը, սովորական կամ հիմնական միջոցից (հատուկ մասնիկների օգնությամբ կազմվելուց) բացի լինում է նաև արմատի կրկնությամբ, ընդ որում կրկնվող բաղադրիչներից մեկը՝ հատկապես առաջինը կրում է որոշ փոփո-

խություն. tang-ěre «կաչել, քսվել» > tetig-i (< *teg-tig < teg-teg-), dāre «տալ, նվիրել» > dedi (< *da-da < de-di) և այլն: Դրանից բացի, լատիներեում կա նաև արմատի կրկնությամբ գործողության բազմակիտության արտահայտման երևույթը. օր.՝ bibēre «խամել՝ ոչ միանգամից, այլ շարունակաբար»:

Հին հայերենում, ինչպես վերը նշեցինք, միայն մեկ բայի դեպքում է, որ անցյալ կատարյալի հիմքը կազմվում է կրկնությամբ. *սոնել* «անել. ստեղծել» > *արար-* (հմմտ. անցյալ կատարյալ՝ *արար-ի, արար-եր, արար* և այլն, երկրորդ ապառնի՝ *արարից, արասցես, արասցէ* և այլն):

Առանձնացվում է կրկնության մի քանի տեսակ՝ հիմնված ինչ-ինչ հատկանիշի վրա, ընդ որում հնարավոր է կրկնյալների ընդմիջում, օր.՝ հայերենում *գ, ընդ, սո* և այլն միավորներով.

ա. ըստ *բաշխման*. օր.՝ *մեկ-մեկ* «մեկական», *վեց-վեց* «վեցական», *չոկ-չոկ* «իրարից գատված», *մեջ-մեջ* «մեջընդմեջ» և այլն,

բ. ըստ *քանակի մեծացման*. օր.՝ *տեսակ-տեսակ* «շատ, բազմատեսակ», *տուն-տուն* «շատ տներ», *տուն սո տուն* «շատ տներ» և այլն,

գ. ըստ *իմաստի աստրկացման*. օր.՝ *մեծամեծ* «խիստ մեծ», *մաքրամաքուր* «առավել մաքուր» և այլն,

դ. ըստ *գործողության բազմակիտության* կամ *տեսականության*. օր.՝ *վազվազել* «այս ու այն կողմ վազել», *մոթմոթալ* «անընդհատ դժգոհել», *խլխլել* «երկու կողմից դեպի իրեն քաշել», *բիկբիկալ* «անընդհատ եռալ՝ ձայն հանել» և այլն,

ե. ըստ *ծավալի մեծացման*. օր.՝ *մաս-մուս* «իրար մոտ տեսակի մասեր», *սուր-մուր* «սուտ և ավելին» և այլն:

Կրկնությունը, որքան էլ բազմաբնույթ և բազմատեսակ, լեզուներում միշտ չէ, որ հանդիպում է հավասարապես, այլև՝ ամբողջությամբ: Լեզուներ կան, որոնց բավականին բնորոշ է կրկնությունների այս կամ այն տեսակը (օրինակ՝ հայերենը, ինչպես տեսանք վերը բերվածներից), իսկ տեսակների մեջ՝ գործածության հաճախակիությունը կամ տարածվածությունը:

Հայերենն ունի կրկնության մեկ այլ յուրահատկություն ևս. դա այն է, որ տվյալ բառի կրկնությունը կարող է տեղիք տալ խոսքինասային փոփոխության՝ տեղաշարժի. հմմտ. գոյական՝ *խումբ, շար, փուն, փողոց* - ածական՝ *խումբ-խումբ* (մարդիկ), *շար-շար* (ծաղիկներ), մակբայ՝ *շար-շար* (խոսել), *փուն-փուն* (ման գալ), *կաթիլ-կաթիլ* (հավաքել) և այլն:

3. *Բառերի բարդացումը (բառաբարդումը)* ևս լեզուներում, ընդհանուր առմամբ, հանդիսանում է բառակազմական միջոց: Հնդեվրոպական լեզուներում այն, ինչպես գիտենք, գրեթե գերազանցապես բառակազմության մեջ առանձնացվող իրակություն է: Այնինչ, կան լեզուներ, օրինակ՝ ամերիկյան հնդկացիական ցեղերի լեզուները, որոնցում բառաբարդումն ունի բառահարաբերական (կամ վերաբերական) իմաստ արտահայտելու հնարավորություն: Այս իրողությունը, ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ, մոտենում է ներմարմնավորյալ լեզուների նմանատիպ երևույթին: Սա այն է, երբ սովորաբար բարդ բառի բաղադրիչների միջև հայտնվում է մեկ այլ մասնիկ, և ըստ այդմ փոխվում է բառը՝ շարահյուսական մակարդակի մեջ, այսինքն՝ բառահարաբերական իմաստի առաջացումով:

Մոտավորապես նման երևույթ կարելի է դիտել հայերենում, սակայն ոչ թե բառահարաբերական իմաստի արտահայտման ձևով, այլ լոկ բառակազմության, որի դեպքում բառին հաղորդվում է բառային նոր իմաստ, կամ իմաստային երանգավորում. հմմտ. *գույն-գույն* և *գույնզգույն, մեջ-մեջ* և *մեջընդմեջ, մեկ-մեկ* և *մեկառումեկ* և այլն: Բերված և նման շատ օրինակներում կա բառակազմական, բնավ ոչ շարահյուսական՝ քերականական իմաստային փոփոխություն. դրանք այստեղ բերվեցին լոկ բառի մեջ տեղ գտնող («ներմարմնավորվող») մասնիկների դեպքում երբեմն երևան եկող իմաստային տեղաշարժը ցույց տալու նպատակով:

4. *Մասնիկավորումը (ածանցումը)* (ուշ լատ. affixatio < affixus «ավելացված, ամրացված» < affigo) բավականին տարածված, ուստիև հատկանշական միջոց է մի շարք լեզուներում, մանավանդ հնդեվրոպական բնույթի: Սովորաբար ասվում է, թե մասնիկավորումը լինում է բառակազմական կամ բառափոխական նպատակով:

Մասնիկավորումն այլ բան չէ, քան հիմնական ձևույթի (արմատի կամ բառի) վրա երկրորդական ձևույթի (ածանցի կամ վերջավորության) հավելում. ըստ այդմ էլ՝ արմատի կամ բառի վրա ավելացվողը, կոնկրետ իմաստով, կոչվում է վերջավորություն, իսկ երևույթը ձևաբանական է, ի տարբերություն մյուսի՝ բուն իմաստով ածանցման, որ բառակազմական իրողություն է:

Բուն իմաստով ածանցումը տեղի է ունենում բառակազմական երկրորդական ձևույթներով. օր.՝ *դաս- դասարան, գյուղ – գյուղական, ընկեր – ընկերություն* և այլն: Երկրորդաբար ածանցում ասելով հասկանում ենք նաև ձևակազմական երկրորդական ձևույթներով նոր բառաձևերի սերում. օր.՝ *գիր – գրել, գրելու, դաս – դասի, դասից, գյուղ-գյուղերի, գուղերում* և այլն:

Այս հարաբերության մեջ, հայերենում, օրինակ, անորոշ դերբայի ձևը մի տեսակ համատեղում է կազմության այդ երկու տիպերը՝ բառակազմականը և ձևակազմականը: Այսպես, գրական արևելահայերենում *-ել, -ալ* ձևույթները *գրել, մոռանալ, մեկնաբանել, գիտենալ* բառերում, իսկ *գրել, գրական, մոռացություն, մեկնաբանություն, գիրություն* և այլն շարքում բառակազմական (բայակազմական) մասնիկներ են (նոր բառ են կերտում), իսկ *գրել, մոռանալ, մեկնաբանել, գիտենալ, գրեմ, գրեցի, մոռանայի, մոռացե՛ք, մեկնաբանելիս, մեկնաբանեցինք, գիտեմ, չգիտեմ* և այլն շարքում՝ ձևակազմական (բայական այս կամ այն ձևը կազմող) մասնիկներ: Այլ կերպ ասած՝ *-ել, -ալ* բաղադրիչները մի դեպքում բառակազմական երկրորդական ձևույթներ են՝ ածանցներ, իսկ մյուս դեպքում՝ ձևակազմական երկրորդական ձևույթներ՝ վերջավորություններ: Դպրոցական դասագրքերում ընդունված է, որ ածանցը բառակազմական (բառագիտական) միավոր է, վերջավորությունը՝ ձևակազմական (քերականական):

Այս ընդհանուր դիտարկումը, գրեթե առանց բացառության, տարածվում է հնդեվրոպական լեզուների վրա: Ավելին, գիտական նման մեկնաբանությունը, և ըստ այդմ՝ լեզուներում նույնաբժեք երկրորդական ձևույթների առանձնացումը, իբրև տեսական մոտեցում, ամենից առաջ մշակվել է վերը նշված տիպի լեզուների փաստերի նկա-

տառուճով: Եվ քանի որ լեզվաբանության եթե ոչ ներկայիս, ապա ոչ վաղ անցյալի շատ հիմնադրույթների օրինակով քննության առնվեցին մի շարք այլ խմբի (լեզվաբնութանիքի) լեզուները, ուստիև մասնիկավորմամբ կամ ածանցմամբ բառակազմության կամ ձևակազմության տեսությունը տարածվեց նաև այլ խմբի լեզուների վրա, մասնավանդ դրանց պատմական, տիպաբանական ուսումնասիրման նպատակով: Ըստ այսմ նկատելի է, որ եթե մասնիկավորումը բուն իմաստով հատուկ է հնդեվրոպական, կովկասյան և այլ տիպի լեզուներին, իբրև քերականական արտահայտության սովորական միջոց, ապա թյուրքական և մյուս լեզուներում այն «հանդիսանում է քերականական արտահայտության ամենահիմնական միջոցը»¹:

Մասնիկավորումը հիմնական ձևայթի նկատմամբ երկրորդական ձևայթի տարբեր դիրքեր գրադեցնելու ձևով է տեղի ունենում, և ըստ այդմ տարբերում են հիմնական ձևայթի սկզբում, վերջում և միջին մասում հանդես եկող ձևայթներ (մասնիկներ), ըստ որի էլ լինում են նախամասնիկներ, վերջամասնիկներ և միջամասնիկներ:

Մրանք ոչ բոլոր լեզուներում են գործածվում նույն կամ հավասար չափով: Հունարենը, լատիներենը, ժամանակակից ռուսերենը, օրինակ, հարուստ են նախամասնիկներով. հուն․՝ *ἀ, ἀνά, ἄπο, δια, ἐκ* (έξ), *επι* և այլն², լատ․՝ *abēō* «գնալ, հեռանալ», *adeō* «գալ, մոտենալ», *adnumerō* «թվարկել», *complexus* «ընդգրկում. գրկախառնում», *concordia* «համաձայնություն, միացում», *conscribō* «գրառել, համարակալել», *disiunctio* «տարանջատում», *experientia* «փորձ. փորձություն», *simplex* «պարզ, հասարակ», *subsidiūm* «օժանդակ (գորք). օգնություն, գորակցություն» և այլն³: Ռուսերենում նախամասնիկները ոչ միայն շատ են, այլև տարբեր բնույթի են. հմնտ. *заказать* «պատվիրել, (*հնց.*) արգելել, թույլ չտալ», *отказать* «մերժել», *показать* «ցույց տալ, ցուցադրել», *сказать* «ասել, հաղորդել. արտասանել», *указать* «ցույց տալ. մատնանշել» և այլն:

¹ *Բ. Մրայան*, նշվ. աշխ., էջ 463:

² Տե՛ս *И. X. Соболевский*, *Древнегреческий язык*, М., 1948:

³ Վ. Գ. *Համբարձումյան*, *Լատիներենի դասագիրք*, Ե., 2007, էջ 19-28:

Հայերենում նախամասնիկները, թերևս, մատների վրա կարելի է հաշվել (գրաբարում հունաբան դպրոցի գործիչների ջանքերով, արհեստականորեն ստեղծվեցին մեկուկես տասնյակից ավելի նախամասնիկներ՝ *առ-*, *բակ-*, *բաց-*, *գեր-*, *դեր-*, *ենթ-*, *համ-*, *հում-*, *մակ-*, *շաղ-*, *շար*, *պար-*, *սրոր-*, *տար-*, *փաղ-* և այլն՝ կազմված հայերենի ներքին միջոցներով, այսինքն՝ արմատի, այսպես կոչված, վերածմամբ ձևույթի. օր.՝ *առբայ*, *բակառութիւն*, *բացայայտիչ*, *գերակայ*, *դերանուն*, *ենթադարեւ*, *ենթակայ*, *համասութիւն*, *հումանիշ*, *մակբայ*, *շաղկայ*, *շարահիւսեւ*, *սրորոգեալ*, *տարընթերցումն*, *փաղառութիւն* և այլն, և այլն¹:

Լեզուների պատմական ուսումնասիրությունից պարզվում է, որ մասնիկների (ածանցների) առաջացումը կապվում է բառերի կամ արմատների՝ բուն իմաստի փոփոխմամբ կամ վերածմամբ երկրորդական կամ ածանցական իմաստի ձեռքբերման հետ: Լինում են նաև դեպքեր, երբ այս կամ այն բառը գործածվում է ոչ թե իր բուն՝ արմատական (առարկայանիշ), այլ երկրորդական կամ հավելական (ածանցական, կամ բառ-մասնիկ) իմաստով: Այդ երևույթը նկատելի է շատ լեզուներում: Հայերենում նման ճանապարհ են անցել կապերը (գրաբարում՝ նախդիրներն ու նախադրությունները. *առ*, *ընդ*, *ըստ*, *վերայ*, *յաղազս*, արդի հայերենում՝ *հետո*, *մասին*, *վրա* և այլն): Ի դեպ՝ այս անցումը լավագույնս նկատելի է հին գրական հայերենում, ինչպես վերը նշեցինք, հունաբան բառակազմության մեջ՝ նախամասնիկների վերաբերալ. հմմտ. *դերասան* և *դերբայ*, *համույթ* (նոր բառ՝ ֆրանս. ensemble «խումբ») և *համանուն*, *սրորոտ* և *սրորոգյալ* և այլն:

Հայերենում գրաբարյան նույն արմատից կազմված *պէտք*, *պիտոյ* բառերը ժամանակակից հայերենում վերածվել են հարկադրական եղանակի կազմիչի. լեզվի զարգացումն ընթացավ այն ուղղությամբ, որ ոչ շատ վաղ անցյալում *պիտոյ* – *պիտի* փոփոխությամբ տեղի ունեցավ բառից եղանականիշ մասնիկի վերածում, իսկ մոտ անցյալում նման գործառությամբ սկսեց հանդես գալ նաև *պէտք է*, այսպես

¹ Ա. Ն. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971:

կոչված, բառ-նախադասությունը՝ իբրև հիշյալ եղանակի կազմիչ. հմմտ. մի կողմից՝ *պիտոյ է երթալ* (նախադասություն), *պեպք է գնամ* (բայաձև), մյուս կողմից՝ *պիտի երթամ, պիտի գնամ* (բայաձև): Հայերենի բարբառներում, ինչպես նկատված է, այդ բառ-մասնիկներն ավելի են կրճատվել (հազիվ ճանաչելի մասնիկի վերածվել). հմմտ. *պիտի ասեմ* - *պիտ ասեմ, տի ասեմ, տ' ասեմ* և այլն:

Նման երևույթներ, բնականաբար, տեղի են ունեցել նաև այլ լեզուներում, ինչպես հնդեվրոպական, այնպես էլ այլ ցեղակցության՝ ոչ հնդեվրոպական:

5. *Ներքին թեքումը*, ինչպես որ անվանումն է ցույց տալիս, ձևաբանական փոփոխություն է, որ տեղի է ունենում բառի կամ հիմնական ձևույթի ներսում, հիմնականում տարբեր կարգի հնչյունափոխություններով: Երևույթը նկատված է տարբեր խմբերի («ընտանիքների») լեզուներում, հատկապես սեմականում. օր.՝ հին եգիպտ. RRT, որ (ինչքան հայտնի է) հնագետ-աղբյուրագետները վերծանում են տարբեր կերպ՝ իբրև «Ուրարտու», «Արարատ» և այլն:

Հնդեվրոպական լեզուներում տարածված երևույթ էր բայի, նաև գոյականի հիմքի մեջ տեղի ունեցող ձայնավորական տարբեր կարգի հերթագայությունը՝ *e / o / ø* (զրո). հմմտ. ռուս. *бегу* «վերցնում եմ, հավաքում եմ», *сбор* «հավաք. վերցնելը», *братъ* «վերցնել, հավաքել»: Գերմաներենում, օրինակ, ձևաբանական որոշակի արժեք ունի թե՛ ձայնավորական փոփոխությունը՝ հերթագայությունը (ձայնդարձ. Ablaut), թե՛ հետադարձ առնամանությունը (Umlaut). հմմտ. *gehen – ging* «գնալ», *sehen – sah* «տեսնել», այլև *Mutter – Mütter* «մայր, մայրեր» և այլն:

Ներքին թեքման երևույթը նկատելի է ոչ միայն ձայնավորների, այլև բաղաձայնների դեպքում: Ռուսերենում, օրինակ, տարբեր կարգի բաղաձայնների ներքին թեքմամբ կազմվում են բայական այլևայլ ձևեր. հմմտ. *видеть – вижу, ходить – хожу* և այլն: Հայերենում ներքին թեքման օրինակ է գրաբարյան *դառնալ, բառնալ* և այլ բայերի անցյալ կատարյալի *դարձ-, բարձ-* հիմքերի կազմումը և այլն:

Տվյալ դեպքում ներքին թեքումը խաղում է նույն դերը, ինչ մասնիկավորումը: Ավելին, քերականական արտահայտության այդ միջոցը

19-րդ դ. գիտության համար հիմք է հանդիսացել առանձնացնելու թեքական լեզուների խումբը:

Հայ լեզվաբանության մեջ գտնում են, որ թեքականության հատկանիշի արտահայտություն է արդի հայերենում գրաբարից եկող *ս* ներքին թեքման տիպը՝ *տուն – տան, հայր – հոր* [*< հայր (hoy)*] և այլն: Ըստ Է. Բ. Աղայանի՝ հայերենում առհասարակ ներքին թեքման դրսևորում է բառի հիմքի ձայնավորի տարաբնույթ հնչյունավորվածությունը. *սէր – սիրոյ, գէտ – գիտեմ, տէր – տեսոն, Մովսէս – Մովսիսի // Մովսեսի* և այլն¹:

6. *Շեշտը և հնչերանգը (ինտոնացիան)* (լատ. *intonō* «աղմկել, որոտալ») նույնպես քերականական արտահայտության միջոց են, որոնցով խոսքը օժտվում է քերականական տարբեր իմաստներով: Ռուսերենում, օրինակ, շեշտն ունի ոչ միայն բառային տարբեր իմաստի դրսևորման հնարավորություն, այլև քերականական իմաստագատիչ դեր, չինտիբեթական որոշ լեզուներում հնչերանգն ունի քերականական նշանակություն և այլն²:

Այդուհանդերձ, հայերենում, նաև ռուսերենում հնչերանգը (ինտոնացիան) ունի ձևաբանական արժեք, մինևույն բառային կազմ (բաղադրիչներ) պարունակող նախադասությունները հնչերանգի փոփոխության պայմաններում կարող են արտահայտել միանգամայն տարբեր միտք. հմմտ. հայ. *Ես ասեմ՝ դու լսիր // Ես ասեմ, դու լսիր*. Սևին սապոնն ինչ կանի՝ խնին՝ խրատը // Սևին սապոնն ինչ կանի, խնին՝ խրատը և այլն: Բերված օրինակներում հնչերանգը պայմանավորված է կետադրությամբ. վերջինիս տարբերությունը (բութ կամ ստորակետ) նույն կառուցվածքի նախադասությունը դարձնում են տարբեր մտքով ասված նախադասություններ: Նույնը նկատում ենք այլ լեզուներում. հմմտ. ռուս. *Петр – ваш студент // Петр ваш – студент*.

7. *Հարակից (օժանդակ) բառերի օգտագործումը*, որպես քերականական արտահայտության միջոց, հանդիպում է ոչ բոլոր լեզուներում: Այն առավել տարածված է համարվում դարձյալ չինտիբեթական լեզուներում: Հնդեվրոպական լեզուներում նույնպես կան նման բառե-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 467:

² Նույն տեղում, էջ 467-468:

րի գործածության օրինակներ: Հայերենում այդպիսին են դիտվում *դեպի, առանց, հեղ, մասին*, ռուսերենում՝ *для, ради, мол*, անգլերենում՝ *from*, ֆրանսերենում՝ *pour* և այլն¹:

8. *Համալրումը (սուպլեմիդիզմը) (suppleō «հավելել, լրացնել», suppletum «հավելում, լրացում»)*, ինչպես գիտենք, ինքնուրույն բառերի գործածությունն է, որ ունենում է քերականական նշանակություն: Դրանք այնպիսի բառեր են, որոնք երկրորդաբար հանդես են գալիս խոսքում և ինչ-որ չափով լրացնում, համալրում են տվյալ նախադասության մեջ բառի քերականական նշանակությունը: Ընդունված է նման երևույթը կոչել *սուպլեմիդիզմ* (թարգմ. *համալրում*):

Այն կարող է արտահայտվել մի քանի ձևով, թվով, օր.՝ ռուս. человек - люди, համեմատության աստիճանով, օր.՝ գերմ. gut – besser, անգլ.՝ good – better, ռուս.՝ хороший - лучше, բայի կերպով, օր.՝ ռուս. брать – взять, говорить – сказать, բայի ժամանակով, օր.՝ ռուս. иду - шел) և այլն²: Հայերենում, առհասարակ, բայի խոնարհման համակարգում ևս նկատելի են համալրման (սուպլեմիդիզմի) զգալի թվով դեպքեր՝ հիմնականում կապված հիմքերի կազմության հետ. անկատարի հիմքում հանդես է գալիս այսինչ բայը, իսկ կատարյալի հիմքում՝ մեկ այլ բայ, որոնք, ի դեպ, իմաստով մոտ են իրար. հմմտ. գրաբար՝ *գամ- եկի, երթամ – չոգայ* և այլն: Նման երևույթի օրինակ են հայերենում անձնական դերանունների հոլովման համակարգում ուղղական և սեռական-տրական ձևերի հակադրությունը. *ես – իմ, ինձ, դու – քո, քեզ* և այլն:

Եվ իբրև ընդհանուր բնորոշում՝ բերված միջոցների դեպքում պետք է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքները:

Քերականական արտահայտության միջոցների ոչ միատարր լինելը, այլև ոչ բոլոր լեզուներում տեղ գտնելը կամ հավասարապես գործածվելը թույլ են տալիս դրանք բնորոշել նաև ըստ այդ հատկանիշների: Եվ քանի որ լեզվաբանական ներածական գիտելիքների ուսուցումը մեծապես ընթանում է հայերենի տվյալների հիման վրա,

¹ *Տե՛ս* Նոյն տեղում, էջ 468:

² Հմմտ. Կ. Ս. Абрамян, Կ. С. Акопян, նշվ. աշխ., էջ 89:

ուստի քերականական արտահայտության միջոցները ևս, իրենց հերթին, հնարավորություն են տալիս խոսելու հայերենի ձևաբանական նման իրողությունների վրա հիմնված ընդհանրացումների մասին:

Հիշյալ միջոցների մի մասի հիման վրա լեզվաբանության պատմության մեջ փորձեր են արվել դասակարգելու լեզուները՝ ըստ ձևակազմական (ձևաբանական) հիմունքի: Բոլոր դեպքերում նախապես նկատի է առնվել այն հասցամասնքը, որ լեզուներում քերականական արտահայտության միջոցների գերակայությունը կամ մասնակիությունը ունի ոչ թե բացարձակ, այլ հարաբերական նշանակություն:

Տվյալ լեզվի հակվածությունը քերականական արտահայտության միջոցներից մեկին կամ մյուսին (երբեմն նաև լիովին կամ մասամբ) բացատրելի է միայն նրա պատմության տվյալների հիման վրա. Ժառանգորդական ինչ գծեր է պահպանել, ինչպիսի՞ նոր գծեր է ձեռք բերել՝ ինքնուրույն զարգացման կամ այլ լեզուների հետ ունեցած շփումների հետևանքով, վերջիններս ինչքանո՞վ են դեր խաղացել և այլն:

Այդուհանդերձ, խնդրի լուծման համար առավել նշանակալից են դիտվել բառերի բարդացումը (բառաբարդումը), մասնիկավորումը (աժանցումը), ներքին թեքումը, հարակից (օժանդակ) բառերի օգտագործումը, և դրանց հիման վրա լեզուները բաժանվել են երկու խոշոր խմբի՝ *համադրական* (սինթետիկ) լեզուներ և *վերլուծական* (անալիտիկ) լեզուներ. սա հնից եկող բաժանում է: Ըստ այսմ՝ համադրական են այն լեզուները, որոնցում քերականական արտահայտման հիմնական միջոցներն են ներքին թեքումը և մասնիկավորումը (օր.՝ հայերենը, ռուսերենը, արաբերենը, հին հնդկերենը, հին հունարենը, լատիներենը և այլն), իսկ վերլուծական են այն լեզուները, որոնցում քերականական արտահայտման միջոցն է օժանդակ բառերի օգտագործումը (օր.՝ չինարենը, անգլերենը, ֆրանսերենը և այլն): Վերը քննված միջոցներից հայերենին ավելի բնորոշ են կրկնությունը, մասնիկավորումը (աժանցումը), ներքին թեքումը, օժանդակ բառերի գործածությունը, մասամբ նաև՝ բառերի դասավորությունը, համալրումը:

Այնուհետև, կարևոր է նաև քերականական եղանակների (տեխնիկայի. հուն. *techina / techna* «հնարք, խորամանկություն») խնդիրը:

¹ Հմմտ. է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 470:

Նկատված է, որ քերականության արտահայտման միջոցները լեզուներում իրականացվում են ոչ միակերպ կամ հավասար չափով: Տեխնիկայի առումով դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կարելի է նշել այն հիմնականը, որը նկատված է լեզուների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում, ընդ որում դրանք այստեղ ներկայացնում ենք այն պատկերացմամբ, ինչպիսին որ տրվում է. Բ. Աղայանի կողմից:

Ըստ այդմ քերականական արտահայտության միջոցներից յուրաքանչյուրը լեզուներում հանդես է գալիս տարբեր եղանակներով՝ կապված, այսպես կոչված, տարածվածության և բնութագրականության հատկանիշների հետ:

Վերհատույթային միավորներից հնչերանգը և շեշտը լեզուներում ունեն որոշակի դեր, բնորոշ են գրեթե բոլոր լեզուներին: Առավելապես կարևորվում է ուժգնության շեշտի դերը, այլև իրենց տեղն ունեն հնչերանգը կամ երաժշտական շեշտը: Հայերենի շեշտը վերջնականակային է, և ինչպես գիտենք՝ կայուն շարժական, այսինքն՝ կայուն, որ միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, շարժական, որովհետև միշտ անցնում է բառի վերջին վանկի ձայնավորին. հմմտ. *քաղսւք, քաղաքացի, քաղաքացիական, քաղաքացիականություն. գիր, գրական, գրականագէտ, գրականագիտություն*: Նման շեշտադրությունը, բնականաբար, չունի քերականական միջոցի այն դերը, ինչ ունի այն լեզուներում, որոնցում շեշտը շարժական է, և գրեթե չկա կայունության որևէ հնարավոր բացատրություն: Այդպիսի շեշտ ունեն ռուսերենը, մասամբ լատիներենը և այլն:

Հարակից (օժանդակ) բառերը ևս քերականական տեխնիկայի առումով այնքան էլ աչքի չեն ընկնում, օր.՝ նախդիրները, նախադրությունները, շաղկապները, որոնք շարահյուսական լրացուցիչ դեր են կատարում, մանավանդ այն լեզուներում, որոնցում քերականական իմաստներն առավելապես արտահայտվում են մասնիկավորմամբ:

Նման բառերի տեխնիկական կապված է բառագործածության տեղի և խնդրառության հետ: Ըստ տեղի՝ դրանք հանդես են գալիս բառի

սկզբում (նախադրություններ), բառի վերջում (վերջադրություններ) և բառերի միջև (ներդիրներ): Հայերենում առկա են նման հնարքների բոլոր դրսևորումները. հմմտ. *նրա հետ, դեպի գյուղ, գյուղում և քաղաքում, քեզանից բացի // բացի քեզանից, փնից հեռու, տղայի մասին* և այլն: Լատիներենում ևս դրանք կարող են հանդես գալ և՛ բառերի միջև, և՛ բառերից հետո. *cum me // mecum* «ինձ հետ», *brater et sister // brater sisterque* «եղբայր և քույր» և այլն:

Ինչ վերաբերում է նման բառերի խնդրատությանը, ապա հայտնի է, որ կան լեզուներ, որոնց դեպքում խնդրատությունը վճռական է. օր.՝ հայերենում *բացի* բառը պահանջում է բացառական հոլով (*մեզանից բացի // բացի մեզանից*), *առանց* բառը՝ սեռական կամ տրական հոլով (*առանց գրքի, առանց մեզ*): Այս հնարքը հատուկ է շատ լեզուների. նման օժանդակ բառեր պահանջվում են, բացի ուղղականից, բոլոր հոլովների խնդրատությամբ:

Բառերի բարդացումը ևս տեխնիկայի առումով բազմազան է: Կան լեզուներ, որոնք այնքան էլ աչքի չեն ընկնում բարդ բառերի կազմության տեխնիկայով, օր.՝ ֆրանսերենը, լատիներենը և այլն, այնինչ հայերենը, մանավանդ գերմաներենը ունեն երկու, երեք և ավելի բաղադրիչներով բառեր կազմելու հակում. հայ.՝ *լեզու, լեզվագիտություն, լեզվագիտական, քաղաք – քաղաքացի, քաղաքացիական, քաղաքացիականություն*, գերմ.՝ *Sprach* «լեզու», *Sprachwissenschaft* «լեզվագիտություն», *Sprachwissenschaftlich* «լեզվագիտական», *beugen* «թեքել, խոնարհել», *vorbeugen* «դեպի առաջ խոնարհել՝ թեքել. կանխել, խափանել», *Vorbeugung* «դեպի առաջ թեքում. կանխում, խափանում», *Vorbeugungsmaßnahme* «կանխիչ՝ նախազգուշացման միջոցառում» և այլն:

Բառաբարդման յուրօրինակ հնարք է, այսպես կոչված, հապավումը, որն ի տարբերություն համառոտագրության, ոչ թե ենթադրում է պարզ կամ բաղադրյալ բառի ինչ-ինչ մասի կրճատում (միայն բաղաձայնով ավարտելով և միջակետ դնելով), այլ առանց կետադրական նշանի ի մի բերել բառերը կամ միայն սկզբնատառերով, կամ սկզբնավանկերով, կամ էլ մասամբ մեկով և մասամբ մյուսով, ընդ որում ըստ ուղղագրական ընդհանուր կանոնի սկզբնատառերով

ստացվածները գրել գլխատառերով (ՀՕԿ = Հայ օգնության կոմիտե, ԿԳՆ = Կրթության և գիտության նախարարություն. մեկ-երկու բացառությամբ՝ բոկ = բարձրագույն որակավորման կոմիտե), վանկերով, այլև վանկերով և բառով ստացվածները՝ միշտ փոքրատառերով (ուսմասվար = ուսումնական մասի վարիչ, ուսխորհուրդ = ուսանողական խորհուրդ):

Կրկնությունը լեզուներում ունի համեմատաբար լայն գործածություն, այն առավել բնորոշ է ոչ հնդեվրոպական՝ թյուրքական և մոնղոլական լեզուներին: Հայերենի, ռուսերենի, հին լեզուներից լատիներենի հնարքներն այս ոլորտում պակաս չեն՝ սկսած բառերի ուղիղ ձևերի կրկնությունից մինչև այս կամ այն բաղադրիչի կրճատ, պակաս մասերով գործածությունը:

Հայերենում կրկնությունը ենթադրում է մեկից ավելի բառերի կամ բառարմատների (կրկնյալի և կրկնվողի) միատեղում բառային մեկ շեշտի տակ, որի արդյունքում բաղադրիչներից մեկը կամ մյուսը կրում է հնչյունական տարբեր փոփոխություններ՝ կորուստ, վերածում մեկ այլ հնչյունի, հնչյունի փափկացում, հավելում և այլն. հմմտ. *գրգիռ* (< *գիռ-գիռ*), *բարբառել* (< *բառ-բառ-ել*), *չափչփել* (< *չափ-չափ-ել*), *ծիծաղ* (< *ծիղ-ծաղ*) և այլն:

Կրկնությունը կարող է լինել ամբողջական կամ մասնակի՝ *նորանոր*, *մեջընդմեջ*, *բարձրաբերձ*, արմատի ձայնավորի տարբեր կարգի փոփոխությամբ՝ *մանր-մունր*, *շուն-մուն*, *ծակ-ծուկ*, *ծուռումուռ*, կրկնյալ և կրկնվող բաղադրիչների այնպիսի փոփոխությամբ, որ կրկնյալը հնչյունապես մոտ է կրկնվողին, բայց ոչ նույնը՝ *կաս-կար-միր*, *սեփ-սեն*, *ճեփ-ճերմակ*, *շիփ-շիպակ*, *լափ-լավ* (խակց.), *ծիպ-լիլոր* (խակց.) և այլն:

Ներքին թեքումը, իբրև քերականական հնարք, բազմազան է, որի հիման վրա նույնիսկ փորձեր են եղել դասակարգելու լեզուներն առանձին խմբերի մեջ: Այն լայն տարածում ունի հնդեվրոպական լեզուներում, ոչ միայն իրենց նախնական վիճակով, այլև անցած հետագա ցեղակից լեզուներին: Վերջիններիս մեջ, օրինակ, սովորական է բառի ձայնավոր տարրի երեք աստիճանի փոփոխությունը՝ *օ* (կամ *զրո*) / *e* / *o*. հմմտ. ռուս. *a/e/o* (*братъ, бегъ, цѣло*)(տես նաև վերը), հայ.

է/ի (- գէր, գիր-եւ), ա/ե. ծայր- ծեր, ա/ու/ո- աղաղակ, ուլուլալ, ողո-
քեւ՝ և այլն:

Մասնիկավորում, իբրև քերականական հնարք, առավել բնորոշ է անջատական լեզուներին, որ հանդես է գալիս տարբեր կողմերով: Մասնիկները կարող են միանալ հիմնական բաղադրիչին վերջինս երեք դիրքում՝ սկզբում, վերջում և միջին մասում: Սկզբում կամ վերջում դրվելու հնարքը տարածված է շատ լեզուներում՝ *ան-հույս, դժ-կամ, հուս-ալ, կամ-ովի, լիովին* և այլն, իսկ միջին մասում դրվելու հնարքը ոչ բոլոր լեզուներին է բնորոշ. հայերենում ունենք նման մասնիկավորման հազվադեպ օրինակներ՝ բառի սաստկացման երանգ հաղորդող. *ճկ-ո-ել / ճկ-ուր-ալ, կոխ-ել / կոխ-ուր-տել, ծակ-ել / ծակ-ուր-ել* և այլն: Մասնիկավորումը լինում է անմիջաբար կամ միջանկյալ տարրով, օրինակ՝ հոդակապով. հմմտ.՝ *մակնիշ // մակարույծ, գեր-ծանր // գերակա* և այլն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69, 89:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 263-275:

Широков О.С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

Թեմա 3. Անվան քերականական կարգեր. սեռ, թիվ, հոլով և առկայացում. աստիճանակազմություն

Հիմնահարցեր: *Քերականական կարգերի բնորոշումը: Սեռի, թվի, հոլովի և առկայացման կարգերի կազմությունը և դրսևորումը: Ածականի համեմատության աստիճանների կազմությունը (աստիճանակազմությունը):*

1. Մովորաբար քերականություն ասելով հասկանում ենք քերականական իմաստ կրող հնչյունախմբերի (բառերի) խոսքի մեջ մի կողմից՝ բառական խումբ կազմելը, իսկ մյուս կողմից՝ այդ խմբերի այս կամ այն ձև ստանալը: Ուստի ըստ քերականական արտահայտություն (քերականական ձև) ստանալու հատկանիշի տարբերում են ամենից առաջ երկու տեսակ քերականական կարգեր՝ անվանական և բայական. անվանական քերականական կարգեր են՝ *թիվը, սեռը, հոլովը, դասը, առկայացումը* և այլն¹, իսկ բայական քերականական կարգեր են՝ *սեռը, եղանակը, ժամանակը, կերպը, դեմքը, թիվը* և այլն:

Ստորև անդրադառնում ենք անվան քերականական կարգերին (բայական քերականական կարգերին՝ իրենց տեղում): Անվան քերականական կարգերից այստեղ ուշադրության առարկա են *թիվը, սեռը, հոլովը* և *առկայացումը*:

Գոյականի դեպքում դրանք, կարելի է ասել, էական կարգեր են, իսկ մյուս անունների՝ ածականի և թվականի համար՝ համարանական կամ գոյականի նմանությամբ գործածվող կարգեր: Դերանվան դեպքում մոտեցումը փոխվում է, քանի որ դերանունը այնպիսի խոսքի մաս է, որ ինչպես նշել ենք, փոխարինում է մյուս խոսքի մասի պատկանող միավորներին, կարող է հոլովվել, ըստ որում, օրինակ, հայերենում, իրեն բնորոշ հոլովմամբ, տարբերվել թվով, սեռով և այլն: Այնուհետև, ածականը, ի տարբերություն մյուս անուն խոսքի մասերի, ունի նաև ձևաբանական մի յուրահատկություն, որը թերևս իր ամենից բնութագրական կողմն է, այն է՝ *աստիճանակազմությունը* (համեմատության աստիճանների կազմումը. սա ավելի շուտ նկարագրական անվանում է, քան բառ-տերմին):

¹ Աֆրիկյան շատ լեզուներ ունեն դասի քերականական կարգը, որին այստեղ չենք անդրադառնում՝ առանձնապես հնդեվրոպական լեզուներին, ուստի և հայերենին բնորոշ չլինելու պատճառով: Տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 487-489:

2. Առարկա և երևույթ ցույց տվող բառերն ունենում են նաև քերականական *սեռ*: Այն բնորոշ է ոչ միայն հնդեվրոպական և սեմական, այլև ուրիշ տիպի լեզուների, որովհետև մարդու նախնական պատկերացումներում շրջապատող բնությունը դիտվել է իբրև շնչավոր՝ շարժուն, աճուն և այլ կարգի առարկաներ, և հակառակը: Հին մտածողությամբ երկնային մոլորակներն ու հողմերը, տեղումները և այլն, երկրային շատ երևույթներ՝ ծառերը, ջրերը և այլն, շնչավոր առարկաներ և երևույթներ են: Եվ որպես այդպիսին նրանց մի մասն ընկալվել է իբրև պտղակալող, աճող և զարգացող, մյուս մասը՝ ոչ, որից էլ հետագայում առաջ է գալիս արական և իգական հակադրությունը: Այդպիսի տարբերակումից դուրս մնացածը, նույնպես հետագայում, կոչվել է չեզոք՝ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը:

Բնական երևույթների վրա հիմնված այս պատկերացումները պատմական առաջընթացի մեջ, բնականաբար, ենթարկվում են անընդհատ վերացարկման, և արդյունքը լինում է այն, որ բառերը խմբավորվում են ոչ այնքան արտալեզվական, որքան զուտ լեզվական հիմունքով: Քերականական կարգն այս դեպքում առաջանում է իմացաբանական (տրամաբանական) կարգի հիման վրա:

Հնդեվրոպական լեզուների մի մասն այդ երևույթը զարգացրել է այլ ուղղությամբ, քան մյուսները, մի մասն էլ առհասարակ կորցրել է առարկաներ և երևույթներ ցույց տվող բառերի համար ըստ սեռի տարբերակումը:

Հայերենը անվանական քերականական համակարգում չունի սեռ, որի փոխարեն լայնորեն գործածում է ոչ միայն շնչավորի և անշունչի, այլև անձի և իրի առումները, որ ունեն քերականական տարբերակման գրեթե նույն նշանակությունը, ինչ այլ լեզուներում, սակայն որոշակի յուրօրինակությամբ: Հայերենում «Երեխան սիրում է *շուն*» և «Երեխան սիրում է *շանը*» նախադասություններում *շուն* բառը մի դեպքում դրված է ուղղական հոլովով, որովհետև դիտված է իրի առումով, իսկ մյուս դեպքում՝ տրական հոլովով, որովհետև դիտված է անձի առումով: Մյուս կողմից՝ կարելի է նկատել, որ առաջին նախադասության մեջ այն ընկալվում է նաև իբրև անշունչ, իսկ մյուսում՝ շնչավոր առարկա:

Այսպես, ռուսերենում գոյություն ունի գոյականի սեռ, որի հիման վրա քերականական ձևավորումը միանգամայն տարբեր է հայերենից: Հայերենը և ռուսերենը շնչավորի և անշունչի հոլովառության դեպքում ևս ունեն գգալի տարբերություններ: «Ռուսերենում տարբերակումը ըստ շնչավոր կամ անշունչ լինելու հատկանիշի թեև նման է հայերենի անձի և իրի առումներին, բայց նույնը չէ: Ռուսերենում տարբերակումը պայմանավորված է ոչ թե խոսողի վերաբերմունքով, ոչ թե նրանով, թե ինչպես է դիտվում տվյալ գոյականը խոսողի կողմից, այլ հենց գոյականի իրական հատկանիշով: Եթե գոյականը շնչավոր է, ապա նրա հայցականը նման է սեռականին, անկախ խոսողի վերաբերմունքից, ցանկությունից, դիտումից և այլն. նույնպես և՛ եթե գոյականը անշունչ առարկա է, նրա հայցականը (արական սեռում) նման է ուղղականին: Մինչդեռ հայերենում անձի և իրի առումը պայմանավորված է ոչ միայն գոյականի իրական հատկանիշով (իրականում անձ է, թե՛ իր է), այլև, շատ հաճախ, խոսողի վերաբերմունքով, այն բանով, թե խոսողը տվյալ գոյականն իբրև անձ է դիտում, թե՛ իբրև իր: Այս պատճառով էլ հայերենում նույն բառը (օրինակ՝ մարդ) կարող է ուղիղ խնդիր դառնալ մերթ տրական, մերթ ուղղական հոլովով, մինչդեռ ռուսերենում յուրաքանչյուր բառ՝ շնչավոր կամ անշունչ լինելուն համապատասխան, կարող է հայցականը ձևավորել կամ միայն ուղղականի ձևով, կամ միայն սեռականի ձևով. отец «հայր», брат «եղբայր» գոյականները շնչավոր են, և նրանց հայցականը հոլովը կարող է լինել միայն отца, брата, իսկ стол «սեղան», дом «տուն» գոյականները անշունչ են, և նրանց հայցականը կարող է լինել միայն , стол, дом»¹:

Այնուհետև, պետք է նաև նկատի ունենալ, որ կան լեզուներ, որոնք ի տարբերություն, ասենք, հայերենի, ունեն քերականական սեռ նշանակող մասնիկներ. օր.՝ ռուսերենում՝ բաղաձայն հնչյուն (արական), -а, -о (мальчик, стена, дело և այլն), ֆրանսերենում, որ ունի երկու սեռ՝ արական և իգական, ø (գրո) /-е հակադրությամբ (ami «բարեկամ» - amie «բարեկամուհի»), étudiant «ուսանող» - étudiante «ուսա-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 484:

նողուիի», instruit // instruite «ուսում առած՝ ուսյալ» և այլն): Հայերենը, նաև անգլերենը սեռի քերականական իմաստ կարող են արտահայտել նկարագրական ձևով. հայ.՝ *զինվոր – կին՝ աղջիկ զինվոր, պահակ – կին պահակ* և այլն. հայերենին բնորոշ է նաև մասնիկավորմամբ գործածությունը՝ *-ուիի* (< **ուրիի*), *-որդ* (< **-որդ*) (?). *աշակերտ – աշակերտուիի, օրհորդ* (?) և այլն:

3. *Թիվը* անուն խոսքի մաս հանդիսացող բառերի այնպիսի քերականական կարգ է, որ ունի անմիջական առարկայական վերաբերություն՝ վերջինիս բաշխական առումով: Իրականության մեջ առարկաները կամ երևույթները, անհատի ընկալմամբ, լինում են մեկ կամ մեկից ավելի, որն ընդհանուր է գրեթե բոլոր լեզուներով հաղորդակցվողների մտածողության մեջ: Հին աշխարհի մտածողությանը բնորոշ է եղել ոչ միայն երկյակ, այլև եռյակ և ավելի բաշխումով թվայնացում: Ըստ այդմ եզակին ցույց է տալիս մեկ առարկա, երկակին՝ երկու առարկա, իսկ հոգնակին՝ երկուսից ավելի առարկաներ: Երկակի թիվ ունի սեմական լեզուներից, օրինակ, արաբերենը:

Հնդեվրոպական լեզուների համար ենթադրվում է նաև, այսպես կոչված, երկակի թվի (numerus dualis) գաղափարը, ըստ որում առարկաները և երևույթները մտածվում էին մեկ, երկու և երկուսից ավելի բաշխումով: Այդ տեսակ թվի մասնակի հետքեր են նկատվում «ժամանգ» լեզուներում՝ հին հնդկերենում, հին հունարենում և այլն: Գրաբարում, օրինակ, դա նկատելի է առարկայի կամ երևույթի զույգ մասերի անվանումներում՝ իբրև մեկ ամբողջություն՝ թիվ. հմմտ. *ակն – աչք, ակունք, ունկն – ականջ, ընկունք* և այլն: Իսկ ժամանակակից լեզուների մեծ մասն ունի երկու՝ եզակի և հոգնակի թիվ:

Հայերենում եզակի թիվն արտահայտվում է հոգնակի թվի հակադրությամբ՝ իբրև *օ* (*գրո*)/-*եր* կամ *-ներ* հակադրություն. հմմտ. *տուն – տներ, այգի – այգիներ, այգեստան – այգեստաններ* (բայց նաև՝ *մուկ – մկներ, մարդ – մարդիկ* և այլն): Այսպիսին է հարցի դրվածքը ոչ միայն գրական հայերենում, այլև մի շարք բարբառներում: Այնինչ, ինչպես գիտենք, գրաբարում այդ երևույթն արտահայտվում էր *օ* (*գրո*)/-*ք* (կամ *-g, -u*) հակադրությամբ. *հմմտ. տուն – տունք, տանց,*

գրունս, այգի – այգիք, այգեսց, զայգիս և այլն: Ա. Այտընյանը, այլև ուրիշ ուսումնասիրողներ դեռ իրենց ժամանակին նկատել էին, որ գրաբարի «ընդերքում» անգամ գործածվել են հոգնակերտ-հավաքականակերտ մասնիկներ՝ *-նի, -եսար, -ուի, -որի, -սարան, -որեսայ(ք)*, օր.՝ *նասակնի* «նավակներ (իբրև մեկ ամբողջություն)», *բանեսար* «խոսքեր (իբրև մեկ ամբողջություն)», *ձեռուի* «երկու ձեռքը (միասին)», *մանկ-որի* «մանուկներ (իբրև մեկ խումբ)», *այգեսարան* «այգիներ (և հարակից տեղեր)», *վանորեսայ(ք)* «վանքեր (հարակից կառույցներով)» և այլն:

Ընդհանուր առմամբ թվի տարբերակման գաղափարը կապվում է հաշվարկման համակարգի հետ, որն սկզբնապես պիտի ունեցած լինի շատ առարկայական դրսևորում, իսկ հետագայում տևական զարգացման ընթացքում այն վերածվել է քերականական կարգի. թիվը փոխարինում է առարկային (առարկաներին)՝ իբրև ամենաբարձր վերացարկման դրսևորում. օր.՝ *(տուն) - մեկ, (ծառ, ծաղիկ, տերև. Ճյուղ, բուն) - հինգ, (հայր, մայր, քույր, եղբայր) - չորս* և այլն:

Հաշվարկման առումով հաշվելի առարկաները դիտվելիս են եղել իբրև մեկ *ամբողջություն*, որից հետո է միայն առաջ եկել ավելի վերացարկված գաղափարը՝ մտցվել քանակային բաշխվածություն: Սրա ապացույց կարելի է համարել, թերևս, այն, որ ժամանակակից լեզուներում դեռևս կան հաշվարկման այնպիսի ձևեր, երբ հաշվելի առարկաները դիտվում են իբրև մեկ ամբողջություն: Հայերենում, օրինակ, ունենք նման երևույթ՝ կազմված *-ություն* ածանցով. *մրցություն, ուսանողություն, աշխատասիրություն, ուսուցչություն* և այլն: Այս դեպքում ունենք ոչ թե եզակի (մեկ) կամ հոգնակի (մեկից ավելի) թվային բաշխում, այլ նույն կարգի, նույնպիսի առարկաների սահմանելի ամբողջություն:

4. Հոլովը առարկա ցույց տվող բառերի քերականական փոփոխության ամենացայտուն ցուցիչն է, այն խոնարհման հետ միասին կազմում է առանցքային, հիմնական խոսքի մասերի՝ գոյականի և բայի ձևաբանական փոփոխության էությունը: Հին աշխարհի քերականություններում, օրինակ՝ հունարենի մեջ այդ երկուսը միասին կոչվում


էր թեքում (հուն. *πτονα*), իսկ հետագայում դրանք տարբերակվում են, թեև շարունակում են պահել ձևաբանական փոփոխության ընդհանուր կերպը (թեքման գիծը):

Ըստ թեքման բնույթի հոլովումը կատարվում է կան ներքին, կան արտաքին դրությամբ, այսինքն՝ հոլովիչ տարբերը (հիմնականում ձայնավորներ, նաև ձայնդարձ) ավելանում են հիմքին վերջից կամ հիմքի մեջ (հմմտ. *սիրտ* – *սրտի*, *տուն* – *տան* և այլն): Իսկ սա նշանակում է, որ լեզուներում հոլովումը տեղի է ունենում երեք ձևով՝ վերջավորություններով, ներքին թեքումով և օժանդակ բառերով. հմմտ. հայերեն՝ *սիրտ* – *սրտի*, *տուն* *տան*, գերմաներեն՝ *die Frau* – *der Frau* և այլն:

Եթե բայի խոնարհումը ցույց է տալիս առարկաների և երևույթների առնչություն ժամանակային բաշխման մեջ, ապա գոյականի հոլովումը ցույց է տալիս դրանց առնչությունը տարածության մեջ: Ըստ այսմ՝ կարող ենք ասել, որ հոլովումը և խոնարհումը, լայն իմաստով՝ առարկա, երևույթ և շարժում ցույց տվող միավորների (իրույթների) թեքումը տեղի է ունենում ոչ այլ կերպ, քան ժամանակի և տարածության կարգային (կատեգորիական) բաշխվածությամբ:

Տարածական հարաբերությամբ առարկա և երևույթ ցույց տվող բառերը բաշխվում են իրականության ձևաչափով, ըստ հեռացման (սերում, անջատում), մոտեցման (հանգում, միացում), շրջման (ներանում). այսպիսին է հոլովման, այսպես կոչված, ձևավոր («թեք») հոլովների հարաբերակցությունը, որը հակադիր է չձևավորված («ուղիղ») հոլովին. ուղղական /ոչ ուղղական հոլով հարաբերությունը բնորոշ է գրեթե բոլոր այն լեզուներին, որոնք ունեն ոչ մասնիկավորմամբ ձևաբանական համակարգ գոյականների և գոյականաբար հանդես եկող այլ բառերի համար (տե՛ս գծապատկեր 9):

Հեռացում (- >)
[սեռական հ., բացառական հ.]



Շրջում (↻)
[գործիական հ.,
հայցական հ (?)]

Մոտեցում (- <)
[տրական հ., ներգոյական հ.]

Այն լեզուները, որոնք ունեն հոլովման համակարգ, այսինքն՝ տարածական չափման մեջ առարկաներ և երևույթներ ցույց տվող կամ որպես այդպիսին հանդես եկող բառերի շարահյուսական հարաբերությունները արտահայտվում են ներքին թեքումով կամ վերջավորություններով, կոչվում են ձևաբանորեն համադրական լեզուներ (օր.՝ հունարենը, լատիներենը, գերմաներենը, ռուսերենը, հայերենը և այլն), իսկ այն լեզուները, որոնցում այդ նույն կարգի հարաբերություններն արտահայտվում են հոլովվող բառի և օժանդակ բառի հարաբերակցությամբ, կոչվում են ձևաբանորեն վերլուծական լեզուներ (օր.՝ անգլերենը, պարսկերենը և այլն): Համադրական լեզուները կարող են համատեղել ներքին թեքումը և կցականությունը, իսկ վերլուծական լեզուներն այլ կերպ կոչվում են նաև անջատական լեզուներ:

5. *Առկայացումը* հայ լեզվաբանության մեջ ներմուծել է Գ. Բ. Ջահուկյանը: Ըստ նրա՝ այդ կարգը ներառում է (ավանդական տերմիններով) անձի և իրի (շնչավորի և անշունչի) առումները, այլև դիմորոշությունը և ստացականությունը (վերջինը կոչվում է ցուցաստացականություն):

Բացի այն, որ երևույթը մի կողմից՝ քննվում է հեղինակի, այսպես կոչված, «հարաբերակցային տեսության» դիտանկյունից, որի դեպքում առավելապես հաշվի են առնվում իրողության արտահայտությո-

յան պլանի (ձևի)՝ *օ (գրո)/ը, ն*, այլև *օ (գրո)/ս, դ* հակադրության, և բովանդակության պլանի (ինաստի)՝ դիմորոշություն, ցուցաստացականություն բաշխման դրսևորումները և դրանց փոխհարաբերությունը, մյուս կողմից՝ դրանք դիտվում են ընդհանուր՝ իբրև «միևնույն անփոփոխակի դիրքային տարբերակների փոխհարաբերություն»։ Ընդ որում դրանց զարգացման պատմական ընթացքի մեջ տեսնել վերլուծականության ուժեղացում (*մի* մասնիկի գործառում իբրև անորոշ հոդ), այլև ժամանակակից հայերենին վերագրել հոդի գործածության մեջ՝ ի համեմատություն գրաբարի, ավելի ձևականացում¹։

6. Այստեղ անդրադառնում ենք ածականի համեմատության աստիճանների կազմությանը (աստիճանակազմությանը)՝ իբրև հատկանիշի հասկացություն ցույց տվող անուն խոսքիմասային միավորի մի առանձնահատկության։

Ածականը, ինչպես վերը նշել ենք, մյուս խոսքի մասերից տարբերվում է համեմատության աստիճաններ կազմելու հնարավորությամբ։ Ընդունված է ասել, որ համեմատության աստիճանների կազմումը ևս քերականական կարգ է, որ մտնում է ձևաբանության մեջ, որովհետև առարկայի որակական կողմի աստիճանական ավելացումը կամ նվազեցումը, որ իրականի համեմատությամբ երկու աստիճանով է բարձրանում կամ իջնում, իրավամբ, բառահարաբերական (վերաբերական) երևույթ է, ոչ՝ բառակազմական, թեև կան տեսակետներ, որ տարբեր աստիճանների ձևերը տարբեր բառեր (բառային միավորներ) են համարում։

Համեմատության աստիճանների կազմումը հատուկ է մի շարք լեզուների, ընդ որում բավականին լայն դրսևորում ունի հնդեվրոպական լեզուներում։ Համեմատելի տարբերության ընկալումն ունի մտածողության նախապատմական ակունքներ. լեզվում այն արտահայտվում է հոգեմտավոր փորձառության հիման վրա։

Այն ունի կարգային երեք բաշխում՝ *դրական* (լատ. *positivus* «պայմանական» < *ponō* «դնել, գցել, տնկել»), *gradus positivus* «դրական աստիճան»), *համեմատական* (բաղդատական. լատ. *comparativus* < *com*

¹ Հմմտ. Գ. Բ. *Ջահուկյան*, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 184-188։

(< con) «համ-» + parativus «համեմատական համեմատելի» < comparō «միացնել, հակադրել, կապակցել». gradus comparativus «համեմատական աստիճան») և գերադասական (լատ. superlativus «գերադասական» < super «վեր-, գեր-» + lativus (< ferō «բերել, դնել») «բերված, դրված». gradus superlativus «գերադասական աստիճան»): Համեմատականն արտահայտվում է առավելական կամ նվազական (պակաս) ուղղությամբ. լեզուներում սովորականը և համակարգվածը առավելական համեմատությունն է, որովհետև նախ՝ այն ունի հոգեբանական հիմքեր, այնուհետև՝ նախորդով պայմանավորված, նվազականի դեպքում գերադասական աստիճանը կազմելը որոշակի դժվարություն է հարուցում, մանավանդ հայերենում. հմմտ. լավ - ավելի լավ- ամենալավ (լավագույն) // լավ - պակաս լավ - (առավել, ամենա-) պակաս լավ:

Համեմատականն արտահայտում է նաև մեկ այլ հարաբերություն, այն է՝ տվյալ առարկայի համեմատելի հատկանիշը հավասար է մեկ այլ առարկայի համեմատվող հատկանիշի հետ. հատկանիշները գտնվում են հավասարական (լատ. aequālis «հավասար նույնչափ») հարաբերության մեջ, երևույթը կոչվում է հավասարական համեմատական (լատ. gradus aequālis) աստիճան, օր.՝ «Այս ուսանողի լուծած վարժությունը նույնքան ճիշտ է, որքան մյուս ուսանողի լուծածը, որովհետև այդ վարժությունը հավասարապես ունի երկու լուծում»: Եթե այս ևս հաշվի ենք առնում, ապա հայերենում, օրինակ, ստացվում է համեմատական աստիճանի երեք տեսակ՝ առավելական, հավասարական և նվազական (ավելի գեղեցիկ, նույնքան գեղեցիկ, պակաս գեղեցիկ):

Հնդեվրոպական լեզուներից, օրինակ, լատիներենում, որ քերականական այդ իրողությամբ հիմք է հանդիսանում եվրոպական նոր լեզուների հիմնական մասի համար, ունի ածականի համեմատության երեք աստիճան (gradus), դրական (positivus)՝ albus (alba, album) «սպիտակ», gravis (grave) «ծանր, դաժան», pulcher (pulchra, pulchrum) «գեղեցիկ» և այլն, բաղդատական (կամ համեմատական) (comparativus)՝ albior (albius) «ավելի սպիտակ», gravior (gravius) «ավելի ծանր, ավելի դաժան», pulchrior (pulchrius) «ավելի գեղեցիկ» և այլն, գերադասական

(superlativus)՝ albissimus (a, um) «ամենաապիտակ», gravissimus (a, um) «ամենածանր, ամենադժան», pulcherrimus (a, um) «ամենագեղեցիկ» և այլն: Այս համակարգը, ընդհանուր գծերով, անցել է, օրինակ, գերմաներենին, ֆրանսերենին և այլն:

Եթե հայերենում համեմատական աստիճանը կազմվում է հիմնականում *ավելի (պակաս)* բառերով (*ավելի գեղեցիկ // պակաս գեղեցիկ*), ապա ռուսերենում այն տեղի է ունենում ոչ միայն հայերենի պես՝ առանձին բառերով (*более // менее красивы*), այլ նաև հատուկ մասնիկով՝ *-ее* (*красивыи - красивее*): Հայերենում ևս գործում է շարահյուսական միջոցի երևույթը, այսինքն՝ համեմատելի առարկաները դրվում են *ավելի ... քան, պակաս ... քան* հարաբերության մեջ. «Կատուն *ավելի* ուժեղ է, *քան* մուկը». «Կատուն *պակաս* ուժեղ է, *քան* շունը»: Հայերենում կա համեմատության աստիճանի կազմության մի եղանակ ևս, այն է՝ համեմատելի եզրը դիտել «*ոչ պակաս*» իմաստով. «Ձին պակաս ուժեղ չէ, քան ջորին»: «Բազեն պակաս գեղեցիկ չէ, քան արծիվը», «Մայրիկի գնած ապրանքը ոչ պակաս պիտանի է, քան հայրիկի գնածը» և այլն:

Տարբերում են գերադրական աստիճանի երկու տեսակ՝ բացարձակ և հարաբերական. առաջինի դեպքում առարկայի հատկանիշի գերազանցությունը չի դրվում համեմատության մեջ մեկ այլ առարկայի նույնպիսի հատկանիշի հետ. օր՝ *խիստ գեղեցիկ, հույժ գաղպնի, շար կարևոր, անխոս ընդունելի, չափազանց համարձակ* և այլն: Իսկ հարաբերական գերադրականը ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանիշի առավելությունը նրա հետ համեմատվող մյուս առարկաների նման հականիշի նկատմամբ. օր.՝ «Այս գրիչը եղածների մեջ *ամենալավ* գրիչն է» «Տիգրանը իրենց դասարանի աշակերտներից *ամենալավ* սովորողն է» և այլն:

Գերադրական աստիճանի կազմությունը հայերենում տեղի է ունենում կան *ամենա-* նախամասնիկով, կան *-գույն* վերջնամասնիկով (*գեղեցիկ – ամենագեղեցիկ // գեղեցկագույն*), ընդ որում ոչ մի կերպ չի խրախուսվում այդ երկուսի միասին գործածությունը:

Հայոց լեզվի փաստերը ցույց են տալիս, որ համեմատության աստիճանների կազմումը կրել է որոշակի փոփոխություններ: Հին հայե-

րենում *-գոյն* (< *-գոյն*) մասնիկով կազմվում էր ածականի ոչ թե գերադրական, այլ համեմատական աստիճանը, ըստ այդմ՝ *գեղեցկագոյն* նշանակում էր «ավելի գեղեցիկ», ոչ թե «ամենագեղեցիկ», իսկ գերադրական աստիճանը կազմվում էր շարահյուսորեն, այսինքն՝ գործածվում էր *յոյժ* «խիստ», *կարի* «խիստ, չափազանց», *սասարիկ* «շատ, առավել» և այլ բառերից մեկնումեկը, դրվում համեմատվող առարկան նշանակող բառի վրա. *յոյժ գեղեցիկ* «ամենագեղեցիկ, գեղեցկագոյն»:

Նկատենք նաև, որ հետագայում, լատինաբան հեղինակները հայերենի հարցում դիմեցին, կարելի է ասել, ծայրահեղության, փորձեցին «կարգավորում» մտցնել՝ համեմատական աստիճանը կազմելով *-գոյն* մասնիկով, գերադրականը՝ *-գունեն* (< *գոյն-են*) մասնիկով. օր.՝ *լաւ – լաւագոյն* «ավելի լավ» - *լաւագունեն* «ամենալավ», *գեղեցիկ – գեղեցկագոյն* «ավելի գեղեցիկ», *գեղեցկագունեն* «ամենագեղեցիկ» և այլն, այսինքն՝ դասական լատիներենի նման¹:

Լեզուներում ածականի համեմատության աստիճանների կազմությունը, որը լիովին պայմանավորված է իրականության առարկաների և երևույթների հատկանշան տարբերություններով, կատարվում է քերականական հատուկ միջոցներով, որն այլ բան չէ, քան ամենից առաջ արտալեզվական իրականության պատկերացման և լեզվական արտահայտության տարբերությունը:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 131-196:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 116-121:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 158-161:

Широков О. С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

¹ Տե՛ս Վ. Գ. *Համարձակում*, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010, էջ 278-280:

Թեմա 4. Բայի քերականական կարգեր. սեռ, եղանակ, ժամանակ, կերպ, դեմք և թիվ

Հիմնահարցեր: *Քերականական կարգերի բնորոշումը: Սեռի, եղանակի և ժամանակի, կերպի կարգերի կազմությունը և դրսևորումը: Դեմքի և թվի կարգերի կազմությունը և դրսևորումը:*

1. Լեզուների նորմատիվ ուսուցումից գիտենք, որ բայը մյուս խոսքի մասերից տարբերվում է առաջին հերթին քերականական կարգերի առատությամբ, այնուհետև դրանց արտահայտման ձևերի բազմազանությամբ: Բայի քերականական կարգեր են՝ *սեռը, եղանակը, ժամանակը* և *կերպը*, այլև *դեմքը* և *թիվը*: Սակայն սրանցով չի ավարտվում բայի քերականական դրսևորման հնարավորությունը. այն ունի նաև խոնարհման տիպերի (լծորդությունների) տարբերական, հիմքի կազմության, անվանողական-վիճակային դրսևորման բազմազան հնարավորություններ:

2. Բայի *սեռը* (լատ. genus «սեռ») ցույց է տալիս գործողության ուղղվածություն՝ երկու ձևով, մի դեպքում ենթակայի և գործողության՝ *Աշակերպը գրում է*, մեկ այլ դեպքում՝ գործողության և ուղիղ խնդրի՝ *Գրում է շարադրություն*, հարաբերությամբ: Եթե ներգործական սեռի բայը դրված է ներգործաձև, ապա այդ դեպքում ուղղվածությունը, այսպես կոչված, աջընթաց է՝ ենթակայի կատարած գործողությունն անցնում է ուղիղ խնդրին՝ *Երեխան գրում է շարադրություն*, իսկ եթե ներգործական սեռի բայը արտահատվում է կրավորաձև, ապա այդ դեպքում էլ ուղղվածությունը, այսպես կոչված, ձախընթաց (կամ հետընթաց) է, այսինքն՝ ուղիղ խնդիրը վերածվում է ենթակայի, իսկ ենթական՝ անուղղակի խնդրի (միջոցի, վերաբերության և այլն)՝ *Շարադրությունը գրվում է աշակերպի կողմից (ձեռքով, միջոցով)* և այլն:

Սեռի նման հակադրությունը այլ բան չէ, քան ներգործական և կրավորական հակադրություն, որպիսին լինում է լեզուների բայերի մեծ մասի դեպքում: Դրանցից բացի կան նաև բայեր, որոնք չունեն նման հակադրություն, «անտարբեր» են սեռի նկատմամբ. դրանք չեն

գոք («ոչ մեկը») բայերն են. օր.¹ *Աշակերտը գնում է: Երեխան խաղում է* և այլն:


Հայերենում պարզելու համար, թե բայը ինչ սեռի է, փորձում են նրա մեջ տեղադրել կրավորական սեռի մասնիկ՝ *-վ-*, եթե դա հնարավոր է, ապա այն ներգործական սեռի է՝ *գրել – գրվել, բերել – բերվել* և այլն, իսկ եթե հնարավոր չէ, ուրեմն չեզոք սեռի է՝ *խաղալ, գնալ* և այլն: Սա չի վերաբերում այն բայերին, որոնցում այսպես թե այնպես հնարավոր է այդ մասնիկի ներառումը՝ *սսփրվել* «ինքն իրեն սսփրել», *լվացվել* «ինքն իրեն լվանալ», *մեկնվել* «պառկել» և այլն: Ընդունված է նման բայերն անվանել անդրադարձ բայեր, որովհետև ենթակա-գործողություն և գործողություն-խնդիր հարաբերությունը, կարելի է ասել, ինքնակա բնույթ ունի, ձևաբանորեն այն արտահայտվում է *օ (գրո) / -վ-* մասնիկների հակադրությամբ:

Նման հարաբերակցությունը վերաբերում է միայն սովորական բայերին, իսկ պատճառական բայերի դեպքում հարաբերակցությունը բոլորովին այլ է: Վերջիններս հայերենում սովորական բայերից ձևաբանորեն տարբերվում են *օ (գրո) / -ցն-* մասնիկների հակադրությամբ: Առանձնացվում է անանցողական բայերի մեջ քննարկվող կրավորականի մի քանի տեսակ. *բուն կրավորական (գրել – գրվել), անդրադարձ (լվացվել, Երեխաներն առավոտյան լվացվում են, սրբվում և սանրվում), փոխադարձ (գրկախառնվել*. Երեխաներն ուրախությունից *գրկախառնվեցին), չեզոք (բացվել. Լույսը բացվում է)՝*

Խոսողության գործընթացում գործողության և խնդրի հարաբերությունը տեղի է ունենում երկու ձևով՝ *անցողական* (ներգործական սեռ՝ ներգործաձև / կրավորաձև) և *անանցողական* (չեզոք): Անցողական /անանցողական հարաբերությունը ներկայիս (ժամանակակից) հնդեվրոպական լեզուների մեծ մասում չունի ձևաբանական դրսևորում, այն ունի միայն շարահյուսական արտահայտություն, ինչպես Է. Բ. Ադայանն է նշում, հնասիական լեզուներում, որոնցում ձևաբանության մեջ (խորնարհման ձևով) տարբերվում է այդ հարաբերությունը:

Հայերենում բայի սեռի կազմիչների կախվածությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ (տես գծապատկեր 10):

¹ Հմմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 378-379:



Այսպիսով, բայական սեռը գործողության կատարման էական հատկանիշ է, որ ժամանակակից լեզուներում ունի քերականական-կարգային (կատեգորիալ) ընդհանուր գծեր և առանձին դրսևորումներ (առանձնահատկություններ):

3. *Եղանակը* (լատ. modus «ձև, եղանակ») ցույց է տալիս գործողության հարաբերություն իրականության հետ՝ ըստ խոսողի հայեցողության: Քերականական այս կարգի էությունը խոսքի, ոչ լայն իմաստով, եղանակավորման միջոց լինելն է¹: Իսկ սովորական, նախնական սահմանումն այն է, որ եղանակը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ. այս դեպքում, ի դեպ, անտեսվել է գործողության և իրականության կապը, այնինչ այն անհրաժեշտ է նկատի ունենալ, որովհետև հաղորդակցման նպատակը իրականության արտացոլումն է՝ իբրև վերջինիս ճանաչման նախապայման:

Եղանակավորումը, իբրև առարկայական (օբյեկտիվ) իրականության լեզվական արտահայտության քերականական միջոց, լինում է երկու կարգի՝ *սահմանումային* (ուղիղ), այսինքն՝ այնպիսին, ինչպիսին որ իրականությունն է, և որի վերաբերյալ խոսողն արտահայա-

¹ Լայն իմաստով եղանակավորումը ներառում է նաև բառային, շարահյուսական և հնչերագային միջոցները. բառային միջոց են, օրինակ, եղանակավորող բառերը և այլն:

տում է համարժեք հայեցողություն, և *ոչ-սահմանումային* (անուղղակի), այսինքն՝ այնպիսին, ինչպիսին որ պիտի լինի (ցանկալի է, որ լինի) իրականությունը, և որի նկատմամբ խոսողն արտահայտում է անհամարժեք («յուրովի») հայեցողություն:

Սահմանումային եղանակավորման դեպքում, ինչպես կարելի է նկատել, իրականության նկատմամբ խոսողի հայեցողությունը առարկայական (օբյեկտիվ) է, իսկ ոչ սահմանումայինի դեպքում՝ ոչ առարկայական (սուբյեկտիվ), որովհետև այն մեկ բախվում է առկա, անփոփոխ իրականությանը, մեկ էլ՝ ցանկալի, սպասելի, փոփոխելի՝ վերափոխելի (ակնկալելի) իրականությանը: Ըստ այդմ՝ գործողության եղանակավորման հարցում խոսողի հայեցողությունը համարժեք է անփոփոխ/ փոփոխելի իրականությանը, մեկում՝ օբյեկտիվ, մյուսում՝ սուբյեկտիվ հիմքով:

Հայերեն «Լեզվաբանական բառարան»-ում, օրինակ, հիմնականում ճիշտ է սահմանվում եղանակը. «Քերականական կարգ. արտահայտում է գործողության (եղելության, վիճակի) հարաբերությունը իրականությանը՝ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքով կամ առանց դրա»¹:

Հնդեվրոպական նախալեզվում բայն ուներ եղանակ, իսկ ցեղակից լեզուները ոչ ամբողջությամբ են ժառանգել և ոչ էլ միատեսակ են պահել այդ իրողությունը: Հին լեզուներից լատիներենը, օրինակ, ուներ երեք եղանակ՝ սահմանական (*indicativus*), ստորադասական (*conjunctivus*) և հրամայական (*imperativus*). հին հայերենում՝ նույնը, սակայն, ի տարբերություն արտահայտության պլանի նույնության, բովանդակության պլանի որոշակի բազմազանությամբ, գործածության տարարժեքությամբ և այլն, որոնցով էլ պայմանավորված են այդ երկու լեզուների բնագրերում առկա ոճական ակնհայտ տարբերությունները:

Հայտնի է, որ հին լեզուների մեջ եղանակի բաշխման այն մոտեցումը կար, որ տարբերում էին *անորոշ եղանակը* (լատ. *infinitivus*), որովհետև այն ցույց էր տալիս բայի ժամանակ, սեռ և այլն,

¹ Հ. Զ. Պեպրոսյան, Ս. Ա. Գալսրյան, Թ. Ա. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 87:

ինչպես, օրինակ, հին հունարենում և լատիներենում, որտեղ այդ եղանակը դասվում էր մյուս եղանակների շարքը: Ըստ այդմ ստացվում է այնպես, որ եղանակները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ *անորոշ* և «*որոշյալ*» («*finitivus*»). ըստ այդմ ենթադրելի կլինեն, ասենք, անորոշ / սահմանական, ստորադասական, հրամայական հակադրություն:

Ժամանակակից հայերենի եղանակների իմաստային հիմնավորումը և ըստ ձևի դասակարգումը ժամանակին տվել է Մ. Արեղյանը՝ առանձնացնելով հետևյալ եղանակները՝ իրականության կամ սահմանական, ըղձական, կարելիության (հնարավորության) կամ ենթադրական, անհրաժեշտության կամ հարկադրական և հրամայական, որոնք հետագայում ավելի նեղացվեցին տերմինային ձևակերպման մեջ, և ներկայումս դրանք հինգն են՝ սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական (ենթադրական) և հարկադրական («անհրաժեշտական»):

Այնինչ, Է. Բ. Աղայանը, ընդհանուր տեսական մոտեցումով, լեզուներում առանձնացնում է ավելի եղանակներ, քան որ, օրինակ, նշվեց հայերենի համար: Նա իրարից առանձնացնում է պայմանականը և ենթադրականը, մեկը ցույց է տալիս ենթադրություն, մյուսը՝ «որոշ պայմանի առկայության դեպքում»՝ հնարավորություն, այլև ավելացվում է մեկը՝ հնարավորության (պոտենցիալ) եղանակ²:

Բոլոր դեպքերում նկատենք, որ արդի հայերենում, ի համեմատություն գրաբարի, քանակով ավելին է եղանակների թիվը, նշանակում է հաղորդակցական նոր պայմաններում, բնականաբար, իբրև քերականական միջոց, եղանակավորումն ավելի տարատեսակ է և բազամազան, քան նախորդ շրջաններում:

Բայի եղանակավորումը դրսևորվում է լեզվի ձևաբանական մակարդակում, բայի նման փոփոխությունների միջոցով արտահայտվում է խոսողի հայեցողական վերաբերմունքը իրականությունն արտացոլող գործողության նկատմամբ:

¹ Մ. Արեղյան, Բայի եղանակները արևելյան աշխարհաբարում // «Արարապ» (ամսագիր), 1912, 3, էջ 261: Հմմտ. Մ. Ե. Ասալոյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Ե., 1977, էջ 9:

² Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 494:


Խոսողության ընթացքում բայական ձևերի մեջ է արտահայտվում խոսքի երանգավորումը, որը կոնկրետ դեպքում, բնականաբար, խոսքային է, իրադրական, իսկ խոսքից դուրս՝ ընդհանրական է, լեզվական:

Այսպիսով, լեզու-խոսք հակադրության մեջ եղանակավորումը ևս հանդես է գալիս խոսողի հայեցողության կոնկրետ դրսևորմամբ, որ ընդհանրանալով դառնում է լեզվական: Թումանյանի քառյակներից մեկում՝ «Ո՞ւր կորան,/ Մոտիկներս ո՞ւր կորան, / Որքան լացի, ձեն ածի, / Ձեն չտվին, / Լուռ կորան», սահմանական իրադրայնությամբ են գործածվել բոլոր բայաձևերը, որոնք հեղինակային հայեցողական խոսքեր են, և ընդհանրական են դառնում իրենց գործառությամբ՝ իբրև լեզվական եղանակավորման օրինակ:

Բայի եղանակների դասակարգման մեջ էականը, անշուշտ, սահմանումային հատկանիշն է, այսինքն՝ այն, թե խոսքի մեջ ինչպիսին է խոսողի հայեցողական վերաբերմունքը (հայեցումը): Ըստ այդմ՝ բայի եղանակները կարելի է ներկայացնել երկանդամ աստիճանական բաշխումով¹:

Այսպես, երկանդամ հակադրության առաջին աստիճանում ընտրվում է *սահմանումային / ոչ-սահմանումային* հատկանիշը, որով բաժանվում են մի կողմից՝ սահմանական եղանակը, մյուս կողմից՝ մյուսները, երկրորդ աստիճանում՝ *կամային (հրամայական) / ոչ-կամային (ոչ հրամայական)* հատկանիշը, ըստ որի առանձնանում են հրամայական եղանակը և մյուսները, երրորդ աստիճանում՝ *ցանկական (փափագային) / ոչ ցանկական (ոչ փափագային)* հատկանիշը, որով զատվում են ըղձական եղանակը և մյուսները, չորրորդ աստիճանում *պայմանի / ոչ- պայմանի (հարկադրման)* հատկանիշը, որով, ի վերջո, հակադիր են լինում պայմանական (ենթադրական) և հարկադրական (անհրաժեշտական) եղանակը (տե՛ս գծապատկեր 11):

¹ Այս մոտեցմանը տողերիս հեղինակը հանգել էր ժամանակին գրված ուսանողական ավարտական (նախկինում՝ դիպլոմային) աշխատանքի մեջ՝ նվիրված ժամանակակից հայերենի բայի քերականական կարգերի բաշխումային քննությանը ընդհանուր լեզվաբանական հայեցակետից:



Այսպիսով, երկանդամ հակադրությամբ կարելի է բաշխումային վերլուծության առնել եղանակի քերականական կարգի դրսևորումը լեզուներում (ինչպես որ հայերենում է):

4. *Ժամանակը* (լատ. tempus «ժամանակ») լեզուներում ամենաբազմազան ձևերով դրսևորվող քերականական կարգն է, ցույց է տալիս գործողության կատարման, իրականացման *պահը*: Եթե կերպը, ինչպես կտեսնենք ստորև, արտահայտում է գործողության կատարման *տևողությունը*, ապա, կրկնում ենք, ժամանակն արտահայտում է *պահը*:


Տևողության և պահի միասնաբար ընկալումը լեզվի մասին գիտության այս ոլորտում տեղիք է տվել տարակարծությունների և շարունակում է լինել իրար լրացնող կամ իրարից անկախ և ծայրահեղ:

Կան լեզուներ, որոնցում խոսքը գործողության պահի առումով ավելի լայն հնարավորություն ունի (ժամանակային ձևերի առատություն), քան տևողության, և հակառակը՝ կան նաև լեզուներ, որոնցում մեծապես առաջնային է գործողության կատարման տևողությունը (կերպային դրսևորումների առատություն), քան պահի: Ռուսերենում, օրինակ, բայական ձևերի դրսևորման առումով ավելին են կերպերը, քան ժամանակները, անգլերենում՝ հակառակը, ավելին են ժամանակները, քան կերպերը, հայերենը հարուստ է ժամանակներով, կեր-

պային հակադրությունը, սովորաբար, համապատասխանեցված է ժամանակներին՝ ըստ կատարման հաղորդականության (Մ. Աբեղյան և ուրիշներ) և այլն:

Լեզվական ժամանակը այսպես թե այնպես իրականության որևէ պահի արտահայտությունն է: Այդ պահերը լինում են երեք կարգի՝ *հիմնա*, *առաջ* և *հետո*: Նկատենք, որ իրականության մեջ, եթե կարելի է ասել, գոյություն չունի ժամանակ, այլ կա հաջորդականություն, որ իմացության մեջ պայմանականորեն բաժանվում է երեքի՝ (այս) պահից առաջ, (այս) պահին և (այս) պահից հետո: Ընդ որում այս դեպքում ևս, իմացաբանորեն, ունենք երկանդամ հակադրությամբ բաշխվածություն, մեկ՝ (այս) պահին (եղող) և (այս) պահից առաջ (եղած), երկու՝ (այս) պահին և (այս) պահից հետո (լինելու), երեք՝ (այս) պահից առաջ (եղած) և (այս) պահից հետո (լինելու), որոնք քերականորեն ոչ այլ ինչ են, եթե ոչ *ներկա*, *անցյալ* և *ապառնի ժամանակ (պահ)* (տե՛ս գծապատկեր 12):

Գծապատկեր 12



Արտալեզվականի այս լեզվական հարաբերակցությունը ունենում է իր տարբեր ձևացումները: Բերված հակադրությունը իրականության լեզվական ճանաչողությամբ է պայմանավորված, որն իր իմացականության մեջ բացարձակ է, իսկ լեզվում ձգտում ունի նույնպիսին լինելու, քանի որ լեզուն արտացոլում է իրականությունը՝ իր հնարավորությունների սահմաններում: Մյուս կողմից՝ լեզվում, ըստ այդմ, տարբերում են *բացարձակ ժամանակներ* (ներկա ժամանակ, անցյալ ժամանակ և ապառնի ժամանակ) և *հարաբերական ժամանակներ*, որոնք տարբեր լեզուներում թե՛ ձևաբանորեն և թե՛ իմաստաբանորեն (քերականական իմաստով) բոլորովին տարբեր են, այլ կարգի ձևաիմաստային ամբողջությամբ են ներկայանում:

Հայերենը, օրինակ, ի թիվս մի շարք այլ լեզուների, քանակապես «հարուստ» է ժամանակներով, և դա հիմնված է ձևերի տարատեսակության, այլև քերականական իմաստների բազմազանության վրա (նաև ըստ բուն և երկրորդական ժամանակային իմաստների առկայության. հմմտ. *գրում եմ – գրելիս եմ լինում, գրած պիտի լինեի* և այլն): Ըստ ձևի կազմության՝ հայերենում տարբերում են պարզ և բաղադրյալ ժամանակներ: Պարզ ժամանակները միաբաղադրիչ կազմություններ են, իսկ բաղադրյալ ժամանակները՝ բազմաբաղադրիչ, սկսած երկբաղադրիչից՝ *գրում եմ, գրում էի* և այլն, մինչև երեք և ավելի բաղադրիչների գոյությունը՝ *գրելիս եմ լինում, գրելիս էի լինում, գրած պիտի եղած լինեմ, գրած պիտի եղած լինեի* և այլն, որոնք մի կողմից՝ սովորաբար կոչվում են բուն բաղադրյալ ժամանակներ (*գրում եմ*), և մյուս կողմից՝ երկրորդական բաղադրյալ ժամանակներ (*գրելիս եմ լինում*):

Տարբերելու համար իրականության լեզվական արտացոլում հանդիսացող երեք ժամանակներից վերջիններս հաճախ կոչվում են նաև ժամանակային ձևեր (ժամանակաձևեր), որպիսով մի տեսակ հոսանուտ է առաջանում ժամանակ և ժամանակային ձև (ժամանակաձև) տերմինների հիմքում ընկած հասկացությունները ճիշտ ըմբռնելու, անշփոթ պատկերացնելու համար: Այլ կերպ ասած՝ ժամանակային ձևերի (ժամանակաձևերի) հարաբերությունը բուն ժամանակներին, ավելի ստույգ՝ տեղադրումը բուն ժամանակների մեջ կամ դրանց հարաբերությամբ, հարուցում է դժվարություն: Հայերենում այս դժվարությունը ավելի քան ակնհայտ է, որովհետև միշտ չէ, որ հարցի քննարկումը չի վերածվել բանավեճի:

Հայերենի պարզ ժամանակներն են սահմանական եղանակի միայն անցյալ կատարյալը, մյուս եղանակների՝ հրամայական, ըղձական, պայմանական (ենթադրական) և հարկադրական (անհրաժեշտական) բոլոր ձևերը:

Աշխարհի լեզուների բայի ժամանակի ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս, որ կան լեզուներ, որոնցում քերականական այդ երևույթը յուրահատուկ է նաև այլ խոսքիմասային միավորներին,

հատկապես՝ գոյականին, ածականին, դերանվանը և այլն, ընդ որում գոյականի վրա դրվում են ոչ թե ձևաբանական կազմիչներ, այլ որևիցե բառ-մասնիկ՝ նրան հաղորդելով ժամանակային իմաստ, մոտավորապես հետևյալ կերպ՝ *փուն – փուն* (ինչ-որ բառ - մասնիկ), որ նշանակի «նախկին տուն» և այլն¹: Այս երևույթը հուշում է, որ հայերենում ևս կարելի է նկատել, որ, օրինակ, որոշ գոյականներ իրենց առարկայական իմաստի մեջ պարունակում են ժամանակի որևէ պահի քերականական իմաստ. հմմտ. *հարսնացու* «աղջիկ, որ հետո հարս է լինելու», *փեսացու* «տղա, որ հետո փեսա՝ ամուսին է դառնալու», *էքս-շեմպիոն* «նախկին չեմպիոն» և այլն:

Ֆրանսերենում նույնպես բայական ժամանակները աչքի են ընկնում ձևերի թե՛ քանակային և թե՛ իմաստային բազմազանությամբ, որն ունի ընդհանուր լեզվաբանական հատկանշական բնութագրություն²:

5. *Կերպը* (լատ. aspectus «հայացք, տեսք. կերպ», ռուս. вид «տեսք, արտաքին. կերպ») ոմանք դիտարկում են ժամանակի հետ միասին, սակայն կարևոր է դրանց առանձնակի քննարկումը, որովհետև ինչքան էլ այդ երկու կարգերը մոտիկ համարվեն, սակայն այդ մոտիկությունը բնավ չի նշանակում սերտություն կամ նույնություն: Է. Բ. Ադայանը գտնում է, որ «կերպը ցույց է տալիս գործողության վիճակը կամ ընթացքը որոշ ժամանակակետի մեջ»³, մի սահմանում, որ, կարելի է կարծել, թե դեռևս բավարար չէ երևույթի ամբողջական ըմբռնման համար (հմմտ. Մ. Աբելյանի տեսության հետ):

Կերպը յուրօրինակ երևույթ է առանձին լեզուներում, այն բայական քերականական կարգ է, որ արտահայտում է լայն իմաստով գործողության (եղելության) տարբեր հատկանիշներ:

Հ. Աճառյանը ժամանակին անդրադարձել է կերպի հնդեվրոպական բնույթին, որպեսզի ըստ այդմ քննության առնի նրա դրսևորումը

¹ Տե՛ս Հ.Աճառյան, Լիակատար քերականություն, հայոց լեզվի, հ. 4, գիրք 1, Ե., 1959, էջ 54-55:

² Ծ. Бенвенист, Отношение времени во французском языке // Նույնի՝ Общая лингвистика, М., “Прогресс”, 1974, էջ 270-285:

³ Է. Բ. Ադայան, նշվ. աշխ., էջ 494:

հայերենում: Ըստ Աճառյանի՝ այդ քերականական կարգը («երևույթը», լատ. aspectus «(արտաքին) տեսք», ֆրանս. aspecte) բոլորովին տարբեր է ժամանակից. եթե ժամանակը ցույց է տալիս գործողության *պահը*, ապա կերպն արտահայտում է գործողության *տևողությունը*: Այնուհետև, նշվում է, որ հնդեվրոպական նախալեզվի («մայր» լեզվի) համար առանձնացվում են կերպի մի քանի տեսակ՝ *տևական* (duratif), *կատարելական* (perfectif), *անկատարական* (imperfectif), *վայրկենական* (momentané), *կրկնական* (iteratif), *սկսնական* (inchoatif), *վերջավորական* (terminatif). «Այդ երևույթները (իմա՛ կերպերը - Վ. Հ.) ժառանգաբար անցել են սանսկրիտին, հին հունարենին և այսօր էլ կենդանի են դեռ սլավոնական լեզուների մեջ»¹:

Հայերենում կերպի կարգը չի քննարկվել ոչ ըստ հնդեվրոպականից ունեցած ժառանգության պարզաբանման, ոչ էլ իբրև գործողության տևողության հատկանիշի կրողի (ինչպես Աճառյանի մոտ է), այլ քննվել է ժամանակի, այսինքն՝ գործողության պահի հատկանիշով, ժամանակակետի հարաբերությամբ:

Սովորաբար, ինչպես հայերենում, նշվում են կերպի տարբեր դրսևորումներ՝ ըստ տևականություն (շարունակություն), ավարտվածություն, բազմակիություն, կրավորություն, պատճառ-հետևանքային հատկանիշների: Ավելին, նշվում են նաև ըստ վերը բերված հատկանիշների առավել մասնավոր տեսակներ, օր.՝ ավարտայինի մեջ՝ սկսնական ավարտային, վերջավորական ավարտային կերպեր և այլն:

Հայ լեզվաբանության մեջ ուշագրավ և համեմատաբար ընդունելի է եղել կերպի այն դասակարգումը, որ տվել է Մ. Աբեղյանը, իսկ հետագայում այլ դասակարգում է առաջարկվել Գ. Բ. Ջահուկյանի տեսության մեջ:


Ըստ Մ. Աբեղյանի՝ բայի կերպը ցույց է տալիս գործողության (այլև վիճակի) և ժամանակակետի հարաբերություն. ըստ այդմ խոնարհման համակարգում դերբայով և օժանդակ բայով կազմված ձևերն ունեն երեք կերպ՝ *կատարվող կերպ* (*գրում եմ*), *կատարված կերպ* (*գրել եմ*) և *կատարելի կերպ* (*գրելու եմ*), իսկ առանց օժանդակ

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հայոց լեզվի, էջ 55:

բայի կազմված ձևերն ունենում են *սարգ կերպ (գրեցի)*: Նույնը կարելի է տեսնել հայերենի բայի վերաբերյալ հետագա ուսումնասիրություններում:

Հարցը միանագմայն այլ կերպ է քննվում Գ. Բ. Ջահուկյանի տեսության մեջ: Նա առանձնացնում է կերպի այլ տեսակներ, տալիս դրանց ձևաբանական բնութագրերը, իսկ վերջում բերում է երկու սխեմա, որ մենք տալիս ենք ըստ հետևյալ գծապատկերի (գծապատկեր 13)¹.


Գծապատկեր 13



6. *Դեմքը* (հուն. *πρόσωπον* «դեմք. երես», լատ. *persona* «անձ. դեմք») ցույց է տալիս խոսողության (ֆրանս. *langage*) մասնակիցներից մեկի՝ խոսողի կամ լսողի (կամ գրողի և ընթերցողի) և գործողության հարաբերություն, ընդ որում մասնակիցների հակադրությամբ՝ մի կողմից, և դրանց հակադրումը մյուսներին՝ մյուս կողմից: Հայտնի է, որ խոսողությունը երկկողմանի գործողություն է խոսողի և խոսակցի միջև, որոնց հակադրությամբ քերականության մեջ, առանձնացվում է նաև խոսակցությունից դուրս մնացածը (ոչ խոսողը, ոչ խոսակիցը, այլ՝ երրորդը):

Խոսողության անմիջականությունը տրամաբանական-հաղորդակցական է, իսկ անմիջականությունից դուրս մնացածը՝ քերականական: Այս հարաբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 14).

¹ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 232:



Այսպիսով, բայի առաջին հատկություններից մեկը՝ գործողությունը, տեղի է ունենում հաղորդակցման անմիջական մասնակից և դուրս մնացած՝ ոչ մասնակից կողմերի հարաբերությամբ, ըստ որի էլ լեզուներում տարբերում են բայի երեք դեմք՝ առաջին, երկրորդ և երրորդ: Սա միանգամայն ճիշտ է քերականության մեջ: Սակայն տրամաբանության մեջ երրորդ դեմքի հարցը բավականին այլ է. ինչո՞վ է հնարավոր այս դրույթը հիմնավորել:

Նախ՝ միանգամայն հասկանալի է, որ հաղորդակցումը, լինելով անմիջական, երկկողմանի կապի մի ձև, բացառվում է երրորդ կողմի մասնակցությունը, հակառակ դեպքում խոսողի նկատմամբ կլիոխվի խոսակցի մասնակցության ուղղությունը: Եթե մեկն ասում է, իսկ մյուսը՝ լսում, ապա անմիջական այս կապի մեջ չի տեղավորվում երրորդը, որը ոչ խոսող է, ոչ էլ լսող: Ա-ն խոսում է Բ-ի հետ, Գ-ն չի կարող մասնակցել այդ խոսողությանը, եթե մասնակցի, կստացվի, որ Ա-ն խոսում է ԱԳ-ի հետ, այսինքն՝ դարձյալ երկկողմանի կապի մեջ:

Երկրորդ՝ այս բաշխումը ճշտորեն ապացուցվում է դեմք ցույց տվող դերանունների մեծ մասամբ՝ պատմական-ստուգաբանական, մասամբ՝ կիրառական տվյալներով. լեզուներում կան 1-ին և 2-րդ դեմքի համար առանձին արմատական բառեր՝ լատ. *egō* «ես», *tu* «դու», հայ. *ես*, *դու*, ռուս. *я* «ես», *мѝ* «դու», ֆրանս. *je* «ես», *tu* «դու», գերմ.

ich «ես», *du* «դու» և այլն: Մակայն այս համակարգում գոյություն չունի 3-րդ դեմքի համար առանձին արմատական բառ, այլ այն փոխ է առնվում ցուցական դերանուններից՝ լատ. *is (ea, id)* «նա», հայ. *նա*, ռուս. *он (она, оно)* «նա», ֆրանս. *il (elle)* «նա», գերմ. *er (sie, es)* «նա» և այլն: Այստեղ դժվար չէ նկատել, որ 3-րդ դեմքի համար բերված բառերին կից փակագծերում, ի տարբերություն փակագծերից դուրս եղածի, որ արական սեռի ձևն է, դրվել են մյուս՝ իգականի և չեզոքի ձևերը (ֆրանսերենը չեզոք չունի):

Երրորդ՝ նկատենք նաև, որ եթե լեզուներում պատմականորեն անձնական դերանունները, որոնք լայն իմաստով արտահայտում են առարկայի («անձի») հասկացություն՝ առանց սեռի տարբերակման, ապա ցուցականներն արտահայտում են առարկայի հատկանիշի հասկացություն, պահում են սեռի տարբերակումը, այսինքն՝ հանդես են գալիս երեք դեմքով էլ: Հայերենում, օրինակ, *նա* դերանունը հոլովվում է ոչ թե *ես* և *դու* դերանունների նման (այսպես կոչված՝ դերանվանական հոլովմամբ. հմմտ. *ես* – *իմ* – *ինձ* // *դու*– *քո* – *քեզ* և այլն), այսինքն՝ տարբեր հիմքերով, այլ ցուցականների պես. հմմտ. *սու-սրս-սրան* // *դա- դրա, դրան* և *նա- նրա-նրան* և այլն: Հստակ երևում է հոլովման երկու ենթահամակարգի տարբերությունը:

Լեզուներում ըստ դեմքի բայերն ունեն տարբեր դրսևորումներ, որն անպայման կապ ունի նրանց կցականության կամ անջատականության հետ: Հայերենում, օրինակ, բայաձևի մեջ դեմքն արտահայտվում է. գրաբար՝ *-մ*, *-ս*, *-յ*, *-մք*, *-ք*, *-ն*. *բերեմ* «բերում եմ», *բերես* «բերում ես», *բերէ* (< *ե+յ*) «բերում է», *բերեմք* «բերում ենք», *բերէք* (< *ե+ք*) «բերում եք», *բերեն* «բերում են», ժամանակակից հայերեն՝ *գնաց-ի*, *գնաց-իր*, *գնաց*, *գնաց-ինք*, *գնացիք*, *գնաց-ին* և այլն): Ֆրանսերենում, օրինակ, հատկապես եզակի թվում, սովորաբար պարտադիր է բայի հետ դերանվան գործածությունը, որպեսզի արտահայտվի գործողության կատարողը. *je mange* «(ես) ուտում եմ», *tu manges* «(դու) ուտում ես», *il (elle) mange* «(նա) ուտում է» և այլն: Այդպես է նաև հնդեվրոպական բնույթի ժամանակակից այլ լեզուներում:

Ուրեմն բայի գործողությունը, ավանդաբար ընդունված է ասել, իրականանում է երեքլոզմյան առնչության մեջ, սակայն կարելի է

ավելացնել՝ ամեն անգամ երկկողմ հակադրության պայմաններում, այսինքն՝ գործողություն ըստ երեք դեմքերի, բայց երկյակ հակադրությամբ (հակադրական և լրացումային բաշխման մեջ):

7. *Թիվը* (հուն. *ἀριθμος* «թիվ», լատ. *numerus* «թիվ») բայի ձևաբանական համակարգում ունի իր յուրահատկությունները, որոնք ամբողջովին վերաբերում են խոսողությանը՝ վերջինիս մասնակիցների հակադրական բաշխմամբ:

Լեզուներում թիվը երկուսն է՝ *եզակի* (խոսողության մեկ մասնակից) և *հոգնակի* (խոսողության մեկից ավելի մասնակիցներ). գործողությունը տեղի է ունենում մեկ անձի կողմից (երեք դեմքով բաշխված) և մեկից ավելի անձերի կողմից (սույն ձևով բաշխված): Ընդ որում եզակի և հոգնակի թվերի բաշխման մեջ կա այն առանձնահատկությունը, որ նախ՝ եզակի առաջին դեմքում խոսքն արտահայտվում է իր անունից, իսկ հոգնակիի դեպքում իր նկատի ունեցած խմբի՝ որոշակի անձերի անունից. հմմտ. *(ես գրում եմ - (մենք) գրում ենք*, երկրորդ՝ *եզակի թվով և հոգնակի թվով դրված բայաձևերում նկատելի է ինչ-ինչ վերաբերմունքի հետ կապված փոխարինություն՝ ոճական և այլ նկատառումներով, որի դեպքում փոխարինվում է նաև դեմք ցույց տվող դերանունը, օրինակ՝ մենք գրում ենք* ձևի օգտագործում «ես գրում եմ» իմաստով (իր անձի առավելության նշում), և հակառակը՝ *դու գրում ես* ձևի օգտագործում «դուք գրում եք» իմաստով (խոսակցի անձի նկատմամբ անհարգալից պահվածքի նշում):

Կան լեզուներ, որոնք ունեն ոչ միայն եզակի և հոգնակի թիվ, այլև «եռակի», «քառակի» թիվ (օր.՝ միկրոնեզյան լեզուներում՝ Կարոլինյան, Մարշալյան կղզիներում), որը պայմանավորված է այդ լեզուները կրող հանրության մտածողության յուրահատկությամբ, այսինքն՝ առարկաները պատկերացնել ոչ թե, ասենք, եզակի - հոգնակի, այլ եզակի - «եռակի», եզակի - «քառակի» հակադրությամբ, մոտավորապես՝ մեկ և երեք (միասին) և այլն:

Թիվը արտահայտվում է ոչ միայն գոյականի, այլև բայի համակարգում, առաջինում՝ առարկաների, երկրորդում՝ գործողությունների նշանակման մեջ. հմմտ. *ուսանող - ուսանողներ և ուսանողը լսում*

է – *ուսանողները լսում են* և այլն: Պարզ ասած՝ սա քերականություն է, որ արտահայտում է լեզուն, իր շարահյուսական երևույթով՝ համաձայնությամբ. բերված օրինակներում տեղի է ունեցել ենթակայի և ստորոգյալի համաձայնություն՝ դեմքով և թվով:

Հիմնական գրականություն:

Մղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 196-274:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 122-125:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 161-165:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 320-323:

Широков О. С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

Թեմա 5. Բառային կարգեր. բառը քերականական (ձևակազմական) միավոր

Հիմնահարցեր: *Բառի քերականական (ձևակազմական) բնութագիրը: Բառի քերականական իմաստի արտահայտությունը ածանցմամբ: Բառի բառակազմական և քերականական (ձևակազմական) կարգային առնչությունը:*

1. Լեզուների քերականական կառուցվածքի առումով բառակազմությունն ավելի լայն հասկացություն է, քան որ այն սովորաբար ըմբռնվում է այս կամ այն լեզվում: Հայերենում բառակազմությունը նորմատիվ քերականություններում քննվում է բառագիտության մեջ, քանի որ այն դիտվում է միայն ըստ իրահարաբերական արժեքի, այնինչ ուրիշ լեզուներում (ռուսերենում և այլն) այն ունի նաև ձևակազմական (բառահարաբերական) արժեք:

Լեզվաբանական տեսական գիտելիքների առումով բառակազմությունը առավելապես ներկայացվում է իբրև լեզուների ձևաբանության բաժնի երևույթ: Ըստ այսմ՝ բառը ունի ոչ միայն բառային, այլև քերականական իմաստ: Տարբերում են քերականական իմաստների երկու տեսակ՝ ածանցական և բառահարաբերական: Մեկի դեպքում բառին ավելացող ածանցներով կազմվում են քերականական իմաստ արտահայտող նոր բառեր, օր.՝ *գիր* (արմատ) – *գրել* (բայ) – *գրական* (ածական) – *գրություն* (գոյական) և այլն: Իսկ մյուսի դեպքում՝ «քերականական-բառահարաբերական ձևավորում ստացած քերականական իմաստները հանդես են գալիս լեզվի մեջ որպես քերականական կարգեր (կատեգորիաներ)»¹: Երկրորդ դեպքում ամենից առաջ նկատի է առնվում այն, որ նման ձևով առաջանում են տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր. օր.՝ *գիր* արմատից բայ (*գրել*), ածական (*գրական*), գոյական (*գրություն*) և այլն: Սա բառի ձևաբանական հնարավորության (քերականական իմաստի) մի դրսևորում է, որն ունի ընդհանուր լեզվաբանական արժեք՝ բնորոշ տարբեր լեզուների:

Հայերենում, օրինակ, գոյականի սկզբնական ձևը, որ քերականության մեջ ուղղական հոլով է համարվում, քերականական արժեք

¹ Է. Բ. Սդայան, նշվ. աշխ., էջ 502:

է ստանում մյուս՝ թեք հոլովների հետ համապատասխան առնչությունների պայմաններում՝ ունենալով, այսպես կոչված, զրո (ϕ) վերջավորություն, իբրև քերականական կարգային իմաստի նշանակիչ բաղադրիչներից մեկը: Այնինչ կան լեզուներ, որոնցում երևույթը հակառակ պատկերն ունի: Այսպես, ֆրանսերենում գոյականի ուղղական հոլովն արտահայտում է ոչ միայն, ասենք, ուղղականի, այլև որևէ սեռի քերականական իմաստ. հմմտ. *ami* «բարեկամ» – *amie* «բարեկամուհի», *cher* «սիրելի (ար. սեռ).» – *cherie* «սիրելի (իգ. սեռ)», *étudiant* «ուսանող» – *étudiante* «ուսանողուհի» և այլն): Ռուսերենում գոյականի ուղղականի ձևն արտահայտում է սեռի, թվի և հոլովի քերականական իմաստներ. օր.՝ *студент* «ուսանող» – *студентка* «ուսանողուհի», *ученик* «աշակերտ» – *ученица* «աշակերտուհի», *любимый* «սիրելի (ար. սեռ)» – *любимая* «սիրելի (իգ. սեռ)» և այլն: Բերվածներից ֆրանսերենի դեպքում քերականական իմաստի արտահայտումը պայմանավորված է սեռանիշ *ϕ* զրո) / *e* (*ami-ϕ* – *ami-e* «բարեկամուհի»), ռուսերենում *ϕ* (*зрн*) / *ка* (*студент* «ուսանող» – *студентка* «ուսանողուհի»), *ϕ* (*зрн*) / *а* (*к/у*, հերթագայության հետ միաժամանակ. *ученик* «աշակերտ» – *ученица*), *ый* / *ая* (*любимый* – *любимая*) հակադրությամբ:

Այնուհետև, հայերենում քերականական իմաստի նշանակիչ բաղադրիչներ չունեն նաև մյուս անուն խոսքի մասերից ածականը, թվականը, նույնիսկ դերանունը, մի երևույթ, որ ընդհանուր առմամբ հատուկ է այլ լեզուներին՝ իբրև ձևակազմական իրակություն:

Այսպիսով, բառը, որպես բառակազմության առարկա, սահմանվում և իր բառական հատկանիշով (իմն բառիմաստ), ուսումնասիրվում է բառագիտության բաժնում, իսկ բառերից առաջացող նոր բառերի ձևակազմական քննությունը, բնականաբար, իբրև տեսական առանձին երևույթ, ուշադրության առարկա է իր ձևակազմական հատկանիշով (իմն քերականական իմաստ), ուսումնասիրվում է ձևաբանության բաժնում: Է. Բ. Աղայանը գտնում է, որ բառային կարգեր (կատեգորիաներ) են կոչվում «լեզվի մեջ իրենց բառակազմական արտահայտությունն ստացած ածանցական իմաստները», որոնք միաժամանակ «տարբերակում են բառերը նաև ըստ խոսքի մասերի»¹:

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 503:

2. Լեզվում ուրույն երևույթ են բառային կարգերի (ածանցական քերականական իմաստների) կրող միավորները, որոնք մասնակիորեն են առնչվում խոսքին, այսինքն՝ «չեն արտահայտում բառերի հարաբերությունները նախադասության մեջ, այլ մասնավորեցնում ու տարբերակում են բառային իմաստները, այլ կերպ ասած՝ լեզվի մեջ գոյություն ունեցող արմատներից ու բառերից կազմում են նոր բառեր՝ նոր իմաստներով»¹: Լեզուներում բառային կարգերի մեջ, ձևակազմական առումով, տարբերում են մի քանի ածանցական իմաստներ. Է. Բ. Աղայանը նշում է «փոքրության (քնքշության, նվազության)» (*-իկ* ածանց՝ *շուն - շնիկ*), «հավաքականության կամ վերացական առարկայի» (*-ություն* ածանց), «բացասման» (*-ան* ածանց), «վերաբերության» (*-ային* ածանց) և «խոշորության» (ռուս. *-уше*: дом - *домище*) իմաստները²: Սրանց, թերևս, կարելի է ավելացնել «սաստկական» իմաստը՝ *կոպր*- ածանց-մասնիկով (եթե ոչ՝ նաև *n*-ով). հայ. *ճանկել - ճանկ-n-ել - ճան-կոպր-ել, ծեծել - ծեծ-կոպր-ել, ճկել - ճկ-n-ել* և այլն: Այս իրական դիտարկումը կարելի է ընդլայնել հայերենի մի շարք այլ օրինակներով: Այսպես, հայերենում փոքրություն ցույց տվող մասնիկներն են՝ *-ակ, (-*ել), -իկ, -ուկ*, որոնցով կազմվել են մի շարք բառեր և լեզվի տարբեր փուլերում ունեցել են գործածության տարբեր աստիճան. հմնտ. *օղակ, փղեկ* (խսկց.-բրբռ.), *շերեփիկ, շերեփուկ* և այլն: Դրանք նոր գրական հայերենի մեջ կամ շարունակում են մնալ կենսունակ, կամ ինչ-որ չափով դառնալ ոչ կենսունակ (քիչ գործածական). վերջիններս այդպիսին են դիտվում պատմականորեն: Այսպես, մի կողմից՝ *գունդ - գնդակ, կոճ - կոճակ* և այլն, իսկ մյուս կողմից՝ *փուն-փնակ, փոքր-փոքրիկ, շուն- շնիկ, մանուկ- մանչուկ // մանկիկ* և այլն: Բերվածներից *մանչուկ* կամ *մանկիկ* ձևերն առաջացել են *մանուկ* կազմության *ուկ*-ի միաժամանակ *ու*-ի սղումով և *կ*-ի կամ պահպանումով, կամ չ-ի վերածմամբ (*մանուկ > ման-կ-իկ, ման-չ-ուկ*): Նկատենք, որ նման կազմությամբ շատ բառեր լեզվի տվյալ շրջանում չունեն իրենց անմասնիկ ձևերը կամ սակավ գործածական են. հմնտ. *մոծակ, ճուռակ, կոճակ* և այլն:

¹ Նույն տեղում, էջ 502:

² Նույն տեղում, էջ 502-503:

ա. Այս խմբի բառերից փոքրություն-փաղաքաշանք են ցույց տալիս՝ *աղավնյակ* (< *աղավնի*), *հոգյակ* (< *հոգի*), *ամուսնյակ* (< կամ *ամուսին*-ի սեռականի ձևից՝ *ամուսնի-ակ*, կամ անալոգիայով), փաղաքաշանք են ցույց տալիս՝ *մոռութ-մոռութիկ* (խսկց.), *բուկ- բկ-լ-իկ*, նվազություն-առավելական՝ *շն-իկ*, *հասար-լ-իկ* և այլն:

բ. Հավաքական, վերացական իմաստ են արտահայտում *-ություն*, *-ումնասնիկները*. *հանրություն*, *շփոթություն*, *համակում*, *վերաբերում* բառերի սերող *հանուր*, *շփոթ*, *համակ*, *վերաբեր(ել)* հիմքերից կազմում են նոր բառեր, որոնք աչքի են ընկնում բառական կարգային հատկանիշով, արտահայտում են գոյականի վերացական-ընդհանրական դասի քերականական իմաստ:

գ. Բացասման իմաստով կազմություններ հայերենում սովորաբար առաջանում են համապատասխան մասնիկներով (*-ան*, *-չ*, *-դժ*, *-յր*), որոնք դրվելով բառերի կամ բառարմատների վրա կազմում են բառահարաբերական-քերականական իմաստով բառեր, ընդ որում գրեթե բոլոր դեպքերում տեղի է ունենում, այսպես կոչված, խոսքիմասային փոխանցում, որ բուն հատկանիշ է քերականական-բառահարաբերական իմաստի դրսևորման: Այսպես, *-ան* ժխտականի մասնակցությամբ ունենում ենք գոյական-ածական խոսքիմասային փոխանցմամբ ձևեր. հմմտ. *գործ* – *ան-գործ*, *խելք* – *ան-խելք*, *յրուն* – *ան-յրուն* և այլն, *-չ*-ով բայարմատից կազմվում են ածականական միավորներ. հմմտ. *յրես(նել)* – *չ-յրես*, *կամ(ենայ)* – *չ-կամ*, *բերել* – *չբեր* (բրբռ.) և այլն, *-դժ*-ով նույնպիսի կամ գրեթե նույնպիսի կազմություններ. հմմտ. *բախար* – *դժբախար* (նաև՝ *անբախար*), *գոյն* – *դժգոյն*, *կամ(ենայ)* – *դժկամ* և այլն, այս վերջինի պես նաև *յր*-ի միջոցով. հմմտ. *գիր(ենայ)* – *յրգեար*, *հաս(նել)* – *յրհաս* և այլն:

դ. Մեծության իմաստով կազմություններ. *մեծ* – *մեկ-կեկ* «ավելի մեծ, խոշոր». հմմտ. ռուս. –ище ածանցով կազմությունները՝ дом – дом-ище «մեծ տուն» և այլն:

Է. Բ. Աղայանը գրում է. «Ջրկված լինելով բառային կոնկրետությունից, այդ ածանցները միանալով զանազան բառերի կամ արմատների, հատկացնում են նրանք բառերի այս կամ այն կարգին, տարբե-

րակում են նրանք ըստ խոսքի մասերի, տալիս նրանց այս կամ այն մասնավորեցումը, կոնկրետացումը և այլն»¹:

Ավելորդ չէ շեշտել, որ հայերենի նորմատիվ դասագրքերում, այլև տարբեր բնույթի աշխատանքներում լեզվական այս իրողությունը քննության առարկա է ամենից առաջ իբրև բառագիտության, մասնավորապես բառակազմական երևույթ, սակայն, մյուս կողմից, ինչպես տեսնում ենք, այն ամենից առաջ աչքի է ընկնում բառաբերականական-բառահարաբերական այնպիսի հատկանիշով, որով տեղի է ունենում անցում մի խոսքի մասից մեկ այլ խոսքի մասի, որն, անշուշտ, քերականական-իմաստաբանական երևույթ է լեզուներում:

Այնուհետև, բավականին ուշագրավ է այն փաստը, որ տարբեր խոսքի մասերի իմաստներ են արտահայտում, այսպես կոչված, խոսքիմասային կազմիչ ածանց-մասնիկները: Հայերենում, օրինակ, միանգամայն տարբեր են գոյականակազմ ածանցները՝ *-ություն*, *-ում*, *-արան* և այլն (*ուսանողություն*, *ուսում*, *լսարան* և այլն), ածականակազմ ածանցները՝ *-ական*, *-ային* և այլն (*ուսանողական*, *լսարանային* և այլն), բայական ածանցները՝ *-ել*, *ալ* (*սովորել*, *գիտենալ*), մակբայական ածանցները՝ *-արար*, *-ապես* և այլն (*ընկերարար*, *ստանձնապես* և այլն):

Նկատի ունենալով սրանց այն հատկանիշը, որ տարբեր խոսքի մասեր են առաջ բերում, նման կազմությունները տվյալ դեպքում այլ բան չեն, քան խոսքիմասային քերականական-բառակազմական երևույթի դրսևորումներ:

3. Այս թեմայի առնչությամբ կարևոր է նաև բառի բառակազմական և քերականական (ձևակազմական) կարգային առնչության հարցը՝ կապված բառի վերաբերական (բառահարաբերական) և ածանցական իմաստների, նաև սրանց պատմական փոփոխության հետ:

Հայտնի է, որ լեզուները պատմության ընթացքում կրում են մի շարք տարբեր կարգի փոփոխություններ, որ ընդունված է դրանք գնահատել իբրև զարգացման պատմական գործընթացի հետևանք: Խոսքն այս դեպքում վերաբերում է ոչ այնքան բառապաշարի բառային (լեքսիկական) ընդհանուր տեղաշարժերին, ասենք՝ նոր առարկա-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 503:

ների և երևույթների առաջ գալով պայմանավորված համապատասխան բառերի և տերմինների առաջացմանը, այլ լեզվում եղած բառերի ձևի փոփոխմամբ պայմանավորված իմաստների փոփոխությանը, եղածների թուլացմանը կամ անհետացմանը և այլն, որքան բառերի իմաստներով պայմանավորված քերականական կարգերի այն փոփոխությանը, որը դիտարկվում է լեզվի և արտալեզվական իրականության փոխհարաբերության մեջ:

Լեզուն իրականության արտացոլումն է, որ ձգտում է համարժեքության այդ իրականության հետ: Լեզվաբանության մեջ, բնականաբար, այս հարցը քննվում է իր իմացաբանական (փիլիսոփայական) հիմքերով. ըստ այդմ՝ լեզվի քերականական կարգերը ձգտում են համարժեքության մտածողությամբ (գիտակցությամբ) ճանաչելի իրականության՝ տրամաբանական կարգերի հետ: Իրականությունը նշանակվում է այնպիսի կարգերով, ինչպիսին են ժամանակը, տեղը, ձև, քանակը և այլն, որին համապատասխան են լեզվի նույնպիսի քերականական կարգերը:

Բառը, ընդհանուր առմամբ, ամենից առաջ հաղորդակցական երևույթ է, իրականության լեզվական արտացոլում, և որպես այդպիսին՝ այն խոսքում հանդես է գալիս երկակի, մի կողմից՝ բառակազմական (նոր բառեր կազմելու), և մյուս կողմից՝ ձևակազմական (նոր ձևեր կազմելու) հնարավորությամբ: Այդպիսով՝ բառը լեզվական հնարավորություն է, միաժամանակ խոսքային իրականացում՝ արտահայտելու արտալեզվական իրականությունը, ըստ որում անվանումով կամ հարաբերումով:

Հիմնական գրականություն:

Միլայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 502-459:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 111-112:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 131-139:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 275-276:

Широков О. С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

Թեմա 6. Բառափոխության եղանակները

Հիմնահարցեր: *Ներմարմնավորում (ինկորպորացիա), համադրում (սինթեզ), անջատում (իզոլյացիա), կցում (ագլյուտինացիա), բազմահամադրում (պոլիսինթեզ), ձուլում (ֆուզիա): Երևույթի փարբերություններն ըստ մակարդակների: Եղանակների խմբավորման հիմունքները և տեսությունները:*

1. Բառի, իբրև քերականական միավորի, ուսումնասիրության մեջ հստակ տարբերակելի են քերականական իմաստ և, այսպես կոչված, բառապաշարային (լեքսիկական՝ բառարանային) իմաստ հասկացությունները:

Բառերի քերականական իմաստի դրսևորման բառակազմական ուղին շատ լեզուներում ունեն առանձնահատուկ ձևեր: Լայն իմաստով ընդունված է նման երևույթները կոչել *բառափոխություն*: Վերջինս հանդես է գալիս տարբեր եղանակներով. լեզուներում սովորաբար առանձնացնում են որոշակի տեսակներ՝ նկատի ունենալով այն առանձնահատկությունը, որով բնորոշվում է այդ լեզուների քերականական տիպը: Այսպես, բառափոխական այնպիսի երևույթ, ինչպիսին է *կցումը* (ագլյուտինացիա) էական նշանակություն ունի թյուրքական լեզուներում, որպիսով այդ լեզուները հաճախ անվանվում են *կցական լեզուներ*, նման երևույթ ներկայացնում է ժամանակակից գրական հայերենը, ի տարբերություն հին գրականի. մեկ բառանի մեջ կարող են հանդես գալ թվի, հոլովի և առկայացման քերականական իմաստները. օր.՝ *տեղր-եր-ից-ս* «իմ այս տետրերից», *գրք-եր-ով-դ* «քո այդ գրքերով» և այլն):

Լեզուներում, ինչպես հայտնի է, տարբեր ժամանակներում առանձնացվել են բառափոխության հետևյալ երևույթները՝ *ներմարմնավորում* (ինկորպորացիա), *համադրում* (սինթեզ), *անջատում* (իզոլյացիա), *կցում* (ագլյուտինացիա), *բազմահամադրում* (պոլիսինթեզ), *ձուլում* (ֆուզիա): Գիտության մեջ սրանց այնքան մեծ կարևորություն է տրվել, որ այդ երևույթները համարվել են առանցքային լեզուների տիպաբանական դասակազմման համար:

Հայտնի է, որ աշխարհի լեզուների տիպաբանությունը լիովին տարբերվում է, ասենք, պատմահամեմատական, ինչպես նաև կա-

նուցվածքային լեզվաբանությունից, որ հիմնվում է լեզուներում նման երևույթների տարբեր չափերով առկա դրսևորումների վրա: Միաժամանակ գտնում են, որ այդ տեսակների միջև գոյություն ունի զուգորդում, այսինքն՝ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում հստակ ձևակերպումով բնորոշել այս կամ այն տեսակը.

ա. *Ներմարմնավորումը* (ուշ լատ. incorporatio. in «մեջ», corpus «մարմին». «ներառում, մարմնավորում») բնորոշ է այն լեզուներին, որոնցում շարահյուսական հարաբերություն դրսևորող միավորները (նախադասության անդամները) միասին կազմում են բառային մեկ ամբողջություն, որպիսով ստացվում է, որ լեզվում կա այնքան նախադասություն, որքան որ հնարավոր է կազմել նման ձևաբանական-շարահյուսական հարաբերության բառային միավորներ:

Այս երևույթը լեզվաբանության մեջ սահմանվում է իբրև շարահյուսական կապի մի եղանակ, որն ունենում է *մասնակի* (բառակապակցության աստիճանում) և *լրիվ* (նախադասության մակարդակում) դրսևորումներ, որոնց բաղադրիչները միանում են իբրև մեկ ամբողջություն՝ առանց նրանցում առկա ձևային (արտահայտության պլանի) ցուցիչների, իսկ բաղադրիչների կազմը, հերթականությունը և քերականական իմաստներ ստանալը պայմանավորված են լինում ասելիքի (նախադասության) ամբողջությամբ, հարաբերակցությունը՝ նրանց միջև՝ շարահյուսական կապով (հարաբերությամբ):

Ներմարմնավորումը ինչ-որ չափով շփման եզրեր ունի թե՛ կցականության (ազլյուտինացիայի), թե՛ բազմահամադրման հետ, որովհետև դրանք այս կամ այն հատկանիշով (օր.՝ բաղադրիչների հերթակարգություն կամ կցում, քերականական-շարադասական իմաստի հիմունք և այլն): Ըստ այսմ՝ ներմարմնավորյալ լեզուները երբեմն կոչվում են նաև *բազմահամադրական լեզուներ* (տե՛ս ստորև): Այն լեզուները, որոնցում բառական-շարահյուսական հարաբերակցությունը իրականանում է ներմարմնավորմամբ, բնականաբար, կոչվում են ներմարմնավորյալ լեզուներ՝ իբրև տիպաբանորեն յուրահատուկ տեսակ: Այդպիսին են, օրինակ, հնասիական լեզվախմբի մեջ մտնող ամերիկյան հնդկացիական որոշ ցեղերի լեզուները (օդուլերենը կամ

յուկագիրերենը), Ռուսաստանի հյուսիսային մասում և Կամչատկայի որոշ տարածքներում բնակվողների լեզուները (չուկոտերենը կամ լուտրավետերենը, կոլյակերենը կամ սիմիլաներենը և այլն), որոնք գիտության ներկայիս տվյալներով՝ կարելի է ասել, բավարար չափով ուսումնասիրված են¹:

Այդ տիպի լեզուները երբեմն կոչվում են նաև բազմահամադրական լեզուներ անվանումով, որովհետև ներկայացնում են նախադասության որոշ բաղադրիչ անդամների միանման համադրություն. օր.՝ նախադասության բայ-ստորոգյալի կազմում առավելապես ուղիղ խնդրի ներառում, և ըստ այդմ շարահյուսական մեկ ամբողջական միավորի սերում և այլն:

բ. *Համադրումը* (հուն. συνθεσις «միացում, կազմում») հատուկ է այն լեզուներին, որոնցում քերականական արտահայտման միջոցներ են ներքին թերմոնը, ածանցումը, կրկնությունը և այլն (տերմինը՝ Ֆ.Շ. լեգելի): Քերականական և բառական բաղադրիչների համադրումը առավելապես բնորոշ է եղել լեզուների հին վիճակին:

Այսպես, հնդեվրոպական լեզուներից հին հնդկերենը (սանսկրիտը), հին հունարենը, լատիներենը, հին սլավոներենը, հին հայերենը (գրաբարը) և այլն քերականական ձևեր են կազմում համադրումով՝ հիմքի և քերականական մասնիկի միատեղումով. օր.՝ հիդկ. *bharāmi* բերում եմ», *bharāsi* «բերում ես», *bharāti* «բերում է» և այլն, հուն. φερο «բերում եմ», φeres «բերում ես», φερητ «բերում է» և այլն, լատ. *amō* «սիրում եմ», *amas* «սիրում ես», *amat* «սիրում է» և այլն, ռուս. (սլավ.) *нушу* «գրում եմ», *нушаеш* «գրում ես», *нушет* «գրում է» և այլն, հայ. *երթամ* «գնում եմ», *երթաս* «գնում ես», *երթայ* «գնում է» և այլն ձևերը համադրական են, որովհետև դրանց բայահիմքերին ավելացել են քերականական նշանակության՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի 1-ին, 2-րդ և 3-րդ դեմք նշանակող վերջավորությունները. այդ ձևերում համադրված են բայի եղանակի, ժամանակի, թվի և դեմքի քերականական իմաստները:

¹ Տե՛ս *И. И. Мещанинов*, *Общее языкознание*, Л., 1940: *Նույնի՝* Члены предложения и части речи, 2-րդ հրատ., Л., 1978: *П. Я. Скорик*, О соотношении агглютинации и инкорпорации // В сб.: *Морфологическая типология и проблема классификации языков*, М.-Л., 1965:

գ. *Անշարում* (իզոլյացիա «անշատում, զատում, մեկուսացում»), այս տերմինով հաճախ բնորոշվում են մեկուսի ամորֆ (բառացի՝ անձև, այսինքն՝ քերականական ձևերով աչքի չընկնող կամ նման ձևերից զուրկ) լեզուները, որոնք տիպաբանական այլ տեսակ են ներկայացնում և կոչվում են անշատական լեզուներ:

դ. *Կցում* (ագլյուտինացիա. լատ. agglutinatio «սոսնձում. միացում, կազմում») այս կամ այն կարգի մասնիկի ավելացումն է բառի հիմքին (ըստ Ֆ. Բոպի), որի նկատառումով էլ շատ լեզուներ հաճախ կոչվում են *կցական լեզուներ*: Դրանք տիպաբանորեն այլ խումբ են կազմում, և այս դեպքում լեզվաբանության պատմության մեջ, կարելի է ասել, լայն ուշադրության արժանացած երևույթի ենք առնչվում, որովհետև դեռևս նոր դարաշրջանի վաղ ժամանակների գիտության մեջ լեզուների փիլիսոփայական կողմի ուսումնասիրման նպատակով հարց է առաջ քաշվում, թե լեզվի մեջ ինչպիսի արտացոլում ունի այն կրող ժողովրդի պատմությունը, այդ պատմության, այսպես կոչված իմաստասիրությունը (փիլիսոփայությունը): Եվ պատահական չէ, որ դեռևս 18-րդ դ. ընթացքում այդ խնդրով հետաքրքրվել են գերմանացի այնպիսի խոշոր մտածողներ, ինչպիսին են եղել, Յ. Գ. Հերդերը, Ա. Շլեգելը, Ֆ. Շլեգելը, իսկ հետագայում Վ. ֆոն Հումբոլդտը և ուրիշներ:

Կցումը լեզվի բառակազմական և ձևակազմական միավորների դրսևորման մի եղանակ է, որի դեպքում բառարմատին կամ բառահիմքին, որոնք մեծ մասամբ կայուն ձևով պահում են իրենց ելակետային կամ անհնչյունափոխ տեսքը, միանում են տարբեր կարգի միավորներ՝ ածանցներ կամ մասնիկներ: Երևան եկող կցականությանը, ի դեպ, հակառակ երևույթ է ձուլումը, և պատահական չէ, որ Ա. Ա. Ռեֆորմատսկին իր աշխատություններում այդ երկուսը քննում է իբրև միևնույն, այլ կերպ ասած՝ ընդհանուր երևույթի տարբեր մասեր¹: Այսպես, հայ. *-նիի* մասնիկը իգականանիշ է, որը կարող է կցվել անփոփոխ ձևով հանդես եկող որոշակի գոյականներին՝ ցույց տալով տվյալ հասկացության այն իմաստը, որ սեռի տարբերություն է հանդես բերում. օր.՝ *ընկեր - ընկերուհի* «իգական սեռի անձ՝ ընկեր», *բարեկամ - բարեկամուհի* «իգական սեռի անձ՝ բարեկամ», *աշխատ*

¹ Տե՛ս Ա. Ա. *Реформатский*, Введение в языковедение, М., 1998, էջ 270-275:

տակից - աշխատակցուհի «իգական սեռի անձ՝ աշխատակից» և այլն:

Է. *Բազմահամադրում* (հուն. πολλή «բազմաթիվ, շատ» և σύνθεσις «միացում, միատեղում») երևոյթով աչքի ընկնող լեզուները տիպաբանորեն կոչվում են *բազմահամադրական լեզուներ*: Այս երևոյթի էությունն այն է, որ շարահյուսական մակարդակում հանդես եկող միավորներից հատկապես նախադասությունը սերվում է որոշակի ցուցիչներով կարգավորվող շարահարությամբ, որպիսով ապահովվում է մտքի արտահայտման նվազագույն միավորի ամբողջականությունը տվյալ մտքի դրսևորման համար: Նկատված է, որ նման տիպի են Կենտրոնական, Արևելյան և Հարավային Աֆրիկայում տարածված բանտու լեզուները, որն ինչպես հայտնի է, այդ տարածքի ամենատարածված լեզուներն են, և համեմատաբար՝ լավ ուսումնասիրված, առանձնանում են մեկուկես տասնյակի հասնող ենթախումբ ներկայացնող լեզուներով, ընդ որում առավել տարածվածներից են սվահիլի, չիլուբա, լինգալա, ուրունյարվանդա, լուգանդա և այլն լեզուները¹: Ոմանք բազմահամադրումը, իբրև քերականական իմաստի նշանակիչ երևոյթ, նույնացնում են ներմարմնավորում երևոյթի հետ²:

զ. *Չուլում* (լատ. fusio «միացում, ձուլում») տերմինը հայ լեզվաբանության մեջ օգտագործվում է, ի մասնավորի, գրաբարի հոլովման համակարգում քերականական մի քանի իմաստի նշանակիչ վերջավորությունների նկատառումով. օր.՝ հին հայերենում *գործոց* ձևը *-ng* վերջավորության միջոցով արտահայտում է *գործ* բառի հոգնակի թվի սեռական-տրական և բացառական հոլովների քերականական իմաստ՝ «գործերի, գործերին, գործերից», այսինքն՝ քերականական մի քանի իմաստ ձուլված է մեկ ձևի մեջ: Այնուհետև, լատիներենում արլատիվ հոլովն ունի քերականական մի քանի իմաստ՝ բուն (բացարձակ) արլատիվ՝ բացառականի, միջոցի արլատիվ՝ գործիականի, և

¹ Տե՛ս Է. Բ. *Աղայան*, նշվ. աշխ., էջ 681-682: “Большой энциклопедический словарь: Языкознание”, Изд-во “Большая Российская энциклопедия”, 2-е (репринтное) издание, М., 1998, էջ 58-59, 69-70:

² Տե՛ս Հ. Զ. *Պեպրոսյան*, Ս. Ա. *Գալստյան*, Թ. Ա. *Ղարագոյլյան*, Լեզվաբանական բառարան, էջ 42:

տեղի արլատիվ՝ ներգոյականի իմաստով. օր՝ *aquā* «ջրից, ջրով, ջրում (ջրի մեջ)», *terrā* «հողից, հողով, հողում», *auditoriā* «լսարանից, լսարանով, լսարանում» և այլն, որ նշանակում է, թե միևնույն ձևի մեջ (*ā* վերջավորության միջոցով) ձույլ հանդես են գալիս մի քանի հոլովի քերականական իմաստներ:

Այսուհանդերձ, հայտնի է, որ այս տերմինը առաջ է քաշվել հատկապես ամերիկյան լեզուների վերաբերյալ գիտության մեջ, լեզվաբան Է. Մեյիի կողմից, որ նկատի է ունեցել հիշյալ լեզուներում քերականական իմաստով ածանցման հատուկ տիպ, որ ուղեկցվում է հնչյունական փոփոխությամբ՝ մոտենալով ձևային սահմանին:

Այն, ինչ գրաբարի մեջ *աշակերտաւք* «աշակերտներով», *երթամք* «գնում ենք» և այլն ձևերում վերջավորության միացումը հիմքին, թերևս, ձուլման օրինակ է, լեզվաբանության մեջ ընդունված է կոչել *կումուլյացիա* (լատ. *cumulō* «խրար վրա դնել, ավելացնել, ամբողջացնել, լրացնել»), որը տարբերվում է ձուլումից, այն է՝ քերականական որոշակի կարգեր նշանակող քերականությունների (գրամեմաների) համակարգային անտրոհելիությունը յուրաքանչյուր *թեք* (ֆլեկտիվ) ձևային մեջ:

Ձուլման տարբեր տեսակները պայմանավորված են լեզվի մակարդակային միավորների առնչությամբ. տարբերում են ձևային մակարդակի սահմանագծում տեղի ունեցող ձևահնչյունական (մորֆոնոլոգիական) ձուլման երկու տեսակ՝ ընդհանուր և մասնակի:

Ձուլում է այն, որ քերականական սեռն արտահայտվում է գոյականների համար նույն ձևայինով. հմմտ. լատ. *-us* (ար. սեռ), *-a* (իգ. սեռ), *-um* (չեզոք սեռ)՝ *filius* «արու զավակ՝ ուստր», *filia* «ղուստր», *verbum* «բառ. բայ». առանց այդ սեռանիշ վերջավորությունների հիշյալ բառերը չեն ըմբռնվի որպես այդպիսին և այլն: Մասնակի է այն ձուլումը, որ տվյալ հնչույթը միանում է բառի հիմնական մասին (արմատին)՝ նրան հաղորդելով քերականական այս կամ այն իմաստը. օր.՝ լատ. *pax* (< *paciscor* «համաձայնվել») «խաղաղություն» (**pac-* + *s* > **pacs* > *pax*) և այլն: Բերված օրինակները նմուշ են ձուլման՝ հնչյունական (ձևահնչույթային) մակարդակում:

Ընդունվում է նաև բառային, ձևային, որոշ դեպքերում նաև շարահյուսական մակարդակի ձուլման հնարավորություն, օր.՝ հայ. (խսկց.) *եսիւմ* (< *ես ինչ իմանամ*) «չգիտեմ, չեմ իմանում», (խսկց.) *բարիկուն* (< *բարի իրիկուն*) «բարի երեկո» և այլն:

Բառափոխության վերը բերված և սեղմ ձևով բացատրված երևույթները տարբեր լեզուներում նկատված իրողություններ են, որոնցից, բնականաբար, այս կամ այն եղանակը հանդես է գալիս լեզուներից մեկում կամ մյուսում, այն էլ՝ ոչ ամբողջությամբ, այլ մասնակիորեն: Դրանք նաև հայերենում են մասամբ տեղ գտնում, իսկ մյուսների նկարագրության և պարզաբանման նպատակով հայերենի հնարավորությունները գործադրվում են մոտավոր համընկման սահմաններում:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 93-94:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 443-456:

Широков О. С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

Թեմա 7. Խոսքի մասերի բնորոշումը. առաջացումը և զարգացումը

Հիմնահարցեր: *Բառի խոսքիմասային սահմանումը: Խոսքիմասային միավորների և իրականության, նրանց նշանակման հարակից միջոցների բնորոշումը: Խոսքիմասային միավորների առաջացման հիմունքները:*

1. Լեզուներում խոսքի մասերի քննությունը ամենից առաջ քերականական մակարդակի երևույթ է: Լեզվի բաղադրիչների միջակա, կենտրոնական մասը բառային մակարդակի միավորն է՝ բառը, որն ընկած է, մեր պատկերացմամբ մի կողմից՝ հնչույթի, իսկ մյուս կողմից՝ նախադասության միջև: Հայտնի է, որ հաղորդակցվել նշանակում է հողաբաշխ տարրերով՝ հնչույթներից սերված բառերով կազմել նախադասություն, որպեսզի միտք արտահայտվի, մարդկանց միջև տեղի ունենա փոխըմբռնում և այլն, որը իմացական և գեղագիտական առումներով անհրաժեշտ է հասարակության համար, և դա եղել է բոլոր ժամանակներում:

Մտքի արտահայտման տարրերից երկուսը՝ *անունը* (տվյալ դեպքում՝ գոյականը) և *բայը*, հիմնական են, իսկ մնացածը՝ լրացյալ, ածանցյալ: Իսկ թե որն է այդ երկուսից ամենահիմնականը, առավել կարևորը, եղել է հին ժամանակներից եկող տարակարծության առարկա: Խոսքի մասեր անվանումը վերացական, գիտական հասկացություն է, իրականության մեջ կան հնչույթային հատույթներ, որոնցով կազմվում է խոսքը: Խոսքի մասերի առանձնացում, դասակարգում հասկացությունները որքան գիտական են, նույնքան ունեն իրական (ոեալ) հիմքեր:

Մարդկային հողաբաշխ լեզվի մեխանիզմի պատմությունը ինչ-որ չափով հնարավորություն է տալիս միմյանցից տարբերելու խոսքի բաղադրիչները ոչ միայն հնչյունական (ձայնային) հոսքի անընդհատության մեջ, «նկատելու» ընդհատումներ, այլև որոշ իմաստով ըմբռնելու դրանց արտալեզվական առարկայական (օբյեկտիվ) վերաբերությունը: Արտասանվածքի և նրա վերաբերության անընդհատ իրականացումը տեղ է բաց անում *փորձին*, որը կարևոր նշանակություն է ձեռք բերում խոսքի ճանաչման մեջ՝ կապված նրա բաղադրիչ

մասերի՝ հնչական հատույթների և վերհատույթային տարրերի տարրերության հետ:

Գիտական (իմացական) առումով խոսքի (բաղադրիչ) տարրերը անվանվում են իրենցով՝ խոսքի մասեր («մասունք բանի»), թե այդ մասերից որը (կամ որոնք) ունեն առաջնություն, իսկ մյուսները մնում են ոչ առաջնային, հին աշխարհի գիտության մեջ առաջ են քաշվել տարրեր տեսություններ: Ըստ նրանցից մեկի՝ առաջնային են առարկա նշող միավորները՝ գոյականները և այլն, որոնցով հնարավոր է եղել հաղորդակցվել, այսպես կոչված, անվանումային (նումինատիվ) ձևով, իսկ ըստ մեկ ուրիշի՝ առարկայի շարժումային հատկանիշ նշող միավորները՝ բայերը, որովհետև դրանք գործողություն են ցույց տալիս: Մի դեպքում շեշտը դրվել է առարկաների և նրանց հատկանիշների ճանաչման վրա, մեկ այլ դեպքում՝ կատարված գործողության, նույնիսկ իբրև առարկաների շարժումային հատկանիշ: Վերջապես, այդ երկուսն ավելի առաջնային են համարվում մյուս կարգի միավորների համեմատությամբ: Հայտնի է նաև տեսություն, ըստ որի ոչ էական, ոչ առաջնային միավորներն են դիտվել էական ու առաջնային (օր.՝ Լ. Նուարեի, այսպես կոչված, բնական ճիշտի տեսությունը): Այս մոտեցումների մեջ հետագայում կատարվում են ճշգրտումներ, լրացումներ և այլն, որոնք առավելապես վերաբերում են լեզվի մասին գիտության պատմությանը:

Խոսքի մասերը բնորոշվում են լեզու և հասարակություն կապի մեջ, քանի որ լեզուն հասարակական երևույթ է, ինչպես բազմիցս նշվել է, առաջ է եկել մարդկանց համակեցության պայմաններում, ուստի դրանք քերականական իմաստի կրողներ են մտածողության զարգացման ընթացքում. բուն խոսքի մասերով արտահայտվող քերականական կարգերը նույնն են, ինչ մտքի տրամաբանական կարգերը:

Ճանաչողության մեջ առարկան և նրա հատկանիշը միասնական են և անբաժանելի: Առարկան չի լինում այլ կերպ, քան այս կամ այն հատկանշության (ատրիբուցիայի) ձևով. *ծառը* լինում է կանաչած, փարթամ, բազմաճյուղ, պտղաշատ, դեկորատիվ, և հակառակը՝ տեր-

ևաթափ, չորացած, ճղակոտոր և այլն, շունը լինում է մանր, նվազ, խեղճացած, քաշվող և այլն, և հակառակը՝ կատաղի, գիրացած, վտանգավոր և այլն: Թվարկվածները *ծառ* և *շուն* առարկաների (բուսական և կենդանական միավորների) հատկանիշներ են՝ մեր պատկերացմամբ, մենք ենք դրանք նկատում նրանց «վարքի» մեջ, վերագրում նրանց՝ մեր փորձից ելնելով:

Առարկայի և հատկանիշի միասնության մեր՝ հասարակության անդամների ընկալումները անբաժան են, միանգամայն իրական, գոյություն ունեն որպես օբյեկտիվ իրականություն: Իսկ իբրև ճանաչողություն մեր ունեցած փորձի, դրանք միայն պայմանականորեն ենք զատում իրարից, դիտում իբրև մեկ ամբողջություն, *ծառ*՝ իր հատկություններով, *շուն*՝ իր հատկություններով և այլն:

Այս վերջինը, ինչպես ասվեց, մարդկության տևական փորձի արդյունք է: Ըստ այդմ, երբ ասում ենք, թե մարդը բանական արարած է, ի տարբերություն ոչ բանական արարածների, վերջիններս՝ բնագրական, բուսական աշխարհը «կենդանի» մարմին (օրգանիզմ), շրջակա միջավայրը անկենդան բնություն և այլն,- այդ ամենը դիտարկվում է ըստ այնմ, որ առարկան և իր հատկանիշը (հատկությունը) մեկն են, ամբողջովին միասնական:

Այսպիսով, խոսքի մասերը, իբրև իրականության, արտաքին աշխարհի նշանակումներ, այդպիսին են կամ իբրև առարկայի, կամ իբրև վերջինիս հատկանիշների և հարակից լրացումների (ատրիբուցիաների) նշանակիչ: Ըստ այդմ՝ պատմականորեն առաջացել են գոյականները և բայերը (առարկան և առարկայի շարժումային հատկությունը), այնուհետև ավելի վերացարկված հատկանիշները (ածական, մակբայ), այլև նշվածներից առաջինի առավել վերացարկված փոխարինիչներ (դերանուն), բացարձակ վերացարկվածները (թվական) և այլն:

Լեզվի առաջացման նախնական շրջանում խոսքի մասերի տարբերակում չի եղել, մանավանդ որ նման առաձևացումը գիտական մոտեցում է ենթադրում, իսկ նախամարդու կամ նախնական պայմաններում ապրողների համար հողաբաշխ հաղորդակցումն իսկ ամենևին չի ենթադրում նման առանձնացում:

Այդ առանձնացումը գիտական մտքի արդյունք է: Լեզվի հնչյունական գրեթե յուրաքանչյուր հատույթ կարող է եղած լինել արդեն հաղորդում՝ մտքի, մտածածի, անհրաժեշտ ասելիքի փոխանցման և ստանալու համար: «Այս նախնական շրջանում, բնականաբար, բառը հանդես էր գալիս ո՛չ իբրև գոյական կամ ո՛չ իբրև բայ, այլ իբրև անուն, որ իր մեջ էր առնում և՛ առարկայի, և՛ նրա հատկանիշների միասնական հասկացությունը: Լեզվի և մտածողության հետագա զարգացումը հանգում է այն բանին, որ մարդը, վերացման և ընդհանրացման շնորհիվ, կարողանում է անջատել առարկան հատկանիշից և, այդպիսով իսկ, իր գիտակցության մեջ ստեղծել գոյականների ու բայերի կատեգորիաները»¹:

Գրեթե նույն ժամանակներում և նույնպիսի պայմաններում գոյականների և բայերի հետ միաժամանակ առաջանում են դերանունները, մանավանդ անձնական և ցուցական, որովհետև *ես*, *դու*, *ինքը*, այլև *այս*, *այդ այն*, *սա*, *դա*, *նա* և նման բառերով հիմքում ընկած հասկացություններ արտահայտելու, սովորական և նախնական պայմաններում փոխանցելու կամ ստանալու համար մարդկանց միջև շփումը, պետք է ենթադրել, ամբողջովին սուբյեկտիվ հիմքեր է ունեցել: Ինչպես գիտենք, դերանուններն առհասարակ ցուցականության նշանակիչ միավորներ են լեզվական հաղորդակցման գործընթացում: Այնուհետև, մտածողության անընդհատ զարգացման ընթացքում առանձնանում են ածականները՝ իբրև առարկայի նշանակիչ, ինչպես նաև մակբայները՝ իբրև հատկանիշի հատկանիշ արտահայտող բառ: Այսպիսով՝ ինչպես ցույց է տալիս մարդու հոգեմտավոր գործունեության պատմությունը, առաջնային խոսքիմասային միավորներ են եղել գոյականը, բայը, այնուհետև դերանունը, ածականը և մակբայը:

Այս համատեքստում բավականին յուրօրինակ է թվականների առաջացման հարցը, որովհետև դրանք նախ՝ ամենից վերացարկված հասկացությունների նշանակումներ են, և երկրորդ՝ կապվում են ոչ այնքան առարկայի կամ նրա այս կամ այն կարգի հատկանիշի նշանակման հետ, որքան, ըստ էության, ավելի բարդ հոգեմտածողական գործընթացի՝ հաշվելու հետ: Այս ոլորտում մարդկային մտածողու-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 529-530:

թյունը տարբերությունների մեծ ելևէջ (գամնա) է ներկայացնում. հայտնի են *երկյակ* (գույգ՝ իբրև մեկ միավոր. խսկց.՝ «ջուխտ»), *երյակ* (օրինակ՝ տարվա եղանակները), *քառյակ* (տարին՝ իբրև մեկ միավոր), *հնգյակ* (մարդու մասների խումբը՝ իբրև մեկ ամբողջություն. հմմտ. հայ. *փունջ*, պրսկ. *pança* «հինգ» < հե. *penk^e «հինգ») և այլն: Եվ պատահական չէ, որ նույնիսկ ներկայումս կան ժողովուրդներ, որոնք գտնվում են հաշվարկման այս կամ այն աստիճանի վրա՝ սկսած, այսօրվա պատկերացման համեմատությամբ, պարզունակ (պրիմիտիվ) ձևից:

Այնուհետև, հնդեվրոպական ներկայիս լեզուների հաշվարկային համակարգը նախապատմական վիճակի համեմատությամբ կրել է զգալի փոփոխություններ: Լատիներենում, օրինակ, հաշվարկումը եղել է հնգյակ (հուն. *πεντα-*, լատ. *quinque* «5»), որ նկատում ենք գրավոր նշանակման մեջ (I-V, որտեղ չորսը հնգից մեկով պակաս, վեցը՝ մեկով ավել՝ IV և VI, այդպես նաև՝ IX - XI և այլն), իսկ ֆրանսերենում, անգլերենում և գերմաներենում հաշվարկը, կարելի է ասել, եղել է «դյուժինային», այսինքն՝ 1-12-ի համար կան առանձին բառ-անվամուսներ (ֆրանս. *onze* «11», *douze* «12», գերմ. *elf* «11», *zwölf* «12»)՝ իբրև ոչ-հնդեվրոպական և այլն:

Վերջին ժամանակներս լույս են տեսել բավականին ուշագրավ աշխատանքներ հնդեվրոպական լեզուների, և առհասարակ՝ մարդկային մտածողության այդ յուրօրինակ երևույթի վերաբերյալ, որը, կարելի է կարծել, նոր լույս է սփռում առհասարակ թվերի վերացարկումային բնույթի վրա, ինչպես նաև դրանց՝ այս կամ այն խմբի, նաև առանձին լեզուների այս կամ այն կարգի դրսևորումների հետ կապված (Գ. Վ. Ստեպանով և ուրիշներ):

Նախնական տվյալներով թվականները եղել են գոյականներ: Է. Բ. Ադայանը ևս նշում է, որ թվականները թիվ չեն ցույց տվել, այլ գոյականներ են, արտահայտել են առարկայական հասկացություն. «այնպիսի գոյականներ, ինչպես *մայր* (= 1), *զույգ* (= 2), *ձեռք* (= 5), *զույգ ձեռք* (= 10)» (ընդգծումները մերն են - Վ. Հ.) և այլն: Սա, իրոք,

¹ Է. Բ. Ադայան, նշվ. աշխ., էջ 532:

այդպես է, որովհետև հե. *sem- ձևից է ծագում *մի* «մեկ» բառը, որ հետագա իմաստային զարգացմամբ տվել է տարբերակներ: Այնուհետև՝ մինչև այժմ գոյություն չունի հայ. *երկու* թվականի, իբրև բնիկ բառի, հավաստի ստուգաբանություն, եղած փորձերը (Ա. Մեյե, Հ. Աճառյան, Շ. դը Լամբերտրի, Վյաչ. Վս. Իվանով և ուրիշներ) մնում են լոկ հավանականի սահմանում, քանի որ փորձել են բխեցնել հե. *d^u(o)- արմատից, հեռու են հավաստի և համոզիչ լինելուց: Այստեղ, չխորանալով հարցի ստուգաբանական-իմացական քննության մեջ, հարկ կա միայն նշելու, որ այն *մի* «(մատն)ացուցիչ») բառի հետ կազմում է, նախնական մտածողությամբ, երկյակ (դուալ) բաշխման «մյուս» մասի կրողը (1-2 «այս և մյուսը. այս-մյուս»). հմմտ. *երկ-նչ-իմ*, *երկ-իւղ*, *երկ-ար*, *երկ-ան(ք)* (< **ե-րկ*) // *կր-կին* (< **կր-*) և այլն: Հարցի լայն քննարկումը թողնելով հայերենի համեմատական ուսումնասիրությանը, թռուցիկ կարելի է անդրադառնալ նաև հայ. *հինգ* բառին, որը ևս, նախնական իմաստով ոչ թե թվական, այլ գոյական պիտի եղած լինի, իրոք, ոչ այլ ինչ, քան «հինգ» (հինգ միավորից բաղկացած մի ամբողջություն), որ ծագում է, ինչպես վերը նշեցինք, հե. *penk^ue «հինգ» ձևից, որը հավանական ենք համարում, քանի որ ապացուցվում է լրացուցիչ օրինակով, այն է՝ ունենք հայ. *փունջ* «(ծաղկի և այլնի) որոշակի կապ» բառը, որի «ծագումն անհայտ» է¹, թեև այն համեմատելի է հնդկական (հմմտ. հինդկ. *panç* «հինգ»), իրանական (հմմտ. պրս. *panç* «հինգ», միտ. ար. *panca* «հինգ») ձևերի հետ. ըստ այսմ *փունջ* բառի նախնական իմաստը, կարծում ենք, պիտի եղած լինի «հինգմասնյա ամբողջություն», հետագայում առհասարակ մի որոշակի «ամբողջություն» (հմմտ. հայ. բրբռ. *դասարս*, որ իրանական փոխառություն է, ինչպես որ՝ *դասարակ* «ձեռքի մաս՝ հինգ մատներով հանդերձ»): Այսպիսով, նկատելի է, որ նման բառերը, տվյալ դեպքում թվականները, տևական ժամանակի ընթացքում, կորցնելով իրենց նախնական, առարկայանիշ (բառային) իմաստները, ձեռք են բերել ավելի վերացարկված իմաստներ՝ անցնելով այլ խոսքի մասերից թվականներին:

¹ Գ. Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 768:

Խոսքի մասերի առանձնացումը ևս մտնում է երկպլանային միավորների բաշխման սկզբունքի մեջ: Լեզուներում բառային խմբերն առաջանում են ոչ միայն արտահայտության պլանի վերադասավորմամբ, այլև հաշվի է առնվում, ավելին՝ չի անտեսվում նրանց բովանդակության պլանը, այն է՝ իմաստային կողմը: Ըստ այդմ լեզուներում, օրինակ, գոյականներ են այն միավորները, որոնք ցույց են տալիս առարկա կամ առարկայական հասկացություն, և դրսևորվում են դրանց արտահայտիչ մասնիկներով. օր.՝ լատ. -us/er, a, um, (lupus «գայլ», aqua «ջուր», ager «հող», verbum «խոսք, բայ» և այլն), ռուս.՝ -ик, -а, -о (ученик «աշակերտ», страна «երկիր», окно «պատուհան» և այլն): Հայերենն այս դեպքում նախատիպ ձևերում, պարզ բառերի մեջ սեռի քերականական կարգի արտահայտման համար չունի ձևային տարերակիչ միջոցներ՝ կապված բնիկ բառերի մեջ նախավերջին վանկի կայունացման, այսինքն՝ վերջին վանկի թուլացման և անկման հետ (հմմտ. հե. *yed-os-io, «ջուր», որից հայ. *գեյր-ո-յ*) և այլն: Եթե, օրինակ, ռուսերենի, լատիներենի և նման այլ լեզուների մեջ կան սեռանիշ մասնիկներ, ապա հայերենում դրանց բացակայությունը «լրացվում է» գոյականակազմ *-ություն, -ուհի (բար-ություն, բարեկամ-ուհի* և այլն) ածանցների միջոցով:

Հայերենում կոնկրետ խոսքի մասերի բաժանման հիմունք ընդունելով վերը նշված երեք՝ բառերի խոսքիմասային իմաստները, բառերի ձևային-ձևաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև խոսքի մեջ նրանց շարահյուսական կիրառությունները, ինչպես Է. Բ. Աղայանն է կատարում, - «լեզվի ամբողջ բառապաշարը կարելի է բաժանել հինգ կարգի՝ առարկայի հասկացություն արտահայտող բառեր, հատկանիշ արտահայտող բառեր, զգացմունքի բառեր, խոսքամասային իմաստ ունեցող բառեր, բառիմաստից զուրկ բառեր»¹:

1) Առարկայի հասկացություն արտահայտող բառերը գոյականներ են, որ մասնավորապես ցույց են տալիս իրեր և երևույթներ. օր.՝

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 512: Ի դեպ, *խոսքամասային* տերմինի փոխարեն նախընտրելի է *խոսքիմասային* տերմինը, որը նախ՝ ավելի իրական է հիմքում ընկած իմաստի նշանակման առումով, երկրորդ՝ դրանք ունեն բառիմաստային որոշակի տարբերություններ՝ բառաբարդման և բառակապակցման հիմունքով (հմմտ. *աղսիսանք* և *աղի հսնք*):

ծառ, փուն, ամպրոպ, ջուր և այլն, անձեր. օր.՝ մարդ, բնակիչ, աղջիկ, քույր և այլն, գործողություն և վիճակ՝ վերցված առարկայաբար, այսինքն՝ անկախ ժամանակից ու գործողից. օր.՝ մարզանք, թռիչք, ընթերցող և այլն, հատկանիշ և որակ՝ որպես առարկայական վերացական ըմբռնում, անկախ այն կրողից, օր.՝ հերոսություն, քաջություն, հուզում, վճիռ և այլն:

Գոյականները լինում են երկու տեսակ՝ հասարակ և հատուկ: Վերը բերված օրինակները հայերենում հասարակ գոյականներ են: Հատուկ գոյականները, իրենց հերթին, բաժանվում են մի քանի խմբի՝ ըստ անվանվող առարկայի իմաստային-գործառական տարբերության.

ա) բուն հատուկ անուններ (հատկանուններ), որ կազմում են մի քանի ենթախումբ. մարդկանց անուններ (անձնանուն, ազգանուն, տոհմանուն, խմբանուն)՝ սեռային, ազգակցական և այլն բաշխմամբ. օր.՝ Ռուբեն, Աշիեն, Բալայան, Վարդանենք, Միխիթարյանք և այլն, աշխարհագրական անուններ (ջրանուններ, լեռնանուններ և այլն), քաղաքական և այլ միավորումների անուններ. օր.՝ Հայաստան, Կենտրոնական Ասիայի երկրներ և այլն,

բ) իբրև հատուկ անուն դիտվող անվանումներ. գրական, գեղարվեստական, արվեստի և այլ երևույթների անվանումներ. օր.՝ «Անուշ» պոեմ, «Ալմաստ» օպերա և այլն, քաղաքաշինական, արտադրական և այլն երևույթների անվանումներ. օր.՝ Երևանի մեարդուպոլիսեն, Պոռոջանի կոնյակի գործարան և այլն:

Գոյականներին բնորոշ են հոլովի, սեռի, թվի, առկայացման քերականական կարգերը: Հայերենը, օրինակ, չունի սեռի քերականական կարգ, որ ունեն, օրինակ, ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը և այլն:

Հայերենը, ռուսերենը, գերմաներենը ունեն հոլովի քերականական կարգ, որ հատուկ չէ, օրինակ, ֆրանսերենին և անգլերենին: Ռուսերենն ունի -ь, -а, -о, -е, -я, նաև բաղաձայն վերջավորություններ, որոնք նաև սեռ են ցույց տալիս. բաղաձայն և -ь (արական սեռ՝ студент «ուսանող», учитель «ուսուցիչ» և այլն), -ь, -а (իգ. սեռ՝ сирень «եղրևանի», страна «երկիր» և այլն) և -о, -е, -я, (չեզոք սեռ՝ окно

«պատուհան», more «ծով», время «ժամանակ»), ֆրանսերենում արական և իգական սեռերն հիմնականում արտահայտվում են ø (գրո) / -e ձևայինների հակադրությամբ և այլն:

Հայերենին բնորոշ է առկայացման կարգը, որն ունի ձևաբանական կազմ. հմնտ. *սար – սարը, գիրք – գիրքս, գիրքդ* և այլն, մյուս լեզուներում այն իրականանում է նախդիրների միջոցով, ֆրանս.՝ *le, la, un (e), գերմ.՝ der, die, das, անգլ.՝ the* և այլն:

2) Լայն իմաստով հատկանիշ են արտահայտում բայը, այլև ածականը, թվականը և մակբայը: Ըստ Է. Բ. Ադայանի սահմանման՝ «բայը ցույց է տալիս առարկայի փոփոխվող հատկանիշ ժամանակի մեջ», մի սահմանում, որն իր շարունակության մեջ անմիջապես բացատրվում է ժամանակի հարաբերությամբ առնվելու կամ բացառվելու լրացուցիչ մասով, ուստի այդ նկատառումով կարելի է տալ բայի ավելի ամբողջական սահմանում. այն բառերը, որոնք կոնկրետ ժամանակի հարաբերությամբ կամ որևէ հարաբերությունից դուրս ցույց են տալիս առարկայի փոփոխվող հատկանիշ ժամանակի մեջ, կոչվում են բայեր: Նման սահմանումով էլ բնորոշվում են ոչ միայն եղանակային-ժամանակային (դիմավոր), այլև վիճակային (անդեմ) բայերը. դերբայները առարկայի փոփոխվող հատկանիշ են ցույց տալիս առանց ժամանակի հարաբերության (*գնալ, գնում, գնալիս* և այլն), իսկ դիմավոր ձևերն այն հատկանիշը ցույց են տալիս ժամանակի հարաբերությամբ (*գնում է, գնացել էր, գնալիս է եղել* և այլն):

Բայի էությունը եղանակային և ժամանակային ձևեր կազմելն է, որն անմիջական է խոսքի դրսևորման համար՝ իբրև իրականության հաղորդակցական արտահայտություն ժամանակի մեջ, այնինչ մյուս՝ վիճակային ձևերը (դերբայները) այսպես թե այնպես բայի ժամանակից դուրս փոփոխվող հատկանիշ ցույց տալու հնարավորություն չունեն, նրանք առավելագույնը վիճակի, կացության «դեր» կարող են իրականացնել: Հայերենի բայերն իրենց բնույթով զգալիորեն տարբերվում են հնդեվրոպական մյուս լեզուների վիճակային ձևերից (ոչ բուն դերբայ իմաստով, ինչպես հայերենում. օր. լատ.՝ *supinum* (< *supināre* «շուռ տալ՝ հակառակ երեսին դարձնել») (անորոշ բայ),

gerundium (< gerēre «գործել՝ տանել, կրել») (բայ-գոյական), gerundivum (բայ-ածական) ձևերը և այլն:

Հայերենում բայն ունի հատուկ վերջավորություններ, որոնք սովորաբար կոչվում են խոնարհիչներ. դրանք բայի բնի ձայնավորի և բուն վերջավորության (-մ կամ -լ) միացություն են, գրաբարում՝ *-ել, -ալ, -իլ, -ուլ*, որ բառարաններում և դասագրքերում բերվում են սահմ. եղ. ներկայի առաջին դեմքի ձևով՝ *բերել, աղալ, փահսել, թողում, իսկ ժամանակակից հայերենում՝ -ել, -ալ (բերել, աղալ, փահսել, թողնել*. գրական արևմտահայերենում՝ նաև *-իլ. խօսիլ*):

Հնդեվրոպական հին լեզուներից, օրինակ, լատիներենն ունի *-āre, -ere, -(ē)re, -ire* վերջավորությունները՝ *amāre* «սիրել», *cantāre* «երգել», *docere* «ուսուցանել», *delere* «ավերել», *tangere* «կպչել», *tegere* «ծածկել», *audire* «լսել», *finire* «ավարտել» և այլն, իսկ այժմյան գերմաներենում բայն ունի *-en* վերջավորությունը՝ *bringen* «բերել», *sehen* «տեսնել», *bleiben* «մնալ», *sagen* «ասել», *schreiben* «գրել» և այլն, ֆրանսերենում՝ *-er, -ir, -re, -oir* վերջավորությունները՝ *manger* «ուտել», *mourir* «մեռնել», *suivre* «հետևել (մեկին և այլն)», *venir* «գալ», *avoir* «ունենալ», *savoir* «գիտենալ» և այլն: Անգլերենը, սակայն չունի բայական հատուկ վերջավորություն, որի փոխարեն հանդես է գալիս *to* բառ-մասնիկը, որպիսով տվյալ բառը հասկացվում է իբրև բայ՝ *(to) eat* «ուտել», *(to) speak* «խոսել», *(to) come* «գալ», *(to) go* «գնալ», *(to) read* «կարդալ» և այլն:

Կան նաև լեզուներ, որոնցում բայական վերջավորությունների փոխարեն գործադրվում են այլ միջոցներ: Կովկասյան լեզուներում, օրինակ, անորոշի փոխարեն գործածվում է բայանուն, կամ էլ «տվյալ բայից կազմված համապատասխան գոյականը, օր.՝ վրացերեն *չոբա* «գիտենալը, գիտություն», *Վչոժ* «գիտեն», *գզաճ* «ուղարկելը, առաքում», *Վգզաճ* «ուղակում են» և այլն»¹:

3) Ածական կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի անփոփոխ հատկանիշի հասկացություն. *մեծ, գեղեցիկ, լավ, զվարթ* բառերը ածականներ են, որովհետև արտահայտում են այն-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 513-514:

պիսի հատկանիշ, որը մնայուն է և միևնույն իմաստն է ունենում՝ ցանկացած գոյականի վրա դրվելիս. *մեծ դաժիճ, մեծ այգի, մեծ փուն, գեղեցիկ դահլիճ, գեղեցիկ այգի, գեղեցիկ փուն* և այլն: Ածականի բառիմաստային այդ կայունությունը գրեթե բոլոր լեզուներում այդպիսին է, սակայն ձևի (= ձևաբանության) կամ շարահյուսական կիրառության տեսանկյունից այն ունենում է տարբերություններ:

Այսպես, հայերենում ածականը չունի քերականական սեռի կամ թվի արտահայտիչ մասնիկներ (կամ ածանցներ)՝ ի տարբերություն, ասենք, ռուսերենի, ֆրանսերենի և այլն: Հին հայերենում ածականը թվային և հոլովական համաձայնություն ուներ գոյականի հետ՝ իբրև որոշիչ-որոշյալի կապակցություն. *փուն գեղեցիկ, փան գեղեցիկ, ի փանէ գեղեցկէ* և այլն, *փունք գեղեցիկք, փանց գեղեցկաց, ի փանց գեղեցկաց* և այլն, իսկ նոր գրական հայերենում այս երևույթի ընդհանուր փոփոխությամբ տեղի է ունեցել ոչ միայն հոլովով, այլև թվով համաձայնության վերացում՝ երևույթի պարզեցում, այն է՝ ածականը, իբրև որոշիչ, իր լրացյալի՝ որոշյալի հետ քերականորեն չի համաձայնում՝ *մեծ փուն, մեծ փան, մեծ փանից* և այլն, *մեծ փներ, մեծ փների, մեծ փներից* և այլն:

Այնինչ, ռուսերենում, գերմաներենում որոշիչ-որոշյալ կապակցության մեջ որոշիչ ածականը կարող է համապատասխան ձևավորում ունենալ, այսինքն՝ հոլովով և թվով համաձայնել: Ավելին, համաձայնություն կարող է տեղի ունենալ գոյականի և նրա լրացում ածականի միջև ըստ քերականական սեռի և թվի. հմմտ. хороший студент «լավ ուսանող», хорошего студента «լավ ուսանողի», хорошему студенту «լավ ուսանողին», хорошие студенты «լավ ուսանողներ», хороших студентов «լավ ուսանողների» և այլն, интересная книга «հետաքրքիր գիրք», интересней книги «հետաքրքիր գրքի», интересные книги «հետաքրքիր գրքեր», интересных книг «հետաքրքիր գրքերի» և այլն, маленькое озеро «փոքրիկ լիճ», маленького озера «փոքրիկ լճի» և այլն: Ըստ շարահյուսական առանձնահատկության հետաքրքիր է ածականի՝ իբրև որոշիչ, և գոյականի՝ իբրև որոշյալի, շարադասությունը. հին հայերենում, օրինակ, նման կառույցներում գերակայում էր ածական-որոշչի հետադաս գործածությունը, քան նա-

խաղաար, թեև վերջինս ևս կա, մանավանդ միավանկ ածականների դեպքում. հմմտ. *տուն մեծ, տան մեծի, հայր մեր, հարց մերոց* և այլն: Ֆրանսերենում որոշիչ-որոշյալի միջև համաձայնությունը լինում է միայն թվով և սեռով, քանի որ այդ լեզուն չունի հոլովում. *mon amie* «իմ բարեկամ(ը)», – *mes amies* «իմ բարեկամներ(ը)» և այլն:

Ածականները, ինչպես կտեսնենք իրենց տեղում, գոյականի ինչ-պիսին լինելը արտահայտում են երկու կողմով՝ որակի և առնչության, ուստի սովորաբար ասվող անվանումով (տերմինով) լինում են կան որակական, կան հարաբերական¹: Որակական են այն ածականները, որոնք ցույց են տալիս գոյականի ինքնակա հատկություն, որակ. *սպի-տակ* վարդ, *կապույտ* երկինք, *պայծառ* արև և այլն: Հարաբերական են կոչվում այն ածականները, որոնք ցույց են տալիս գոյականի ոչ ինքնակա՝ բաղկացական կամ վերագրումային հատկանիշ. *ոսկյա* մատանի, *երկաթյա* տրամաբանություն, *հայրական* տուն և այլն: Ռուսերենում և այլ լեզուներում (թերևս նաև հայերենի բարբառներում կամ խոսակցական լեզվում) ածականը կարող է ցույց տալ պատկանելություն՝ արտահայտվելով գոյականի սեռական հոլովով. հմմտ. ռուս. *отцов дом* «հոր տունը», հայ. (բրբռ.-խսկց.) *հոր տուն* «հոր(ե-նական) տուն» և այլն:

4) Ի տարբերություն ածականի, որ, ինչպես վերը տեսանք, ցույց է տալիս առարկայի որակի, հարաբերման հատկանիշ, թվականը ցույց է տալիս առարկայի քանակի հատկանիշ. *երկու* ուսանող, *երրորդ* լսարան, *մեկական* դասաժամ և այլն: Ինչպես հնդեվրոպական մի շարք լեզուներում, այնպես էլ հայերենում թվականները բառակազմորեն և իմաստով բաժանվում են գրեթե մեկ տասնյակ տեսակի՝ քանակական (*մեկ, երկու, երեք* և այլն), դասական (*առաջին, երկրորդ, երրորդ* և այլն), բաշխական (*մեկական, երկուական, երեքական* և այլն) և այլն, որոնց լեզվաբանական տեսական դիտարկումը կատարվում է ձևաբանության մեջ (տե՛ս ստորև):

¹ Թերևս ավելի իրական կլիներ կոչել *որականիշ ածականներ* և *հարաբերանիշ ածականներ*, որովհետև ոչ թե ածականն է որակի կամ հարաբերության կրող, այլ ցույց է տալիս գոյականի որակ կամ հարբերություն (այլ կերպ ասած՝ առարկայի իրական կամ վերագրումային հատկություն. *կանաչ* ծառ, *փայտե* նստարան և այլն):

5) Մակբայները, իբրև հատկանիշ արտահայտող բառեր, ավելին են ցույց տալիս, քան լոկ այս կամ այն հատկանիշը. նրանք, ընդունված է ասել, ցույց են տալիս այդ հատկանիշների հատկանիշը, որովհետև շարահյուսորեն կապակցվում են մի կողմից՝ ածականների հետ. հմմտ. *գեղեցիկ* պարտեզ – *շար գեղեցիկ* պարտեզ, *լավ* սենյակ – *շար լավ սենյակ*, *նվազ* կարողություն – *առավել նվազ* կարողություն և այլն, իսկ մյուս կողմից՝ բայերի. հմմտ. *հերոսաբար* պայքարել, *հիմա* գնալ, *ընկերովի* խրատել և այլն:

Ինչպես շատ այլ լեզուներում, այնպես էլ հայերենում մակբայներն ունեն խոսքիմասային նշանակիչ ածանցներ, *-արար՝ ընկերարար*, *մերերմարար*, *հայրարար* և այլն, *-ապես՝ հավասարապես*, *առանձնապես*, *նմանապես* և այլն, *-ովին՝ գլխովին*, *ամբողջովին*, *հիմնովին* և այլն, *-ակի՝ բազմակի*, *հնգակի*, *առանձնակի* և այլն, *-որեն՝ լայնորեն*, *լրջորեն*, *մեղմորեն* և այլն:

Նման բառակազմական միջոց ունեն, օրինակ, հին լեզուներից լատիներենը՝ *-e* (*alte* «բարձր», *late* «լայն, լայնորեն» և այլն), *-iter* (*celeriter* «արագորեն», *fortiter* «ուժգնորեն» և այլն), *-er* (*prudenter* «խելամտորեն», *benevolenter* «բարեհաճորեն» և այլն), նոր լեզուներից ռուսերենը՝ *-о, -ски* մասնիկներով՝ *медленно* «դանդաղ, դանդաղորեն», *неустово* «խենթորեն», *братски* «եղբայրաբար», *патриотически* «հայրենասիրաբար» և այլն, ֆրանսերենը՝ *-ement* և այլն մասնիկներով՝ *complètement* «լիովին», *particulièrement* «մասնավորապես», *parfaitement* «կատարելապես» և այլն:

Մակբայների շարահյուսական յուրահատկությունը խոսքի հանգամանքների (բայի պարագա լրացում լինելու) գործառույթն է. օր.՝ «Ամպերը *դանդաղ* ուղտերի նման // Նոր են ջուր խմած ձորից բարձրանում» (Թումանյան) և այլն:

6) Լեզուներում զգացմունք արտահայտող բառերը բացականչություններ կամ վերաբերականներ են: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ վերը քննարկված խոսքի մասերը, այսպես կոչված, լիիմաստ բառեր են, ապա այս վերջինները բնորոշվում են իբրև ոչ լիիմաստ բառեր (բնաձայնություն, նմանաձայնություն և այլն): Մրանց հիմնական գործառույթն այն է, որ օժանդակ դեր են կատարում լի-

մաստ բառերի՝ խոսքի մեջ առավել լիարժեք դրսևորմանը: Ճիշտ է, դրանք լեզվի նախնական վիճակներում հավանաբար չեն ունեցել բառական որևէ դրսևորում, սակայն ներկայումս եթե ոչ լիմաստ, ապա, հարկավ, լրացումային դեր ունեցող միավորներ են, որովհետև խոսքի մեջ արտահայտում են խոսողի զգացական՝ հուզական, ափսոսական, ցանկական և այլն մանրամասները, որպիսով խոսքը դառնում է ավելի ընկալելի և հազեցած: Հայերենում այդպիսին *ախ, վախ, ափսոս, երանի, ու՛ֆ* և այլն բառերը, բանավոր խոսքում ունեն հնչերանգային (ինտոնացիոն) հազեցածություն, իսկ գրավորում այն արտահայտվում է հատուկ կետադրությամբ: Խոսքի մասերի շարքում նման բառային միավորները զուրկ են ձևաբանական դրսևորումներից, այսինքն՝ չեն հոլովվում, հոդ չեն ստանում, շարահյուսական մակարդակում՝ ինչպես ընդունված է ասել, նախադասության անդամ չեն դառնում և այլն:

Նման խոսքիմասային միավորներ կան ոչ միայն հին, այլև ժամանակակից գրեթե բոլոր ծանոթ լեզուներում, քանի որ, մյուս կողմից, ունեն ճարտասանական-ոճական երանգավորում հաղորդելու հնարավորություն:

7) Խոսքիմասային իմաստ ունեցող, կամ ինչպես բնորոշվում է Է. Բ. Աղայանի կողմից մեկ այլ դեպքում՝ «նյութական իմաստից զուրկ, քերականական իմաստ արտահայտող» բառեր են դերանունները:

Առարկայի (լայն իմաստով) հատկանիշ արտահայտող չորս կարգի բառերին՝ բայ, ածական, թվական և մակբայ, հակադրորեն հարաբերակից է դերանունը, որը ցույց է տալիս փոխարինում, ոչ թե նրանց դեր կատարող, որ սխալմամբ հանդիպում է նորմատիվ քերականություններում: Է. Բ. Աղայանը, դերանվան սահմանման հարցում հետևելով ավանդույթին, մի դեպքում՝ գտնում է, որ դերանունները «արտահայտում են ոչ թե որևէ առարկայի կամ հատկանիշի հասկացություն, այլ որևէ խոսքի մասի (գոյականի և այլն) ընդհանուր իմաստ», իսկ մեկ այլ դեպքում՝ «դերանունները խոսքի մեջ փոխարինում են այլ խոսքի մասերի պատկանող բառերի, գոյականի, ածականի, թվականի, մակբայի (բայց՝ ոչ բայի)»¹: Վերջինս ավելի իրական և գնահա-

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 523:

տության կամ բնորոշման առումով ավելի ճիշտ սահմանում է:

Իսկ եթե փորձենք միասին դիտել վերևում բերվածը՝ երկու դեպքում տրված բնորոշումները, ապա կարելի է ասել, թե դերանունը փոխարինաբար արտահայտում է ոչ այլ ինչ, քան առարկայի անվան (գոյականի), հատկանիշի (ածականի և թվականի) և հատկանիշի հատկանիշի (մակբայի) ընդհանուր իմաստ:

Այն, որ դերանունը, իբրև ձևաբանական լիարժեք միավոր (ունի հոլովման, սեռի, թվի և այլն քերականական կարգեր), կարող է փոխարինել «լիմաստ» բառերին (գոյականին, ածականին և այլն) ամենից առաջ պիտի բնորոշվի բառիմաստային մակարդակում, հետո նոր որպես քերականական իմաստի կրող:

Ուստի դերանվանը թե՛ ձևաբանորեն և թե՛ շարահյուսորեն հատուկ են այն յուրահատկությունները, որ ունեն նրա փոխարինյալ մյուս՝ նշված խոսքիմասային միավորները: Դերանունն ունի բառային իմաստով տարբերակվող տեսակներ (անձնական, ցուցական, փոխադարձ և այլն), սեռի (օր.՝ լատիներենում, ռուսերենում, ֆրանսերենում և այլն) և հոլովման, դեմքի և թվի ձևաբանական հատկանիշներով բնորոշվող տեսակներ, ինչպես նաև շարահյուսական տարբեր կարգի գործառություն հանդես բերող յուրահատկություն (ենթակա, ստորոցյալի մաս և այլն):

8) Բառիմաստից զուրկ բառերն են կապերը, շաղկապները և հոդերը, որոնք մասամբ՝ ձևաբանական (օր.՝ կապերը համապատասխան կառույցներում), իսկ մեծ մասամբ՝ շարահյուսական բնույթի են:

Կապերն արտահայտում են լիմաստ բառերի հարաբերակցությունը խոսքում, հանդես են գալիս իբրև խնդրառու բառեր (պահանջում են որևէ խնդիր), և այդ բառերն էլ սովորաբար կոչվում են կապի խնդիր. օր.՝ *սեղանի վրա, սեղանի տակ, սեղանի մոտ, սեղանի կողքին, սեղանից հեռու* և այլն:

Հայերենում կապի խնդիրները դրվում են գրեթե բոլոր թեք հոլովներով, սեռականով՝ *իմ մասին, նրա մասին, գրածի վերաբերյալ* և այլն, տրականով՝ *ինձ համար, քեզ հետ, նրանց մոտ* և այլն, հայցականով՝ *դեպի վեր, դեպի նա, դեպի դուրս* և այլն, բացառականով՝ *քեզանից հեռո, քեզանից բացի, սրանից հեռո* և այլն: Հայերենի քերա-

կանություններում կապերը սովորաբար բաժանվում են երկու խմբի, իսկական կապեր՝ *դեպի, մոր, մասին* և այլն, անիսկական կապեր՝ *ժամանակ, պարճառով, վերաբերյալ* և այլն. վերջինները ընդհանուր առմամբ ունեն բառային նյութական իմաստ, սակայն խոսքում կարող են հանդես գալ շարահյուսական դերով՝ լինելով կապ. հմմտ. «Դասի ժամանակ չեն խոսում», «*Ժամանակով* կատուն ճոն էր» (Թումանյան). «Հանցանքը պարզելիս պետք է *պարճառը* տարբերել հետևանքից», «Անձրևների *պարճառով* հնձած խոտը փչանում է» և այլն:

Այն լեզուները, որոնք չունեն հոլովում, քերականական հարաբերություններն արտահայտում են կապերով (անգլերեն, ֆրանսերեն և այլն): Իսկ այն լեզուները, որոնք ունեն հոլովում, սովորաբար համատեղում են բուն հոլովական թեքումով և կապերի օգնությամբ արտահայտվող քերականական հարաբերությունները (հայերեն, ռուսերեն և այլն): Ռուսերենում ներգոյական հոլովը միայն կապական կառույցով ունի քերականական դրսևորում. հմմտ. местный падеж // предложный падеж «ներգոյական հոլով». հայերենում կարող են հիմնականում ազատ բաշխման հարաբերությամբ հանդես գալ երկու տիպի կառույցները. օր.՝ «Գիրքը դրված է *սեղանին* // Գիրքը դրված է *սեղանի վրա*». «Պայուսակում դրված են գրքեր // Պայուսակի մեջ դրված են գրքեր» և այլն:

Շաղկապները խոսքի մեջ ունեն այն դերը, որ իրար են միացնում, շաղկապում առանձին բառեր՝ իբրև բառակապացության բաղադրիչներ՝ *երկինք և երկիր, քուն թե արթուն, մերձ կամ հեռու* և այլն, ինչպես նաև նախադասության անդամներ կամ նախադասություններ: Հայերենում, օրինակ, դրանք ընդհանուր առմամբ չեն ունենում շարահյուսական առնչություն նախադասության այս կամ այն անդամի հետ՝ իբրև լրացում-լրացյալի հարաբերություն, սակայն կան դեպքեր, որ ենթադրվում է ստորոգյալի դրսևորում որոշակի եղանակի ձևով. օր.՝ *որովհետև* շաղկապը ենթադրում է երկրորդական նախադասության ստորոգյալի արտահայտություն հարկադրական եղանակի ձևով. «Գնում է աշխատանքի, *որովհետև պիտի ավարտի* կիսատ մնացած աշխատանքը» և այլն: Եվ հավանաբար այս հատկանիշով է լեզուներում կատարվում շաղկապների դասակարգում, նախ՝ իբրև համա-

դասություն և ստորադասություն արտահայտող միավորներ, այլև իրենց իսկ իմաստով պայմանավորված հանգամանքներ ցույց տվողներ՝ նպատակային (*որ, որպեսզի* և այլն), պայմանական (*թե, եթե* և այլն), հարաբերական (*որ*), հակադրական (*իսկ, բայց, սակայն* և այլն), պատճառական (*որովհետև, քանզի* և այլն):

Հոդեր են այն բառերը, որոնք ցույց են տալիս բառիմաստի կամ քերականական իմաստի կոնկրետություն: Առհասարակ լեզուներին բնորոշ է հոդի գործածությունը, իսկ լեզվից լեզու կան գործածության տարբերություններ:

Հայերենում *ս, դ, ն (ը)* հոդերն արտահայտում են պատկանելություն (*տեսիրտ* = իմ տետրը), ցուցականություն (*ասածս* = իմ այս ասածը), ստացականություն (*գիրքս* = քո տված իմ այս գիրքը), որոշալություն կամ դիմորոշություն (*ծնողը* = ծնող, որի մասին խոսվել է, ասվելը և այլն. հմմտ. *ծնողը* եկել է. կամ՝ *ծնողս* = ես՝ իբրև ծնող), և ի տարբերություն այլ լեզուների (օր.՝ գերմաներենի), չեն հոլովվում, եզակի կամ հոգնակի թվով չեն դրվում:

Սակայն նկատենք նաև, որ արդի հայերենում *ն (ը)* տարբերակային ձևերից հին հայերենում գործածվում է միայն *ն* հոդը, որն իր գործառական դիրքերը հետագայում կան կիսում է մյուսի՝ *ը*-ի հետ, կան հետզհետե իր գործառույթները զիջում է *ը*-ին՝ վերջինիս թույլ տալով դառնալու միակ հոդը մյուս երկուսի՝ *ս*-ի և *դ*-ի հակադրությամբ: Ինչպես նկատելի է նաև բերված օրինակներից, հայերենում հոդերը, կարելի է ասել, բազմագործառույթ բառական միավորներ են, այսինքն՝ միևնույն հոդը կարող է արտահայտել և՛ ստացականություն, և՛ դիմորոշություն: Այդուհանդերձ, հայերենում հոդերը լինում են մի քանի տեսակ. որոշիչ՝ *ն* կամ *ը*, ստացական՝ *ս, դ, ն (ը)*, դիմորոշ՝ *ս, դ, ն (ը)*. անորոշ հոդ հայերենում չկա, այլ այն ի հակադրություն որոշյալ հոդի, ունի, այսպես կոչված, \emptyset (զրո) արտահայտություն. հմմտ. *ուսանող* – *ուսանողը*, *մարդ* – *մարդը*. այստեղ *ը*-ով ձևերին հակադիր կողմը ենթադրում է «մի» անորոշ իմաստը, ըստ այդմ՝ *մի մարդ* – *մարդը* և այլն:

Ներկայիս եվրոպական լեզուներից գերմաներենի որոշիչ հոդերն են՝ *der, die, das* (*der Mann, die Frau, das Kind* և այլն), ֆրանսերենիը՝

le, la (le livre, la table և այլն), այնուհետև գերմաներենի անորոշ հոդերն են՝ *ein, eine, eines* «մի, ինչ-որ» ընդհանուր իմաստով, ֆրանսերենինը՝ *un, une* (*un homme, une femme* և այլն), ընդ սմին կան առանձին սեռերի համար տարբեր ձևեր (օր.՝ գերմաներենում), կան իգականի համար առանձին ձև (օր.՝ ֆրանսերենում և այլն), իսկ արականի և չեզոքի համար ընդհանուր (օր.՝ ֆրանսերենում և այլն): Անգլերենում հոդերը մի կողմից՝ ցույց են տալիս բառի որոշյալ կամ անորոշ լինելը, մյուս կողմից՝ կարող են բայը կամ ածականը գոյական, և հակառակը՝ գոյականը բայ դարձնել և այլն:

Հիմնական գրականություն:

Միշյան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 112-116:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 155-167:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 320-323:

Широков О. С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

Թեմա 8. Խոսքի մասերի դասակարգում և խոսքիմասային տեղաշարժեր

*Հիմնահարցեր: Խոսքի մասերի դասակարգման հիմունքները:
Բառերի խոսքիմասային տեղաշարժերի բնույթը և սահմանները:*

1. Հին աշխարհի քերականություններում առանցքային հարց է եղել բառերի խմբավորումը, որ կատարվել է մտքի ձևավորման մեջ բառերի վերաբերյալ ունեցած նախնական պատկերացումների սահմաններում: Ամենից առաջ տարբերվել են առարկա և առարկայի հատկանիշ՝ շարժում, թիվ, ձև և այլն նշանակող բառերը, որոնք խոսքում ունենում են տարբերություններ: Դրանք հիմք են հանդիսանում բառերի խմբավորման, որն այլ բան չէ, քան խոսքի մասերի առանձնացում:

Խոսքի մասերի դասակարգումը լեզվի մասին գիտության մեջ մեծ տարածայնություններ է հարուցել, որովհետև թե՛ նախկինում և թե՛ ներկայումս գոյություն չունի տեսական ընդհանուր մոտեցում, այլ ընդհակառակը՝ կան իրարից նույնիսկ տրամագծորեն տարբեր մոտեցումներ:

Այսպես, մի կողմից՝ հենվում են խոսքիմասային միավորների իմաստային-գործառական կողմի վրա, իսկ մյուս կողմից՝ խոսքի մասերը դիտում են իբրև բառերի տրամաբանական շարքեր, և ըստ այդմ՝ առանձնացման մեջ առաջնային են համարում ձևաբանական հատկանիշները: Մի մասը գտնում է, որ խոսքի մասերը քերականական իրակություններ են՝ հիմնված հատկապես բառերի ձևաբանական և շարահյուսական հատկանիշների վրա և, ըստ այդմ, ոչ բավարար չափով են հաշվի առնվում նրանց բառական (լեքսիկական) և բուն իմաստային հատկությունները: Այնուհետև, ի հակառակ այս վերջինի, շատ լեզվաբաններ գտնում են, որ խոսքի մասերի դասակարգման հիմքում վճռական է բառերի բառական (լեքսիկական)-իմաստային կողմը, որովհետև այն ունի ընդհանուր կարգային (կատեգորիական) նշանակություն:

Սակայն ամբողջ հարցն այն է, որ խոսքի մասերը, որպես բառական միավորներ, հանդիսանում են բառային-քերականական խմբեր,

որոնք միմյանցից առանձնանում են ինչպես բառապաշարային, այնպես էլ քերականական մի շարք հատկանիշներով: Վերջիններս խոսքի մասերի առանձնացման հիմք են հանդիսանում, այդպիսին են, օրինակ, բառային՝ առարկաների և երևույթների, ինչպես նաև վերջիններիս հատկանիշների նշանակման տարբերությունները, քերականական, ընդ որում՝ ձևաբանական՝ թեքվող և չթեքվող լինելը, հարացույցներով հանդես գալը, վերջապես շարահյուսական՝ քերականական կառույցների միմյանցից տարբեր դրսևորումները և այլն:

Այս ամենում ընդհանուր է այն, որ խոսքի մասերը լեզվում միասնաբար հանդես են գալիս իբրև այնպիսի բառաքերականական խմբեր, որոնք բնութագրվում են իմաստային, ձևային և կիրառական հատկանիշներով: Առաջինը բառի ընդհանուր իմաստն է, երկրորդը՝ բառի ձևավորումը (ձևաբանական դրսևորումը), երրորդը՝ բառի շարահյուսական կիրառությունը:

Բառերի ընդհանուր իմաստն ամենից առաջ որոշվում է նրանց բառարանային արժեքով, ամեն մի բառ՝ *ծառ*, *ծաղիկ*, *փուն*, *լեզու*, *մեծ*, *սպիտակ*, *մեկ*, *երկու*, *փանել*, *գնալ*, *կարդալ*, *ես*, *դու*, *նա* և այլն, իր տեսակի մեջ ունեցած տարբերություններից դուրս՝ *բարձր ծառ*, *սաղարթախիտ ծառ*, *պտղափու ծառ*, *անջրդի ծառ* և այլն, այդպես նաև մյուսների դեպքում՝ *կարմիր ծաղիկ*, *սպիտակ ծաղիկ*, *բուրավեր ծաղիկ* և այլն, միաժամանակ ըստ այդ տարբերությունների ընդհանուր իմաստի (հասկացության) անվանում է, ցույց է տալիս առարկա, ինչպես նաև հատկանիշ, շարժում և այլն: Այլ կերպ ասած՝ մի դեպքում դրանք անվանում են առարկայական հասկացություն՝ *ծառ*, *ծաղիկ*, *ջուր*, *փուն* և այլն, մյուս դեպքում՝ ցույց են տալիս հատկանիշ՝ *գեղեցիկ*, *մեծ*, *սպիտակ* և այլն, մեկ այլ դեպքում՝ շարժում՝ *փանել*, *գնալ*, *գրել*, *կարդալ* և այլն, փոխարինել առարկայական հասկացություն արտահայտողներին՝ *ես*, *դու*, *նա* և այլն:

Բառի ձևաբանական դրսևորումը ևս կարևոր է խոսքի մասերի առանձնացման և բնութագրման համար: Հայերենի դեպքում, օրինակ, ձևային կամ ձևաբանական հատկանիշի հիման վրա դասակարգումն այնքան տեսանելի չէ, որքան այլ լեզուների դեպքում: Վերը բերված բառերից միայն մեկ-երկուսը՝ *բերել*, *գնալ*, *գրել*, *կարդալ*,

մյուսների համեմատությամբ ունեն ձևային տարբերություն՝ կազմված են *-ել*, *-ալ* մասնիկներով, որոնք տվյալ դեպքում կարող են առանձին խմբի որոշման հիմք հանդիսանալ, իսկ մյուսներն, իբրև բառերի ուղիղ ձևեր, որևէ հնարավորություն չեն ստեղծում այդ իմաստով:

Հին լեզուներից լատիներենում, ժամանակակից լեզուներից ռուսերենում, մասամբ ֆրանսերենում այդպես չէ. բերված բառերի թարգմանական ձևերը, օրինակ, կարող են վերախմբավորվել՝ հիմնված դրանց արտահայտության պլանի ցուցիչների (սեռանիշ, առարկայանիշ, գունանիշ և այլ ձևույթների) վրա. հմմտ. լատ.՝ *arbor, flos, domus, lingua, magnus, albus, unus, duo, portāre, ire, scribēre, legēre, ego, tu, is (ea, id)*. ռուս.՝ *дерево, цветок, дом, язык, большой, белый, один, два, нести, идти, несут, читают, я, ты, он. անգլերեն՝ tree, flower, home, tongue, big, white, one, two, take, (to) go, (to) write, (to) read, I, You (հին՝ thou)*. ֆրանս.՝ *arbre, fleur, maison, langue, grand, blanc (blanch), une, deux, porter, aller, écrire, lire, je, tu* և այլն:

Բերված օրինակներում առանց դժվարության կարելի է խմբեր առանձնացնել. լատ.՝ *-a, -or* մասնիկներով խումբ՝ *lingua, arbor, flor, -us* մասնիկով՝ *domus, magnus, albus, unus* (անկախ սրանց ներքին իմաստային բաշխումից՝ գոյական, ածական, թվական և այլն), *-(a/i/e) re* մասնիկներով՝ *portāre, ire, scribēre, legēre*. ռուս.՝ *-o, -a* մասնիկներով խումբ՝ *дерево, вода, -(ы/о)щ* մասնիկներով՝ *большой, белый, -ти* մասնիկով՝ *нести, идти, -ть* մասնիկով՝ *несут, читают, -о, -но* մասնիկներով՝ *быстро, медленно* և այլն, և այլն:

Այսպիսով՝ կարելի է գաղափար ունենալ գոյական անուն, բայ, ածական անուն և այլ բառային միավորների խմբերի մասին, ընդամին վերն առանձնացված բառերի բաշխվածությունը խմբերի ներսում, ըստ լեզուների ներքին քերականական հարաբերության: Ձևաբանական հատկանիշով բաշխումը ավելի նկատելի է ռուսերենում, մյուսներում՝ մասնակիորեն. հայերենը մնում է առանձին: Բոլոր դեպքերում, ինչպես փաստերն են ցույց տալիս, խոսքի մասերի խմբավորման և ըստ այդմ դասակարգման դեպքում ձևային կամ ձևաբանական հատկանիշն ունի կարևոր դեր՝ անկախ լեզուներում տարբերությունների տարածվածության չափերից:

Բառի շարահյուսական կիրառությունը ևս նշանակալից դեր ունի խոսքի մասերի խմբավորման և դասակարգման մեջ: Այսպես, բառերի մի խումբ առանձնանում է նրանով, որ նախադասության մեջ կարող է հանդես գալ ենթակայի, տարբեր կարգի խնդիրների, ստորոգյալի անվանական մասի գործառնություն, մեկ այլ խումբ՝ որոշչային, մյուսները՝ ստորոգյալի, բայի սեռից կախված՝ ուղիղ խնդրի կամ այլ խնդիրների, պարագայական և այլ գործառնություններով:

Այս հատկանիշների հիման վրա կատարված վերլուծությունից պարզվում է, որ լեզուներում (հնդեվրոպական և այլ ցեղակցության) բառերը կարող են ներկայանալ շուրջ մեկ տասնյակ խմբով (ըստ հայերեն բերվածների)՝ իբրև գոյական (*ծառ, ծաղիկ, ջուր, փուն, լեզու*), ածական (*գեղեցիկ, մեծ, սպիտակ*), թվական (*մեկ, երկու*), բայ (*լրանել, գնալ, գրել, կարդալ*), մակբայ (*արագ, դանդաղ*):

2. Խոսքի մասերի դասակարգման առնչությամբ կարևոր է նաև նրանց միաջակա փոխանցումների հարցը: Բառերը, իբրև այս կամ այն խոսքի մասին պատկանող բառարանային կամ բառաձևակազմական (բառաքերականական) միավորներ, ներկայացնում են, ի վերջո, տվյալ լեզվի բառապաշարը՝ իբրև մեկ ամբողջություն: Բառապաշարի ամբողջականությունը (իմաստային-հասկացական նշանակումների գումարը), կարելի է ասել, յուրօրինակ համակարգ է, որ ունի ներքին բաշխվածություն՝ գոնե խոսքիմասային հատկանիշով:

Տարբեր խոսքի մասերի պատկանող միավորները, գտնվելով այս կամ այն խմբի մեջ (գոյական, ածական, թվական և այլն), այսինքն՝ խմբավորված լինելով ընդհանուր իմաստային, ձևային-ձևաբանական և շարահյուսական որոշակի առանձնահատկություններով, այնուամենայնիվ լեզվի պատմական զարգացման ընթացքում ինչ-որ չափով ենթարկվում են տեղաշարժերի, որովհետև լեզուն, այսպես կոչված, քարացած երևույթ չէ, այլ հանդիսանում է մշտապես զարգացող իրողություն:

Տվյալ խոսքի մասին պատկանող բառը իր այս կամ այն յուրահատկության փոփոխմամբ, երբեմն կորստով ձեռք է բերում մեկ այլ խոսքի մասի պատկանող միավորի հատկություն, որ հիմնականում նկատվում է նրանց շարահյուսական կիրառությունների մեջ՝ խոսքի

համատեքստում (կոնտեքստում): Այս երևույթը կոչվում է լեզվական միավորների խոսքիմասային փոխանցում (տեղաշարժ): Այս երևույթը լավագույնս քննված է անգլերենում, ֆրանսերենում և ռուսերենում, նաև հայերենում, որոնց տեսական հիմքերը գրեթե նույնն են: Լեզուներում խոսքիմասային փոխանցումները վկայություն են հաղորդակցման գործընթացի բազմազանության, ոճական արտահայտվածության և այլն:

Այնուհետև, դա տևական՝ ոչ միաժամանակյա գործընթացի արդյունք է, այլև ոչ բոլոր խոսքիմասային միավորների դեպքում է այն հնարավոր, եթե չասենք մի խոսքի մասի պատկանող բառերի դեպքում այն ավելի մեծ չափեր է ընդգրկում, մեկ այլ դեպքում՝ ոչ այնքան և այլն: Ըստ այդմ տարբերում են խոսքիմասային փոխանցման մասնակի և ամբողջական տիպեր:

Մասնակի է այն փոխանցումը, երբ տվյալ միավորը հանդես է բերում թե՛ մեկ և թե՛ մյուս խոսքի մասին բնորոշ յուրահատկություններ, օր.[՝] *ողորմած հոգի - ողորմած լինել, մեծամիտ մարդ - մեծամիտ լինել, անշարժ գույք - անշարժ մնալ* և այլն, իսկ ամբողջական է այն փոխանցումը, որի դեպքում տվյալ միավորն արդեն այլ խոսքիմասային միավոր է՝ դուրս մնալով նախկին խոսքիմասային խմբից. դա, ինչ խոսք, տևական ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխության արդյունք է, իբրև այդպիսին այն եղել է, այսպես կոչված, նախորդ խոսքիմասային խմբի մեջ. օր.[՝] *բանվոր «անձ»* (գոյ.) - *բանվոր «աշխատող»* (ած), *երիտասարդ «անձ»* (գոյ.) - *երիտասարդ «միջին տարիքի»* (ած.), *բանաստեղծ «մարդ»* (անձ) - *բանաստեղծ «ստեղծագործող»* (ած.), *ժամանակ «օրվա տևողություն»* (գոյ.) - *ժամանակ «տվյալ պահին»* (մկբ.) և այլն:

Ըստ այսմ՝ լեզուներում առհասարակ տարբերում են նաև խոսքիմասային տեղաշարժի (փոխանցման) ուղղվածությունը. դա այն երևույթն է, երբ տեղաշարժ է կատարվում մեկ խոսքի մասից մյուսին, բայց ոչ հակառակը. օր.[՝] հայերենում գոյականը կարող է վերածվել կապի, բայց հակառակը չի լինում, որովհետև պատմականորեն կապերն են, որ առաջացել են գոյականներից և այլն. *ժամանակ՝ «ժամանակը ոսկի է»* - «Ուտելու *ժամանակ* չեն խոսում». *համար՝ «Հյու-*

րանոցի *համար* տասնմեկը զբաղեցրել են» - «Նա ամեն ինչ անում է իր ասածը հաստատելու *համար*»¹ և այլն:

Երևույթը տարածված է շատ լեզուներում: Խոսքիմասային տեղաշարժերը հիմնական գծերով համընկնում են, միայն մասնավոր դեպքերում է, որ նկատվում են տարբերություններ:

Հայերենում առանձնացվում են նման տեղաշարժերի հետևյալ տեսակները.

ա) ածականի վերածում գոյականի, օր՝ *Վաճառականը* լավ է հասկանում իր օգուտը և այլն.

բ) գոյականի անցում կապերի, օր՝. Նա լվացքի *համար* օճառ է գնել. և այլն.

գ) որոշ դերբայների փոխանցումը ածականների և գոյականների, օր՝ *Ստույգյալ* օվկիանոսի ջրերը հեղեղվել են և այլն.

դ) մակբայների գործածություն՝ իբրև կապ, օր՝ *հեղրո, դուրս*. Բժշկից *հեղրո* ներս մտավ ուղեկցողը և այլն: Ի դեպ՝ նկատելի է, որ մակբայները հիմնականում առաջացել են տվյալ գոյականի այս կամ այն հոլովածնից՝ իմաստի լրիվ պահպանումով կամ մասնակի փոփոխությամբ. հմմտ. գրաբարում՝ *հեղր* «ոտնահետք», *հեղրոյ* (եզ. սեռ. հոլով) «ոտնահետքի» և այլն:

ե) ածականի կիրառություն՝ որպես մակբայ, օր՝ «Ռուբենը *լավ* սովորող է» - «Ռուբենը *լավ* է սովորում» և այլն¹:

Քերականական երևույթների իմաստային և շարահյուսական տեղաշարժի, իրար փոխարեն գործածվելու երևույթ է դիտվում այլ խոսքիմասային միավորների, այսպես կոչված, գոյականացումը. սա այն երևույթն է, երբ ոչ գոյական բառերը խոսքում հանդես են գալիս որպես գոյական, և լայն առումով՝ նման երևույթը կոչվում է *փոխանունություն* (անգլ. metonymy, ֆրանս. metonymie), որը և մյուս երկուսի՝ *փոխաբերության* (անգլ. metaphora, լատ. metaphora «փոխաբերական արտահայտություն») և *համընթանման* (հուն. σynecdochē «բառի ըստ ծավալի այլ իմաստով գործածություն», լատ. synecdochē «միասին հասկանալի լինելը») հետ առհասարակ կազմում են խոսքի այլա-

¹ Հմմտ. Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Ե., 1970, էջ 92-97:

սացական մի ուրույն ոլորտ, մանավանդ գրական-ոճական հագեցվածություն ունեցող խոսքում՝ վերջինիս հաղորդելով այս կամ այն կարգի ոճավորում¹:

Այս երևույթը ընդհանուր լեզվաբանական իրակություն է, բնորոշ է լեզվական հարողակցման հոգեբնախոսական հանգամանքներով բացատրվող այլասացական տրամադրվածությանը՝ խոսքն ավելի հագեցած լինելու, իմաստային-գեղագիտական նրբությունների հաղորդման միտումով: Այն առկա է շատ լեզուներում, այժի է ընկնում գործառական-ոճական հագեցվածությամբ: Իբրև խոսքի ոչ սովորական, այլ այս կամ այն նպատակով ոճավորման դրսևորում, ինչպես գիտենք, լայն տարածում ունի հատկապես հնդեվրոպական լեզուներում. երևույթը տեսական հիմնավորում և գնահատություն է ստացել դեռևս հունական և հռոմեական լեզվամշակույթում:

Հայերենում ևս, բնականաբար, այն եղել է որոշակի ուշադրության առարկա՝ մանավանդ ճարտասանության բնագավառում: Ըստ Մ. Ասատրյանի ճիշտ գնահատության՝ «փոխանունության քերականական էությունն այն է, որ «որոշիչ + որոշյալ» կապակցությունները խոսքի շղթայում կարող են արտահայտվել մի բառով, որն այս դեպքում արտահայտում է հատկանշի և առարկայի գաղափար, օրինակ՝ *սևը* (սև մատիտը, գիրքը, թուղթը և այլն), *սևից* (սև մատիտից, գրքից, թղթից և այլն), *երեքով* (երեք զինվորով, աշակերտով), *երկրորդը* (երկրորդ աշակերտը, կրակոցը, դասարանը), *բացվածները* (բացված վարդերը, դռները, ծրարները) և այլն»²:

Հայերենում առանձնացվում է փոխանունության երկու տեսակ՝ որոշչային և հատկացուցչային հարաբերակցության մեջ:

1) Որոշչի գործառությամբ հանդես եկող ածականը, թվականը, դերբայներից հարակատարը և ենթակայականը՝ մեկ բառով արտահայտելով որոշիչ-որոշյալ կապակցության իմաստ. օր.՝ *Սևերը* մնացին, *սպիրակները* թռան – *Սև* ազգավները մնացին, *սպիրակ* աղավնիները թռան. *Երկուսը* մնաց – *Երկու* մարդ մնաց. *Բերածը* պահել

¹ Տե՛ս Ծ. Ք. *Атаян*, Метафора, метонимия, синекдоха (Опыт дифференциальной характеристики и систематизации) // «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, 1, էջ 107-114:

² Մ. Ե. *Ասատրյան*, նշվ. աշխ., էջ 97:

են – *Բերած* ապրանքը պահել են. *Աշխատողը* սոված չի մնա – *Աշխատող* մարդը սոված չի մնա և այլն:

2) Բառի սեռական կամ տրական հոլովով դրված ձևերը՝ առնված որոշյալ հոդով, իբրև մեկ բառ՝ արտահայտելով հատկացուցիչ-հատկացյալի կապակցության իմաստ. օր.՝ *Ուսանողինը* մնացել է լսարանում, իսկ *ուսանողուհունը*՝ տանը – *Ուսանողի* գիրքը մնացել է լսարանում, իսկ *ուսանողուհու* գիրքը՝ տանը. *Աշակերտներինը* թող մնան, *ուսուցիչներինս* կտանենք մեզ հետ – *Աշակերտների այդ* գրքերը թող մնան, իսկ *ուսուցիչների* այս գրքերը կտանենք մեզ հետ և այլն:

Հիմնական գրականություն:

Միշյան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 451-459:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 60-69:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 112-116:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 155 - 167:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 320-323:

Широков О.С., Введение в языковедение, М., 1985, էջ 190-205:

ԹԵՄԱՏԻԿԱ IV. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Բառակապակցություն. սահմանումը և տեսակները

Հիմնահարցեր: *Բառակապակցությունը որպես շարահյուսական միավոր. վերադաս (ոչ ակրուս) արորոգում: Բառակապակցության և շարույթի առնչությունը: Բառակապակցության րեսակներն ըստ բաղադրիչների սերտության աստիճանի՝ ազատ կամ սովորական և կայուն կամ դարձվածա՝ ին: Բառակապակցության րեսակներն ըստ բաղադրիչների խոսքինմաստին բնույթի՝ գոյականական, ածականական, թվականական, դերանվանական, մակբայական:*

1. Լեզուն, ինչպես գիտենք, ընդհանուր է տվյալ հասարակության և առհասարակ՝ նրա յուրաքանչյուր անդամի համար, իսկ խոսքը կոնկրետ է նրանցից յուրաքանչյուրի դեպքում: Լեզու և խոսք հակադրությունը ընդհանուր լեզվաբանական երևույթ է, որ առաջ է քաշվել 20-րդ դ. սկզբներին: Հիշենք, որ լեզուն ընդհանուր հասարակական հնարավորություն է վերջինիս անդամների միջև լեզվական շփում ապահովելու համար: Լեզվական հնարավորությունը այլ կերպ հանդես չի գալիս, քան խոսքի ձևով: Վերջինս լեզվի իրականացումն է հաղորդակցման պայմաններում: Այդ հարաբերությունը կա ամեն մի կոնկրետ լեզվի դեպքում, այն կիրառելի է նաև հայերենի համար:

Խոսքը լեզվի իրականացումն է տարածական և ժամանակային տարածնումների (պարամետրերի) մեջ: Այն սերվում է նվազագույն միավորներից և հասնում առավելագույնների՝ իբրև լեզվի ամեն մի մակարդակի մեկ ամբողջություն, որ ինքնաբերաբար (սոցիալական պայմաններ, անհատական ընդունակություններ, փորձ և այլն) կա խոսողի գիտակցության մեջ: Եթե հնչյունների կապակցումը սերում է վանկ, իսկ վերջինիս կապակցումները՝ բառ կամ բառաձև, ապա սրանց կապակցումները, իրենց հերթին, սերում են բառերի կապակցություններ (բառակապակցություններ):

¹ Այստեղ կապակցումը ընթացիկ պատճառ է (*ընթացապատճառ. causa efficiens*), իսկ կապակցությունը՝ վերջին պատճառ (*վերջնապատճառ. causa finalis*). հայերենում դա հստակ երևում է *-ում* և *-ություն* ավանդներով տարբերակման մեջ:

Ժամանակակից հայերենի շարահյուսության մեջ ևս նկատում ենք լեզվի և խոսքի առնչություն: Այս դեպքում ևս հաղորդակցվող կողմերը (անձերը) դիմում են լեզվի նվազագույն միավորներին (օր.՝ բառերին) կազմելով ամբողջական միավորներ՝ *բառակապակցություններ*, *նախադասություններ* և այլն:

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր լեզվի քերականություն ունենում է երկու բաժին՝ ձևաբանություն և շարահյուսություն: Առաջինը բառերի հոլովման, խոնարհման և այլ կարգի փոփոխությունների, իսկ երկրորդը ստորոգական և ոչ ստորոգական միավորների հարաբերակցության ուսումնասիրման բնագավառ է: Շարահյուսությունը լեզվի ուսումնասիրության ուրույն բնագավառ է, որովհետև այն ստորոգումային («տրամախոսական») երևույթ է:

Բառակապակցությունը վերառյալ ստորոգումային կապակցություն է. դա նկատվում է նախադասության փոխակերպումից: Հայերենի շարահյուսությունը ևս, ինչպես հնդեվրոպական ուրիշ լեզուների դեպքում է, ընդգրկում է երկու բաժին՝ բառակապակցություն և նախադասություն: Վերջինը մակարդակային միավոր է, իսկ առաջինը՝ աստիճանային. լեզվի շարահյուսական մակարդակում նախադասությունը բնորոշվում է ստորոգմամբ, իսկ կապակցությունը՝ կախվածությամբ: Ուստի նախադասությունը ստորոգական միավոր է, որ հանդես է գալիս կան միակազմ, կան երկկազմ հարաբերակցությամբ:

Բուհական դասագրքերում, մեթոդական ձեռնարկներում և այլն, ընդունված է, կապակցություն ասելով հասկանալ միայն բառերի կապակցումը՝ շարահյուսական մակարդակում: Սակայն լեզվում գրեթե յուրաքանչյուր միավոր, իր հատկությամբ օժտված, այլ միավորների հետ կարող է կապակցվել ինչ-ինչ հնարավորությամբ՝ հասկանալիության աստիճանով: Ըստ այդմ՝ կապակցելի են հնչյունները, որի դեպքում ունենում ենք հնչակապակցություն, որ կարող է սերել վանկ կամ վանկի բաղադրիչ, ավելին՝ բառ և այլն, օր.՝ *դա, սա, բան > դաս-սա-բան*, նաև՝ *սա*, 1-ին դ. ցուց. դերանուն, *դա*, 2-րդ դ.ցուցական դերանուն. հայերեն խոսողի համար բերվածները իմաստալից են հնչյունաբանության մակարդակում, ավելի կոնկրետ՝ հնչակապակցության աստիճանում:

Այսպես, ունենք նաև բառաձև սերտող անկախ և կախյալ ձևային տեսակների կապակցություն. օր.՝ *քար-եր-ին, դասարան-ներ-ում, մեր-նոց-ից* և այլն: Բերված օրինակներում կապակցումները հասկանալի են ավելի լայն ըմբռնմամբ: Այնինչ, նեղ կամ սովորական պատկերացմամբ բառերի և բառաձևերի ոչ ստորոգական հարաբերակցությունն է, որ դիտվում է իբրև բառակապակցություն, օր.՝ *ծառի ճյուղ, սարերի լանջերին, փողոցից այն կողմ* և այլն:

Կապակցության տեսակները շատ են, որովհետև կապակցելի միավորները, ըստ խոսքի մասերի պատկանելության, տարբեր են: Դրանք խմբավորվում են ըստ կապակցության գերադաս անդամի, այսինքն՝ կապակցության բաղադրիչներից որն է լրացումը, որը լրացյալը. օր.՝ *սարի ծաղիկ, երկու շարաթ, մեկ օրվա ճանապարհ*: Եվ քանի որ լրացում-լրացյալ հարաբերություն է լինում գոյականի, ածականի, բայի և այլ բառերի միջև, ուստի տարբերում են բառակապակցությունների մի քանի տեսակ՝ գոյականական, ածականական, թվականական, բայական և այլն:

Ընդունված է նախադասությունը համարել շարահյուսության նվազագույն միավոր, որն, ըստ տրամաբանական հիմունքի, սահմանվում է իբրև միտք արտահայտող բառակապակցությունների ամբողջություն. օր.՝ *Գարունը բացվել է: Ծառերը ծաղկել են* և այլն. այստեղ կա դիմավոր բայաձևերով արտահայտված երկու միտք:

Սակայն լեզվի շարահյուսական մակարդակում կա բառակապակցության խնդիրը, որով ևս միտք է արտահայտվում. օր.՝ «*Երևան: Աստվածային փողոց*» (Ե Չարենց). «*Դու Արագած, ալմաստ վահան կայծակեղեն թրերի, // Գագաթներդ բյուրեղ վրան թափառական ամպերի*» (Իսահակյան) և այլն:

Բերված *Գարունը բացվել է: Ծառերը ծաղկել են* նախադասությունները կարելի է ձևակերպել նաև հետևյալ կերպ՝ *Գարուն: Ծաղկած ծառեր*. մի դեպքում արտահայտված հնչերանգով՝ *Գարուն*, մյուս դեպքում՝ դերբայով՝ *Ծաղկած ծառեր*: Իսկ *Երևան: Աստվածային փողոց* անվանական նախադասությունները կարելի է փոխակերպել (պայմանականորեն՝ ոչ չափածո) հետևյալ կերպ. *Սա Երևանն է: Սա Աստվածային փողոցն է: Հաջորդ օրինակի առաջին տողերը* (ևս պայ-

մանականորեն՝ ոչ չափածո) կարելի է ասել նաև հետևյալ ձևով. *Արագած, դու այժմասք վահան ես (եղել) կայծակեղեն թրերի (համար) // քո գագաթները բյուրեղ վրան են (եղել) թափառական ամպերի (դեմ) և այլն:*

Ինչպես տեսնում ենք, հայերենի շարահյուսական մակարդակում (խոսքում) նույնպես նախադասությունը՝ *ստորոգումային* (պրեդիկատիվ) միավոր է, իսկ բառակապակցությունը՝ *ոչ ստորոգումային*, ավելի ստույգ՝ նախադասությունը առկա ստորոգումային միավոր է, իսկ բառակապակցությունը՝ վերառյալ (ոչ-առկա) ստորոգումային միավոր. հմնտ. *Ծառը ծաղկել է // Ծաղկած ծառ:* Առաջինում ունենք *ծաղկել է* ստորոգյալը, որը ցույց է տալիս առկա ստորոգում՝ *ծաղկելու* երևույթի (լայն իմաստով՝ հատկանիշի) վերագրում ենթակային՝ *ծառին*, իսկ երկրորդում՝ *ծաղկած* հարակատար դերբայը ցույց է տալիս վերառյալ ստորոգում՝ նույն հատկանիշի արտահայտում: Տրամաբանական հիմքի մեջ, այսինքն՝ մտքի արտահայտման տեսակետից ունենք նույն բովանդակությունը, իսկ քերականորեն՝ տարբեր ձևակերպումներ (խոսք). նույն միտքն արտահայտված է կամ մեկ նախադասությամբ, կամ առանձին բառակապակցությամբ:

Ըստ այսմ՝ բառերի շարահյուսական հարաբերակցության տեսակները երկուսն են՝ *բառակապակցություն* և *նախադասություն*, որոնց առանձնացումը հիմնված է *ստորոգման* (պրեդիկացիայի) վրա: Իսկ այն, իր հերթին, լինում է երկու կարգի՝ *վերառյալ* (ոչ իրացի. abstractus) և *իրական* (գործուն՝ ակտուալ. actualis): Ըստ այսմ՝ նախադասությունը իրական ստորոգմամբ բառերի կապակցություն է. *Ծառը ծաղկել է: Երեխան քնել է* և այլն, իսկ բառակապակցությունը վերառյալ («ստորոգմամբ») կապակցություն է. *Ծաղկած ծառ: Քնած երեխա* և այլն:

Ստորոգման բնույթը կամ դրսևորումը (ինչպիսին լինելը), ըստ այսմ, ունի առանցքային նշանակություն լեզվի կիրարկման վերին մակարդակում գտնվող միավորների՝ բառերի կապակցությունների առանձնացման համար: Կարելի է տալ հետևյալ սահմանումը. էթե նախադասությունը, իբրև մակարդակային միավոր, իրական (ակտո-

լալ) ստորոգում ունեցող բառերի կապակցություն է, ապա հակադիրը՝ բառակապակցությունը, իբրև աստիճանային միավոր, վերառյալ (ոչ ակտուալ) ստորոգման բառերի կապակցություն է: Այլ կերպ ասած՝ ըստ ստորոգման հատկանիշի՝ ունենք տրամաբանական իրականի և վերառյալի հակադրությունը, ընդ որում խոսքային նախադասության (մակարդակայինի) և բառակապակցականության (աստիճանայինի) հարաբերակցության մեջ: Ըստ այսմ՝ բառերի (առնվազն՝ երկու) ոչ իրական՝ վերառյալ ստորոգմամբ կապակցումը կոչվում է բառակապակցություն:

Այնուհետև, ոչ ստորոգումային արտահայտություն են ունենում ոչ միայն բառերի կապակցությունները (տվյալ դեպքում՝ բառակապակցությունները), այլև առանձին բառերը և բառաձևերը, եթե դրանք հագեցած են լինում հնչերանգով, ունենում են հնչերանգային ավարտվածություն. օր.՝ *Երևան: Երեկո: Զրոսնում են:* Ըստ այսմ՝ բառակապակցությունը, նաև բառը, բառաձևը խոսողության ընթացքում ստանում են «նախադասության» արժեք շնորհիվ խոսքի մեջ հնչերանգային ավարտվածության (բանավոր խոսքում՝ հնչերանգային շեշտ, դադար և այլն, գրավորում՝ վերջակետ, եթե ոչ նաև շեշտ): Այլ կերպ ասած՝ ոչ ակտուալ ստորոգմանը միանում է հնչերանգային ավարտվածությունը:

Այսպիսով, լեզվի բառ, բառակապակցություն և նախադասություն միավորները ստորոգմամբ (վերառյալ կամ առկա՝ ակտուալ) և հնչերանգային ավարտվածությամբ բնութագրվող միավորներ են. կան այդ հատկանիշները, ուրեմն դրանք խոսողության մեջ կրնկալվեն իբրև շարահյուսական միավորներ՝ միտք արտահայտող բառեր կամ բառերի կապակցություններ՝ շարահյուսական մակարդակում (որը, կարելի է ասել, խոսքի իդեալն է, խոսողության նպատակը). *Երևան: Աստվաթյան փողոց: «Սա Երևանի Աստվաթյան փողոցն է»*¹: Իսկ հակառակ դեպքում կունենանք իրարից անջատ (առանձնակի) միավորներ՝ խոսքից դուրս, թեկուզ իբրև խոսողության գործընթացի հնարավորություն:

¹ Չակերտների մեջ դրվածը հեղինակայինի փոխակերպված տարբերակ է:

Բառակապակցությունը և նախադասությունը գտնվում են, այսպես կոչված, փոխակերպելի հնարավորության մեջ. հմնտ. մի կողմից՝ Ծառերը *ծաղկել են* // *Ծաղկած* ծառեր, մյուս կողմից՝ Տղան նկատեց, որ մարդն *անցավ* փողոցը // Տղան նկատեց մարդու փողոցն *անցնելը* և այլն: Փոխակերպումից պարզվում է, որ նախադասության ստորոգյալները վերածվեցին բառակապակցության բաղադրիչ դերբայների. հաղորդակցումը կայացած է, թեև ստորոգումը մեկում առկա է, մյուսում՝ վերառյալ (ըստ նորմատիվ քերականությունների՝ բացակա): Ըստ այդմ՝ առկա ստորոգական է նախադասությունը, վերառյալ (ոչ առկա՝ բացակա) «ստորոգական»՝ բառակապակցությունը:

2. Կարևոր է նաև բառակապակցության և շարույթի առնչության հարցը: Կապակցության մի տեսակ է շարույթը (հուն. *synthagma* «միահյուսված, միացված»), որը համատեղում է իրական և վերառյալ ստորոգման հատկանիշներ, եթե վերջինը դիտենք լայն իմաստով: Նորագույն տեսական լեզվաբանության, ընդ որում նաև հայ լեզվաբանության մեջ բառակապակցության քննությունը կատարվում է ոչ միայն նախադասության, այլև շարույթի, իբրև միջմակարդակային (եթե ոչ՝ աստիճանային) միավորի, առնչությամբ: Նկատելի է, որ բառակապակցության հետ առնչություն ունեցող շարույթը մի տեսակ միջանկյալ է դիտվում մի կողմից՝ բառի և բառակապակցության, իսկ մյուս կողմից՝ բառակապակցության և նախադասության միջև՝ իբրև, բնականաբար, շարահյուսական մակարդակի միավոր:

Շարույթի գաղափարը առաջ է քաշվել Ֆ. դը Մոսյուրի և Ի. Ա. Բոդուեն դը Կուրտենների կողմից: Ըստ Մոսյուրի՝ այն նշանակում էր խոսքի մեջ իրար առնչվող ցանկացած երկու միավորի՝ ձևայինների, բառերի, նախադասությունների միացություն (*ուշա-դիր, ուսումնական, մարդկանց հետ, եթե ասպասենք, անպայման կգան*), իսկ Բոդուեն դը Կուրտենն շարույթ համարում էր շարահյուսական մակարդակում ամեն մի բառի գործածություն (*«Ինչ գրված է գրչով, չես փաշի կացնով»*):

Լեզվական այս միավորի տեսությունը լեզվաբանության մեջ, կարելի է ասել, նորություն է: Բուհական կրթության մեջ, օրինակ՝ դասագրքերում, այն գրեթե ընդգրկված չէ: Շարույթը լեզվափմացական

երևույթ է, որ հանդես է գալիս հաղորդակցական նվազագույն միավորի (խոսքի՝ բառակապակցության կամ նախադասության) մակարդակում. օր.՝ *մի կաթիլ մեղր, մի կաթիլ, կաթիլ մեղր, նեղանալ ընկերոջից, մեկ օրվա ճանապարհ* և այլն): Այն առնվազն երկբաղադրիչ միավոր է, առավելագույնը՝ որքան որ մեկ ամբողջության մեջ հաղորդակցական հնարավորություն (հասկանալիություն) ունի տվյալ լեզուն՝ երեք, չորս և այլն:

Հետագայում շարահյուսական այդ միավորի ընդհանուր տեսությանը անդրադարձավ Է. Բենվենիստը, իսկ հայերենի առումով՝ Գ. Բ. Ջահուկյանը¹:

Շարույթի վերաբերյալ իր մոտեցումը ներկայացնելիս Գ. Բ. Ջահուկյանը տալիս է մի քանի հիմնարար պարզաբանումներ, որոնցից, թերևս, առանցքայինը այն է, որ «անհրաժեշտ է դառնում նախադասության և բառի միջև առանձնացնել մի միավոր, որ ընդգրկի բացի բառակապակցությունից նաև բառը որպես այդ միավորի նվազագույն բաղադրիչ»²: Թե՛ շարույթը և թե՛ բառակապակցությունը ոչ միայն ստորադասական (լրացում լրացյալի), այլև համադասական հարաբերությամբ կապված միավորներ են: Սովորաբար շատ դեպքերում ուշադրության կենտրոնում են անդամների ստորադասական հարաբերությամբ միավորները, որին, առարկում է Գ. Բ. Ջահուկյանը՝ ուստի «և անդամների համադասական հարաբերությամբ բնութագրվող միավորները դուրս են մնում... հմնտ. բարի ընկեր + գեղեցիկ ընկեր – բարի և գեղեցիկ ընկեր»³:

Շարույթը ներկայակցված միավոր է՝ բաղադրիչների շարահյուսական միասնական առնչությամբ. հմնտ. *մի կաթիլ մեղր*, որ կարող է համընկնել բառին, այլև նախադասությանը. ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ «շարույթը կարող է բաղկացած լինել մեկ կամ մեկից ավելի բառից»⁴:

¹ Հմնտ. Գ. Բ. Ջահուկյան, Շարույթը որպես լեզվական միավոր // Նույնի՝ Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 118-126 (տե՛ս «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1990, 2): Նույնի՝ Շարույթ, Ե., ԵՊՀ. հրատ., 1997:

² Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, էջ 120-121:

³ Նույն տեղում, էջ 122:

⁴ Նույն տեղում, էջ 125:

Այսպիսով՝ ստացվում է, որ պետք է, բառակապակցությանն առնչակից, հստակ պատկերացում ունենալ ոչ միայն վերին մակարդակի միավորի՝ նախադասության, այլև նրա, ինչպես նաև բառի հետ շփման եզրեր ունեցող աստիճանային մի այնպիսի միավորի մասին, ինչպիսին շարույթն է:

Վերջինս ևս առանձնացվում է ըստ տեսակների՝ առաջնային կամ համասեռ և երկրորդային կամ տարասեռ, այնուհետև բնորոշվում են առաջնային շարույթները՝ իբրև «լիանշանակ» բառեր՝ «իրենց սովորական լիանշանակ լրացումներով կամ առանց դրանց» և այլն¹:

Ինչպես կարելի է նկատել, շարույթի բաղադրիչների տեսակները գրեթե նույնն են, ինչ բառակապակցության բաղադրիչներինը՝ գոյականական, ածականական, թվականական, բայական և այլն, այն, ինչ բերվում է ավանդական լեզվաբանության մեջ, ընդ որում ոչ միայն տեսական, այլև ուսումնական ձեռնարկներում և այլն: Ուստի հարկ չկա դրանց անդրադառնալ այլ խմբավորմամբ, քան ըստ այնմ, որ դրանց գերադաս անդամը կարող է լինել գոյական, ածական, թվական և այլն՝ իրենց այս կամ այն ստորադաս անդամներով՝ իբրև լրացում-լրացյալային հարաբերություն կազմող շարահյուսական մակարդակի աստիճանային միավորներ:

Ըստ այսմ նկատում ենք, որ բառերի կապակցումը շարահյուսական այնպիսի իրողություն է, որում կա իմաստային սերտ կապ՝ մտքի արտահայտման հնարավորություն. օր.՝ *մի կաթիլ մեղր* կապակցությունը, որ բաղկացած է երեք միավորից (բառից), ենթադրում է հետևյալ կապակցումները՝ *մի կաթիլ, կաթիլ մեղր (մեղրի կաթիլ)* և *մի կաթիլ մեղր*. բացառվում է *մի մեղր* կապակցումը. առաջին երկուսը գտնվում են շարույթային (մտքի առումով՝ հասկանալի, սերտ) կապակցման մեջ, իսկ վերջին՝ ոչ:

4. Բառակապակցությունը լեզուներում միատեսակ չի լինում, և առհասարակ՝ հաղորդակցման բաղադրիչ տարրերի գործածությունը տարբեր է, քանի որ խոսքում այն անհատական է: Խոսքային տարբերությունը հաղորդակցական գործընթացի արդյունքում հիմնակա-

¹ Նույն տեղում, էջ 123:

նում վերածվում է լեզվական օրինաչափության, այլև երբեմն մնում է դուրս՝ իբրև առանձնահատկություն:

Շարահյուսության մակարդակում բառակապակցության բաղադրիչները միմյանց հանդեպ ունենում են սերտության ոչ նույնական աստիճան, ըստ որի էլ տարբերում են երկու տեսակ՝ սովորական և վերախմաստավորված (դարձվածային) կապակցություններ. օր.՝ *ականջին նսրել* - Ճանճը *նսրել էր* ձիու *ականջին* (սովորական կապակցություն) // *Լուսիկը նսրել էր քրոջ ականջին* (դարձվածային կապակցություն. «անընդհատ ինչ-որ բաներ էր հարցնում»):

Բառային կապակցությունները, ըստ սերտության աստիճանի, լինում են երկու տեսակ՝ ազատ և կայուն. հմմտ. *սեղանի ուրք, դպրոցի պատուհան, աթոռին նսրել, բերանը ծռել* (ազատ կապակցություն) // *սեղանի ընկեր, հոգու պատուհան, աթոռին նսրել, բերանը ծռել* (կայուն կապակցություն)՝ «Նրանք դարձել են *սեղանի ընկեր*», «Սերը նրա *հոգու պատուհանն էր*», «Նա *նսրեց* տնօրենի աթոռին», «Նա չէր սիրում մարդկանց *բերան ծռել*» և այլն:

Կայուն կապակցությունները, իրենց հերթին, բաժանվում են երկուսի՝ սովորական (քերականորեն) և դարձվածային (հաղորդակցորեն). հմմտ. *աչքի լույս* «տեսողության հնարավորություն» // *աչքի լույս* «հատուկ վերաբերմունքի արժանի», *ձեռք մեկնել* «ձեռքը պարզել» // *ձեռք մեկնել* «օգնել», *ուրքի կանգնել* «տեղից վեր կենալ» // *ուրքի կանգնել* «բարելավվել» և այլն. բերված գուգահեռ օրինակների մեջ երկրորդը դարձվածային միավոր է:

Ինչպես իր տեղում՝ «Դարձվածաբանություն» թեմային անդրադառնալիս նշել ենք, դարձվածային միավորներն ունենում են ձևային, իմաստային և գործառական ուրույն յուրահատկություններ, որոնց փոխարեն սովորական կապակցությունները հանդես են բերում այլ յուրահատկություններ:

Լեզվում սովորական կապակցությունները, բնականաբար, ավելին են, քան վերախմաստավորված կապակցությունները՝ դարձվածային միավորները: Ավելին, դրանք ունեն լայն գործածություն, անխտիր հանդես են գալիս լեզվի գործառական բոլոր տարբերակներում,

այնինչ դարձվածային միավորները գործածվում են հատուկ նպատակադրմամբ, լեզվի ոչ բոլոր ոճերում և այլն: Նկատենք նաև, որ սովորական կապակցությունները «մաքուր» գրական ձևեր են, իսկ դարձվածային միավորները դրանից բացի, այսպես կոչված, սնվում են խոսակցական մտածողության ակունքներից:

5. Ինչպես հնդեվրոպական շատ լեզուներում, այնպես էլ ընդհանուր հայերենում բառակապակցություններն առանձնացվում են ըստ բաղադրիչների խոսքիմասային բնույթի: Իբրև բաղադրիչներ հիմնականում հանդես են գալիս գոյականը և ածականը, մասամբ՝ թվականը, դերանունը և մակբայը, այլ կերպ ասած՝ լիիմաստ խոսքիմասային միավորները:

Հայերենի բառակապակցությունների տեսությանը, ինչպես նաև հին, միջին և նոր շրջանում դրանց ամեն կարգի կազմությանը և գործածությանը նվիրված են մեծ թվով աշխատանքներ՝ մենագրություններ, հոդվածներ և այլն (Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան և ուրիշներ):

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 540-546:

Լրացուցիչ գրականություն:

Քոսյան Վ. Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., 1975:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 98-103:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 95-96:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 290-292:

Թեմա 2. Ստորոգում. ստորոգելի և հանգույց

Հիմնահարցեր: *Ինչ է ստորոգումը: Ստորոգման բնույթը՝ ստորոգյալ. ստորոգելի և հանգույց: Ստորոգյալի տեսակները՝ պարզ և բաղադրյալ:*


1. Ստորոգումը նախադասության բուն էությունն է, նշանակում է առարկայի հատկանիշի անջատում և վերագրում նույն այդ առարկային. օր.՝ *Ծառերը ծաղկել են: Ավրումեքենսն սլանում է փողոցով:* Այդ անջատումը և վերագրումը հոգեմտավոր գործունեության արդյունք են, մարդու իմացական և, բնականաբար, լեզվական կարողության (հնարավորության) իրականացում:

Այն ամենից առաջ պարզ նախադասության հատկանիշ է, որ առկայանում է կան երկկազմ, կան միակազմ նախադասության մեջ: Երկկազմ են ենթակայով և ստորոգյալով արտահայտված նախադասությունները, միակազմ են դրանցից մեկի կամ մյուսի բացակայությամբ արտահայտված նախադասությունները. հմմտ. *Ծառերը ծաղկել են: Գարուն: Լուսանում է* և այլն: Երկկազմ նախադասությունները հանդես են գալիս առկա ստորոգմամբ, իսկ միակազմ նախադասությունները՝ վերառյալ ստորոգմամբ: Վերջինները, կարելի է ասել, մոտ են բառակապակցությանը, թեկուզ լինեն բայական միադիմի կամ անդեմ նախադասություններ:

Ստորոգումը տեղի է ունենում այն դեպքում, երբ կա երեք բավարար պայման՝ 1) առարկա (ենթակա), որ կատարողն է (մի բան անողը կամ եղողը), այսինքն՝ խոսքի բուն առարկան է (սուբյեկտը), 2) հատկանիշ (ստորոգելի), որ վերագրվում է առարկային (ենթակային) (պրեդիկատը), և 3) վերագրող մաս (հանգույց, որ վերագրում է հատկանիշը առարկային) (լատ. copula «կապ, կեղիկ. հանգույց»). օր.՝ *Ծառերը ծաղկել են: Տղան աշակերտ է* և այլն: Բերված օրինակներում *ծառ*, *տղա* գոյականները (քերականորեն ձևավորված) առարկա (անձ) նշանակող բառեր են (ենթականեր), *ծաղկել* և *աշակերտ* բառերը հատկանիշ են (ստորոգելիներ), ընդ որում *ծաղկել-ը* էական բայի (*է* հանգույցի) հետ միասին է հանդես գալիս՝ իբրև ստորոգյալ, իսկ *աշակերտ* գոյականը վերագրվող հատկանիշ է (*ստորոգելի*), որ հանգույցի (*է-ի*) միջոցով վերագրվում է ենթակային: Այսպիսով՝ առարկա

և հատկանիշ նշանակող բառերի և հատկանիշն առարկային վերագրող բայ-հանգույցի հարաբերությունը կարելի է ներկայացնել իբրև միտք արտահայտող շարահյուսական (ստորոգումային) միավորի հարաբերություն (տե՛ս գծապատկեր 15):

Գծապատկեր 15



2. Ստորոգումը կատարվում է քերականական արտահայտության միջոցներով, եղանակային և ժամանակային հարաբերության պայմաններում: Բայի եղանակը և ժամանակը ստորոգման ընդհանուր և պարտադիր քերականական բաղադրիչներ են. ըստ այդմ՝ ստորոգումը հատկանիշի վերագրումն է առարկային, որն իրացվում է եղանակային-ժամանակային և վերաբերմունքային հարաբերություն արտահայտող քերականական միջոցներով: Վերջիններս բավականին տարբեր են առանձին լեզուներում, նույնիսկ յուրաքանչյուրի զարգացման տարբեր փուլերում:

Հայերենում ստորոգումն իրականանում է բայի եղանակային և ժամանակային ձևերով, որոնք միաժամանակ ցույց են տալիս այնպիսի հանգամանքներ, որ արտահայտվում են թվի, դեմքի, սեռի, հաստատման կամ ժխտման քերականական կարգերով. օր.՝ *Գարունը բացվում է: Մայրը չէր մոռացել երեխաներին կերակրել: «Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնասացի»* (Հ. Սահյան) և այլն: Բերված նախադասություններում ստորոգումը տեղի է ունեցել չեզոք սեռի բայերի սահմ. եղ. ներկա և վաղակատար անցյալ ժամանակներով, որոնք դրված են 3-րդ դեմքով, եզակի թվով, խոնարհման հաստատական և ժխտական ձևերով:

Կան լեզուներ, որոնք բացի ստորոգման այս սովորական տիպից ունեն նաև այլ կարգի ստորոգում: Ռուսերենում, օրինակ, ստորոգումը կարող է արտահայտվել ոչ միայն եղանակային և ժամանակային ձևե-

րով, այլն հնչերանգով և շարադասությամբ, այն էլ ոչ թե բայի բոլոր ժամանակներով դրված ձևերի, այլ միայն սահմ. եղ. ներկա ժամանակով դրված ձևերի դեպքում. օր.¹ *Армен – студент: Он – мой племянник: Природа – это чудо* և այլն: Գրանք հայերեն սովորաբար թարգմանվում են միայն եղանակային-ժամանակային ձևերով արտահայտված նախադասություններով. *Արևենը ուսանող է: Նա իմ ազգականն է: Բնությունը հրաշք է* և այլն:

Նույն երևույթը բնորոշ է նաև անգլերենին, թերևս նաև ֆրանսերենին և նույնատիպ այլ լեզուների:

Ի դեպ՝ սխալ է, ավելի ճիշտ հայերենին անհարիր է, բնորոշ չէ, օրինակ, ոռուերեն վերը բերված նախադասություններից երրորդի *это «դա, այդ»* բաղադրիչը անպայման թարգմանել, այն է՝ «Բնությունը *դա* հրաշք է», որն այլ բան չէ, քան շարահյուսական պատճենման օրինակ¹: Նույնը կարելի է ասել նման տիպի նախադասությունները թարգմանելիս բուրժի օգտագործման երևույթի մասին. հմմտ. *Природа – это чудо – Բնությունը՝ հրաշք է*:

3. Ստորոգյալը սովորաբար լինում է երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ: Այս առանձնացումը հստակ է, օրինակ, ժամանակակից հայերենում, ինչպես նաև այն լեզուներում, որոնցում այն կազմվում է նաև բայի եղանակային և ժամանակային ձևերով (օր.¹ ոռուերենում, ֆրանսերենում և այլն):

Պարզ են կոչվում միայն բայով արտահայտված ստորոգյալները, այսինքն՝ հատկանիշի վերագրումն առարկային կատարվում է միայն դիմավոր բայով. *Գարունը եկել է: Ծառերը կանաչում են: Ծիծեռնակները շուրտով կվերադառնան փառ երկրներից* և այլն: Բերված նախադասությունների ստորոգյալներից առաջինն արտահայտված է *գալ* չեզոք սեռի բայի սահմ. եղ. վաղակատար ներկա ժամանակի եզ. 3-րդ դեմքով, երկրորդը՝ *կանաչել*, նույն սեռի և եղանակի բայի ներկա ժամանակի հոգն. 3-րդ դեմքով, իսկ երրորդը՝ *վերադառնալ*, նույն սեռի պայմանական (ենթադրական) եղ. ապառնի ներկայի հոգն. 3-րդ դեմքով:

¹ Լեզվաբանության մեջ նման թարգմանությունը կոչվում է բառացի («ստրկական») թարգմանություն:

Իսկ բաղադրյալ կոչվում են այն ստորոգյալները, որոնք արտահայտված են այլ խոսքիմասային (կամ իբրև այդպիսին դիտվող) միավորով, ինչպես նաև այն դերբայներով, որոնք չեն մասնակցում եղանակային և ժամանակային ձևերի կազմությանը (անորոշ, ենթակայական և հարակատար դերբայները՝ ժամանակակից արևելահայերենում) և բայ-հանգույցով. օր.՝ Արջը վայրի *կենդանի է*: Երեխան *քնած է*: Անահիտը *ուսանողուհի էր*: Կարմիրը *ածական է*, իսկ խնձորը *միրգ է*: X-ը և y-ը մաթեմատիկական *նշանակումներ են*: Հայերենի հնչյուններից *բ*-ն ձայնեղ *բաղաձայն է*, իսկ *պ*-ն՝ *խուլ* և այլն:

Բերված օրինակներում ընդգծված մասերը (բառերը կամ բառաձևերը) բաղադրյալ ստորոգյալներ են, որովհետև *է* (էական) բայի սահմ. եղ. տարբեր ձևերի հետ բաղադրված են *կենդանի, քնած, ուսանող, ածական, միրգ, նշանակում, բաղաձայն, խուլ* բառերը, որոնցից ոչ մեկը դիմավոր բայ չէ: Այսպիսով՝ թվարկված բառերը բաղադրյալ ստորոգյալի այն մասն են, որոնք և հայոց լեզվի նորմատիվ (դպրոցական և բուհական) քերականություններում կոչվում են ստորոգելիական վերադիր կամ պարզապես՝ ստորոգելի, իսկ մյուս՝ էական բայի *է, են, էր* ձևերը կոչվում են հանգույց, որի միջոցով էլ ստորոգելիի (ստորոգելիական վերադրի) այս կամ այն հատկանիշը վեազրվում է ենթակային:

Այսպիսով՝ լեզուներում բաղադրյալ կոչվում է ստորոգելիի և հանգույցի միջոցով կազմված ստորոգյալը՝ քերականորեն կամ հնչերանգով: Ստորոգյալը, լինի պարզ թե բաղադրյալ, միևնույն է, խոսքի մեջ արտահայտում է հատկանիշի վերագրում առարկային՝ հաստատապես կամ ժխտումով:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 546-550:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 98-102:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 184-189, 196-197:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 330-334, 336-343:

Թեմա 3. Նախադասություն. սահմանումը և տեսակները

Հիմնահարցեր: *Նախադասության բնորոշումը. քերականական և տրամաբանական բնութագիրը: Նախադասության տեսակների առանձնացումը: Առանձնացում ըստ ստորոգման բնույթի և ըստ հնչերանգի:*

1. Նախադասությունը անհատի խոսքի նվազագույն միավոր է, որն ունի հնչերանգային ավարտվածություն և ինքնուրույն կառուցվածք, արտահայտում է ամբողջական և հաղորդակցորեն ըմբռնելի միտք: Նման բնորոշումը գրեթե անառարկելի է, երբ նկատի ենք ունենում ամենից առաջ հնդեվրոպական տիպի լեզուների կառուցվածքային յուրահատկությունները: Նախադասության առանձնացման կարևոր պայմաններ են բաղադրիչների (անդամների) ձևավորումը, քերականական իմաստի դրսևորումը և հաղորդակցման (ըմբռնման) ապահովումը:

Հայտնի են նախադասության բազմաթիվ սահմանումներ՝ տրված թե՛ ավանդական և թե՛ նորագույն տեսություններում, որոնց դեպքում հաշվի են առնվում շարահյուսական մակարդակի մի շարք առանձնահատկություններ՝ ստորոգում (ստորոգականություն), բովանդակության ամբողջականություն, հնչերանգային ավարտվածություն և այլն, իսկ գրավոր խոսքում՝ նաև երկու վերջակետի (ավարտանիշի) միջև ընկած բառերի կամ բառաձևերի հարաբերակցություն և այլն:

Հայոց լեզվի շարահյուսական նվազագույն միավորի՝ նախադասության («խոսքի») բնորոշման հարցում մեծ ներդրում ունի Մ. Աբեղյանը: Հանդիսանալով լեզվի տեսության հարցերում իր ժամանակի հոգեբանական դպրոցի հետևորդ՝ նա դրեց հայոց լեզվի շարահյուսության տեսական հիմքերը¹: Ըստ Մ. Աբեղյանի պարզ ձևակերպման՝ խոսել նշանակում է խոսք կազմել՝ միտք արտահայտելու համար:

Նախադասությունը բառերի այնպիսի հարաբերակցված ամբողջություն է, որն արտահայտում է միտք և ունի հնչերանգային ավարտ-

¹ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912: Նույնի՝ Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

վածություն: Այդ տեսության համաձայն՝ հայերենի նախադասությունը (խոսքը) հիմնված է դիմավոր բայաձևի վրա, որին լրացում են հանդիսանում ոչ միայն մի կողմից՝ որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը, մյուս կողմից՝ խնդիրները և պարագանները, այլև ենթական (բառի բուն իմաստով *ենթակա*, այսինքն՝ խոսքի հիմնական մասին՝ ստորոգյալին լրացնող, սկսած Թրակացու քերականության հայերեն թարգմանությունից): Հայերենը ժառանգել է հնդեվրոպական հիմքլեզվի նախադասության նման տիպը:

Նախադասության միտքն արտահայտվում է ստորոգմամբ: Վերջինս, ինչպես վերը անդրադարձանք բառակապակցություններն անցնելիս, լինում է երկու կարգի՝ առկա և վերացարկված ստորոգում: Հիշենք նաև, որ առկա ստորոգումը լինում է բայով՝ ստորոգյալով, վերացարկված ստորոգումը՝ այլ խոսքիմասային միավորներով՝ հնչերանգով և այլն: Երկկազմ նախադասությունը ստորոգյալով արտահայտված ստորոգումային նախադասություն է:

Հայ լեզվաբանության մեջ հետազայում առաջ է քաշվում, ինչպես ընդունված է ասել, երկկազմ՝ առկա ենթակա և ստորոգյալ ունեցող նախադասության տեսությունը (*Ես գրում եմ, Արամը գնացել է* և այլն), որի հակադրությամբ մյուսները կոչվեցին միակազմ՝ անվանական, բայական (*Երևան: Ասում են: Չաղմկել* և այլն) և այլն: Երկկազմ նախադասությունները հանդես են գալիս կամ ինքնին (*Երեխան քնել է*), կամ իրենց լրացումներով՝ իբրև ենթակայի խումբ և ստորոգյալի խումբ (*Բակում մեկ ծամ խաղալուց հետո փոքրիկ երեխան իր առանձնասենյակի մահճակալին հանգիստ քնել է*): Ընդունված է առաջինը կոչել պարզ համառոտ, իսկ երկրորդը պարզ ընդարձակ նախադասություն, ընդ որում պարզ են, որովհետև մեկ (և միայն մեկ) ստորոգյալ ունեն, մեկն համառոտ է, որովհետև բաղկացած է միայն ենթակայից և ստորոգյալից, իսկ մյուսը ընդարձակ է, ենթակայից և ստորոգյալից բացի ունի դրանց լրացում հանդիսացող այլ անդամներ:

Ժամանակակից հայերենը շարունակում է հին հայերենից եկող այն առանձնահատկությունը, որ ստորոգումը բավարար պայման է

նախադասության (խոսքի) կազմության համար, որովհետև հայերենում առհասարակ բայի եղանակային և ժամանակային ձևերն ունեն արտահայտության պլանի հստակ տարրորոշված դրսևորում. հմմտ. *գրում եմ, գրում ես, գրում է, գրում ենք, գրում եք, գրում են*, որոնցից յուրաքանչյուրում, իբրև բայ-ստորոգյալ, երևում է, թե ով է գործողության կատարողը՝ ենթական:

Ճանաչողությունը, որպես մարդկային գործունեության բարձրագույն ոլորտ, կարելի է բնորոշել լեզու և իմացություն («մաքուր բանականություն») հարաբերակցության մեջ. լեզվի մեջ նախադասություն («խոսք»), իսկ իմացության մեջ (ի վերջո՝ լեզվական) դատողություն («միտք»), մեկը՝ քերականական է, իսկ մյուսը՝ տրամաբանական, երկուսն էլ ունեն մեկ նշանակում՝ հաղորդակցական լեզվաիմացություն. օր.՝ Մարդը *կատարում է* աշխատանք (նախադասություն՝ ենթակա-ստորոգյալ - ուղիղ խնդիր) // Մարդը *կատարում է* աշխատանք (դատողություն՝ սուբյեկտ - պրեդիկատ - օբյեկտ): Օրինակը նույն է քերականորեն և տրամաբանորեն: Հմմտ. Մարդը *կատարում է* աշխատանք (նախադասություն՝ ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր) / Աշխատանքը *կատարվում է* մարդու կողմից (ձեռքով և այլն) (նախադասություն՝ ներգործածն / կրավորածն, քերականորեն՝ այլ) // Մարդը *կատարում է* աշխատանք (սուբյեկտ - պրեդիկատ - օբյեկտ) / Աշխատանքը *կատարվում է* մարդու կողմից (ձեռքով և այլն) (դատողություն՝ ակտիվ / պասիվ, տրամաբանորեն՝ նույն):

Նախադասությունը քերականական տերմին է, իսկ դատողությունը՝ տրամաբանական: Քերականությունը և տրամաբանությունը, իբրև գիտություն, ունեն ընդհանուր եզրեր, որոնք պայմանավորված են հիմքում ընկած երևույթի՝ մտքի արտահայտման հանգամանքով: Սակայն դրանց միջև կան զգալի տարբերություններ. ստորոգումը մի դեպքում ունի էական նշանակություն, մյուս դեպքում՝ ոչ: Նախադասության կարևորագույն նախապայման է ստորոգումը:

Լեզվի հարցում կարևոր է նախադասության՝ շարահյուսական այդ միավորի ստորոգումային հատկությամբ օժտված լինելը. ստորոգում ունեցող միավոր է նախադասությունը՝ անկախ ստորոգման

իրական կամ վերացական (վերառյալ) լինելուց: Իսկ տրամաբանության մեջ ամեն կարգի նախադասություն չէ, որ կարելի է համարել դատողություն. վերջինս իմացական է և ունի լեզվական հիմքեր:

2. Նախադասության տեսակների առանձնացումը սովորաբար կատարվում է ըստ որոշակի հատկանիշների: Դրանք ունեն էական դեր շարահյուսական միավորի բնութագրման և առանձնացման համար, իրարից զգալիորեն տարբեր են և երևույթը ներկայացնում են բաղադրիչ մասերի երկանդամ կամ բազմանդամ հակադրությամբ (բաշխումով).

ա) ըստ ստորոգման բնույթի (հաստատական և ժխտական),

բ) ըստ ստորոգման եղանակի (բայական և անվանական, կամ երկկազմ և միակազմ),

գ) ըստ կառուցվածքի (պարզ և բարդ),

դ) ըստ կախվածության (զլիսավոր և երկրորդական),

ե) ըստ հնչերանգի (ինտոնացիայի) (սահմանական, հարցական, հրամայական և բացականչական):

Եթե փորձենք ավելի պարզ ներկայացնել հատկանիշները, ապա կարելի է նշել, որ դրանցից երկուսը առնչվում են ստորոգմանը (*ա*, *ե*), իսկ մյուս երեքը՝ նախադասության այլ բաղադրիչների առնչություններին (*բ*, *գ*, *դ*)¹:

3. Ինչ վերաբերում է մյուս երկուսին՝ ստորոգման բնույթին (*ա*) և հնչերանգին (ինտոնացիային) (*ե*), դրանց անդրադառնում ենք այս թեմայի մեջ (ստորև):

ա. Ըստ ստորոգման բնույթի, ինչպես վերը նշվեց, նախադասությունը լինում է հաստատական և ժխտական: Ստորոգումը կատարվում է բայի հաստատական կամ ժխտական (արգելական) ձևերով: Այս դեպքում առկա է հակադրելի միավորների երկանդամ բաշխման հարաբերություն, որում արտահայտության պլանում ունենք \emptyset (*գրո*)/չ- (*ոչ*) հակադրություն, իսկ բովանդակության պլանում՝ ժխտական / ոչ ժխտական առնչություն:

Հաստատական է կոչվում այն նախադասությունը, որում կատար-

¹ Դրանցից 2-րդը, 3-րդը և 4-րդ, քանի որ առավել էական հատկանիշներ են, ուստի դրանց անդրադառնալու ենք առանձին (տես ստորև, թեմա 4, 7, 8):

վող գործողությունը, իբրև ստորագումային հատկանիշ, հաստատապես վերագրվում է ենթակային, այլև այն, որ նրան վերագրվող այս կամ այն հատկանիշը քերականորեն հաստատվում է¹: Այլ կերպ ասած՝ բուն կամ հաստատական նախադասությունը ցույց է տալիս իրականության փաստի (իրողության) հաստատում, իրականության լեզվական հավաստի արտացոլում:

Նախադասությունը (խոսքը) կառուցվում է բայի եղանակային և ժամանակային հաստատական ձևերով, որոնք չեն պարունակում որևէ ժխտում (արգելք, բացառում, բացասում և այլն). նախադասության ստորոգյալը դրված է լինում խոնարհման հաստատական ձևերով. օր.² Գարունը *գալիս է*: Ծառերը շուտով *ծաղկելու են*: Արագիլները *կվերադառնան* հեռուներից: Օրերը, անշուշտ, *կերկարեն*: Երեխաներ, ծառերից կախվող փայտե բներ *շինե՞ք* թռչունների համար և այլն, և այլն:

Ժխտական նախադասությունը, անշուշտ, նախորդի՝ հաստատականի հակառակն է, պարունակում է ժխտում. «Այն նախադասությունները, որոնց մեջ քերականորեն ժխտվում է ստորագումը, այսինքն՝ որոնց ստորոգյալը ոչ թե հաստատում, վերագրում է ենթակային որևէ հատկանիշ, այլ բացասում՝ ժխտում»²: Այլ կերպ ասած՝ ժխտական նախադասությունը ցույց է տալիս հիմքում ընկած փաստի (եղածի) բացառում (մերժում, այլակերպում և այլն), իրականի լեզվական բացառմամբ արտացոլում:

բ. Ըստ հնչերանգի (ինտոնացիայի) մի շարք լեզուներում, այլև հայերենում տարբերում են պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասություններ: Առանձնացման հիմքում, իրոք, ընկած է նախադասության երանգավորման (հնչերանգի) հատկանիշը:

Առաջինը չունի հնչերանգային նշանակում, որպիսով այն հակադրվում է մյուս երեքին՝ իբրև հնչերանգային նշանակում ունեցողներ, ուստի հարաբերակցության նշույթավորված անդամը այս վեր-

¹ Հմմտ. Հ. Զ. Պեպրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջ 171:

² Նույն տեղում, էջ 114:

ջիններն են, ի հակադրություն առաջինի՝ իբրև չնշոյթավորվածի: Այնուհետև՝ առաջինում առկա է քերականական մասնիկավորում, մյուսները չունեն այն. հմմտ. պատմողական նախադասությունը արտահայտվում է սահմանական եղանակի [օ (*գրո*)], պայմանական (ենթադրական) և հարկադրական եղանակների [կ, *պիտի (պետք է)*] մասնիկներով: Իսկ հարցական, հրամայական և բացականչական նախադասություններն ունեն հնչերանգ, որ բանավոր խոսքում արտահայտվում է ձայնի (հոդաբաշխման) տարբեր կարգի ելևէջներով, իսկ գրավորում՝ հատուկ նշաններով՝ հարցական (°), շեշտ (') և բացականչական (˘):

Այսպիսով՝ հիշյալ նախադասությունները ավելի ճիշտ կլինի տարբերել ոչ թե ըստ բնույթի, այլ ըստ հնչերանգի (ինտոնացիայի), որը տեսականորեն ավելի իրական է:

Պատմողական նախադասությունը, որքան էլ լեզվում (խոսքում) ունի լայն գործածություն, նույնիսկ ավելին, քան մյուսները միասին վերցված, սակայն քերականական առանձնացման մեջ այն, ըստ հնչերանգի, չնշոյթավորված անդամ է, ի հակադրություն մյուսների՝ նշոյթավորվածների [օ (*գրո*) // կ, *պիտի (պետք է)*] հակադրություն:

Ըստ այսմ՝ խոսքային միավորի տարբերակիչ հատկանիշ է հնչերանգային (ինտոնացիոն) ավարտվածությունը, որը նախադասության բնորոշման հիմնական հատկանիշ է, տվյալ դեպքում՝ էական հատկանիշ:

1) Պատմողական նախադասությունը ցույց է տալիս հաստատական կամ ենթադրական գործողություն, որ արտահայտված է լինում սահմանական, պայմանական (ենթադրական) և հարկադրական եղանակների բայաձևերով. նման նախադասությունները օժտված չեն որևէ հնչերանգով, այլ քերականական իմաստը ձևավորվում է (*գրո*), կ, *պիտի (պետք է)* մասնիկներով: Օր.՝ «Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում // Ու իմ սիրտը իմ մրտքի հետ անհուններն է թափառում» (Թումանյան): «Էլի գարուն կգա, կբացի վարդը, // Միրեկանը էլի յարին կմնա...» (Ե. Չարենց): «Ամեն անգամ սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով» (Վ. Տերյան): «Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի, // Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...» (Պ. Սևակ) և այլն:

Հայերենում նույնպես պատմողական նախադասությունը ունենում է դրական և ժխտական կառույցներով ենթատեսակներ, չի փոխակերպվում (վերածվում) միայն հրամայական բնույթի նախադասության, խոսքի գրավոր տարբերակում չի պահանջում որևէ կետադրություն և այլն. օր.՝ Վաղ առավոտից տրակտորներն անդադար աշխատում են հանրային հերկերում: Ոչ ոք չի մտածում հեռու մնալ հաշոդությանը ընթացող գործից և այլն:

2) Հարցական նախադասությունը ցույց է տալիս հարցումով, այլև հարցական հնչերանգով արտահայտվող գործողություն: Հարցումը լինում է հավաստիացման, խորհրդակցման, ճարտասանական, լրացական երագներով, գրավոր խոսքում այն սովորաբար արտահայտվում է հարցական նշանով, որ երբեմն ուղեկցվում է բացականչական նշանով, կախման կետերով և այլն. օր.՝ «Ո՞ր կորան... // Մոտիկներս *հոր* կորան» (Թումանյան): «Քույրիկ, ասա, *հորն* է ճամփան Բինգյոլի» (Իսահակյան): «Միթե վերջին պոետն եմ ես, // Վերջին երգիչն իմ երկրի» (Վ. Տերյան): «Ո՞րն է, բարձ, մեր հայրենիք» (Հ. Շիրազ): «Շանր բան է պետք արդյոք երջանկության համար» (Պ. Սևակ) և այլն:

Այս դեպքում, ի տարբերություն մյուս տեսակի նախադասությունների, խոսողն ավելի շատ ակնկալում է տեղեկություն խոսակցից, քան որ ինքը պիտի տեղեկացնի. *Չե՞ք ասի, հորն է Արովյան փողոցը, - հարցնում է անծանոթը:* «Իմ հայրենիքը տեսն՞լ ես, ասա» (Հովհ. Հովհաննիսյան): Գրավոր խոսքում գործածվող կետադրական նշանը, ի տարբերություն շատ լեզուների, հայերենում բավականին ճկուն է, կարող է դրվել խոսքի նպատակադրման համաձայն նախադասության ցանկացած անդամի վրա. օր.՝ Արմենը *գնանց* աշխատանքի // Արմենը գնաց *աշխատանքի* // Արմենը գնաց աշխատանքի և այլն: Պարզ նախադասությունը, քանի որ ունի մեկ ստոռգում, հարցումը լինում է մեկ դեպքում, իսկ բարդ նախադասություններում կարող է լինել մի քանի հարցում. օր.՝ Դուք *եղևի եք* Երևանում: Դուք *չե՞ք եղել* այդ քաղաքում, *չե՞ք այցելել* թանգարանները, *չե՞ք հանգստացել* կապուտակ Սևանի ափին:

3) Հրամայական կոչվում է այն նախադասությունը, որն արտահայտում է հրաման գործողությունը կատարելու, այլև բացառելու հա-

մար: Հայերենում նման նախադասության ստորոգյալը, իբրև կանոն, դրվում է հրամայական եղանակի բայաձևերով. օր.՝ «*Զարկեցէք*, դարբիններ, կրոանը սալին, // *Զարկեցէք* կրոանը – շղթայքն ամրանան» (Հովհ. Հովհաննիսյան): ««*Կանգնեցէք*», - գոչեց վրրձինը ձեռքին // Կախարդ ծերունին հուզված տարերքին» (Թումանյան): «*Թո՛ղ*, Դիլան, *գնա՛* քեզ համար...» (Ակ. Բակունց) և այլն:

Նման նախադասությունների արտահայտության պլանի հատկանիշ է հնչերանգը, ըստ իմաստի՝ դրանք արտահայտում են ոչ միայն հրաման, այլև կոչ, հորդոր, առաջարկ, խնդրանք, արգելք և այլն, իսկ ըստ գործառության՝ հանդես են գալիս կոնկրետ նպատակով և կարևորությամբ. օր.՝ *Երեխաններ, անցէք* լսարան: «*Լսիր, որդիս, պատգամ որպես՝ սիրող քո մոր խոսքը սրտանց*» (Ս. Կապուտիկյան): «*Մայր, հանգրո՛ւ այդ կրակը*» (Բաֆֆի): Հրամայական նախադասությունը ևս լինում է երկկազմ և միակազմ՝ նայած գործողության նպատակադրման: Ստորոգյալը արտահայտվում է ոչ միայն հրամայական եղանակի, այլև մյուս՝ պայմանական, ըղձական և այլ եղանակների բայաձևերով, մանավանդ հորդորականի իմաստով. օր.՝ *Չընկրկէք* թշնամու առաջ, ամենևին *չընկրկէք*: *Մորեեսանք*, գուցե մի բան պարզվի: *Գնացի՛նք, երեխաններ* և այլն:

Լայն գործածություն ունեն առանց քերականական ստորոգման հրաման, հորդոր, ցանկություն և այլն արտահայտող նախադասությունները. դրանք նույնպիսի հնչերանգով միակազմ նախադասություններ են. օր.՝ *Չծխե՛լ և չաղմկե՛լ: Պահպանե՛լ* լոություն: *Չխանգարե՛ս: Ո՛չ մի դեպքում, ո՛չ մի առարկություն: Հավասա՛ր, զգա՛նար* և այլն:

4) Բացականչական նախադասություն կոչվում են այն նախադասությունները, որոնք ունեն բացականչական, զարմացական և այլն հնչերանգ (ինտոնացիա). գրավոր խոսքում հնչերանգը արտահայտվում է բացականչական նշանով, որ դրվում է սովորական, այլև բացականչություն պարունակող բառի (առավել ևս ձայնարկությունների) վրա. օր.՝ «Ձեր խոսքն ենք ասում.- *Ասրե՛ք, երեխե՛ք*, բայց մեզ պես չապրեք» (Թումանյան): «*Մի տեսեք է՛...* Տերտերն իրա ձին ժամհարին ա տվել» (Ակ. Բակունց): «*Իմ քաղցրան՛ն, // Իմ բարձրան՛ն, // Իմ փառապա՛ծ, // Իմ փառապա՛նծ*» (Պ. Սևակ) և այլն:

Ի լրացումն վերն ասվածի՝ հայերենը հնչերանգ (ինտոնացիա) ունեցող նախադասությունների արտաբերման և գրառման հարցում ևս ունի մի յուրօրինակություն՝ հնչերանգային նշաններ կարող են դրվել նախադասության գրեթե ցանկացած անդամի վրա (չնչին բացառությամբ). օր. *Անահիրը գնաց Կուն* տիպի նախադասության յուրաքանչյուր անդամ կարող է գործածվել հատկապես հիշյալ նշաններից հարցականով և բացականչականով. հմմտ. Անահիրը գնաց տուն: Անահիրը գնաց տուն: Անահիրը գնաց տուն (հարցական): Անահիրը գնաց տուն: Անահիրը գնաց տուն: Անահիրը գնաց տուն (բացականչական) և այլն:

Լեզուներում տարբերում են նաև նախադասության հնչերանգ (ինտոնացիա) հասկացությունը, որն այլ բան չէ, քան ձայնի միավար (ռիթմիկ) և մեղեդային (մելոդիկ), դրսևորում, նախադասության տարբեր հատվածների ելևէջավորում, որ ի հայտ է գալիս հատկապես հարցական, հրամայական և բացականչական նախադասություններում:

Բացականչական նախադասությունը լինում է ըղձական եղանակի բայով, մասամբ նաև հարցական կամ հարաբերական դերանուններով, եղանակավորող բառերով և այլն: Բանավոր խոսքում հնչերանգային ձգվածություն, այլև շեշտվածություն են ունենում հիացմունք, ավսոսանք և այլն իմաստով բառերը՝ արտահայտված բացականչական նշանով, այլև շեշտով. օր.՝ *Ի՜նչ գեղեցիկ է Սևանն իրիկնապահին, մայրամուտից առաջ: Չէ՛, չեմ կարծում, թե նա կուշանա: «Երանի՛ քեզ, այ՛ ուխտավոր, երանի՛ քեզ, հայ՛ ուխտավոր»* (Թումանյան): *«Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ, // Հեովից անթիվ ձեռքերով»* (Թումանյան) և այլն:

Հիմնական գրականություն:

Մղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 548-554:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 167-179:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 330-334:

Թեմա 4 . Նախադասության գլխավոր և երկրորդական անդամները

Հիմնահարցեր: Նախադասության անդամ հասկացության սահմանումը: Նախադասության գլխավոր անդամների առանձնացումը և բնորոշումը: Նախադասության երկրորդական անդամների տեսակները:

1. Լեզուների ուսումնասիրության պատմությունը ցույց է տալիս, որ նախադասություն ասելով, սովորաբար, հասկանում են, այսպես կոչված, «լիաձավալ» (երկկազմ՝ ստորոգյալ և ենթակա ունեցող) նախադասությունները, որպիսով երկրորդ պլան են մղված լինում մյուս կարգի՝ «ոչ-լիաձավալ» (միակազմ՝ անվանական, միադիմի և այլն) նախադասությունները: Ըստ այդմ՝ գտնում են, որ նախադասության անդամ են հանդիսանում նրա բաղադրիչ մասերը՝ բառերը կամ բառերի խմբերը, որոնք օժտված են քերականական իմաստով և կատարում են որոշակի պաշտոն: Այսպես, «Չաղմկե՛լ»: «Առատ անձրևը անմիջապես դադարեց» նախադասություններից առաջինը կազմված է մեկ բառից, երկրորդը՝ բառերից, որոնք, իրենց հերթին, կազմում են երկու խումբ՝ ենթակայի և ստորոգյալի. դրանք, ըստ էության, նախադասություններ են, որովհետև ունեն քերականական իմաստ, հնչերանգային ավարտվածություն, ինչպես նաև դրանցում նկատելի է մտքի լիարժեք դրսևորումը: Երկրորդում բաղադրիչների քերականական կապը բացահայտ (առկա. էքսպլիցիտ) է, իսկ առաջինում՝ ոչ բացահայտ (ներակա. իմպլիցիտ). քերականական կապ ասելով, տվյալ դեպքում, հասկանում ենք բաղադրիչների հարաբերակցություն նույնպիսի իմաստի արտահայտման նպատակով:

Նախադասությունը կազմված է շարահյուսական մակարդակի բաղադրիչ մասերից, որոնք տարբեր են ոչ միայն քանակով, այլև միմյանց հարաբերման առումով: Բաղադրիչ մասերը կան ինքնուրույն, լիիմաստ բառեր են, կան բառակապակցություններ: Իբրև լեզվի վերին մակարդակի միավոր՝ այն սերվում է աստիճանային միավորներից՝ բառակապակցություններից: Լեզուներում նախադասության սովորական տեսակը պատմողական նախադասությունն է՝ արտահայտված բայի սահմանական եղանակի ժամանակային ձևերով

դրված ստորոգյալով: Իսկ մյուս եղանակների ձևերով արտահայտված ստորոգյալներով նախադասությունները, կարելի է ասել, ածանցվում են հիմնականին:

Ձևաբանության մեջ սահմանական եղանակը, իսկ շարահյուսության մեջ պատմողական նախադասությունը, ներքին տիպաբանությանը, առնչակից են՝ ի տարբերություն մյուսների՝ այլ եղանակով և այլ հնչերանգով արտահայտված միավորների: Երբ ըստ հարկի փորձում ենք անդրադառնալ նախադասության կառուցվածքին, նրա բաղադրիչ մասերի հարաբերակցությանը, սովորաբար նկատի ենք ունենում պատմողական նախադասությունը, որովհետև այն իրականանում է առանց խոսքի նկատմամբ խոսողի կամ խոսակցի վերաբերմունքի, ինչպես նաև այն, որ խոսքի մեջ առհասարակ այդ տիպի նախադասություններն ունեն գործածության մեծ հաճախականություն:

Կենդանի լեզուներում գոյություն չունի նախադասության՝ ըստ գլխավոր և երկրորդական անդամների լիակատար ծավալում, քանի որ խոսքի կառուցումը տեղի է ունենում ավելի կոնկրետ, իրական ձևով, այն միշտ ունի իրադրական բնույթ: Նախադասության անդամների առանձնացումը հիմնված է բնագրի ըմբռնման նպատակով նրա մասերի խմբավորման սկզբունքի վրա: Դա տեղի է ունենում ոչ միանգամից, այլ աստիճանաբար. նախ առանձնացվում են նախադասության բուն իմաստի կրողները, որոնք են ենթական և ստորոգյալը. դրանք պատմողական նախադասություններում կան առկա են միաժամանակ, կան առկա չեն, զեղչված են:

2. Հատկապես վերլուծական կառուցվածքի (ոչ ներմարմնավորյալ և այլն) լեզուներում, ենթական և ստորոգյալը կազմում են նախադասության միջուկը, որին այս կամ այն կերպ հարում են մյուս բաղադրիչները՝ ուժեղ կամ թույլ կապվածությամբ: Ենթակա և ստորոգյալ ունեցող նախադասությունները ընդունված է կոչել երկկազմ նախադասություններ:

Լեզուների մեծ մասին բնորոշ է երկկազմ նախադասությունների տիպը, այսինքն՝ միայն ստորոգյալի ձևով հնարավոր չէ (թերևս դժվար է) որոշել խոսողին՝ գործողությունը կատարողին (ենթակային), մանավանդ բանավոր խոսքում:

Այդպիսի լեզուներ են ֆրանսերենը, անգլերենը, մասամբ նաև ռուսերենը և այլն. օր.՝ ֆրանս. *je dis* [di] «ես ասում եմ», *tu dis* [di] «դու ասում ես», *il (elle) dit* [di] «նա ասում է» և այլն, անգլ.՝ *I have* [hew] «ես ունեմ», *You have* [hew] «դու ունես», *hie (shi, it) have* [hew] «նա ունի», ռուս.՝ *я сказа́л* [skazal] «ես ասացի», *ты сказа́л* [skazal] «դու ասացիր», *он сказа́л* [skazal] «նա ասաց» և այլն: Նման դեպքերում «փրկություն» է այս կամ այն դեմքով դրված դերանունը: Հմնտ. հայ. (գրաբար)՝ *երթամ* «գնում եմ», *երթաս* «գնում ես», *երթայ* «գնում է» և այլն, (արևելահայ.) *գնում եմ*, *գնում ես*, *գնում է* և այլն, (արևմտահայ.) *կերթամ* «գնում եմ», *կերթաս* «գնում ես», *կերթայ* «գնում է» և այլն:

Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում հայերենը այն լեզուներից է, որի ստորոգյալի ձևաբանական դրսևորումը դեմքով և թվով միջոց է ըմբռնելու ենթակայի՝ խոսողի ով լինելը: Հայտնի է, որ բայի դիմավոր ձևերը թե՛ գրաբարում և թե՛ նոր գրական հայերենում արտահայտում են նաև դեմք և թիվ, որոնցով տվյալ բայաձևը, իբրև նախադասության ստորոգյալ, ցույց է տալիս նաև գործողության կատարողին՝ խոսողին խոսքի առարկայի վերաբերյալ:

Նախադասությունը, իբրև լեզվական-տրամաբանական իրողություն, իր պարզ կառուցվածքով, ակտուալ անդամատման արդյունքում, ներկայացնում է ենթակայի և ստորոգյալի հարաբերակցություն: Այն լեզվական ոլորտում՝ լեզվական հաղորդման մեջ ներկայանում է իբրև *թեմայի* («այն, ինչ ընկած է հիմքում») և *ռեմայի* («այն, ինչ ասված է, ասվածք»), իսկ դատողության մեջ՝ սուբյեկտի (լատ. *subiectum* «ենթակա») և պրեդիկատի (ուշ լատ. *praedicatum* «ասված. ստորոգյալ» < *prae* «մինչ, նախ-» - *dico* «ասել») հարաբերակցություն: Նկատենք, որ լեզվաբանության մեջ թեմայի և ռեմայի հարաբերակցության գիտական լավագույն ուսումնասիրությունը հանդիպում է ամենից առաջ ռուս լեզվաբանների աշխատություններում (Ա. Ա. Շախմատով, Հ. Պատու, Լ. Վ. Շչերբա, Վ. Վ. Վինոգրադով և ուրիշներ):

¹ Հմնտ. Большой энциклопедический словарь: Языкознание, главный редактор В. Н. Ярцева, 2-е (репринтное) издание «Лингвистического энциклопедического словаря» 1990 года, М., Научное издательство «Большая Российская энциклопедия», 1998, էջ 410, 507:

Ենթական առանձին կամ իր լրացումներով և ստորոգյալն առանձին կամ իր լրացումներով ըմբռնումներ են լեզվաբանության մեջ, որոնք առանձնացվում են ինքնին, սակայն ոչ առանց տրամաբանականի՝ առանց դատողության հիմքերի: Լեզվաբանականը և տրամաբանականը ենթակա-ստորոգյալ հարաբերակցությամբ գտնվում են փոխադարձ կապի և կախվածության մեջ: Ըստ այդմ՝ ենթական առանձին կամ իր լրացումներով հանդես է գալիս իբրև հաղորդման (ասելիքի) թեմա (դատողության սուբյեկտ), իսկ ստորոգյալն առանձին կամ իր լրացումներով՝ իբրև հաղորդման ռեմա (դատողության պրեդիկատ): Այլ կերպ ասած՝ հաղորդման թեմա-ռեմա հարաբերակցությունը խոսքում (պատմողական նախադասության մեջ) նույնն է, ինչ դատողության սուբյեկտ-պրեդիկատ հարաբերակցությունը. օր.՝ *Մեր բակի փոքրիկ երեխաները խաղում են ամբողջովին հասկանալի աղմուկով ու աշխուժությամբ: Երեք փարի առաջ րնկած ծառերը խոստանում են առար բերք: Ոսանողների համերաշխ հավաքներն անցնում են հեղափոխի գրույցներով և սուր քանակեճով և այլն:* Բերված օրինակները, որոնք իրենց բնույթով պատմողական են, կառուցված են թեմա-ռեմա հարաբերակցության վրա, առաջինում՝ *երեխաները խաղում են*, երկրորդում՝ *ծառերը խոստանում են*, երրորդում՝ *հավաքներն անցնում են*, որոնք էլ այդ նախադասությունների գլխավոր անդամներն են՝ ենթական և ստորոգյալը:

Նախադասության քերականական կառուցվածքի հիմնական մասը որոշում են, այսպես կոչված, միջուկային կամ հենքային բաղադրիչները, որոնք ավանդական, նորմատիվ ձևակերպմամբ կոչվում են նախադասության գլխավոր անդամներ: Դրանք իրականացնում են հաղորդակցական՝ տրամաբանական և քերականական գործառույթներ՝ նախադասության գլխավոր անդամների վրա հիմնված սուբյեկտ-պրեդիկատ // թեմա-ռեմա հարաբերակցության մեջ:

3. Նախադասության գլխավոր անդամները՝ ենթական և ստորագյալը, խոսքի մեջ կարող են հանդես գալ երկու կերպ՝ կամ ինքնին (առանց լրացումների), կամ իրենց լրացումներով, ընդ որում վերջիններիս մասնակցությունը կարող է միանգամայն տարբեր լինել՝ թե՛ քանակի և թե՛ գործածության հաճախակիության առումով:

Այսպես, եթե վերը բերված նախադասություններից գատենք գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը, *երեխաները խաղում են, ծառերը խոստանում են, հավաքներն անցնում են*, ապա կունենանք նախադասության ենթակային կամ ստորոգյալին հարող բաղադրիչները, մի դեպքում՝ *մեր բակի փոքրիկ, երեք տարի առաջ փնկած, ուսանողների համերաշխ*, որոնք լրացնում են ենթականերին, մյուս դեպքում՝ *ամբողջովին հասկանալի աղմուկով ու աշխուժությամբ, առար բերք, հեղափոխություններով և սուր քանակեճով*, որոնք ստորոգյալի լրացումներ են: Ուստի այս վերջինները գլխավոր անդամների լրացումներ են, տարբեր գործառույթ իրականացնող բաղադրիչներ են:

Այսպիսով, խոսքը, հաղորդակցական սովորական պայմաններում, բաղկացած է լինում նախ՝ գլխավոր և երկրորդական անդամներից, այնուհետև՝ նրանց հարող երկրորդական անդամներից. առաջիններն ինքնին կարող են միտք արտահայտել, սակայն երկրորդները չեն կարող միտք արտահայտել, այլ մասնակցում են հիմնական մտքի մասնավոր կողմերի ծավալմանը. երկրորդական անդամները լրացումներ են, իսկ գլխավորները, այդ առնչությամբ՝ լրացյալ:

Նախադասության գլխավոր անդամներին լրացնող բաղադրիչները լեզուներում հանդես են գալիս զգալի տարբերություններով: Հնդեվրոպական գրեթե բոլոր լեզուներում, ըստ հունական և հռոմեական քերականական ավանդույթի (որովհետև այդ լեզուները հիշյալ ավանդույթի կրողներ են), ենթակայից և ստորոգյալից հետո, թերևս առաջին տեղում է ստորոգյալի լրացում ուղիղ խնդիրը՝ իբրև նախադասության (դատողության), այսպես կոչված, «ամենախնդրահարույց» բաղադրիչ. օր.՝ Երեխան կտորեց *մայրիկը*: Մայրը սիրում է *որդուն* և այլն: Բերված օրինակներում, տրամաբանական ձևակերպման մեջ, դատողության միջուկին՝ ստորոգյալին անմիջապես հարում է ուղիղ խնդիրը, որը պայմանավորված է բայի ներգործական սեռով: Առաջ անցնելով նկատենք, որ ուղիղ խնդիրը հանդիսանում է ստորոգյալի քերականական այն իմաստի կրողը, որն ապահովում է գործողության ուղղվածությունը [ենթակա – ստորոգյալ – (ուղիղ) խնդիր]:

Նախադասության գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը, ըստ վերը նշված նույն ավանդույթի, ունենում են իրենց ոչ միայն անմիջական, այլև միջանկյալ լրացումները. ավանդաբար՝ գլխավոր անդամների անմիջական լրացումներին հարող բաղադրիչները կոչվում են լրացման լրացումներ. օր.՝ *Մեր բակի փարթամ սաղարթով խնձորենին ծաղկել է: Աշակերտներն այցելեցին շար հեռավոր լեռնասնիսր գյուղերը:*

Ժամանակակից հայերենում ենթակայի անմիջական լրացումներն են որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը, ուրիշ շատ լեզուներում, օրինակ, ռուսերենում, ենթակայի լրացումներն այլ կերպ են բնորոշվում: Ստորոգյալի լրացումները, ի դեպ՝ ոչ միայն հայերենում, այլև մյուս բազմաթիվ լեզուներում, երկու կարգի են՝ ըստ քերականական իմաստի տարբերակման, մի դեպքում՝ դրանք անուղակի խնդիրներ են, այն է՝ բուն գործողության հետ ոչ ուղղակի կապ ունեցող լրացումներ, մյուս դեպքում՝ պարագաներ, այսինքն՝ բուն գործողության կատարման պայմանները և հանգամանքները ցույց տվող լրացումներ: Անուղակի խնդիրներն աչքի են ընկնում ուժեղ խնդրառությամբ, իսկ պարագաները՝ թույլ խնդրառությամբ (կամ՝ անխնդրառու, միայն պարագաառու):

Անուղակի խնդիրները, ինչպես նաև պարագաները գործառապես ոչ միայն տարաբնույթ են, այլև քանակով ավելին են, որ երկրորդաբար նշանակում է, թե նախադասության գլխավոր անդամներից ամենամեծ ընդգրկումն ունի ստորոգյալը:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 554-556:

Լրացուցիչ գրականություն:

Քոսյան Վ. Ա., Ակտուալ անդամատումը և շարադասությունը ժամանակակից հայերենում, Ե., 1990:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 98-102:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 182-185:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 330-338:

Թեմա 5. Գոյականական անդամի լրացումները

Հիմնահարցեր: *Գոյականական անդամ հասկացության բնորոշումը: Լրացումների տեսակները՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, նրանց սահմանումը: Լրացումների դրսևորումները լեզուներում:*

1. Նախադասության գլխավոր անդամներից ենթական, ինչպես վերը տեսանք, հանդես է գալիս նաև իր լրացումներով: Այն բառերը, որոնք դրվում են առարկա նշանակող բառերի վրա և շարահյուսորեն լրացնում են նրանց՝ ցույց տալով ենթակայի կամ նախադասության գոյականական անդամի որպիսություն, պատկանելություն, այլև ով կամ ինչ լինելը, կոչվում են գոյականական անդամի լրացումներ, ընդունված տերմիններով՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ:

Նորմատիվ դասընթացներում դրանք համարվում են ենթակայի լրացումներ, իսկ տեսական աշխատություններում՝ ոչ միայն ենթակայի, այլ ուրիշ կարգի անդամների լրացումներ: Եվ քանի որ դրանք լրացնում են նաև շարահյուսական այլ դերով հանդես եկող միավորների (օր.՝ ստորոգելիի, նախադասության գոյականով արտահայտված այլ բաղադրիչի և այլն), ուստի գիտական իմաստով ավելի ճիշտ է համարվում կոչել ընդհանուր անվանումով՝ գոյականական անդամի լրացումներ (ըստ Գ. Բ. Ջահուկյանի): Այսպես, բաղադրյալ ստորոգյալի անվանական մասը, որը սովորաբար գոյական է, կարող է ունենալ, օրինակ, որոշիչ լրացում, որն էլ փաստորեն ոչ թե նախադասության ենթակայի, այլ գոյականով արտահայտված ստորոգելի անդամի որոշիչ լրացում է. օր.՝ Արսենը *բարեխիղճ* ուսանող է: Մարդը *բանական* արարած է և այլն:

2. Հայերենում այդ լրացումները շարահյուսորեն տարբեր կերպ են առնչվում իրենց լրացյալներին: Որոշիչը սովորաբար գործածվում է ուղղական հոլովով (բացառիկ դեպքերում՝ սեռականով, երբ արտահատում է առարկայի որպիսություն, օր.՝ *սարի* ծաղիկ, *թեյի* գդալ, *կրակի* գին և այլն), հատկացուցիչը՝ սեռական հոլովով (*լուսամուրի* գոգ, *պատրի* ծեփ, *դրսի* պատուհան և այլն), իսկ բացահայտիչը այն հոլովով, որով դրված է լինում բացահայտյալը (*Արամը՝ ուսանողը, նա՝ մասնակիցը* և այլն):

ա) Որոշիչը ցույց է տալիս գոյականով կամ գոյականաբար առնված ենթակայի ինչպիսին լինելը (որպիսությունը, որակը, չափը, քանակը և այլն). այս դեպքում առկա է առարկայի և հատկանիշի հարաբերություն՝ շարահյուսական մակարդակում, իսկ բառակապակցության աստիճանում որոշիչ կրող միավորը կոչվում է որոշյալ, միասին՝ որոշիչ-որոշյալ կապակցություն. օր.՝ *Լավ* ուսանողը մասնակցում է դասերին: *Փոքրիկ* երեխաները խաղում են բակում:

Հայերենում որոշիչ կիրառությունը ավելի կոնկրետ է, քան, օրինակ, ռուսերենում, գերմաներենում և այլն. հմմտ. ռուս. согласованное определение («որոշիչ»)՝ *хорошая книга* - լավ գիրք, *хорошие книги* - լավ գրքեր, несогласованное определение («հատկացուցիչ»)՝ *страница книги* - գրքի էջ, *крыло птицы* - թռչնի թև և այլն: Որոշիչ լրացում ունենում է նախադասության ենթական, այլև ցանկացած անդամ, եթե այն արտահայտված է առարկա ցույց տվող բառով՝ գոյականով. օր.՝ *Լավ* ուսանողը մասնակցում է *ամենօրյա* դասերին: *Փոքրիկ* երեխաները խաղում են *ընդարձակ* և *ծառաշար* բակում: Որոշյալին հատկանիշը կարող է լինել՝ 1) սովորական կամ ընդգծված, որպիսի դեպքում քերականական ձևի փոխարեն ի հայտ է գալիս ածականի բառի մաստային տարբերությունը. հմմտ. *կապույտ* գույն և *կապրավուն* գույն, *վառ* ծաղիկ և *վառվռուն* ծաղիկ և այլն, 2)բացարձակ կամ հարաբերական, որպիսով հատկանիշի վերագրումը կատարվում է մեկ այլ առարկայի հարաբերությամբ. *փղոսկրյա* զարդատուփ, *արծաթյա* գդալ և այլն:

Որոշիչն ունի նաև սահմանափակման, գնահատողական գործառույթ: Սահմանափակման գործառույթն այն է, որ առարկայի անվանումը որակվում է միայն տվյալ հատկանիշով (մյուս հատկանիշները դուրս են մնում). հմմտ. *կարմիր* ծաղիկ (ոչ այլ գույնի), *լայն* տարածություն (ոչ այլ փովածքի), *երկար* ճանապարհ (ոչ այլ ձգվածության) և այլն: Իսկ գնահատողական գործառույթի դեպքում առարկան, երևույթը ստանում են լրացուցիչ գնահատման բնութագիր. հմմտ. *սիրելի* մորաքույր, *չքնաղ* տեսարան, *մթամած* գիշեր և այլն:

Ենթակայի լրացում որոշիչը հայերենում առավելապես ունենում է ոչ թե քերականական, այլ բառային արտահայտություն. շատ քիչ դեպքերում է, որ այն կարող է արտահայտվել բառի թեք հոլովով (օր.՝

սեռականով. *թեյի* գդալ, *ծաղկի* սերմ, *սարի* ծաղիկ, *փառքի* շքանշան
և այլն): Որոշիչ լինում են գոյականը, ընդ որում ոչ միայն հասարակ,
այլև հատուկ անունները՝ *քար* սիրտ, *նսկի* ձեռքեր, *քարձր* խավ, *ներ-
քին* հուզմունք // *Ներքին* Թալին, *վերին* ոլորտ // *Վերին* Այգեհովիտ
և այլն, ածականը՝ *սպիրտակ* վարդ, *մոխրագույն* վերարկու, *մեծ ջրամ-
բար* // *Մեծ Մանթաշ* և այլն, թվականը՝ *երկու* հրացան, *առաջին* լսա-
րան, *քսանական* զինվոր և այլն, ածականական արժեք ունեցող դեր-
բայը՝ *ուսանող* աղջիկ, *ծիծաղելի* տեսարան, *քրտնած ձի*, *կարկամած*
հայացք և այլն):

Բերված օրինակներում որոշիչները ցույց են տալիս որոշյալի
որակ (*նսկի* ձեռքեր), դիրք (*Ներքին* Թալին, *քարձր* խավ), դաս (*առա-
ջին* լսարան), հատկություն (*սպիրտակ* վարդ), տրամադրություն (*քար*
սիրտ, *ներքին* հուզմունք), բաշխում (*քսանական* զինվոր), վիճակ
(*կարկամած* հայացք), չափ (*Մեծ Մանթաշ*) և այլն: Այս դեպքում նման
բաղադրությունները կոչվում են որոշիչ-որոշյալ կապակցություն,
որոնք կարող են լինել պատրաստի միավորներ՝ խոսքի մեջ: -

բ) Հատկացուցիչը ցույց է տալիս ենթակայի, այլև գոյականական
կամ գոյականաբար գործածված այլ անդամի պատկանելություն, սե-
րում (ծագում, բխում), հատկացում, վերաբերություն: Հայերենում այն
դրվում է սեռական հոլովով, այսինքն՝ ունի քերականական արտա-
հայտություն (*ծառի* ճյուղ, *սեղանի* ոտք, *պատրուհանի* գոգ, *Հարդագո-
րի* ճանապարհ): Հատկացուցիչը հատկացյալի հետ գտնվում է սեռա-
կան հոլովով կապի մեջ՝ *Սևանի* ձկնորս, *շրջկենտրոնի* բնակիչ, *սվ-
րումեքենայի* անիվ, *ջրի* ծորակ և այլն: Հայերենում նման կապակ-
ցության բաղադրիչների միջև գոյություն չունի քերականական համա-
ձայնություն, շարադասությունը հիմնականում ուղիղ է, երբեմն՝
շրջուն. հմմտ. *հույսի* դուռ // դուռ *հույսի*, *մտքի* տիտան // *տիտան*
մտքի, *առաջնության* եղջյուր // եղջյուր *առաջնության*, մանավանդ
բանաստեղծական խոսքում:

գ) Բացահայտիչը ցույց է տալիս գոյականով կամ գոյականաբար
հանդես եկող ենթակայի ով կամ ինչ լինելը, և իր լրացյալի հետ կազ-
մում է բացահայտիչ-բացահայտյալ կապակցություն՝ շարահյուսական
յուրօրինակ կապով:

Հայերենի նորմատիվ քերականություններում ընդունված է տարբերել բացահայտչի երեք տեսակ՝ բուն, մասնական և մասնավորող պարագայական (ըստ Ս. Գ. Արրահամյանի). օր.՝ Գյումրին՝ *հին արհեստների և ավանդական ծեսերի այդ հրաշալի քաղաքը*, այսօր սովորական է մյուս քաղաքների պես: Երևանը, *որպես հազարամյակների քաղաք*, դեռ պահպանում է իր գեղեցկությունը և հմայքը: Քաղաքի հյուսիսարևմտյան մասում՝ *Հրազդան գետը եզերող բարձունքի վրա*, Սուրբ Սարգիս վեհաշուք եկեղեցին է և այլն:

3. Գոյականական անդամի լրացումների տիպաբանական բնութագիրը առանձին լեզուներում ի հայտ են բերում որոշակի տարբերություններ, որոնք ամենից առաջ պայմանավորված են այդ լեզուները կրողների մտածողության յուրահատկություններով:

Ճանաչողական առումով որոշի միջոցով տեղի է ունենում առարկայի և հատկանիշի անվանման միջև լրացումային հարաբերություն, մի երևույթ, որում հատկանիշը չի ըմբռնվում կրող առարկայից դուրս. հմնտ. Երկինքը *կապույտ* է (նախադասություն) և *Կապույտ* երկինք (բառակապակցություն). *կապույտ*-ը մի դեպքում ստորոգելի է, մյուս դեպքում՝ որոշիչ:

Որոշի և որոշյալի միջև առնչությունը լինում է երկու ձևով՝ *առորոյթյամբ* և *համաձայնությամբ*: Առորոյթյան դեպքում որոշիչը չի կրում ձևաբանական որևէ փոփոխություն, այլ հանդես է գալիս բառի ուղիղ ձևով. օր.՝ *քար* սիրտ, *ոսկի* ձեռքեր, *ծաղիկ* հասակ և այլն: Իսկ համաձայնության դեպքում որոշիչը սեռով, թվով և հոլովով համապատասխանում է որոշյալին. այս երևույթը բնորոշ է հատկապես թեքական լեզուներին, օր.՝ ռուսերենին, ֆրանսերենին, անգլերենին և այլն, որոնցում որոշչային լրացական հարաբերություններն արտահայտվում են քերականորեն:

Լատիներենում որոշի և որոշյալի միջև տեղի է ունենում համաձայնություն՝ սեռով, թվով և հոլովով. օր.՝ եզ. ուղղ.՝ *campus longus* (ար.) «երկար դաշտ», *via longa* (իզ.) «երկար ճանապարհ», *verbum longum* (չեզ.) «երկար խոսք». հոգն. սեռ.՝ *campi longi* «երկար դաշտի», *viae longae* «երկար ճանապարհի», *verbis longis* «երկար խոսքի». եզ. տր.՝ *campo longo* «երկար դաշտին», *viae longae* «երկար ճանապարհին», *verbi longi* «երկար խոսքին». հոգն. ուղղ.՝ *campi longi* «եր-

կար դաշտեր», *viae longae* «երկար ճանապարհներ», *verba longa* «երկար խոսքեր» և այլն. հոգն. սեռ.՝ *camporum longorum* «երկար դաշտերի», *viarum longarum* «երկար ճանապարհների», *verbum longium* «երկար խոսքերի». հոգն. տր..՝ *campis longis* «երկար դաշտերին», *viis longis* «երկար ճանապարհներին», *verbis longis* «երկար խոսքերին» և այլն, և այլն: Ռուսերենում ևս որոշի և որոշյալի միջև գոյություն ունի համաձայնություն սեռով, թվով և հոլովով. օր.՝ *хороший дом* «լավ տուն» – *хорошие дома* «լավ տներ», *красивая аллея* «լավ ծառուղի» – *красивые аллеи* «լավ ծառուղիներ», *большое дело* «մեծ գործ» – *большие дела* «մեծ գործեր» և այլն:

Գրեթե նույնը (որոշ բացառությամբ) կարելի է տեսնել ժամանակակից եվրոպական լեզուների դեպքում. ֆրանսերենում և անգլերենում որոշի և որոշյալի միջև տեղի է ունենում համաձայնություն միայն թվով և սեռով, իսկ գերմաներենում, քանի որ գոյություն ունի հոլովում, համաձայնությունը բացի սեռից և թվից, լինում է նաև հոլովով: Այնուհետև, գերմաներենում նույնպիսի համաձայնություն է տեղի ունենում նաև հոդի (գերմ.՝ *Artikel*) և այն իր վրա կրող գոյականի միջև: Ռուսերենում հատկացուցիչը հատկացյալի հետ գտնվում է քերականական յուրօրինակ կապի մեջ (որից էլ անվանումը՝ *несогласованное определение*):

Լեզուներում տարբերում են, այսպես կոչված, սովորական կամ ազատ բացահայտիչ, որը նրա բուն էությունը (գործառույթն) է, և որի դիմաց հաճախ առանձնացնում են նաև ոչ սովորական՝ յուրօրինակ բացահայտիչ. վերջինի հատկապես շարահյուսական կապը կայուն է, այսինքն՝ տվյալ կապակցության բաղադրիչները չեն ենթադրում շրջոնություն. օր.՝ *Միսիթար սպարապետ, Վարդան Մամիկոնյան* և այլն:

Հիմնական գրականություն:

Միսյան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 550-554:

Լրացուցիչ գրականություն:

Абрамян К. Ш., Акопян К. С., Введение в языкознание, Ереван, 2010, էջ 98-103:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 167-179:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 2007, էջ 324-334:

Թեմա 6. Բայական անդամի լրացումները

Հիմնահարցեր: *Բայական անդամ հասկացության բնորոշումը: Բայի լրացումների տեսակները՝ խնդիրներ և պարագաներ: Խնդիրների և պարագաների ասիմանումը, շարահյուսական առանձնահատկությունները: Բայական լրացումների դրսևորումները:*

1. Բայական անդամ, ինչպես նաև բայական անդամի լրացում հասկացությունները քերականական բնագավառի հասկացություններ են, որոնք իրենց ակունքներն ունեն հունական և հռոմեական քերականությունների մեջ: Այդ ավանդույթը հատկապես կիրառելի է հնդեվրոպական լեզուների քերականություններում, ամենից առաջ հունարենում և լատիներենում, որոնցից էլ անցել է ժամանակակից լեզուներին: Բայական անդամի լրացումների առանձնացումը, դասակարգումը և բնութագրումը՝ իբրև մեկ ամբողջություն, ըստ այդմ, բավականին միօրինակ են լեզուներում:

Ստորև սեղմ անդրադառնում ենք այդ բնույթի լրացումներին:

Նախադասության գլխավոր անդամներից ստորոգյալը խոսքում հանդես է գալիս ոչ միայն առանձին, այլև իր լրացումների հետ միասին: Ստորոգյալի լրացումները լեզուներում քանակապես ավելին են, քան գոյականական անդամի լրացումները, որը բացատրվում է ստորոգյալի կարգային (կատեգորիական) բազմազանությամբ:

Կան լրացումների մասնակցության քանակային տարբերություններ: Ստորոգյալը գործնականում կարող է կիրառվել իր լրացումներից մեկի, այլև մի քանիսի հետ, տեսականորեն բացատրվում է լրացումների լիաժամակ դրսևորումը, որը, բնականաբար, բացատրվում է լեզվի կենդանի հաղորդակցական միջոց լինելու հանգամանքով:

Նախադասության մեջ այն բառերը կամ բառախմբերը, որոնք այս կամ այն կերպ լրացում են նախադասության բայական անդամին, կոչվում են բայական անդամի լրացումներ:

2. Բայական անդամի լրացումները ևս լինում են երկու տեսակ՝ խնդիրներ և պարագաներ, որոնք լայն իմաստով, այն է՝ խնդրառության տեսակետից ունեն տարբերություններ. ինչպես վերը նշել ենք, խնդիր լրացումներին բնորոշ է ուժեղ, իսկ պարագա լրացումներին՝

թույլ (ոչ ուժեղ) խնդրատություն (= «պարագաստություն») հմմտ. *Մայրը սիրում է որդուն: Երեխաները դպրոցից գնացին փուն:* Առաջին նախադասության ստորոգյալը, դրված ներգործական սեռի բայով, արտահայտում է ուժեղ խնդրատություն այն հաշվով, որ խնդրատու բառը պահանջում է որևէ հոլովով լրացում, իսկ երկրորդ նախադասության մեջ նման պահանջ չկա:

ա) Բայական անդամի խնդիր լրացումները, սովորաբար, երեք կարգի են՝ ուղիղ խնդիր, ներգործող խնդիր և բնության խնդիր՝ նկատի ունենալով այն, որ ուղիղ խնդիրը ցույց է տալիս գործողության անմիջական առարկա, ներգործող խնդիրը՝ ներգործող անձ (սուբյեկտ), իսկ բնության խնդիրը՝ գործողության հետ ոչ ուղղակիորեն կապ ունեցող առարկաներ. ըստ այդմ, ընդհանուր հաշվով, օրինակ, արդի հայերենում բայական անդամի լրացում խնդիրներն են՝ *ուղիղ, ներգործող, հանգման, մատուցման, անջատման, միջոցի, բաղկացության, վերաբերության, սահմանափակման, համեմատության* և այլն: Բացի առաջին երկուսից մյուսները երբեմն կոչվում են նաև անուղղակի կամ բնության խնդիրներ, որովհետև գործողության առնչվում են ըստ բայի բնույթի կամ անուղղակիորեն:

Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որն իր վրա է վերցնում ենթակայի կատարած գործողությունը: Ուղիղ խնդիր լինում են գոյականը, առարկա նշանակող դերանունը, գոյականաբար գործածվող բառը: Ուղիղ խնդիրը պատասխանում է *ո՞ւմ, ի՞նչ(ը), ինչե՞ր(ը)*, այլև *ումի՞ց, ինչի՞ց, ինչերի՞ց* հարցերին. օր.՝ *Երեխան կտտրեց մատիփոր:* Արամը վիրավորեց *նրանց*: Անցորդը վերցրեց գետնին *ընկածը*:

Ուղիղ խնդիր լրացում ստանում են ներգործական սեռի բայերը, որի համար էլ այն կոչվում է նաև *սեռի խնդիր*, իսկ քանի որ այն իր վրա է կրում գործողությունը, կոչվում է նաև *կրող խնդիր*, որն, իր հերթին, լինում է երկու տեսակ՝ կապված գործողությունն ամբողջովին կամ մասնակիորեն կրելու հետ, վերջին դեպքում այն կոչվում է *մասնակի ուղիղ խնդիր*. օր.՝ Արամը բերեց *նամակը*: Մայրը սիրում է *տղային*: Երեխաները կերան *ճաշից*:

Ժամանակակից հայերենում ուղիղ խնդիր լրացումները տարբերվում են նաև ըստ անձի և իրի առման. Երեխաներն ընտրեցին *դասուկին*: Երեխաները *դասուկեկ* ընտրեցին: Որսորդը սպանեց *աղվեսին*: Որսորդը *աղվես* սպանեց:

Ներգործող խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի կատարած գործողությունն անցնում է ենթակային, ենթական է այդ դեպքում կրում խնդրի գործողությունը: Մա այլ բան չէ, քան կրավորական կառուցվածքի նախադասություն, որի ներգործող խնդիրը դրված է լինում բացառական հոլովով (կամ *կողմից* կապով, *ձեռքից* բառով), մասամբ նաև գործիական հոլովով: *Ներգործող խնդիրը* պատասխանում է *ումից, ինչից, ինչերից* հարցերին. օր.՝ Շովպիի հանգստացողները այրվել էին *արևից*: Հինավուրց քաղաքը լցվեց *փախստականներով*: Աղվեսը սպանվեց *որսորդից* (որսորդի ձեռքով):

Հանգման խնդիրը, այլ կերպ կոչվում է նաև մատուցման խնդիր, որը ցույց է տալիս այն առարկան, որին տրվում, ուղղվում է մի բան, որի օգտին կամ վնասին ենթական անում է որևէ բան: Իբրև նման խնդիր լրացում սովորաբար հանդես են գալիս գոյականները, առարկա ցույց տվող դերանունները, գոյականաբար գործածվող այլ բառեր, պատասխանում են *նում, ինչին(ն), ինչերին(ն)* հարցերին, իսկ երբ խնդիրներն արտահայտվում են կապերով, այդ դեպքում *նում հետք, ում համար, ում դեմ, ինչի հետք* և այլն հարցերին. օր.՝ Ջրոսաշրջիկները մոտեցան *վրաններին*: Նվերները տվեցին *հյուրերին*: Ուսանողներն այցելեցին *հիվանդներին*: Ջինվորները կովում են *թշամու դեմ*:

Անշարման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից անշարտվում, հեռանում, սերում, ծագում, բխում է մի բան, դրվում է բացառական հոլովով կամ կապական հոլովառությամբ, պատասխանում է *նումից, ինչից, ինչերից* հարցերին. օր.՝ Երեխան չբաժանվեց *մորից*: Նա հեռացավ *մեզանից*: Արյունը չորացավ *վերքի վրայից*: Վիշտը պոկվեց *սրտից*:

Միջոցի խնդիրը ցույց է տալիս այն առարկան որով, որի միջոցով կատարվում է գործողությունը, դրվում է գործիական հոլովով, պատասխանում է *ումով, ինչով, ինչերով*, նաև *ում միջոցով*, եթե հոլովա-

նությունը կապական է. օր.՝ Շենքը կառուցվել էր սրբատաշ *քարերով*: Նախնադարում մարդը կովում էր *ներ ու աղեղով*: Գիրքը գտնվեց *ընկերների միջոցով*:

Բաղկացության խնդիրը ցույց է տալիս այն առարկան, նյութը, որից բաղկացած, պատրաստված է մեկ այլ առարկա, պատասխանում է *ինչից, ինչերից* հարցերին. օր.՝ Վերարկուն կարված էր *մահուդից*: Շենքը կառուցված էր հինգ *հարկից*: Ընտանիքը բաղկացած էր վեց *անձից*:

Վերաբերության խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է ենթակայի կատարած գործողությունը, որի մասին, որի վերաբերյալ, որի շուրջ ասվում կամ տրվում է որևէ բան, դրվում է բացառական հոլովով և պատասխանում *նմից, ինչից, ինչերից* հարցերին, դրվում է նաև կապով և կապի խնդրով, ընդ որում կապվող բառը հանդես է գալիս հիմնականում թեք հոլովներով: Օր.՝ Խոսում էին Լոռու հին-հին *քաջերից*: Տսօրենը խոսել է լուրջ *թերացումների մասին*: Նա սահմանեց խիստ պատիժ *թերացողների նկատմամբ*:

Սահմանափակման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որը այս կամ այն կերպ սահմանափակում է ենթակայի գործողությունը, դրվում է բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, նաև կապով և կապի խնդրով, պատասխանում է *ինչից, ինչերից, ինչնով, ինչերով, ինչնում, ինչերում*, կապական հոլովառության դեպքում՝ հարցը վերցվում է կապի նույնպիսի հոլովաձևով՝ *ինչի՞ միջից, ինչերի՞ միջից* և այլն. օր.՝ Երեխան թույլ է *մաթեմատիկայից*: Հակաճառողը համոզված չէր իր *ասածներում*: Նա ոչինչ չապացուցեց իր բերած *փաստարկներով*: Հարցի քննարկումը դուրս եկավ *մեջտեղից*:

Բերված տեսակներով, բնականաբար, չի սահմանափակվում հայերենի բայի խնդիր լրացումների առանձնացումը, սակայն բերվածները լիովին բավարար են հաստատելու, որ խնդրառությունը, ուղղակի կամ անուղղակի դրսևորումներով արտահայտված, լեզվի շարահյուսական համակարգի կարևորագույն մասն է, որ յուրովի արտահայտում է իրականության առարկաների և երևույթների տարբեր հարաբերությունները:

բ) Բայական անդամի պարագա լրացումներն են՝ *տեղի, ժամանակի, ձևի, չափի (չափ ու քանակի՝ աստիճանի), պատճառի, նպատակի, զիջման, հիմունքի, պայմանի* և այլն:

Տեղի պարագան ցույց է տալիս այն տեղը (վայրը), որտեղ կամ որում կատարվում է գործողությունը, այլև որտեղից սկիզբ է առնում, որտեղով անցնում է գործողությունը, արտահայտվում է գոյականով, որոշ դերանուններով, մակբայով, կապով և կապի խնդրով, երբեմն նաև բառակապակցություններով, պատասխանում է *նոր, որտեղ, որտեղից, որտեղով* հարցերին. օր.՝ Ավտոմեքենան հասավ անտառի եզրին: Երեխաները ուսուցչին հանդիպեցին *դպրոցում*: Նրան տեսանք *մայթի վրա*: Արամը անցավ *փողոցով*: *Ամենուրեք* տիրում է լռություն և այլն:

Ժամանակի պարագան ցույց է տալիս ժամանակի այն հատվածը, որի ընթացքում սկսվում կամ ընթանում, ինչպես նաև ավարտվում է գործողությունը, արտահայտվում է հիմնականում մակբայներով, այլև որոշ գոյականներով ու դերանուններով, հիմնականում պատասխանում է *երբ, երբվանից* հարցերին. օր.՝ Անձրևները *վաղուց* դադարել են: Ձմռանը միշտ ցուրտ է լինում: Արամը *գիշերը* գնաց: *Վաղվանից* սկսվում է արձակուրդը: Դերբայով արտահայտվելու դեպքում բուն գործողությունից բացի կատարվում է մեկ այլ՝ գուգահեռ գործողություն. Արամը դպրոց *գնալիս* սայթաքեց սառույցի վրա:

Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը, եղանակը, լինում է մակբայով, գոյականի, անորոշ դերբայի գործիական հոլովով, հարակատար դերբայով և այլն, պատասխանում է *ինչպես* հարցին. օր.՝ Արամը և Աշոտը ներս մտան *գոռգոռայով*: Ճանապարհի մյուս մասն անցանք *ուրքով*: Շինականը խոսում էր *հուզված* ու *նեղսրտած*: Աղջիկը թփից թուփ էր անցնում *թիթենիկի պես*:

Պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պատճառը, հանդես է գալիս մեծ մասամբ գոյականի բացառական հոլովով, մասամբ՝ գործիականով, երբեմն այլ կարգի բառերի բացառականով, պատասխանում է *ինչն, ինչից, ինչ պատճառով* հարցերին. օր.՝ Աշխենը *հուզմունքից* լաց էր լինում: Երեխան *վախից* կարկամել էր: Խեղճ մարդը *ծիսելուց* նիհարել է:

Չափի պարագան իմաստով բավականին լայն է, նշանակում է նաև *քանակ, աստիճան* և այլն, ցույց է տալիս գործողության քանակի, չափի, աստիճանի սահմանափակում, հիմնականում արտահայտվում է չափ ու քանակի մակբայով, երբեմն՝ գոյականով, դերանունով, բառակապակցությամբ և այլն, պատասխանում է *ինչքան, ինչ չափով, որքան, ինչքան և ժամանակով* հարցերին. օր.՝ Հայրը գնացել էր գործուղման *մեկ շաբաթով*: Տղան *շար անգամ* էր եղել այդ բացատում: Կամուրջը *հիմնովին* քանդվել էր: Նա մատիտը գնել է *տասը դրամով*:

Նպատակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման նպատակը, հանդես է գալիս գոյականի, անորոշ դերբայի տրական, երբեմն նաև այլ հոլովներով, պատասխանում է *ինչի՞, ինչի՞ համար, ինչ նպատակով* հարցերին. օր.՝ Նախագահը քաղաք էր գնացել *գործով*: Փոքրիկը խանութ է գնացել *հացի*: Մեծ ու փոքր սեղան էին նստել *ընթրիքի*: Նրանք կովեցին *հանուն հայրենիքի*: Տիգրանն այդ ասաց *ի գիտություն բոլորի*:

Զիջման պարագան, որ երբեմն կոչվում է հակառակ հիմունքի, ցույց է տալիս գործողության կատարման հակառակ կողմը, այսինքն՝ այն, որին հակառակ կատարվում է տվյալ գործողությունը, արտահայտվում է կապական կառույցով՝ պատասխանում է *հակառակ ինչի՞ն, չնայած ինչի՞ն, փոխանակ ինչի՞ն և նման* այլ տիպի հարցադրումներին. օր.՝ Չնայած բոլոր *խնդրանքներին*՝ նա այդպես էլ չեկավ: Հակառակ տղայի *ասածի՞* շունը լքել էր հոտը: Փոխանակ սովերում *մնալու՞* Գրիգորը անընդհատ հետևել էր մեղուներին:

Հիմունքի պարագան ցույց է տալիս գործողության կատարման հիմունքը, արտահայտվում է գոյականի բացառական և գործիական հոլովներով, կապով և կապի խնդրով, պատասխանում է *ինչ հիմունքով* հարցին. օր.՝ Ուսուցչի *խորհրդով* Արմենը մասնակցեց մրցույթին: Նրա *ասելով* մուկը չէր կարող ներս մտնել: Եղած *փաստերի համաձայն*՝ որոշումը ճիշտ է: *Ըստ Տիգրանի ասածի՞* ուսուցիչը դժգոհ էր մնացել: Նրա *ասածից* ունկնդիրը ոչինչ չհասկացավ:

Պայմանի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պայման, մեծ մասամբ արտահայտվում է կապական կառույցով, ըստ

այդմ էլ հարցը դրվում է կապով՝ *ինչ (ո՞ր) դեպքում, ի՞նչ (ո՞ր) պարագայում, ո՞ր պայմանով*. օր.՝ *Այդ պարագայում* գործը կձախտովի: *Այդ պայմանով* նա համաձայն է շարունակել աշխատանքը և այլն¹:

3. Նախադասության գլխավոր անդամներին՝ ենթակային և ստորոգյալին հարող միավորներ են խնդիրները և պարագաները, որոնց բնութագիրը, ինչպես նաև շարահյուսական առանձնահատկությունների մատնանշումը կապված է լեզվի ճանաչողական կողմի հետ, քանի որ վերջինը, ինչպես գիտենք, մտքի արտացոլումն է՝ իրականության նշանակման նպատակով:

Նախադասության բայական լրացումների դրսևորումները լեզուներում մեծ մասամբ համընկնում են, մանավանդ հնդեվրոպական տիպի լեզուներում, որը ցեղակցային իրական հատկություն է:

Ճանաչողության (իմացաբանության) առումով խոսքի կառուցվածքում խնդիրները ցույց են տալիս լայն իմաստով հարաբերություններ՝ առարկաների միջև (սուբյեկտ-օբյեկտային, սուբյեկտ-ատրիբուտային, օբյեկտ-ատրիբուտային և այլն), իսկ պարագաները՝ գործողության հետ կապված հանգամանքներ (ակցիդենցիաներ, լատ. *accidentia* «դեպք, պատահմունք. դիպված»․ տեղ, պատճառ, ժամանակ և այլն): Այլ կերպ ասած՝ լեզվի շարահյուսական մակարդակում խնդիրները հարաբերությունների, իսկ պարագաները հանգամանքների նշանակիչ միավորներ են: Եվ ըստ այդմ, հնդեվրոպական լեզուներին բնորոշ մտածողությամբ, նախադասությունը այլ բան չէ, քան որոշակի հանգամանքներում հարաբերակցվող միավորների կախվածություն՝ իբրև խոսքի արտահայտություն:

4. Նախադասության տիպի որոշման համար բավարար պայման է բայական այս կամ այն անդամի հանդես գալը՝ իբրև խնդիր կամ պարագա: Հայտնի է, որ բայական անդամի լրացումները հավասարապես չեն մասնակցում նախադասության իրականացմանը՝ ո՛չ քանակապես, ո՛չ էլ ծավալով:

Նախադասությունը լեզվի իրական փաստ է, որ նշանակում է, թե այն չի կարող բաղադրված լինել այնպես, որ նրանում, ինչպես վերը

¹ Հայերենում բայական անդամի պարագա լրացումներն ավելին են, քան որ, իբրև նմուշ, անդրադարձանք սույն թեմայի սահմաններում: -

նշել ենք, հանդես գան բոլոր խնդիրներն ու պարագաները՝ իրենց տեսակներով. դա անիրական է, ուստի բայական անդամի լրացումները մասնակիորեն, ըստ հարկավորության են մասնակցում խոսքի այդ գերակա միավորի կազմությանը:

Բայական անդամի լրացումները խոսքում գործածվում են, հանդես են գալիս կան ինքնին, կան նույնպիսի մեկ այլ միավորի հետ միասին, որի արդյունքում տարբերում են նախադասության, այսպես կոչված, միակի և բազմակի լրացումներ: Ուստի նախադասության մեջ կարող են լինել ոչ միայն կան մեկ խնդիր, կան մեկ պարագա և այլն, այլև մի քանի խնդիրներ, մի քանի պարագաներ և այլն. օր.՝ Աշակերտը դաս է սովորում: Ավտոմեքենան արագ անցավ փողոցը: Ուշիմ ուսանողը սովորում է թե՛ լսարանում, թե՛ տանը և թե՛ գրադարանում: «Էյ պարոններ, երևեկ նրան, // Ով տեսնում է ամեն օր // Կապույտ կամար, արևի լույս // Ու երեսը իրեն մոր» (Թումանյան):

Ընդունված է լեզուներում մեկից ավելի լրացում՝ խնդիր կամ պարագա ունեցող նախադասությունը կոչել բազմակի լրացումներով նախադասություն: Նման նախադասությունները, առհասարակ, բնորոշ են գեղարվեստական խոսքին, իսկ գիտական, պաշտոնական և այլն ոճին այնքան էլ բնորոշ չեն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 555-556:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 179-182:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 330-345:

Թեմա 7. Երկկազմ և միակազմ նախադասություններ

Հիմնահարցեր: *Ստորոգումը նախադասության տեսակների առանձնացման հիմունք: Երկկազմ նախադասության բնորոշումը և առանձնահատկությունները: Միակազմ նախադասության տեսակները և առանձնահատկությունները:*

1. Նախադասությունը, իբրև շարահյուսական ինքնակա նվազագույն միավոր, բնորոշվում է ամենից առաջ ըստ ստորոգման եղանակի, որպիսով, ինչպես գիտենք, տարբերվում են բայական (առկա ստորոգական) և անվանական (ոչ առկա՝ «վերառյալ» ստորոգական) տեսակներ: Այդ տեսակները, ըստ ստորոգյալի բնույթի, երկուսն են՝ բայական և անվանական: Շարահյուսական այն միավորը, որն ունի դիմավոր բայով (եղանակային և ժամանակային ձևով) արտահայտված ստորոգյալ, կոչվում է բայական նախադասություն, և անվանական է կոչվում այն նախադասությունը, որի ստորոգյալը առանձին բայ (բայածն) չէ: Ինչպես նկատելի է, տարբերությունը ստորոգյալի դիմավոր (եղանակային և ժամանակային ձև ունեցող) բայով արտահայտված լինելու և այդպիսին չունենալու մեջ է: Ընդունված է դիմավոր բայով արտահայտված ստորոգյալները համարել պարզ ստորոգյալ, իսկ ստորոգելիով (այլ խոսքիմասային միավորով կամ այդպիսին դիտվող բառով, նաև անկախ դերբայով) և հանգույցով կազմված ստորոգյալը՝ բաղադրյալ ստորոգյալ:

Այդ հիմունքով էլ միայն մեկ ստորոգում ունեցող նախադասությունը կոչվում է պարզ նախադասություն, որ բաղկացած է կան միայն ենթակայից և ստորոգյալից, կան ունի նաև լրացումներ: Առաջին դեպքում նախադասությունը կոչվում է պարզ համառոտ, իսկ երկրորդ դեպքում՝ պարզ ընդարձակ: Իսկ ըստ գլխավոր անդամների միասին կամ առանձին հանդես գալու հատկանիշի լինում են երկկազմ և միակազմ նախադասություններ:

Բայական երկկազմ նախադասության դեպքում ստորոգյալը կազմված է լինում դիմավոր բայով, իսկ միակազմ նախադասության դեպքում գերադաս անդամն արտահայտվում է դերբայով (վերջին հաշվով՝ բայով). օր.՝ *Տղամարդիկ ծխում են: Ծխել միայն դրսում:* Այն դեպքում, երբ ստորոգյալը հանդես է գալիս իբրև բաղադրյալ կա-

նույց՝ բաղկացած ստորոգելիից (ստորոգելիական վերադրից) և հանգույցից, ինչպես նաև այն դեպքում, երբ գերադաս անդամը արտահայտվում է գոյականով, նախադասությունը կոչվում է անվանական: Մի դեպքում նախադասությունը երկկազմ անվանական է, իսկ մյուս դեպքում՝ միակազմ անվանական. օր.՝ *Հայրիկը տնտեսագետ է, իսկ մայրիկը՝ բժիշկ: Երեխան փոքր է: Հանգիստ, ոչ մի հուզում: Ո՛չ ծիծաղ, ո՛չ քրքիջ, լռություն ամենուր* և այլն:

2. Երկկազմ կոչվում է այն նախադասությունը, որի գլխավոր անդամները՝ ենթական (ինքնին կամ իր լրացումներով՝ ենթակայի խումբ) և ստորոգյալը (ինքնին կամ իր լրացումներով՝ ստորոգյալի խումբ) քերականորեն, ըստ այդմ՝ խոսքի մեջ արտահայտված են ուղղակիորեն կամ անուղղակի (զեղչված է, որ կարելի է վերականգնել, որովհետև մտքով՝ խոսքի մակարդակում հասկացվում է): Այս դեպքում ևս մեծ նշանակություն ունի ստորոգյալի ինչպիսին լինելը, ինչ ձևով հանդես գալը: Երկկազմ նախադասության մեջ ստորոգյալը պարտադիր է, ընդ որում կան մակերեսային (առերևույթ, առկա), կան խորքային (զեղչված) ձևով, համապատասխան մակարդակում:

Եվ եթե նախադասության մեջ առկա է ստորոգումը, ապա ենթադրելի է ենթակայի առկայությունը, որը և լինում է ձևավորված՝ առկա, բացահայտ (էքսպլիցիտ) կամ ենթադրելի, ներքուստ («անհայտ». իմպլիցիտ). հմմտ. *Ես գրում եմ // Գրում եմ*: Առաջին նախադասության մեջ *ես* ենթական առկա է (էքսպլիցիտ դրսևորում), իսկ երկրորդում ենթական առկա չէ, սակայն ենթադրելի է՝ բայ-ստորոգյալի դեմքի և թվի (*գրում եմ* առաջին դեմք, եզակի թիվ) շնորհիվ:

Հայերենում գրեթե միշտ բայի՝ եղանակային և ժամանակային որոշ ձևերով դրված ստորոգյալի ենթական ենթադրելի է (գոյություն ունի), չնայած խոսքում այն հանդես չի գալիս առկա՝ համապատասխան դերանունով, ի տարբերություն այլ լեզուների, որոնցում դերանուն-ենթակայի առկայությունը պարտադիր է. հմմտ. հին հայերեն (գրաբար)՝ *երթամ*՝ «գնում եմ», *երթաս*՝ «գնում ես», *երթայ*՝ «գնում է» և այլն, նոր գրական հայերեն՝ *գնում եմ, գնում ես, գնում է* և այլն, լատիներեն՝ *cantō* «երգում եմ», *cantas* «երգում ես», *cantat* «երգում է» և

այլն: Շեշտենք, որ նոր գրական հայերենը, իբրև ժառանգություն, պահել է գրաբարի այդ առանձնահատկությունը:

Այնինչ, օրինակ, ֆրանսերենում, գերմաներենում, անգլերենում և այլն, ենթակա-դերանվան գործածությունը առհասարակ պարտադիր է, որովհետև մանավանդ բանավոր խոսքում, նույն հնչումն ունենալու պատճառով, չի ընկալվում, թե ով է ստորոգյալի վերագրած հատկանիշն իր վրա վերցնողը (օր.՝ ֆրանսերենում ստորև բերվող *dire* «ասել» բայի սահմանական ներկայի եզակի թվի բոլոր ձևերն արտասանվում են նույն կերպ՝ [di]). Ֆրանս. *je dis* «ես ասում եմ», *tu dis* «դու ասում ես», *il (elle) dit* «նա ասում է» և այլն, գերմաներեն՝ *ich sage* «ես ասում եմ», *du sagst* «դու ասում ես», *er (sie, es) sagt* «նա ասում է», անգլ. *I say* «ես ասում եմ», *You say* «դու ասում ես», *hi (she, it) say* «նա ասում է» և այլն:

Եվ այսպես, ստորոգյալի «թելադրանքով» ենթակայի առկայություն, սովորաբար, անհրաժեշտ է ցույց տալու համար այն առարկան («սուբյեկտը»), որին պիտի վերագրվի ստորոգյալի միջոցով իրացվող հատկանիշը. *Ծառը կանաչել է: Ջուրը հոսում է և այլն:*

Երկկազմ նախադասությունը լինում է երկու տեսակ՝ համառոտ և ընդարձակ: Համառոտ է միայն ենթակայով և ստորոգյալով արտահայտված նախադասությունը՝ *Ծառը կանաչել է: Երեխան քայլում է: Ջրերը հոսում են* և այլն: Իսկ ընդարձակ կոչվում է այն երկկազմ նախադասությունը, որում ենթակայից և ստորոգյալից բացի հանդես են գալիս սրանցից մեկնումեկի, նաև միաժամանակ երկուսի այս կամ այն կարգի լրացումները՝ ըստ նախադասության հաղորդակցական նյութի ծավալման բնույթի, կարևորության և այլն. օր.՝ *Անցյալ փարի այգում րնկած ինձորի ծառը հինա փարթամորեն աճում է: Մեկ փարեկան երեխան արդեն ինքնուրույն քայլում է: Ձյան հայոցքից ջրերը սելավի նման հոսում են հարթավայրի մարգագետինները* այլն:

Երկկազմ նախադասության ենթակայից և ստորոգյալից մեկնումեկը կարող է գեղջված լինել (քերականորեն չարտահայտվել), սակայն ոչ միայն համատեքստից (կոնտեքստից) հասկացվել, այլև ըստ անհրաժեշտության՝ վերականգնվել: Ըստ այսմ՝ այն նախադասութ-

յունը, որի ենթական կամ ստորոգյալը, խոսքի ինչ-ինչ հանգամանքով պայմանավորված, կրճատված կամ զեղչված է, սակայն ըստ էության ըմբռնելի է, հասկանալի է, այլև հնարավոր է այն վերականգնել, կոչվում է զեղչված նախադասություն. օր.՝ Արմենը գնաց աշխատանքի, իսկ Կարենը՝ դասի: «Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք...» (Թումանյան): «Աշուն էր, պայծառ աշուն...» (Բակունց):

Ըստ գլխավոր անդամի զեղչման հատկանիշի՝ նախադասությունը լինում է երկու կարգի՝ ամբողջական (գլխավոր անդամներով արտահայտված) և ոչ ամբողջական՝ զեղչված (գլխավոր անդամներից մեկի կամ մյուսի կրճատմամբ արտահայտված):

Նախադասության որևէ անդամի, տվյալ դեպքում ենթակայի կամ ստորոգյալի զեղչումն ունի ոչ միայն տրամաբանական հիմնավորում, այլև հետապնդում է լեզվական-ոճավորման նպատակ. խոսքն ավելի դիպուկ, ավելի դյուրընկալելի և տպավորիչ դարձնելու, անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով խոսողը երբեմն ասելիքի որոշ բաղադրիչներ բաց է թողնում. հմտո. *Անձրևը չի դադարում. անձրևը երևի երկար է գալու // Անձրևը չի դադարում. երևի երկար է գալու: Հայրը գնաց աշխատանքի, որդին գնաց դպրոց // Հայրը գնաց աշխատանքի, որդին՝ դպրոց: Նա ասում է, մենք լսում ենք // Նա ասում է, մենք՝ լսում* և այլն:

Զեղչում տեղի է ունենում հիմնականում նախադասության գլխավոր անդամների դեպքում, սակայն երբեմն զեղչվում է ստորոգյալի միայն մի մասը՝ օժանդակ բայը կամ հանգույցը: Գրավոր խոսքում զեղչումն արտահայտվում է հատուկ կետադրությամբ. օր.՝ *Ընկերս նկարիչ է, իսկ ես՝ թարգմանիչ: Ուսուցիչը թելադրում է, աշակերտը՝ գրում* և այլն:

Խոսողության գործառական-ոճական գնահատության տեսանկյունից զեղչումը մտնում է խոսքի տնտեսման կարգի մեջ: Այն գործառական տարբեր ոճերում հանդես է գալիս ոչ հավասարապես, ավելի բնորոշ է բանավոր, մանավանդ առօրյա խոսքին, երկխոսությանը, քան գրավոր, մանավանդ պաշտոնական, գիտական ոճերին: Այսպես, զեղարվեստական գրականության մեջ ավելի հաճախ է գոր-

ծածվում զեղչումը, քան մյուս ոճի երկերում: «Մեկն ի պապանց պարոնորդի, // Մեկն ի հարանց մուրող լինի: // Մեկին հազար ձի ու ջորի, // Մեկին ո՛չ ու մի, ո՛չ մաքի» (Ֆրիկ): «Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը՝ կաքավի ուրբի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն»: «Այս բարձրանում է քարե արծիվը, կտուցը՝ կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փեւրուրները՝ որպես պողպատե գրահ» (Բակունց):

2. Լեզուներում, մանավանդ հայերենում, ոռուերենում, եվրոպական լեզուներում և այլն, երկկազմ նախադասությունից բացի կան նաև այլ կարգի նախադասություններ, այնպիսիներ, որոնք կառուցվածքով տարբերվում են երկկազմ նախադասություններից: Ի դեպ՝ ամենից առաջ նկատենք, որ դրանք խոսքում, այնուամենայնիվ, քիչ են գործածվում, քան մյուսները: Ընդունված է նման նախադասությունը կոչել միակազմ: Այդպիսին է այն նախադասությունը, որը չունի լրիվ կազմ, ամբողջական չէ:

Հայերենում, օրինակ, միակազմ նախադասությունը ևս միատարր չէ, բաժանվում է մի քանի տեսակի, ըստ այն հատկանիշի, թե ստորոգումը կատարվում է ստորոգյալով, թե՛, այսպես կոչված, գերադասանդամով: Ըստ այդմ, մի դեպքում՝ միակազմ է կոչվում այն նախադասությունը, որն ունի գլխավոր անդամներից միայն մեկը՝ ստորոգյալը, իսկ նրա ենթական չկա, ոչ էլ հնարավոր է այն վերականգնել, թեև լինում են նախադասություններ, որոնցում ենթական զգացվում է անորոշ կերպով, այլև հատկացված է լինում այս կամ այն կերպի մեջ. օր.՝ «Այի՛, քա Յոլանկը» (Բակունց): «Չյունապատ լեռներ ու կապույտ լճեր: // Երկինքներ, որպես երագներ հոգու: // Երկինքներ, որպես մանկական աչեր: // Մենակ էի ևս: Ինձ հեյր էիր դու» (Չարենց) և այլն: Մյուս դեպքում՝ միակազմ է համարվում այն նախադասությունը, որի գլխավոր անդամների՝ ենթակայի և ստորոգյալի փոխարեն ունի մեկ գերադասանդամ՝ արտահայտված անունով (զոյական և այլն) կամ բայով (դերբայ). օր.՝ Աշուն: Սստնամանիք: Քշել, քշել, քշել... և այլն:

Այնուհետև, նման նախադասություններում, այնուամենայնիվ, գերադասանդամը կամ ստորոգյալը դրսևորվում է բայի ինչ-որ դեմ-

քով, սակայն վերջինս ոչ թե հարացուցային անդամ է մյուս դեմքերի հետ, այլ մնում է ինքնին (մի տեսակ՝ քարացած): Օրինակ՝ *Անձրևում է* նախադասությունը արտահայտված է եզակի թվի երրորդ դեմքով, սակայն դա ամենևին չի նշանակում, թե մյուս դեմքերով էլ կարող է այդ բայն արտահայտվել նույնպիսի համատեքստում: Ամբողջ հարցն այն է, որ տվյալ դեպքում այն միայն մեկ՝ արտահարացուցային դեմքով է հանդես գալիս և ըստ այդմ՝ հանդիսանում է միակազմ նախադասության հիմնական մաս: Սա կարևոր, թերևս էական յուրահատկություն է լեզուներում այդօրինակ կառուցվածքի բնորոշման համար:

Միակազմ նախադասություններն ըստ քերականական դեմքի հատկանիշի լինում են՝ *դիմավոր* (ձևական դիմավոր, անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր) և *անդեմ* (բայական անդեմ և անվանական անդեմ):

Ձևական դիմավոր է կոչվում այն նախադասությունը, որում չկա ստորոգյալին հարաբերակից ենթակա, այսինքն՝ բացակայում է (արտահայտված չէ) գործողության սուբյեկտը, որից հետևում է, որ նախադասության դիմավոր լինելը ունի ձևական բնույթ: Նման նախադասության ստորոգյալը լինում է կամ բայական. օր.՝ *Մթնեց: Ամպեց: Անձրևում է* և այլն, կամ անվանաբայական, օր.՝ *Մոլթ է: Ամպ է: Լույս է* և այլն:

Անորոշ դիմավոր է կոչվում այն միակազմ նախադասությունը, որում ենթական ոչ թե առհասարակ չկա, այլ անորոշ ձևով հասկացվում է, սպասելի է. օր.՝ *«Ասում են ուռին աղջիկ էր ինձ պես»* (Թումանյան): *Շարք են խոսում այդ միամիտ մարդու մասին* և այլն: Նման կառուցվածքի նախադասություն բնորոշ է ոչ միայն հայերենին, այլև ուրիշ լեզուների՝ ոչ միայն հին, այլև ժամանակակից: Հմմտ. ռուս.՝ *Говорят* «ասում են»: *Видно* «երևում է», ֆրանս.՝ *On dit* «Ասում են»: *Il pluit* «Անձրևում է», գերմ. *Man sagt* «ասում են» և այլն: Հայերենում, օրինակ, երևույթը հանդիպում է հին, միջին, ինչպես նաև արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներում: օր.՝ *Թուի* «թվում է»: *Կանձրևէ* «անձրևում է» և այլն:

Ընդհանրական դիմավոր կոչվում է այն միակազմ նախադասությունը, որի այս կամ այն դեմքով դրված ստորոգյալը կոնկրետ չէ, այլ

ընդհանրական է, այսինքն՝ կարող է վերաբերել (հատկացվել) բոլոր դեմքերին (դեմքերով): Ընդունված է նման կառուցվածքի նախադասությունները համարել լեզվի ժողովրդախոսակցական տարբերակին առավել յուրահատուկ. խոսքի այս տարբերակին է բնորոշ գործառայես ընդհանուր ձևով արտահայտվել, ասել մի քան, որ վերաբերում է ամեն մեկին, բայց չի կապվում ոչ մեկի հետ. նման խոսքը ընդհանուր իրադրական է և ոչ թե՛ առանձնակի:

Հայերենի գիտական ուսումնասիրություններում ընդունված է նման դիմավոր միակազմ նախադասությունները կոչել ընդհանուր մեկ անվանումով՝ *անենթակա* նախադասություններ՝ բոլոր դեպքերում նկատի ունենալով առկա (քերականորեն արտահայտված) ստորոգյալին հարակից ենթակայի բացակայությունը, որ ամենևին չկա, կամ էլ որևէ ձևով արտահայտված բայի դեմքը ընդհանուր է, ոչ թե կոնկրետ: Սակայն միայն դիմավոր միակազմ նախադասությունները չէ, որ անենթակա են, այդպիսին են նաև անդեմ նախադասությունները: Այնուհետև, հայերենի անդեմ նախադասության առանձնահատկությունն այն է, որ նրա կազմում չկան ենթակա և ստորոգյալ, այլ կա միայն բայով կամ անվամբ (գոյական և այլն) արտահայտված գերադաս անդամ, ընդ որում արտահայտված ինքնին կամ լրացումներով հանդերձ: Այս տիպի նախադասությունների միակազմ լինելը պայմանավորված է եղած գերադաս անդամով, իսկ ստորոգման գործառույթը իրականացվում է հնչերանգով:

Բայական անդեմ նախադասությունը ամբողջովին արտահայտվում է անորոշ դերբայով, ցույց է տալիս հրաման և կարգադրություն, ինչպես նաև արգելք, ինչ-որ չափով նաև պահանջ, դրդում և այլն, որոնք գրավոր խոսքում դրսևորվում են համապատասխան կետադրությամբ. օր.՝ *Պահպանել լռություն: Խուսափել անպրող վեճերից: Հերքել ընկերոջ օրինակին: Չծիսել: Կովել, անընդհար պայքարել* և այլն:

Անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը, բնականաբար, արտահայտվում է գոյականով, ունի մի տեսակ երևույթի նկարագրական ձևով ներկայացնելու բնույթ: Այն որոշ դեպքերում

արտահայտվում է նաև ածականով, թվականով, մակբայով, այլև ձայնարկություններով, եղանակական բառերով, որոնք խոսքի իրականացման մեջ ստանում են անվանողական արժեք, ընդ որում կարող են ունենալ այս կամ այն կարգի (յուրօրինակ) կետադրություն. օր.՝ *Ուրախություն: Աշխույժ իրարանցում: Բարի: Հաջորդը՝ երրորդը: Կամանգ: Ափսո՛ս: Ավա՛ղ փառասցս անցավորի* և այլն:

Միակազմ նախադասությունները, անկախ արտահայտության պլանի ակնհայտ տարբերություններից, բովանդակության պլանում գրեթե լիովին համարժեք են երկկազմ նախադասություններին, որովհետև ինչպես այս վերջինները, նրանք ևս խոսքը դարձնում են հաղորդակցական առումով ամբողջական և նպատակային: Բովանդակության պլանի հետ կապված (ըստ բնույթի)՝ միակազմ նախադասությունների մի որոշակի մասը լինում է ճիշտ այնպիսին, ինչպիսին են երկկազմ նախադասությունները՝ պատմողական, հրամայական, հարցական և բացականչական. օր.՝ *Մթնեց: Ուշ է: Լոռություն: Լոռություն: Չծխե՛լ: Լոռություն: Սպասե՛լ* և այլն:

Իսկ ինչ վերաբերում է միակազմ նախադասությունների կառուցվածքին (ամբողջ կազմին կամ կազմի մեջ մտնող բաղադրիչի կամ բաղադրիչների քանակային կողմին, շարադասությանը, հնչերանգային ավարտվածությանը և այլն), ապա ըստ այդմ լինում են համառոտ կամ միայն գերադաս անդամով արտահայտված («միաբաղադրիչ»), օր.՝ *Մթնեց: Լուսացավ: Աշուն է* և այլն, և ընդարձակ կամ գերադաս անդամն իր լրացումներով («բազմաբաղադրիչ»), օր.՝ *Ցուրյր ձմեռ: Խոսե՛լ շար կամաց: Ո՛չ մի քայլ հեռ* և այլն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 550-554 :

Լրացուցիչ գրականություն:

Քոչյան Վ. Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., 1975:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 167-185:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 336-338:

Թեմա 8. Պարզ և բարդ նախադասություն. սահմանումը և տեսակները

Հիմնահարցեր: *Պարզ նախադասություն. սահմանումը և տեսակները: Բարդ նախադասություն. սահմանումը և տեսակները:*

1. Ըստ շարահյուսական կառուցվածքի մեջ մտնող ստորոգումների քանակի՝ նախադասությունները լինում են պարզ և բարդ, այսինքն՝ մեկ ստորոգյալով (մեկ ստորոգումով հանդես եկող) և մեկից ավելի ստորոգյալ (ստորոգում) ունեցող նախադասություններ: Իսկ ըստ քերականական այն հատկանիշի, թե պարզ ստորոգյալով արտահայտված նախադասության մեջ բայը ինչպիսին է՝ անցողակամ, թե՛ անանցողական, իսկ անցողականների մեջ՝ ինչ սեռի ձևով է արտահայտված՝ ներգործման, թե՛ կրավորական, լեզուներում առանձնացվում է նախադասությունների կառուցվածքի առնվազն երեք տեսակ՝ ներգործական (ակտիվ), կրավորական (պասիվ) և չեզոք:

Հայերենում, օրինակ, նման կառուցվածքի նախադասություններից առաջինում ենթական դրված է լինում ուղղական, իսկ ներգործական սեռի բայով արտահայտված ստորոգյալի ուղիղ խնդիրը՝ հայցական հոլովով. *Մայրը սիրում է որդուն: Որսորդը սպանեց աղվեսին: Երեխան կոպրեց մատիչը* և այլն: Բերված նախադասություններում *սիրել, սպանել, կոպրել* բայերը, որ ներգործական սեռի են, արտահայտում են մի գործողություն (*սիրում է, սպանեց, կոպրեց*), որ ուղղական հոլովով դրված ենթակայից անցնում է ձևով ուղղական կամ տրական, իսկ իմաստով հայցական հոլովով ուղիղ խնդիր վրա:

Նման գործողությունը, ինչպես նախորդ թեմաներից գիտենք, բնույթով ներգործական (ակտիվ), այսպես կոչված, աջընթաց (առաջագնա. պրոգրեսիվ) է, իսկ շարահյուսությամբ՝ ներգործական: Իսկ երկրորդում վերը բերված նախադասությունների ենթական և ուղիղ խնդիրը «փոխում են» իրենց տեղերը, ենթական դառնում է որևէ խնդիր՝ բացառական հոլովով, իսկ ուղիղ խնդիրը՝ ենթակա, և դա այն դեպքում, եթե ներգործական սեռի բայը վերածվում է (փոխակերպվում է) կրավորական սեռի (բայի ներսում ավելանում է *ւ/մասնիկը՝ իբրև քերականական միջոց*), տեղի է ունենում մի մասնավոր փո-

խարկում ևս՝ ենթական փոխարինվում է ոչ թե ուղիղ, այլ անուղղակի խնդրով. *Որդին սիրվում է մորից (մոր կողմից): Աղվեսը սպանվեց որդասրդից (որսորդի կողմից՝ ձեռքով): Մարտիրը կոտորվեց երեխայի ձեռքով:* Բերված կրավորական կառույցի նախադասությունների խնդիրները տարբեր բնույթի են, տարբեր է նաև նրանց բառական արտահայտությունը (*կողմից, ձեռքից* բառերով կամ առանց դրանց): Սովորական կամ փոխակերպված կառուցվածքի նախադասությունները խոսքում հանդես են բերում ոճական երանգավորում, և նշվում են նաև լեզուներ, որոնցում ներգործական / կրավորական կառուցվածքները հանդես են բերում լեզվամտածողությամբ պայմանավորված տարբերություններ:

Բայի անցողականության հետ կապված՝ նկատենք, որ որոշ տիպի լեզուներում (ամերիկյան հնդկացիական, էսկիմոսալեուտյան, կովկասյան լեզուներ, մեռած լեզուներից՝ խուռուրարտական լեզուներ և այլն) առանձնացվում է այնպիսի տիպ, որի կառուցվածքում նախադասության ստորոգյալն արտահայտվում է անցողական բայով, և որին առնչվում են ենթական և խնդիրը: Սակայն այդ դեպքում իրական խնդիրը դրված է լինում ուղղական (բացարձակ՝ արսոլյուտիվ) հոլովով (ոչ հայցական հոլովով, ինչպես այլ, օրինակ, հնդեվրոպական լեզուներում, ընդ որում նաև հայերենում), իսկ իրական ենթական, այսպես կոչված, *էրգատիվ (ակտիվ)* հոլովով (հուն. 'έργατος «գործող անձ, գործիչ» έργον «գործ, արարմունք») (Գ. Ա. Կլիմով և ուրիշներ):

Բավականաչափ ուսումնասիրված են նման կառույցներով տիպաբանորեն բնորոշվող լեզուները, իբրև ակտիվ կառուցվածքի լեզուներ, ընդ որում նաև մեռած լեզուների դեպքում. հմմտ. խուռերեն՝ *pašsithiffu-ž tive ande kuloža* «իմ դեսպանն այդ բանն ասաց», որտեղ բաղադրիչներից առաջինը՝ *pašsithiffu-ž*, դրված է էրգատիվ հոլովով, երկրորդը՝ *tive*, ուղղական (բացարձակ՝ արսոլյուտիվ) հոլովով, որ բառացի կարելի է մոտավորապես հասկանալ՝ «Այդ բանն ասել (եղած) իմ դեսպանով»: Իսկ բացարձակ (արսոլյուտիվ) կառույցի դեպքում ենթակայի հոլովն այլ է, քան էրգատիվ կառույցինը, այն է՝ նույնանում է էրգատիվ կառույցի ուղիղ խնդրի հոլովի հետ. հմմտ.

խոս.՝ *seniffuwe asti unetta* «Իմ եղբոր կինը կժամանի», որում *asti* ձևը դրված է բացարձակ (աբսոլյուտիվ) կառույց նշող ձևով, որ բառացի կարելի է մոտավորապես թարգմանել՝ «Ժամանել (լինել) իմ եղբոր կնոջը»¹: Կովկասյան լեզուներին (ավարերեն և այլն) հատուկ անցողական բայի ուսումնասիրությունից պարզվում է, որ նման բայերը սկզբնապես չեն բնորոշվել սեռի հատկանիշով, որ անցողականությունն այլ է, քան ներգործականությունը²:

Մտքի արտահայտման նվազագույն միավորը, ինչպես գիտենք, նախադասությունն է: Ըստ այն հանգամանքի, թե նախադասությունը քանի միտք է արտահայտում՝ մեկ, թե մեկից ավելին, տարբերում են նախադասության երկու տեսակ՝ *պարզ* և *բարդ*. պարզ նախադասությամբ արտահայտվում է մեկ միտք. *Օրը բացվեց: Մարդիկ շրապում են աշխատանքի*: Իսկ բարդ նախադասությամբ արտահայտվում են մեկից ավելի մտքեր. *Օրը բացվեց, և մարդիկ շրապում են աշխատանքի: Օրը բացվեց, և մարդիկ շրապում են աշխատանքի, իսկ երեխաները հաճախում են դպրոց* և այլն:

Պարզ և բարդ նախադասություններն ունեն թե՛ ընդհանրություններ և թե՛ էական տարբերություններ. ընդհանուր է այն, որ դրանք արտահայտում են որոշակի միտք, ունեն ստորոգում, հնչերանգային ավարտվածություն և այլն: Տարբերվում են մտքի արտահայտման ծավալով, կամ որ նույնն է՝ ստորոգման քանակով, ըստ այդմ՝ պարզ նախադասությունը մեկն է, իսկ բարդ նախադասությունն ընդգրկում է երկու և ավելի պարզ նախադասություններ, նույնիսկ այլ կարգի բարդ նախադասություններ, որոնք ունենում են յուրահատուկ հնչերանգային ավարտվածություն. գրավոր խոսքում դրանք պահանջում են միմյանցից տարբեր կետադրություն, ընդ որում բարդ նախադասությունը պահանջում է կետադրություն նախադասությունների միջև և բոլորի վերջում (հիմնականում՝ ստորակետ և վերջակետ), իսկ պարզ նախադասությունը՝ միայն վերջում (վերջակետ), անկախ նրանց այս կամ այն բաղադրիչի համագործությունից, ուստի բարդ

¹ Մ. Լ. Իսաչիկյան, Առաջավոր Ասիայի հին լեզուների՝ խոտիերենի, ուրարտերենի, էլամերենի տիպաբանության ուսումնասիրության հիմնախնդիրները (Ատենախոսություն՝ գիտական գեկուցման ձևով), Ե., 1999, էջ 51-52:

² Տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 554:

նախադասության հնչերանգային ավարտվածությունն ավելի ծավալուն է, քան պարզինը:

Հայերենի պարզ նախադասությունը ևս ունի յուրօրինակ կառուցվածք, հնչերանգ, բաղադրիչ միավորների (նախադասության անդամների) շարադասություն. եթե երկրորդը ընդհանուր է գրեթե բոլոր լեզուների համար, ապա առաջինը և երրորդը տարբերություններ ունեն այս կամ այն լեզվում: Այդուհանդերձ, պարզ կոչվում է այն նախադասությունը, որն արտահայտում է միայն մեկ ամբողջական միտք:

Միայն մեկ միտք արտահայտող նախադասությունը, իր հերթին, լինում է երկու տեսակ՝ *պարզ համատուր* և *պարզ ընդարձակ*: Նման տեսակների առանձնացումը, ինչ խոսք, հիմնված է այն հանգամանքի վրա, որ առկա է մեկ ստորոգում, այն էլ փաստացի կամ ակտուալ: Սակայն կարող է առարկություն լինել, թե այն նախադասությունները, որոնք չեն պարունակում ստորոգում, այլ նրանցում առկա է, այսպես կոչված, վերառյալ ստորոգյալ, արդյո՞ք չի կարելի համարել պարզ նախադասություն. հմմտ. *Լոռություն: Չաղմկել: Լուսանում է* և այլն: Այլ կերպ ասած՝ եթե միակազմ նախադասությունները, որոնցում գոյություն չունի ակտուալ ստորոգում, չենք համարում պարզ նախադասություն, ապա դա նշանակում է, որ պարզ նախադասություն ասելով պետք է հասկանալ միայն ակտուալ, առկա (այն էլ միայն մեկ) ստորոգյալով նախադասությունները՝ անկախ նրանց ծավալվածությունից. հմմտ. *Օրը կիավեց: Աշակերպը դաս է սովորում: Նա կախարել է ուսուցչի փված բոլոր հանձնարությունները* և այլն:

Պարզ նախադասության կառուցվածքի բաղադրիչներն են գլխավոր և երկրորդական անդամները, ընդ որում գլխավոր են ենթական և ստորոգյալը, որոնք կարող են գործառել ինքնուրույնաբար, երկրորդական են գլխավոր անդամներից մեկի կամ մյուսի լրացումները, որոնք չունեն ինքնուրույն գործածություն՝ շարահյուսական նման կտրվածքում: Երկրորդական անդամները հանդես են գալիս լրացման գործառույթով, ենթակայի լրացման դեպքում՝ որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը, իսկ ստորոգյալի լրացման դեպքում՝ խնդիրները և պարագաները: Հաղորդակցման առումով իդեալականը

խոսքի կառուցումն է հիշյալ կարգի բոլոր միավորների միաժամանակյա դրսևորմամբ, որը կենդանի լեզուներում գրեթե բացառվում է: Սակայն լեզվական հաղորդակցումը, իբրև մարդկային գործունեության ամենանգամյա դրսևորում, այսպես կոչված, իդեալականին հակադրում է իրականը՝ խոսքում բաղադրիչների տարբեր կարգի դրսևորումներ նույն սխեմայով (ձևով), տարբերակված գործառնությամբ. օր.՝ *Երկու օրվա սպասողական ընդմիջումից հետո ավտոմեքենաների շարասյունը դանդաղ ընթացքով վերսկսեց նախապետաված երթուղին ձյունապար լեռնանցքի դժվարանցանելի ոլորապտույր ճանապարհով*: Նման նախադասություններում, թվում է, թե պարզ նախադասությունն ամբողջովին՝ իր բոլոր բաղադրիչ մասերով դրսևորված է, սակայն այդ ևս վերջնական ամբողջություն չէ՝ պարզ նախադասության լիաժամպ կազմության տեսակետից:

Ըստ բաղադրիչների քանակային ընդգրկվածության պարզ նախադասությունը կարող է լինել համառոտ և ընդարձակ: Միայն ենթակայով և ստորոգյալով կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն. *Օրերը կարճացել են: Ամպերը կուրակվում են* և այլն: Իսկ այս կամ այն լրացումով կամ մեկից ավելի լրացումներով հանդես եկող նախադասությունը կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն. *Ամռան երկարատև օրերը աշնան ամիսներին կարճացել են մեկ-երկու ժամով: Երկնքում մութ ամպերը հերզհերես կուրակվում են* և այլն:

Գլխավոր անդամներ ունեցող պարզ նախադասությունը, անկախ առանձին կամ լրացումներով հանդես գալու հանգամանքից, կոչվում է երկկազմ նախադասություն, իսկ գլխավոր անդամներից միայն մեկի կամ մյուսի առկայության դեպքում նախադասությունը կոչվում է միակազմ. հմմտ. *Լույսը բացվում է: Մարդիկ հավաքվում են մարդաշար կանգառում // Լուսացավ: Հավաքվել են: Մարդաշար կանգառ* և այլն:

Նախադասությունները տարբեր են ըստ հաղորդակցական նպատակի, հնչերանգի և բնույթի՝ *պատմողական, հարցական, հրամայական (հորդորական, դրդական) և բացականչական*: Նախադա-

սության այս տիպերը հատուկ են հնդեվրոպական լեզուներին, հատնի են դասակարգման երկարատև ավանդույթով, և նման խմբավորումը կիրառելի է լեզուների թե՛ նորմատիվ-նկարագրական և թե՛ պատմական և գործառական քննության ժամանակ:

2. Բարդ են մեկից ավելի ստորոգում պարունակող նախադասությունները, որոնք մեկ ամբողջություն են հնչերանգով, իրենց կազմում ունեն քերականորեն առնչակից երկու և ավելի նախադասություններ: Դրանք մեկ ամբողջության մեջ միմյանց հարաբերակից են համադասությամբ կամ ստորադասությամբ: Կապակցումը տեղի է ունենում շաղկապներով կամ շաղկապական բառերով, հնչերանգով, եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությամբ, շարադասությամբ և այլն: Բարդ համադասական նախադասությունները սովորաբար կապվում են համադասական, իսկ բարդ ստորադասական նախադասությունները՝ ստորադասական շաղկապներով:

Այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչ նախադասությունները կապվում են շաղկապներով, կոչվում են շաղկապով, իսկ առանց շաղկապների միացողները՝ անշաղկապ բարդ նախադասություններ: Դրանք տարբերվում են նաև այլ անվանումով. շաղկապներով կապվածները կոչվում են գոդվածով, իսկ անշաղկապները՝ շարահարությամբ կազմված նախադասություններ. օր.՝ *Երեխաները փուն եկան, երբ արդեն մթնել էր: Երեխաները փուն եկան, արդեն մթնել էր // Եթե Ռուբենը չի գալու, ապա մենք գնալու են: Ռուբենը չի գալու, մենք գնալու ենք* և այլն:

Բարդ նախադասությունները երկու տեսակ են՝ *բարդ համադասական* և *բարդ ստորադասական*, որոնք իրարից տարբերվում են ըստ շարահյուսական հարաբերության բնույթի և կապակցման բանական միջոցների:

Առաջին տեսակի նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց առնչվում են համադասությամբ, դրանք իրար համագոր են, կապակցվում են համադասական շաղկապներով, այլև շարահարությամբ:

Շաղկապների գործածությունը գրավոր խոսքում, առհասարակ, ենթադրում է կետադրության որոշակի կանոններ, բացի *և*, *ու* շաղ-

կապներից, մյուսների դեպքում շաղկապից առաջ դրվում է ստորակետ, իսկ երբ հաջորդ նախադասության ենթական փոխված է, ապա հիշյալ շաղկապներից առաջ ևս դրվում է ստորակետ, իսկ շարահարությամբ միացած նախադասությունները տրոհվում են միայն ստորակետով. օր.՝ *Ամառային արձակուրդներն սկսվեցին, իսկ ուսուցիչներից մի քանիսը դեռ հաճախում է դպրոց, նրանք չավարտած գործեր ունեն: Երեխաները փունեկան, և մայրիկը նրանց կերակրեց փաթ կարկանդակներով և այլն:*

Այնուհետև, բարդ համադասականի բաղադրիչ նախադասությունները լինում են մի քանի տեսակ՝ *միավորական, տրոհական, հավելական (հարակցական), մեկնական, ներհակական (հակադրական),* որոնք կապակցվում են նույնպիսի շաղկապներով կամ շարահարությամբ:

Դրանք, ըստ արտահայտած մտքի, միմյանցից էապես տարբեր են:

Այսպես, միավորական հարաբերությամբ կապված նախադասությունները մտքով համասեռ են (*Մայրիկը ներս մտավ, ու երեխաները լռեցին*), տրոհական հարաբերությամբ կապվածների մտքերը հակառակ են իրար, մեկը բացառում է մյուսին (*Եկնիվ երանելի պահը, թե՛ պիտի երկար սպասենք*), հավելական (հարակցական) կապվածները, ընդհակառակը, համասեռ չեն իրար, առաջինին հաջորդող նախադասությունը արտահայտում է հավելյալ, լրացուցիչ միտք (*Դավիթը վաղ է գնում աշխատանքի, իսկ դա ես բարձր եմ գնահատում*), մեկնական հարաբերությամբ, ընդ որում համապատասխան շաղկապներով կապված նախադասություններից հաջորդը մեկնաբանում, բացատրում է նախորդի միտքը (*Նա նեղացած գնաց, ուրեմն այլևս չի գալու: Տիգրանը ճիշտ է ասում, այսինքն՝ չի սխալվում*), ներհակական (հակադրական) նախադասությունները կապակցվում են հակառակ, ներհակ մտքերով, ընդ որում կան համապատասխան շաղկապներով, կան շարահարությամբ (*Արամը մեկնել է Վանսաձոր, իսկ Հակոբը հանգստանում էր Ծաղկաձորում // Արամը մեկնել է Վանսաձոր, Հակոբը հանգստանում էր Ծաղկաձորում* և այլն):

Երկրորդ տեսակի՝ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները հարաբերակցվում են, այսպես կոչված, գերադասի և ստորադասի ձևով: Ստորադասական (երկրորդական) է բարդ նախադասության կազմում հանդես եկող այն նախադասությունը, որն առնչվում է գերադաս (գլխավոր) նախադասությանը, կամ նրա որևէ անդամին (բաղադրիչին): Ըստ բնույթի ստորադասական նախադասությունները համապատասխանում են գլխավոր նախադասության այս կամ այն լրացմանը՝ մասնավանդ խնդրային և պարագայական առումներով:

Լեզուներում քանակապես բարդ համադասական նախադասությունների գործածության ինտենսիվությունը այլ է, քան մյուսինը: Այդ տարբերությունը նկատելի է նաև գործառական-ոճական տեսանկյունից:

Վերջապես, լեզուներում այս դեպքում ուշադրության առարկա է նաև այն, թե երկրորդական (ստորադաս) նախադասությունը գլխավորի առնչությամբ ինչպիսի դիրք է զբաղեցնում՝ առաջադաս, միջադաս, թե վերջադաս: Նկարագրական քերականություններում այս խնդրին նվիրված են լինում ոչ միայն տեսական, այլև գործնական (վիճակագրական տվյալների վերաբերող) ուսումնասիրություններ: Ժամանակակից հայերենում, օրինակ, չունենք նման խնդրի լուծմանը նվիրված որևէ աշխատանք:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 556-559:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1978, էջ 167-185:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1998, էջ 337-345:

Թեմա 9. Նախադասության առաջացումը

Հիմնահարցեր: Նախադասությունը հաղորդակցական միջոցի վերին մակարդակի միավոր: Նախադասության սերման մեխանիզմը. ժամանակի մեջ և ժամանակի ընթացքում: Նախադասության տեսակի նախնականության հարցը:

1. Նախադասությունը մտքի արտահայտություն է, իսկ միտքը իրականության հոգեբնախոսական (հոգեկան-բնախոսական), ձեռքբերում է, բանական արարածի ինքնօրինակ զարգացման բարձրագույն աստիճանի դրսևորում:

Նախադասությունը մարդկային մտքի գործողության (կենդանի գործունեության) արդյունք է, որը հոգեկան և բնախոսական ամբողջական երևույթ է, թերևս իրականանում է մոտավորապես հետևյալ ձևով. մարդը դրսի ազդակներից ստացածը ներքուստ՝ մտովի գործի է դնում, կատարում է օբյեկտիվ իրականության ճանաչում, որն այլ բան չէ, քան մտովի («ի՞ր ներսում») տեսնել, ըմբռնել (*ըմ* (< **ըն*)-*բռնել*), արտահայտել (< *արտա- հայտ(ն)ել*). *Ծառը կանաչել է*՝ նախադասությունը միտք է, քանի որ նշանակում է *կանաչ* եղած՝ ստատիկ («ըստ այդմ դրված» < լատ. status < stō «դնել») վիճակի հատկանիշը մտովի անջատել *ծառից* և վերածել տեղափոխելի՝ դինամիկ («շարժուն, փոփոխուն») հատկանիշի՝ *կանաչել*, այնուհետև վերագրել նրան՝ *ծառին*, այսինքն՝ կատարվում է ստորոգում (*ստոր-ոգում*, բառացի՝ «ներքուստ ոգել», իմացականորեն՝ «հատկանիշի վերագրում առարկային ժամանակի հարաբերությամբ» [< լատ. praedicativus «հաստատուն, կատեգորիկ», prae-dico բառացի՝ «նախօրոք ասել», առհասարակ՝ «տեղեկացնել, հրապարակել»]). սա փաստացի՝ գործուն (*ակտուալ*. լատ . actualis [< actives < ago «անել. գործել»]) ստորոգում է. բերված օրինակում առարկան *ծառ*-ն է, հատկանիշը՝ *կանաչ*-ը, ժամանակի հարաբերությունը՝ *կանաչել է*՝ սահմանական ներկայի ձևն է (*կանաչ*-ից *կանաչել է*՝ դառնալու դինամիկան՝ ընթացքը):

Մեկ այլ օրինակ. *Ջուրը հոսում է*. հոսելու գործողությունը ինքնին գոյություն ունի իրականության մեջ, դա ջրի կերպն է, այն մտովի ընկալում ենք և վերարտադրում, այսինքն՝ ջրի հոսելու հատկանիշն առանձնացնում ենք նրանից և վերագրում նրան, և այս վերագրելն է,

որ կոչվում է ստորոգում, այլ կերպ ասած՝ նախադասության կազմում:

Ծառը կանաչել է, Ջուրը հոսում է և այլ ամեն մի նախադասություն, լինի բերվածի նման պարզ կառուցվածքի կամ ավելի բարդ և բազմաբաղադրիչ, իրականանում է ակտուալ՝ առկա ստորոգմամբ, այսինքն՝ բայական որևէ ձևով հատկանիշը վերագրվում է առարկային ժամանակի հարաբերությամբ: Իսկ եթե բնական ժամանակը դիտենք ոչ թե ընթացիկ՝ շարժման, այլ պահի դադարի՝ վիճակի հարաբերությամբ (մի բան, որ ենթադրելի է պայմանականորեն), ապա ստորոգումն էլ կլինի հատկանիշի վերագրում առարկային՝ վիճակի հարաբերությամբ, որի դեպքում հիշյալ *Ծառը կանաչել է, Ջուրը հոսում է* կոնկրետ («առկա») ստորոգումով արտահայտված միտքը կարելի կլինի արտահայտել արստրակտ («վերայայ») ստորոգումով՝ *կանաչած ծառ, հոսող ջուր* և այլն:

Եվ դժվար չէ նկատել, որ առարկայի հատկանիշը ժամանակային (դիմավոր բայով) կամ վիճակային (դերբայով) առարկային վերագրելը նույն երևոյթի՝ ստորոգման տարատեսակներ են, մեկը՝ կոնկրետ (առկա. «ակտուալ, գործող»), իսկ մյուսը՝ արստրակտ (վերայայ, վերացարկված. «վիրտուալ, գործուն»). *Ծառը կանաչել է ձևը* (կառուցվածքը) հանդիսանում է հատկանիշի վերագրում առարկային ժամանակի հարաբերությամբ, քերականորեն՝ նախադասություն է, իսկ *կանաչած ծառ ձևը* (կառուցվածքը) հատկանիշի վերագրում է առարկային վիճակի հարաբերությամբ, քերականորեն՝ բառակապակցություն է և այլն:

Մեխանիզմի բացատրությունը խիստ պայմանական է, ենթադրության սահմաններում, ինչպես որ ժամանակն է առհասարակ հարաբերական, որի ընթացքում պիտի գործած («աշխատած») լինի այդ մեխանիզմը:

Ուստի նախադասությունը պետք է հասկանալ լայն իմաստով՝ քերականական նախադասություն (այն, ինչ սովորաբար, ավանդույթի ուժով հասկանում ենք) և քերականական բառակապակցություն, քանի որ երկու դեպքում էլ կատարվում է մի կարևոր գործողություն՝ շարահյուսական-կարգային (կատեգորիական) ձևակերպում, այսինքն՝

հոգեբնախոսական գործունեություն, որում, իրոք, խոսքամտածականը վերածվում է լեզվափմացականի: Սա է նախադասության առաջացման և ձևակերպման մեխանիզմը, և ստորոգումը, պատկերավոր ասած, նախադասության ոգին է, էությունը, այն իրականացնող առաջնակարգ միջոցը:

Այս երևույթն ունի իր պատմական կողմը, լեզվի շարահյուսական նվազագույն միավորը՝ նախադասությունը, առաջացել է պատմականորեն՝ սերտորեն առնչված մարդկության, ավելի կոնկրետ՝ հասարակության պատմության ընթացքին ներդաշնակ և համապատասխան:

2. Լեզվի նախնական վիճակում, ինչպես ընդունված է ասել, նրա հաղորդակցական հատկանիշները տարբերակված չեն: Մտքի կազմակերպումը (դեռևս ոչ մտածողությունը) գտնվում է ամենանախնական վիճակում. դա մարդկության, այսպես կոչված, «խանձարուրային» ժամանակն է, դեռ երկար պիտի անցնի, որ մարդ արարածը, հատկապես խոսողության հետ կապված, բավարար չափով առանձին դիրք գրավի կենդանական աշխարհի մյուս միավորների համեմատությամբ: Այս նախնական շրջանում, բնականաբար, գոյություն չունի միտք՝ իր հետադարձ կապի մեջ, ուստի, բնականաբար, չկա նաև նախադասություն, որպես քերականական կարգ:

Մարդկության պատմության համապարփակ (մարդաբանական, բնախոսական, կենսաբանական, սոցիալ-հոգեբանական, փիլիսոփայական և այլն) ուսումնասիրությունը փորձել է վերհանել այն էականը, որը կապվում է լեզու և մտածողություն խնդրի հետ: Դա մնում է նաև ժամանակակից գիտությունների՝ համատեղ թե առանձին, կարևոր հարցերից մեկը:

Այս բնագավառում գիտությունը հասել է միայն այն մակարդակին, որ արտաքին աշխարհի մտավոր ճանաչումը, ըստ այդմ իրական լեզվական յուրացումը ամենից առաջ տեղի է ունեցել բառերով, այլ կերպ ասած՝ սկզբնապես եղել է, այսպես կոչված, բառ-նախադասությունը, և դա փորձում են ցույց տալ նորածնի (մանկան) առաջին թոթովանքների օրինակով, որ նա հաղորդակցվում է ազդանշանային «բառերով»՝ շեշտադրված և կրկնվող, որպիսով տեղեկացվում է այս կամ այն կարիքի մասին (ծարավ, սով, անհանգստություն և այլն): Այս

օրինակը տպավորիչ է, սակայն ոչ համոզիչ, որովհետև դրանում, այսպես թե այնպես, մոռացվում է այն, որ ներկայիս ժամանակի երեխան իր «թիկունքում» ունի իրեն հասած ժառանգորդական հնարավորությունը («գենոտիպը», ժառանգական պաշարը): Մյուս կողմից, դեռ վաղ է խոսել մանկան թոթովանքների մասին, իբրև, այսպես կոչված, բառ-նախադասության:

Ինչպես գիտենք, մեկ-երկու ամսականը՝ նորածինը, մոր և այլոց տեսախոսողական «հաղորդմանը» «պատասխանում է» ամենից առաջ իր հայացքով (սևեռվել, ուշադիր նայել, անշարժ մնալ և այլն), որն օրերի ընթացքում այնքան էլ երկար չի տևում նույն «պատասխանի» մեջ, այլ օրըստօրե ամրակայվելով փոփոխվում է, առաջ է գնում, որովհետև այդ դեպքում ևս կրկնությունը խաղում է իր վճռական դերը: Պետք է մտածել, որ բառերով ազդարարելուց, ազդանշան տալուց առաջ երեխան մեզ հետ «հաղորդակցվում» է լացով. երեխան լալիս է, նշանակում է օղի հետ նրա շփումն անսովոր է, գրգռող, նշանակում է ինչ-որ նեղություն ունի, կարիք (սնվելու, ջրի և այլն), որոնք ունեցել է մինչ աշխարհ գալը:

Մանկան խոսքի մեխանիզմի վերաբերյալ կան նաև ուշագրավ լեզվաբանական-մանկաբանական ուսումնասիրություններ (Ռ. Յակոբսոն և ուրիշներ), որոնք բավականին մանրամասն, ընդ որում ոչ միայն խոսքայինի, այլև հոգեկանի առաջացման գործընթացի վերհանման փորձեր են, որ տեղի են ունենում մանկան ամենավաղ շրջանից, նույնիսկ ծնված օրից (եթե ոչ նախքան ծնվելը՝ մոր մինչծննդաբերական վարքի մեջ), որովհետև մինչև աշխարհ գալը «հերոսը» բավականին հետաքրքիր «կյանք» է ունեցել: Փորձերը ցույց են տալիս, որ մեկ-երկու ամսական նորածինը դեմքի ժպիտ է ունենում, որ հավանաբար, ենթադրել է տալիս, որ այդ մեկ-երկու ամսվա տպավորությունը ինչ-որ հատվածով և ինչ-որ ձևով կրկնվում է նրա քնի մեջ (թերևս՝ «երագում»):

Նա ամիսներ անց արտաբերում է իրադրային (սիտուատիվ) ինչ-ինչ հնչախմբեր, ասենք դրանցից մեկը կապված լինի «ջուր» ռեֆլեքսի հետ, մայրը այն տալով ինչ-որ ձևով ձայն է հանել (մանկական լեզվում ընդունված է՝ «բու»), որն, ի դեպ, տարածված է լեզուներում, և

ոչ պատահական), որ նշանակում է տվյալ պահանջի բավարարում, նշանակում է նման ազդանշանի միջոցով երեխան հայտնում է ոչ միայն այդ, այլև նման ամենահարկավոր հոգսեր, և ստանալով դրանց բավարարումը, ամբարում է իր մեջ և դարձնում «փորձ»՝ պաշար հետագայի համար:

Մինչև այժմ ասվածն ամփոփելով նշենք, որ սրանք բառ-նախադասություն չեն, այլ ավելի նախնական (իմա՝ տարրական) «հաղորդակցական» միջոցներ, որ նորածինը ժառանգաբար (գենոտիպով) ունեցել է, բայց չի գործադրել, և հետո է հանդիպում և գործադրում: Այսպես, երեխան սկզբնապես («լաց») ջրով հաղորդակցվելուց հետո անցնում է ազդանշանային՝ այլ կարգի ձայներ հանելուն, իսկ շատ ավելի ուշ տարօրինակ, իր համար «մատչելի», իսկ «փորձով» ամրակայված, իրեն հասկանալի «հաղորդակցման»:

Եվ այսպես, երեխան մեկ «ճիչ»-ազդանշանից անցում է կատարում «ճիչ»-ազդանշային հնչյունախմբեր արտահայտելուն, որոնք նրա մոտ յուրովի են առաջանում՝ նայած մոր հետ անմիջական շփման ընթացքում ինքն ինչպիսի ձայնական (= հնչական) տպավորություններ է ընկալել, որ դրանք փորձում է արտահայտել յուրովի (ի դեպ՝ դա մանկան հարմարվողության՝ *ադապտացիայի* (լատ. ad-*apto* «հարմարվել, ընտելանալ» նախնական փորձն է), ավելի ճիշտ կլիներ ասել՝ գրեթե նույնությամբ (երեխան ստանում է հաղորդակցական, այսպես կոչված, առաջին «դաստիարակությունը»): Եվ ինչ ստացվում է, դառնում է անընդհատ կրկնվող, իսկ կրկնվածը՝ կոնկրետ ազդանշանային յուրացում, «լեզվահաղորդակցական» սեփականություն:

Լայն առումով ընկալումը կարևոր է, առաջնային: Նույնիսկ երեքշորս ամիսներին ոչ միայն տեսողությամբ, այլև մանավանդ լսողությամբ երեխան հետևում է իր շրջապատին, առաջին հերթին՝ մորը, իրեն ուղղված ամեն մի ազդանշանի, լինի այն ձայնային կամ շփման ձևով, որոնք այսպես թե այնպես տեղ են հասնում առաջին մի քանի ամիսներին: Մորից իրեն ուղղված ազդանշանը տպավորվում է մանկան մեջ, շտեմարանվում, դառնում հնարավորություն *հետդարձի* համար («հաղորդակցումը կայանում է»), առաջին հետդարձը, հավանաբար, մանկան ժպիտն է, հայացքի կենտրոնացումը. մայրը, օրինակ,

որ կողմ թեքի հայացքը և նայի մանկիկին, վերջինս հայացքով հետևելու է նրան (սա խոսքամյին, թե՛ անխոս հաղորդակցում է. հավանաբար, խոսքային, որովհետև ամեն մի անխոս հաղորդակցում այսպես թե այնպես ունի իր խոսքային հիմքերը):

Ըստ այսմ՝ կարելի է ասել, թե «բառի» (հնչախմբի) որոշումը մանկան զարգացման սկզբնական փուլի մեջ կարևոր քայլ է խոսքի ուսումնասիրման համար, թեև այն հանդիսանում է մոտավոր, ենթադրական օրինակ, թեկուզ ժառանգականին (գենոտիպին) որոշակի տեղ տալու, այն չանտեսելու պայմաններում:

Այսուհանդերձ, ինչպես վերը նշեցինք, խոսքի առաջացման նախնական վիճակի ներկայացման համար մանկան խոսքի օրինակը բերելն այնքան էլ տեղին չէ, որովհետև նախ՝ այն պայմանական է, չունի ապացուցողական հիմքեր, երկրորդ՝ կարող է միայն նմանատիպ (անալոգիկ) լինել, բայց ոչ՝ նույնական: Այս ամենին խանգարում է ոչ միայն ժառանգորդականը, այլև փորձը, որ փոխանցվում է անասելի ժամանակներ շարունակ:

Ամբողջ հարցն այն է, որ նախադասության, իբրև խոսքի նվազագույն միավորի, պատմությունը պետք քննարկել ոչ թե մանկան խոսքի առաջացման՝ թոթովանքներից հողաբաշխ լեզվին անցնելու օրինակով (դա, ինչ խոսք, կողմնակիորեն պետք է հաշվի առնել, ոչ թե դնել խնդրի լուծման հիմքում), այլ մարդու հոգեբնախոսական փորձի վրա հիմնված, հասարակական հաղորդակցման (իմա՝ առնչության) յուրահատկությունների վերլուծության մեխանիզմով, ըստ այնմ, որ խոսքը տարրական, բնախոսական-կազմախոսական ձայներից («հնչուններից») վերածվել է հողաբաշխ լեզվի, այն էլ՝ յուրահատուկ տարանջատմամբ (դիֆերենցմամբ):

Լեզվաբանության մեջ, ինչպես հայտնի է, փորձեր են եղել խոսքի առաջացման մեխանիզմը բացատրել, օրինակ, փուլերի ձևով, հատկապես նկատի ունենալով՝ նոր ժամանակներում գոյություն ունեցող լեզուների կառուցվածքի տրամագծորեն (կամ շառավղով) տարբեր լինելը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ բարդ և կարևորագույն հարցի ոչ այնքան համարժեք քննության արդյունք, մանավանդ որ միմյանցից տարբեր լեզուները խմբավորվում են քերականական կառուցվածքի այս կամ այն հատկանիշով (թեքական, անջատական, ներմարմնա-

վորյակ և այլն) զարգացման տարբեր շրջանների կամ փուլերի («ստադիաների») մեջ դնելով:

Ժամանակակից լեզվաբանությունը, հասարակական գիտություններն առհասարակ որքանով այս կամ այն չափով առնչվում են լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցին, փորձում են վերանայել արվածը, տեսական նոր մոտեցումներ հանդես բերել խնդիրն ավելի իրական քննելու նպատակով:

Լեզուների դասակարգումն ըստ «ստադիաների» ներկայացնում է ոչ թե երևույթի զարգացումը հասարակության առաջընթացով պայմանավորված, այլ ըստ այնմ, թե նոր ժամանակներում հայտնի լեզուներից որոնք են գտնվում զարգացման այս կամ այն աստիճանի վրա. օրինակ՝ բառ-նախադասություն ներկայացնող լեզուները «դիֆուզ խոսքի» [լատ. *diffusus* «սփռված, տարածված»] (< *diffundo* «հոսել, փռվել») կրողներ են, այդպիսին են համարվում, այսպես կոչված, ներմարմնավորյալ (ինկորպորատիվ) լեզուները, այլև նման լեզուների մի տեսակը. «Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ առկա է ներմարմնավորումը, բայց եթե ներմարմնավորյալ նախադասությունների մեջ միավորվում, ձուլվում են նրա բոլոր տարրերը, ապա մասնակի ներմարմնավորման ժամանակ տեղի է ունենում ենթակայի ու իր լրացումների և ստորոգյալի ու իր լրացումների միավորում. իրենք՝ ենթական ու ստորոգյալը այլևս չեն միավորվում»¹:

Հաջորդ «ստադիան», այսպես կոչված, (բազմա)համադրական (հուն. *polysyntheton* «բազմաշաղկապություն») լեզուների տեսակն է, «որի մեջ բառերն այլևս չեն ձուլվում իրար, կապվում են միմյանց հետ հատուկ մասնիկներով (ցուցիչներով) (իմա՝ շաղկապներով – Վ. Հ.), որոնք և առանձին բառերը իրար են կապում նախադասության մեջ»²:

Ներկայումս գոյություն ունեցող տարբեր (ոչ հնդեվրոպական՝ աֆրիկյան, հյուսիսամերիկյան և այլն) լեզվախմբերի պատկանող լեզուների օրինակով բացատրել նախադասության՝ լեզվի շարահյուսական մակարդակի (խոսքի) առաջացումը և տալ լեզուների հետագա զարգացման փուլերը, համոզիչ չէր կարող լինել, որ և իր ժամանակին

¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 564:

² Նույն տեղում, էջ 565:

մերժվել է, թեև նշվել են նրանում գնահատելի կողմեր, մանավանդ իբրև փորձ երևույթի բացատրման և ներկայացման առումով: Բոլոր դեպքերում ժամանակի խախտումը, լեզուների նոր վիճակի օրինակով նախնական վիճակների համաքանական (անալոգիական) մեկնաբանումը, ընդ սմին որոշ հարցերի բաց մնալը, բնականաբար, դասակարգումը դարձնում են ոչ վերջնական, եթե ոչ առարկելի:

3. Նախադասության առաջացման պատմության մեկնաբանության հարցում, թեկուզ վարկածի (հիպոթեզի) տեսքով, առաջ է քաշվում մեկ այլ մոտեցում, ըստ որի անվանական նախադասության տեսակը դիտվում է իբրև «բառ-նախադասությունից քերականական ձևավորված նախադասությանն անցնելու աստիճանականություն»:

Այս մոտեցումն է ժամանակին առաջ քաշել Է. Բ. Ադայանը (նշենք այդ վարկածի փաստարկման հիմնական կետերը՝ լրիվ մեջբերման ձևով կամ համառոտ վերաձևակերպմամբ).

ա) «...կարելի է իբրև հիպոթեզ նշել մի միջակա աստիճանի առկայությունը: Դա անվանական նախադասության վիճակն է, բայց անվանական՝ ոչ այն ձևավորմամբ, ինչպիսին ունեն այժմյան անվանական նախադասությունները...Նախնական այդ անվանական նախադասությունները բառ - նախադասությունների հետագա զարգացման աստիճանն են ներկայացնում»¹:

բ) Զարգացման նախնական շրջանում մարդը «ի վիճակի չէր անջատելու առարկան հատկանիշից, որի հետևանքով էլ մի բառն արտահայտում էր և՛ մեկը, և՛ մյուսը»²:

գ) Օրինակ է բերվում առարկայի ինքնակայությունը (իմա՛ ծառի գոյությունը)՝ իր բոլոր հատկանիշներով, որոնցից *կանաչ լինելու* հատկանիշը սկզբնապես ընկալվելիս է եղել չտարրորոշված ձևով:

դ) Առաջ է քաշվում *փորձի* կարևորությունը. որի շնորհիվ է, որ զարգացման ընթացքում մարդը հասնում է վերացարկման (արստրահման), կարողանում է ծառի հատկանիշներից *կանաչ լինել*-ը առհասարակ դիտել որպես այդպիսին, այլ ոչ թե տվյալ ծառի *կանաչ լինել*-ը, այլև հասու լինել այլ հատկանշումների՝ *կանաչանալ*, *կանաչավուն*, *կանաչություն* (բոլորովին նոր՝ *կանաչեղեն* և այլն. Վ. Հ.):

¹ Է. Բ. Ադայան, նշվ. աշխ., էջ 569:

² Նույն տեղում:

ե) Եվ եզրակացությունը. «Ահա նախնական այդ բառանունների հարադրությամբ կազմված նախադասությունն էլ մենք կոչում ենք *անվանական նախադասություն*» (ընդգծումը հեղինակի - Վ. Հ.):

Այս առումով կարելի է նշել մի քանի նկատառում:

Նախ՝ այնուամենայնիվ, այնքան էլ հստակ չէ մարդու լեզվամտավոր զարգացման այդ հետագա աստիճանում, սկզբնականից հետո նման կարգի բառ-նախադասությունները դիտել անվանական նախադասություններ, թեկուզ այն հաշվով, որ մի կողմից՝ այդ տերմինը, որքան էլ շեշտվում է այդ մասին, բոլոր դեպքերում չի արտահայտում այն, ինչ ներկայացվում է իբրև վարկած, այլև այն, որ այդ տերմինը արդի գիտության մեջ «զբաղեցված» է:

Երկրորդ՝ վարկածի համար բերվող փաստարկումներում չի երևում նախադասության հիմնական հատկանիշի՝ ստորոգման բնույթը, այն, թե զարգացման այդ փուլում, անվանական նախադասության մեջ ստորոգումը ինչ աստիճանի վրա է գտնվում:

Երրորդ՝ ստորագումն ունի իր տարբերակվածությունը նախադասության առաջացման տարբեր շրջաններում, և եթե ունի, ապա այդ անվանական նախադասության փուլում այն ինչպիսի դեր է ունեցել:

Հարկ կա շեշտելու, որ նախադասության առաջացման հարցում ստորոգման բնույթի պարզաբանումն ունի կարևոր, կարելի է ասել, առանցքային նշանակության: Ստորոգումն անբաժան է նախադասությունից, ինչ աստիճանի վրա էլ լինի վերջինս՝ նախնական, միջին թե նոր. մարդը հաղորդակցորեն ստորոգում է («ոգում է, ոգորում է») իրականությունը:

Հաղորդակցում նշանակում է տեղեկացնել (հաղորդել-ստանալ) ինչ-որ բան՝ որևէ պահանջի բավարարման նպատակով: Նախադասության առաջացումը, հավանաբար, պետք է դիտարկել իր նախնական վիճակից մինչև կատարյալ վիճակի հասնելը: Եվ այն, ինչ մեզ թվում է զարգացած և կատարելացված վիճակ (ներկայիս վիճակը), չի կարելի վստահ լինել ասելու, թե հետագա տևական ժամանակի ընթացքում ներկայիս զարգացած և թվացյալ կատարելության հասածը ինչպիսին կլինի ամենահետագա ժամանակում: Սա է ցույց տալիս

¹ Նույն տեղում, էջ 570:

առհասարակ առարկաների և երևույթների, նրանց հարաբերությունների առաջընթացի փորձը:

Ուստի՛ն՝ նախադասության առաջացումը, մասնավորաբար տևական անընդհատ բացարձակ փոփոխությունների մեջ, կարելի է ենթադրել, պիտի ունեցած լինի հանգրվանային ընդհատություն և հարաբերական դադար, ինչպես ամեն մի կենսական բաբախում, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ անընդհատ բաբախման մեջ *խիոցի* («պուլսի») և *կանգի* («պաուզայի») հարաբերակցություն:

Տվյալ դեպքում անընդհատականությունը խոսքի («նախադասության») ձևացումն է, իսկ ընդհատումը՝ նրա մի վիճակը, որը պայմանականորեն կարելի է ներկայացնել հետևյալ հանգրվաններով (առանց հնարավորություն ունենալու դրանք ժամանակային չափման մեջ դնելու, այսինքն՝ երբ է սկսվում և վերջանում մեկը, և երբ է շարունակվել և փոխանցվել մյուսը և այլն). 1) «ճիչ-ձայն» -նախադասություն, 2) «բառ» -նախադասություն, 3) «լեզու» - նախադասություն (տե՛ս գծապատկեր 16):

Գծապատկեր 16

«ճիչ-ձայն» - նխդս.> «բառ» - նխդս.> «խոսք» - նխդս.

Նման հարցադրումը, բնականաբար, վարկածային է, որի գիտական պարզաբանումը պահանջում է ոչ միայն ապացուցողական մեծ աշխատանք, այլև լեզվաբանությանը օգնող (հարակից) այլ գիտությունների տվյալների օգտագործում: Լեզուն մնում է, թերևս, մոգական և ոչ-լիովին հասկանալի մի իրողություն, որ սպասարկում է կենդանի միավորներին՝ իրենց կենսագործունեության ողջ ընթացքում՝ իրականում, և մարդկությանը՝ հարաբերականորեն:

Հիմնական գրականություն:

Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 560-571:

Լրացուցիչ գրականություն:

Головин Б. Н., Введение в языкознание, М., 1983, էջ 79-80:

Маслов Ю. С., Введение в языкознание, М., 1987, էջ 210-213:

Реформатский А. А., Введение в языковедение, М., 2007, էջ 487-490:

Անվանացանկ

Արեղյան Մ. Խ. (1865-1944) բանասեր, լեզվաբան

Աբովյան Խ. (1809-1848) հայ գրող, լուսավորիչ - մանկավարժ

Աբրահամյան Կ. Շ. (1959 թ.) լեզվաբան-տիպաբան, ռուսերենի մասնագետ

Աբրահամյան Ս. Գ. (1925-2005) լեզվաբան, հայերենագետ

Աթայան Է. Ռ. (1930- 2000) լեզվաբան, փիլիսոփա

Ալիշան Կ. Ղ. (1820-1901) բանասեր, բանաստեղծ, աշխարհագետ

Աղայան Է. Բ. (1913-1991) լեզվաբան, համեմատաբան

Աճառյան Հ. Հ. (1976-1953) բանասեր, լեզվաբան

Ասատրյան Մ. Ե. (1926-2000) լեզվաբան, հայերենագետ

Արիստոտել (մ. թ. ա. 384-322) հույն փիլիսոփա

Բակունց Ակ. (1899-1837) արձակագիր

Բայրոն Ջ. (1788-1824) անգլիացի բանաստեղծ

Բարսեղյան Հ. Խ. (1920-2014) լեզվաբան, հայերենագետ

Բաք Կ. Դ. (1866-1955) ամերիկացի համեմատաբան, բառարանագիր

Բելինսկի Վ. Գ. (1811-1848) ռուս գրաբննադատ

Բենվենիստ Է. (1902-1976) ֆրանսիացի լեզվաբան, համեմատաբան, իրանագետ

Բոգորոդիցկի Վ. Ա. (1957-1941) ռուս լեզվաբան, բարբառագետ

Բոդուն Էր Կուրունեն Ի. Ա. (1845-1929) ռուս եզվաբան, հնչյունագետ

Բրոկա Պ. (1824-1880) ֆրանսիացի բժիշկ, մարդաբան

Բուդաղով Ռ. Ա. (1910-2001) ռուս լեզվաբան, ռոմանական լեզուների մասնագետ

Բուսկան Ֆ. Ի. (1818-1897) ռուս լեզվաբան, քերականագետ

Գալշոյան Մ. (1933-1980) արձակագիր

Գալստյան Ս. Ա. (1929 թ.) լեզվաբան, հայերենագետ

Գյոթե Յ. Վ. (1749-1832) գերմանացի բանաստեղծ

Գոլովին Բ. Ն. (1916 -1984) ռուս լեզվաբան

Գրիգոր Նարեկացի (951-1003) բանաստեղծ

Գրիմ Յ. (1785-1863) գերմանացի բանասեր, լեզվաբան

Դարվին Չ. (1809-1882) անգլիացի բնագետ, կենսաբան

Դերբյուսի Կ. (1862-1918) ֆրանսիացի երաժիշտ

Դիոնիսիոս Թրակացի (մ. թ. ա. I դ.), հույն քերական
Դոստոնսկի Ի. Ֆ. (1821-1881) ռուս գրող

Զինդեր Լ. Ռ. (1904-1995) ռուս լեզվաբան, հնչյունաբան

Թոխմախյան Ռ. Մ. (1937 թ.) լեզվաբան, հնչյունաբան

Թումանյան Հովհ. (1969-1923 հայ բանաստեղծ

Իսահակյան Ավ. (1975-1957) բանաստեղծ

Լամբերտրի Շ. դը (1945 թ.) ֆրանսիացի լեզվաբան, համեմատաբան

Լեոնտև Ա. Ա. (1936-2004) ռուս լեզվաբան, հոգեբան

Լեոնտև Ա. Ն (1903-1979) ռուս փիլիսոփա, հոգեբան

Լոկ Ջ. (1632-1704) անգլիացի փիլիսոփա

Լուրիա Ա. Ռ. (1902-1977) ռուս հոգեբան, նյարդաբան

Խաչատրյան Ա. Հ. (1927 թ.) լեզվաբան, հնչյունաբան

Խաչիկյան Մ. Լ. (1949 թ.) հայ լեզվաբան, ուրարտագետ

Կապուտիկյան Ս. Բ. (1919-2006) բանաստեղծուհի

Կոմիտաս (1969-1935) երաժիշտ, խազագետ. երգահան

Կրուշևսկի Ն. Վ. (1851-1887) ռուս (ծագումով՝ լեհ) լեզվաբան, լեզվի տեսաբան

Հալլե Մ. (1923-2018) ամերիկացի հնչյունաբան

Հավրանեկ Բ. (1893-1978) չեխ բանասեր, սլավոնագետ

Հակոբյան Կ. Ս. (1977 թ.) լեզվաբան, տիպաբան

Հերդեր Յ. Գ. (1744-1803) գերմանացի փիլիսոփա

Հումբոլդտ Վ. ֆոն (1767-1835 գերմանացի լեզվաբան, փիլիսոփա

Ղարազյուլյան Թ. Ա. (1923-1981) լեզվաբան, համեմատաբան

Ղարիբյան Ա. Ս. (1899-1977) լեզվաբան, բարբառագետ

Ղափանցյան Գ. Ա. (1887-1957) լեզվաբան, համեմատաբան

Մաթևոսյան Հ. (1935-2003) արձակագիր

Մասլով Յու. Ս. (1914-1990) ռուս լեզվաբան

Մատեզիոս Վ. (1882-1945) չեխ լեզվաբան, լեզվի պատմաբան

Մարկես Գ. Գ. (1927-2014) կոլումբիացի գրող

Մեյե Ա. (1865-1936) ֆրանսիացի լեզվաբան, համեմատաբան

Մեշչանինով Ի. Ի. (1883-1967) ռուս լեզվաբան, հնագետ

Մյուլլեր Ֆ. Մ. (1823-1900) գերմանացի բանասեր-առասպելաբան. հնդկագետ

Մուրադյան Ա. Ն. (1927-1991) լեզվաբան, հունարենի մասնագետ

Մուրացյան (1854-1908) հայ գրող

Յակոբսոն Ռ. Օ. (1896-1982) լեզվաբան-համեմատաբան, առասպելաբան-մշակութաբան

Յարցևա Վ. Ն. (1906-1999) ռուս լեզվաբան, անգլիագետ, լեզվի պատմաբան

Նալբանդյան Միք. (1829-1966) գրող, հրապարակախոս

Շախմատով Ա. Ա. (1854-1920) ռուս լեզվաբան, լեզվի պատմաբան

Շանսկի Ն. Մ. (1922-2005) ռուս լեզվաբան, դարձվածաբան, լեզվի պատմաբան

Շեքսպիր Վ. (1564-1616) անգլիացի բանաստեղծ

Շիրոկով Օ. Ս (1927-1997) ռուս լեզվաբան, համեմատաբան, հունարենի մասնագետ

Շլայխեր Ա. (1821-1868) գերմանացի լեզվաբան, համեմատաբան

Շլեգել Ա. Վ. (1767-1845) գերմանացի քննադատ, գրականության պատմաբան

Շլեգել Ֆ. (1772-1829) գերմանացի քննադատ, ռոմանտիզմի տեսաբան

Շչերբա Լ. Վ. (1880-1944) ռուս լեզվաբան, բանասեր, բառարանագիր

Չարենց Եղ. (1897-1937) բանաստեղծ, մշակույթի գործիչ

Պանինի (մ. թ. ա. V դ.) հնդիկ քերական

Պաուլ Հ. (1846-1921) գերմանացի լեզվաբան, լեզվի պատմաբան

Պետրոսյան Հ. Զ. (1927-2001) լեզվաբան, հայերենագետ

Պետրոսյան Վ. Հ. (1932-1994) արձակագիր

Պոտերնյա Ա. Ա. (1835-1891) ռուս լեզվաբան, գրականագետ, փիլիսոփա

Պուշկին Ա. Ս. (1799-1837) ռուս բանաստեղծ

Ջահուկյան Գ. Բ. (1920-2005) լեզվաբան, համեմատաբան

Ռեֆորմատսկի Ա. Ա. (1900-1978) ռուս լեզվաբան, հնչյունաբան

Ռուսլո արբա Ժ. Պ. (1846-1924) ֆրանսիացի հնչյունաբան-փորձագետ, բարբառագետ

Սարյան Մ. (1880-1972) գեղանկարիչ

Սարոյան Վ. (1908-1981) ամերիկացի գրող

Սեպիր Է. (1884-1939) ամերիկացի լեզվաբան

Սկոբիկ Պ. Յա. (1906-1895) ռուս լեզվաբան, մանկավարժ

Սոբոլևսկի Ի. Խ. (1856-1929) ռուս լեզվաբան, հնագետ, գրականության պատմաբան

Սոսյուր Ֆ. դը (1857-1913) ֆրանսիացի լեզվաբան

Ստեպանով Գ. Վ. (1919-1986) ռուս լեզվաբան. ռոմանական լեզուների մասնագետ

Սուքիասյան Ա. Մ. (1922-2007)

լեզվաբան, հայերենագետ

Վեռներ Կ. (1846-1896) գերմանացի լեզվաբան, համեմատաբան

Վեռնիկե Կ. (1848-1905) գերմանացի կենսաբան, հոգեբույժ, նյարդաբան

Վերեջազին Ե. Մ. (1939 թ.) ռուս լեզվաբան

Վիգոտսկի Լ. Ս. (1896-1934) ռուս հոգեբան

Վինոգրադով Վ. Վ. (1895-1969) ռուս լեզվաբան, գրականագետ

Տելիա Վ. Ն. (1930-2011) ռուս լեզվաբան, դարձվածաբան

Տերյան Վ. (1885-1920) քանաստեղծ

Տոլստոյ Լ. Ն. (1828-1910) ռուս գրող

Տրուբեցկոյ Ն. Ս. (1890-1938) ռուս լեզվաբան, հնչյունաբան

Րաֆֆի (1835-1888) գրող, վիպասան

Ֆանտ Գ. Մ. (1919-2009) ամերիկացի հնչյունաբան

Քոսյան Վ. Ա. (1927-1993) լեզվաբան, հայերենագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին բաժին

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

I. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	
1. Լեզվաբանության առարկան.....	6
2. Լեզվաբանության խնդիրները	13
II. ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ	
1. Լեզուն որպես հասարակական երևույթ.....	21
2. Լեզուն որպես հաղորդակցման միջոց.....	28
3. Լեզու և մտածելություն.....	35
4. Լեզուն որպես կառուցվածք և համակարգ.....	42
5. Լեզուն որպես գործունեություն և վարք.....	51
6. Լեզուն հոգեկան-քնախոսական գործունեություն.....	58
7. Լեզուն իբրև ստեղծագործություն	69
8. Լեզուն որպես պատմական երևույթ	75

Երկրորդ բաժին

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄՆԵՐԸ

I. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	
1. Հնչյունախոսություն	82
2. Հնչյութաբանություն	91
3. Հնչյունական համակարգ. համաժամանակություն.....	98
4. Պատմական հնչյունաբանություն. հնչյունափոխություն	104
II. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
1. Բառագիտության առարկան և խնդիրները.....	111
2. Բառակազմություն	120
3. Իմաստաբանություն	125
4. Իմաստափոխություն	150
5. Դարձվածաբանություն	157
6. Լեզվի բառային կազմ. բառային կազմի զարգացում	166
7. Տերմինաբանություն. բառ և տերմին	189
8. Բառարանագրություն և բառարանագիտություն	194

III. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բառի ձևաբանական կազմը. ձև և բառաձև, քերականական ձև և քերականական իմաստ202
2. Քերականական միջոցներ և քերականական եղանակ (տեխնիկա)..... 210
3. Անվան քերականական կարգեր. սեռ, դաս, թիվ, հոլով. աստիճանակազմություն..... 227
4. Բայի քերականական կարգեր. սեռ, եղանակ, ժամանակ և կերպ, դեմք և թիվ. 238
5. Բառային կարգեր. բառը քերականական (ձևակազմական) միավոր..... 254
6. Բառափոխության եղանակները 260
7. Խոսքի մասերի բնորոշումը. առաջացումը և զարգացումը. 267
8. Խոսքի մասերի դասակարգում և խոսքիմասային տեղաշարժեր..... 285

IV. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. Բառակապակցություն. սահմանումը և տեսակները..... 293
2. Ստորոգում. ստորոգելի և հանգույց..... 303
3. Նախադասություն. սահմանումը և տեսակները 307
4. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ ... 316
5. Գոյականական անդամի լրացումները 322
6. Բայական անդամի լրացումները..... 327
7. Երկկազմ և միակազմ նախադասությունները..... 335
8. Պարզ և բարդ նախադասություն. սահմանումը և տեսակները..... 343
9. Նախադասության առաջացումը 357

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ.....361

Վազինն Գուրգենի Համբարձումյան

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Մայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

